

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ХАЧАТУР АБОВЯН РАНЫ АРМЕНИИ

СКОРБЬ ПАТРИОТА

Исторический роман

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ЕРЕВАН — 1981

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ

ՎԵՐԲ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՈՂԲ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Պատմական վեպ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1981

Բնագիրը լրացումներով և հավելվածներով
հրատարակության պատրաստեց, ծանոթա-
գրեց և խմբագրեց պրոֆ. Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆԸ

ԵՊՀ Գրադարան



SU0201738

Արովյան, Խ.

Ա 155 Վերք Հայաստանի: Վեպիսմբ. Պ. Հ. Հակոբյան.—Եր.-
Երևանի համալս. հրատ., 1981.—384 էջ:

Սույնը «Վերք Հայաստանի» վեպի հայերեն առաջին ամբողջա-
կան և ճշտված հրատարակությունն է: Այն ուղեկցվում է ներա-
ծական հոդվածով, ծանոթագրություններով, բառարանով և մատե-
նագիտական տեղեկություններով՝ վեպի նախորդ բոլոր տպագրու-
թյունների ու թարգմանությունների վերաբերյալ:

Ա 470208010000—09
704(02)—81 27—81

ԳՄԴ 84.21

Ար 1

Երևանի համալսարանի հրատարակություն, Կնգմողի համար, 1981
Библиотека ЕГУ им.Саркиса и Мари Мотирлианов

ԽԱՂԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

1

Երբ մտովի վերաիշխում ենք Հայաստան աշխարհում դարերի հոլովության մեջ ստեղծված գրական մեծ ու անմահ արժեքները, մասնավորապես նրանք, որոնք հսկա քայլերով առաջ են մղել հայ ժողովրդի հոգևոր զարգացումը, առաջիններից մեկը միշտ էլ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպն է, ազգային ու համամարդկային մի եզակի ստեղծագործություն:

Հայոց բազմադարյան դպրության այդ մշտաբորբոք ջանք հայության անհեռանկար թափառումների պահերին սերունդների նամար եղել է ուղեցույց-փարոս և մարդասիրական, ազատասիրական ու հայրենասիրական գաղափարների հզոր ներշնչարան:

«Վերք Հայաստանին» նոր ժամանակների հայոց ազգային կյանքի ու մտածողության հայելին է, մեր ազատագրական որոնումների ու պայքարի հերոսապատումը, ռուս մեծ ազգի հետ մեր բարեկամության ու եղբայրության գրական դաշնագիրը, պարսից դժոխքից հայության փրկության ու վերածնության արդար ջատագովությունը, մեսրոպյան տառերով երթևեկ գրված ամենամակեղծ ու սրտառույ խոսքը:

Իր մեջ ամփոփված անմահ գաղափարներով, եղելություններով ու խոհերով, հերոսական, բայց և ողբերգական դեպքերով ու դեմքերով «Վերք Հայաստանին» ու նրա անմահ ստեղծագործողը բազում տառնամայակներ հուզել ու թևավորել են սերունդների՝ վառվորոն երևակայությամբ պատանիներից մինչև դարավոր կենսափորձից իմաստնացած ծերունիները:

«Վերք Հայաստանի» նյութը հայության կյանքի ու պայքարի շրջադարձային ժամանակաշրջանի անցուդարձերն են, հայերի պատմական տրամադրությունները նոր դարաշրջանի շեմին, համընդհանուր ձգտումներն ու անմարելի տենչանքները՝ օտար զավթիչների բռնություններից ազատագրվելու, ազգովին համախմբվելու, դարերով կորցրած պետականությունը վերականգնելու և տնտեսական ու հոգևոր զարգացման լայն հնարավորություններ ստանալու մասին:

Արդեն քանի տառնամայակներ են անցել «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործման օրերից, բայց երբ վերստին ձեռք ենք առնում այդ հրաշապատում մատյանը, նրա էջերը կարծես նորից հորո յողոված լինեն արեգակի պայծառ շողերով և վաղնջական ու արարչական շնչով՝ հմայելով իրենց բնական, անապակ մաքրությամբ, վարակող անմիջականությամբ, գույների թարմությամբ, պատկերների կենդանությամբ, գաղափարների կենսահաստատությամբ:

Հայ ազատագրական շարժումների պատմության մեջ լուրջ տեղաշարժեր սկսվեցին XVII դարի վերջերից սկսած, երբ ժողովրդի հեռատես առաջնորդներն ունկնդրելով հանրության ձայնին՝ պարսկա-թուրքական բռնապետական լծից հայության փրկության և հայոց պետակա-

Եւրոյունը վերականգնելու հույսը մեկընդմիջտ կապեցին Ռուսաստանի հետ: Իսրայել Օրից, Միհաս Վարդապետը, Պետրոս Գիւանեցը, Դավիթ Բեկը, Եսայի Հասան-Ջալալյանը, Հովսեփ Էմինը, Միմեոն Երևանցի, Հովհաննէս, Հովակիմ և Խաչատուր Լազարյանցները, Հովսեփ Արղոյանը, Ներսէս Աշտարակեցի, Հարութիւն Այւմարյանը և ուրիշ շատ-շատեր տիրանական ջանքեր են թափել իրականութիւնը դարձնելու բազում սերունդների աչդ սուրբ ու Գլխական բաղձանքը:

Եվ այդ օրերից սկսած՝ ամեն անգամ, երբ ռուսական զորքերը Պետրոս Մեծի, իսկ հետագայում՝ ռուս ականավոր զորավարներ Ա. Վ. Մուվորովի, Գ. Ա. Պոտոմկինի, Վ. Ա. Զուբովի, Պ. Կ. Յիցիանովի, Ի. Վ. Գուդովիչի, Ա. Պ. Երմոլովի և այլոց հրամանատարութեամբ շարժվում էին դեպի Հարաւ կամ երևում Անդրկովկասում ու Արարատյան դաշտում, հայերն ամենուր ընդառաջ էին վազում Երանց, լայն աշակ-ցոյթուն ցույց տալիս, իսկ ժողովրդական վրիժառուներից կազմված հայդուկային խմբերն ու աշխարհագորայիները՝ ռուսական դրոշակի տակ մարտնչելով թուրք ու պարսիկ զավթիչների դէմ, հերոսութեան ու անճնուրագութեան աննախադէպ օրինակներ էին ցույց տալիս: Ռուստոմ Աբովյանի, Մելիք Վանու, Գրիգոր Մանուարյանի սխրանքները դրա պերճախոս ապացոյցներն են:

Եւրոյ մեկուկէս դար հայ ժողովուրդը տոկաց, կովեց, սպասեց, մինչև որ հնչեց փրկութեան զանգը, «Ռսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ և դուրաշի անիծած, չար շունչը մեր երկրիցը հալածեց»: Ազատագրվեց Արարատյան աշխարհը, կազմակերպվեց Հայկական մարզը, որի հարաւային սահմանները հասնում էին մինչև Արարատի բիւրիական բարձունքներն և Հայկական Պար:

Հայ ժողովրդի անցած հետագա ուղին կրկին ու կրկին համոզեց բոլորին, թե որքան խորաթափանց էին Երա առաջնորդները, որքան ճշմարիտ ու փրկարար՝ Երանց ընտրած ուղին, Իսրայել Օրոյ ժամանակներից սկսած մինչև Ներսէս Աշտարակեցի և Խաչատուր Աբովյան, բոլորն էլ մեծ, բոլորն էլ հերոսական, բոլորն էլ անկեղծ ու մաքուր...

Ավելի քան մեկուկէս դար առաջ, 1827 թվականի հոկտեմբերի 1-ին (Շոր տոմարով՝ 13-ին), ռուսական զորքերի հերոսութեան առջև ծնկի եկավ ղզբաշների վերջին հենակետը Արևելյան Հայաստանում, անճնատուր եղավ Երևանի բերդը, և ժողովուրդը թոթափելով պարսկա-թուրքական լուծը՝ վերջնականապէս անցավ Ռուսաստանի տիրապետութեան տակ, հայութեան մի մեծ հատված փրկվեց քաղաքական ստրկութիւնից և ծուլման ու ոչնչացման վտանգից:

Երևանի ազատագրմանը հաջորդած տասնամյակներին բուժելով պատերազմի վերքերը և իրենցից վանելով անցած կոիվների սարսափները՝ հայութիւնն սկսեց աստիճանաբար համախմբվել ու հավաքվել մայր հայրենիքում, վերականգնել երկրի քայքայված տնտեսութիւնը, մերձեցաւ ռուս մեծ ազգի հետ, ներգրավել Ռուսաստանի հոգևոր ու տնտեսական կյանքի ոլորտները, խորհել սեփական բախտի ու ապագայի մասին:

Դանդաղ էր ընթացում ազգահամալսումն ու ազգային ինքնաճանաչումը, և հատուտ ու հղի էր ներքին տագնապներով ու ջղածիգ պահերով:

Հայութեան ապրած հին սարսափներն ու տառապանքները, դարավոր ձգտումներն ու երազանքները, ազգի առջի ծառայած ներկա ու գալիք կենսական, բայց և դժվարին խնդիրները շատ շուտով գտան իրենց գրաւիչ ցայտուն արձագանքները Հարութիւն Այւմարյանի, Մետրոպոլիտանայանի, Սերովբե Պատկանյանի, Ստեփաննոս Նազարյանցի, Առաքել Արարատյանի, Գալուստ Ծերմազանյանի, Խաչատուր Աղվանացու, Արքաճամ Վարդապետի, Եփրեմ Սեթի, Մանգլի Կյումուշխանցու, Պերն Պոռչյանի և ուրիշների ստեղծագործութիւններում, որոնց բարձ-

քաղույն արտահայտությունը, սակայն, հայոց նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» անմահ վեպն է:

Իրավացի էր, անշուշտ, մեծ բանաստեղծ ու մտածող Ավ. Խաչատրյանը, երբ անդրադառնալով Աբովյանի ստեղծագործության խաղաղասեր քախտորոշ դերին մեր նոր գրականության և հանրային մտքի պատմության մեջ, «Վերք Հայաստանին» հռչակում էր միանգամայն անսովոր ճակատագրի ու կոչման մի գիրք՝ «մեր բողոքի, մեր ըմբոստության, մեր գոյատևման հերոսապատումը», «մեր դարի շողշողուն էպոսը», «մեր սխրագործությունների դուցազնավեպը պարսից ոճերների դեմ», «ռուս մեծագույն ժողովրդի հետ մեր սրտագին դաշնագիրը՝ կյանքի և մահվան ճակատամարտերում նվիրականացած...»:

2

Խաչատուր Աբովյանը անկեղծ հայրենասեր և ռուսասեր էր, հայ ժողովրդի նվիրական իղձերի թարգման, ժողովուրդների բարեկամության ու եղբայրության ջատագով, մեծ հումանիստ, գրող, մանկավարժ, մտածող և լուսավորիչ-դեմոկրատ: Նա ծնվել է 1809 թ. հուլիսյան օրերի շուրջ 15-ին, Քանաքեռ գյուղում, Ապովենց հին ու անվանի գեղդաստանում, որի պատկառագորու ներկայացուցիչների առաքինի գործերն ու ընտանեկան առօրյան նյութ են դառնում իրենց իսկ մեծ ժառանգի գրական-ազգագրական երկերի ու խորհրդածությունների համար:

Աբովյանի պապը մասնակիցներից մեկն էր Երևանում, 1784 թ. զարնաճը հրավիրված այն զաղտնածածուկ խորհրդակցության, ուր որոշվում է անհնապաղ վերսկսել քանակցությունները ռուսական տերության հետ՝ հայոց պետականությունը վերականգնելու և Այրարատյան աշխարհը պարսից տիրապետությունից ազատելու շուրջ: Այդ նպատակով Պետերբուրգ է առաքվում հատուկ դեսպան: Պահպանվել է համապատասխան վավերագրերի մի մասը, որոնց տակ և գտնում ենք նրա կնիք մատանու դրոշմը և անունը՝ «Ալաով դի Վիրապ», այսինքն՝ Վիրապի որդի Ալով:

Խաչատուրի կյանքի առաջին տարիները նույն ընթացքն են ունեցել, ինչ վաճական միջավայրում ձևավորված հայ առաջին լուսավորիչների: Դեռ երեխան աշխարհ չեկած՝ հնօրյա սովորույթներին խու-հնազանդ ծնողներն ուխտում են մանկանը նվիրաբերել Էջմիածնի վանքին, և այդ պատճառով 1818 թե՛ 1819 թ. զարնաճը նրան տանում են Մայր աթոռ՝ ուսում առնելու, վաճական կենցաղին վարժվելու և աբեղա դառնալու համար: Մինչև 1822 թ. Աբովյանը սովորում է այստեղ, հետո նրան իր հոգևոր դաստիարակ Անտոն Մուղնեցին՝ մի արդարադատ և խստաբարդ վաճական, տեղափոխում է Տփղիսի Ներսիսյան դպրոց, որը և նա ավարտում է 1826 թ. փետրվարին՝ աշակերտելով ժամանակի հռչակավոր մանկավարժներ Պողոս վարդապետ Ներսիսյանին (Վարդապետի) և Հարություն Ալամդարյանին:

Աբովյանի պատանեկան առաջին երազանքները ծաղկում ու թռչում են վաճական խցերում ու հոգևոր դպրոցի պատերի ներսում, պարսկական տիրապետության դաժան պայմաններում: Դեռ մանուկ հասակից, ճաշակելով օտար բռնության սարսափները՝ նա մտորում է հայրենիքի ազատագրության ու լուսավորության մասին: Թուներեն լեզվով գրված խորհրդածություններից մեկում, արդեն 40-ական թվականներին, անդրադառնալով տասնհինգամյա հասակից իրեն արսւշարած ներքին տագնապներին, իր ապագա կոչման ու նախագծումների և կյանքի բարձրագույն նպատակի մասին ունեցած ըմբռնումներին, Աբովյանը խոստովա-

¹ Ավ. Խաչատրյան, Երկերի ժողովածու, հ. IV, Հուշեր և հողվածներ, Երևան, 1951, էջ 118—119:

նում է. «Ապրել և մեռնել հայրենիքի համար,—ահա՛ տակավին վաղ պատահեկան տարիներից իմ ընտրած նպատակը: Դեռ ճնշված լինելով ինչպես բռնակալության, նույնպես և տգիտության բեռների ներքո, դեռ ո՛չ մի գաղափար չուներալով եվրոպական կրթության ազդեցության մասին, ո՛չ մի հեցուկ և, մինչև իսկ, ո՛չ մի միջոց՝ հասնելու իմ նախագծած նպատակին, ես հոգուս մեջ փայփայում էի միայն այդ մտածությունը, միայն այդ ցանկությամբ այրվում... Մեր սուրբ հայրերի զոհասեղանի առջև իմ տված առաջին երդումը, նրանց գերեզմանների վրա թափած դառն արցունքները, նրանց թանկագին աճյուններից ճկիրած ի խորոց սրտի հառաչանքները եղել են այն բանի համար, որ նրանք լինեն իմ թաքուն պահապան հրեշտակները և բաց ահե՛ն իմ առջև հօգուտ իրենց որք թողած մանկների՝ զոհվելու ճանապարհը»²:

Գիտելիքների այն պաշարը, աշխարհըմբռնումն ու փորձը, որ Արովյանը ձեռք էր բերել հայրենի ուսումնական հաստատություններում՝ էջմիածնի վանական խցերում և Տփղիսի Ներսիսյան դպրոցում, խիստ սահմանափակ ու աղքատիկ էին և անբավարար՝ ժողովրդական ուսուցչի և ազգային դաստիարակի կոչման նախապատրաստվելու համար: Հենց ինքը հրաշալիորեն գիտակցում էր այդ, երբ տարիներ հետո գրում էր. «Առանց հախապես լուսավորվելու,—այսպես էր խոսում իմ մեջ ներքին ձայնը,—անհնար կլինի ինձ համար պիտանի դառնալու մի որևէ բանի»³:

Ահա՛ թե ինչու, աչքի առաջ ունենալով, ճակ ոգևորվելով հախորդ դարերի հայրենազմեր գործիչների՝ Մխիթար Սեբաստացու, Սիմեոն Երևանցու, Ղուկաս Վանահոյեցու և ուրիշների անձով ու գործերով, նա վճռում է, ինչ գնով էլ լինի, ուղևորվել Եվրոպա կամ Ռուսաստան, նախ՝ կրթվելու, իսկ ապա, որ պակաս կարևոր չէր, քրիստոնյա միապետներից Հայաստանի ազատության համար աջակցություն խնդրելու:

1826 թ. հունիսին, մինչ Արովյանը ճանապարհի վրա էր, սկսվում է ռուս-պարսկական պատերազմը: Մոտ երկու տարի նա մնում է Լոռվա լեռնաշխարհում, ենթակա ռազմի սարսափներից և պանդխտության արհավիրքներից, որոնց վերաբերյալ արտառուչ էջեր ունի «Վերջ Հայաստանի» վեպում և քնարական հատվածներում:

Անդ գրին ի ծոցս ձորոց և լեռանց իմ լալիք անդարձք,
Անդ քնէ աշխոյժ, առուգ մանկութիւնս ընդ ծածկովք անյարկ:
Բազմիցս աստ հիւնեալ՝ խնդրէի զտուն, զյարկ, զտեղի,
Թափառեալ ի դրունս անգութ շինացոց, ձեռն ի ծնոտի.
Բազմիցս կարօտ մաշէի ի քաղցս կենսաբոյժ հոսցի,
Զոր ինձ խնայէից անգութ խաժամումն այն գաւառի:
Զորնեցէ՛ք, բարձունք, բազմիցս մաղթէի, առ իս ի վերուստ,
Խոնցէ՛ք ուծօին յողբացեալ թշուառ յիս ողորտ պանդոխտս.
Որ արհամարհէ զառատ բնութիւն, զխրատ և զուխտ՝
Այսպէ՛ս վիճակի, այսպէ՛ս թափառի՝ յաս ձոր խորամուտ...
Հա՛տ, զթել աւուրցս, հա՛տ, կտրեա՛ ի բաց, բազմիցս մաղթէի՜:

Տարագրության օրերին (1827—1828 թթ.), մի կարճ ժամանակ, Արով-

² Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. X (լրացուցիչ), Երևան, 1961, էջ 254 [257—258]: Այս տողերի բնագիրը ռուսերեն է. որը թեպետև ունի հայկաբանության տարրեր ու շա՛տ է քնարական, բայց հեղինակի ոճի ու ոգու հայելին է, անկեղծ, անմիջական ու վարակող: Հայերեն հերկա թարգմանությունը վերանայված է:

³ Նույն տեղում, էջ 254 [258]:

⁴ Նույն տեղում, հ. I, Երևան, 1948, էջ 122:

յաճճ ուսուցչությունն է անում Սանահինի վանքում, իսկ 1828 թ. մայիսից կրկին հաստատվում է Էջմիածնում՝ ծառայելով բարձրաստիճան հոգևորականների ձեռքի տակ:

1829 թ. մայիսից Աբովյանը դառնում է հայոց կաթողիկոսի թարգման ու քարտուղար, առիթ ունենալով շփվելու վանք այցելող բարձրաստիճան հյուրերի հետ, իմանալու աշխարհի չարի ու բարու մասին: Այս նույն տարվա աշնանն էլ նա մասնակցում է Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Պարրոտի գլխավորած գիտական արշավախմբին և բարձրանում Մասսի գագաթը (սեպտեմբերի 27), որով լուրջ հեղաշրջում է սկսվում նրա մտածողության մեջ: Սնապաշտական պատրանքներն աստիճանաբար ցնդում են բանականության և լույսի արշավի ուժից, որոնց ընդառաջ էր վազում դպի խաչատուրը: Այս խիզախման համար Աբովյանը հայածվում է ո՛չ միայն եկեղեցու սպասավորներից, այլև լուսավոր եվրոպացիներից, որոնք նախանձից կուրացած՝ ուզում էին կեղծիք հայտարարել Պարրոտի և Աբովյանի սխարանքը, մի բամբասանք, որ, ցավոք, փսփսում էին երկար տարիներ:

1830 թ. սեպտեմբերի 8-ից մինչև 1836 թ. հունվարի 14-ը, պետական թոշակով ու պրոֆ. Պարրոտի ղեկավարությամբ, Աբովյանն ուսանում է Դորպատում, նախապատրաստվելով ուսուցիչ և դաստիարակ դառնալու իր ազգակիցների ու երկրակիցների համար:

Դորպատը Աբովյանի համար դարձավ հոգևոր վերածնության վայր: Նա ուսումնասիրում է գիտություններ, լեզուներ ու արվեստներ՝ համաշխարհային պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, երկրաչափություն, բուսաբանություն, ֆիզիկա, տրամաբանություն, հոգեբանություն, երաժշտություն, գյուղատնտեսության հիմունքներ, ազգագրություն ու մարդաբանություն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, լատիներեն, այլևայլ արհեստներ, ինչպես օրինակ՝ հացագործություն, շաքար և թուղթ պատրաստելու եղանակներ, ասեղնագործություն, վիմատպություն, ապակեգործություն, և հայրենիք է վերադառնում որպես համակողմանիորեն պատրաստված մանկավարժ, գրող ու մտածող, որ լեանձել էր ժամանակի ռուս և եվրոպական առաջավոր գիտական մտքի ու բանաստեղծության բարձունքները:

Հայց հայրենիքում Աբովյանը համապատասխան աջակցություն չստացավ. ավելին՝ նրանից «փախչում էին իբրև հերձվածողից»⁵: Եվ նա ստիպված՝ պետական ծառայության է մտնում, որպեսզի գեթ սովից չմեռնի, իսկ շատ չանցած, չհամակերպվելով Էջմիածնի դիրքորոշմանը՝ ներազգային խնդիրներում՝ հրաժարվում է հոգևոր կոչումից, ամուսնանում, կազմում ընտանիք, ունենում երեխաներ, բայց և շատ շուտով, ծնողների և իր սուրբ ուխտը դրժելու, գուցե և նոր կարոտների և գաղափարական որոնումների համար, ապրում ծանր տղերագություն և հոգևոր դրամա:

1837 թ. սկզբներից (փետրվարի 12) Աբովյանն աշխատում է Տփղիսում, որպես տեղի գավառական դպրոցի տեսուչ և պատմության ու թվաբանության ուսուցիչ, որոշ ժամանակից հետո (1838 թ. հոկտեմբերի 1-ից) բաց անում մասնավոր դպրոց, որ նպատակ էր հետապնդում պատրաստելու ժողովրդական դպրոցների կարող ուսուցիչներ, ինչպես նաև զինակիցներ՝ միջնադարականության ու հետամնացության դեմ ծավալած իր պայքարի: Միապետական պաշտոնությունը, հայ հետադեմներն ու տնաբույս գիտնականները՝ նախանձից ու անճանական շահից կուրացած, ընդհանուր նակատ կազմելով՝ շարունակական արգելքներ են հարուցում Աբովյանի լուսավորական գործունեությանը, առաջիններից՝ փոքր ժողովուրդներին ճնշելու քաղաքականությամբ առաջնորդվելով, իսկ վերջինները՝ միջնադարական աշխարհայեցողությունն ու ա-

⁵ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. X, էջ 215 [216]:

վատական կենսափորձը պաշտպանելու մոլուցքով տարված: Եվ այնուհանդերձ՝ Արքայան, իբրև մանկավարժ, շատ շուտով ձեռք է բերում համընդհանուր ճանաչում. բնավ չէր չափազանցնում գերմանացի հայտնի բուսաբան և ճանապարհորդ Կարլ Կոխը, երբ գրում էր. «Մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որն այնպես սիրով և այնպիսի զոհաբերությամբ Գլիրված լինի մանուկների դաստիարակության գործին, ինչպես որ Արքայան է...»⁶:

1848 թ. աշնանը Արքայանը փոխադրվում է Երևան, հայրենիքի սրտում լուսավորական գործունեություն ծավալելու և հոգեկան հանգիստ գտնելու նպատակով: Բայց ժամանակն ու իրադրությունները կլկին խոչընդոտում են: Ավելի է խորանում նրա հոգևոր դրաման: Արքայան ամեն ինչ որել էր սիրելի ազգի լուսավորության համար, սակայն ազգն իրեն չէր հասկանում, գորավիզ չէր կանգնում, դեռ չէր հասել, կարծես, ժամանակը: «Անհնարին է ընդդէմ խթանի աքացել. յանշուքն Երևան լաւ է ունիլ գէշ մի կամ ջորի պատրաստական, քան զամենայն գիտութիւնս հրեշտակային... ժամանակն, հանգամանքն... առաջ բերեն այս անյաջողութեան», — խոստովանում է Արքայանը հայագետ Մկրտիչ Էմինին ուղղված նամակում (1846, օգոստոսի 81)⁷:

1848 թ. գարնանը, մինչ Արքայանը պատրաստվում էր փոխադրվել Ցփղիս՝ ստանձնելու համար Ներսիսյան դպրոցի տեսչությունը, նաև ուսուցչություն անելու Նունեյան դպրոցում, զոհ է դառնում խավար ու ժերի և մոլեգնած կրքերի. ապրիլի 2-ի (ն. տ. 14-ին) վաղ առավոտյան նա դուրս է գալիս տանից և այլևս չի վերադառնում: 88-ամյա հայ հանճարի ողբերգական վախճանի հանգամանքները ցարդ վերջնականապես պարզված չեն⁸:

Այս է, ամենահակիրճ գծերով, Արքայանի կյանքի ուղին, որն իրականում մի զարմանահրաշ աքի է նման, հարուստ՝ շոնդալից վերելքներով, հոգեցունց ապրումներով ու ողբերգական պահերով, որոնց անդրադարձումներն են նրա շատ ստեղծագործությունները:

8

Արքայանը թողել է հարուստ ու բազմաժանր գրական-գիտական-մանկավարժական ժառանգություն՝ վեպ, նովել, մանրապատում, պոեմ, քառյակ (բայաթի), քնարական հատվածներ ու բանաստեղծություններ, առակներ ու հանգավոր գրույցներ, օրագրեր ու ուղեգրական երկեր, պատմա-ազգագրական ուսումնասիրություններ, ուսումնական ձեռնարկներ ու դասագրքեր, ժողովրդական բանահյուսության նմուշների գրառումներ, անտիկ, ռուս և եվրոպական գրողների արձակ և չափաբերական

⁶ «Ժամանակակիցները խաչատուր Արքայանի մասին», Երևան, 1941, էջ 47:

⁷ Խ. Արքայան, Երկերի լիակատար ժողովածու, հ. X, էջ 272:

⁸ Վերջին տարիներս սենսացիոն հայտարարություններ երևացին գրական մամուլում, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակություններում և այլուր, իբրև Արքայանը 1848 թ. գաղտնի աքսորված է եղել Սիբիր և 1858 թ. դեռ կենդանի էր: Այս վարկածը շատ հին է, իրական հիմքից միանգամայն զուրկ և արդյունք թյուրիմացության: Հենքը գոնե այն պատել են ռոմանտիկ շղարշով, բայց նորերը գեթ հավանական կովանքներ մատնանշելու փոխարեն՝ պարապում են անհերքելի կեղծիքներով: Այդ ամենի մասին մանրամասնորեն խոսել ենք մեր «Խ. Արքայանի անհայտացման հին վարկածի նոր սեկնաբանում» հոդվածում, տպագրված՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 5, էջ 81—86:

գրվածքների թարգմանություններ (այդ թվում՝ Հոմերոս, Գյոթե, Շիլլեր, Ռուսսո, Թոմաս Մուր, Կարամզին, Կոխով), պաշտոնական գրություններ ու նախագծեր Հայաստանի և հարևան ժողովուրդների տնտեսական ու հոգևոր կյանքը վերակառուցելու և կրթական գործը բարելավելու վերաբերյալ և այլն. յուրաքանչյուրը սրանցից երևույթ էր հայոց հոր գրականությանն ու հասարակական մտքի պատմության մեջ, սկիզբ դնելով գրական հոր դպրոցի՝ հայկական ռոմանտիզմին, հայ հոր մանկավարժությանը, ազգագրությանը, բանագիտությանը, դառնալով միաժամանակ գրական տվյալ տեսակների առաջին դասական մոտիվները մեր իրականության մեջ:

Արքվյանի առաջին բանաստեղծությունները ժամանակի իշխող գրական կաղապարներով ու լեզվով էին՝ գրաբար, և ունեին եղերերգական շունչ ու երանգ («Կարօտությունն նախնի վայելչութեանց հայրենեաց իմոց»—1824), նաև նախանշանները՝ ռոմանտիկ քերթության: Դժգոհ ժողովրդի քաղաքական ու տնտեսական կյանքի տրոհումից. օտար բռնության ու տգիտության բերած չարիքներից, բանաստեղծը երևակայության մեջ դեգերում էր Հայաստանի անցյալ փառքի դարերում և ձգտում պայքարով վերածննդ կորցրած պետականությունը, ազգությանն առաջ մղել դեպի նրա երբեմն հասած հոգևոր քարծուները: 20-ական թվականների վերջերին Արքվյանն ստեղծում է սիրո և կարոտի տաղեր, որոնք խարսխված էին ուշ միջնադարի հայ տաղերգուների՝ Դեմետրոս Ասփանցու, Պաղտասար Դպրի, Դեմետրոս Բերդումյան-Աղամալյանցի, Սիմեոն Երևանցու և ժողովրդական գուսանների ստեղծած գրական ավանդույթների վրա, նրանց արվեստի կենսունակ տարրերի վերածնման միջոցով («Տաղ ուրախութեան ի գոյն՝ Առաւօտեան», «Տաղ ի գոյն՝ Ի սէր քո նազելոյն» և այլն):

Արքվյանի քաղաքական ըմբռնումների և գրական հայացքների մեջ լուրջ բեկում է սկսվում մասնավորապես Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու օրերից (1827 թ.): Այս բախտորոշ իրադարձությունը նա դիտում է որպես հայության հոգևոր ու քաղաքական վերածնության սկիզբ և ներդրում մի շարք բանաստեղծությունների մեջ («Նոր ի՞նչ եմ այս ցույցք մերս Հայաստանի...», «Խնդամիտ զգացմունք...» և այլն): Բայց նրա բանաստեղծական դիմանկարը ամբողջաբանում ու առնականաբանում է դորպատյան տարիների, երբ հիմնավորապես ուսումնասիրում է ժամանակի եվրոպական քնարերգությունը, ռոմանտիկական դպրոցի գեղագիտությունն ու փորձը և կառուցում իր բանաստեղծական հոր աշխարհը, ստեղծելով անհատական քնարերգության սրտառուլ էջեր:

Արքվյանն անձնական բարեկամ էր ռուսական ռոմանտիզմի պարագլուխ Վասիլի Անդրեևիչ Ժուկովսկու: Վերջինիս ուղղված նամակներում նա խոստովանում է այն մեծ և քարերար ազդեցությունը, որ իր վրա ունեցել է նրա հմայիչ անձն ու գործը. «Դեռ Ասիայի սրտում էի ես, որ գիտակցեցի Ձեր արժեքը: Տակավին իմ մանկական նիրհի օրերին Ձեր առունը հմայում էր հոգուս ամենաազգիվ հույզերն ու զգածումները... Եթե մարդուս հոգում դեռևս գոյություն ունի իսկական ներդաշնակություն, այն հանգույցը, որ միլիոնավոր մղոններով միմյանցից հեռու աշխարհներն իրար է միացնում, մեր աշխարհամասի չնչին, հազիվ կշռելի բաները դեպի հավիտենականություն տանում, ապա ո՛չ մի ընդհատում, ո՛չ մի անջատում Ձեզ հանց ու այս աշխարհից չի կարող ինձ առի՞թ տալ, որ ես դադարեմ Ձեզ հարգելուց, մեծարելուց և սիրելուց: Թե ի՞նչ եք Դուք ինձ համար եղել, չեմ կարող ո՛չ մի բանի հետ այս աշխարհում համեմատել...»⁹:

⁹ Խ. Արքվյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. X, էջ 100 [191]: Նամակի բնագիրը գերմաներեն է, թարգմանությունը՝ վերամշակված:

Արքովյանը ջերմ, ընկերական կապերի մեջ էր ցանկ մերձբայության գերմանագիր քերթողների՝ Կարլ Գլազենապի, Յոհան Բրոկի, Պաուլ Դալի (հոշակավոր բառարանագիր Վ. Դալի կրտսեր եղբայրը) և այլոց հետ, սակայն այդ ու նախորդ դարերի գրողներից ու արվեստագետներից ամենից ավելի խոր, տևական ու անցնչելի ազդեցություն է ունեցել նրա վրա գերման մեծ հանճարը՝ Ֆրիդրիխ Շիլլերը։ Արքովյանը թարգմանել է վերջինիս, ուսումնասիրել նրա փիլիսոփայական ու գեղագիտական հայացքները, իր գրական ուսումնառությունն ավարտել նրա ստեղծագործությունների վրա. «Ստարերկրյա ո՛չ մի գրող հենց սկզբից ինձ այնպես չի՝ հրապուրել, ո՛չ մեկն այնպիսի մնայուն, անցնչելի ազդեցություն չի՝ թողել ինձ վրա, ինչպես Շիլլերը։ Եվ եթե կա մեկը, որ իմ զայիք կյանքում իմ հոգու պահապան հրեշտակը, իմ առաջնորդն է լինելու, ապա դա պետք է միայն նրա վեճ հոգին լինի»,—խոստովանում է Արքովյանը¹⁰։

Իբրև բանաստեղծ՝ Շիլլերի, Ժուկովսկու և գեղարվեստական խոսքի մանգորինակ մեծ վարպետների մոտ ուսումնառություն անցնելով՝ Դորպատում Արքովյանը գերազանցապես գրում է սիրո, բնության և հայրենասիրական երգեր, Եյուբ ունենալով բնության հավերժության և կյանքի վաղանցիկության, նախաահմանական դրախտի ու կորցրած երջանկության, բնական հույզերի ու չբավարարված զգացումների, ազատության ու բռնության, հուզաշատ անհատի անհագ ձգտումների և գորշ ու աններդաշնակ իրականության հակադրությունները («Զգացմունք ցաւալից սրտիս...», «Յրիորդ Ֆոն Շվեբս ի վերայ երգեհոնի...», «Ջի՛հ՜ջ այս դառն հարուած...», «Երեկոյ», «Առ էմ. Կ.», «Գարուն», «Սէր առ Հայրենիս» և այլն)։ Արքովյանը հայ բանաստեղծությունը դուրս է հանում ներանձնացումից ու ավանդական թեմաների կախարդական շրջանակներից և լիցքավորում հասարակական-քաղաքական բարձր իդեալներով, խոհականությամբ ու դրամատիզմով։ Մարդու և հայրենիքի ճակատագիրը դառնում է նրա գլխավոր մտահոգության առարկան։ Դորպատում Արքովյանը հանգում է ցան աշխարհաբարը գրականության լեզու դարձնելու և գեղարվեստական գրականությունը նոր ժամանակների ոգուն ու պահանջներին համապատասխանեցնելու գաղափարին և առաջին հաջող փորձերը կատարում այդ ուղղությամբ (1885 թ.)։

Արքովյանի ետդորպատյան ստեղծագործության մեջ տիրապետող են դառնում էպիկական ժանրերը՝ առակ («Պարապ վախտի խաղալիք»—1888—40 թթ.), մանրապատում («Զվարճալի և կարճ պատմությունք»), պատմավածք («Առաջին սերը», «Հունայնություն աշխարհի», բոլորն էլ 1841-ից հետո), և վերջապես՝ վեպ («Վերջ Հայաստանի»—1841)։

«Պարապ վախտի խաղալիք» խորագիրն արդեն արձագանք էր ուժանցտիկ դպրոցի բանաստեղծների, մասամբ բայրոնյան «Պարապության ժամերի»։ Այս գրքում ամփոփված նրա ինքնուրույն և թարգմանական առակներն ու բանաստեղծությունները (քնարական խոհեր, եղերերգական հատվածներ և բայաթիներ) գալիս էին թեթևացնելու մարդկանց աշխատանքը, պարապության ժամերը հոգեկան ու բարոյական կատարելագործման դպրոց դարձնելու և կենդանի օրինակներով մարդկանց սովորեցնելու, թե որն է չարը և որը՝ բարին, ինչից պետք է խուսափել և ինչով առաջնորդվել կյանքում։ Հեղինակը ձգտում է ազդել մարդկանց հոգեկան աշխարհի վրա և բարոյապես ազնվացնել նրանց, այն, ինչը միաժամանակ հայ լուսավորիչների գլխավոր հետախնդրության առարկան էր։ Առակների, չափածո հեքիաթների ու գողտրիկ ողբերի այս աշխարհաբար ժողովածուն, ինչպես ցան մանրապատումներն ու պատմվածքները դուրացրին մեծ կտավի գեղարվեստա-

¹⁰ Խ. Արքովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. X, էջ 208 [204]։ Թարգմանությունը վերանայված է։

կան գործի ստեղծումը, որին և ի վերջո հանգեց Արովյանը «վերք Հա-
ջաստանի, ողբ հայրենասիրի» պատմավեպով:

Արովյանի ողջ ստեղծագործությունը լիրիկական խոր հազեցվածու-
թյուն ունի: Խոհմ ու երազանքն ամենուր ուղեկցում են գործողության
զարգացմանը, և այն, ինչ առաջին հայացքից թվում է շեղում, իրա-
կանում հեղինակի ոճի էական առանձնահատկությունն է: Վեճ ձգ-
տումներ ու գորշ առօրյա, խորհրդածություններ կատարելության վե-
րաբերյալ և անբանական կյանքի ծաղկում. սրանց շուրջ են պտտվում
նրա գրեթե բոլոր երկերը: Արովյանն ամենայն անաչառությամբ վեր
էր հանում հայության կյանքի դարավոր խոցերը, դատապարտում, մեր-
ժում կամ բուժման ուղիներ առաջադրում լուսավորական աշխարհայե-
ցողության դիրքերից, այսինքն՝ կրթություն և վերադարձ բնական
կրոնից:

Կյանքի վերափոխման և աշխատանքի թեթևացման, նոր մարդու
վերածնության և նրա հոգևոր աշխարհի ազնվացման գործում Արով-
յանն, ընդհանրապես, մեծ տեղ էր տալիս գրականությանն ու գեղեցիկ
արվեստներին, մշտապես ձգտելով մի կողմից՝ գաղափարական ու գե-
ղարվեստական բարձր հատկանիշներ ունեցող ստեղծագործություններ
ռով հարստացնել հայրենի գրականությունը, մյուս կողմից՝ բոլորանկեր
նպաստել գեղեցիկ արվեստները հայ իրականության մեջ ներմուծելու և
զարգացնելու գործին:

«Երբ ես բախտ ունեցա եվրոպական հողում առաջին անգամ տես-
նելու այդ արվեստներն իրենց իսկական լույսով,—խոստովանել է
Արովյանը ճամպկներից մեկում,—ապա առաջին ցանկությունը, որ ես
ունեցա, այն էր, որ դրանք փոխադրեն ասիական երկրներ: Եթե Ասիան
պիտի ստանա լուսավորության իսկական լույսը, ասում էի ես իմ մըտ-
քում, ապա այդ բանը ո՛չ մի այլ միջոցով չէր կարող ամենից լավ և ա-
ռագ կատարվել, քան դրանց միջոցով... Ո՛վ չի ճանաչում այն երկնա-
շին, սիրտ ազնվացնող, հմայիչ ուժը, որ գտնվում է արվեստների մեջ, և
ո՞ր հոգին կարող է ամենից ավելի զգայուն լինել նրանց հանդեպ, եթե
ո՛չ արևելցու կրակոտ, երևակայությամբ հարուստ հոգին...»¹¹:

4

Արովյանն ստեղծել է բազմաթիվ ինքնուրույն ու թարգմանական
արձակ ու չափածո ուրիշ երկեր ևս, սակայն լավագույնը նրանց մեջ
«Թուրքի աղջիկը (գործություն կրոնի)» նովելն է (1847 թ.), որ կրոնա-
կան ֆանատիզմի տիրապետության պայմաններում անհախադեպ երե-
վույթ էր հայ և անդրկովկասյան իրականության մեջ, մի յուրատեսակ
սոցիալական ուտոպիա, որ ուրվագծում էր ապագա ներդաշնակ հասա-
րակությունը, որտեղ մարդկանց միտքն ու հոգին ազատ պիտի լինեին
կրոնական ու դավաճաբանական կաշկանդումներից, ճանաչեին մի-
միայն սիրո, եղբայրության ու բարեկամության կրոնը, բնության պես
ազնիվ ու կատարյալ դառնային, ապրեին միմյանց համար և թեթևաց-
նեին միմյանց ցավն ու վիշտը: «Ա՛խ, ե՞րբ էս մեր աչքի կապը կար-
ձակվի, ե՞րբ էս մեր կույր, խավար մտքի փարդեն կպատուվի, որ էլի
քեզ ճանաչենք... որ էլի իրար սիրենք, իրար ընդունինք, ու ինչպես
մեկ հոր որդի՝ երկրումս մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ միտք, մեկ տեղ,
մեկ գերեզման ունենանք, ինչպես երկնքումը, որ ետ-առաջ պտի
գանք, պտի գանք բայց վա՛յ մեզ, վա՛յ, թե պարզերես չլինք ու
լանք...»¹²,—այսպես էր խորհրդածում Արովյանի քնարական հերոսը:

¹¹ Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. X, էջ 165 [167]:

¹² Նույն տեղում, հ. IV, Երևան, 1947, էջ 88:

Արքայանը թողել է նաև մի շարք պատմական աշխատություններ («Համառոտ ակնարկ Հայերի մասին», «Մեկ-երկու խոսք էլ Հայոց վրա», «Ուղևորություն դեպի Անիի ավերակները»), որոնք հայ պատմագիտական մտքի նոր շրջափուլի ձևավորման գործում ուրույն տեղ ունեն։ Հայ ժողովրդի հազարամյա ողբերգության պատճառները քննելիս Արքայանը դրանք կապում է ո՛չ թե աստվածային անեծքի կամ ճակատագրի հետ, այլ փորձ է անում գտնելու օբյեկտիվ պատճառները՝ երկրի աշխարհագրական դիրքը, ներխուժող ցեղերի ու հայերի տնտեսական և հոգևոր զարգացման մակարդակների տարբերությունը։ Նա քննադատում է ժամանակի եվրոպական պատմագրությունը, որակելով այն աշխարհակալ տերությունների պատմություն, որից դուրս էին վտարված փոքր ժողովուրդներն ու աշխատավորական խավերը։ Նա ոգևորությամբ է խոսում պարզ շինականների ու «հետին ռամիկ» մարդկային և բարոյական բարձր նկարագրի, իմաստնության ու հերոսության մասին, պահանջում, որ նրանք դառնան ուշադրության և հոգատարության առարկա, արվեստի ու բանաստեղծության նյութ։ Ինչ վերաբերում է պատմական անցյալին ու պատմության դասերին, ապա վերջիններս էլ, մի որոշ չափով, էական ափսոս փորձ լինեին արդիականության կենսական հարցերը լուծելիս և ժողովրդի անցնելիք գալիք, միակ ճշմարտացի ու բանական ճանապարհը նախագծելիս։

Արքայանը ճանաչված հիմնադիրն է հայ նոր մանկավարժության։ Նրա հայացքները ձևավորվել են նախորդ դարերի մեծ մտածողների և լուսավորիչների՝ Յոհան Գոտֆրիդ Հերդերի, Ժան Ժակ Ռուսսոյի, Յոհան Հայդերիի Պետալոցցիի, Շարլ Մոնտեսքյոյի և այլոց տեսական ու գործնական սկզբունքների հետևությամբ։ Նա արձագանքել է մեծ հումանիստներ Ֆրենսիս Բեկոնին և Բարթոլոմե դե Լաւ-Կազասին։ Իր մանկավարժական հիմնական երկերով ու դասագրքերով («Նախաշավիղ կրթության»—1837—88, «Նոր տեսական և գործնական քերականություն ռուսաց վասն հայոց»—1888—89, «Ամերիկայի լիս քցիլը»), բազմաթիվ հոդվածներով ու զեկուցագրերով, նաև՝ առօրյա գործունեությամբ, Արքայանը արժանանում էր համընդհանուր գրագիտության խնդիրը, որ իրագործվելու էր ժողովրդական դպրոցների միջոցով։ Նա ուսուցումը կապում էր բնության ուսումնասիրության և երեխաների առօրյա աշխատանքային գործունեության հետ, հարց բարձրացնելով՝ դպրոցներին կից ստեղծել արհեստանոցներ ու փորձադաշտեր։ «Նախաշավիղ կրթության» ձեռնարկի մեջ, որը հնչական մեթոդով կազմված լավագույն դասագիրքն է հայ իրականության մեջ, միս ու արյուն են առել մեծ մտածողի մանկավարժական հայացքներն ու նորարարական սկզբունքները, որոնց շուրջ գաղափարական պայքարը շղաղարեց անգամ Արքայանի մահից հետո։ «Նախաշավիղ» օգնում էր նորավարժ պատանուն ձերբազատվելու կրոնական քարացած ըմբռնումների ու նախապաշարունակի կաշկանդումներից և հոգեկան ու բարոյական կատարելագործման տիպար-օրինակ որոնել բնության մեջ, արարչության հրաշալիքների և մեծ մարդկանց աշխարհաշեն ու արժանահիշատակ գործերի մեջ։ «Նախաշավիղ» միակ գործն էր, որ տպագրվեց գրողի կենդանության օրոք (1888 թ.), սակայն հայ խավարամուլների և միապետական պաշտոնեության միասնական ջանքերով մերժվեց նրա գործադրությունը անդրկովկասյան դպրոցներում։ Իր գրական-մանկավարժական գործունեության հետագա տասը տարիներից Արքայանը կարողացավ հրատարակել սոսկ ռուսերեն ու զերմաներեն առանձին հոդվածներ, սակայն մայրենի լեզվով՝ և ո՛չ մի տող։ Նրա բոլոր կարևորագույն երկերը լույս տեսան մահից հետո միայն։

Ժամանակների ու պատմական հանգամանքների բերումով Արքայանի անվան հետ են կապվում հայ բանագիտության ու ազգագրության առաջին քայլերը։ Գեղարվեստական գրականության զարգացման գործում ժողովրդական բանահյուսության վճռական դերը հայ գրողներից

առաջինը նա է մատնանշել, ինչպես նաև հավաքել ու մշակել ժողովրդական ատակներ ու երգեր: Հայոց ընտանեկան սովորույթների, ծեսերի ու կենցաղի վերաբերյալ Արովյանի կարևորագույն ուսումնասիրությունները՝ «Գյուղական տների կառուցվածքը» (1885), «Ակնարկ թիֆլիսում ապրող հայերի կյանքի և, հատկապես, նրանց հարսանեկան սովորությունների մասին» (1840), նախատեսված էին հրատարակելու ժամանակի եվրոպական մամուլում: Լինելով ժողովուրդների տեղական ու արդյունավետ փոխներգործման կողմնակից, Արովյանը կամենում էր ո՛չ միայն նրանց ծանոթացնել միմյանց հետ, այլև փրկել ինքնասպանության հասցնող կղզիացումից, հնարավորություններ ըստեղծել, որպեսզի ամենահեռավոր ազգություններն իսկ կարողանան օգտվել միմյանց կյանքում ու կենցաղում արմատացած օրինակելի սովորույթներից և աշխատանքի արդյունավետ եղանակներից: Արովյան-քանազեռի ու ազգագրագետի ուշադրության կենտրոնում են եղել հայերի հետ միասին նաև հարևան թուրք ու քուրդ ժողովուրդները: «Քըրդեր» և «Եզդիներ» ակնարկներով (1846) նա դնում էր հայրենական քրդագիտության հիմքերը և շոշափելի ներդրում անում ռուս արևելագիտության մեջ:

Արովյանը շատ է տքնել ու աշխատել նաև հայերի ու անդրկովկասյան մյուս ժողովուրդների տնտեսական կյանքը վերակառուցելու ուղղությամբ: Ժողովրդի բարեկեցությունը նա այլ կերպ չէր պատկերացնում, քան քաղաքական բարենպաստ հանգամանքների և ճորտատիրական կախումից ազատ, բայց լուսավորված գյուղացիական համայնքի պայմաններում, որը ենթադրում էր առևտրի ու արհեստագործության զարգացում ու կատարելագործում: Արովյանը հարց էր բարձրացնում՝ զարկ տալ արհեստագործությանը, վերակառուցել Հայաստանի գյուղատնտեսությունը, ուսումնասիրել հողերի հատկությունները և ըստ այնմ տեղաբաշխել գյուղատնտեսական կուլտուրաները, օգտագործել մեքենաներ, որպեսզի հեշտանա գյուղացիների աշխատանքը: Նա հատուկ զեկուցագրեր է ներկայացնում ռուսական կառավարությանը և խորհուրդ տալիս՝ արտասահմանից մի շարք կուլտուրական բույսեր ու ու բուսաներկեր ներմուծելու փոխարեն դրանք աճեցնել Հայաստանում, որից մեծապես կշահեր ժողովուրդը, և բուռն վերելք կապրեր տնտեսությունը:

Եվ այն բոլորը, ինչ Արովյանն ստեղծել է մինչև «Վերք Հայաստանի» վեպը, լինեն դրանք գեղարվեստական երկեր, օրագրեր թե ճամփորդական խորհրդածություններ, հոդվածներ թե պատմաազգագրական տեսություններ, ամենն էլ յուրատեսակ նախապատրաստական փորձեր են հանդիսացել մեծ կտավի անցնելու և իր կյանքի գիրքը գրելու համար, իսկ այն բոլոր երկերը, որոնք հաջորդում են «Վերքին», հետագա արժարժումներն ու խորացումներն են նրա ազգափրկիչ գաղափարների ու գեղագիտական սկզբունքների:

5

Մվելի քան տասնհինգ տարի «Վերք Հայաստանի» կերտվածքը ուրվագծվում, քանդվում ու վերաշինվում էր Արովյանի ստեղծագործական երևակայության մեջ, մինչև որ ստացավ իր ավարտուն տեսքը: Առաջին էջերը գրվում էին դանդաղ՝ ներքին վախով և սրափ նծարումով, մի տեսակ խեղդելով ստեղծագործողի հոգու խռովքը և կաշկանդելով մտքերի սլացքը... Աշխարհաբար գրքեր, գրական երկեր ու քերականություններ, ճիշտ է, հորինվել ու տպագրվել էին մինչ այդ էլ, բայց միանգամայն այլ էին Արովյանի որդեգրած սկզբունքները, օգտագործած լեզվական ու ոճական ատաղձը, հետապնդած նպատակները, վերջապես՝ ըն-

թերցողը, նա, որին հասցեագրվում էին հեղինակի ամենամվիրակաց հույզերն ու գաղափարները:

Բացասելով հինը, սկիզբ դնելով նոր գրականության, ստեղծագործական նոր ոճի, լեզվամշակման նոր ուղղության՝ «Վերջ Հայաստանին» միաժամանակ կոչված էր նախապատրաստելու նաև հայ նոր ընթերցողին, որը հեռու լինելով ապաքաղաքական մարմաջներից՝ ապրեր մարդկային լիարյուն կյանքով ու համազգային շահագրգռություններով:

Որոնումների և տքնության այդ մեկուկես տասնամյակում Հայաստան աշխարհում կատարվել էին քաղաքական, տնտեսական ու հասարակական լուրջ տեղաշարժեր. փրկվել էր հայոց հին աշխարհը ռուս զենքի ուժով, փոխվել էր երկրի դեմքն ու ազգագրական կազմը, կենդանացել էին երեկվա ավերակները և հասկակալել դարավոր խոպանները: Եվ, այնուհանդերձ, ժողովրդի քաղաքական ճակատագրի մեջ տեղի ունեցած մեծ շրջադարձին դեռ չէին ներդաշնակում հանրային ու մշակութային կյանքի վիճակը, գյուղացիական բազմահազար զանգվածների տրամադրական բարոյավաճումը: Ծառ հաճախ լսվում էին նաև տրտունջներ, որոնց պետք էր մեկընդմիջտ վերջ դնել: Հայ մարդու հոգին ու միտքը դեռ չէին մաքրագործվել ու բուժվել օտար տիրապետողների դաբերով հասցրած վերաբերից ու խոցերից, նրան դեռ հալածում էին հին տեսիլքներն ու սարսափները: Երկրում առաջվա պես թագավորում էր հոգևոր խավարը՝ անուսումնությունը և նախապաշարումները: Տնտեսական կյանքում տիրապետում էին աշխատանքի անարդյունավետ ու անկատար ձևերը: Բացակայում էր նաև իսկական առումով հանրային կյանքը, չկային գրականություն, դպրոց, մամուլ:

Ուրախացնում էր մի բան միայն. առանձին հայրենազավեր անհատներից և ազգի շահերով այրվող սակավաթիվ մտավորականներից բացի, ժողովուրդն ինքը ևս աստիճանաբար սկսում էր ըմբռնել իր անցած կյանքի ու վիճակի ողջ ողբերգականությունը, անհանգստության նշաններ ցույց տալիս, փորձեր անում ռուսաց բարերար տերության հովանավորությունից օգտվելով՝ վերացնել իր հոգևոր և տնտեսական զարգացման առջև ծառացած արգելքները, խելամիտ լուծումներ փնտրել բեկման ժամանակաշրջանում ազգերի, ներկա դեպքում իրենց՝ հայության առջև կանգնած անհետաձգելի հարցերի համար, որոնք «Վերջ Հայաստանին» անհանուն զեղջուկ հերոսը ձևակերպում է այսպես. «Ախր մեր ազգը որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բուլրի պատճառըն էս ա, որ մեզ մեկ ասող չի՝ ըլում, թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ է, ընչի՞ համար ենք էկել աշխարհ... Երկրումը ի՞նչ պետք է անենք...»:

Ընդառաջ գնալով այս հրավերին՝ Աբովյանը պետք է բացատրեր և կենդանի պատկերների միջոցով ցույց տար, թե ովքե՞ր են հայերը, իրենց պատմական հնությունը և հոգու ազնվությունը հաստատելու համար ի՞նչ ապացույցներ ունեն, ի՞նչ հերոսական գործեր են կատարվել նրանց քիբլիական հայրենիքում, ինչպիսի՞ն պիտի լինի նրանց կյանքի ընթացքը ռուսաց հովանու տակ անցնելուց հետո, հանուն ի՞նչ իդեալների պետք է այսուհետև տքնեն ու պայքարեն:

Ազգային համախմբման ու ինքնաճանաչման ճանապարհը բռնած հայ ժողովրդի համար այս հարցերի ճիշտ դրվածքն ու լուծումը վիթխարի հեղափոխիչ նշանակություն ունեին, հետևաբար՝ իր հոգեկան և ֆիզիկական ողջ ուժերը հայ մեծ ժողովրդասերն ու հայրենասերը նվիրում է այդ սուրբ գործին:

Աբովյանի անկեղծ համոզմամբ՝ նոր գրականությունն ու հայաստանությունը ունակ էին բացելու ազգի համարացած լեզուն, հզոր թոռիչք պարզելու նրա երևակայությունը, ազդակ դառնալու՝ շարունակելու համար իր ընդհատված երթն ու երզը համաշխարհային պատմության մեջ: Ուստի հարկ էր դաշնություն ու փոխըմբռնում հաստատել իր և իր սիրած

ազգի միջև, նրան հասցնել իր Գլխրական բաղձանքներն ու սրտի մուրազը, փոխարենը ակնկալելով քաջալերանքի անպաճույճ խոսքեր, առանց որի հիմնիվել կտապալվեին ազգային վերածնության համար կազմած իր փրկարար նախագծումները և շքեղ երազները: Վեպի Հառաջաբանում Աբովյանը այդ մասին է խոսում, աղերսանքի այս խոսքերն ուղղում. «Թաք ըլի դո՛ւ, դո՛ւ, իմ պատմական ազգ, քո որդու արածը, քո որդու խակ լեզուն սիրես, ընդունիս, ինչպես հերը իր մանուկի կմկմալը, «ր աշխարքի հետ չի՝ փոխիլ...»:

«Վերք Հայաստանին» ստեղծագործման ընթացքում, հեղինակային դիտավորությունների լիակատար իրականացման առումով, անչափելի է Հայկական մարզի երբեմնի կառավարիչ, գեղապետ Գևորգ Մմբատյանի բարոյական աջակցությունը: Ծանոթանալով վեպի առաջին տեսրակներին ու հետագա ծրագրերին՝ նա Աբովյանին պատվել է «հայ լոռնոսով» անունով, դրանով իսկ հաստատելով ազգային նոր գրականության ու հառաջդիմության մեջ այդ ստեղծագործության կատարելիք մեծ ու բախտորոշ դերը: Իր ազնիվ ու անկաշառ բարեկամին արժանին հատուցելու համար Աբովյանը «Վերք Հայաստանին», վերջնականապես հղկելուց հետո, համարձակորեն ձոնում է նրա անվանը: Ասում ենք՝ համարձակորեն, որովհետև նույն շրջանում, 1841—44 թթ., Գ. Մմբատյանը ամբաստանված էր բարձր իշխանությունների առաջ և հետաքննության տակ էր. կյանքի գնով նա կարողանում է ազատվել գրպարտանքների ցանցից և վերականգնել իր բարի անունը:

Աբովյանը մեկ ուրիշ դիտավորություն էլ ուներ: Տարիներ անց վերհիշելով գերմանացի բանաստեղծ ու թարգմանիչ Ֆրիդրիխ Բողենշտեդի քաջալերական խոսքերը, որը 1844-ին ծամանելով Երևան, այցելելով իրեն և ծանոթանալով մասնավորապես «Վերք Հայաստանին» վեպի հատվածներին՝ նրանց մեջ շեքսպիրյան շունչ էր նշմարել և առաջարկել Աբովյանին՝ վեպի չափածո հատվածները և մի քանի բանաստեղծություններ տրամադրել իրեն, Գերմանիայում հրատարակելու համար, որը կնպաստեր հայ ժողովրդի ճանաչմանը օտար ազգերի շրջանում: Պատասխանելով այդ քնարական էջերի գերմաներեն տողացի թարգմանությունները և գրելով բացատրական նամակ, Աբովյանն հեճո պղտեղ էլ բաց է անում գաղտնիքը: Աղասու կյանքի պատմությունն, ասում է նա, «ես անպայման ցանկանում էի մշակել իբրև ժողովրդական վեպ, որպեսզի դրանով օտարներին էլ ծանոթացնեի արդի հայ ազգության հետ», իսկ ապա՝ դիմելով Բողենշտեդին, շարունակում է. «Ես այդ մասին չեի ուզում խոսել: Դուք հիմա իմ սառած զգածումները վերականգնացրիք... Ձեզ վրա սուրբ պարտականություն է ընկնում աշխարհին ցույց տալու, որ հայերը շահամուլ-վաշխառուներ չեն, ինչպես բարձրաձայն գոռում են նրանց մասին, որ նրանց մեջ էլ կան թաքնված շատ սուրբ զգացմունքներ, որոնք սակայն, մինչև այժմ, ո՛չ ոք չի շոշափել և, հետևաբար, չի էլ կարողացել ճանաչել: Եկե՛ք հանուն Աստուծո դրանք լույս աշխարհ հանենք...»¹³:

Որքան էլ տևական լինեին նախապատրաստությունները, «Վերքի» գրության բուն ընթացքը չերկարեց. առաջին տարբերակի շարադրումն սկսելով 1841 թ. փետրվարի կեսերին՝ կարճատև դադարից հետո Աբովյանն այն շարունակեց ու ավարտեց տառացիորեն մի քանի օրում, նույն փետրվարի վերջերին: Այդ մասին նա զգայացունց ոճով պատմում է գրքի Հառաջաբանում և «Աղասու խաղի» գերմաներեն թարգմանությանը կցած բացատրականում: Երկրորդ տարբերակի հյուսումը ձգվեց մինչև աշուն և պահանջեց չարաչար աշխատություն, լուրջ վերականգնումներ, լրացումներ ու փոփոխություններ. «Պարապ վախտի խաղա-

¹³ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Բ. VII, էջ 875 և 876 [891 և 898]:

գիքի» Հառաջարկում, որն այդ ժամանակներն է գրված, «Վերք Հայաստանին» հիշվում է իբրև երկարապատում և ավարտված գրվածք. «Մեկ մեծ գիրք ա, որ գրած՝ մոտիս հազիր ունիմ...»¹⁴: Միշտ է, ստեղծագործական բնույթի շտրկումներ ու առանձին հավելումներ կատարվել են նաև հետագա տարիներին, ընդհուպ մինչև 1845 թվականը, բայց վեպի հիմնական կերպարներն ու գաղափարները, լեզուն ու ոճը դրանից ո՛չ թե փոխվել են, այլ ավելի են ընդգծվել, քյուրեղացել ու մաքրվել: Կարճ՝ բուն «Վերք Հայաստանին» հիմնականում գրվել ու ավարտվել է 1841 թվականի ընթացքում, փետրվարից-հոկտեմբեր ընկած ժամանակամիջոցում, պահանջելով հեղինակից տիտանական աշխատասիրություն:

Այսօր էլ զարմացնում են մեզ երկի ստեղծման տեղագրին թափը, հեղինակի մտքերի հախուռն սլացքը, ինքնամոռաց տքնությունն ու հրեղեն գրիչը, վերջապես՝ պոլեմիկական հզոր շունչը, որ պարտադրված էր սույն վիպասանությունը կյանքի կոչող հասարակական-քաղաքական բուռն իրադարձություններով:

Մեկ անգամ արդեն գրիչ առնելով ձեռքը և գամվելով սեղանին՝ հեղինակը, կարծես, անկարող էր դադար առնել, և հրայրքի մեջ, մոլեգին թափով, սլանում էր դեպի վերջնագիծ, մինչև որ կդատարկվեր սիրտը, ֆիզիկապես կանգորանար:

Բայց ի՞նչն էր ստիպում հեղինակին ամեն ինչ ավարտելու այդքան կարճ ժամանակամիջոցում, այդքան թափով, կրքով ու կրակով:

Ինչո՞ւ չէր կարելի այլևս հապաղել:

1826—28 թթ. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հաղթական ավարտից հետո Հայաստանի արևելյան բնաշխարհներում վերահաստատված գաղթականությունը և սակավաթիվ բնիկները հեշտությամբ չկարողացան վերականգնել երկրի քայքայված տնտեսական կյանքը, բավարարություն տալ իրենց հոգևոր կարիքներին: Ամենուր զգացվում էր ցարական պաշտոնության և տեղական ու գիմվորական իշխանությունների անհարկությունը: Պատերազմի ծանր ու անբուժելի վերքերը դեռ երկար ժամանակ իրենց զգացնել էին տալիս: Սովյճ ու համաճարակները հիմնում էին երկրի առանց այն էլ նոսրացած բնակչությունը: Կենդանի մնացածներն էլ դժվարությամբ էին համակերպվում նոր միջավայրին ու իրադրություններին, նոր կարգերին ու օրենքներին: Ծայր հուսահատությունը ոմանց հարկադրում էր անցնել Արաքսի մյուս ափը, իսկ ավելի ըմբոստները, ինչպես Նոր Բայազետի գավառամասում հիմնավորվածները, 1828-ին հրապարակ դուրս գալով՝ պահանջում էին վերադառնալ հարկերի զանձան չափն ու կարգը: Կային տազանապ առաջացնող այլ պատճառներ ևս. պարսիկների և թուրք բարբարոսների դարավոր ու դաժան լուծը խեղել էր հայ մարդու մտածողությունն ու հոգեկան աշխարհը, աղարտել նրա դիմաստվերը, և հեշտ բան չէր հին վերքերից ու հոգևոր ճիրմից միանգամից ձեռքազատվելը: Հայաստանի այն ժամանակվա միակ գրագետ դասը՝ հոգևորականությունը, որի կոչումն ու պարտականությունն էր ժողովրդի կրթության ու լուսավորության մասին հոգալը, բնավ չէր ժտածում այդ մասին: Առանձին հայրենամյեր անհատների ձեռնարկումներն էլ համապատասխան աջակցություն չըստանալով՝ ձախողվում էին: Այսօրինակ պայմաններում, բնականաբար, կարող էին տազանապներ առաջանալ հայության ներկա ու գալիք բախտի մասին, տրտուճի խոսքեր՝ ընտրած ուղու և, ընդհանրապես, քաղաքական կողմնորոշման ճշտության շուրջ: Համր ու կույր այդ կրքերն ու

¹⁴ Խ. Արովյան, Պարապ վախտի խաղալիք, Ցփդիս, 1864, էջ <Ե>: Հեղինակի երկերի ակադեմիական հրատարակության մեջ այս արտահայտությունը տպագրված է բացթողումներով (տե՛ս հ. II, էջ 180):

վճառակար հոգւերը, հենց ի շահ հայության, պետք է սկզբից իսկ կանխ-վեին, քանի դեռ չէին ծավալվել:

«Վերք Հայաստանին» կոչված էր բացատրելու հայությանը՝ նրա արդի, հոգևոր ու տնտեսական թշվառության իրական պատճառները, ցույց տալու վերածնության իսկական ճանապարհը, միաժամանակ նաև արժեքավորելու այն մեծ և շրջադարձային նշանակությունը, այն վիթխարի դերը, որ խաղացին ռուս ժողովուրդն ու Ռուսաստանը հայ ժողովրդի պատմական քախտի մեջ:

«Վերքի» հեղինակը խոսում ու պատգամում էր աներեր հավատով ու հույսով, գրում ու դատում անկեղծ ոգևորությամբ և սրտի արյունով, առանց իրադարձությունները գունափոխելու, առանց հայության կյանքի ներքին խոցերը թաքցնելու:

«Վերքը» հուսալքվածների համար հորդոր էր և հույսի ազդարար, պայծառ գալիքի նախագուշակ և շեփորող:

6

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի պատմության մեջ քիչ ստեղծագործություններ կարելի է մատնանշել, որոնք իրենց խաղացած դերով, մեր հանրային կյանքում առաջ բերած գրական-քաղաքական արձագանքներով հավասարվելին Աբովյանի անօրինակ վիպասանության հետ:

«Վերք Հայաստանին» սկզբնավորում էր հայոց գրականության նոր շրջանը, զարկ ու շունչ տալով գրողների ու արվեստագետների մի ամբողջ սերնդի՝ Պռոշյան, Աղայան, Բաֆֆի, Փափազյան, Թումանյան, Իսահակյան, Վարուժան և ուրիշներ, որոնց ստեղծագործությունների մեջ դժվար չէ գգալ ու տեսնել իրենց մեծ նախորդի ոգևորություններն ու տագնապները, նրա ոճի թովչանքը, շնչավորված Հայաստան-աշխարհն իր հատկանշական կերպարներով ու պատկերներով:

Հասնել անասելի պարզության, խոսել ազգի սրտից, կարողանալ հանրության մեջ ներարկել ազատասիրական վեհ իդեալներ և ամենամարդկային ու նվիրական հույզեր՝ գուցակցված ամենակենսական քաղաքական հարցերն արծարծելուն, — Աբովյանի այս ավանդներն էին շարունակում նրա գրական հին ու նոր աշակերտները:

«Վերք Հայաստանին» թարգմանն էր հայ ժողովրդի դարավոր քաղաքների՝ Հյուսիսի հզոր տիրակալի հովանու տակ վերականգնելու հայության խաթարված քաղաքական կյանքը և զարգացման լայն ճանապարհ դուրս բերել ազգությանը՝ մեկնեղմիշտ փրկելով արդեն քանի՞ դար նրա վրա կախված ձուլման վտանգից:

Այս գրքի մեջ Աբովյանն անասելի, ներքին ցավով աշխարհի ու մարդկանց առջև բաց էր անում ազգի ու հայրենիքի դարավոր վերքերը, զգուշորեն մաքրում դրանք օտարերկրյա զավթիչների բռնությունների ու սրածությունների հետևանքով կուտակված ժանգ ու ծաղիկից, և ինչպես ամենաբուժիչ մի սպեղանի, ինչպես անձայր խավարի մեջ խարխափող ժողովրդի ճանապարհին անսպասելիորեն ճառագած մի լույս, վերջ դնելով նրա դարավոր տառապանքներին ու անիմաստ թափառումներին՝ ցույց էր տալիս համախմբման ու վերածնման իսկական ճանապարհը:

Հեռագնաց շեղումների ու վերհուշների ձևով, որոնք երբեմն հասնում են նախապատմական ժամանակներ, Աբովյանը ազգի անցյալի վրայից հեռացնում էր անորոշության շղարշը և լույս աշխարհ հանում մի ողբերգական կացություն՝ համոզելու ու հաստատելու համար, թե ինչպե՞ս և ինչո՞ւ՝ հոգևոր անասելի բարձունքների հասած մի հին ժողովուրդ կարող էր կորցնել պետականությունը և նետվել տգիտության խորխորատներ:

Վա՛յ է՛մ ազգին, որ աշխարքումս անտեր ա,

Վա՛յ է՛մ երկրին, որ թշմամու գերի ա,

Վա՛յ է՛ն խալիսին, որ ինքն իր կյանքն, աշխարքը
Զի՛ պահպանիլ ու հարամու ձեռ կտա...

Այս զգաստացնող բիրիական «վա՛յ...»-երն էլ ահագոյ ու տազնա-
պալի էին դարձնում բռնապետության լծի տակ լկված ու հարստա-
հարված հայության կյանքի ողբերգական պատկերը:

«Վերք Հայաստանին» վերաստեղծում էր հայության հերոսական
անցյալը, այն էլ ո՛չ թե իբրև մտապատրանք, այլ հին ու նոր սխրանք-
ների սի անվերջանալի շարք, վերծանում արդեն անհասկանալի դար-
ձած նրա պատմության սահմանների ու բնաշխարհների մեջ, իր ինքնուրույն
արդիականությունը նպաստող դասեր քաղում, անձնուրացության և հե-
րոսության բազում օրինակներ հայտնագործում նրանց մեջ, որոնց հարկ
էր հետևել ու ընդօրինակել:

Հայաստանն ինչ-որ անիրական բան չէր այնքա՛ն առասպելների ու
վիպական գրույցների սիրահարների երևակայությամբ կյանքի կոչված
անհոգ հասկացություն, այլ հին ու հզոր ազգ և պետականություն՝ ապրած
իր պատմական սահմանների ու բնաշխարհների մեջ, իր ինքնուրույն
մշակույթով ու ավանդներով, իր քերթողներով ու իմաստասերներով,
քաղաքներով ու տաճարներով, աստվածներով ու սրբություններով, ար-
քաններով ու հերոսներով: Դա ա՛յն օրհնյալ հողն էր, ա՛յն աշխարհը,
որի նախահայրերն ու նահապետներն, իբրև արժանի ախյաններ, մար-
տընչել էին հեյի ու Շամիրամի, Աքիլեսի ու Ալեքսանդր Մակեդոնացու
դեմ, իրենց անվեհերությամբ ու ողջամտությամբ, իրենց բազկի ու ընտ-
քի զորությամբ զարմացրել Հին Արևելքն ու Արևմուտքը և դեռ պատ-
մության արշալույսին ստեղծել ինքնուրույն պետական կարգ ու քաղաքա-
կրթություն: Հայության երբեմնի մրցակիցներն ու հարևան ազգերը
վաղուց արդեն հողի հետ էին հավասարվել ու կորել, «ո՛չ նրանց շուն-
չը կար, ո՛չ անունը, քայց սուրբ Հայոց ազգը, անհաղթելի Հայկա որ-
դիքը իրանց կյանքը, թագավորությունը, մեծությունը, փառքը, իշխա-
նությունը, զորքը կորցնելեն ետև... հազար թրի տակից, հազար կրակի
միջից՝ սիրտ-սրտի տված, հոգի-հոգու կացրած, մինչև էսօր էլ իրանց
գլուխը, իրանց սուրբ հավատը, իրանց սուրբ օրենքը էն վեհանձնություն-
ովը պահպանեցին, որի օրինակը աշխարքում ո՛չ էլել ա, ո՛չ կլլի»:

«Վերք Հայաստանին» հասկացնում էր ժամանակակիցների ու աշ-
խարհին, որ այսպիսի մի երկրի ու ազգի զավակ իրավունք չունի իրեն
նվաստացած զգալու, պետք է վերջ դնի անհեռակար դեգերումներին,
դեն նետի թշվառության ցնցոտիներն ու պանդխտի ցուպը, հպարտու-
թյամբ արտասանի պանծալի նախնիների սրբացած անունները, նման-
վի ու հետևի նրանց, յուրացնի հայրերի թողած հոգևոր վիթխարի ժա-
ռանգությունը, ջանա և ձգտի վերագտնելու դարերի կորուստը, իր օրի-
նավոր տեղը զբաղեցնելու աշխարհի մյուս ժողովուրդների շարքում:
«ույ՛ք չէ. որ հայրուրամյա բռնությունները շատ բան ոչնչացման ու
մոռացության էին մատնել, պառակտել ազգի միասնությունը, կործա-
նել Հայաստանի հոգևոր տաճարները, ետ մղել ժողովրդին դեպի միջ-
նադարականություն ու խավար:—Հայտնվել էին արդեն դրանք ընդմիշտ
քացասող ուժերը:

«Վերք Հայաստանին» բաց էր անում հայության կենսունակության
գաղտնիքները, թմրած հոգիների մեջ բորբոքում վերածնության կայծեր
ու կյանքի սաղմեր, գուրգուրանքով անեցնում դրանք: Նրա հաճաքեղ
ստեղծագործողի անկեղծ համոզմամբ՝ ռուսական տերության հովանին
և լուսավորության կենսատու ճառագայթները կարճ ժամանակում կվե-
րաշինեն հայության ավեր տունը, որի խորհրդանիշը վեպում Անի քա-
ղաքն է իր անկրկնելի, հրաշք կոթողներով և գրաված ու խաղացած
դերով մեր հոգևոր ու քաղաքական ոգորումների պատմության մեջ, մի-
այն թե հայն ինքը հասկանար իր չարն ու բարին, ճանաչեր իր իս-
կական բարեկամներին ու թաքնված թշնամիներին, շարունակեր ընթա-

Վնալ անձնագրոթյան ու առաքինոթյան ճշմարիտ ճանապարհով, բու-
ծեր իր դարավոր վերքերը, իճքեմանաշման գար և միավորվեր, պաշտ-
պաներ մայրենի լեզուն, Հայրենիքը և հայրերի սուրբ ավանդները: Հե-
տևաբար և Արովյանը շարունակ ուսուցանում ու պատգամում էր. «Մենք
որ իրար թասիբ քաշենք, իրար քոմակ անենք, իրար պայծառացնենք,
շենացնենք, ծովն էլ տեղիցը վեր կենա, մեզ տակով չի՛ կարալ անել,
ինչ թե օսմանցին յա պարսիկը... Աստված հիմիկ մեզ լիս ա բուց արել,
ռուսաց թրին սարեր չե՛ն դիմանալ. որ քանք անենք, մեկզմեկու սի-
րենք, մեր լեզուն, մեր եկեղեցին էնպես դայիմ բոցենք, ինչպես մեր եր-
ջանիկ նախնիքը, հավատացի՛ր ինձ, աստված էլ կսիրի մեզ, մարդ էլ»:

7

«Վերք Հայաստանին», ինչպես ասացինք, անհախադեպ երևույթ էր
իր հղացմամբ ու ծնունդով, իր կատարելագործման ու բյուրեղացման
ողջ ընթացքով: Նրա կերպարներն ու գաղափարները հեղինակի ստեղ-
ծագործական երևակայությունը քոցավառել ու թևավորել, միտքն ու
հոգին չարչարել ու ծվատել են բազում տարիներ, Արովյանի գիտակցա-
կան կյանքի հենք սկզբից: Նրանց հետքերը պարզ ճշմարվում են հեղի-
նակի վաղ մանկական հուշերի ցերթին ծալքերի մեջ: Այս նույնը վե-
րաբերում է նաև երկի լեզվական առադծին. վեպի ամեն մի բառը, ա-
մեն մի արտահայտությունն ունի աներևակայելի, մեծ խորքեր, անշա-
փելի ու հսկա տարողություն: Անտեսանելի թելերով դրանք ձգվում են
մինչև ժողովրդական մտածողության վճիտ ակունքներ, ազգային հա-
զարամյա դպրության կենսահաստատ ձևեր՝ իրենց զուգահեռներն ու-
նենալով եղիշեն անմահ դյուցազներգության և Նարեկացու ողբերի ու
հառաչանքների սրբացած մատյանի մեջ:

Մանկապատանեկան տպավորություններն ու տեսիլքները՝ տեսածն
ու լսածը, իրենց մահասարսուռ կերպարանքով ու երազային երանգ-
ներով՝ վաղուց բարդվել էին իրար վրա և ճնշում ու խոշտանգում նրա
միտքն ու հոգին: Բավական էր ձեռք տալ մեկին, անմիջապես նրա
խորքից կլավենի ու կերևային տառապած սրտերի կանչ, արյան ու ա-
վերածությունների, բոցության ու սրածությունների աներևակայելիորեն
դաժան տեսարաններ. «Ա՛խ, ո՞ր մեկն ասեմ. սիրտս արին ա դառնում,
ձեռներս դող ընկնում, աչքերս սևանում... Քար չկա մեր երկրումը, քոլ
չկա, որ Հայի արնով ներկած չլի: Դո՛ւ էլ սրանց հետ գնացիր,
սի՛րելի եղբայր իմ Մոսի, իմ գառունկ ախպեր: Ա՛խ, հենց մանուկ երե-
սիդ էի կարոտ, էն էլ չտեսա... Գերեզմանդ ի՞նչ տեղ ա, չգիտեմ, բայց
երկնքումն էլա երաբ մի քեզ կտեսնի՞մ, մի ճտովդ կընկնի՞մ. ա՛յ քո
անմեղ քանին մեռնիմ...»,—գրում էր Արովյանը, մինչ անդրադառնում էր
առարգիր հայության ողբերգությանը պարսից տիրապետության օրոք:

«Վերք Հայաստանի» մեջ ամփոփված են Արովյանի ամենամիտա-
կան հույզերն ու գաղափարները, հայության վերածնության համար դեռ
պատանեկան տարիներին կազմած նրա ծրագրերը, գալիք սերունդներին
ուղղված նրա պատգամները, թե ինչո՞ւ պիտի փայփայել ու զարգացնել
մայրենի լեզուն, հավատարիմ մնալ հայրենի ավանդներին, ոչինչ
չխնայել հայության որք զավակների համար բարգավաճ ու երջանիկ
ապագա ստեղծելու համար: Այս գաղափարները արծարծողները մի
դեպքում Արովյանի իդեալ հեղուներն են՝ Աղասին, Հարությունը, Պետ-
րոսը, մեկ այլ դեպքում՝ հեղինակն ինքը, որը, գրեթե միշտ, քնարական
շեղծվածների ձևով իր ստքերն է հարակցում կամ բխեցնում պատկեր-
վող դժոխային տեսիլներից. «Էրեխե՛ք, ձեր քանին մեռնիմ, ձե՛զ եմ
ասում իմ դարդը, ձե՛զ համար եմ գրում, ձե՛ր երեսին դուրբան. հո-
գումն էլ ըլիմ, էկե՛ք, վրես կանգնեցե՛ք. թե ազգասիրությունն ու հայ-

րենասիրությունը ձեզ վնաս տա, անհիծեցե՛ք ի՞նձ, թե օգուտ՝ օրհնեցե՛ք ու խեցե՛ք... Ա՛խ, մի՛ լաք, մի՛ նախատեք ի՞նձ, որ ես ձեր առաջին դժոխք եմ բաց անում...» և այլն:

Եվ Աբովյանն էջ առ էջ գրում էր «Վերք Հայաստանին», կարծես ողջ հայությունն ու տառապույ մարդկությանը վիշտն իր սիրտը լցրած: Այդքան ցավից ու տառապանքից ուրիշները խելագարվեին թերևս: Պահ մի թվում է, թե Աբովյանն էլ կկորցնի հոգեկան հավասարակշռությունը. կաղտորվի նրա միտքն էլ, բայց նա լարում է վերջին ուժերը, ճիգ անում բաղձալի եզերք հասնելու, սակայն նորից նրա դեմ հառնում են մոլորված մանուկներ ու աչքված քաղաքներ, ավեր ու ամայություն, նորից. շարունակվում է նրա ճանապարհը դարերի տառապանքների միջով՝ մինչև երկաթյան դժոխքի քանդվելը և Երևանի բերդի անկումը...

Հայ գրականության բոլոր դարերում և, ընդհանրապես, նոր ժամանակներում ստեղծված գրական հուշարձաններից «Վերք Հայաստանին» տարբերվում է իր շեշտված քնարականությամբ ու անհատականությամբ և հեղինակի էության բանաստեղծական վառ արտահայտությունն ու դրսևորումն է:

«Վերք Հայաստանին», այո՛, կյանք ու պատմություն է, պայքար ու կռիվ հանուն քաղաքական ու հոգևոր ազատության, ազգային համայնքի ու ինքնաճանաչման ուղի, բայց և իր խոհերի ու զգացմունքների մեջ մի ամբողջ դարաշրջան պարփակույլ անհատականություն, Աբովյանն ինքը՝ իր հավատով ու հույզերով, իր տանջանքներով ու տենչանքներով, իր բոբբություն երևակայությամբ ու հրաթափ խոսքով, իր մտավոր ու զգայական աշխարհի բոլոր-բոլոր դրսևորումներով՝ միշտ և ամենուր հայրենի ժողովրդի հետ, վերջինիս անցած պատմական ճանապարհի բոլոր վայրիվերումներին ակնհայտես ու արձագանքող, հոգով ու մտքով ձուլված ազգի ու հայրենիքի հետ, մի անսովոր ու անկրկնելի անհատականություն...

Աբովյանի սրտի զարկերը մինչև անգամ նշմարվում են հայ-հայրենիքի բանաստեղծական կերպարների և հայրենի բնության կատաղի տարերքի մեջ, որովհետև վերջիններս այլ բան չեն, քան նրա ճգոր երևակայությամբ՝ ըստ պատկերի յուրո, և հոգու խռովքով հագեցված անձնավորումներ:

«Վերք Հայաստանին» վեպում, ինչպես պատշաճ է ամեն մի ճշմարիտ ստեղծագործությանը, կան դեպքեր ու դեմքեր, ժողովուրդներ ու համայնքներ, նաև՝ իրական ու պատմական հերոսներ ու կերպարներ, որոնք, զրեթե բոլորը, իրականում ունեցել են իրենց նախատիպերը. բայց ամենն էլ, ի վերջո, հեղինակի հոգու բեկորներն են, նրա զգայական ու բանաստեղծական աշխարհների այլազան մարմնավորումները՝ մերթ իբրև հավաստապատում ժամանակագիր, մերթ դարերի կենսափորձից իմաստացած մի գեղելի հայ, մերթ հայրենիքի ու ազգի ոտնահարված պատիվն ու իրավունքները պաշտպանելու համար սուրը մերկացրած մի ապստամբ, մերթ տիեզերքի և արարչության գաղտնիքների մեջ թափանցել ձգտող մի «հերետիկոս», մերթ օտար ափերում, ծնողների ու զավակների, սիրած աղջկա ու կնոջ, մերձավորների ու բարեկամների կարոտից այրվող ու մոխրացող պանդուխտ, մերթ գաղափարի մոլեռանդ զինվոր ու նահատակ, որի համար ազգի և հայրենիքի վերածնունդն աներևակայելի է առանց հզոր Ռուսաստանի հովանավորության, առանց ռուս մեծ ազգի հետ հոգեպես մերձեցալու: Եվ ի վերջո՝ դարերի վշտերից ու վերքերից կարեվեր խոցված ու արյունաքամ, բայց և վերածնվող ու անմահ Մայր Հայաստանի՝ իր երազներով ու կիսատ մնացած երգերով, իր ցավի ու ողբի կանչերով, սերունդներին խանդավառող իր կրակոտ կոչերով ու փառաբանության խոսքերով, միախառնելով այդ ամենը գեների շառաչին և մոխիրներից հառնող հայության ցնծության կանչերին:

«Բայց վա՛յ ինչ, ո՞ւր հասա, ո՞ւր տարավ ինձ իմ կսկիծը, իմ էրված փրտը: Լեզուս չի՛, որ խոսում ա, հոգիս ա, որ զգում ա, ազգիս արիճը առաջիս թափում, իմ հայրենիքն առաջիս քանդվում, իմ սիրելի ախպոր աղի արտասունքը ու դառը սուգը սիրտս էրում, խորովում: Ի՞նչպես բերնիս հուպ տամ, արինս քթովս ա դուս գալիս, աչքս կայծակին տալիս. ջանս էլ տամ, էլի իմ թանկագին ազգի արինն ու ոսկերքը Շորագլալու հողումը չորացած՝ կարելի ա, թե մեկ մարդի չէրևեր, մեկ մարդ չիմանար, թե ես էլ էստեղ պետք է զոհ ըլեի, չիմանայի, չտեսնեի, չլայի...»:

Եվ ողբախառն այս կանչերով, իր «թոթով լեզվի» ողջ հմայքով՝ Արովյանը վարակում էր ընթերցողներին նույն այն տազնապնդով ու հոգսերով, որոնք վաղուց պատել էին իրեն, անջնջելի հետքեր թողնում նրանց հոգու և երևակայության վրա, զգաստացնում, համարձակություն ու ինքնավստահություն ենթաշնչում, որպեսզի քաջություն ունենային նայելու իրենց հոգու խորքը, տեսնելու և խոստովանելու սեփական արատներն ու սխալները, ձգտեին բարոյապես մաքրագործվելու:

Եվ նորից, որոշակի դիտավորությամբ՝ վերջ դնելու համար բնական օրենքի ոտնահարումներին, հանուրի հոգածության առարկա դարձնելու հայրենի երկրի, մայրենի լեզվի ու ազգային սրբությունների պաշտպանության խնդիրը, վերածնելու և զարգացնելու հայոց հիճ ու հարուստ քաղաքակրթության ավանդները, ոգեկոչելու ազգակիցներին՝ սեփական բազկի ուժով պաշտպանելու երկրի անկախությունը և քաղաքական ու կուլտուրական նվաճումները:

Ողջախոհություն, շրջահայեցություն, բարոյական կատարելության ձգտում, նպատակների հստակություն, հետևողականություն ու երախտագիտություն—ահա՛ Արովյանի ամենօրյա աղերսանքն ու աղոթքը, նրա պահանջը իր սիրելի ազգից.

Խելքդ ժողովես, լինիս կտրիճ հայ.
Ռուսաց հզոր, քաջ ձեռի տակին
Փոքր դիմջանաս ու քո աշխարհին
Մուլայիթ կենաս, արյունդ թափես,
Քո ազգը պահես, քեզ անուն ճարես...

8

Ստեղծագործական բարդ ու տևական աշխատանքներից հետո ամբողջացնելով իր երկը, Արովյանն այն անվանել է «պատմական վեպ», «նաև բացատրել. «Նրանով կարելի է իմանալ է՞ն ժամանակվա մեր աշխարհի հալը»¹⁵: Այս նշանակում է, թե հեղինակի առջև դրված է եղել շատ որոշակի խնդիր. վերակենդանացնել հայության կյանքի ու պայքարի մի պատմաշրջան՝ իրեն բնորոշ դեպքերով ու դեմքերով, կենցաղով ու հոգեբանությամբ, կենդանի խոսքով ու մտածողության ձևերով, բարու և զեղեցիկի ըմբռնումներով, տառապանքներով ու տենչանքներով, ազատագրական որոնումներով ու ոգորումներով, զրկանքներով ու զոհերով, որոնք հասկանալի կդարձնեին, անգամ օտարին, հայի ազգային բնավորությունը և պատմական ուղու փիլիսոփայությունը: Եվ այդ «է՞ն ժամանակը» XIX դարի առաջին տասնամյակներն են, արևելահայության այն օրերի տազնապալից կյանքն ու վիճակը պարսիկ ու թուրք բռնապետների լծի տակ, երբ երկրում ծայր էին առել ազատագրական կոիվները, ժողովուրդը միահամուռ ձգտում էր դեպի Ռուսիա և, ի վերջո, հասավ բաղձալի եզերք:

¹⁵ Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, Երևան, 1948, էջ 100:

Կարծես կենդանի՝ ընթերցողի աչքի առջևով անցնում են այդ տարիների նշանավոր հայորդիները իրենց իրական կյանքով կամ վիպականացված գործերով, հնավանդ ժողովուրդն՝ իր տանջանքներով ու տենչանքներով, անբաժան հնության կոթողներից ու հայրենի բնությունից:

Իր հերոսների քերականով հեղինակը դատապարտում է մարդկանց մոլար ընթացքն ու գործերը, վերաստեղծում հանրության տարբեր խավերի ներկայացուցիչների բնավորություններն ու պատկերները, որոնք վաղուց արդեն հեռացել էին պատմության թատերաբեմից, հեռացել ու մոռացվել:

Ահա՛ գեղջուկ հայ օրիորդը՝ անարատ գեղեցկության այդ հրաշք մարմնացումը. «Շարմաղ, լուսաթաթախ երեսը... արեգակի պես լիս էր տալիս ու վարդի պես փայլում... Երկնամաման աչքերը... տեսնողի հոգին վառում, կրակում էին... Ու՜ որ մեկ մտիկ էր տալիս, հոգին անմահական խնդրությունով լցվում էր...»:

Եվ նրա կողքին՝ նախնական կուտակման ժամանակների ընչաքաղց առևտրական-վաշխառուն, երևանցի զարգար Պ[ողոսը], որի նողկալի արտաքինին միանգամայն ներդաշնակում է դատարկ ներաշխարհը: «Շատ ֆիթր անելուցը երեսի կաշին գնացել, չոփ ա դառել, քամակն էկել, փորին դեմ առել, ամամները ցից-ցից մնացել, աչքերը կուլ գնացել...»:

Ահա՛ գյուղական նշանավոր սազանդար, քանաքեռցի Կրչոնց Վիրապը, վիպական Ջենով Հովանից հիշեցնող իր հզոր ձայնով ու երգ ու նվագով: «Պատերը դրքում էին, գետինը զրնգզրնգում, օճորքը տեղը հան ըլում, նրա ձենը մարդու քյալին ցցվում: Էնպես զոռբա ձեն ուներ Վիրապը, որ հինգ սմաթվա ճամփից լավում էր»:

Ու վերջապես՝ տոհմիկ հայի տիպար օրինակը, դստղի թումանյան-Մեհրաբյան Հովակիսը, առասպելական ժամանակների հերոսներին հիշեցնող իր սխրանքներով ու կենցաղով, բնության հետ ձուլված, բնության նման վեհ ու գեղեցիկ, հզոր ու կատարյալ, քաջ ու անվախ, արժանապատվության ու ազատության նախանձախնդիր: «Չորս զազ ու կես բոյն էր, զազ ու կես՝ թիկունքի լեռությունը, դռը՝ ապառաժի պես հաստ. ամեն մեկ ձեռը՝ մեկ սնի դղար, ամեն մեկ ոտքը՝ մեկ կաղնու ճուղքը, շիճքը՝ մեկ ծառի քոքի հաստությունով. երեսը մազն էկել կոխել, երկու թիզ ճակատի տակին սև-սև ունքերն էնպես էին բռնել ու նրա արծվի աչքերն ու քիթը կոխել, ինչպես կարկտախառ ամպը՝ գիշերվան աստղերը»:

Ջգտելով պատմական հավաստիության և դարաշրջանի ոգու ճշմարտացի վերարտադրության՝ Արովյանն իր ստեղծագործական առօրյայում չէր բավարարվում սոսկական փաստերով, փաստական ճշմարտությանը հակադրելով գեղարվեստական ճշմարտության սկզբունքը, այն էլ ո՛չ թե ճարտասանական ըմբռնմամբ, ալ ժողովրդական ընկալման ու մեկնարանման ոգով: «Վերք Հայաստանի» քննությունը ցույց է տալիս, որ բացի անձամբ տեսածից ու լսածից, ձեռքի տակ ունենալով պատմական ուշագրավ վավերագրեր և ժամանակագրական վրստահելի ցուցումներ, Արովյանը, համարյա միշտ, վերախմբագրում է դրանք և վիպական դրվագները զարգացնում պատմական գրույցների ու ժողովրդական ավանդությունների ոճով, երբեմն մինչև իսկ թույլ տալով ժամանակագրական «սխալներ», դիպվածները կենտրոնացնում իր նախընտրած իրական-պատմական հերոսի կամ գեղարվեստական կերպարի շուրջ:

Հայկական էպոսին Արովյանը ծանոթ չէր, քայց հրաշալիորեն էր ըմբռնում ժողովրդի էպիկական մտածողության էությունը, իբրև ծնունդով ու սնունդով հայ՝ այդ նույն ձևով ընկալում ու վերարտադրում կյանքն ու մարդկանց: Այս ճանապարհով էլ ահա «Վերքի» մեջ առատ-

րեն ներթափանցում են նաև ժողովրդական վեպի արտահայտչական միջոցները և տիպականացման եղանակները:

9

Ստեղծագործական առումով գյուտ պիտի համարել վեպի խորագիրը, որն աներևակայելիորեն հաջող է ընտրված և ունի վիթխարի տարողություն: Իր զույգ տարբերակներով այն մի կողմից փարում է ավանդական հայ գրականության կենսունակ տեսակներին, և մյուս կողմից՝ լուսավորական դարաշրջանի եվրոպական գրողների և առաջին ուսման տիկների նախասիրություններին՝ «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի»: Տարբերակներից առաջինի իմաստը բավականաչափ թափանցիկ է: Վերք ասելով՝ Արովյանը նկատի ուներ հասարակական, բարոյական, տնտեսական ու քաղաքական այն բոլոր խոչընդոտներն ու անլուծելի հարցերը, որոնք դարեր շարունակ խճողվելով ու կուտակվելով՝ արգելակել էին հայության բնականոն զարգացումը, աղարտել նրա ազգային դիմագիծը, պառակտել ազգային միասնությունը, մարդու կոչմանը խորթ ըմբռնումներ ու սովորույթներ պատվաստել նրա մեջ, դարձրել անհամարձակ, եսամոլ, օտարի ծանր լծին հյուս-հնազանդ, նաև հարկադրել շատ-շատերին՝ մոռանալու մայրենին, հայրերի լույս հավատը, ամաչել հայ լինելու համար...

Արևելյան Հայաստանի գավառները ռուսական տերության կազմի մեջ մտնելու օրերից թեև վերացել էր մարդկանց ֆիզիկական գոյությանն սպառնացող մշտական վտանգը, և հայությունն ստացել էր անձի ապահովություն և ունեցվածքի անձեռնմխելիություն, թեև այլևս չէր անարգվում նրա կրոնը, չէր արգելվում նրա մայրենի խոսքը և հայացի կրթությունը, սակայն դարավոր վերքերն այնքան խորն էին մտել ժողովրդի մարմնի մեջ, այնպես ճյուղավորվել, որ բուժումը պահանջում էր համառ ու տքնաջան աշխատանք, համազգային հոգացում ու տեսական խնամք: Հետևաբար, բոլորին հասկանալի լինելու համար, Արովյանը խրատում ու խորհրդածում, քննում ու վերլուծում, դատում ու փիլիսոփայում էր ո՛չ թե որպես եվրոպացի բարոյախոս ու քարոզիչ, այլ որպես դարավոր փորձից իմաստնացած մի արևելցի գեղջուկ հայ: «Անբանացնիլ թուրը կծանգոտի, նամ տեղի ցորենը կտորբոսի: Անվարիլ հողը թե ցանցեիր, դուրդ ու դուշը կուտի սերմդ: Առաջ մեկ վարի՛ր, հիմքը քցի՛ր, մեկ ազգի աչքը բա՛ց արա, դուզ ճամփեն որն ա, էն ճամփովը տա՛ր, սալ ու ձոր մի՛ քցիլ, դու նրան քո սերը ցույց տո՛ւր, տեսնիմ, թե նա քեզ չի՞ սիրիլ... Հայոց ազգի ջանքն դուրբան, մեկ նրա երեխին ուսումն տո՛ւր, նրա էն լուսաթաթախ հոգին կրթի՛ր, կրթիլ են ասում, թուրթ խաղալ, ֆրանցուզերեն խոսիլ, անգիր բերան անիլ, գլխիցը դուս տալ չեն ասում, ու շարական, փոխ յա շիլափլավ ուտիլ սով: Դըրճիլ, որ մեզ էս տեղն ա քցել, տեսնիմ, թե ջան կտա՞ քեզ, թե չէ՛... Խեղճ ազգի հոգին մինչև էսօր քաղել են, հազար տարվա յարա ունի սրտոսիլ, որ դեռ չի՞ սաղացել: Էնքան դառն արտասունք ա կոպ տվել, որ ո՛չ աչքումը լիս կա, ո՛չ բերնումը համ, ո՛չ սրտումը եղ. դու հենց ուզում ես, որ էստոնք մեկ սխաթումն անց կենա՞, ի՛նչպես կրի՞»:

Արովյանն իսկական մարգարե-բանաստեղծ էր և անզուգական քարոզիչ: Նա իր մտքերն ընկալելի դարձնելու համար ո՛չ թե քարոզը խճողում էր աստվածաշնչական քաղվածքներով և սուրբ հայրերի ու բիթիական այրերի կյանքից վերցված դրվագներով, այլ կյանքի թրթռուն պատկերների ու բնության երևույթների ցուցադրմամբ, բնությունից սովորելու, բնության օրինակով կատարելագործվելու հորդորներով: Նա անգիշտում կոխվ էր հայտարարում տգետ հոգևորականների, եսամոլ մեծատունների, անտարբեր ու անզգա քաղաքի մարդկանց դեմ, նզովում բռնապետությունը, հարստահարությունը, կրոնական մոլեռանդությունը,

ապագայնացման մարմաջը, փառաբանում ժողովուրդների բարեկամությունը, արդար վաստակը, հոգևոր ու քաղաքական ազատությունը; ամենաբուժիչ լուսավորությունը, հայությանը ոգեկոչում ազգային ինքնաճանաչման ու համախմբման:

Խորհմաստ է նաև վեպի խորագրի երկրորդ մասը՝ «Ողբ հայրենասիրի», որ, դժբախտաբար, ճիշտ չի հասկացվել: Ոմանք նրա մեջ այնպանություն են որոնել, իբրև թե հեղինակի քաղաքական կողմնորոշման մեջ կատարված շրջադարձի, ծանր հիասթափության ու հուսախաբության արտահայտություն, հետևանք հայության չիրականացված ակընկալիքների՝ ռուսական տիրապետության վերաբերմամբ: Այսպիսի մեկնաբանումը անհիմն է և միանգամայն հակառակ հեղինակի դիտավորության: Ըստ հեղինակային բնութագրման՝ այս վեպը հիրավի ողբ է, հայրենասերի մոտունք ու հառաչանք, բայց Ողբ-ի գրականագիտական ըմբռնմամբ: Ճիշտ է, Ողբը նաև սգո երգ է, բայց այնպիսի երգ, որն իբրև հարգանքի ու երախտագիտության արտահայտություն ասվում է ռազմի դաշտում կամ անհավասար մարտերում զոհված քաջարի մարդկանց վրա, որոնք իրենց մահվամբ ապրեցրել են շատերին և կյանքում ու պայքարում ունեցել մի ղեկավար սկզբունք, մի սուրբ հավատամք:

Ծունչդ տո՛ւր, հոգի՛դ, բա՛յց քո Հայրենիք
Մի՛ տար թշնամյաց...

Մտորելով «Աղասու սուգն» անելու, այսինքն՝ նրա հիշատակը հավերժացնելու շուրջ, Արուսյանը նպատակահարմար է գտնում սիրելի հերոսի դյուզացական գործերն ու ողբերգական վախճանի հանգամանքները ներկայացնել ժամանակի հերոս հայորդիների սխրագործությունների զուգորդմամբ, իբրև խոսույն վկաներ ներկա ու գալիք սերունդների համար, թե ինչ ծանր ու անդաժ գոհերի գնով է ձեռք բերվել Արևելյան Հայաստանի փրկությունը պարսկական դժոխքից, արծանի ձևով փառաբանել նրանց բոլորին, «որ լսող-կարդացող վառվի, բորբոքի, զարմանա, հիանա», որպեսզի սուրբ դառնա այն գործը, որի համար նրանք չխնայեցին իրենց կյանքը: Այսպես էր հերոսական ժամանակների կարգն ու օրենքը, այսպես էին փառաբանվում էպիկական բեմավորությունները:

Իրադարձությունների այսօրինակ իմաստավորումը ձայնակցում էր հին հայոց գեղագիտական ըմբռնումներին: Դեռևս VIII դարում Ստեփանոս Սյունեցին Քերականի մեկնության մեջ բացատրել է. «...Ողբերգությունն դիցազնաբար վերծանեցուք. ողբերգությունն զմխիթարական ասէ, զորս ի վերայ մեռելոց և կամ այլ ինչ թշուառութիւն կրելոց առնեն: Իսկ դիցազնաբար՝ զյորդորականն ասէ և զքաջալերականն և զներբողականն ի կենացս վախճանեցելոցն»¹⁶: «Վերքը» իսկական դյուզագներգություն է, մեռած ու մոռացված հայորդիների պանծալի գործերի ու անօրինակ սխրանքների ներքողում:

10

«Վերք Հայաստանին» ունի նաև իր ժողովրդական անվանումը, որ տվել են նրան առաջին ընթերցողները՝ «Աղասու պատմությունն», կենտրոնական հերոսի կյանքի անցքերի վերարտադրման իրողությունից

¹⁶ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи. В. Ադոնց, Արուսես Դիոնիսեայ Քերականի և հայ մեկնությունք նորից, Գետրոգրադ, 1915, էջ 198: Ողբերգությունն եզրաբառն իր ներկա գործածությամբ ունի հենց ողբի իմաստ. «...զքաջաց գործեցեալ իրս և զարուրիսն պատմել ահարապէս և չքնաղ հանգոյն գործեցելոցն գերազանցութեամբ ամենայնի դիցազնաբար....» (անդ, էջ 89):

Կելեղով: Դա համընկնում էր հեղինակի սկզբնական դիտավորությանը: Սովորաբար, ժողովուրդն այսպես էր անվանակոչում իր հին վեպերն ու սիրված պատմական դեմքերին նվիրված մատենագրական հուշարձանները՝ «Աղեքսանդրի պատմություն», «Վարդանի պատմություն», «Դավիթ Բեկի պատմություն» և այլն:

Հայտնի է, վերջապես, որ նմանօրինակ պատվի էին արժանանում մասնավորապես ժողովրդի պատմական բախտի մեջ կատարվող վճռական շրջադարձերի օրերին անմահ սխրանքներով պսակված և մահվամբ ազդ ու ժողովուրդ փրկած հերոսները: Հեղինակի ու ժամանակակիցների ըմբռնումով՝ հենց այդպիսին էր քանաքեռցի «աղքատ ու մեռած» Աղասին՝ «Վերք Հայաստանի» կենտրոնական հերոսը, որ կյանքում ունեցել է իր նախատիպը, այն է՝ ո՛չ թե մեկը, այլ մի քանիսը: Առաջին ընթերցողներից շատերը ժամանակակից էին կատարված դեպքերին ու թեպետև գիրք էին կարդում, բայց հեղինակի վիպականացրած դրվագներից հեշտությամբ կոհոնում էին, թե խոսքն ում և ինչի մասին էր:

Իսկական հերոսի ու հայի քնորոշ հատկանիշներն, ըստ Աբովյանի, հորդուն ու հարուստ հուզաշխարհը և մեծ կրթերն ու կարելիություններն են, սիրուց ու կարոտից, տառապանքից ու տվայտանքից, ոգևորությունից ու հիասթափությունից մի ակնթարթում խոնարհ հայսյց անվեներ դյուզացունի և անչար մանուկից կենսափորձով իմաստնացած ալեհեր ծերունու փոխարկվելու ունակությունը, անձնագոհությունն ու հերոսական գործերը, մարդ և անհատ, որն էությամբ ատում է բռնությունն ու հարստահարությունը, մտավոր խավարն ու հոգևոր ստրկությունը, անտարբերությունն ու եսամոլությունը և ինքնակամորեն պայքարի հորձանուտ է նետվում՝ մերձավորի արցունքը սրբելու և ազգի ոտնահարված պատիվը պաշտպանելու համար, գերադասելով՝ մեռնել սուրը ձեռքին, քան թե հարատևել ստրկական հնազանդության մեջ:

Աղասին հենց այսպիսի անհատ էր, իրական-իդեալական հերոսի առաջին օրինակը հայ գրականության պատմության մեջ, կյանքից գրականություն փոխադրված և ապա՝ վերջինիս միջոցով կյանքի վրա ազդած և XIX դարի մեր ողջ հասարակական կյանքով անցած առաջին նշանավոր հայը, որ անձնությունության ու գաղափարի մարդու օրինակ է ծառայել հայության համար թուրքական բռնապետության դեմ մղված նրա ազատագրական կռիվների օրերին:

Աղասու կերպարն ստեղծելիս՝ Աբովյանը նկատի է ունեցել ռուս-պարսկական պատերազմների ժամանակաշրջանի մի ամբողջ շարք անձանց՝ պարսիկների ձեռքով թավրիզում նահատակված Ռուստոմ Աբովյանին, դարաբաղյ: քաջարի բանագնաց Ասրի-բեկ Բահաթուրյանցին, քանաքեռցի հայրուրապետ Սիմեոն Մկրտումյան Խոջա-Հովհաննիսյանցին, գուցե և ուրիշների: Ամենքի կյանքից ու հերոսական սխրանքներից նա զանազան դրվագներ է ներառել «Վերքի» մեջ և վերաիմաստավորելով դրանք՝ միահյուսել իր հերոսի վիպական կենսագրության հետ:

Աղասին թշվառի և ունեզրկվածի պաշտպան է, ազգի ոտնահարված պատվի փրկության նախաձեռնող, ռուսական զենքի օգնությամբ Հայաստանը ազատագրելու և հայ պետականությունը վերականգնելու գաղափարի արծարծող ու զինվոր, հարազատ գերդաստանի, ժողովրդի ու երկրի փրկության համար կյանքը զոհաբերած անսովոր անհատականություն:

Քանի նա հարազատ միջավայրում է՝ գյուղական տոնախմբությունների ժամանակ տեղի ունեցող դազմի խաղերին իր շնորհքը ցուցադրելիս, ջիթիդ խաղալիս կամ ձի չափ օգելիս, մերձավորի արցունքը սրբելիս կամ նրա պատիվը պաշտպանելու համար սուրը մերկացնելիս, հայրենի հարկից հեռացած, սարեր ու ձորեր ընկած՝ օտար գավթիչների դեմ ազատագրական-հայդուկային պատերազմ մղելիս,— բնա-

վորութեամբ ու էութեամբ նա տոհմիկ հայ է, հար ու նման իր շատ եղբայրների ու քույրերի: Աղասին էլ գիտէ կարտոսից այրվել, անցյալի տեսիլներով հմայվել, խոնարհ հարսի նման տան մեծի առաջ հնազանդ կանգնել, տրտնջալ, բայց և տեղն ընկած ժամանակ՝ բազկի ուժը ցույց տալ... Այն պահերին, սակայն, երբ նա սկսում է դատողություններ անել Հայաստանի ներկա և ապագա բախտի մասին, դիմակազերծ անել եկեղեցու սպասավորներին, նրանց անվայել վարքը, քննել կյանքի զարգացման և բնության մեջ արարչության հրաշագործությունների արտացոլման գաղտնիքները, դառնում է հեղինակի երկվորյակը: Նման պահերին Աղասին շատ է քարձրանում իր ժամանակից ու շրջակայանից և դառնում Արովյանի անձնական խոհերի ու զգացումների կրողը, Արովյանի հոգու կտորը:

«Վերք Հայաստանի» հերոսական բնավորությունները բավականաչափ շատ են՝ ընդհանրապես մի քանի թանձր վրձնահարվածներով վերարտադրված, որոնցից ոմանց հոգին ցուլանում է իրենց տրտնջների մեջ, մյուսների սիրանքների մասին ավելի հեղինակն է պատմում, քան ցուցադրում: Հիշենք Ներսես Աշտարակեցուն, Գրիգոր Մանուշարյանին, գեներալ Մաղաթովին, արծափեցի Մանուկին, շուլավերցի Սոսիե և Հոհաննեսին, խղարաքիլիսեցի պարոն Սարգսին և նրա հոգեորդի՝ Վարդանին, Աղասու ընկերներին և ուրիշ շատ շատերի:

Արովյանին, ընդհանրապես, հայության կյանքն ու պատմական տրամադրությունները ավելի են հետաքրքրել, քան պատմական դեմքերն ու գյուղաշխարհից առնված անձնավորություններն իբրև անհատականացված բնավորություններ ու տիպեր:

Ազգային բացառիկության ու նեղսրտության հետքն իսկ չկա «Վերք» գործող անձանց դատողություններում: Հայերի ազատագրական ձգտումներին զուգահեռ հեղինակը խոսում է նաև Երևանի բնիկ թուրքերի հոգում կուտակված ատելության մասին ղզլաշների տիրապետության նկատմամբ, գնահատում Սվանդուկի խանի հայասիրական գործունեությունը: Այս բոլորը որոշակի նշանակություն ունեն պատմական ճշմարտության հաստատման համար, որին մեծապես նպաստում է ծագմամբ ռուս հերոսների սխրանքների կարագրությունը նույնպես:

«Վերք Հայաստանի» մեջ ջերմ ու հուզիչ դրվագներ կան նվիրված ռուս հասարակ գիվորներին և առանձին քաջարի զորականների, մասնավորապես Փամբակի սահմանային գծի հրամանատար Մոնտրեզորին (Վարա Մայոր), որի անվեհերությունը լեգենդների նյութ է դարձել: Արովյանը պայծառ գույներով է վիպում «ռուս սալդաթի ու թոփի հունարը», ապա և մաքուր սրտով խոստովանել. «Ռուսաց քաջ հոգին էր, որ մեզ ազատեց»: Այս ամենը և՛ պատմականորեն ճշմարիտ են, և՛ գեղարվեստորեն՝ համոզիչ, և՛, ըստ էության, հուզիչ ու անկեղծ:

Բայց, ահա՛, սրանց կողքին կան նաև բարձրաթռիչ ու փառաբանական խոսքեր ռուս զորավար Ի. Ֆ. Պասկևիչի և Նիկոլայ Առաքինի մասին, որոնք հաճախ աստվածացվում են, հայեցակետեր, որոնք սերտ աղերսակցության մեջ են Արևելյան Հայաստանի ազատագրության վերաբերյալ Արովյանի ժամանակակիցների հորինած համապատասխան արձակ ու չափածո երկերի և հայ ու ռուս ժողովրդական, պատմական երգերի հետ: Նույն կերպարները, նույն փառաբանությունը: Ո՞րն է դրա պատճառը: Չէ՞ որ և՛ Պասկևիչի, և՛ Նիկոլայ Առաքինի պատմական ծառայությունները նույնը չեն, ինչ վերագրում են նրանց Արովյանն ու մյուս հեղինակները: Այս իրողության մեկնաբանումն անողղակիորեն մեզ տալիս են ռուս ժամանակակից հետազոտողները XIX դարի առաջին տասնամյակների՝ ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին նվիրված ռուսական պատմական երգերն արժեքավորելիս: Պասկևիչի կերպարը, նկատում են նրանք, «ավելի շատ խորհրդանշիչ է ռուսական պետության ռազմական հզորության, քան թե արտացոլում...

քը որոշակի պատմական անձի բնավորության ու գործունեությանը <Երզնի> շատ տարբերակներում այդ նույն դերով է հանդես գալիս նաև ռուսական կայսրը, հանձին որի, իհարկե, չի կարելի նկատի ունենալ Նիկոլայ Առաջինի դիմաստվերը»¹⁷:

Ելնելով այս ըմբռնումից՝ «Վերք Հայաստանի» համապատասխան դրվագներն ու կերպարները միանգամայն հասկանալի են դառնում և ձեռք բերում հայության պատմական քախտի մեջ ռուսական պետականության խաղացած մեծ ու անուրանալի դերը հավաստող պերճախոս վավերաթղթերի արժեք:

11

Որքան հարուստ ու բազմազան են վեպի գաղափարներն ու էպիկական բնավորությունները, այնքան ինքնատիպ և ուշագրավ են նրա կառուցվածքն ու կերպարման հնարանքները:

«Վերքում» գրեթե չկան իսկական առումով տրամախոսություններ, ամբողջը ներքին խոսք է, սիրտ ծվատող մեղախոսություն. արտաքին աշխարհի ու պատմական անցյալի անցողորմները կարծես փոխադրված են մի զգայացունց անհատի ներաշխարհը և ծավալվում ու ամրագնացում են նրա հոգու և երևակայության մեջ: Այսպիսին է ոչ միայն հեղինակի խոսքը, այլև՝ հերոսների: Իսկ եթե առանձին դեպքերում էլ հերոսները հանդիպադրվում են իրար, ապա ավելի իրենք իրենց հետ են խոսում, ծավալվում, սրտերը թեթևացնում, քան՝ դիմացինի և շրջապատի, և շատ շուտ մոռանում խոսակցի գոյությունը: Այսօրինակ իրավիճակի պատճառները պետք է որոնել հայի պատմական ճակատագրի ու դարավոր կեցության մեջ՝ օտար տիքողների բիրտ օրենքների տակ: Իր հոգևոր և աշխարհիկ պետերից ստրկական հնազանդության կոչվող ժողովուրդը չուներ սեփական դեմք ինչպես ներազգային, այնպես էլ ներընտանեկան հարցերում: Իսկ երբ մարդու ձայնը բռնի խեղդվում է, նա ավելի ներքին խոսքի է վարժվում: Եվ այս իրողությունն իրեն զգացնել է տալիս, «Վերքից» բացի, նաև Արովյանի շատ ստեղծագործությունների մեջ:

ԼՄի առիթով փորձելով մեկնաբանել «Վերքի», իբրև կերպվածքի բացառիկության ու հավերժ թարմ գույների գաղտնիքը, Արովյանի բանաստեղծական աշխարհի անդամաճան ուխտավոր և մեծ քերթող Ավետիք Իսահակյանը նկատել է. «Այստեղ Հայաստան աշխարհն է իր տարերային-տիտանային պելզածներով, որոնք դարձել են բնապաշտական, կոսմիկական երածշտություն, օրատորիաներ»¹⁸:

Եվ իսկապես՝ հայ գրականության մեջ մինչև այսօր էլ անգերազանցելի են մնում Արովյանի հանճարով իրականությունից գրքի մեջ փոխադրված բնապատկերներն ու տարերային երևույթները իրենց ռոմանտիկ շնչով ու թովչանքով, իրենց այլաբանական շնչավորված էությանը՝ հզոր ու ամասարսուռ, հախտուղ ու հերոսական, ծավալող ու մոլեգնող: Հայրենի բնությունը անտարբեր չէ իր ծնած ու սնած գավակների ճակատագրի հանդեպ, վերջիններիս ուրախության պահերին՝ նա էլ է ծաղկում ու փթթում, հրճվում, օրհասական պահերին՝ մոլեգնում, ծառս լինում մինչև երկինք, հառաչում:

Լեզվի և ոճի առումով չունենալով հախօրինակը հին ու միջնադարյան

¹⁷ Исторические песни XIX века. Изд. подготовили Л. В. Домановский, О. Б. Алексеева, Э. С. Литвин., „Наука“, Ленинград, 1973, с. 24.

¹⁸ Ավ. Իսահակյան, Նրկերի ժողովածու, հ. IV, էջ 116:

հայ գրականության մեջ, «Վերք Հայաստանին» դարձավ օրինակ հետ-
նորդների համար և՛ ինքնատիպ հայերենով, և՛ վիպական արվեստով:

Արժե մեկ անգամ թերթել այս հրաշապատում մատյանը, տեսնել՝
հեղինակն ինչից ո՞ր է հասնում:

«Վերքը» բացվում է հայ նշանավոր պետական և ռազմական գործիչ,
Արևելյան Հայաստանի ազատագրության համար մղված կռիվների
մասնակից, Հայկական ժողովրդի վերջին կառավարիչ, զեղապետ Գևորգ
Ստեփանի Սմբատյանին նվիրված ընծայականով, մի մարդու, որին
խուր ինձ հայտնի Անդրկովկասի ցարական իշխանությունները: Այս
գալիս է Հառաջաբանը, որը պատմում է հայրենասեր գրողի որոնում-
ների ու տառապանքների, կրած նվաստացումների ու հաղթահարած
դժվարությունների մասին, նկարագրում տարիներ շարունակ նրան ըզ-
բաղեցրած գաղափարների, դեպքերի ու դեմքերի վիպական դժվարին
կերպարանավորումը՝ երկունքն ու ծնունդը: Հարություն տալ հայրենա-
նվեր հայորդիների գործերին, բաց անել ժողովրդի համբաժան լեզուն,
գրականության մեջ ներարկել թարմ շունչ ու կյանք, որպիսին ժողո-
վրդական լեզվամտածությունն ու աշխարհաբար հայերենն են, նկա-
րագրել ժողովրդի կյանքը, տեսած, լսած բաները՝ սեր, կարոտ, ծնո-
ղասիրություն, անճնազոհություն և այլն, գրականությունը դարձնել ազ-
գի վերածնության և բարոյական կրթության դպրոց, արթնացնել ժողո-
վրդի արժանապատվության զգացումն ու քաղաքացիական պատասխա-
նատվությունը, — հիմա՝ Արովյան-վիպասանի դեկավար սկզբունքներն ու
հուզող հարցերը «Վերք Հայաստանին» այս մասում:

Հառաջաբանին հաջորդում է բուն վեպը՝ բաժանված երեք գլխի:
Սկզբնական դրվագներում վերատեսչված են Հայաստան աշխարհն ու
հայության կյանքը դաժան բնության և օտարի քիթ ու վայրենի լծի
տակ, ամեն կանչ ու կարկաչ խեղդող Ջնոսն թագավորության մեջ:
Անցնում է ձմեռը, զարթոնում է բնությունը, լցվում ծաղիկներով ու աղ-
բյուրների երգով, բայց հայ մարդը թեթևություն չի զգում, հայի հայրե-
նիքում դարձյալ տիրում են անօրինականությունն ու բռնությունը, տառա-
գրությունն ու կոտորած. «Գետաստան չկա՛, իրավունք չկա՛, ու Հայ
ազգն էլ էճքած էսպես ցավեր տեսել էր, մեկ օր խոսքըմին չէ՛ր ըլում, որ իր
գլուխն ազատի: Աղջիկն ասե՛ր՝ քաշում էին, տղեն ասե՛ր՝ տանում, շատ
անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտա-
րում, էրում, նահատակում: Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապ-
րանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղլուշաղը»:

Հաջորդ դրվագներում հեղինակն անդրադառնում է օտար լծի դեմ
մղվող առաջին անջատ հայդուկային կամ ինքնապաշտպանական կռիվ-
ներին՝ ծավալված Հայաստանի տարբեր բնաշխարհներում, ի դեմս
Աղասու և նրա ըմբոստ ընկերների, հանուն հայրենիքի ազատության՝
հոգևոր կոչումն առժամանակ մոռացած Գրիգոր եպիսկոպոս Մանու-
չարյանի, Խղարաքիլիսայի իշխան պարոն Մարգարի ու նրա հոգեորդի
Վարդանի, Արծափեցի Մանուկի: Աստիճանաբար այս խմբերը միավոր-
վում են ռուս հաղթական զորքի հետ և արշավում դեպի Երևան:

Պատերազմի տարիների բոլոր դեպքերն ու դեմքերը չէ, որ գրավել
են Արովյանի ուշադրությունը վեպի երեք գլուխներում, այլ միայն կա-
րևորագույնները՝ Երևանի հայերի տարագրությունը դեպի թուրքական
տիրույթները, Խղարաքիլիսայի հերոսական պաշտպանությունը, Լոռու
անառիկ լեռներին սպաստանած գաղթականների անհույս դեգերումները,
Շամխորի ճակատամարտն ու Մադաթովի սխրանքները, Երևանի գրոհն
ու պարսիկների ծունկի գալը: Հանգամանորեն են վերարտադրված
հատկապես պատերազմի նախօրեի անցուդարձերը և որոշակի միտում-
նավորությամբ ընդգծված, որ Ռուսաստանի տիրապետության տակ
անցնելը հայության համընդհանուր ձգտումն ու տեղեկանքն էր՝ գեղջուկ-
ներից սկսած մինչև ազգի հոգևոր և աշխարհիկ պետեր:

Ահա՛ Այրարատյան աշխարհի հայ գյուղացու առօրյա բարեմաղթության խոսքերը, նրա շարունակական աղերսն առ քարձրյալ. «Տե՛ր. աստված, դու մեր Ռուս թագավորի սիրտը ռահմ քցես, որ զա՛, մեզ ազատի՛. ընչանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնինք...»:

Ահա՛ բարձրաստիճան հոգևորականության մշտական հորդորանքն ու ակնկալած հույսը. «Ասում են, թե ռսներն էկել, Ապարան են հասել. ո՞վ ա խաբար. բալքի նրանցից մեկ ումուղ ըլի, աստուծո բաճն անքննելի ա: Աստված նրանց թուրը կտրո՞ւկ անի. թե մեկ նրանց ոտը մեր հողը կմտնի, է՛ն ժամանակը թո՛ղ մեզ էլ տանին, մատաղ անեն: Շտապիլ հարկավոր չի՛... Շատը տարել ենք, քչին էլ համբերենք...»:

Ահա՛ օտարի կամայականություններից վերջ դնելու և հայրենիքը փրկելու համար հայդուկային կռվի ելած ըմբոսների ու Աղասու վերջնական նպատակը. «Նրանց միտքն է՛ն էր, որ... մնան Աճի՛ իրանց հին աթոռանիստ քաղաքը... կրկին շեն քցեն... Ռսի ռահաթ դառնան ու էստով աշխարքումը հավիտեական անուն ճարեն»:

Որպեսզի որևէ տարակույս չմնա, Աբովյանը վիպական հյուսվածքի մեջ է ներառել արդեն ռուսական տիրապետության առավելությունները տեսած Լոռու և Փամբակի հայության առօրյա հատկանշական դրվագներ, լսելի դարձրել նրանց խոստովանանքը ևս. «Աստված ռուս թագավորի թախտը հաստատ պահի, նրա դովլաթիցը՝ ինչ ասես՝ ունինք. օձի ձու էլ որ ուզենամ, կճարեմ...»:

Վերջապես ծուկնի է գալիս Երևանի քերդը, քանդվում է պարսիկների բոբբոքած դժոխքը Արևելյան Հայաստանում, հայության բաժան ռ տարագիր հատվածների առջև բացվում են համախմբման և հոգևոր ու տնտեսական զարգացման լայն հնարավորություններ: Սա վեպի բարձրակետն է: Ամբողջ ժողովուրդը ցնծությամբ ու երախտագիտությամբ փառաբանում է հզոր Ռուսիային, որ հայության բախտի նավը փրկելով կործանումից՝ ուղղում էր նոր հորիզոններ: «Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի Հայք իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռք քցել, է՛ս օրը, է՛ս օրը, է՛ս ուրախությունը չէին տեսել, է՛ին վայելել... Ռուսք... ցույց տվին էսօր, որ իրանց ոտքը որտեղ որ մտնի, էնտեղ բախտավորություն ու խաղաղություն պետք է ըլի... Եվրոպացիք Ամերիկա ավերեցին, հողի հավասարեցին, ռուսք Հայաստան կանգնացրին ու ասիացվոց բիրտ, գազան ազգերին մարդասիրություն ու նոր հոգի տվի՞մ... Հայք ե՛րբ կարեն ռուսաց արածը մոռանալ, քանի որ շունչ ունին»:

12

Արևելյան Հայաստանի ազատագրումը սկիզբը դարձավ այն մեծ շրջադարձի, որի խորհուրդն անչափ վեհ էր:

Հայության առջև ծառացած անհետաձգելի հարցը Արևմտյան բնաշխարհների ազատագրությունն էր, որի լուծումը նույնպես աներևակայելի էր առանց ռուս ժողովրդի աջակցության: Աբովյանն սպասում էր այն բաղձալի օրվան, երբ «Քուր Հայաստան տիրեսցէ Ռուսիայ»¹⁹: Եվ այս բաղձանքը կա նաև «Վերքում»՝ Աղասու և ընկերների նկիրական կարոտի մեջ՝ երբևէ վերաշինված տեսնելու Աճի քաղաքը, որ Թուրքիայի տիրապետության տակ էր: Այդ բանը չի վրիպել մինչև իսկ ցարական գրաքննության ամենատես լաշից, որը «Վերքի» մասին այսպիսի չափազանցված եզրակացություն է տվել. «...հեղինակն իր ողջ ուժերը գործ է դնում, որպեսզի գրգռի հայ ժողովրդի մոլեռանդությունն ու հիշեցնի նրանց իրենց քաղաքական ինքնուրույնության իրավունքը»²⁰:

¹⁹ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VI, Երևան, 1955, էջ 26:

²⁰ ԱГНАЛ, ֆ. 779, ց. 25, գ. 1821:

Հետագայում, սակայն, իրադարձություններն այլ ընթացք ունեցան։ Վաղահաս ձմեռն իջավ արևմտահայության երկնքում։ «Վերքի» ըստեղծագործման օրերին, բնականաբար, ո՛չ Արովյանը, ո՛չ էլ մեկ ուրիշն այսպիսի ողբերգական վախճան չէր երևակայում ու չէր էլ կարող։ Ապավինել ամեն ինչում Ռուսաստանին, պետական հավատարմություն ցույց տալ մշտապես և Ռուսիայի օգնությամբ վերամիավորել ողջ հայությունն ու Հայաստանը,—այս էր Արովյանի խրատն ու խորհուրդն իր ազգին, դրանց շուրջ էին դառնում հեղինակի մտքերը վեպի խորհրդապաշտական վերջաբանում, որ կրում է «Զանգի» խորագիրը։

«Վերք Հայաստանի» ստեղծագործմանը հաջորդած տարիներին գրական ու անձնական կյանքում Արովյանն ունեցավ և՛ հաջողություններ, և՛ ճաշակեց անասելի դառնություններ։ Տնտեսական թշվառությունն ու ազգային կյանքի լճացումը ծվատում էին նրա սիրտը և խորացնում հոգևոր դրաման, որոնց պատճառները, սակայն, թաքցված էին հայության կյանքի ու հոգեբանության ներքին ծալքերի, դեռ չբուժված վերքերի մեջ, հետևաբար և, ինքնըստինքյան, անկարող՝ խախտել կամ մշուշել նրա քաղաքական համոզումները, նրա բուսական կողմնորոշումը, հայության գալիքի մասին նրա երազանքները։

Արովյանը վերստին փառաբանում էր և օրհնաբեր համարում ռուսների մոտքը Հայաստան, բացատրում հայրենակիցներին, որ նրանք «Ասիայի այդ անհյուրընկալ անկյունը ձեռք են քերել ու պահպանել իրենց միլիոնավոր թանկագին զավակների արյունով» ու հետո էլ ջանք չեն խնայում «վայրի և բուսականությունից զուրկ կիրճերը դարձնելու ծաղկավետ հովիտներ»²¹։

Երևանյան տարիներին, 1844—45 թթ. խմբագրված «Մտածմունք ի տեսիլ Հայրենեաց» բանաստեղծության մեջ անդրադառնալով հայոց գալիքին, Արովյանը ազդարարում էր.

Այս բազուկ հզօր, որ զմեզ տածէ,
Այս հողմ զուարթարար ի Հիւսիսեան ծոցոյ
Փրկեացէ՛ ամուր, հարցէ՛, մեղմեացէ՛
Զայն ջեղմ հրաբորբոք խորշակ Հարաւոյ։

Սրբոյն Ռուսսիոյ զաւակք քաջաջան
Կրկին կանգնեացեն զմեր քակ աւերակ.
Արծուոյն Հիւսիսոյ ընդ թևովք տիրական
Կրկին զորացուք որդիքս հարազատք...²²

Այս նույն շրջանում, հոգու պարտքն հատուցելով իր մանկության օրրանին և ներքողելով իր սիրելի ծննդավայրը՝ Քանաքեռը, Արովյանը հույսով ու հավատով կրկնում էր, որ հայությանն այլևս անկարող են ծուկնկի բերել և վերածնության ճանապարհից շեղել օտար ու բռնակալ տերությունները.

Մի՛ այլ մխեսցին մեզ հեղեղք կործանման...

ո՛չ ապագայում և ո՛չ էլ ներկա օրերում, քանի որ

Մեծին Ռուսսիո աջ աշխարհաստ
Լիցի՛ մեզ հեցուկ, օժանդակ, նպաստ.
Արամեան սերունդ այժմէն յաւիտեան
Զնորայն օրհնեացէ՛ օծեալն յամայր աստ...²³

²¹ Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 145։

²² Նույն տեղում, հ. I, էջ 210։

²³ Նույն տեղում, էջ 244։

Իսկ Սարգսրապատի ջրանցքի կառուցման առիթով խորհրդածելով Արևելյան Հայաստանում տեղի ունեցած մեծ ու դրական տեղաշարժերի մասին, 1847 թ. վերջերին, Արովյանը խանդավառ հոգով գոչում է. «Եվ թող վե՛ր ելնեն Բագրատունիները, թող հառնե՛ն Տիգրաններն ու Հայկյան հսկաները՝ արժանավայել կերպով օրհնելու տոթ, կիզիչ Հա-րավո բարեկարգող Հյուսիսի որդիների առաքինի գործերը: Եվ թող Հայաստանի ամայացած, բայց կրկին կենդանացած տաճարներում վեր առաքվի միայն մի՛ աղերս, միայն մի՛ աղոթք. «Աստված, պահիր... հղոր ու բարերար սրբազան Ռուսիան»²⁴:

Միանգամայն իրավացի էր Արշակ Չոպանյանը, երբ գնահատելով Խարայել Օրոց մինչև Ներսես Աշտարակեցի մեծ հայորդիների հայրե-նանվեր գործունեությունը, իսկ ապա՝ Խաչատուր Արովյանի դերը հայ ազատագրական որոնումների մեջ, և նկատի ունենալով հատկապես «Վերք Հայաստանի» վեպում արծարծված՝ հայ ժողովրդի ուսական կողմնորոշման գաղափարը, գրում էր. «Հայ ազգը իր պետերու այդ ճշդատես քաղաքականությեն մեծապես օգտվեցավ... Այժմյան ինքնա-վար Հայաստանը այդ քաղաքականության մեկ արդյունքն է»²⁵:

18

Իր կենդանության օրոք Արովյանին բախտ չվիճակվեց հրատարակ-ված տեսնելու իր փափայած մատյանը, իր գրական ու քաղաքական հավատո հանգանակը: Դրա համար կային և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ: Սկզբից նյութական անպահովությունը թույլ չէր տալիս նրան այդքան մեծածախս մի գործ տպագրյալ գրին հանձնելու, իսկ ազգային բարերարներն էլ, որոնց հետ որոշ հույսեր էր կապում հեղի-նակը, նրա դուռը չբախեցին: Մասնավորապես վերջին իրողությունն էլ ինչ-որ չափով խախտում էր Արովյանի հավատը ընտրած ճանապարհի վերաբերյալ և կանգնեցնում երկընտրանքի առջև՝ արդյո՞ք ազգային հառաջադիմության վիճակը թույլ կտար, որ հայ ընթերցողը գրկաբաց ընդուներ իր գիրքը:

Կար մեկ այլ պատճառ էլ, որքան առաջ էր անցնում ժամանակը, այնքան հեղինակը քննական հայացքով էր վերծանում նախկին գրա-ծը, որոշ մտքեր հստակելու կարիք զգում, որ շեղում էր նրան հիմնակա-նից՝ բնագիրը տպագրության համար վերջնականապես պատրաստե-լուց: Բանն այն է, որ հակառակ հեղինակի հայտարարության՝ վեպի վերամշակման աշխատանքները մինչև վերջ չէին հասցված: Քրքի մի շարք էջերում դեռ մնում էին չլրացված անուններ ու ամսաթվեր, սըր-բագրելի տեղեր, հակասություններ: 1844—45 թթ. վերանայման ու հա-վելումների ժամանակ նշված աշխատանքներից և ո՛չ մեկը չավարտվեց: Այս պարագաներում Արովյանը հազիվ թե, գեթ առժամանակ, զբաղվեր վեպի հրատարակության հարցով: Այն ենթադրությունը, թե, իբր, գրա-քննությունն է խանգարել «Վերքի» տպագրությանը, անհավանական է, որովհետև Արովյանը նման փորձ, այն էլ 1845—1848 թթ., չի՛ արել: Լոկ ենթադրությամբ բավարարվելը բանական չէ, որովհետև ամենասո-վորական վարկածներն անգամ պահանջում են վստահելի կովանքներ, իսկ այդպիսիք ներկա դեպքում առհասարակ չկան:

Արովյանի վաղաժամ ու ողբերգական վախճանից հետո նրա ձեռագիր վեպի առաջին ընթերցողները դարձան իր իսկ մասնավոր աշակերտնե-րից մի քանիսը և Դորպատի հայ ուսանողները, ապա նաև՝ ժամանակի լուսամիտ մտավորականներից ու հանրային գործիչներից մեկը՝ Հովսեփ

²⁴ Ի. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 140:

²⁵ «Անահիտ», 1947, № 2, էջ 85:

Գարրիելի Փոնդոյանը (1824—1886), որը երկար բանակցություններից հետո, ի վերջո, համաձայնության է գալիս Արուսյանի կնոջ հետ, ապա գրաքննության թույլտվությունն ստանում (1857 թ. օգոստոսի 16-ին) և հաջորդ՝ 1858 թ. օգոստոսի 1-ին վեպը հանում վաճառքի՝ անձամբ հոգալով գրքի տպագրության հետ կապված բոլոր ծախքերը և կատարելով խմբագրական ու սրբագրական աշխատանքները: Այդ առթիվ առաջին հայտնի միակ հայտարարությունը լույս է տեսել «Մեղու Հայաստանի» լրագրում, նույն ամսի 2-ին:

1860 թ. աշունքին գրքի տպաքանակը դեռ սպառված չէր, և բանասեր Մարկոս Աղաբեկյանը «Կոունկ հայոց աշխարհի» ամսագրի էջերից հրավեր էր կարդում ազգակիցներին ձեռք բերել այն (գինը հենց սկզբից սահմանված էր 1 ռուբ. 50 կոպ.): Առաջին հրատարակությունը պարունակում էր բուն վեպը միայն, իսկ «Ջանգի» հավելվածը լույս տեսավ երկու տարի հետո, դարձալ Հովսեփ Փոնդոյանի ջանքերով, վերոհիշյալ ամսագրի էջերում (1860, № 11), ամենայն հավանականությամբ՝ ունենալով նաև առանձին արտատպություն:

Հայոց նոր գրականությունը մեծապես երախտապարտ է Հովսեփ Փոնդոյանին՝ Արուսյանի հիշատակը հավերժացնելու համար կատարած բարոյական այսօրինակ սխրանքի համար, այլապես դժվար է ասել, թե ե՞րբ և ի՞նչ պարագաներում կարող էր տպագրվել վեպը, և եթե ուշանար, ապա ի՞նչ դեր ու մասնակցություն կունենար մեր նոր դպրության ու հանրային մտքի վրա:

Շատերի ազնիվ դյուրահավատության հետևանքով «Վերք Հայաստանին» լույս աշխարհ հանելու պատիվը վերագրել են գլխավորապես Գևորգ Աթիսյանին, իսկ երբեմն էլ՝ կիսելով այն Հովսեփ Փոնդոյանի հետ, ինչ խոսք, նախաձեռնությունը վերապահելով առաջինին: Գոնե այսօր պարտավոր ենք վերականգնել պատմական ճշմարտությունը և արժանին հատուցել հայոց նոր գրականության այդ իսկական երախտավորին՝ հանրային ու մշակութային ճշանավոր գործիչ Հովսեփ Փոնդոյանին:

Ավելի քան 120 տարի առաջ սկսվեց «Վերք Հայաստանին» երթը մեր իրականության մեջ, իբրև մայրենի, հարազատ բարբառ, իբրև ազգությունը համախմբող հուսարդիչ խոսք, իբրև հայ և ռուս ժողովուրդների հոգևոր մերձեցման քարոզ, իբրև մի մշտաբորբոք խարույկ, որից իրենց կրակներն առան այնուհետև եկած բոլոր հայ մեծերը՝ գրողներ, մանկավարժներ, հանրային գործիչներ, ազատագրական պայքարի մարտիկներ: Արուսյանի մարդասիրական, հայրենասիրական գաղափարներով և ստեղծագործական հանճարով հմայվեցին հայ հեղափոխական-դեմոկրատներն ու մարքսիստ-հեղափոխականները՝ Միքայել Նալբանդյանն ու Ստեփան Ծաֆուշյանը, նրա գրական ավանդները շարունակող մեծ ժողովրդասերները՝ Ղոռչյանն ու Բաֆֆին, Քումանյանն ու Իսահակյանը, սովետական գրականությանն ու մշակույթի հիմնաքարը դնող գրող-արվեստագետները՝ Չարենցն ու Բակունցը, Սպենդիարյանն ու Սարյանը:

«Վերք Հայաստանին» հաղթական երթը շարունակվում է նաև այսօր...

Մի քանի խոսք ներկա հրատարակության մասին: Չնայած ժամանակին (1841 և 1845 թվականներին) Արուսյանը գրել էր, թե իր վեպը «վաղուց ավարտված է»²⁶ ու տպագրության համար էլ պատրաստ, և երա-

²⁶ Խ. Արուսյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 376 [892]:

զում էր, որ «բալքի թե մեկ աստվածասեր մարդ իր հոգու խաթեր տալի տար»²⁷, բայց, ինչպես ասացինք, մնում էին մի շարք անհարթություններ, չլրացված մասեր և սրբագրելի հատվածներ, որոնցից մի քանիսը մատնանշված են սույն հրատարակության ծանոթագրություններում: «Վերք» այդ վիճակում էլ, առանց խմբագրական լուրջ աշխատանքի, հանձնվեց հրատարակության: Բնագրային թերություններից ավելացան գրքանշանակն մեծ ու փոքր կրճատումներն ու տպագրական վրիպակներ: Գրքի հետագա արտատպությունները բնագրի վերծանման դժվարությունները չհարթեցին, և աշխատասիրողները բավարարվեցին լույս գրաքննական կրճատումները վերականգնելով, մասամբ և ակնհայտ վրիպակներն օտարելով, իրենց հերթին, սակայն, թույլ տալով նոր վրիպակներ ու աղավաղումներ: Ժամանակին այդ մասին ցավով է գրել Հովհաննես Թումանյանը. «Ամենալավ «Վերք Հայաստանին» դարձյալ մնում է հիճը, միճն մի ցոր լավը կտալի»²⁸:

1948 թվականին, Արքովյանի մահվան 100-ամյակի առթիվ, լույս տեսավ «Վերքի» ակադեմիական հրատարակությունը, որն արդար կլիներ բնորոշել որպես ձեռագիրը հարազատորեն պատճենավորելու փորձ, դրանցից բխող թերություններով հանդերձ: Վեպի բնագրում առկա բացթողումների մեծ մասը, նաև նրանք, որ հետևանք էին արտագրողների անփութության (վեպի մաքրագիր օրինակի բնագրի միայն երկու երրորդն է արտագրված Արքովյանի ձեռքով, մյուսների գրիչներն անձանոթ մարդիկ են), այստեղ ևս չեն լրացված կամ ծանոթագրված, բացահայտ սխալներն ու թերությունները թողնված են նույնությամբ: Գիրքն այդպես շարունակվում է արտատպվել, նաև՝ թարգմանվել սովետական ժողովուրդների լեզուներով:

Սույն հրատարակությունը նախապատրաստելի՝ սկզբնապես բնագիրը երկիցս և երիցս համեմատել ենք հեղինակային ձեռագրերի հետ, օտարել արտագրողների թույլ տված ակնհայտ վրիպակներն ու «տրամաբանական» ուղղումները, վերականգնել ինչ-ինչ պատճառներով բնագրից դուրս մնացած առանձին բառեր ու արտահայտություններ, ուղղել վրիպակները և աչք ծակող, անճիշտ գրությունները, կանոնավորել կետադրությունը, տողատել հանգավոր այն հատվածները, որոնք հենց չափածո էլ դիտվել են Արքովյանի կողմից: Վեպի երկրորդ գլխի մեծ մասը, երրորդն ամբողջությամբ և «Զանգի» հավելվածը բաժանել ենք ենթաօրինակների, այն ձևով, ինչպես այդ կատարել էր Արքովյանը գրքի ըսկզբի մասերում, բայց չէր կարողացել հասցնել մինչև վերջ: Բացի այդ՝ սույն հրատարակության մեջ վերականգնված է վեպի չափածո ընծայականը, որն անցյալներում չի տպագրվել, իսկ մեր օրերում էլ՝ մեկ-երկու անգամ, բոլոր դեպքերում՝ հրատարակիչների ծանոթագրություններին մեջ:

Հարկավ, «Վերքի» սույն հրատարակության մեջ էլ դեռ կլինեն սրբագրելի տեղեր, որոնք կուղղվեն տպագրություններից տպագրություն և, առաջին հերթին, գիտական նոր հրատարակության ժամանակ, որը կամփոփի հեղինակի բոլոր ստեղծագործական ձեռագրերն ու նյութերը: Դրա վրա էլ աշխատում ենք ներկայումս (այն նախատեսվում է հրատարակվելու «Գրական հուշարձաններ» մատենաշարով): Էականն այն է, որ սույն հրատարակության մեջ աշխատասիրողը հավատարիմ է մնացել հեղինակի կամքին և առաջին անգամ, ամբողջական ձևով, հայ ընթերցողին է մատուցում նրա մեծ զավակի հանճարեղ քերթությունը:

Գ. ՀԱՆՈՐԱՆԵ

²⁷ Նույն տեղում, հ. II, էջ 190:

²⁸ Հովհ. Թումանյան, Ուղղված «Վերք Հայաստանին», Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1951, էջ 118:

ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՈՂԲ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Պատմական վէպ
քաժանեալ յերիս մասունս

Ի Խ. Ապովեանէ

Վերատեսչէ արքունական նահանգական ուսումնարանին
որ ի Տփլիս¹

[illegible]

**«Վերք Հայաստանի» վեպի ճեղագիր անվանաթերթը
(Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի
թանգարանում)**

**ԱԶԵՌԻԱՏՈՂՄ ԶՕՐԱՊԵՏԻ,
ՔԱԶԱԶԱՐՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ,
ՎՍԵՄԱՄԻՏ ՀԱՅԿԱԶԵՆՈՅ ՍՄԲԱՏԱՅ՝
ԿԱՅՍԵՐԱՊՍԱԿ ԱՍՊԵՏԻ**

**Հոգեհարազատ սիրոյ
նորընծիւղ առնաւատչեալ**

Ես ու՛մ զիմ ողբոց բացից սգարամ,
Ես ու՛մ դառն վիրացս ցուցից զբերամ.
Վաղուց զլիսկոր թախծեալ իմ քնար՝
Անկեալ ի խոնարհ, խզեալ զյուսոյն լար,
Բանայր ինձ զայն խոր զընդան ճոզեսպառ,
Վայել զիմ կենաց վայրիկ այս թշուառ,
Գրկել զայն անսիրտ, սառն չքադարան,
Մահուամբ դիրանալ ի նախնեացն կայան.
Սուրբ փռչունն գէ՛թ իմ կոճղ ոսկերոտեաց
Նուիրել, մնալ զատ յայս արհաւիրաց:

Դո՛ւ զիմ սպառեալ շուճշ կրկին զարթուցեր,
Դո՛ւ նսեմ ճոզուոյս նոր լո՛յս բաշխեցեր.
Ի Քո՛յդ ճայեցեալ սէր առ Հայրենի՛ն,
Ի ջերմ Քո եռանդն սրտի վեճ-խորի՛ն՝
Անկամ կեղևանք յաչացս դառնակոծ,
Կենսաճատ իմ թևք զօրացան ի Քոց
Զայնից երկնասլաց: Ո՛հ, զարթնում յանկարծ,
Մահաշուճ իմ քուն մեկնի ինքնճալաժ:
Հայրենի՛ն իրով չքնաղ մեծութեամբ,
Հայկազունք իրեանց ընտիր վեճութեամբ
Նոր դրա՛խտ, նոր օ՛ր սուրբ բացան առաջի
Թխպեալ իմ ճոզուոյ, ծիրեալ իմ սրտի:
Որդին կարօտեալ ի ծունկս սիրավառ
Անկեալ՝ որոճէ զիր աստղ ուղեվար:

Կու չաչս երկնադերս մաղթանաց պահու
Կանգնիս ի բարձունս Հայկազանց դասու.
Հոգեհրաշ տեսլեամբ անմահ Քոց նախնեաց,
Կիլիկեան վեճից Սմբատաց քաջաց²
Զանուն, զօրինակ, զսիրտ և զեռանդն
Ի Քո՛յդ վեճ անձին բերեալ սիրամարտ՝
Բանաս զիմ լեզու, թանես զիմ բաղձանս
Ի բոլս դիցազանց մերոց ի կայանս,
Զորս բուռն ժամանակն թաղէր ի մոխիր,
Զորոց գին անկշիռ անգիտէր երկիր:
Թէ ո՛չ Բրաբիօն կապեսցեն Քեզ ձեռք,
Թէ ո՛չ խրոխտ կրկեսք կանգնեսցեն Քեզ մերք,
Մուսալն զՔո անուն՝ ընտիր, պաշտելի,
Հանցե՛, վե՛ճ սեպուի, ի կամարս երկնի:
Անդ ջոկք մեծազանց մերոց սուրբ նախնեաց,
Աստ սիրտք շնորհապարտք անմեղ մեր մանկանց
Դարուց խիզախեալ՝ զանմահ յիշատակ
Քո սուրբ պահեսցե՛ն յամալր անքանդակ:

Հ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Կրեսոս թագավորն Լիդացվոց, երբ Կյուրոս բոլոր աշխարքի տիրեց՝ ու նրա երկիրն էլ առավ, կռվումը դռնշուն, սիրելի, բարեկամ, զորապետ՝ նրան թողեց, ու էն անգին մարգարտի ու ջավահրե ամարաթներում մեծացած Կրեսոսը, որ իրանից բախտավոր աշխարքի երեսին էլ մարդ չէ՛ր համարում, ընկած մեկ պարսիկ զորականի առաջ, շունչը բերնին հասած՝ փախչում էր, որ իր գլուխն էլա պրծացնի, պարսիկը ետևիցը հասավ: Սուրը գլխին պսպղաց, աչքերը սևացավ, դեռ գլուխը չտված՝ հենց իմացավ, թե մահն, էն ա, հոգին առավ: Հենց ուզում էր, որ ի՛ր թուրը իր սիրտը կոխի, որ թշնամին իրան չսպանի, զորականը որ թուրը չի՛ բարձրացրեց, թագավորի միամոր որդին², որ հոր մահը չտեսավ առաջին, քսան տարվա փակ լեզուն իսկույն կապը կրտրեց, բաց էլավ, ու քսան տարվա լուռ սիրտը իր առաջին ձենը տվեց.

— Անօրե՛ն, էդ ո՛ւմ ես սպանում, քաշի՛ր թուրդ ետ, չե՛ս տեսնում, որ առաջիդ Կրեսոս ա, աշխարքի տե՛րն ա:

Ջորականի ձեռները թուլացան. թագավորն իր գլուխն ազատեց, քսան տարեկան լալ (մուկ) որդին իր հորը պրծացրեց:

Էսքան տարի ողորմելի թագավորազն իր կլանքն անց էր կացրել, ո՛չ ծնողաց էնքան սերը, էնքան գութն ու փափագը. որ նրա ձեռը մի լսեն, մի սիրտըները հովանա, ո՛չ էն փառքն ու մեծությունը, ո՛չ էն պատիվն ու իշխանությունը, ո՛չ էն գանձն ու հարստությունը, ո՛չ աշխարքիս սերն ու վախելչությունը, ո՛չ էնքան սիրելիաց ու բարեկամաց սերն ու քաղցր զրիցը, ո՛չ ամպի ձենը, ո՛չ գետի ու թռչնոց էն անուշ եղանակը էնքան վախտ նրա սրտին է՛ն ներգործությունը չէին տվել, որ մեկ ծպտա էլա, ու իր հոր, իր ազիզ հոր մահը որ առաջին տեսավ, սիրտն էլ իր խուփը ետ

քցեց, պառպանձած լեզուն էլ իր կապը կտրեց, փակ բերանը իջ կսկիծը հալտնեց, կարոտ, վերջին թելն ընկած հերը իր որդու ձենը լսեց, որ լսողի սիրտն էսօր էլ ա կրակ ընկնում, երբ մտածում ա, թե որդիական սերն էր, որ բնության դրած զնջիլը էսպես ջարդեց ու փշրեց:

Ո՛չ քսան, երեսուն տարուց ավելի ա՞, իմ ազիզ հե՛ր, իմ սիրելի ա՛զգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթոթվում ա. գիշեր-ցերեկ լացն ու սուգ իմ աչքիցս, ա՛խն ու ո՛խը իմ բերնիցս չի՛ պակսում, ա՛յ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հետո հողը մտնեի: Ամեն օր գերեզմանս առաջիս տեսնում էի, ամեն սհաթ մահվան հրեղեն սուրը զլխիս պտտում էր, ամեն րոպեի ձեր սիրտն ու դարդը հոգիս էրում, մաշում էր. լսում էի ձեր քաղցր ձենը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ձեր ազնիվ միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սերն ու բարեկամությունը, մտածում էի ձեր կորցրած փառքն ու մեծությունը, մեր առաջին, է՛ն հիանալի թագավորաց, իշխանաց գործքն ու կյանքը, մեր Հայրենյաց, մեր սուրբ աշխարթի առաջվան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի աննման բնությունը ու արած քաջությունները: Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս, թե ի՛նչ աշխարթի ծնունդ եմ ես. դրախտը մտքումս էր կենդանի, որ ինձ, երագում թե լուրջ, միշտ մեր երկրի անունն ու պատվականությունը իմ առաջս էր բերում. Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ քրնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրա՛նց որդին եմ. Եվրոպա թե Ասիա՝ ինձ անդադար ձեն էին տալիս, թե Հայկա զավակն եմ ես, Նոյան՝ թողը, Էջմիածնա՝ որդին, դրախտի՝ բնակիչը⁵. դաշտում թե ժամում, չղում թե տան՝ էն քարերն էլ ուզում էին, որ սիրտս պոկեն, հանեն, ուրտեղ որ իմ ազգի ոտը կոխել ա ու էսօր էլ կոխում ա. շատ անգամ, մեկ հայ տեսնելիս, ուզում էի էլած շունչս էլ հանեմ, նրան տամ,— բայց, ա՛խ, լեզուս փա՛կ էր, աչքս՝ բա՛ց, բերանս՝ բռնա՛ծ, սիրտս՝ խո՛ր, ձեռս՝ պակա՛ս, լեզուս՝ կա՛րճ. գանձ չունեի, որ գործով ցույց տայի ուզածս. անունս մեծ չէր, որ ասածս տեղ հասնի. մեր գրքերն էլ՝ գրաբառ, մեր նոր լեզուն էլ՝ անպատիվ, որ սրտիս հասարաթը խոսքով հայտնեի. հրամայել չէ՛ի կարող, խնդրեի, աղաչեի էլ՝ լեզուս մարդ չէ՛ր իմանալ, չունքի ես էլ էի ուզում, որ ինձ վրա չծիծաղին, չասեն՝ կոպիտ ա, հիմար ա, որ քերականություն, ճարտասանություն,

տրամաբանություն չգիտի, ես էլ էի ուզում, որ ասեն. «Օ՛հ, էն-
պես խորը, խրթին շարադրել գիտի, որ սատանեն էլ միջիցը մեկ
բառ չի՛ կարող իմանալ, հասկանալ»: Ես էլ էի ուզում, որ իմ
գլուխս ցույց տամ, որ ինձ վրա զարմանան ու ինձ գովեն, թե հա-
յերեն շատ խոր տեղակ եմ: Ով մեկ լեզու գիտի, ես մեկ քանիսը
գիտեմ⁶. Ի՛նչ գիրք ասես, որ չեմ սկսել թարգմանիլ ու կիսատ թո-
ղալ⁷. Ոտանավոր, շարադրություն հո՛, էնքան եմ գրաբառ գլխիցս
դուս տվել, որ մեկ մեծ գիրք էլ է՛ն կդառնա:

Էս միջոցումը աստված ինձ մեկ քանի երեխեք էլ հասցրեց,
որ պետք է կարդացնեի⁸: Սիրտս ուզում էր պատռի, որ էս երե-
խեքանց ձեռքն էլ ինչ հայի գիրք տալիս էի, չէին հասկանում:
Ռուսի, նեմեցի, ֆրանցուզի լեզվումը ինչ բան որ կարդում էին,
նրանց անմեղ հոգուն էլ էին էնպես բաները դիր գալիս: Ուզում
էի, շատ անգամ, մազերս պոկեմ, որ էս օտար լեզուքը ավելի
էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ բնական էր. էն
լեզվըներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործքերը,
նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին է՛ն բանե-
րը, որ մարդի սիրտ կարող է գրավել, չունքի սրտի բաներ էին,
ո՛վ չի՛ սիրիլ: Ո՛վ չի՛ ուզիլ լսիլ, թե սերը, բարեկամությունը,
հալոենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կոնիվը ի՛նչ գատ
են, բայց մեր լեզվումը թե էսպես բաներ ըլին, թո՛ղ աչքս հանեն:
Էլ ընչո՛վ էրեխին քո լեզուն սիրիլ տաս: Գեղըցու վրա ջավահիր
ծախիր, հա՛, շատ լավ բան ա, ամա որ կարողություն չունի, մեկ
կտոր ճաթի հետ էլ չի՛ փոխիլ քո տված անգին քարը:

Է՛ս հո էս. Եվրոպիումն էլ որ չէի կարդում բազի գրքերում,
թե հայ ազգը պետք է որ սիրտ չի՛ ունեցած ըլի, որ էնքան բա-
ները գլխումն անց են կացել, մեկ մարդ էլա չի՛ դուս էկել, որ մեկ
սրտի բան գրի, ինչ կա՛ եկեղեցու վրա ա, աստծու ու սրբերի,
բայց հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Մոֆոկլեսի գրքերը⁹
երեխեքն էլ գլխատակներին ունեին, չունքի բոլոր աշխարհի բա-
ներ են: Թե ասեի՝ բոլոր եվրոպացիք են անխելք, անհավատ, որ
աստծու բանը թողած էսպես ծոտի-մոտի բաների հետ էին ընկել,
հիմարություն կըլեր: Թե չէ, մեր Նարեկը¹⁰ թողած՝ ախր ի՛նչպես
էին նրանք էն գրքերին հավանում: Լավ գիտում էի, որ մեր ազգը
էնպես չէ՛թ, ինչպես նրանք ասում էին, ամա ի՛նչ անես. անաղում
ջաղացի քարն էլ չի՛ պտիտ գալիս, ո՛ւմ ասես:

Միտք էի անում, որ թե կտրին մարդ ասես, մեր միջումը հա-

զարավորն են էլել ու էսօր էլ կան. թե խելոք խոսք ասես, մեր պառավներն էլ հազարը գիտեն: Թե աղ ու հաց ասես, սեր, բարեկամություն, քաջություն, երևելի անձինք ասես, մեր գեղըցոնց սիրտն էլ ա լիքը էսպես մտքերով: Առակ, մասալա, սուր-սուր խոսքեր որ ուզեմաս, հո էն հետին ոամիկ մարդը մեկի տեղակ հազարը կասի: Ախր ի՞նչ պետք էր արած, որ մեր սիրտն էլ ուրիշ ազգեր իմանալին, մեզ էլ գովեին, մեր լեզուն էլ սիրեին, մընացել էի տարակուսած: Լավ գիտեի, որ թե օսմանցվի, թե դժբաշի երկրումը ինչքան էնպես երևելի, խելոք, հունարով մարդ են էլել, ինչքան խանի, շահի, սուլթանի դռներին սիրեկան աշըղ, լավ խաղ ասող, ոտանավոր շինող մարդ են էլել, շատը հայ ա էլել: Մենակ Քեշիշ օղլին¹¹, Քյոռ օղլին¹² բավական են, որ ասածըս սուտ չի՝ դուս գա: Թո՛ղ էսօր էլ մեկ մարդ Գրիգոր Թարխանովի հետ խոսա՞¹³, նրա ասած խոսքերն, նրա էն ճարտար լեզուն, նրա էն հիանալի բոյն ու պատկերը, նրա հենց մեկ հունարը տեսնի, որ հարիր տեսակ զանազան մարդի ու ազգի լեզուն, շարժմունքը, նստիլ վեր կենալը էնպես ցույց կտա, որ քոռանամ, թե Եվրոպիո էն ընտիր թեատրներումն էլ տեսած ըլիմ, ու վարժատան երես հո իր օրումը, կարելի ա, էն ժամանակն ըլի տեսած, որ այբբենը մեր միջումը գաբով էին բռնում, գյուլլով վեր քցում, էն ժամանակը կիմանա, թե հայոց միջումը ի՞նչ հունար կա:

Էսպես բաները մտածելով՝ օրս ու ումբրս մաշվել էր: Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ: Չէի իմանում, թե սրա չարեն ի՞նչ կրլի: Թո՛ղ լսողը չհավատա, ամա էս ցավն էնպես էր սիրտս առել, որ շատ անգամ գծվածի պես ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ ետ սիրտս լիքը տուն գալիս: Հենց է՛ս էր պատճառը, որ մեկ օր էլ, ամառվան դաստուրի ժամանակին, աշակերտներս որ առավոտը թողի, ճաշիցը ետ ընկա էլի սարեսար: Մարս կտրվեց, գնացի Նեմեցի Կոլոնիեն¹⁴, մեկ ցեմեց բարեկամի մոտ. նրանք էլ ինձ վրա ցավելով՝ իրեք օր չթողին գամ քաղաքը: Բայց քաղաքումն իմ սիրելի աշակերտները ու ծանոթ-բարեկամք իմ սուգս վաղուց էին արել: Հենց իմացել էին, թե Քուռն եմ ընկել, չունքի ամեն առավոտ, թիգուն գնում էի, լողանում: Էլի իմ, ի՛մ ազիզ, ի՛մ սիրելի աշակերտներն էին ընկել ետևիցս, որ բալքի մեկ բան էլա իմանան: Մեկ առավոտ փանջարումը նստած՝ էլի մտքիս հետ էի ընկել, որ նրանք առաջովս անց կացան: Որ չտեսա նրանց, հոգիս տեղըհան էլավ: Իմ

ու նրանց էն օրվան իրար տեսնիլը ո՛վ կարա պատմիլ. ով սիրտ ունի, ինքը կիմանա: Բալքի թե գերեզմանումը էս ձեր սերը մըտ-քիցս գնա, ա՛յ իմ սիրելի՛, իմ ազի՛զ բարեկամք. թե չէ, որքան էս կապուտ երկինքը գլխիս ա, շունչս՝ բերանումս, ձե՛զ, ձե՛զ սուրբ պետք է համարեմ ինձ համար, ձեր արևի՛ն մեռնիմ:

Բայց ա՛խ, ե՛րբ ա երկինքը մեկ կերպի մնացել, որ մարդի սիրտը մնա: Հենց մի փոքր մտքիս արևը երևաց թե չէ, էլի սև-սև ամպերը գլխները բարձրացրին, էլի կայծակ ու որոտումն սըր-տումս մեյդան բաց արին: Ջուրն ընկնիլ՝ էլ չէի կարող, չունքի աստուծո ահը մտքումս, անմեղ քոռփիս ձենը անկաջումս էր, սերն ու ծնողական գուրը՝ ջիգյարումս. էս դինջանայի, էթըմին ո՛վ՝ պահեր:

Բանը հենց էս էր, որ ասում էի մտքումս, թե նստիմ, ինչքան խելքս կրերի, մեր ազգին գովեմ, մեր երևելի մարդկանց արած քաջությունները պատմեմ, էլի մտածում էի, թե ո՛ւմ համար գրեմ, որ ազգը լեզուս չի՝ հասկանալ: Թեկուզ ուներեն, նեմեցերեն յա ֆրանցուզերեն գրած, թեկուզ գրաբառ, տաաը՝ կըլի որ հասկանա-լին, բայց հարիր հազարի համար՝ թեկուզ իմ գրածը, թեկուզ մեկ քամու ջաղաց: Ախր որ ազգը էն լեզվովը չի՝ խոսում, էն լեզուն չի՝ հասկանում, սաքի հենց բերնիցդ էլ ոսկի վեր ածի՛ր, ո՛ւմ պետք է ասես: Ամեն մարդ իր սրտի խաւք բան կուզի: Քո դաբ-լու փլավմ ինձ ի՛նչ օգուտ, որ էս չե՛մ սիրում:

Ում հետ էլ որ խոսում էի, էն էին թանխա տալիս, թե մեր ազգը ուսումնասեր չի՛, կարդալը նրա համար գին չունի, բայց էս տեսնում էի, որ էս մեր կարդալ չսիրող ազգը Ռոպենսոնի պատմությունը¹⁵, Պոննե քաղաքի հիմար գիրքը¹⁶ ձեռնեձեռ էր ման ածում: Էս էլ լավ գիտեի, որ ինչ երևելի ազգեր կան, բոլորն էլ երկու լեզու ունին՝ հին ու նոր: Ախր թե լուսավորչալ լեզուն լավ ա, ու քարերն էլ պետք է տրաքին ու հասկանան, էլ տոնլուդ, նշան, պատիվ ո՛ւր են տալիս դիլբանդին: Էն լեզվագետ իմաս-տունը թո՛ղ գնա, կանգնի, գոռա, ջանը դուս գա, լսողը թո՛ղ ին-քը հասկանա, լուսավորչալ գլուխն ափսոս չի՞, որ ցավի:

Միտք էի անում, որ գիժն էլ էս չի՛ անիլ: Էլի էսպես, մտքիս հետ ընկած՝ շատ անգամ որ դոնադ էի գնում յա քաղաքովն անց կենում, ուշ ու միտքս հավաքում էի, թե տեսնիմ՝ խալխը խոսա-լիս, քե՛ֆ անելիս ի՛նչ բանից ա ավելի հազ անում: Ծատ անգամ տեսնում էի, որ մեյդանում, փողոցում մեկ քոռ աշըղի է՛նպես են

հայիլ-մայիլ մնացել ու կանգնել, անկաջ դնում, փող բաշխում ճշրան, որ բերնըների ջուրը գնում էր: Մեջիս ու հարսանիք հո. առանց սագանդարի ե՞րբ հացը կույ կերթար: Ասածները թուրքերեն էր, շատը մեկ բառ էլա չէ՛ր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր դրախտը, ետ գալիս: Միտք արի, միտք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ. արի՛, քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալի՛ր, դրադ դի՛ր ու մեկ աշըդ էլ դու դա՛ն¹⁷, ինչ կըլի՝ կըլի, խանչալիդ քարը հո վեր չի՞ ընկնիլ, գառ վարադդ հո չի՞ գնալ: Մեկ օր էլ դու վեր կընկնիս, կմեռնիս, մեկ ողորմի ասող էլ չե՛ս ունենալ:

Մեկ բարիկենդանի¹⁸, աշակերտներս որ բաց թողի, սկսեցի, ինչ որ երեխությունիցս լսած կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ: Վերջը իմ ջիվան Աղասին միտս ընկավ¹⁹, նրա հետ հարիր քաջ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին, ու ամենն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ: Մյուսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ հլա սաղ-սալամաթ, փառք աստուծո, Աղասին՝ աղքատ ու մեռած, նրա սո՛րք գերեզմանին դուրբան: Ասեցի՝ կեղծախորություն չանեն, նրան ընտրեցի: Սիրտս էկել էր, բերնիս հասել: Տեսնում էի, որ էլ հայի գիրք ձեռն առնող, էլ հայի լեզուն խոսող քիչ ա գտնվում: Մեկ ազգի պահողն էլ լեզուն ա ու հալխալը, թե սրանց էլ կորցնենք, վա՛նն էկել ա մեր օրին: Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեստսի նման. երեսուն տարվա փակ բերանս Աղասին բաց արեց:

Մեկ երես բան դեռ չէի գրել, որ իմ մանկական սիրելի բարեկամ ու ազնիվ հայազգի պարոն դոքսոթ Աղաֆոն Սմբատյանը²⁰ ներս մտավ: Ուզում էի թուղթս ծածկեմ, էլ չկարացի: Ինձ համար աստված էր նրան էն սհաթին դրկել, նրա ջա՛նին մեռնին: Զոռ արեց, որ կարդամ. բարեկամիցը ի՞նչ պետք է թաքցըրած: Սիրտս դողում էր կարդալիս. մտքումս ասում էի, թե հենց հմիկ, որդե որ ա, գլուխը կպտտի, ունքերը կկիտի մյուսների նըման ու իմ ախմախության վրա մտքումն էլա հո կծիծաղի, որ երեսիս չասի: Բայց փիսը ես էի, որ նրա ազնվական հոգին դեռ լավ չէի ճանաչել: Վերջացնելիս, որ հենց էն ա, թուրն էկել էր, ոսկորին դեմ առել, որ չասեց՝ «Թե էդպես կշարունակեք, շատ հիանալի բան կդառնա»,— ուզում էի վրա թռչիմ, բերանը, է՛ն քաղցր բերանը համբուրեմ:

Նրա սուրբ բարեկամությանն եմ պարտական, որ մունջ լեզուս

բաց արեց²¹: Նա գնաց թե չէ, կրակը ջանս առավ: Սհաթի տասն էր առավոտի: Էլ հաց, կերակուր միտքս չէկան: Ժամանը առաջովս անց կենալիս ուզում էի սպանեմ, էնպես էի վառվել: Հայաստան հրեշտակի պես առաջիս կանգնել, ինձ թե էր տալիս: Ծնող, տուն, երեխայություն, ասած, լսած բաներ՝ էնպես էին կենդանացել, որ էլ աշխարհքը միտքս չէ՛ր գալիս: Ինչ խուլ, կորած, մոլորած մըտքեր ունեի, բոլոր բացվել, ետ էին եկել: Նոր էի իմանում, որ գրաքառ ու ուրիշ լեզվներ միմյն էն սհաթը միտքս փակել, բխովել էին: Ինչ որ ասում էի կամ գրում միմյն էն հաղաղը, գողացած կամ հնարած բաներ էին, էնդուր համար հենց մեկ երես բան գրում էի թե չէ, յա քունս էր տանում, յա ձեռս բեզարում: Գիշերվան միմյն սհաթի հինգը ո՛չ հացի մտիկ արի, ո՛չ չայի. չիբուխն էր իմ կերակուրը, գրիլը՝ իմ հացը: Տանցոնց խնդրելուն, նեղանալուն, խռովելուն էլ չէ՛ի մտիկ անում: Երեսուն թաբաղեն, էն ա, լցվելով էր, որ բնությունը իր պարտքը պահանջեց, աչքերս գնաց: Սաղ գիշերը ինձ էնպես էր երևում, թե նստած գրում եմ. երանի՛ կըլեր ինձ, թե էն մտքերը ցերեկն էին միտս ընկել:

Սի՛րելի կարդացող, չնեղանաս, որ բանն էսքան երկարացրի: Էնդուր համար եմ էստոնք հիշում, որ իմանաս, թե ազգի սերը ի՞նչ լազաթ ունի, ի՞նչ զորություն: Էն առավոտը իմ դուշմանի տանը ո՛չ ետ գա, ինչ որ ես տեսա: Աչքս բաց եմ անում՝ իմ խեղճ, դարիբ գերմանացի կողակցի ձենն²² ա ընկնում անկաջս: Տեսնիմ, իմ միայնակ որդին դռնին առած²³՝ էն արտասունքն ա վեր ածում, որ քարեր կմղկտան: Ծառա ու դարավաշ էլ մեկ պուճախում են փետացել, կանգնել, ինձ ցավելով մտիկ անում: Ո՛ւմ սիրտը էս սհաթին չէ՛ր ճաքիլ: Գծվածի պես վեր թռա, երեխիս եմ նայում. փառք աստուծո, սաղ ա. կողակցիս եմ աղաչում, սիրտը չի՛ կարում ետ բերիլ: Ի՞նչ էր պատահել, չէի իմանում:

— Անաստված, ինձ սպանեցիր հո, էս ի՞նչ բան բերիր գլխիս,— վերջապես լսեցի:

Ծառեքն էլ մեկ կողմից են ինձ դնամիշ անում: Վերջապես իմանամ, որ սաղ գիշերը անդադար դեյն եմ տվել, գոռացել, ա՛խ քաշել, խոսացել, ու ինչ որ հարցրել են տանըցիք, միշտ էլ գերմաներեն ո՛չ, հայերեն պատասխան տվել ու հազար տեսակ վայրիվերո բան ասել, էլ ետ իմ կռիվն սկսել: Միմյն սհաթի ինը, էս հալումն ընկած՝ ես իմ քեֆն եմ արել, նրանք՝ իրանց սուգն, ու ինձանից ձեռք վերցրել: Էն առավոտը, սաղ շաբաթ ու ամիս,

Էսօր էլ մուրազս հենց էն ա էլել, որ գնամ, ընկնիմ մեկ իշխաճի ոտք, ասեմ, ինձ մեկ կտոր հաց տա, ու ես՝ գիշեր-ցերեկ ընկնիմ գեղեղեղ ու մեր ազգի արած բաները հավաքեմ, գրեմ:

Թո՛ղ ինձ այսուհետև տգետ կանչեն. լեզուս բաց ա էլել, ի՛մ ընտիր, ազիզ, ի՛մ սրտի սիրեկան ազգ: Թո՛ղ տրամաբանություն գիտեցողը իրան համբքարի համար գրի, ես՝ քո կորած, շվարած որդին, քեզ համար:

Ո՛վ թուր ունի, առաջ ի՛մ գլխիս խփի, ի՛մ սիրտս խրի, ապա թե ո՛չ՝ քանի բերնումս լեզու կա, փորումս՝ սիրտ, ես լեղապատառ ձեռն կտամ.

— Էդ ո՛ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում:

Թաք ըլի դո՛ւ, դո՛ւ, իմ պատվական ազգ, քո որդու արածը, քո որդու խակ լեզուն սիրես, ընդունիս, ինչպես հերը իր մանուկի կմկմալը, որ աշխարքի հետ չի՛ փոխիլ: Երբ որ կմեծանամ, խըրթին լեզվով էլ կխոսանք: Աղասին քո փոքր որդին ա, սրանից դհա մեծ, դհա անվանիքը շատ ունիս. ինձ մի սիրտ տո՛ւր, արեւիդ մատաղ գնամ, տե՛ս, թե ի՞նչ ձևով եմ գնում, ճրանց բերում, առաջիդ կանգնացնում, որ դու էլ զարմանաս, թե էնպես որդիք ունեցողը աշխարքումն էլ ի՞նչ դարդ կանի: Ե՛րեսս ոտիդ տակը: Տո՛ւր էդ սուրբ ձեռդ էլ մի համբուրեմ, որ ինձ ներես, ու գնանք մեր սիրուն Աղասու մոտ:

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Զ Ի Ն

1

Բարիկենդան էր: Զինն էկել, դիզվել, սար ու ձոր բռնել էր: Պարզրկա գիշերը է՛նպես էր գետինը սառցրել, որ ամեն մեկ ոտը կոխելիս հազար տեղից տրաքտրաքում, ճոճոճում, ճքճքում էր ու մարդի ջանը սրսռացնում, ձեն տալիս: Ամեն մեկ ծառի ճղքներից, ամեն մեկ տան բաշից հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի քուլա կախ էր էլել ու բիզ-բիզ իրար վրա սառել: Հենց գիտես՝ սար ու ձոր կամ նո՛ր էր ծաղկել, կամ նո՛ր ծերացել, մահվան դուռն ընկել՝ շունչն էր մնացել, որ տա ու աշխարքիս բարով մնա ասի: Ղուշ, գազան, անասուն, սողուն՝ որը փետացել, էստեղ-էնտեղ վեր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ բունը մտել, ձենը կտրել, պաշարը վաճելում, գարնան գալուն սպասում: Գետերի, առվերների երեսները սառիցը մեկ գազ էկել, հաստացել, իրար վրա դիզվել, էնպես էր ջրի, աղբրի բերնին հուպ տվել, որ մոտըներից կանգնողը միմիայն նրանց խուլ ձենն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում քլքլում էր ու էլ ետ էստեղ-էնտեղ կամաց-կամաց ձենը կտրում, պապանձվում, սառչում:

Արեգակը էս առավոտ որ գլուխը քնի տեղիցը ու աղոթարանիցը չի՛ բարձրացրեց ու աչքը աշխարքի վրա քցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին է՛նպես էր պեծին տալիս, պըսպըղում, փալլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս, որ հենց իմանաս, թե ալմազ, գմուլթ, լախուր ու հազար տեսակ-տեսակ անգին քարեր ըլեին դաշտերի, սարերի գլխին, երեսին, դռին փռած: Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին է՛նպես էր մեղուան բաց արել, գոռում, փշում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ճամփորդի քիթ ու պոունկը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շա-

տին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շքուն-
չը կտրում, կամ ուռ ու գլուխ փետացրած՝ ճամփից խռկում, սար
ու չոլ քցում, խեղդում կամ քարեքար տալիս:

Էսպես մեկ խիստ ձմեռվան օրի լիսն ու մութը որ բաժանվե-
ցավ, ու աղոթարանը բաց էլավ, քանաքոցիք¹ քնից վեր կացան,
տան երդիկները բաց արին, երեսները լվացին, մեկ-երկու խաչ
հանեցին, բարի լիս ասացին իրար, երեխեքը ծածկեցին, ու ամեն
մարդ սկսեց գնալ իր բանը: Մեծ մարդիկը միրքները սանդղե-
լով, պառավ կնանիքը չարսավը կռնատակների տակին՝ կամաց-
կամաց տանիցը դուռ էլան ու տերողորմյա քաշելով, Հայր մեր
ասելով, Հրաժարիմքը կամ Հավատով խոստովանիմք քթոների
տակին փնթփնթացնելով, իրար ողջույն տալով, շատը իր տակը
քցելու շորը կամ մորթին ձեռին բռնած, քիթ-քթի տված՝ գնացին
ժամ, դուռը պաչեցին, էն վախտին վրա հասան, որ տերտերը դեռ
չէ՛ր էկել, ժամկոչին ասեցին, որ զանգակը քաշի, ու իրանք մեկ-
քանի ծունր դնելուցը հետո՝ մարդիկը սեղանի առաջին կամ սնե-
րի տակին, կնանիքը ետի դասումը իրանց համար իրար մոտ շո-
րը փռեցին, չոքեցին, գլուխ-գլխի դրին ու սկսեցին զրից անիլ,
իրանց գեղի ու տների բանը պատմիլ, իրար հալ հարցնիլ, մինչև
տերտերն էկավ, ճրագները, կանթեղները վառեցին, որտեղ ձեթ
չկար, մղդսին ածեց, տերտերի փիլոնը քցեց, ու ընչանք մյուս
ընկերն ու տիրացուքը կգալին, նա էլ մեկ-քանի ծունր դրեց, չո-
քեց, սաղմոս ասեց, աղոթք արեց, էկողներին լավ վարավորդ
արեց, որի քեֆը հարցրեց, որի հետ էլ էնքան զրից արեց կամ
աչքերը ճմբռեց, մինչև խալխը մի քիչ շատացավ, ընկերն էկավ,
Հրաժարիմքն ասեցին գոակը գլխներից, երեսները դեպի Արև-
մուտը դարձրին, ու հետո էլ ետ շուռ էկան, Հավատամքն ու Մե-
ղեն սկսեցին, զանգակն մեկ անգամ էլ քաշեցին, որտեղ զանգակ
չկար, ժամհարը գնաց, կտրների, աղբսների վրա ձեն տվեց, ու
ժամն սկսեց կանգնիլ: Տերտեր, տիրացու ժամն էին ասում, ժո-
ղովորդը ծունր դնում, խաչ հանում կամ չոքում, նստում, ու աշ-
խատասեր, ժիր մղդսին յա ճրագի ծերը կտրում, յա կանթեղնե-

ա. Երևանուցը Ռինգ վերստ Ռեռու մեկ գեղ՝ Ռյուսիսային կողմն ընկած.
տեղը բարձր, ջուրը քաղցր, օդը գեղեցիկ, չորս կողմը բաղերով լիքը: Մեջը
երկու Ռաշալի եկեղեցի, հազար քյալավա, ու այժմ Ռիսուն տուն կա: Ամառ-
վան տեղը Երևանու խաների:

րին լիս տալիս, յա թե չէ՝ միրուքը քորելով, կոնդալ գլուխը տրորելով, արշտոտալով դուրս ու տուն էր անում, բուրվառ շինում, կամ էրեխեքանց գլխին խփում, որ հանդարտ կենան, դալմադալ չանեն, դես ու դեն չվազին: Բազի անգամ էլ բռնոթու դուրսին ջիբիցը կամ ծոցիցը հանում, թափ տալիս, ինքը քաշում, փռշտում, երեսին խաչ հանում յա սատանին անիծում ու քեղխուղեքանցը թավազա անում, պատիվ տալիս ու էլ ետ ծանր-ծանր գալիս, իր տեղը կանգնում կամ տերտերի հրամանը կատարում:

Ջահել, տան տղերքն էլ ամառվան պես խոտ հնձելու, կալ կասելու, բաղ փորելու, էտելու, թաղելու, դարման կրելու դարդ չունենալով՝ ճվկոտալով, աչքները ճոռեցին ու քնահարամ մըտան գոմը, որ տավարին, ձիանոցը խոտ տան, տակըները սըրբեն, ջուրը տանին, ձիանը թիմարեն ու հետը խաղ ասելով էլ ետ կապեն ու գնան տուն: Հարգևոր հարսերը՝ ասղարույր գյուլաբաթնի օշմաղը մինչև քթըների կեսը խոր քցած, քող ու լաչակի ծերը աչքերի տակը խոր քաշած, որ էլ երեսները չէր երևում, մեկ դարայի կամ դադաք մինթանա հաքըներին, մովի կամ կտավի շապկով զարդարած, մեկ մեծ գոտկով մեջքըները չորս տակ, հինգ տակ կապած՝ դշի պես կուփ-կուփ վեր թռան, երեսներին մի քիչ ջուր քսեցին, փեշով սրբեցին, ու որն սկսեց տունն ավելել, որը դուռը սրբիլ, որն էլ չախմախին տվեց, կրակ արեց, որ թունդիրը վառի ու տան թաղարեքը տեսնի, պղնձները վրեն դնի ու կերակրները էփի, հազիր անի: Տան ջահել աղջկերքն էլ գլխըները սանդրեցին, մազըները հուսած, քամակներին քցած, կարմրագազաթ պոպոզ մորթե գդակները գլխըներին, անկաջները կապեցին, դաստամալն ուսըներին քցեցին, կուծը վրեն դրին, բերանը կալան ու գնացին, որ տան համար ջուր բերեն, ու երկար ժամանակ ջրի վրա իրար հետ զրից տալուցը ետը՝ էլ ետ իրար հետ խոսալով, ծիծաղելով մեկն իրանց տունը գնաց, մյուսն՝ իրանց:

Արեգակի շողքն ընկավ տուն. բորյազը մեկ կողմից էր շվացնում, բզզում, հոսանը մյուս կողմից ֆատացնում, փատացնում, վզվզում, ձինը փանջարեքովը ու երկովը ներս ածում, աչք ու անկաջ լցնում, ու էրեխեքն էլ քնաթաթախ վեր կացած, թունդրի չորս կողմովը բոլորված, շարված, ու դեռ անվա՝ ոտըները քարին, գետնին էին ծեծում, մորըները խփում, որ հաց առնին, ուտեն: Աթարի սև, թանձր ծուխը դուռն ու երդիկը կալել, տունը մխի

ծով էր շինել, էնպես որ մարդի աչքը առաջը չէ՛ր կարում ջուկի։ Էրեխեքանց սուգ ու շիվանը գլուխ էր տանում, քյալլա ծակում։ Որն օրորոցումն էր լալիս, որը դեռ յորդանի տակին, աչք ու բերան ծխով լիքը՝ գոռում, հարալ տալիս, որն էլ տված հացովը հեքիք չէր, էլի ժնգժնգում, ուզում էր, որ էլի տան, որ ձենը կտրի։ Խեղճ տանտիկինը հո, չէ՛ր իմանում, թե ձեռը ո՛րի բերնին դնի, ո՛րի աչքը կշտացնի, ու իր բերանն ու աչքը հո, բաց ու խուփ անելով մեռել էր, հենց բռնի՛ր։ Է՛նքան ծուխ էր կուլ տվել, բռնոթի քաշել, փոշտացել, հազացել, որ սիրտն էկել էր, բողազին դեմ առել։ Է՛նքան աչքերը տրորել էր ու աղի արտասունք թափել, որ աչքի լիսը թռել էր։ Է՛նքան կուզեկուզ, հավկրի պես ման էր եկել, պուճախե-պուճախ ընկել, որ էլ մեջքը չէ՛ր կարում քաշի։ Թունդիրն էլ քանի կենում էր, թեժանում էր։ Պղնձները ղլթղլթալով եփ էին գալիս, ինքն էլ թունդրի չորս կողմը դուբարա ավել քսեց, սրբեց, կերակրների համը տեսավ, աղ քցեց ու մտիկ էր անում, որ ժամավորը տուն գա։

Աւտուծո ողորմությունը հասավ. ծուխը ետ քաշվեցավ. քամին ետ առավ, ջրի գնացողները էկան, տղերքն էլ հավաքվեցան. արեգակը մեկ ջիդաբոյ էկավ, բարձրացավ, բայց դեռ Ողորմի աստծու ձեն չլսած, ժամավորները չէկած՝ ո՛վ էր կարող, որ բերանը նշխարք դնի։

Առվոտա սհաթի ութը դեռ չէ՛ր ըլիլ, էս որ ասում եմ։

— Է՛հ, ժամ չի՛ դառավ մեր գլխին, մեկ իշի հարսանիք դառավ, տո՛՛, — սկսեց տանուտեր Օհանեսի² մեծ տղա Աղասին բերանը բաց անիլ ու ինքն իրան թոնթորալ, բարկանալ, որ իր բոզ ձին թամբել, հագիր էր արել, որ էսօր դուս գնա, ջիրիդ խաղա ու ուզում էր, մոնց որ ըլի, մեկ փոքր նհար անի, ձիու քամակն ընկնի ու գնա, իր թալդաշ (տոլ) տղերքանց հետ իր քեֆն արամիշ անի։ — Տո՛, ձեր տունը չքանդվի, ախր ի՛նչ խաբար ա էսքան պոչը ձգել, երկարացնել։ Մեկ-երկու ծունր դի՛ր, երեսիդ մեկքանի խաշ հանի՛ր, պրծանք, գնաց. ժամի դուռը պաշ արա՛, էլ ետ արի՛, քո բանդ տե՛ս։ Ի՛նչ ա, էսպես օրն էլ ժամի տուտը բռնիլ, ե՛րկար մտիկ անիլ, որ հա կա՛ց ու բերանդ բաց ու խուփ արա՛, թե Օրհնլալ եղերուքն ասեն³, որ բերանդ հացի համ տեսնի։ Խաչը գիտենա, էս հալևորներն ու պառավները քանի մեծանում են, խելքներն էլ հետըները կորցնում։ Կուզես բարկացի՛ր, կուզես սառը ջուր խմի՛ր, որ մեռնիս էլ, էնքան պետք է մտիկ

անես, որ ժամավորները գան, Ողորմի աստված ասեն, որ բալքի թե աչքդ մի բան տեսնի: Մարդի աչքը ջուր ա կտրում, լերդը չորանում: Էսօր էլ հո մատաղ չե՛ն մորթել ու ժամի դռանը բաժանում, որ հա թե մտիկ էլ անես, էլի աչքդ մի բան տեսնի, բերանդ մսի համ, քիթդ մսի հոտ առնի: Տերտերների գլուխն էլ հո էսօր լավ տաքացած՝ ի՛նչ են մտիկ անում, թե գելը ոչխարը տարավ: Էլ տոտը չե՛ն կտրում, լավ-օսալ մի քիչ ոտը բարձրացնում, որ աղուներ շուտով վեր գա, ամեն մարդ իր տուն գնա: Էլ չե՛ն միտք անում, թե էսօր ի՛նչ օր ա: Էս կարգ դնողին ի՛նչ ասես. նրա հորն ռոդորմի, ինքը հացի տեղ խոտ կրլի կերած, բա՛ւ... Փորս վեց-վեց անում. դվլոց ա ընկել, էլի հա կա՛ց ու գլխիդ վա՛յ տո՛ւր, թե ժամը պետք է արձակվի, որ փորիդ արթալությունը ըլի:

— Տո՛, խա՛նի խարաբ, ի՛նչ էլավ քեզ. մի քիչ որ համբերես, լեզուդ քեզ անես, լավ չըլի՛լ. ի՛նչ ես առավոտ-առավոտ էլ բերնիդ կապը կտրել, հո կրակ չի՛ ընկել փորդ ու քեզ էրում, խորովում,— ասեց մերը բարկանալով,— հո աշխարքը տարան ո՛չ, դու մնացիր: Մենք ջա՛ն չունինք, մեզ աստված չի՛ ստեղծել, հողի՛ցը դուս էկանք: Պա՛-սլա՛, պա՛-պա՛... Էս ժամանակիս տը-դերքը հենց սալթ գծվել, կապովի են դառել: Ո՛չ մեծի պատիվն են ճանաչում, ո՛չ հավատի գինը, ո՛չ ժամի, աղոթքի զորությունը: Էս ա, որ աստված մեր գլխին բարկացել, ամեն կողմից մեզանից զուլումը պակաս չի ըլում, Է՛: Ամենն էլ իրանց ձին են քշում: Էրեկվան երեխեն էլ դեռ ոտը չի՛ էլած՝ ոտն ա բարձրացնում, հո աստված չի՛ վերցնիլ: Վեր կացար տեղիցդ, տո՛, մեկ հլա աստը-ծում փառք տո՛ւր, երեսիդ խաչ հանի՛ր, հոգիդ միտքդ բե՛ր ու ետո ուզածդ արա՛, Է՛. հո ճաքեցիր ո՛չ: Տա՛, տա՛, տա՛... Աստված ազատի էս ժամանակվա երեխեքանց ձեռիցը. որ թողաս, աշխարք կքանդեն: Լավ ա, որ աստված էսպես անօրեն բանին համբերում, ես ըլիմ, չե՛մ համբերիլ:

Աղասին հնազանդ որդի էր: Ղորդ ա, մորը ո՛չինչ չասեց, լովեց, բայց ասածը մեկ անկաջովը մտավ, մլուտովը դուրս էլավ: Ոտի տակին կրակ էր վառվում. սիրտն ուզում էր բերնովը դուս գա: Գեղումը մեծացած ուսմիկ տղա՝ հազարից մեկ անգամ ժամի երես չէ՛ր տեսել, մեղի ձեն չէ՛ր լսել, կողքերն ու գլուխը չոլում, սարում հաստացրել: Մեկ գատկին, մեկ էլ ջրօրհներին, սատանի աչքը քոռ, դորդ ա, զանգակի ու պատարագի ձեն իմանում էր, քայց վա՛յ են իմանալուն. ո՛չ սրտին էր քյար անում, ո՛չ ջանին:

Նրա համար ժամն ու գիլի հարսանիքը մեկ էր. ո՛չ բառն էր իմա-
նում, ո՛չ գորութիւնը. ծունր դնելիս կամ չոքելիս էլ մեջքն ու քտ-
ներն էին ցաւում. ծալապատիկ նստում էր, բեզարում էր, ոտի
վրա կանգնում էր, չէ՛ր կարում համբերի: Ծատ անգամ ճարը
կտրում էր, դուս էր գալիս ժամի հաչաթը, մեկ գերեզմանաքարի
վրա նստում, մեկ կուշտ քնում, էլ ետ ներս մտնում: Ծատ անգամ
էն վախտին էր ժամ գնում, որ ամեն բանը կերել պրծել, Օրհնչալ
եղերութն էին ասում: Ո՛չինչ. մեկ-երկու խաչ էր հանում երեսին,
ժամի դուռը պաշում, ետ դառնում:

Սաքի մենք է՛նպես չենք անում, կոպիտ գեղըցու վրա ի՞նչ
ենք զարմանում կամ ծիծաղում: Գրի սկն ու սիպտակը հո, էս-
պես տեղը, տերտերներն էլ բռանց էին ջոկում. ավետարան կար-
դալիս հազար անգամ յա չեշմակը (գլոզուկը) դգում, յա տիրաց-
վի, մղղսու վրա բարկանում, յա գրակալը դռըներին քաշում, յա
գլուխ, երես գրքի միջումը կորցնում, մեկ պատիկ մոմ էլ ձեռներն
առնում, յա մոմթի գլխին խփում, որ մոմը դուզ բռնի: Ծատ անգամ
էլ, որդիանց որդի, մեկ փիս, անմարս, դժար, ատամ, գլուխ կոտ-
րող բառ էլ որ չէր ուստ գալիս, հենց գիտես, թե սատանի թամ-
քը կորավ. շատ կռանալուցը, մոմը մոտ բռնելուցը յա գիրքն էր
էրվում, յա նրա միրուքը: Ամա էսպես բառեր վարավորդ էին ա-
րել, մոտանալիս կամ գլխովն էին պտտում, կամ մեկ գիրն ասում,
մյուսը կուլ տալիս. յա թե չէ՛ սխ կարդալու տեղ՝ սոխ կամ սքի-
տոր ասում, ղս ասելու տեղ՝⁴ դարախ, ու ժամ օրհնողն էլ յա չոռ
էր ասում, յա չէ՛ լսում: Մեկ գիր պակաս ժամանակին հո, աստ-
ված հեռու տանի. ժամ ու ժողովորդ, տերտեր, տիրացու իրար
գլխով էին դիպչում. ամեն բերնից էնպես մեկ խոսք էր դուս գա-
լիս, որ զուռնի փոխանակ դափ էին ածում, մմի տեղ ցխավելը
յա քշոցը կարդացողի ձեռը տալիս, տպողին օրհնում, կազմողին
գովում ու գեջղանգեջ, պրծնելիս, աստծուն էնքան իրանց հոգոս
համար շնորհակալութիւն չանում, որքան գրքից, ավետարանից
ազատվելու խաթեր: Թե մեկ վարդապետ էլ պատահում էր էսպես
վախտը, աստված հեռու տանի, էշը մնում էր ցխումը խրված,
կարդացողի ոտն ու ձեռը դող էր քնկնում, լեզուն կապվում:

Չէ՛ զարմանալու. ի՞նչ անեն խեղճերը, գեղերումը վարժա-
տուն չունին, քաղաքներումը՝ օրինավոր վարժապետ, ու շատի
փորում, հինգ օր ման գաս, մեկ այբի կտոր չէ՛ս գտնիլ: Է՛ճ էլ
շատ ա, որ իրանց ջուրը ջրամանիցը հանում են, իրանց բանը

յուլա տանում, ժամի կարգը կատարում: Ամենա էլ լավ գիտենք, թե ո՞ւմ մեղքն ա, ամա հիմիկ խոսալու վախտը չի, հետո կասեմ. ի՞նչ ասեմ, իմացողն իմացավ ու անկաջի տակն էլ բալքի թե քո-րեց. բայց անկաջի տակը քորելով փոր չի՝ կշտանալ, լավ է մեկ օր առաջ իր բանը կարգին բռնիլ ու չասիլ՝ էգուց, էգուց: Էգուց էլ էս օրվանից ա, ընչանք էգուց-էլօր կքցենք մեր բանը, գելը սուրուն կտանի. ով անկաջ ունի, լսի, թե չէ ոտը քարին կառնի:

Մեր Աղասին, բացի սրանից, դորդ ա, տարին իրենք-չորս անգամ սրբություն էլ էր առնում, խոստովանվում, պաս ու ծում պահում, զատկի մատաղին ընկեր ըլում, խունկ ու մոմ վառում, իր մեղքը բոլոր տերտերի վիզը կապում, ինքը բերանը սրբում, ձեռները լվանում, դրադ կանգնում, բայց էս պարտքիցը պրծածին պես, քրդի ասածին պես՝ «էլմը գեն կիկոն» էր, «էլմը գեն կիկոն»: Էլ էն ջուրը, էլ էն ջաղացը, ո՛չ դուղն էր բան մտնում, ո՛չ բե-րանը լազաթ առնում: Ծատ անգամ ժամի ճամփեն էլ էր մտքի-ցը քցում, խունկն ու մոմն էլ: Էս մեկ աղաթ էր. աչքը բաց էր արել, էնպես էր տեսել, թե հինգ նավակատյացը⁵ միս չպետք էր կերած, ժամ գնացած, ծում պահած, սրբություն առած, պատա-րագ արած, հոգո հաց տված, գերեզմաններն օրհնած. ուրիշներն անում էին, ինքն էլ էնպես էր անում, աղքատաց կերակրում, շատ անգամ քահանա, խալիս կանչում ու իրանց ննջեցելոց հոգիքը հի-շում: Բոլոր, բոլոր հիանալի սովորություններ էին, անմամն օրենք, սուրբ աստվածապաշտություն և մարդասիրություն: Աստված տա, ամեն ազգ էս բարեգործությունները ունենան, որ մեր ընտիր հա-յերն ունին, ամա Աղասու ջիգրը հենց էնդուր վրա էր շատ ան-գամ գալիս, որ ինչ անում էին, խելքումը չէին նստացնում, թե բանի զորությունն ի՞նչ ա: Հանդն էր դուս գալիս՝ իր մասիլն ու պտուղը, դաշտերի ծառն ու ծաղիկը, երկնքի պաշտառ արեգակի, լուսնի, աստղերի լիսը տեսնելիս նրա հոգին վերանում էր, խելքը թռչում, շատ անգամ աչքերը ծով դառած՝ տեղն ու տեղը մնում կանգնած. հենց իմանում էր, թե իրան դրախտը տարան: Զեռնե-րը քցում, գլուխը բաց անում, երեսը մեկ երկինքը, մեկ երկրի վրա քցում, հոգոց հանում ու ցանկանում էր, որ ձեն տա:

— Ա՛խ, ո՞վ էս դու, ո՞վ, յարադանիդ դուրբան, աստված, որ էսքան բարիքը ստեղծել էս մեզ համար: Ա՛խ, ընչի՞ չե՛ս քո սուրբ երեսը մեկ օր մեզ ցույց տալիս, որ ոտներդ ընկնինք, մեր սիրտը, մեր հոգին քեզ մատաղ տանք: Թե ասեմ՝ երկիրն ա մե-

Գնակ գեղեցիկ, հազար ծաղկներով, բուսով զարդարած, բաւ երկինքը ո՛ր թողամ, որ ցերեկը ինձ լիս ա տալիս, հանդիս պտուղէ հասցնում, գիշերը մութն իմ աչքիցս հեռացնում ու էնպէս, չադրի պէս գլխիս վրա կանգնած՝ անձրև, արև տալիս, որ ես ապրիմ, որդիքս պահպանեմ, աշխարքի պետքը գամ, որ մեռնելիս էլ գան հողիս վրա, ինձ մեկ դարտակ ողորմի ասեն: Ա՛խ, երկնացին թագավոր աստված, քանի աչքս բաց եմ անում, էս քո արարածը տեսնում, սիրտս կրակ է դառնում, աչքս՝ ծով, բերանս լուծում, մնում եմ տաքացած, ջեռուցած, բայց ա՛խ, ո՛չ էս կրակն ա ինձ էրում, ո՛չ էս ջուրն ինձ խեղդում: Աչքս մոլորված՝ էս թփից էն թուփ, էս սարից էն սարն ա ընկնում, ծառի տակին ասես, սարի գլխին ասես՝ մտիկ անելով աչքս շաղվում, ջուր ա կտրում: Հենց գիտես՝ մեկ ձեն, մեկ թև, մեկ աներևութ հոգի, տերևները խըշշալիս, դուռը թռչելիս, աղբյուրը քշքշալիս, բլուրբլուր երգելիս, հովք փչելիս, շաղը երեսիս թափելիս, ամպը գոռալիս, անձրևը գալիս ինձ ձեն ըլի տալիս, ինձ ձեռով ըլի անում, ինձ վրա խընդում, թե վայելի՛ր էստոնք, հողածին մարդ, բարի կա՛ց, բարություն արա՛, Արարչիդ մեծությունը ու խնամքը ճանաչի՛ր, ծառի պէս պտուղ տո՛ւր, ծաղկի պէս՝ հոտ, սարի պէս՝ աղբյուր, դաշտի պէս՝ մասիլ, երկրի պէս՝ հաց, երկնքի պէս՝ լիս. վայելի՛ր աստուծո բարությունը, ուրըշին էլ փայ տո՛ւր. աղքատ տեսնելիս՝ կերցըրո՛ւ, կշտացրո՛ւ, դուռը վրովդ անց կենալիս՝ կանչի՛ր, կուտ տո՛ւր. դու առատ ձեռք ունեցիր, որ առատ առնիս ու բախտավոր ըլիս: Ա՛խ, բոլոր կանեմ, կյանքս ուզեն, չե՛մ խնայիլ, բայց ի՛նչ կըլի, որ, տե՛ր իմ և աստված ջան, էս հոգին մեկ օր էլա մի ինձ երևի, որ էսպէս կարոտ չմնամ, չէրվիմ, չմաշվիմ նրա աննման սիրովը: Երագումն էլա որ մեկ նրա պատկերը տեսնեի, սրտումս դարդ չէր մնալ, էսքան չէի հասարթ ըլիլ ու տանջվիլ: Թե դու ես նրան ուղարկում, ո՛վ տեր իմ և արարիչ, ինչի՞ չես հրամայում, որ մեկ օր, մեկ օր, ա՛խ, մեկ րոպե էլա, մեկ աչքս բաց ու խուփ անելիս էլա, նա մի աչքովս ընկնի, նրան տեսնիմ, սիրտս հովանա ու էլի նրա ասածն անեմ. բերնիս թիքեն հանեմ, ուրըշին ուտացնեմ, հաքիս շորը հանեմ, ուրըշի լաշը ծածկեմ, որ հորըմորս սիրտն էլ ուրախանաւ, ասեն, թե «Աստված իրանց բարի զավակ ա պարգևել, որ իրանց խրատը գետինը չի՛ քցում, իրանց բարի ճամփին ա հետևում, իրանց ասածն անում»:

Հանդը դուս գալիս՝ մեր բիրտ Աղասին էսպէս էր մտածում,

ու սիրտն երվում, ժամիցը գալիս՝ փառք էր տալիս աստուծո, որ շուտ արձակվեցավ, ինքը տուն էկավ, որ մի քիչ դիմջանա ու գնա հանդը, որ էլի սիրտը բացվի, էլի էն հիանալի ձեռնը լսի ու իր բանն անի: Շատ անգամ բարկացած՝ գալիս էր, տան պուճախումը կամ քուրսու տակին ոտները փռում, տրտնջում, թոնթորում, գանգատ անում, որ ժամումը, խոստովանվելիս, էնպես բաներից էին խաբար առել, նրա սիրտը վիրավորել, որ նրա մտքովը ամենեւին երազումն էլ չէին անց կացել:

— Ա՛խպեր, արածիս հլա մեկ ճար արա՛, հետո ուրիշ բաներից հարցրու, է՛,— ասում էր շատ անգամ նեղանալով:— Հենց քանի ասում ես, էլի երկու սհաթ չոքացնում, գլուխդ տանում եմ, թե՛ ասա՛, ասա՛: Ախր որ չեմ արել, ի՛նչ ասեմ, ի՛նչ: Էնպես բան արա՛, որ սիրտս մի քիչ հովանա չա տաքանա, շատ խոսալուց ի՛նչ կշահվիս: Ասեճք, թե խաթր եմ անում, լիս չե՛մ ընկնում, հենց պետք է ամեն բան բերանդ գալիս խոսի՛ս: Սիրտս սրտում ա էդ հարցրած բաներիցդ, քար ըլի, էդ խոսքերը չի՛ տանիլ: Ախր ի՛նչպես եմ աստուծո սուրբ տաճարումը էնպես բաներից խաբար առնում, որ չոլումը չի՛ պետք է խոսացած, բալքի թե քամին իմանա, տանի, ուրըշի անկաջ քցի. տանը չի՛ պետք է ասած, որ չըլիմ չիմանամ, պատերը զարգանդին: Ես իմ կարճ խելքովս էնպես եմ իմանում, որ մարդ խոստովանվելիս ինքը պետք է իր մեղքի վատությունը, իր արած չարությունը միտք անի, փոշմանի, գղջա, աստծուն խնդրի, որ իրան թողություն տա, որ էլ չանի. կարողություն տա, որ իր ճամփիցը չհեռանա, բարի ըլի, թե չէ՛ զոռ անելով, մարդի վրա բեռը դնելով, անկաջը էսպես բաներով լցնելով, սրտիցը ո՛չինչ խաբար չառնելով ի՛նչ կընկնի մարդի ձեռքը. ոչինչ: Հինգ օր էլ գլուխդ քարեքար տուր, տարով ծում պահի, որ սիրտդ թամուզ չի՛, ի՛նչ օգուտ: Թե ինձ վատություն ես արել, պետք է սրտով իմանաս, ինքդ փոշմանես, թե չէ ուրըշի ասելով դու հո քո ուզածը ու քո խորհույդը չե՛ս թողալ: Տերտերի առաջին չոքելիս, մեղա տալիս էնպես պետք է վեր կենաս, որ խղճմը՝ տանքդ դինջ ըլի, նրա ասածը գլխումդ մտնի, թե չէ՛ սիրտդ լիքը գնացիր, լիքը վեր կացար, ի՛նչ օգուտ: Խաթա-բալա ա, է՛լի. մեկ որ չախեդ ձեռ ա ընկնում, էլ չեն ուզում, թե պոկեն:

Հաղորդության օրը որ գալիս ա, աստված գիտենա, ջանս դող ա ընկնում: Ինչ աման-չաման կա, լվանում եմ, դուղս մը-

զում, քամում, բեխնա քանդում, որ տեսնիմ, թե ի՞նչ եմ արել, որ ես ինքս ասեմ ու հարցնիլ չտամ: Տուն չե՛մ կտրել, մարդ չե՛մ սպանել, ուրըշի հացը ձեռիցը չե՛մ խլել, աստծուն իրան ալան ա. գողություն, չարություն, անառակություն մտքովս էլ չի՛ անց կե-
նում, էնքան արևի, անձրևի տակին չոքըչոք եմ անում: Առավոտը գնում եմ հանդը, ըիգունը գալիս, մեկ մարդի ծուռը աչքով չեմ մտիկ տալիս, էլ մեղքս ո՞րն ա, որ հենց գլխընեքս տանում եմ, թե՛ հա՛, ասա, հա՛, ասա՛: Ես լավ գիտեմ՝ մեղքի պարկն ո՞վ ա, իրանցից պետք է հեսաբ պահանջել. մեզ վրա եմ բեռը բարձում, մեզ մեղավոր շինում: Ղորդ եմ ասել, թե շատ կարդացողի ծուծը բարակ կլլի, գլխումը խելք չի՛ ըլիլ կամ թե չէ կթուրքանա: Աշ-
խարքս կարդացողիցն ա շինվել, կարդացողիցն էլ պիտի քանդ-
վի: Իմ դուշմանս նրանց ձեռը չընկնի, սաղ-սաղ կուտեն մարդի: Ինչ ասես՝ նրանցից դուս ա գալիս: Ավետարանը իրանք եմ կար-
դում, ժամ ու պատարագ իրանք անում, մեզ ասում, թե մեր ա-
սածն արեք, մեր գործքին մեք նայիլ: Ախր ի՞նչպես չնայեմ, հո-
քոռ չեմ, փառք աստծու: Ինչ ճամփով որ դու գնում ես, ես էլ էն
ճամփովը պետք է հետդ գամ. տո՛, դու դուզ գնա՛, որ ես էլ դուզ
գնամ, է՛. զոռի բան չի՛ հո: Տո՛, դու խեցգետնի պես ծուռն ես
եռում, ինձանից պահանջում ես, թե ծուռը մի՛ գնար: Առաջ դու
արա՛, ետո ինձ խրատ տո՛ւր, է՛:

Ես էլ գիտեմ, որ աստված փիս բանը չի սիրիլ. ես որ հող տեղոյս աստում եմ, նա ի՛նչպէս կընդունի: Թե բան ունիս, է՛ն ասա, Էդով քարվան չի՛ կտրվիլ: Նստում եմ երկա՛ր, գոռնալա՛մա խոսում, հազար բանի անուն տալիս, հազար հրաշք պատ՛մում, մեջը փուշ, օխտը հատիկ, ո՛չ աղ կա, ո՛չ համեմ: Քրիստոս գիտենա, իմ ծառիցը ու դաշտիցը շատ բան եմ սովորում, քանց սրանցից: Տո՛, փող էլ ուզես՝ կտամ, չունենամ, գլուխս կծախեմ, քեզ կպահեմ, թաք ըլի Էնպէս բան ասես, որ խելքումս մտնի, իմ հավարին հասնիս, Էն ժամանակը հոգիս ուզես, քեզ թասիր չե՛մ անիլ, չե՛մ:

Ամենը հո ամենը, իլահիմ մեր Տեր Մարկոսը⁶, որ առավոտեց մինչ րիգուն՝ փիլոնն ուսին քցած, փոխանը վեր քաշելով, հողաթափը ծրփծրփացնելով կամ բռշեքը քստքստացնելով, բուցին-բուցին անելով, մեկ դագանակ ձեռին, լոնդի տերոդորմեն շխշխկացնելով, բուշեքը չափելով, մեկ մեռել կամ կնունք, շիլափլավ կամ մատաղ պատահելիս՝ մեկ էլ էն ես տեսնում, որ հա-

գալով, փոշտալով, ոտին-գլխին անելով, դռները ջարդելով, կոտ-րատելով, ափալ-թափալ ներս ընկավ, հոգեառ հրեշտակի պես էկավ, թունդրի դրաղը կտրեց, իրան-իրան նստեց, արաղ, մազա ուզեց, ու հենց իմանաւ, թե մեռելի կես հոգին ինքն ա ուզում հա-նի: Դեռ պատանը չկարած, չլվացրած, շուտով թաղումէլէքն ու կողոպուտն ա ուզում. աստված հո չի՛ վերցնի: Տո՛, մեկ արի՛, ձեռս բռնի՛ր, հոր պես ինձ սիրտ դի՛ր, ինձ անուշ լեզվով մխի-թարի՛, ետո հոգիս էլ հետը հանի, է՛. թե որ չտամ, պատժի գամ: Մեկ հացկերույթ ըլելիս՝ սուփրի գլխին ինքն ա նստում, հինգ մարդի դդար հաց ուտում, տկի հոտն առնելիս՝ փորը ղլվլոց ընկ-նում: Տո՛, քո տունը չքանդվի, քո տունը, հո սոված չմեռա՛ր, ա՛յ խանի խարաբ, ի՞նչ էլավ քեզ. մարդի փորը հո դժոխք չի՞, որ իրան ուտի:

Սար ու ձոր՝ տերտերի փոր. ի՞նչ դորդ են ասել, է՛: Բերնին դուրբան, ով էս խոսքն ասել ա: Ավետարանի կողքումը պետք է գրած, որ սրանք կարդան ու իմանան: Քիչ ա մնացել, որ մեզ սաղ-սաղ ուտեն: Երեխեքներս չոբան դառած ման են գալիս, նը-րանց դարդը չեն քաշում, որ մեկ այլբեն էլա, մեկ ճգի-բգի սո-վորցնեն, հենց իրանց ֆիքրն են քաշում: Էդպես հո չի՛ ըլիլ:

Ղորդ ա, կարդալ-մարթալ չե՛մ գիտում. էշ կերել եմ, էշ մեռ-ծացել: Ես ի՞նչ գիտեմ՝ տերտերն ի՞նչ ա, ժամն՝ ինչ: Էդպես բա-ները էս հաստ գլխումը, հազար տարի էլ ասեն, մեռնիմ, կտրիմ, ոտներս քարեքար տամ, տուն չի՛ գնալ, տո՛ւն: Պարտականը նա ըլի, որ ինձ կարդալ չի սովորցրել, ամա բանը մենակ կարդա-լումը չի՛: Ինչ կուզէ ասեն, ես իմ կոպիտ գլխովը էնպես եմ կար-ծում. նհախ տեղը՝ դատած մալը ուտիլը ու դարտակ քնիլը հա-րամ ա: Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի:

Էս լսողն էնպես կիմանա, թե մեր Ադասին մեկ սարսաղ, ան-հոգի, անաստված, իր հավատն ուրացած մարդ պետք է ըլեր, որ մեր ողորմելի կարդաողներին էսպես քարկոծում, պախարակում էր ու էլ միտք չէ՛ր անում, թե նրա՛նք են Քրիստոսի կենարար մարմինն ու արինը ճաշակում, ծառա եմ նրանց սուրբ զորու-թյանը: Նրա՛նք են մեր հոգու տերը, մեր մեղքը սրբող-մաքրողը: Նրա՛նց է տված երկնքի ու երկրի իշխանությունը, որ արքայու-թյան դուռը մեզ համար բանան կամ փակեն: Նրանք որ չըլին, մեր հոգին դժոխքումը հուրն-հավիտենական խրի պուճախումը

հա՛ կտանջվեր, հա՛ կտանջվեր ու սատանեքանց փայ կղեր: Մազե կարմնջովը անց կենալիս՝ տեղը թե նրանք մեր ձեռը չի բռնեն, անդունդը կթափվինք, ու ամեն մեկ մեր թիթեն հազար սատանի ճանկը կընկներ: Ինչ ուզում ես՝ խոսի՛ր, արա՛, ձեռդ ո՞վ <ա> բռնում, ամեն մարդ իր գլխի տերն ա, ամա էսպես բանի վրա խոսողի ատամները պետք է ջարդած, որ խելքը գլուխը գա:

Ի՞նչ անես, էշ գեղըցի ըլելով՝ գլուխը հաստ, ծուծը բարակ, անտաշ, կուսիտ, ո՛չ վարպետ էր տեսել, ո՛չ վարժատուն, ձիու տակը սրբելուցը, մաճը բռնելուցը, հանդը վարելուցը ու կատեպանությունից ավելի ո՛չինչ բան չէ՛ր գիտում: Ախր մեկ մարդ որ անվա հաց ուտի, ամսըներով չոլումն ու գոմումն իր օրն անց կացնի, նրանից էլ ի՞նչ հարցնես, ի՞նչ բեղամաղ ըլիս. նրա ասածը ո՞վ չվանի կդնի: Թեկուզ գեղըցին, թեկուզ լաբանի հալվանը, մի հեսաբ ա: Մեկ մարդ որ խաչ հանելիս չիմանա, թե ձեռը առաջ դո՛շին պետք է դրած, թե՞ ճակատին, ա՛ջու կողմը, թե՞ ձախու, սաղ տարին հինգ անգամ ժամի երես տեսնի, էլ ո՞վ նրա դէշին մտիկ կտա: Կըլի որ նրա բոլոր անբավականության պատճառը բարիկենդանն էր ու ժամի երկարիլը: Բալքի միտք էր անում, թե իր թաղաշ տղերքը էն սհաթին ձի ու ասպաբ հագրած՝ դուռ ըլին էկած, ու ինքը ետ մնա: Բալքի թե հենց է՛ստուր համար էր նա էնքան դատ-բեղատ անում, տրտնջում, բերանը ավերում, հոգին ապականում. թե չէ նրա ձենը մինչև է՛ն օրը իր հերմըներն էլ չէին լսել: Էս պատճառով կարելի ա նրա գիծ խոսքերը մոռանալ, նրան ներել ու էսպես ամեղսփեղ, հալվարա խոսողի բերանը ցխել, որ իր չափը հանաչի:

Ուրեմն՝ լսողը թո՛ղ չբարկանա ու իսկույն ձեռք բարձրացնի, որ Աղասու բերնին խփի: Էսպես չար լեզու ուրիշ մարդիկ էլ ունին, բայց Աղասու բարի խասիաթը, բարի սիրտն ու հոգին քիչը կունենան: Էս հասակը հասել էր, քսան տարին անց կացել, նա դեռ հորմըմոր առաջին էնպես էր, ինչպես մեկ անմեղ գառը: Մեկ օր նրանց խոսքիցը չէ՛ր դուռ էկել. մեկ օր նրա բերնիցը մեկ թթու խոսք չէ՛ր լսված. աչքը նրանց աչքին առնելիս՝ նա նրանց միտքը իսկույն իմանում ու գլուխը մահու էր տալիս, որ նրանց կամքը կատարի: Գեղըցիքը բոլոր նրա արևովն էին խնդում, նրա գլխովն օրթում ուտում: Ամենի աչքը նրա վրա էր, նրան էր գովում, նրան էր օրհնում: Մեկին մեկ փորձանք դիպչելիս կամ մեկ

դարդ ունենալիս նա իր գլուխը ետ էր դնում, նրա մուրազին հասնում: Բերնի թիքեն հանում էր, ուրըշին ուտացնում: Էնքան իր ապրանքին, իր հանդին ու մալին չէ՛ր մուղալիթ, որքան իր հարևաններին:

Տանուտերի տղեն էր, աղքատի ու մաշարի ընկեր: Որք էր նրա դուռը գալիս՝ սուփրեն էր բաց անում կամ քիսեն. ում գութան չուներ, իրանցը բան տալիս. ում եզն ու հոտաղ չուներ, իրանցն ուղարկում. ում փող չուներ, որ մշակ բռնի, իգին էտի, փորի չա թաղի կամ թաղը ետ տա, ինքն էր առաջ ընկնում, գեղի տղերքը հավաքում ու գնում նրա բանն՝ առանց կանչելու, առանց խնդրելու անում, ու իզու տերը մեջը մտնելիս՝ աչքը մնում սսոռած, նրան ումբր ու արև խնդրում, չունքի թե մեկ տարի վազն անթաղ մնա մեր աշխարքումն, իսպառ կչորանա:— Ծատ հերնըմեր երանի էին տալիս նրա հորն ու մորը, որ էնպես բարի զավակ ունեին: Ինչ տեղ մեկ մեջլիս կամ մեկ սուփրա էր բաց ըլում, նա էր նրանց գլուխը, ուրախությունը ու քեֆ շհանց տվողը:

Նրա սուրահի բույը, նրա թուխ-թուխ աչքերը, նրա դալամով քաշած ունքերը, նրա աննման, գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձենը, նրա լեն թիկունքը, բարձր ճակատը ու ոսկերեղ ճալվերը մարդի խելք էին տանում. տեսնողը մաթ էր մընում, չէ՛ր կշտանում: Սազը ձեռն առածին պես՝ քարին, փետին շունչ, հոգի, լեզու էր տալիս: Ղորդ ա, արևն երեսն էրել, գունը փախցրել էր, ամա ծիծաղելիս որ աչք ու ունքը չէ՛ր բաց անում, հենց իմանաս՝ վարդ է բաց ըլում, երեսիցը լիս վեր թափում: Նրա թվանքի գլուխն դարտակ չէ՛ր անց կենալ: Սիրտն էնքան բարի էր, որ նհախ տեղը դուռ էլ չէ՛ր սպանիլ. մոջիմը չէ՛ր կոխիլ, ամա հարամի թշնամու ձեռին տապակվելով գիշեր-ցերեկ, որ թե էնպես էր պատահում, որ թուրքերն էկել էին, բաղը լցվել, կամ իրան սպանիլ, կամ իր հարևանին, էն ժամանակը երկնքումն ըլեր, վեր կգար, գեղի էն կողմիցը ձեն տալին, իսկույն ական թոթափել հագիր էր, ու թե բառով բանը չէ՛ր վերջանում, էն ժամանակը նա իրան թրի, թվանքի ու կռան հունարը էնպես էր ցույց տալիս, որ թշնամին մնում էր կատու դառած կամ նրա ձեռին, հնձանի տաքարին դուրբան ըլում, որ թաղում, ծածկում էին, չունքի հագար անգամ էին փորձել, վարավուրդ արել, թե մինչև տանկին չծեծես, քեզ բարեկամ չի՛ դառնալ:

Էնքան դվաթով էր, որ ձեռը մեկ տղամարդի գոտիկը որ

չէ՛ր քցում, հավի ճուտի պէս բարձրացնում, գլխի ծերն էր հա-
նում, պտիտ տալիս, էլ ետ վեր բերում: Զինն Գի ըլելիս որ ձեռը
չէր բարձրացնում, ասլան ձին կզանում էր ու մեջքը դեմ անում:
Հինգ մարդ վրա թափեին, բռանց ձեռը կոլորեին: Գոմշի կամ ե-
զան բողազը մեկ թուր խփելով է՛նպես դուս կտրում, որ թրի ծե-
րը գետինն էր խրվում: Շատ անգամ քսան հարամի հենց թրի
ոռքով էր հետ ածում: Թուրքերը նրա անունը լսելիս լեղապա-
տառ էին ըլում: Շատ անգամ, կոիվ քցած վախտը, հենց նրա ձե-
նըն իմանում էին թե չէ, ճանճի պէս ցրվում, դես ու դեն էին կոր-
չում, գյում ըլում: Ավելի անունը Ասլան բալասի էին դրել: Զեռ-
ներն էլ կապած որ հարամու, թուլու մեջ բաց թողեիր, կարող էր,
որ իր գլուխը պրծացներ:

Բայց է՛սքան զարմանալի հատկությունները ունենալով՝ էլի
երեխի հետ երեխա էր, մեծի հետ՝ մեծ: Խանի, շահի առաջի էն-
պես էր կանգնում, ջուղաբ տալիս, որ, հենց իմանաս, թագավորի
որդի ըլի: Ծիծաղն ու խնդությունը նրա երեսիցը պակաս չէ՛ր
հարկիզ. է՛նքան պարզ էր նրա սիրտը, է՛նքան հանգիստ՝ նրա
խղճմտանքը, է՛նքան արդար՝ նրա հոգին: Նրա ամեն մեկ խոսքը
անգին ջավահիր էր:

Շատ մոր աչք մնացել էր կարոտ, որ նրան իր փեսա շինի,
նրա գլխովը պտիտ գա: Զահել աղջկերքը, նրա ձենը կամ ա-
նունը լսելիս, ուզում էին, որ հոգիները տան: Շատ անգամ, ջրի
ճամփին կամ տան կտրներին կանգնած տեղը, որ Աղասուն անց
կենալիս չէին տեսնում, էնպես էին կարծում, թե հրեշտակ է անց
կենում, մնում էին քար դառած, մալիլ էլած: Նրա ձենը լսելիս,
նրա բոյը տեսնելիս, սիրտըները կրակ էր ընկնում, խելքըները
զնում. ուզում էին իրանց հոգին հանեն, նրան տան: Զանգյուլում
ասելիս կամ ֆալ քցելիս կամ թիզ բաց անելիս ամենն էլ իրանց
մտքումը նրան էին դնում, երազում նրան տեսնում, վեր կենում՝
նրա սիրուն ա՛խ, ո՛խ քաշում: Նրա ձեռի խնձորը կամ վարդը որ
մեկի ձեռն էր ընկնում, որ փտում էլ էր կամ չորանում, էլի նա
ճոցիցը չէ՛ր հեռացնում, քնելիս՝ բարձին դնում, զարթնելիս՝ դո-
շին, երեսին կամ քթին: Մեկ տեղ դռնաղ ըլելիս, հազար տեղից՝
պատի արանքից, դռի շեմից, տան պուճախից, հենց նրան էին
մտիկ տալիս, ու շատը ուզում էր, թե հենց էն սհաթը յա Աղասու
ձեռը նրա ձեռին դիպչի կամ շունչը՝ շնչին, յա թուրը սիրտը մտնի,
որ շուտով նրա արևին մատաղ ըլի, որ Աղասին նրան թաղի, Աղա-

սու սիրտը նրա համար մրմնջա, Աղասու աչքը նրա վրա լա, բայց
ա՛խ, Աղասին վաղուց էր իր մուրազին հասել ու նրանց մուրազը
փորըներումը թողել: Սաղ գեղը է՛նքան էր նրա սիրովը վառվել,
որ մինչև նրա վրա խաղ էլ էին հանել՝ իրանք ասում, էրեխեքան-
ցը սովորցնում:

Աղասի ջա՛ն, գլխիդ դուրբան,
Դու ես մեր թագն ու պարծանքը.
Աշխարքս որ բոլոր ման գան,
Ո՛վ կլի հատդ, դու մեր կյանքը:

Գլխովդ միշտ պտիտ կըգանք,
Ա՛ն մեր հոգին, դու մեր հրեշտակ.
Թե թաղես էլ մեզ, ձեն կտա՛նք,
Էլ քեզ կօրհնենք, քեզ դուրբան գնանք:

Երկնքին դու լիս ես տալիս,
Ծաղկերին՝ հոտ, համ ու հոգի.
Դաշտ, սար ու ձոր քեզ տեսնելիս՝
Գլուխ վեր բերում քո առաջի:

Բյուրբյուլն՝ մեռած սագիդ ձենին,
Վարդն՝ թոռոմած սերդ հիշելիս,
Ա՛խ եմ քաշում, տալիս գլխին,
Վա՛յ եմ ասում՝ դու մտիկ չտալիս:

Քանի սաղ եմք, քեզ ըլինք դուրբան,
Քո շվաքիդ տակին մնանք.
Ա՛խ, թե մեռնինք, մեր գերեզման
Էլ գաս, կոխես, որ դինջանանք:

Թագավորներ հասրաթդ քաշեն,
Որ ունենան քեզ պես որդի.
Քո անունը երբ լսում եմ,
Թոզ եմ դառնում քո թշնամիք:

Արեգակն իր լիսն երեսիդ,
Ամպերն իրանց թևերը փռած՝
Քեզ են նայում, քո արևիդ
Ղուրբան ըլինք, մնում կանգնած:

Տանիցը որ դուս ես գալիս՝
Ամենիս աչքն վրեդ մայիլ.
Քալցր լեզուդ մենք լսելիս՝
Ոտիդ տակին ուզում մեռնիլ:

Ղալամով աչքերդ ա քաշած,
Սուրահի բոյդ մեկ չիմարի.
Աշխարքի աչքն քո վրեն մեռած,
Աղասի ջա՛ն, մեզ մոտ արի:

Բայց, ինչ կուգե որ աներ, Աղասին իրանց տանն էնպես էր, ֆնչպես մեկ հարսը: Ղորդ ա, մի քիչ ոտին-գլխին արեց, ամա էն էլ բարիկենդանի հունարն էր: Ծիրախանի բալանիքն ասես թե մառանի, մոր ջիբումն էր: Սա էլ հո էնպես կապ էր ընկել, պպին կանգնել, թե ընչանք ժամը դուս չի գա, նրան, որ մեռնի էլ, մեկ կաթը ջուր չի տալ: Աղասու նշանածն էլ լավ ոտին-գլխին էր ա-նում, ամա ի՛նչ աներ ջրատարը, ձեռիցը մեկ բան չէ՛ր գալիս: Անաստված կեսուրը ո՛չ մեկի դնչին էլ չէ՛ր նայում, չէ՛ր մոռում: Ամեն բանը իր ձեռովն էր հագիր արել՝ արադ, գինի, հավ, ձու, ոչխարի միս, բայց, ժամը չարձակված, վա՛յ նրան, որ էստոնց կշտովն անց կենար կամ մատը դներ վրեն:

Էս միջոցումը գոմի սաքուն էլ սկսեցին թամուզ սարքել, խա-լիչա փռել, բուխարին վառել, դուրսն ու տունն ավելել, չունքի որ գեղի քեդխուդեքը էսօր էստեղ էին կանչած, ու էսպես կարգով՝ օրը մեկ քեդխուդի տան, ինչպես որ միշտ սովորությունն ա, իրանց բարիկենդանը պետք է անցկացնեին: Աղասու մարդը վաղուց կտրիցը նայում էր, որ տեսնի, թե ե՛րբ ժամը դուս կգա: Հենց կնանոնց սիպտակ չարսավը տեսավ թե չէ, նոքարը ափալ-թա-փալ տուն ընկավ ու նրան աչքալիս տվեց: Էլի մերը իր ձին քը-շեց, իր ասածն արեց ու Աղասուն չթողաց, որ տեղից էնքան ժամ գա, մինչև Սառախաթուն տատը տուն չէկավ⁷, Սաղմոսն ու չար-

սալը չծալեց ու ամենին հավասարական Ողորմի աստված չաւեց, նշխարք չբաժանեց:

— Աստված ձեր գլխին խոով չկենա, էսօր դուք հո՛ հոգիս հանեցիք, իմը ինձ հասցրիք,— ասեց Աղասին քթի տակին, մեկ կտոր նշխարք բերանը քցեց ու ընչանք դոնադները տուն կգալին, փասա-փուսեն հավաքեց, դուս թռավ, ծլկեցավ:

Անիրավ ձին էլ, հենց իմանաս, իրան փառք էր համարում, որ էնպես նստող ուներ վրեն: Ուն օրգանովին առավ թե չէ, մեջքը կռացրեց ու սկսեց գլուխը խաղացնիլ, ոտները գետնին խփիլ, նալներին կրակ տալ, խրխնջալ, փոնջալ ու թև առնիլ, ոտները գետնիցը կտրիլ: Աղասու ընկերքն էլ մեկ տեղ թոփ էին էլել, ամեն բանը հագիր արել, իրանց մեծին սպասում ու դեռ չէին համարձակում, որ իրանց քեֆն սկսեն, չունքի պատվելի քեղխողեքը եկեղեցուց դուս էկած՝ գեղամիջումը կանգնել, գրից էին անում, իրանց հոգսը հոգում:

— Մեկ կորչում էլ չե՛ն էս անատամ հալկորները, էս ծերերը, որ մենք դինջանանք, մեր քեֆին նայինք,— ասաց մեկը՝ ատամները կրճտացնելով, բարկանալով:— Իրանք ջանից ընկել են, իրանց ջահելությունը մոռացել, ու չե՛ն էլ ուզում, որ մենք էլա մեր օ՛րը քաշենք:

Բայց տանուտեր Օհանեսը էփված, փորձած մարդ ըլելով, միրուք ու մազեր հազար բանում սպիտակացրած, հազար չաթուշվան կտրած՝ ծանր, ուռած կանգնել, զգրին թամբառ էր անում, որ թուրք պատահելիս տանի, մեկ տեղ դոնադ տա, էն շանը լավ մտիկ անի, որ մարդի չկծի, ու տերտերն էլ մեջըները քցած քիչ-քիչ երիշ արին, տուն գնացին: Հենց նրանք հեռացան, մեր դոչաղ տղերքանց աստղը դուս էկավ:

2

— Քեղխողեքը գալիս են, տո՛, տե՛ղ արեք, դրա՛դ կացեք, ճա՛մփա բաց արեք,— ձեն տվեց զգիր Կոտանը՝ մեկ աչքը քոռ, դունչը ծուռը, էնպես որ միրքի կես փայլ մնացել էր երեսի վրա ցից էլած, խճճված, կես փայլ էլ բողազին, չանին կպել, չորացել, էնքան խոսացել էր ու հարայ տվել:

Թագավորն էլ էնպես ուռած-ուռած իր քոշք ու սարեն (պալատը) չէ՛ր մտնիլ, ինչպես մեր գեղի իշխանքը՝ իրանց տաք գո-

մը, թեև շատի հաքին էնքան շոր չկար, որ էրկու մանեթի գին ունենա: Որը մեկ տասը տարվան կտրատված, քրքրված հին լափունջում կոլոված, որը մեկ հազար տեղ կարկատած, մաշված քրդի աքա էնպես էր ուներին քաշել, որ, դորդ ա, բերանն ու միրուքը ծածկած ուներ, բայց գոտկի տակիցը դենը, գլուխդ ապրի՛, պատռտված քոբաչի չուխի ծլանկները (կտորները) հազար տեղից էնպես էին ճողուլակ էլած ու քամու ձեռին եսիր մնացել, որ փշելիս՝ ուզում էր, թե իրանց էլ հետը տանի: Գլխըներին հո, էնպես գիտես, թե ամեն մեկը մեկ սաղ ոչխար ըլեր դրած: Էն որ մի քիչ չաղ էր ու եղալի (հարուստ), ոտն ու գլուխը էլի մի քիչ քոք էր ու, ասածու տվածիցը, շորի հոտ էր գալիս վրըներիցը: Սրանց ամեն բանն էլ կարգին էր. լաբչիներ՝ թազա, մուգ մավի դադաք փոխանի դրաղները՝ ասղարուր, մավի քոբաչի շալ չուխա կամ եզդու դադաք կապա, սիպտակ կտավե կամ շալի գոտիկ. շապկըների լախեն՝ որինը մով, որինը քաթան. արխալոցները, դորդ ա, կարկատած էր, ամա շատ որ ըլեր, մեկ տասը-քսան տեղ, ավելի չէ՛, էն էլ ոանգ-ոանգ կտորներով՝ որը կարմիր, որը դեղին, որը գուլ-գուլ, էնպես որ շատի արխալուղը հեռըվանց, հենց իմանաս, չալ դաջարի ըլեր կամ չալ կատվի պոչ: Ամենիցը գլուխը նրանց բորանի քուրքն էր. երեսը՝ կարմիր ներկած, ինչպես մեկ թուրքի հինա դրած դաքա միրուք. երեսք չուներ, ջանումն էլ բաց տեղ չէ՛ր մնում, բոլոր ծածկում էր: Փեշերը ու նեղ թևերը իշի նոխտի պես ուսըներիցը կախ ընկած՝ գետինն էին հասնում ու դիպած տեղը թամուզ ավելում, հալլի շինում. ամեն մեկ քուրք մեկ թզաչափ մազ ուներ, բայց, ա՛խ, շատ արևի ու անձրևի ձեռիցը է՛ն հալն էր ընկել, ներկն ու երեսի ջուրը գնացել, որ, հենց գիտես, քոստ ձիու սաղրի ըլեր: Շատի վրա տասը տարվան թոզ ու կեղտ կար: Շատի ուներն ու քամակը էնպես էր ծակվել, բուրդն ու մազը դուս թափել, որ տեսնողը հենց կիմանար, թե գարունքվան բրդըհան էլած ուղտի կաշի ըլեր: Բազընի փափախի մորթին էլ հո՛, էնպես էր չալ ընկել, ու ձերիցը բուրդը դուս թափել, որ մեկ բարակ քամի կամ հով փշելիս էլ՝ ամեն մեկ մազը թև էր առնում ու գլխըներին պար գալիս: Բայց էլի էնպես մարդի քեֆը գալիս էր տեսնելով, թե ի՛նչպես տանուտերն ու քեղխողեքանց շատը գդակները կտտրել, աջու ականջի վրա թեքել, իրանց հինգ ոչխարանի քուրքը քեֆով մեկ էս ուսին էին քաշում, մեկ էն, ու բազի անգամ գլխըները էլ հետը տրմբացնում էին, որ գդակները

գիծություն չանեն, իրանց չափը ճանաչեն ու դուզ կանգնին: Բազի անգամ էլ իրար բռնոթի թավազա անելով կամ մեկը ձեռը մյուսի գոտիկը կամ ճտովը քցած՝ իրանց էրեխությունը միտքըներն էին բերել ու շախա անում, իրար բոթբոթում, շվացնում, գոթկացնում, փոթկացնում, ճոթկացնում, մոթկացնում ու բազի վախտ էլ հրհռում, քրքռում, բրբռում, դրդռում. շատը հո, ծիծաղու, մեջքի իլիկը կոտորվել էր, էնպես որ ժամիցը ընչանք տուն կգալին, հենց բռնի՛ր, տարի քաշեց, էնքան էին էստեղ-էնտեղ կանգնել ու գրից արել:

Ղորդ ա, ասացի, որ շատի հաքին տրեխ էր, գլուխ էլ չուներ, որ ոտը ծածկեր. շատի չուխի վրա հարիր կարկատան կար, շատի ձեռների, երեսի, միրքի վրա տասը տարվան աղբ, կեղտ, թոզ ու մազ կար, շատը բերնումը երկու հատիկ ատամ էլա չուներ, էնքան ծերացել էր, ամա ի՞նչ կանես, որ տունն ու շիրախանեն հազար բարությունով լիքը՝ տրաքում էին, ու աստուծո հոգի կար միջըներում, մեկ օձի ձուն էր պակաս նրանց տանիցը: Գինին՝ կարասներով շարած, ամբարը՝ հացով լիքը, կթի կովն ու գոմեշները՝ ֆորթ ու ձագը տակըներից, գոմումը կապած, քյահլան ձին՝ թավումը, գութանը՝ դռանը լծած, մառանը՝ եմիշով, կախանով, տանձ ու խնձորով խլթխլթում, և մտնողին հոտը տեղն ու տեղը բռնում, շշմացնում էր: Նորահարսն ու փեսեն կամ մեկ ազիզ դոնաղ որ գլուխը բարձին չէ՛ր դնում էս անմահական բարության մեջը, էնպես իմանում էր, թե դրախտումն ա աչքը խփում կամ բաց անում: Որը երկու, որը իրեք բաղ ուներ, նոքար, հոտաղ՝ դռանը հազիր, ու տան ներսն ու պուճախը դրմբում էր: Կարասներով կողակ, կճճներով պանիր ու դավուրմա, աքաշներով գոխ, բոխ, ողորմակոթ, բղղներով եղ ու կարագ, մոթալներով պանիր,— ծո՛վ, ի՞նչ տուն: Տասը դոնաղ որ էն սհաթը նրա դռանը վեր գալին, սաղ ամիս ուտեին, խմեին, կոտրեին, ցարդեին, փչացնեին, նրս տան խերն ու բարաքաթը հա՛ կար, հա՛ կար, ու յաբանի չաղն էլ նրանց դոնովը անց կենար, իրանք թևիցը կքաշեին, տուն կկանչեին, որ նրանց սուփրի համն առնի ու էնպես ճամփա ընկնի: Ծատ անգամ եկեղեցումը որ մեկ դարիք օքմին կտեսնեին, Սուրբ սուրբն ասածին պես շատը կերթար, եկեղեցու դուռը կկալներ, որ սֆթա ինքը նրան իր տունը տանի, ու շատ անգամ, երբ ուզողը շատ կոլեր, խոսքըմին կանեին, որ մեկ-երկու շաբաթ նրան իրանց միջումը պահեն, նրան քեֆ շհանց տան,

ու բոլորն ի միասին, մեկ օր սրա տանը, մեկ օր՝ նրա, ուրախութիւն անեն, դարձրի սիրտն առնեն:

Շատը ստորոտով ոչխար էլ էին պահում: Էնպես մարդ կար, որ տարենը երկու հարիր, իրեք հարիր լիտր տանձ, խնձոր, ծիրան ծախում էր ու մեկ էնքան էլ աղքատի ու ճամփորդի ուտացնում յա դեղապետի հմար պահում, որ սարի աղքատ խալխը՝ թուրք, հայ, չունքի բաղ չունին, մեկ հիվանդ պատահելիս՝ գան, տանին, ու իրանց թամարզու նաչարի աչքը դռանը չմնա, չունքի մեր աշխարքումը ինչ հիվանդ էլ որ ըլի, նրա առաջին ու վերջին դեղը պտուղն ա: Պտուղ որ չըլի, ո՛չինչ բան նրան չի՝ փրկիլ, ու լեզուն բերնումը կշորանա, յա հասարթ կմեռնի: Ամեն մարդ իր բաժակի գինին ալհադա ուներ պահած, որ համ իր եկեղեցուն էր տալիս, համ էլ գեղըցոնցը բաժանում, ուրտեղ բաղ չկար, որ նրա ննջեցելոց հոգին հիշեն: Ամեն նավակատյաց ոչխար ասես, կով ասես՝ մորթում, մատաղ անում, ժամ, պատարագ անիլ տալիս, ժամոց բաժանում ու տանով-տեղով գնում, իրանց սիրելյաց գերեզմանները օրհնիլ էին տալիս ու աղքատներին կշտացնում: Մեկ փարի բան բազարիցը տուն չէ՛ր գալ, բացի իրանց հաքնելու շորիցը. էն էլ՝ կտավ, շապկացու, չուխացու, շատը հարսներն ու աղջկերքն էին նրանց համար մանում, գործում, կարում:

Նրանց կնանկոնցը որ մտիկ տալիր, խելքդ կերթար. խասի ու դումաշի միջում կորած էին. բերնըներիցը կտրում էին, օղլուշաղի ոտն ու գլուխը թամուզ պահում. տղամարդը շատ օրը հանդումն ա ըլում, ի՞նչ հաջաթ. կինարմատը միշտ պետք է աբուռով հաքնի, աբուռով մաշի: Մեկըմեկի ջգրու, շատ անգամ, իրանց օղլուշաղին էնպես էին ծաղկում, զարդարում, ինչպես գարնան վարդը: Սաղրի մաշիկ, կարմիր ծուղեք, դասաբ, դրաղները գլուխաբաթնով արած փոխան, ալ դարայի մինթանա (քաթիբա), գառ լաչակ, դալամբար արխալուղ, սամուր քուրք, արծաթե կոճակներ ու բիլագիգ, քարգահարուր օշմաղ, ճլպինդ, տոտեր, շապկի յախա, ոսկե քամար, յախութ մատանիք, քահրըբար յա մարջան ճտի շարք՝ շատի միջումը ոսկիք, մանեթ, աբասի ծակած, անցկացրած. դոշի քորոց, ականջի օղ՝ որը ոսկի, որը մարգարիտ. մինթանի դրաղները՝ շատինը մարգարտաշար: Շատի մագերումը ու գլխին հինգ թումանի գարդ ու զարդարանք կար: Շատի ճակատին շարքով յալդուզ ոսկի շարած: Ամեն մեկի կնիկն ու աղջիկը, հենց իմանա, խանգադա ու բեկզադա ըլեր: Շատը չորս-հինգ հարսն ու-

ճեր տանը, որ մեկ տեղը ցավելիս՝ ուզում էին գլխովը պտիտ գան ու ոտները ջուր անեն, խմեն: Գլուխն ու քամակը դեմ անելիս՝ հարսներն ու աղջկերքը իրար հետ բաս էին մտնում, որ իրանք քորեն կամ քույթութեն: Տրխըները կամ լաբչըները հանելիս՝ ձեռն էր, որ բան էր ընկնում. որը ոտն էր ճմռում, որը ջուրն էր տաքացնում, որը բերում, որ ոտն ու գլուխը լվանա, որը թևերը վեր քաշած՝ ձեռին ջուր էր ածում, որը մահրամեն տալիս, որը թևն էր քաշում, որը շորերը դասում, որը տեղը քցում, քնացնում: Քընած վախտին էլ ե՞րբ կարեր մեկ ճանն, որ նրա մոտովն անց կենա կամ երեսին մտի, էնքան աչքաբաց էին հարսն ու աղջկերքը: Մեկ ղոնաղ պատահածին պես էս պատիվը ղոնաղինն էր, ե՞րբ կարեին նրանք բաց աչքով նրա երեսին մտիկ տալ: Մեկ բան ուզելիս՝ ոտի տեղ գլխի վրա էին գնում, որ նրա ասածն անեն ու ձեռըները դռըներից դրած՝ աչքը կթած ունեին, որ տեսնեն, թե իրանց տերը կամ ղոնաղը ի՞նչ կհրամայի, որ կատարեն: Կեսուրը կամ կեսառը մեկ աչքը քցելիս՝ ուզում էին, որ տեղնուտեղը հալչին, էնքան հնազանդ էին:

— Բա՛խտ, բախտ էս ա. փողի բարաքյաթին էլ նալլաթ, նրա կտրողին էլ,— շատ անգամ ասում էին գեղըցիք ու գլխըները ժած տալիս,— ուտիլ չի՛ կարելի, հաքնիլ չի՛ կարելի: Էսօր ջերդ լցնես, էգուց պետք է մատդ լպստես: Ո՛չ գիշերը քունդ ա տանում, ո՛չ ցերեկը՝ դարարդ: Փորացավ ընկածի պես՝ մարդ չի՛ իմանում, թե թիքեն ո՞ր կողմովն ա կուլ գնում: Փողը որ կա, ժանգ ա, ձեռի կեղտ. էսօր կա, էգուց աստուծով մխիթարիս: Մեռնիս՝ պետք է շներոց-գիլերոց ըլի: Թեկուզ փողի համն առած, թեկուզ իր միսը կերած, հեսաբը մեկ ա: Սարդարն էլ ա մեր դուռը գալիս, փողատերն էլ: Տաշտումը հաց ունենամ, կարասումը՝ գինի, ջվալումն՝ ալիր, հերն անիծած, որ չիփ-չիփլախ էլ ըլիմ, դարդ անեն: Օջախս լիքը ըլի, տանս՝ բարաքյաթ, որդիքս՝ սաղ-սալամաթ, թո՛ղ օրը հազար մարդ մտնի, հազար մարդ դուս գա, ի՞նչ եմ հոգում. հացն աստծուն ա, ես էլ հետը. ո՛վ հասնի, թո՛ղ ուտի: Տերին փառք, տեղը հլա շատ կա. տղերքս սաղ ըլին, ջանս ապրի՛: Աստված իր ստեղծած բանդի ոզղը ի՞նչպես կկտրի: Գոակս ծուռը կոցնեմ, քեֆս արամիշ կանեմ. ո՛վ թամբալ ա, թո՛ղ նա դարդ անի:

Չէ՛, չէ՛, փողի սիքեն ճանաչողը ո՛չ հոգի ունի, ո՛չ հավատ:

Փող՝ հող, մին ա: Զարգար Պ. որ շատ փող ունի⁸, հենց էն ա, ինձանից մեկ թիզ բարձրացել ու լավ ա ապրո՞ւմ: Նրա բոռ աչքը գիտենա: Շատ ֆիքր անելուցը երեսի կաշին գնացել, չոփ ա դառել, քամակն էկել, փորին դեմ առել, ատամները ցից-ցից մնացել, աչքերը կուլ գնացել. մեկ որ փչես, հազար տեղ գունդ ու կծիկ կլլի. մեկ որ քթին հուպ տաս, հոգին էն սհաթը կտա: Տարեճը որ հազար շուն, գել, թուրք, հալ, աղքատ, դարիք, դուրբաթ հուցս չուտեն, տանս չքնեն, գինիս չխմեն, իմ աչքը հեշ քո՞ւն կգա: Փյունս էլ որ քանդեն, ձեն չե՛մ տալ: Իգուս մասըլի տուտը Թեհրան, Ստամբուլ ա հասել: Ո՞ւմ հաղդն ա, որ մեկին չե՛ ասի: Ինչ ուտում են, չեն ուտում, էնպես ասած ունիմ, որ հաբգա, խուրջին էլ լցնեն, որ տանեն իրանց տունը: Իր տնկած ծառի տակին քնիլը, իր բհամ բերած պտուղն ուտիլը աշխարք ամի: Նոր չե՛մ հաքնիլ, հին կհաքնեմ, ձեռս ո՞վ ա բռնում, ո՞վ ա գլխիս ծեծում, թե զառ ու դումաշ հաքիր: Ե՛ս չեմ իմ գլխիս տերը:

Քաղաքը որ մտնում եմ, հենց իմանաս, թե աշխարք սով ա ընկել. էլ ո՛չ խեր կա, ո՛չ բարաքչաթ: Հացն ու ջուրն էլ որ փողով ըլին ծախում ու առնում, էլ ո՞ւմ դուռը գնաս, ո՞ւմ ձեռդ դեմ անես: Բազի վախտ էլ տեսել եմ, որ դուքաններումը կիտուկ-կիտուկ մանեթները, ոսկին ածած, ամեն մեկ փող համարելիս, էնպես գիտես, թե փողատիրոնց հոգին հետն ա դուս գալիս, էնպես են սրթսրթում իրանց խազիկնի վրա: Հենց իմանաս, թե առաջներիցը թե կառնի, կթռչի: Մեկ ձեռդ դեմ արա՛, շան որդի ըլիմ, ո՛չ մեկ բուռը հողի արծուճանճամ, թե սուտ ըլիմ ասում, աստված, երկինք, գետինք, ծով, ցամաք՝ մեկ ձեղ էլ չեն տալ, որ աչքդ կոխես: Թո՛ւն, մարդ իրան հոգին պետք է ծախի, որ փողի թամառ անի: Հազար տարի էլ որ քո ազիզ սիրելու դռանն էլ շիկնքդ ծըռես, կանգնիս, սովու մեռնիս, հազար տարի անոթի փորով գլըռտաս, մեկն էլա քեզ տուն չի՛ կանչիլ, մեկ սառը ջուր խմացնիլ:

Էն մարդն էլ, որ քո տանը կերել, խմել, ամսով, տարով քո աղ ու հացի վրա ա էլել, աչքը սաչքիդ առնելիս, հենց գիտես, թե գյուլով խփեցին: Ետն ա քեզ դեմ անում ու աչքը քամակը քըցում: Տո՛, փողդ էլ ջհանդամը գնա, դու էլ, տո՛, դո՛ւռումսաղ. ասենք թե աչքդ ա քոռացել, ինձ չես ուզում, որ ճանաչես կամ սուպրիդ դրաղը նշանց տաս, տո՛, գլխիդ քար ընկնի, ինչ կերել ես՝ քթովդ դուս գա, խնդրել եմ աստվածանից՝ զահրըմար ըլի, էն դիմումը առաջդ գա, աչքերդ բռնի, տո՛, մեկ բարով, աստուծո

բարին է՛լ ա գլխիցդ դհաթ էլել, որ դունչդ ցցում ես ու ետ փախ-
չում: Մեկ բարի լիս, բարի օր էլա տո՛ւր, է՛, հո բերնիցդ քրեհ
չե՛ն ուզում, ի՛նչ ես քարացել, էդ էլ հո փողով չի՛, ա՛յ փողակեր՝
հողակեր: Ասենք, թե չուխես մահուդ չի՛, հին, մաշված, բրդից
ա, քոնը՝ նոր, կանանչ մահուդ, ձեռիցդ հո չե՛մ խլում: Քեզ պես
հազար մահդամարդ իմ էս աղքատ չուխիս դուրբան ըլի, որ ա-
ռանց ղոնաղի հաց չի ուտում: Թե մեկ օր էլ ճանկս կընկնի՛ս, ես
գիտեմ, թե ձիուդ գլուխը դվորը շուռ կտամ. հլա սաքր արա, հալ-
բաթ էլի քամին կպտտի, քեզ մեր դեհը կքցի. էն ժամանակը աչքդ
բարին տեսնի: Ծոթ առնելիս հո՛, շատն ուզում ա, մեկ-երկու շահի
փող ենք դատել, էն էլ նա խլի:

Է՛յ գիտի ժամանակ, հա՛. ո՛վ էր տեսել կամ լսել ավալի
սֆթա էսպես բաներ. գառն ու գելն ի միասին արածում էին, հը-
միկ կովը վեր են քաշում, որ տեսնին, թե տակին երաք ֆորթ կա՞⁹,
թե չէ: Սատկած ձիու նալնի են ման գալիս, էլ ո՛ւմ ասես դարդդ:
Հերը որդին չի՛ ճանաչում, որդին՝ հորը, ախպերն՝ ախպորը, լավ
ա, որ քարը քարի վրա կանգնած մնում ա: Մարդ ինքը պետք է
լավություն անի, որ աստված էլ նրա բանն հաջողի: Էլի աստված
օրհնի՛ մեր հողը, մեր ջուրը. էլի թե հոգի կա, հավատ, մեզանում
ա: Ուտե՛նք, խմե՛նք, քեֆ անե՛նք, իրար թասիք քաշե՛նք, իրար
արևով խնդա՛նք. մեկ օր կմեռնենք, որ ողորմի չտան, գլոռե-
գլոռ հո չե՛ն անիլ: Մարդ ինչ անի, է՛ն իր առաջը կգա: Լավու-
թյուն կանես՝ լավություն կտեսնիս, վատություն կանես՝ վատու-
թյուն: Հարիր տարի կըլի, որ լուսահոգի Ապովը մեռել ա՞¹⁰, էլի
նրա ողորմին հա՛ կա, հա՛ կա: Թուրք ու հայ նրա գերեզմանովն
են օրթում ուտում: Ծամփի վրի մենծ իգու անունը Հնդաստան ա
հասել՞¹¹. Էն ջադղահ բաղը իր ձեռովը տնկեց, որ անց կենողը
գնա, նրա բարությունը վայելի: Չորս կատեպան ամեն առավոտ,
ինչ պտուղ ծառիցը վեր էր ընկնում, հավաքում, քթոցներով տա-
նում էին, ճամփին դնում ու անց կենողի ջեքն ու խուրջինը լըց-
նում: Էն մեշա իգուցը մեկ պտուղ, մեկ թաս գինի իրանց տանը
չէին բանացնիլ, ջոկ կպահեին ու աղքատ գեղըցոնցը կբաժա-
նեին:

Ի՛նչ պետք է տանինք էս փուչ աշխարքիցը. դարտակ էկել
ենք, դարտակ կերթանք: Սաքի որ շատ էլ մալ, դովլաթ ունենա,
աշխարքի տեր էլ դառա, հո էլի պտի հողը մտնիմ: Իմն ա մի
բուռը հողը, մեկ գազ կտավը: Լավ ըլիմ՝ լավ կասեն, վատ ըլիմ՝

վատ:— Տերտե՛ր ջան, քո ոտի հողն եմ, դրո՛ւստ եմ ասում, թե ծուռը: Գրի սևն ու սիպտակը չե՛մ գիտում, ամա ես իմ կարճ խելքովը էսպես եմ աշխարքի բանը քննում: Ով չի՛ ուզում, իր քեֆն ա, ամեն մարդ իր գլխի տերն ա: Քեֆ սանն, քյանդ քյոխվանն (Քեֆը քոնը, գեղը տանուտերինը): Թուրքն անիծած ա, խոսքն՝ օրհնած:— Ի՛նչ կասես, տա՛նուտեր. թե սուտ եմ ասում, բերնիս խփի՛ր, անկաջս քաշի՛. դու գիտես, որ քո չոռը ինձ համար ջան ա, քո մեկ մազը արարած աշխարքի հետ չեմ փոխիլ: Թե ճշմարիտը չե՛մ ասում, ասա՛. «Գլուխդ քարին ես տալիս»: Ես էլ ձենս կկարեմ: Ղորդ ա, վարպետի ու վարդապետի մոտ չեմ մեծացել, ամա իմ ողորմածիկ, լուսահոգի հերը տասը վարդապետի խելք ուներ գլխին: Ինչ որ խոսում էր, հենց իմանաս, թե ավետարանի կողքին գրած ըլի: Սաղ Աստվածաշունչը փորումն ուներ: Մեկ խոսք խոսալիս՝ հազար վկայություն էր բերում: Ժամագիրքը, Ծարականը, Սաղմոսն ու Այսմավորքը¹² հո՛, ջրի պես գիտեր: Հարիր փիլիսոփա, վարդապետ, տերտեր հավաքվեր, բերանները կցխեր, ճամփու կղներ: Աշխարքի էն դիմիցն էր խաբար տալիս: Մեկ ժողովքարար մեր գեղը գալիս պետք է տափ կենար, որ նրա ձեռը չընկնի, թե չէ՛, աստված ազատի, հոգին կհաներ, միսը բերանը կտար, շատ անգամ չէ՛ր իմանալ, թե էկած ճամփեն ո՛րն ա: Էս հմիկ որ լավ-օսալ գլխիցս դուս եմ տալիս, նրա հուճարն ա, թե չէ՛ ես ո՛վ եմ, որ ինչ գիտենամ:

Բանը է՛ն չի, որ մարդ, ծեզը տալիս, գնա ժամը, մեկ-երկու ծուռը դնի, դուս գա, մի քիչ գրին մտիկ անի, արշտոտա, քունը տանի, կակոդ բարձի վրա, դույթութի յորդան-դոշակում երկար ձգվի, ուտի, խմի, քեֆ անի, փորն ու գլուխը հաստացնի ու գա, մեր ջանին ընկնի, թե ինչ որ դատել եք, էն էլ մեզ տվեք, որ տանինք. լավ ուտենք, լավ հագնինք, լավ մաշենք, ձեզ համար աղոթք անենք: Ախպե՛ր, բաբա՛, ջա՛նմ, գյո՛գմ. աղոթք ունիս, քեզ համար պահի՛, քեզ համար արա՛: Ի՛նչ ես տվել, որ մեզանից չե՛ս կարում ետ առնիլ: Ըսկի որ չըլի, կասեմ. «Աստված, քեզ համար մեկ պաստրդ կանես»: Աստված բերնին չի՛ նայում, սրտին ա մըտիկ տալիս: Մեկ հաս ու չհաս պատահելիս հո՛, ուզում են, թե մեր տունը քանդեն: Տո՛, թե տուտը կարճ ա, չի՛ հասնիլ, փո՛ղն ա երկարացնում: Բերաններս խփել ենք, ինչ որ ասում են, անկաջ ենք անում: Ասենք՝ մենք չենք խոսում, բաս աստված վերևիցը չի՛ նայում: Էս ի՛նչ բան ա, թե փլավը ես ուտեմ, քո գլխին դըմ-

փեմ. մածունը ես լպատեմ, քեզ գող կատու կանչեմ¹³: Ասենք, թե կարգավոր են, խաթրներիցը անց չենք կենում, չենք ուզում, որ անեծքի պատճառ դառնանք, չունքի սևագլխի անեծքը քարին որ դիպչի, քարը կպատռի. իրանք էլ մի քիչ պետք է իրանց չափը ճանաչեն: Սևանու ճգնավորներն են լավ կարգավոր¹⁴, ի՞նչ խոսք ունիմ, բաժակի, մսի համ չեն տեսնում, հաքածները բուրդ ա ու շալ, չոր գետնի վրա են քնում, երեսներիցը լիս ա վեր թափում. տաս՝ էլի կօրհնեն, չտաս՝ էլի կօրհնեն: Մոտը մտած ժամանակը աստուծո բան են խոսում. կնկա երես տեսնելիս հո՛, երկու վերստ ճամփա հեռու են փախչում: Չէ թե կնկանից, գինուց, փողից, ձիուց, էլ ի՛նչ գիտեմ, ինչ բանից խաբար տալիս: Քյահլան ձիու վրա իրանք են նստում, խաս ու դումաշ իրանց հաքին ա, դաբլու փլավ ու հազար տեսակ անոշ կերակրներ, խմիչք իրանք գործածում, բանըդ կուշտն ընկած վախտը ուզում են, թե գլուխդ վեր բերեն. էս ո՛չ Քրիստոս ա արել, ո՛չ Մահմեդ:

Տո՛, հենց փող պետք է տամ, որ հոգիս դրախտը գնա՛: Տո՛, որ գործքս լավ չըլի, ես անօրեն ըլիմ, աստված նրանց խոսքովը իմ հոգուս պետք է թողություն տա՛: Տո՛, աստված փողն ի՛նչ <ա> անում, նրա չարադանին դուրբան: Փողն աղքատին պետք է տված: Դեն քցես՝ լավ ա, քանց էն մարդին տաս, որ քեզ մեկ շնորհակալություն էլա չասի: Հազար օր նրանց տանդ պահի՛, պատիվ տո՛ւր, մեկ որ ոտդ մոտըներն ա ընկնում, մեկ սառը ջրի էլ լաչաղ չե՛ն տեսնում: Էս հո աստված չի՛ վերցնի: Մեզանից առնում են, իրանց բարեկամներին ու ազգականներին շենացնում. ետո մեզ վրա էլ մեծ-մեծ խոսում: Ասենք, թե ամեն բանի վրա լիս չե՛նք ընկնում, մեր աբուռը պահում ենք, որդի, երեխա իշի պես մենծանում են, նրանց հոգսը չե՛ն քաշում, վարժատուն չե՛ն բաց անում, չե՛ն կարդացնում, հենց ուզում են, թե մեր դատածը խլեն: Մի գնա մեչիդը, ամեն մի մոլլա, էն անհավատ տեղըներովը, քառսուն-հիսուն մեծ, պատիկ գլխին հավաքել, առավոտեց մինչև մութը ուսումն ա տալիս, իր մասաքի բանը սովորցընում. մերոնք հենց իրանց քեֆն են արամիշ անում: Ո՛րի արածըն աստծուն դիր կգա, ձեզ եմ հարցնում: Ասում էլ ես, աղաչանք անում, անկաջըվեր են անում. մեր որդիքն էլ մեզ նման էշ ուտում, էշ մենծանում. չենք գիտում, թե մենք սովորցնենք. գիտացողն էլ անկաջը կալել ա, ո՛ւմ ասես:

Թե սուտ եմ ասում, ա՛յ ջամըհաթ, մատըներդ կոխեցե՛ք, աչ-

քրս հանեցե՛ք, թե չէ՝ ախր մեր ազգը որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էս ա, որ մեզ մեկ ասող չի՛ ըլում, թե մենք ո՛վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ընչի՞ համար ենք էկել աշխարհ. քոռ գալիս ենք, քոռ գնում: Հա՛, լավ, հավն էլ ա օրը հարիր անգամ, ջուր խմելիս կամ կուտ ուտելիս, գլուխը ցածացնում, բարձրացնում, էստով ի՞նչ կդառնա: Ո՛վ չի՛ գիտի, թե երկնքումն աստված կա, մեզ համար՝ դատաստան: Ամա պետք է իմանանք էլ, թե երկրումը ի՞նչ պետք է անենք¹⁵, որ էս դատաստանի տակը չընկնինք, է՛: Ախպե՛ր, էսպես չի՞, դուք ասեցե՛ք. ես մեղա, գլուխս քարը: Տո՛, ետին թուրքն էլ ախր Ղուռանի շատ փայլ անգիր գիտի, ես մեկ Հայր մեր չեմ գիտում, ախր ի՞նչ իմանամ, թե հոգիս ո՛ր կերթա, մարմինս՝ ո՛ր. ախր իմ խեղճ երեխեքն ինձանից ի՞նչ պետք է սովորին: Շատ բան ասիլ չի՛ ըլում: Զի՛ ըլիլ, որ մարդ իր մատը իր աչքը կոխի, իր ձեռով իր գլխին յա երեսին թակի. ամա ի՞նչ անեմ. սիրտս պատռում ա, որ մեր ողորմելությունը միտքս եմ բերում: Թո՛ղ ինձ կարդացնեն, որդուս ուսումն տան, մեզ ճամփա շհանց տան, ճամփից, հավատից չհանեն, սատանի փայ ըլիմ, մեկ բուռը հողի, մեկ գազ կրտավի, ժամ, պատարագի՝ հասրաթ, թե աչքս ուզեն, չհանեմ, իրանց տամ. որդիս ուզեն, չմորթեմ, մատաղ անեմ:

— Ի՞նչ ասեցիր, հերիք ա, խնամի Հարություն¹⁶,— ասեց տանուտերը,— ո՛ւմ ասես, ո՛ւմ. հազար շուն, հազար գել կա, որ ո՛չ գիր գիտեն, ո՛չ գրի գորություն. մեր աստղը մեկ անգամ թեքվել ա. էսպես էկել ենք, էսպես կերթանք. ամեն մեկ խոսքդ մեկ ջավահիր ածի, ամա ո՛ւմ ասես: Գիլի գլխին ավետարան կարդացին, ասեց՝ շուտ արեք, սուրուն գնաց: Բիլանա բիր, բիլմիսանա բին. թուրքն ա ասել (իմացողին մեկ, չիմացողին հազար), ո՛ւմ գլուխը ծեծենք. ո՛վ կուզի, որ իր աչքը քոռ ըլի, ամա որ ասածդ տեղ չի՛ հասնում, ի՞նչ ես գլուխդ ցավացնում, բերանդ ափսո՛ս չի՞. քարին որ, հլա աստված սիրես, տասը տարի քարոզ էլ ասես, քյա՛ր կանի: Աստված մեր հորնըմոր հոգին լուսավորի՛, որ եկեղեցու դուռն ու ճամփեն էլա սովորցրել են, թե չէ հենց յաբանի հալվանի պես պտի մենձանայինք: Էղպես բանի վրա տարով էլ որ խոսաս, տուտը չի՛ հատնիլ. գնա՛նք տուն, ու ինչ որ աստված տվել ա, վայելենք, մեր հորնըմոր ողորմաթասը խընենք, հալբաթ աստված մեկ օր իր ողորմությանը դուռը բաց կա-

նի, էսպէս հո չի՝ մնալ: Գնա՛նք, գնա՛նք, թե չէ շուտով մենք պա-
սը կգա. էն վախտը վա՛յ քո օրին՝ հա՛, կա՛ց ու թթու կե՛ր, գազար
կրծի՛ր ու բերնիդ ու փորիդ հուպ տո՛ւր: Բարիկենդան ա, մեր քե-
ֆըն անենք հլա. ինչ աստծու կամքն ա, է՛ն ըլի: Փողատերն էլ իր
համար կենա, վարդապետն էլ. լավութիւն չեն անում, իրանք գի-
տեն, նրանց մեղքը հո մեզանից չե՛ն հարցնիլ, մեզանից չե՛ն ու-
զիլ. ո՛վ ա գիտում, թե էգուց գլխըներս ի՛նչ կգա. մարդի միս են
ուտում, արինը խմում. ո՛վ ճար ունի, իր գլխին ա անում. մերն էլ՝
աստված, էսպէս չե՛նք մնալ. փիս բանը, փիս ճամփեն էսօր ա,
էգուց լիս կընկնի, ու էն ժամանակը շատ մեր լաց կըլի: Ծամփեն
որ ուղիդ ըլի, ինչքան երկար էլ ըլի, գնա՛, դուզ ճամփից մի՛ դուս
գալ. թե չէ, որ սարերով, չոլերով ընկար, բանդ բոշ ա, գլխիդ
փորձանք շատ կգա: Յոլդան չխանն գլոգի չխար (ճամփից դուս
էկողի աչքը դուս կգա): Գնա՛նք, գնա՛նք տուն, տեսնենք, մեր
խանութը ի՛նչ ա հագիր արել, խեղճը սաղ գիշերը աչքը չի՛ կպցը-
րել ու հենց չարխի պէս գլխի վրա պտիտ էկել, դես ու դեն ընկել:

— Աղբաթը խեր ըլի մեր տանդրոնջ, թե նա չէ՛ր էլել, էս մար-
դը մեր գլուխը հենց սալթ կտաներ,— էն կողմիցը մեկը բեղերն
ոլորելով, քիթը վեր քաշելով, իշտահով կում անելով, հազալով,
գլուխը տմբացնելով ձեն տվեց:— Հինգ սհաթ ա, ժամը դուս
ա էկել. ագոսկներն էլ, որդիանց որ էլավ, հմիկ մեկ կտոր միս
յա աղբ, յա ուրիշ գատ քթած, կերած կըլին. փորըներս դվլում
ա, անկաջներս դժժում. ցուրտը մեկ դհիցը գափըներս տանում,
սովը մեկ դհից զոռ անում, սա հենց իր խոսքի տուտը բռնել ա
ու ոտը վեր կալած ջաղացի պէս դանը վրա ածել, գլխիցը դուս
տալիս: Քիչ էր մնացել, որ ասեի՝ քարվանը գնաց. պոչդ կար-
ճացրու, դնգի ոտը ցածացրո՛ւ, բերնիդ կապը կապի՛ր, լեզուդ
քնացրո՛ւ. ու քամի ունիս, տա՛ր, ձեր տանը փչի՛ր. էս քամին մեզ
հերիք ա, որ ոտնուձեռ սառցնում, փետացնում ա: Կրակ, պատու-
հաս ա, էլի. գրից ունիս, տա՛ր, ձեր քուրսու տակին արա՛, որ
լսողի քունը տանի. ի՛նչ էս չարչու մասալեքդ բաց արել, գլխը-
ներս տանում: Մենք էլ լավ գիտենք, թե կորած էշը ո՛ր գոմումն
ու կապած, ամա ի՛նչ անես, որ մոտանողի շիկքը կտրում են,
իշի ոտն ու գլուխը խուզում. որ տերը տեսնելիս զոռում էլ ա, ա-
սում են, թե քոնը չի՛, ո՛ւմ գլուխը կտրես: Վաղի մասալեն չըլի,
թե Ուղտին հարցրին. ընչի՛ ա շիկքդ ծուռը,— ասեց. ի՛նչ տեղս

ա դուզ, որ շիճքս ծուռը չըլի: Մեր բանն էս ա դառել, ասելով
ո՛ւմ կապի կբերես. առաջ լուծն ու կամըդ պատրաստի՛ր, կալդ
շիճի՛ր, դեզդ դիզի՛ր, ետո գիժ մոզու անկաջիցը բռնի՛ր, է՛. հո
հազար անգամ տեսել ես, որ կամն առնում ա, չոլերն ընկնում,
էլ ի՛նչ ես նհախ տեղը բերանդ ցավացնում, մեզ էլ հացից քցում:

Ցանք անողը առաջ պետք է գետինը վարի, փափկացնի, ետո
սերմն անի, թե չէ էլածն էլ դուրդ ու դուշ կուտի, կմնաս գլուխդ քո-
րելով, մատդ լպտելով: Մեղրաճանճին մուխ տո՛ւր, որ փախչի,
թե չէ երեսդ ես դեմ անում, հալբաթ որ կկծի, յարալու կանի:
Ամեն մարդ հենց իր ձին ա քշում, էլ առաջը մտիկ չի՛ անում, թե
ո՛վ ա կանգնած: Ծրագը իրան տակին ա լիս տալիս. աշխարքը՝
դմակ, մարդը՝ դանակ. ո՛վ ա հարցնում: Բարդին կռացնես, քեզ
վրա կընկնի, գլուխդ կջարդի: Ուրագն իր դեհն ա տաշում, ծառն
իր տակին շվաք անում: Զուրն իր ձկանը պահում, հավն իր ճու-
տին մուղայիթ կենում. սաքի որ ամպի պես էլ գոռաս, լսողն ո՛վ
ա: Դեղ ունիս, քո գլխին արա՛. եղ ունիս, ձեր բղղումը պահի՛ր:
Ինչ կուգես՝ արա՛ յա ասա՛, ջուրն իր ճամփեն կթթնի: Հենց դու
կմնաս միջումը փսամարդի: Դրուստը խոսողի փափախը ծակ
կըլի, չե՛ս լսել: Ով ասես՝ գլխին կխփի ու բուրդը քամուն կտա:
Ի՛նչ բանդ ա, փորդ հո բերնիցդ բարձր չի՛: Շունչդ փորիցդ ա
դուս գալիս, պահի՛ր, տազ արա՛. քեզ ո՛վ ա ասում, թե արի,
մեր կալը չափի՛ր, որ չանաղդ քեզ ու քեզ դեմ ես անում: Թե մեկ
բան էլ գիտես, ձեր տան պատերին էլ մավա մի՛ գնալ, հողին էլ
մի՛ ասիլ. ձեն կտան, դու կմնաս միջումը մեղավոր: Ախր ի՛նչ ա-
նես, որ լսող չկա. հո չե՛ս կարող քեզ սպանիլ: Հոտաղ կերել եմ,
հոտաղ մենծացել, պարտական մնա, որ ինձ մեկ լավ ճամփա
ցույց չի տվեց, ո՛ւմ գլուխը կտրես յա՛ աչքը հանես: Ղիամաթու-
մը սառչում ենք, սա հենց ի՛ր գուռնեն ա փչում. տո՛, գուռնեն է՛ն
տեղ փչիր, որ պար էկող էլ ըլի, է՛, աղբաթի խեր. թե չէ՛, էս չո-
լումը որ փչում ես, քեզ ո՛վ շաքաշ կտա, ո՛վ բարաքյալիս կասի:

Տանուտե՛ր, տունդ շնորհավոր: Խնամի Հարություն, ասածս
աարին, քարին դիպչի, քամին տանի. համեցե՛ք, խոովել ես, սա-
ռը ջուր խմի՛ր, սիրտդ հովանա, համեցե՛ք, քո գլուխը որ կա,
սար ա. անձրև, ձին, կարկուտ, կայծակ թո՛ղ դիպչի էլ, գա էլ,
ի՛նչ վեճդ ա: Մենք էլ լավ գիտենք, որ դրուստն ես ասում, ամա
ի՛նչ անես, որ գեղըցու խոսքը չվանի չե՛ն դնում, քաղաքացին էլ
տեղը տաքացրել, տազ արել, իր չայը խմում, ո՛ւմ դարդն ա, թե

քարը քարի վրա չի՝ կանգնիլ. ամեն մարդ իր գդակն ա դգում,
 իր գլուխը քորում. բերանդ բաց անելիս՝ հող են ածում, աչքդ բաց
 անելիս՝ թոզ. շունը տերը չի՝ ճանաչում, ո՛ւմ ասես, ո՛ւմ: Կուտ
 ունիս, քո հավի առաջն ածի՛ր. դան ունիս, քո ջաղացը տա՛ր:
 Դու էլ, թե ձեռիցդ գալիս ա, դանակդ սրի՛ր, մեկ կողմիցը վրա
 թռի՛ր. աշխարքս թալան-թալան ա, ճամարդը իշի փալան ա: Հա
 կա՛ց ու քեֆ արա՛: Բարիկենդան օրեր ա, խելքըներս կորել ա,
 ետո ես կգամ, առաջ դու գնա՛:

8

Անջախ մի անջախ իրար բոթբոթելով, համեցեք անելով.
 կոնից, թեից քաշելով տուն ընկան:

Օրհնյալ է աստված,
 Փառք հավիտյանս չամիչ.
 Սրտըներն ընկավ տեղը,
 Մատըներն ընկավ եղը.
 Աքլորին բարձեցին գեղը
 Ու կուզըկուզ անելով՝
 Մտան տաք տեղը:
 Նամարդ ըլի, ով չասի՝
 Աստված վերջը խեր անի:

Արի՛, հմիկ գոմի դռանը կանգնի՛նք ու մեր քեղխուղեքանց
 քեֆին թամաշ անե՛նք: Բայց ի՛նչ անես, որ չե՛ն թողում: Հազար
 յադ ու ալլազգի էլ որ ըլիս, սրանց սովորությունն էնպես ա, որ
 առանց քեզ թիքա չեն բերանները դնիլ. չգնաս՝ կխոռվին, ու ամեն
 մարդ իր տունը կերթա. գնա՛նք, ի՛նչ կա որ, հո մեզ չե՛ն ուտիլ:
 Տարով մեջըներումը մնաս, քեզ տնետուն ման կածեն, քեֆ շհանց
 կտան: Բարիկենդան օրը հո, որ քարվան մտնի գեղը, ճամփից
 ետ կդարձնեն. քեզ էլ կպահեն, նոքարներիդ էլ, ձիանոցդ էլ,
 իրանք քո հոգսը կհոգան, քեզ քնից, տեղից չեն ժած տալ, էնքան
 ղոնաղասեր են:

Հա՛յ դե, ջո՛ւր տո՛ւ, քշի՛,
 Զիդ ներս քաշի՛:
 Մտնինք գոմը,
 Տեսնինք համը,
 Ուտենք փլավը,
 Մարսենք չլավը.

Ամա աղլուխդ դի՛ր քթիդ,
Որ հոտը չդիպչի սրտիդ:

Լսեցի՞ր, նստեցի՞ր, չէ՞. կանգնի՞ր, իմացի՞ր, բանը բանի նըման չի՞. ա՛ռ քեզ տրաքոց: Ծփոթ ու խաշիլ ա, որ հմիկ իրար կխառնվի: Թե ճար ունիս, փեշդ ձեռիդ պահի՛ր, գդակդ՝ գլխիդ, թե չէ՛, գլխաբաց որ դուս գաս, խարփուխ կընկնիս, թե ասածս չանես, պարտական ըլիս:

Գոմի սաքուն էնպես էր տաքացել, ինչպես համամ: Աթարի կրակի մարմանդ գոլը մեկ կողմից, եզի, կովի, ձիու հոտը՝ մյուսիցը, մարդի քյալա էին ծակում: Փորները՝ սոված, գլխըները՝ դարտակ, ձեռք ու ոտք՝ մրսած, գոմի ծանրացած բուղն ու կրակի սև ծուխն էլ որ քթըներին չդիպավ, մաղձ ու աղիք իրար գլխով տըվեց: Որը բերնին էր հուպ տալիս, որը աչքին, որը փորին, որը քթին, որն էլ թուրթուն էր քաշում, որ բալքի թե էն զահրմար հոտը մի քիչ կարվի: Որը փռշտում էր, որը հագում, որն էլ էնպես էր գկռտում, որ սիրտ ու թոք հետը դուս էին գալիս: Ամեն մեկ քիթ նաղրախանա էր դառել, ամեն մեկ բողազ՝ դոռոտոտո, ամեն մեկ փոր՝ դափ ու դարչա: Հազաղիս երես ու միրուք էր, որ ներկվում էր: Փռշտալիս, հենց գիտես, անձրև էր գալիս. քթի ցելթուկը ինչ տեղ ասես հասնում էր. երես, բերան, աչք, ունք էլ չէր ասում, թե աստված ա ստեղծել: Ծատը աղլուխ չունենալով՝ կամ փեշով էր սրբում քիթը, կամ ձեռը պատին քսում, կամ թե չէ քիթըն է՛նպես էր սաստիկ վեր քաշում, որ մեկ բուռը ծուխ ասես, բուղ ասես, գոմի հոտ ասես, թոզ ասես՝ քուլա-քուլա բարձրանում, բեին էին համբարձվում:

Էս միջոցումը խեղճ տանդրոջ կնիկն էլ փեշերը վեր քաշելով, քիթը սրբելով՝ գլուխը քարը չի տվեց, ուզեցավ, որ ներս մտնի ու դոնադներին բարի լիս ասի ու գալըները շնորհավորի: Հազի, փռշտոցի ձենը լսելով՝ քաղաքավարություն բանացրեց, գոմի դուռը բաց արեց, որ մի քիչ հոտն ու ծուխը դուս գնա: Բալց երանի, թե ձեռը կոտորվել էր, չէ՛ր բաց արել: Հենց դռան ճոռոցն իմացան թե չէ, աշխարքն իրար գլխով դիպավ, ու որն անգդակ, որն քուրքը քաշ տալով, աչք ու քիթ բռնած՝ էնպես քոռըքոռ հենց ուզեցան, որ դուս թռչին, երեսները մի քիչ հովին տան, էլ չկարողացան առաջներին մտիկ անիլ, չունքի տունը ծուխը խավարացրել էր, բուղը ամպի պես կալել. իրար գլխով ընկան. հենց իմացան,

թե քամին դուռը բաց արեց, ու մեր խեղճ տանդրոջ կնկա ջանը իրան հասցրին, ոտի տակ տվին:

Հարալ հրոցը որ իմացան, ետ դարձան. աչքդ բարին տեսնի. չէին իմանում՝ ծիծաղա՞ն, թե սուգ անեն, յա վրա հասնին, քոմակ անեն. չունքի տանդրոջ խաթունը էնպես էր ծանրագոգոթ խրվել գոմի կարե կարասումը, որ էլ ո՛չ քիթ, ո՛չ երես, ո՛չ լաչակ, ո՛չ միթթանա (դերիա). դարտակ տեղ չէր մնացել, բոլոր ռուսվա էր էլել վարդահոտումը: Էս դալմադալումը ողորմելին հենց իմացավ, թե ձեռները թամուզ են, հենց մատները բերանը տարավ, որ օշմաղը մի քիչ բաց անի ու շունչը քաշի, քո դուշմանի գլուխը չի՛ գա, ինչ նրա գլուխն էկավ. մեկ դուրում տաք-տաք, կովի էր թե գոմշի, չգիտեմ, մազա էլ էս վախտը բերանն ընկավ ու սրբություն, խաչ, ավետարան աչքիցն ընկավ: Էլ թուք ասես, վատ խոսք ասես՝ նա էր, որ կվաթաթախ բերնով տալիս էր ու ասում:

Ծանրագլուխ տանուտերը ընչանք հմիկ էնպես էր իմանում, թե ֆորթերն են կապըները կտրել, իրար գլխով ընկել, ու տանտիկինն ուզում էր, որ տուն անի. աչքը ցցեց դռան մեջը թե չէ, տունը գլխին փուլ էկավ: Մերու արջի պես բղդալով, ճղդալով, էստուր-էնդուր գլխին բամբաչելով որ վրա չի՛ հասավ, որ իր խաթունին էս դժոխքիցն ազատի, սատանի աչքը քոռանա, քուրքն ընկավ ոտի տակը, գլխի վրա որ մաղալաղ չտվեց՝ շրը՛փ, չը՛խպ, ինչ նա տեսավ, քո դուշմանի գլխին չգա. երեսի վրա էնպես խըրվեց էս կվի մեղրի կնունումը, որ աչք, ունք, բերան, քիթ, միրուք էնպես ներկվեցին, որ հազար ուստա քիսաքսող էլ որ էլել էր, էնպես ադաթին, լազաթին՝ հինա չէ՛ր կարող իր օրումը քսիլ:

Դարդիմանդ տանտիկինը մարդի խայտառակությունը տեսավ թե չէ, իր ցավը մոռացավ ու տեղիցը ժած էկավ, որ իր հալևորին մի քիչ քոմակ անի. հալևորն էլ հենց է՛ն էր ուզում, որ գլուխը էս անոշ բարձիցը բարձրացնի ու իր խաթունի՛ն էս ռուսվայությունիցը ազատի, ձեռները իրար չի հասան, քամակ-քամակի դիպավ. ա՛ն քեզ տրաքոց. էլ ետ դուբարա իրանց վարդահոտի մեջը էնպես խրվեցան, որ երկու լուծ գոմեշը անջախ կարող էր նրանց էստեղանց հանի:

— Տո՛, ջրատա՛ր, տո՛, գլուխդ հողեմ, ախր ի՞նչ բանդդ էր կտրվել, որ դու էլ էկար, էստեղ ընկար: Ես քիչ ռուսվա էլա, դու

Էլ ուզեցար, որ հետս ընկեր դառնա՞ս: Էս հո խորմա չէ՛ր, որ մենակ ուտեի, քեզ չտայի, ի՞նչ էր սիրտդ պատռում: Կրեմ էդ գլուխդ, որ դու ես: Էդ հումարիդ տերն ես, որ մեկ էշ բզիլ չե՛ս իմանում: Ժամն էլ գլխիդ խռով կենա՛, պատարագն էլ, հացն էլ, սուփրեն էլ, բարիկենդանն էլ, պասն էլ: Մենք մեր բարիկենդանն արինք, հըմիկ որ ջհանդամը գնում են, թո՛ղ գնան դրանք: Սրանց ոտը պետք է կոտրվեր, որ մեր շեմը չէին կոխել: Էս ի՞նչ բան էր, որ մեր գլուխն էկավ. գեղի, աշխարքի միջում խայտառակ էլանք: Մերը մեզ հասավ: Թե մենք, թե մեր գզիր Կոտանը: Ով ասես, մեզ վրա պտի բերանը բաց անի:

— Տո՛, քավթառ իմանազ, իմ ցավս հերիք չի՛, դու էլ մեկ կողմիցն ես միսս ծամում: Ի՞նչ ես բերնիդ կապը կտրել ու լեզուդ քեզ չես անում: Զենըդ կտրի՛, թե չէ էնպե՛ս քացի կտամ, որ ատամներդ փորդ կթափի: Սաղ օրը աթար ես թխում, էսօր էլ համն ա՛ռ, էլ ի՞նչ ես գլուխս տանում: Որ չէիր գոթորոմացել, թեզ վեր էիր կացել, հո հմիկ էրկուսս էլ պրծած կլլեինք: Կնիկարմատըն ու ձուռն մեկ օրինակի են, հենց ձեռն ես տալիս թե չէ, էն սհաթը փխլվում են: Ծատ կնկա թամառ անողին ի՞նչ ասես. հազար խոսք ա բերանս գալիս, ետ գնում: Տե՛ր աստված, քեզ մեղա. խաթա-թա՛լա ա, էլի: Կրակն ընկանք, տո՛: Փասա-փուսեդ քաշի՛ր, վե՛ր կաց, կորի՛ր, էլ երեսս չի՛ գաս:

Էս խոսքումը դոնաղներն, էն ա, էնքան ծիծաղել էին, որ սիրտըներն էկել, բողազներին դեմ էր ընկել, ու շատի ոտները դաբաղի աշ դրած կաշի էր դառել: Ախր ո՞վ տեսնի էսպես լազաթի թամաշա ու աչքը կալնի ու չծիծաղի: Լավ իրանք էլ չէին ուզում, ամա, նալլաթ չար սատանին, բանն էնպես էր վրա էկել: Ինչևիցե, փոր ու բերան բռնած՝ էլ ետ մոտ էկան, որ իրանց տանդրոջ հավարին հասնին: Սա էլ քթի տակին փնթփնթալով, ոտ ու ձեռ հինաթաթախ՝ վեր կացավ ու դեպի իրան տեղը երըմիշ էլավ:

Էսքան թամաշեն ու նաղլը անց էր կացել, դեռ գզիր Կոտանը ո՛չինչ բանից խաբարություն չուներ: Էս հարաչ-հրոցը որ ընկավ՝ «Հա՛՜յ, ջուր բերե՛ք, հա՛՜յ, քոմակ արե՛ք, տանուտերն ու տանտիկինը խեղդվեցին»,— հենց իմացավ թե չէ, էնպես կարծեց, թե մոլխն ա նրանց գոռ արել, վրա վազեց դոչադ-դոչադ, բրդի կծկի պես, մեկ կնուռ խտտեց կծի տեղ ու խալխին՝ «Հա՛՜յ, ձեր հերը, հա՛՜յ ձեր մերը» ասելով, միսն ատամի տակին, ափալթափալ ներս պրծավ ու հենց էն սհաթին վրա հասավ, որ տանու-

տերը երես-մերես սրբել, միրուքը լվացել, ուզում էր, որ բերանն էլ թամուզացնի, չունքի ատամների տակին էլ մեկ քանի անոշ թիքա մնացել էին: Շատ փայլը հո՛, բարկացած ժամանակը, կույ էր գնացել, էստուր համար էր բողազը ճոթոռում, հագում, ջուր կում անում, ամա ձեռը ո՛չինչ չէր ընկնում, հազալ-մազալու վախ-տը անց էր կացել: Սոված փոր, ծեր մարդ, դարտակ գլուխ ու էն-պես խնկահոտ, մեղրահամ, ի՛նչ լազաթ կտա, իմացողը թո՛ղ իմանա: Էլ ի՛նչ ասեմ: Էստուր համար էր մեր պարոն տանուտե-րը կատաղած արջի պես փորը բռնել, պտիտ գալիս:

— Վա՛յ, իմ աչքս դուս գա, տա՛նուտեր ջան, վա՛յ, ես դը-ծոխքի փայ ըլիմ, վա՛յ, վա՛յ, վա՛յ. էդ ի՛նչ ա քո հալը, գլխիդ մեռնիմ. մկամ քո Կոտանը մեռել, կորել ա, որ դու էդ օրն ես ըն-կել,— ասեց խեղճ գզիրն ու աչքը կեռացրած, մեկ դհի վրա թեք-ված՝ վրա թռավ, որ նրա գլուխը լա, նրա ցավին մեկ դարման անի:

Հենց քիչ էր մնացել, որ տանուտերը սիլենն ետ քաշի ու նրա մեկ քոռ աչքն էլ դգի, ատամները փորն ածի, որ իր տերն էնպես թողել, իր քեֆի ետևիցն էր ընկել, դովթալաբ գզիրը էլ սիլա-միլին մտիկ չտվեց, դաստ արեց, որ իր ծուռը դգի, ադի խաթրն սունի, ու էրկու ձեռով որ կճուճը շուռ չտվեց տանդրոջ գլխին, աստված ազատի, ինչ նրան հանդիպեց: Մեկ էքա կճուճ, հինգ տարվա թթու, թանձր, պճպճուն բազկաթանը էնպես նրան ողո-ղեց, որ ջրհեղեղի օրն էլ էնպես ալեկոծում, էնպես գուլում չէ՛ր էլած, չէ՛ր տեսնված յա լսված: Տանուտերը հո տանուտերը, քոռ գզրի սիրտը ջուր կապվեցավ: Բազկաթանի հոտը էնպես քյալ-լին դիպավ, որ տասը գազ ծուլ էլավ ու գող շան պես վրվրթա-լով, սրսրթալով, հեթեթալով ետ թռավ գոմի պուճախն ու մնաց քար կտրած, սառած: Մեկ մկան բուճը որ հազար թումանի տվել էին, կառներ, մեջը կմտներ, որ իր սև օրը լա ու տանդրոջ ձեռի-ցը պրծնի: Քու դուշմանի գլուխը չի գա, ինչ նրա հալն էր. տան-դրոջը հո, աստված ո՛չ շհանց տա, ընչանք թաքրար ջուր կբե-րեին, իրանն իրան հասավ: Միրուք, բերան, քամակ, ծոց, բուրբ-մուրք՝ հոտած բազկաթանի մեջը չխչխպում, ծլծլում էին: Ջեր, լաբչին՝ բոլոր լցվել էին, տուտը պճեղն էր հասել: Քամակը քոր էր ընկել, աչքերը մրմնջում էին. թե ուզում էլ էր, որ ժած գա չէ, փոխանն էնպես էր լցվել բազկաթանով, որ փաչեքը իրար դիպչե-լիս դափի, գուռնի ձեն էին հանում, չփչփում:

Էս շան հալին էի գոռում, գոռում, հարայ էր տալիս, ձեռները դես ու դեն քցում, որ գգրին ճանկի ու սպանի: Քոռ հավի պես մնացել էր պատի տակին կանգնած, ամա էի հենց է՛ն էր ձեն տալիս.

— Թողե՛ք, թողե՛ք, դրա քոռ աչքն անիծած, թո՛ղեք, դրան սպանեմ, շնատակ անեմ, դա՛ էր մնացել, որ իմ գլխիս օյին գա՛: Դրան է՛ն օրը քցեմ, որ մեծ թիթեն անկաջը մնա:

Ընչանք ջուր կբերեին, ամենին իրանցը իրանց էր հասել. շատը նվաղել, քամակի վրա վեր էր ընկել: Էլ ի՛նչ կանեին իրար երեսի ալիւր փշիւ յա մածուն քսիւ, որ շատ անգամ, ուրախ վախտըներն, անում էին: Էս բավական ալիւր էլ էր, մածուն էլ: Էս դալմադալումը տանդրոջ կնիկը ճրրալով, թոնթորալով դուս էր գնացել, որ իր գլուխը լա, իր մեղքիցը ազատվի: Խալխը տանդրոջ բնությունը լավ գիտելով, որ բարկացած ժամանակին հրեշտակ էլ ձեռն ընկներ, չէ՛ր խնայիւ, ո՛ր մնաց գգիր Կոտանը, տերտերին աչքով արին, որ նա, քանի աչքը բաց չի՛ արել, մունճաթ անի, որ բալքի խղճին մեկ ճար ըլի, ու էլ ետ գգրին բերեն, տանդրոջ ձեռը պաշիւ տան: Հենց իմանում էին, թե կարգավորի պատիվն էլա կպահի:

— Բարիկենդան օրեր ա, խնամի Օհանես, խելքըներս կորել ա, տնա՛շեն,— բերանը բաց արեց ծանրագոգոթ մեր փառավոր տերտերը, որ իր կարգի պատիվը ճանաչելով՝ ուզում էր, որ բալքի հաշտություն քցի միջըները ու երկուսին էլ բարըշացնի:— Աշխարք ա, է՛դպես կըլի. հո աղջիկ չե՛ս, որ խասդ ու վարադդ գնա. հո շուշա չե՛ս, որ կոտորվեիր, խանի՛ խարաբ. մոմ չե՛ս, որ հալչիս. մի քիչ սիրտդ լե՛ն պահի, ի՛նչ էլավ քեզ: Քրիստոս իր սուրբ ավետարանի միջումը գրում ա, ամենիդ մուրազն էլ տա, թե՛ Երանի՛ խաղաղարարաց¹⁷, կամ թե՛ Թշնամուդ գլխին կրակ կածես¹⁸, թե որ նրան սի՛... ոը՛... դո՛... րե՛ս... Վա՛յ քո հերն էլ անիծած, քո մեռոն քտողինն էլ, քո օխտը պորտին նալլաթ, քեզ բարի օր ասողին, բարի լիս տվողի շիմքը հախ միսն տերը կոտրի, էս ի՛նչ ա իմ հալը,— տերտերը բուխարուցը ձեն տվեց՝ գլուխը քորելով, միրուքը թափ տալով:— Էս ի՛նչ անիծած մարդի ռաստ էկանք էսօր, տո՛, հենց ամեն բանն էլ թարս ա գալիս: Հարամ ըլի է՛ն հացն էլ, է՛ն ջուրն էլ, խաթա-բալի մեջ ընկանք, է՛լի: Էս ի՛նչ կրակ ա, որ մեզ էրում ա:

Իրավ որ ողորմելի կարգավորը կրակի մեջ էր ընկել: Չունքի

ինչ սհաթի որ նա մոտացավ, որ տանդրոջ սիրտն առնի, էլ չէ՛ր մտածում, թե նրա արինն ու հերսը աչք ու միտք կալել, քոռացրել էին: Անաստված տանուտերը էնպես մեկ սաստիկ դուռթմա (մուշտի) տվեց էս քո խեղճ տերտերի դոշին, որ փիլոնը մի տեղ ընկավ, գդակը՝ մի, ու ինքն էլ չոքըչոք անելով՝ գլուխն էնպես բուխարու աթարի կրակի մեջն ընկավ, որ երես-մերես բոլոր խանձվեցավ: Խեղճի բերանը մրով, մոխրով լցվել էր, միրքի կեսը հո, կես տարի անջախ դուս կգար, էնպես էր քոքիցը խանձվել, պլոկվել: Էստեղանց էր է՛ն քաղցր օրհնությունը տալիս, որ մեկ դուռթմի էլա ինքը չի՛ դիմացավ ու ուզում էր, որ մեր խեղճ թանակուղ, մեղրաթաթախ, վարդահոտ տանուտերին ճամփու բերի:

— Ժամումը գլխըներս տանում եմ, հերիք չի՛, գոմումն էլ եմ ուզում իշխանություն բանացնեն, ախր ի՛նչպես մարդ համբերի,— վրա բերեց տանուտերը:— Ձեր օրհնողին ի՛նչ ասեմ. նալլաթ չար սատանին, բերանս ի՛նչ ա գալիս, ետ գնում:

Էլի երկար էսպես քթի տակին մոթմոթում էր տանուտերը, որ գգրին փախցրին, պահեցին: Աստված բարի ճամփա տա, որ էնպես դալաթ բան մյուսանգամ չբռնի՛, և մեր գրի սև ու սիպտակը ճանաչողներին էլ խելք, իմաստություն տա, որ էսպես տեղը իրանց պատիվը չկորցնեն:

4

Տանուտերը գեգջանգեջ աչքը բաց արեց, դուռն ու պուճախն ընկավ, որ իր սիրտը մի քիչ հովացնի, բայց գգիրը թռել էր: Քեղխուղեքը մեկ կողմից, կնիկը մյուս կողմիցը թոփ էլան, տանդրոջ սիրտն առան, տերտերին էլ բարշացրին, տանդրոջն էլ, գգիրն էլ էկավ, չոքըչոք ոտներն ընկավ, մեղա ասեց, ձեռը պաչեց, մեկ թաս արաղ էլ կոճեց. ծուխն էլ քիչ-քիչ պակսեց, բուղն էլ, ամեն բան սկսեց իր կարգն ընկնիլ: Տերտերը «Պահպանիչն» ասեց, քեղխուղի մեկը՝ «Եվ ևս խաղաղությունը», տանտիկինը «Ամեն» ձեն տվեց, տանուտերը՝ «Մեղա Աստուծո», «Հայր սուրբ, գքեզ ունիմ միջնորդը», ու վերջապես արաղ-մազեն էլ որ տուն չբերին, ամենի սիրտն էլ տեղն ընկավ: Ինչ անց էր կացել, քամուն տվին, խունկ ծխեցին, երդիկ ու դուռը բաց արին, հոտը-մոտը քաշվեցավ, կատարները տաքացավ, ու մեր պարոն քեղխուղեքը հացի նստեցին, սուփրեն քաշեցին. մեկ գլխին տերտերը բազմեց, մյուս

գլխին՝ տանուտերը, մեկելներն էլ պատի տակին էնպես սրով քազմեցին ու ոտըները ծալեցին, որ սուփրի մեջը էկող-գնացողի, անց ու դարձ անողի համար բաց էր մնացել:

Նոքարը որ արաղը չածեց, ավալի սֆթա տերտերին դեմ ա-րեց. սա էլ խաչակնքեց, օրհնեց, տվողին խմացրեց, որ մեր զգի-րըն էր, ու ետո ինքն առավ թասը ձեռը ու օրհնության տուտը սկսեց:

— Աստված աշխարքիս խաղաղություն, թագավորաց հաշ-տություն, քրիստոնեից ազատություն տա՛: Ընչանք մեռնինք ո՛չ, որ մեկ օր էլ էսպես՝ էլով, գլուճով, ռուսի ձեռի տակին մստինք, քեֆ անենք:

— Ամե՛ն, ա՛մեն,— ձեն տվին ամենն էլ:

— Տունդ շե՛ն կենա, տունդ, տա՛նուտեր, որդիքդ ապրի՛ն: Աստված օջախդ հաստատ պահի՛, նամարդի մոհղաջ չանի՛. մեր գլխի թագն ես, մեր աչքի՝ ծաղիկը, Հայր Աբրահամի օրհնու-թյունը քեզ վրա, Սիմեոն ծերունի պես քո ըմբրի խերը տեսնիս: Քեզ ծուռը մտիկ անողի աչքը քոռանա, ո՛ւմ սրտումը մեկ խեթ կա, աստված բարին կատարի՛: Ինչ էլավ՝ էլավ, աստված վերջը բարի անի՛, քաշած զահմաթդ ապաշխարանք համարի՛. էսօր՝ քեզ, էգուց՝ մեզ. մենք էլ քո ջրերն ընկանք: Ով խռով ա, սառը ջուր խմի՛: Իմ գլխիս ջաղաց էլ աղան, թաք ըլի տեղս տաք ըլի, ձեռիս՝ թաս, սիրտս՝ ուրախ: Տո՛, քեֆ արե՛ք, տո՛, դուշմանի աչ-քը հանեցե՛ք: Շնորհավոր բարիկենդան. աստված զատկին էլ մեզ արժանի անի. քանի կարանք, մեր օրը վայելենք. էգուց ո՛չ էլօր մեծ պասը ոտները երդկիցը ճոլլակ կանի, հա կա՛ց ու քազկաթթու կե՛ր: Հավասարական սաղ ըլի՛ք, ուրախ: Տե՛ր աստված, քեզ փառք. մեր երեսը քո ոտիդ տակը: Զո ստեղծ-վածն ենք, մեզ չի՛ կորցնես: Տե՛ր աստված, դու մեր Ռուս թա-գավորի սիրտը ռահմ քցես, որ գա, մեզ ազատի՞⁹. Ընչանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնինք: Կենդանություն,— ասեց ու արաղի թասը շպոտեց:

— Կենդանի մնաս, սա՛ղ ըլիս. կարգիդ՝ հաստատ, տե՛րտեր ջան. անո՛շ, խմածդ անո՛շ, հենց խմացանք՝ մե՛ր սրտովը գնաց,— ձեն տվին ամենն էլ, ու մեկը մեկ թիքա պանիր, մյուսը մեկ թիքա խորոված յա խաշլամա, լոշում փաթաթած, թավազա արին:

Տերտերն էլ առաջ ձեռը տվողի բթի վրա դրեց, թիքեն ա-ռավ, բերնին, ճակատին դրեց, «Հա՛յ, ձեռդ ապրի, հա՛յ, զորա-

նա» ասելով, ձգվելով, օրհնելով, գովելով՝ թիքեն ծամեց, կույ տվեց ու ինքը մյուսների օրհնանքին անկաջ դրեց, անո՛շ ասեց:

Էսպես՝ արադի թասն սկսեց պտիտ գալ, ձեռնեձեռ ընկնիլ ու ամեն մեկի ձեռին մեկ սհաթ տանջվիլ, չխմողին տանջիլ, չունքի ամենն էլ մեկ եքա պարկ օրհնություն բերնըներումը հազիր ունին, ու ում լեզվումը մի քիչ հունար կա, սուփրի ու գինու կամ արադի թասի վրա ա փորձում: Բայց ամենի խոսքի տուտն է՛ս էր.

— Օրհնյա՛ ի տեր, աստված կարգիդ հաստատ պահի՛: Քո աղութքը մեր գլխիցն անպակա՛ս ըլի: Տա՛նուտեր, սաղ ըլիս. տա՛նուտեր, քո շվաքը մեզ վրա դայիմ-դադըմի ըլի: Մի՛րգամ, աստված որդիքդ պահի՛: Ավետի՛ք, քո որդու կարմիրը կապե՛նք²⁰: Խնա՛մի, աչքի լիս ես, աստված քեզ մեկ դոշ որդի տա՛: Հավասարական սաղ ըլի՛ք, ուրա՛խ: Տե՛ր աստված, վերջըներս բարի անես: Կենդանություն:

Էսպես՝ ամեն մեկ խմող ամենին ջոկ-ջոկ մեկ բան պտի աւեր ու էն էլ ամեն թասի վրա: Թեկուզ քսա՛ն թաս էլ մեկ մարդ խմի, քսա՛ն մարդ էլ նստած, ամեն թաս խմելուն ամենին էլ հատուկ-հատուկ մեկ բան որ չասի, թասը կույ չի գնալ, բկումը կմընա: Ծատն էլ թասը մեկ սհաթ քիմի ձեռին բռնում ա, որ վրեն մի տաղ յա մի խաղ ասեն ու իրան անունի շարականը վրա բերեն: Հայտնի բան ա, որ տերտերից յա տիրացվից գյուման շարական ասող՝ գեղ տեղն ո՛վ կա: Ամա սրանք էլ խեղճ շարականի բուրդը շատ անգամ էնպես են գգում, որ աստված հեռու տանի: Լսողը մինչև երուսաղեմ մին կփախչի: Բայց ի՛նչ կանես, բախտըներիցը հազար շուն կա, հազար գել, որ ո՛չ գիր գիտեն, ո՛չ գրի գորություն: Լավն էլ էս ա, շատ գլուխ չի՛ ցավիլ:

Մեր երկրումը առաջ ձեռըները լվանում, սրբում (էն էլ նրստած տեղն ա նոքարը՝ փեշկիրն ուսին, ավթաֆա լագանը ձեռին, ամեն մեկի առաջին կռանում յա չոքում, ձեռին ջուր ածում), ետո են սուփրեն քաշում, աղամանը, պանրամանը, ձկնամանը մեջտեղը շարում, ապա հացը քաշում, ամենի առաջին կիտում, բազի վախտ կանաչի էլ ա ըլում: Գդալ, չանգալ-դանակի ոտը դեռ մեր աշխարքը չի մտել: Մատներն էլած տեղը ի՛նչ հարկավոր ա չանգալ-դանակ: Կերակրներն էլ մեկ սինով (պոթնոս) ներս են բերում, ու մեկ նոքար փեշն ու թևերը վեր քաշած, ուսին քցած, կուգրկուզ անելով՝ երկուսի առաջին մեկ աման ա դնում: Հացից ետը էլի ջրով որ ձեռք ու բերան չողողեն, չլվանան, կերածը Ռարամ

կըլի: Գդակ վերցնիլ սեղանի վրա յա գլուխ տալ ադաթ չի': Երկրի ծեսն էսպես ա, Եվրոպա չի, որ կովը վեր քաշեն, տեսնեն՝ տակին հորթ կա, թե՛ չէ:

Հենց մի քիչ ադի կողակ ու պանիր որ անոշ չարին, գելը կատաղեցավ:

— Տո՛, լերդս կաավ, է՛, բերանս հո ցամաքեցավ. էդ զահրըմարը մի ածա՛, որ տեսնինք՝ ի՛նչ համ ունի, է՛, ա՛յ տնաշեն: Կողակի թիքեն հրես բկիս դեմ ա ընկել, ի՛նչ էլավ ձեզ, մեզ հո սպանելու չե՞ք բերել էստեղ,— ձեն տվին էս տեղանց, էն տեղանց քեղխողեքը, որ գինին շուտով ածեն:

Հսողը չիմանա, թե հալաստանցիք ուրիշ ազգերի մման, հենց էն ա, գինի տեսնելիս, ուզում են հոգիքը տան կամ, ինչպես բագի Կավկասյան սարը դեռ չտեսած մարդ, գինու ռումբին որ տեսնում են, երեսներին խաչ են հանում կամ շիրախանումը քնում, կամ թուր ու սերթուկ գրավ դնում, կամ թե չէ՝ ցխում, ձնում վեր ընկնում, երազ տեսնում, դելը տալիս: Աստված մի՛ արասցե, էս պակասությունը չունին, նրանք էս շնորհքիցն ու մարիֆաթիցն վաղուց են ձեռք լվացել, որովհետև աշխարհ չեն տեսել, ու էշ կերել, էշ մենծացել, ո՛չ բարոյականության ձեն լսել, ո՛չ կրոնագիտության, որ գինու գինը լավ իմանան ու երկու թաս խմելիս ոտ ու գլուխ կորցնեն ու սիրահարված՝ երկինքը համբառնան: Չէ՛, չէ՛, նրանք շատ բոի են ու էլած-չէլածը չեն տալիս խմիչքի, ամա տեղն ընկած վախտը, գինու տիրոջ ջանին մուննաթ, էնքան են խմում, որ երեսները վարդ ա դառնում, գլխըները՝ նադրախանաւ, լեզվըները՝ բլբլի, սիրտըները՝ ապլանի և ո՛չ խոզի, չունքի մեկ հաչ չես տեսնիլ քո օրումը հարբած, ցխումը թավալ տալիս, թեկուզ հինգ թունգի էլ խմի: Մա՛շալա, տղեն սրան կասեմ, ա՛յ թե մարդ ա, ուրիշն էլ էս բանը կանի:

Հաց քցող տղեն էրկու ստաքանանոց տոլուն էլի տերտերին դեմ արեց. նա էլ օրհնությունը տվեց ու համփու քցեց: Ետո մեկելներին տվեց. էսպես՝ բոլոր հացի ժամանակը մեկն էլա ինքը չէ՛ր ածում իր գինին. էս նոքարի ու դուլուդ անողի գործն ա. որ քսան մարդ էլ որ ըլին, հենց մեկ թասից պտի խմեն, էնպես որ, ընչանք թասը պտիտ կգա ու վերջին մարդին կհասնի, սրա բողազըն ա ցամաքում, վերի նստողի՝ թուքը: Կենաց-մենաց խմիլն Երեվանումն էնքան ադաթ չի, ամա մարդ իր լեզվի հունարը ձեռաց պետք է չթողա, ամեն թասի վրա մեկ խոսք ասի. ինչ կըլի՝ ըլի,

հաջաթ չի. բեինդ տաքացած ժամանակը ինչ կուգես, ասա՛, վատ խոսք էլ որ ասես, լավի տեղ անց կկենա: Սովորական կերակրներն էլ մեր երկրի սրանք են՝ բոգբաշ կամ քուֆթա, կամ խաշ, տոլմա, խորոված կամ խաշած ձուկը, գառան մսով փլավ, խաշած հավ ու ոչխարի խորոված, որ հենց էնտեղ նեթ բուխարումը խորովում ու շատ անգամ շամփրով, տաք-տաք իրար թավազա անում: Բազի անգամ էլ տոլուչին պետք է բերանը բաց անի, որ մեկ թիքա խորոված իրանց ձեռովը բերանը դնեն կամ մեկ թաս գինի կոնծիլ տան:

Էսպես՝ մեկ քանի տոլու մաքրագարդեցին թե չէ, քեֆըները չաղացավ, դամաղները տաքացավ, շունը տերը կորցրեց: Կրչոնց Վիրապն էլ հո՛ւ էնտեղ էր, էլ ի՛նչն էր պակաս, սազը կողքին հագիր ուներ. անկաջ պտեր, որ նրա ձեռնին հալիլ-մալիլ մնար: Հենց ջուրն իր ճամփեն քթավ թե չէ, սա էլ իր սազը քոբեց, ճնգճնգացրեց. հա՛ կաց ու քեֆ արա՛: Պատերը դրմբում էին, գետինը զրնգզրնգում, օճորքը տեղըհան ըլում, նրա ձեռը մարդի քյալլին ցցվում: Էնպես զոռբա ձեն ուներ Վիրապը, որ հինգ սհաթվա ճամփից լսվում էր.

— Փի՛ր օլսան, փի՛ր. ջանմ սան, ջանմ. ի՛նչ կըլեր, որ քո մերն քեզ նման մեկ հինգն էլ էր բերել, որ աշխարքի միջումը մի հատ չըլեիր: Ասա՛, բերանիդ դուրբան, ասա՛. բերանդ ապրի, ըմբրով կշտանաս,— հազար տեղից ձեն էին տալիս մեր պարոն քեդխուդեքը՝ գլխըները տրմբացնելով, անոշ-անոշ զկոտալով:

Շատի բերնի ջուրը հետը գնում էր: Շատ անգամ, քեֆը քոք ժամանակին, տերտերն էլ ի՛ր ձեռնի հունարն էր ուզում նշանց տա, ու կամ Վիրապի հետ էր բաս մտնում, գոռում, կամ թե չէ «Երևեցավ խնկաբերիցն» ասում²¹, խալխի թասըները վեր դնիլ տալիս, կամ ձեռըներին բանդ անում. ամա էնպես մեկ մխոտ, ճոթռած, ճղլանի, քացախած ձենով, որ մարդի գլուխը տեղիցը պոկ էր գալիս: Քեդխուդեքը հո, մաջալ չէին տալիս. ինչ բերանները զալիս էր, հենց է՛ն էին քլոնդալանա ասում, զոռում, էնպես, որ խեղճ սագանդարի ասածը բերնումը հարամ էր ըլում:

Ամենը հո ամենը, իլլահիմ մեր մեղրաբերան տանուտերը. անատամ ռեխը որ բաց չէ՛ր անում, պատերը դողում էին, կատվըները մլավում, հավերը բակումը իրանց տիրոջ ձենը լսելով՝ շարքով կանգնում, կոկոռում յա կչկչում: Ֆորթ, եզը, ձի, տավար ուզում էին, որ ուրախությունիցը կապըները կտրեն: Էշը զոռում էր,

գոմեշը տրլնգում, էծը մկկում, կովը բառանչում, ֆորթը բղավում, որը ֆշտացնում, որը փստացնում, որը վզզացնում, որը բզզացնում: Մյուս բաները չեմ ասում, ամոթ ա: Գարի, դարման կերած տավար, հայտնի բան ա, որ ինչ ասես, նրանցից դուս կգար: Խուլասա, ի՞նչ գլուխ ցավացնեմ. էսպես նաղրախանի ու մուգիկի ձեն շահի դռանն էլ չէր լսված: Բայց գինու տակոին դալար մնա: Էս թոփ ու թոփխանեն, էս զարբազանը մեկին էլա քյար չէ՛ր աճում: Ծատի, հենց բռնես, քեֆը գալիս էր: Բայց ամեն սհաթ հո մեկ չի՛ ըլիլ, ու ում ումն ասես՝ տերտերին յա գզրին ա հաղթում: Սրանց մեկը էս լալեկոծության ժամանակին հենց շարքյասեն առավ, օրհնեց, պրծավ ու պոնկին դրեց, որ մաքրազարդի թե չէ, էշն էն կողմիցը էնպես մեկ թունդ տրաքացրեց, որ էլած-չէլած խելքը գլխիցը թռավ, շշկլեց, գինու կեսը կատիկը թռավ, կեսը միրքին թափեցավ, ու հենց ուզում էր, որ թասն էլա չի՛ կոտրի, ու բեղափիլ ձախու ձեռը որ չի՛ վրա բերեց, սատանի աչքը քոռանա, էնպես սաստիկ խփեց տանդրոջ գլխին, որ փափախը կրակի վրա ծունդր դրեց, խորովածի շամփուրը վեր քցեց, տասը հատիկ ատամների մեկն էլ բերնիցը վազեց, փորը գնաց, որ գլուխը պրծացնի: Թե ուրիշ վախտ էր էլել, էս գիտեմ, թե տանուտերը ինչպես նրա միրքի մազերը մին-մին կպոկեր, բերանը կըտեր, ամա էս սհաթին, որ քար էլ աղայիր գլխին, ձեն չէ՛ր տալ:

— Լավ հարաքյաթ էս անում, հա՛: Է՛հ, ի՞նչ անենք. բարիկենդան օրեր ա, խելքըներս կորել ա, դու սաղ ըլիս: Ա՛յ տղա, ածա՛, լցրո՛ւ: Վիրա՛յ ջան, մեկ լավ գլի՛. խմե՛նք, քե՛ֆ անենք, ո՛վ ա խաբար, թե էգուց գլխըներիս ի՞նչ ա գալացուկ: Գլոռն չաթլասն, տերտե՛ր ջան, գլոռն. էդ չալ միրուքդ ուտեմ, որ մի սիրտս կշտանա. կե՛ր, խմի՛ր, քե՛ֆ արա,— ասում էր ու տերտերի ուտերին լավ բաբաթ վեր հատում. սա էլ պարտքի տակին չէ՛ր մնում ու մեկի տեղակ հինգն էլա ետ տալիս:

Էսպես՝ դիմշ, տանստանու, ինչպես հեր ու որդի, քեֆ էին անում մեր պարոն քեղխուղեքը, հանաք անում, իրար սիրտ շահում ու հազար բաբաթ նաղլ, մասալա, առակ, շախա ասում, անում, լսողի սիրտը բանում, իրանց օրը անց կացնում: Վաղուց էին կշտացել. էլ հո հաց չէին ուտում, մազա էին անում, գինի խմում. բազինն էլ վեր էր կենում, պար գալիս: Տերտերը մեկ թաս գինի մեկին դեմ անելիս հո, հազար տեղ գլխի վրա կունդկի էր տալիս,

որ նրա սուրբ ձեռիցը բաժակն առնի, ձեռը պաշի: Էսպես՝ վախ-տին էին մտիկ տալիս, որ դուս գան, գնան, ջահել տղերքանց ջիրիդին թամաշա անեն:

5

Արեգակն էկել, երկնքի մեջտեղը բռնել էր. օրվան փուշը մի քիչ կոտորվել, տաքացել էր: Սար ու ձոր արծաթի պես փլփլում, պլպլում էին: Էս հաղադին ով որ Քանաքեռ մտներ, հենց կիմա-նար, թե երկնքիցը մեկ ավետյաց ձեն ա էկել, աշխարքս արքա-յություն ա դառել, մարդի աչքն էլ ցավ, կսկիծ չի պետք է տեսնի, և Քանաքեռու խարաբեքն էլ էին թե առել, ծափ տալիս, թե էլ էն-պես չեն մնալ, թե իրանց մեջն էլ շունչ կմտնի, շեն կընկնի, էն-քան տղամարդ, ջահել տղերք, Էրեխեք էին տներիցը դուս էկել, քուչեքումն ու կտրներին քեֆ անում: Օտար մարդը հենց կիմա-նար, թե էս գեղըցիք աշխարքի տերն են. ո՛չ դարդ ունեն, ո՛չ դասավաթ. ամեն մեկը հազար թումանի տեր են: Ռհաթ խալխը՝ որը ձեռնաբռնուկ էին արել, պար գալիս, որը բոլորեշուրջ նըս-տել, քեֆ էին անում, որը խաղ էր ասում, որը դամ քաշում: Էս-տեղ զուռնեն էր փչում, Էնտեղ ճժալախտի էին խաղում, մյուս տեղը փահլեաններն էին կոխ պրծնում, յա դարաչիքը ֆալ բաց անում: Մանր տղերքն էլ յա ձնաթոփի էին խաղում, յա աչքա-կապուկ, յա սալդաթի պես կռվում: Դաբխի (դհուլ), զուռնի ձենն ու հարայ հրոցը աշխարք էին վեր կալել:

Աղասին էլ քեֆն արել, պրծել, իր դաստեն ետևին քցած՝ Էկավ մեկ տապը ձիավորով, գեղի միջովն անց կացավ, որ գնա, կալերի դզումը, ջաղացների մոտին իր հունարը նշանց տա, ջի-րիդ խաղա, չունքի գեղամիջին Էնպես դուզ տեղ չկա: Հենց իմա-նաս՝ մեկ թագավորի որդի ա գալիս: Յարադ-ասպաբը կապած, թվանքն ուսին, թուրը կողքիցը կախ, ջուխտ փշտովն ու դամեն գոտկումը, կանաչ մով շալվարը, զառ կապեն հաքին, գյուլբանգի աղլուխը ճտին. նուղայի թուխ գդակը գլխին կոտրել, աջու ան-կաջի վրա էր քցել. ոսկեթել թուխ-թուխ մազերը ձախու կողմիցը քամու հետ խաղում՝ յա ազնիվ երեսին էր դիպչում, յա բկի տա-կովն ընկնում: Բեղերն ապրշումի պես ոլորել, Էնպես էր թշի վը-րովը դուս տարել, որ ամեն մեկի մեկ ծերը անկաջներին էին դիպչում: Մտիկ անողի խելքը գնում էր: Գեղըցիք հենց նրան տե-

սան թե չէ, ծափ տվին, պար էկան, ձեն-ձենի տվին ու սկսեցին նրա խաղն ասիլ, նրա գովքն ածիլ:

— Աղասի՛ ջան, գլխիդ դուրբան, էս թասը խմե՛նք քո արև-սաղաղին, արևիդ մեռնիմ. մեր գլխիցը ո՛չ պակսիս. գնա՛, մենք էլ էս ա, կգա՛նք,— ամեն կողմից ձեն տվին ու Աղասու թասը խմեցին:

Ազնիվ երիտասարդն էլ, ով որ իրան էսպես պատիվ էր տալիս, գդակով էր անում, քաղցր երեսով գլուխ տալիս ու անց կենում:

Հեռըվանց երևում էր, թե ի՞նչ դիամաթ էր անում իգիթը: Ձիու անկաջը մտած՝ էնպե՛ս էր քշում, կրակին տալիս, ի՞նչ, հենց իմանաս, թե ավոր դուռ ըլի: Շատ անգամ ջիրիդը հեռու տեղից շարտում, ձին չափ էր քցում, ու գետնիցը ծուլ ըլելիս՝ ձիու վրիցը բռնում էր, էլ ետ քցում: Շատ անգամ հենց էնպես դուռ շարտում էր ու կրակի պես ետևիցը հասնում, կալնում, էլ ետ ծուլ անում: Գետնին վեր ընկած տեղիցն էլ էնպես էր թամքի միջիցը կռանում, բարձրացնում, որ ջիրիդն առաջին դողում էր: Ընկերտանց վրա էլ որ վախտ-վախտ ջիրիդ չէ՛ր քցում, է՛նպես էր նշանում, որ գդակների ծերին էր դիպչում կամ գդակը հետը տանում, որ իմանան, թե նա նրանց դիմի՜ չի՛ անում: Շատ անգամ թամքի միջին ջուխտ ոտի վրա կանգնում, էնպես էր ձին չափ քցում: Աչք պետք է ըլեր, որ նրա ռաշդությունը, տղամարդությունը, հունարը տեսներ ու զարմանար:

— Ջանմ սան, ջանմ, Աղա՛սի. մերդ մեկ հատ ա քեզանից բերել, հազար տարի անց կենա, քեզ նման մեկն էլա չի՛ բհամ տալ,— ասում էին թամաշավորքն ու խնդում, ուրախանում, ծափ տալիս:

Հանկարծ էս քեֆի միջումը, հենց բռնես, մեկ ամպ տրաքեց, երկիրը շարժեց, յա թոփի, թոփխանի ձեն էկավ, յա երկինքը փուլ էկավ:

— Տարա՛ն... տարա՛ն... աստվածասե՛րք, մոտ էկե՛ք... քոմակ արե՛ք, գլուխս լացե՛ք: Տունս կոխեցի՛ն, օջախս քանդեցի՛ն... աչքիս լիսը հանում ե՛ն, սիրտս դուս են ճոթռում, տո՛, մեկ հասե՛ք, ի՞նչ կըլի: Ա՛ստված, երկի՛նք, ծո՛վ, ցամա՛ք... Էս ի՞նչ կրակ ա, էս ի՞նչ գուլում ա... Վա՛յ, օրս ու ումբրս խավարի, էս ի՞նչ եմ տեսնում: Ձեր թուրը կոտրվի, ձեր էկած ճամփեն փուշ ու տատասկ դառնա... Վա՛յ իմ ըմբրիս, արևիս... ո՞ր ջուրն ընկնիմ,

ո՞ր ջհանդամը գնամ... Գետինն էլա չի՛ պատռվում, որ ինձ մեջը տանի, աչքս հանի. էլ ի՞նչ աչքով իմ սև օրս լաց ըլիմ... Էրեխիս տարա՛ն... քոմակ արե՛ք... Աստվա՛ծ, յարադանդ քոռանա, էս ի՞նչ կրակ ա, որ մեր գլխին ես ածում, մեզ էրում, փոթոթում: Ա՛ն, ա՛ն քո տված հոգին, էլ չի՛ հարկավոր. հոգի չե՛ս տվել, կրակ ես տվել, որ էրվի, ինքը չիմանա, մեր ջանը փոթոթի... Ամա՛ն... հա-րա՛ն... դա՛տ... մադա՛թ... Ե՛րկինք, մեկ փուլ արի՛, ինձ տակովդ արա՛, ի՞նչ կըլի... Ձեր փափախը ձեր գլխին խոռվ կենա, ի՞նչ տղա-մարդիկ եք, տո՛, մեկ ձեռն էլա հասցրե՛ք, է՛, ի՞նչ եք քարացել, փետացել: Թա՛գուհի ջան, գլխիդ մատաղ գնամ... Թա՛գուհի... Անումիդ մեռնիմ... երեսս ոտիդ տակը. Թա՛գուհի ջան... Էդ չախ-մուր աչքերիդ դուրբան ըլիմ, ազիզ ջան: Աչքիս լսի պես մեծաց-րի, որ է՛դ տեղն ընկնիս... Թո՛ղ ինձ սպանեն... Էդ թուրը թո՛ղ իմ սիրտս խրեն... թո՛ղ քո ոտիդ տակին հոգիս տամ... թո՛ղ ես հողը մտնիմ... Էն վախտին ուր տանում են քեզ, թո՛ղ տանին: Թո՛ղ քո նեղ օրը չտեսնիմ, ո՞ր դժոխքն ուզում ա, թո՛ղ ինձ ներս տա-նի...

Էս կսկծալի ձենի հետ լավ պարզ լսվում էր, որ մեկ տղա-մարդ թուրքերեն ասում, հարբա էր գալիս, որ ձենը կտրի:

— Ձենդ կտրի՛, դանջդ, դարաչի... Հենց էս սհաթին փորդ վեր կածեմ. ջինգլանությունն ի՞նչ պետք ա. սարդարի հրամանն ա, պետք է ձեր աղջիկը քաշենք, տանինք. ի՞նչ խոսք ունիք, ի՞նչ կարողություն. սարդարի հրամանին սարը չի՛ դիմանալ, դուք ի՞նչ կարաք անիլ:

Խալխի գլխին ջուր մաղվեցավ: Ամենն էլ իմացան, թե ի՞նչ խաբար ա: Սարդարի ֆառաշներն (ծառալք) էկել էին, որ աղջիկ քաշեն, ո՛վ հաղդ ուներ, որ ծպտա: Բարիկենդանը սուզ դառավ: Երեխեքը լալով, դողալով տուն փախան. կնանիքը դռները կող-պեցին ու շիրախանի կարասների տակը մտան, կամ վերնատնե-րումը տափ կացան, կամ դարմանի ու խոտի խրձերի մեջը մտան: Գեղը, հենց բռնես, բիրադի քանդվեցավ: Տղամարդկերանց որը որ վախլուկ էր, գլուխն առավ, կորավ. որը որ մի քիչ պինդ սիրտ ուներ, զարգանդելով, դողդողալով մոտ էկավ, չէ՛ թե օգնություն անի, չէ՛, այլ թե տեսնի, ի՞նչպես մարդիկ են էկողները, ի՞նչպես են տանում խեղճ, ջրատար աղջկանը: Ռանգ-մոանգները թռած, սփրթնած՝ էկան մեռելի պես ու տան քաշին շարվեցան: Շատի լեզուն բերնումը շաղվել, փետացել էր: Շատի լերդն ու թոքը ջուր

Էր կտրրվել: Շատի պոռոչները ահու ճաքել՝ արինը շոռալով գը-
նում էր: Լավ ուզում էին, որ քոմակ անեն, լավ ուզում էին իրանց
էլած-չէլածը տան, որ խեղճերին ազատեն, բայց ո՛ւմ ձեռիցը մեկ
բան կգար: Սարդարն էր հրամայել, ո՛վ էր կարող, որ ձեռք վրա
բերի: Թե մեկ ծպտոն էլ հաճել էին, էն սհաթը տուն, տեղ կրակ
կտալին ու իրանց էլ թոփի բերնին կոճեին, կքցեին²²: Աստված
ո՛չ շհանց տա: Անօրենի ձեռը դուռմանս չի՝ ընկնի: Մարդ ո՛ր
հողը տա գլխին. ինչ ուզում են, է՛ն են անում: Դատաստան չկա՛,
իրավունք չկա՛, ու հայ ազգն էլ էնքան էսպես ցավեր տեսել էր,
մեկ օր խոսքըմին չէ՛ր ըլում, որ իր գլուխն ազատի: Աղջիկն ա-
սես՝ քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում,
հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահա-
տակում: Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը,
ո՛չ օղլուշաղը: Զարմանալուն էս ա, որ էսպես կրակի, գուլումի
մեջը էլի նրանց աչքը ուրախություն, նրանց երեսը ծիծաղ էր գա-
լիս:

Էսպես, ինչպես ասեցի, հարիր մարդից ավելի վրա էին թա-
փել, ձեռըները ծոցըներումը դրել ու պատի ծերիցը մտիկ էին տա-
լիս: Սուգ ու շիվանն աշխարքն առել էր: Ֆառաշները կատաղել,
փրփրում էին. շատ անգամ թվանքները դեմ էին անում, որ խալ-
խին խփեն, վեր քցեն, որ բալքի ոսդ ըլին, կորչին. բայց էլի հուշտ
էլած ոշխարի պես ետ էին դառնում, էլ ետ՝ ետ փախչում, էլ ետ՝
ետ գալիս, մտիկ տալիս:

Ի՞նչ խեղճ, ողորմելի մերն էր անում, աստված հեռու տանի.
քար չէ՛ր մնացել, որ գլխին չի խփի. հող չէ՛ր մնացել, որ վրեն
չածի: Զագը կորած հավի պես մեկ դես էր վազում, մեկ՝ դեն, մեկ
գլխին տալիս, մեկ՝ ոտին: Է՛նքան էր ծնկներին, գլխին խփել, հա-
րայ տվել, լաց էլել, մազերը պոճոկել, երեսը չանգոել, կտրատել,
որ էլ ո՛չ աչքումը լիս կար, ո՛չ ջանումը՝ թաղաթ, ո՛չ բերնումը՝
լեզու: Էնպես, հենց ձեճը փորն ընկած, շունչը կտրված՝ ոտին-
գլխին էր անում, ինքն իրան ջարդում, գլուխը քարեքար տալիս,
յա սուրութմիշ ըլելով, գետինը լիզելով՝ ֆառաշների ոտներն ընկ-
նում յա ձեռըները բռնում, որ թուրը խլի, իր սիրտը խրի, յա թե
չէ, սրանք էլ որ դռին չէին խփում յա քացով տալիս, դեն քցում,
ընկնում էր ջուխտ ձեռով աղջկա վրա յա ճտովը ու էլ, թեկուզ քա-
ցով էին խփում գլխին, թեկուզ դմբգով (մուշտով), թեկուզ դամ-
շով յա թվանքի դուռթմով, էլ պոկ չէ՛ր գալիս, էլ չէ՛ր իմանում:

Ուզում էր, որ փորը ճղի ու իր հոգու սիրելին էլ ետ ներս տանի: — Թա՛գուհի ջան, էս ի՛նչ ա, քո հարսանիքի պա՛րն եմ գալիս. փեսեն ո՛ր ա, տերտերն ընչի՞ համար չի՛ գալիս: Հինեն ի՛նչ տեղ ա, բերե՛ք, որ աղջկանս ձեռները կարմրացնեմ: Դափ ու զուռնեն ընչի՞ չեն ածում: Ա՛յ դոնադներ, ի՛նչ եք էդպես պարապ, կտրի ծերին կանգնած մնացել, ձեռներդ ծոցըներդ դրել... Ինձ չե՛ք սիրում... Պար էկե՛ք, է՛... հարսանքավորն էդպես բաշիբոշ կկանգնի ու թամաշա կանի՛... Խարջն իմն ա, հո ձեր քիսիցը չի՛ գնում. կերե՛ք, քեֆ արե՛ք, իմ որդուս արևն օրհնեցե՛ք: Մեկ աղջիկ ունիմ, որ աչքիս լսի հետ չե՛մ փոխիլ, նրա խաթրն էլա չո՛ւնիք, որ մեկ ուրախություն անեք, սիրտս հովանա: Հա՛... քնա՞ծ եմ, թե՛ զարթուն, թե՛ գլուխս վրես չի՛... Բաժինքը հագիր ա... Չէ՛, չէ՛... փեսեն հո Թիֆլիզ գնաց, էսպես թեզ չէ՛ր կարալ ետ դառնալ... Սրանք ո՛ր են էկել... Թուրքը հո հալի հաց չի՛ ուտիլ... Հա՛, հա՛, հմիկ իմացա. մեր ճանաչներն են, էկել են, որ երեսիս հարսանքի ուրախությունը տեսնին... Լաց մի՛ ըլիլ, երեսիդ մեռնիմ... Թա՛գուհի ջան, ջանս ու հոգիս քեզ մատաղ. քանի որ զխիդ սաղ եմ, ո՛վ հաղդ ունի, որ քո մեկ մագին դիպչի... Մազերդ ոսկեթել, Թա՛գուհի ջան. ունքերդ վարադով քաշած, ո՛րդի ջան. օրորոցիդ մատաղ գնամ, Թա՛գուհի ջան... Վարդի պես բաց էլած, մանիշակի պես փընջված, իմ ա՛րև, իմ կլա՛նք, իմ թա՛գ ու պարծանք որդի ջան... Աչքերդ բա՛ց արա, աչքերիդ դուրքան ըլիմ. բերանդ բա՛ց արա, էդ անճման, վարդահոտ բերնիդ մեռնիմ... Քո խեղճ, պառավ մորն է՛դպես ես սիրում... Է՛դպես ես իմ սիրտը շահում... Թե ամաչում ես, ասեմ, որ էս կանգնողները հեռանան: Ա՛յ մարդիկ, հեռացե՛ք, կորե՛ք, իմ աղջկա աչքին մե՛ք երևալ: Բան ու գործ չունի՛ք, գնացե՛ք ձեր տունը. ի՛նչ եք էստեղ կիտվել: Ի՛նչ անամոթ մարդիկ եք, տո՛, ձեզ չե՛մ ասում, քառացե՛լ եք... Արի՛, գնա՛նք բաղը, Թա՛գուհի ջան, անումիդ մեռնիմ. ծառերը ծաղկել են, քո ծաղիկ երեսին դուրքա՛ն: Դաշտերը կանաչել են, քո կանաչ արևին մատաղ գնամ: Ո՛ր ենք մնացել էստեղ, գնա՛նք, տեսնի՛նք, ուրախանա՛նք...

Ո՛ր մեկն ասեմ, ո՛ր մեկը թողամ. մարդի սիրտ կրակ ա ընկնում, երբ որ խեղճ մոր արածն ու ասածը միտքն ա բերում: Ո՛վ

որդի ա մեծացրել, նա լավ կիմանա մոր նիրառ, տկար լեզուն ի՞նչ կարա սրտի ամեն մեկ կսկիծը, ամեն մեկ յարեն բառով ետ պատմիլ: Ողորմելի մերը էսպես խելքը կորցրել, չէր իմանում, թե ի՞նչ էր ասում, ի՞նչ էր անում: Թուրքերն էլ, որ տասը հատ էին թվով, է՛ն անօրեն տեղըներովն էլ, դորդ ա, բարկանում, հարբա էին գալիս, ամա մոր էսպես մորմոքվիլը տեսնելով՝ սիրտըները մի քիչ գութ ընկավ: Իրանք էլ էին գիտում, որ մոր համար հեշտ չի որդի մեծացնիլ, ետո էսպես բիրադի կորցնիլ: Հավն իր ձագը կորցնելիս՝ կյանքը հետը տալիս ա, ո՛ր մնա բանական մարդը. իրանք էլ մնացել էին մոլորված, ամա սարդարի հրամանն էր, չանեին, չտանեին, իրանց գլուխը կթռչեր յա աչքը դուս կգար: Մարըները կտրվեց, խոսքըմին արին, որ մորն էլ աղջկա հետ տանին բերդը, սարդարի դուռը, իրանց պարտքի տակիցը դուս գան, ետո ինչ կուզենան, անեն: Նոքարներին հրամայեցին, որ ձիաները թամքեն, յարադ-ասպաք քցեցին, թուրըները կապեցին ու կամաց-կամաց մոտ էկան, որ մորն էլ, աղջկանն էլ վերցնեն, տանին:

Թագուհի՛ն, Թագուհի՛ն, աշխարքի աչք Թագուհի՛ն, երկնքի տակին, գետնի երեսին անթառամ ծաղիկ Թագուհի՛ն, դրախտ, մանիշակ, անգին, անհատ, անմահ Թագուհի՛ն. ի՞նչ լեզու պետք է ըլի, որ նրա գովասանությունը պատմի, ի՞նչ աչք, որ նրա տեսքըն ու կերպարանքը մեկ բանի նմանացնի: Ծարմաղ, լուսաթաթախ երեսը, որ արեգակի պես լիս էր տալիս ու վարդի պես փալլում, դառել էր սիպտակ քաթան, սառել, սփրթնել: Էն երկնամահ աչքերը, որ տեսնողի հոգին վառում, կրակում էին, ընկել էին խոր, փակվել, կուլ գնացել: Թագուհի՛ն, ջիվան Թագուհի՛ն, մորը մեկ Թագուհի՛ն, որ հրեշտակի նման ում որ մեկ մտիկ էր տալիս, հոգին անմահական խնդությունով լցվում էր, սառել, փետացել, անշունչ, անլեզու մնացել էր գետնի վրա ընկած, երեսը երկիմքը քցած. հենց գիտես, թե էլ էս աշխարքումը չի՛, հրեշտակաց մեջն ա համբարձել, դրախտումն ըլի իր անմեղությունը վայելում: Նրա թուխ-թուխ ունքերը, նրա չալ-չալ աչքերը, նրա նռնահատ թշերը, նրա բարակ-բարակ, դալամ քաշած պոռոնները, նրա լուսեղեն ճակատը, նրա մարմար, նուրբ քիթը, նրա բլբլուկ լեզուն, նրա ոսկեցնցուղ բուկը՝ բոլոր-բոլոր սառել, քարացել, պապանձվել էր: Հենց հարամ ձեռը նրան առավ թե չէ, մեկ ա՛խն էր՝ նրա հոգին: Քաշեց, թուլացավ, իրանից գնաց, ու մինչև դռան շե-

մը կբերեին, հավի պես մեկ էլ թրպրտաց, ու ձենը փորն ընկավ: Շլինքը ծովել, թուլացել, գլուխը շեմի էս կողմն էր մնացել կախ էլած, մարմինը՝ է՛ն կողմն ընկած: Ոսկեթել մագերի կեսը մնացել էր բարձր, որ նրա անմեղ երեսն ու դոշը ծածկի, կեսը էնպես խճճված՝ գետնի վրա փռվել, քաշ էր ընկել: Նազուկ ձեռների մեկը սրտի վրա էր թուլացած ընկած, մյուսը՝ հողի վրա, չորացած տարածված: Դամարը ցամաքել, շունչը կտրվել, հոգին երկինքն էր վերացել:

Բաս ի՛նչ կըլեր, որ էսպես չէ՛ր էլել: Մինչև էն հաղաղը նրա անկաջը մեկ թթու խոսք չէ՛ր լսել. նրա աչքը մեկ դառը օր չէ՛ր տեսել, նրա երեսը մեկ կոշտ գրից չէ՛ր էկել: Վարդի պես ծաղկել, մանիշակի պես մեծացել էր: Դեռ ոտը քարի չէ՛ր դիպել, դեռ մատը մեկ փուշ չէ՛ր մտել: Տասնըհինգ տարին անց էր կացել, դեռ նրա անմեղ հոգին աշխարքիցս մեկ բան չէ՛ր խաբար: Նրա ընկեր աղջկերքը դռներից, կտրներից էին ման գալիս, օր անցկացնում, նա ծունկը մոր ծնկանը կպցրած՝ յա կար էր անում, յա քարգահ, յա իրանց տանն ու դռանն էր մտիկ տալիս, յա իրանց մալին, ապրանքին աչք ածում: Ղուշը գլխի վրովը թռչելիս՝ կարմըրատակած, շունչը կտրած, լեղապատառ տուն էր ընկնում, որ իր շվաքն էլա մեկ օքմին չտեսնի: Մոր մեկ մատը փուշ ըլելիս յա մեկ տեղը ցավելիս՝ ուզում էր հոգին հանի, իրան տա. էլ քար, էլ խոտ չէր մնում, որ նա վրեն չի՛ չոքի ու աստծու ողորմությունը խնդրի: Աղքատ տեսնելիս՝ բերնի թիքեն հանում, իրան էր տալիս, որ նրան օրհնի, նրանց արևշատություն խնդրի: Բաղն էլ է՛ն ժամանակն էր գնում, որ լիսն ու մուրը դեռ չէ՛ր բաժանված ըլում: Բաղիցն էլ է՛ն վախտն էր տուն գալիս, որ մուրը գետինն առած, ոտը քաշված, խաղաղված էր ըլում: Ով ուզենար նրան տեսնի, յա ծառի, յա պատի տակի պետք էր տափ կենար, որ նրա սուրբ երեսը տեսներ, նրա աչքի լսովը հալիլ-մալիլ մնար: Ծաղկըներն էլ, հենց իմանաս, նրա ոտի ձենն առնելիս՝ ուրախանում, ցնծում, բացվում, փչչում էին: Ղշերն էլ նրա երեսը տեսնելիս, հենց բռնի, նո՛ր հոգի էին առնում, գլխըները թևների տակիցը բարձրացնում, ճխում, ճշում, ծլվրլում, թևերին խփում, ծափ տալիս: Զեռը գառան գլուխը քսելիս յա շփելիս, հենց գիտես, թե է՛ս անմեղ հալվանն էլ էր իմանում, որ հրեշտակի ձեռք ա իրան դիպչում և ո՛չ մարդի: Մի քիչ մոտիցը պակսելիս՝ ձենը աշխարք էր վերցնում, մարդի սիրտ էրում, է՛նպես էր բղղում, քար ու քոլ ընկ-

նում: Շատ անգամ նրա փափուկ ծնկան վրա էր քնում, նրա անուշահոտ, ազիզ ձեռիցն էր խոտ ուտում:

Չայիր-չիմանի, մանիշակի վրա, վարդի, թեւնու տակին յաքչաւն առփի մոտ որ բազի վախտ քնած չէր ըլում, հենց իմանաս, երկնքիցը լիս ա վեր էկել, ափնիքը հալլի դառել: Էսպես քնած վախտին էր ըլում, որ մերը ուսուլով մոտանում էր՝ յա երեսըն էրեսին դնում, յա գլուխը իր գոգը դնում, յա վրեն շոր քցում ու խաչակնքում, որ քունն առնի, դինջանա, յա թե չէ, որ վախտը գալիս էր, երեսին հով էր տալիս, նանիկ էր ասում, որ վեր կենա, իրիկնահովը, արեգակի մեր մտնիլը տեսնի, ու միասին պտուղ, ծաղիկ հավաքեն, գնան տուն: Շատ անգամ վարդի փունջը մեկ ձեռին, մանիշակինը՝ մեկել, աչքը որ չէ՛ր բաց անում, հենց գիտես, սար, ձոր, ծառ, թուփ, խոտ, ծաղիկ նրան էին մաթ մնացել, նրա շունչն ըլեին ուզում, որ քաշեն, ծծեն, գորանան, դալարին:

Հովը մազերի վրա սլալալիս, երեսին դիպչելիս էլ չէ՛ր ուզում, որ առաջ խաղա յա ետ գնա, հենց նրա գլխո՛վն էր պըտըտում, հենց նրա մազերի՛ հետ խաղում: Վարդի վրա երեսը կռացնելիս, ուզում էր, որ բարձրանա, նրա շունչը քաշի, նրա պատկերի գունը գողանա, որ դհա ավելի գեղեցիկ, դհա անուշահոտ երևի: Բլբլուլը նրա հոտն առնելիս իր վարդը մոռանում, նրան էր գովում, նրա վրեն էր իր սերը թափում, նրա հասրաթովն էրվում, խորովում: Շատ անգամ, ինքը ձեն հանելիս յա ինքն իրան խաղասելիս, հենց իմանում էր, թե հրեշտակներն են իր հետ խոսում, իրան ձեն տալիս յա ձենը քաշում: Առավոտյան ցողը, իրիկվան վերջի լիսը՝ մեկը նրան տեսնելիս ցնծալով վեր էր գալիս, որ նրա սուրբ երեսին նստի, մեկը ցավելով երեսն իրան էր քաշում, աչքը խփում, որ նա շուտով քուն մտնի, գիշերն անց կենա, որ առավոտն էլի գա, նրա տեսության արժանանա, նրա լուսովը հոգի առնի ու զվարճանա: Քունը նրա աչքերին է՛նպես էր մոտանում, ինչպես մեկ սրբի՝ երկնային հրեշտակը: Թեւերն երեսին փռում, անմահական երազով նրան գրկում, գգվում, արթնացնում, էլ ետ իր գիրկը դնում:

Ա՛խ, ո՛ր մեկն ասեմ. նրա ամեն մեկ շարժումքը, ամեն մեկ խոսքը, ամեն մեկ մտիկ տալը, ամեն մեկ աչքի ու պոռչի ժաժ գալը հրաշք էր: Էն լուսակոյուլ աչքերը, էն խնկան ծաղիկ շրթունքը որ չէ՛ր բաց անում, մարդ ուզում էր ո՛չ ուտի, ո՛չ խմի, հենց նրան մտիկ տա, նրա սուրահի բոյին թամաշ անի, նրա ոտի տա-

կին հոգին տալ, նրա ձեռքին իր մահն առնի՝ Է՛ս երկնային հրեշ-տակը, Է՛ս անմեղ գառն էր էս հաղաղին Է՛ն գազանների ձեռին. ի՞նչ քարացած, ապառաժ սիրտ պետք է ըլի, որ նրան տեսնելիս կամ նրա պատմությունը լսելիս գլխին կրակ չի՛ վառվի: Ո՛ր մեր էս հաղաղին թուրը չէ՛ր առնիլ ու իր ջիգյարը ցցիլ: Ո՛ր հարևան կամ անցվորական նրա էն լուսեղեն երեսին մայելիս՝ աչքին չէ՛ր հույ տալ, որ լացը գա, ու սիրտը հո՛վանա: Ամա մեր գեղական խեղճ խալիը էնքան էսպես բաներ տեսիլ ու լսել էին, որ արտա-սուներներն էլ էր ցամաքել, աչքըների լիսն էլ էր հատել:

Հենց էն ա, ֆառաշները տեսնելով, որ մեր ու աղջիկ դարդի ձեռքը նդդեցան ու էլ ձեն, շունչ չէին տալիս, լավ համարեցին, որ էսպես թուլացած՝ վերցնեն, երկուսին էլ տանին, որ էլ շատ ինչըմիշ չըլին, չչարչարվին: Երկուսը ձիու վրա նստել, էն ա, տեղ էին բաց անում, որ մեկը մորը խտտի, մյուսը աղջկանը առաջն առնի ու, էն ա, խաթրջամ էլած՝ միտք էին անում, թե իրանց բա-նը լավ գլուխ բերին, մեկ թուր պսպղաց, ֆառաշների մեկի գլու-խը գետնի վրա ընկավ ու սկսեց ղվվացնիլ, բլբլացնիլ ու պար գալ: Դեռ սա ձենը չէ՛ր կտրել, որ մյուս ընկերինն էլ սրա հացը կերավ, սրա մոտ գնաց:

— Աղասի՛ ջան, մեր տունը քանդեցիր: Աղասի՛, ձեռդ քեզ քաշի՛, քո խեղճ, հալևոր հորը խնայի՛. որդով, տանով տեղով ե-սիր կերթանք. մի՛ անիր, մի՛ ըլիր, ջա՛նմ, գյո՛գմ. քո ջիվան ջա-նիդ էլա դադր արա՛, տո՛, բե՛նուրվաթ: Աստված, էս ի՞նչ զուլում էր, որ մեր գլխին էկավ: Ո՛վ զինավոր սուրբ Գեորգ, ո՛վ սուրբ Կարապետ²³, դուք մեզ քոմակ արեք: Տղե՛րք, կորե՛ք, կորե՛ք, որ ձեր իզն ու թոզը ըստեղ չէրևա: Տո՛, մեկդ ու մեկդ հասե՛ք տան-դրոջ մոտ, անկաջաբոճուկ տվե՛ք, ա՛յ նրա տունը չքանդվի, ինչ քանդվեց. գինին գլխին զահրըմար ըլի. աշխարքս արինը բռնել, ծով ա դառել, մեր ախմախ քեղխուղեքը նստել, քեֆ են անում. ա՛յ թե մարդ են, հա՛: Տո՛, քեֆն էլ գլխըներին խոռվ կենա, խաչն ու ալետարանն էլ: Տնաքանդեն՛ր, տո՛, մի աշխարքի դարդիցն էլ խաբար առե՛ք, է՛. խիս ի՞նչ եք տան չորս պատը ու գինու գավն ու թաղը բռնել, լակում, տրաքում: Տո՛, Վա՛թո, հասի՛, հա-սի՛, վազի՛, թև ա՛ո, թռի՛. մարաքեն քանի կենում ա, չաղանում ա. հենց էս սհաթը կգան, մեզ կտանին, բերդը կածեն: Աղասի՛, Աղասի՛, քառանաս ո՛չ, Աղասի՛. փախի՛ր, փախի՛ր, էդ շներիցը

գլուխդ ա՛ռ, կորի՛ր, էդ ի՛նչ արիր, տնով քանդված. մեր դուռը շարեցիր, մեր տան հիմքը տակը վեր արիր, տո՛, բե՛մուրվաթ:

Բայց թոփ էլ տրաքեր, նաղրախանա էլ ածեին, Աղասին չէ՛ր իմանալ. դորդ որ քառացել էր. էլ ո՛չ անկաջն էր իրանը, ո՛չ ջանը, ո՛չ աչքը, բայց խելքն ու ձեռը լավ իմանում էին, թե ի՛նչ բանի վրա են: Արինը աչքերը կոխած՝ ուշիդ երիտասարդը հենց էսպես բանի էր ման գալիս, որ իր ձեռի դվաթը, իր թրի հունարը շհանց տա: Ախր էլ ո՛ր օրվան համար են թուր կապում: Զիրիդատեղիցը վարավուրդ էր արել, որ լաշխարքն իրարոցով դիպավ ու ձենը կտրեց:

— Տղե՛րք, էստում մեկ բան կա, գնա՛նք, մեր բարիկենդանը հարամ էլավ,— ասեց ու թռավ:

Հենց տեսան նրան գալիս, բնությունը իմանալով՝ հարիր տեղից ձեն տվին, ձեռով, գդակով արին, որ հեռանա. բայց շունչը բերնին դեմ էր առել, էնպես ձին չափ էր քցել. էլ մաջալ չէ՛ր անում, որ տեսնի՝ թվանքը լիքն ա երա՛բ, թե դարտակ: Առյուծի պես ներս ընկավ հսկա երիտասարդը. ճամփին անկաջովն էր ընկել, թե ի՛նչ խաբար ա: Երկուսի գլուխը սրբելեն էտե, մյուսներն ուզեցան, որ թուր հանեն, բայց քաջն Աղասի որ բերանը բաց չի՛ արեց՝

— Դժո՛խքի որդիք, ձեզ ո՛վ ա դրկել էստեղ, ո՛ւմ վրա եք էդպես կատաղել: Ասենք, թե հայը ձեն չի՛ հանում, պետք է նըրան սաղ-սաղ ուտե՛ք: Աչքըներիդ լիսը կթոցնեմ էս սհաթը, կորե՛ք թե չէ ամեն մեկդ ճուտի պես առաջիս կթաքտա: Քանի էս կուռը վրես ա, դուք էստեղանց թել չե՛ք կարող դուս տանիլ:

Որ չասեց ու մեկի էլ ուսը վեր բերեց, մյուսի աղիքը վեր ածեց, էն վեցը տեսան, որ ճար չկա, ձիանը մի էլան ու ընչանք բերդը մեկ գնացին:

— Արի՛, երեսիդ մեռնիմ, Թա՛գուհի ջան, աչքդ բա՛ց արա, աչքերիդ դուրբան. Աղասին մեռած, ոսկորները փտած, հող դառած պետք է ըլեին, որ քո սիրուն մազին մեկն էլա մատով տար: Վա՛յ իմ աչքին, իմ արևին, ինչպես փետացել, սառել ա: Թա՛գուհի ջան, քո ջանին դուրբան. ա՛ռ, հոգիս ա՛ռ, թո՛ղ ես մեռնիմ, դու կենդանացի՛ր և քո խեղճ մոր սիրտը մի՛ դուս կտրիր, մի՛ դուս ճոթիր, երեսս ոտիդ տակը,— ասում էր քնքուշ երիտասարդը, լալիս, գլխին տալիս: Արտասունքը աչքերիցը քուլա-քուլա էր վեր թափում:

Գնացին ջուր բերելու: Նա ձեռները խաչել, ինքն էլ փետացել, մնացել էր կանգնած: Մոտանար, սիրտ չէ՛ր անում, խտտել, ձեռները ճմռել, անկաջումը ձեն տալ, երեսին ձեռը խփել, բոլո՛ր, բոլոր չէ՛ր կարելի, չունքի Թագունին դեռ կույս էր, ուրիշ մարդի աղջիկ: Մորն էր մտիկ անում, մերը ձեն չէ՛ր տալիս. դուրսն էր նայում, սատկած լաշերի դժոխալին կերպարանքն էին աչքովն ընկնում: Էլ ինս, ջինս, իսան, աղամաորդի չէր երևում, ամենն էլ փախել, սարերով-ձորերով էին ընկել, որ իրանց գլուխը պըր-ցածնեն: Ծների վնգվնգալն ու յա կոնձկոնձալը, աքլորի ու հավի կոկոռալը, հենց իմանաս, թե նրան ասում ըլեին ցավելով.

— Ինչ արի՛ր՝ արի՛ր. գլուխդ ա՛ռ, կորի՛. գնա՛ Փամբակ, Թիֆլիզ, ոսի՛ հողը²⁴: Էս երկրումը քո արևը մեր մտավ, քո օրը խավարեցավ, քո ճրագը հանգավ: Թոփի բերանն ա՛ քո ջանը: Քանի ոտքը խաղաղ ա, քանի ջիլավդ ձեռիդ ա, քանի բերնումդ շունչ կա, ոտումդ՝ թաղաթ, փախի՛ր, գլխիդ ճարը տե՛ս: Մնաս էլ, ձեր տունը բոլոր սուրը կքաշեն, գնաս էլ՝ էն բաբաթ. քեզ էլա ճա՛ր արա: Քո հերը քեզանից դայրու էլ զավակ չունի. նրա օջախի ծուխը մի՛ կտրիր, ձեռներդ արնոտ արիր. սարդարի ֆառաշներին ես սպանել, տո՛, ա՛նիրավ, մեկ միտք արա՛՛ է՛լ: Դրանց արինը քեզանից կուզեն. դրանց տերերը հիմիկ կատաղել, փրփրել, իրանց միսն ուտում կըլին, ի՞նչ ես փետացել, կանգնել. էլ ո՞ր օրին ես մտիկ տալիս: Քյահլան ձին՝ տակիդ, յարաղ-ասպաբը՝ վրեդ. մեկ կտոր հաց ո՞րտեղ ըլի, որ չճարես:

7

Հենց իմանաս՝ դժոխքն առաջին բաց էր էլել: Հազար գլխանի դիվան ատամներ դրճտացնում, զարհուրելի ձևով խնդում, ծիծաղում, ժնգժնգացնում, չանգերը սրում, հազրում, բոցն ու կրակը չաղ ըլեին անում, որ նրան էրեն, խորովեն, կտրատեն, թիքա-թիքա անեն, իրանց փայ շինեն: Հազար կպրե կարաս, հազար օձ, կարիճ՝ բերանները բաց, նրան ըլեին սպասում, որ քրքրեն, կուլ տան, մարսեն: Դեռ աչքը էս սարսափելի քնիցը չբաց արած՝ է՛նպես էր երևում նրան, թե սարդարի ջալլաթները (դահիճ) կոները վեր քաշած, արինն աչքըները կոխած, թրերը սրած՝ գալիս էին, որ իրան տանին: Թոփչին թոփն էր սրբում, հազրում. գյուլլաչին գյուլլեն ջոկում, մոտ բերում: Հեր, մեր, ազգական, էրլու, անցվորական՝ հեռու տեղից գոռում, հարալ ըլեին տալիս, գլխըներին, ծնկներին խփում, ծեծվում, ջարդվում, իրան անումը տալիս ու սուզ ըլեին անում:

— Ա՛ղասի ջան, մեկ թուր էլ ի՛նձ խփի, ի՛նձ... Վա՛յ իմ օրիս, արեխս, վա՛յ... Տունս բրիշակ էլավ... Բալա ջա՛ն... հոգի ջա՛ն... իմ երկի՛նք, իմ գետի՛նք... իմ հրեշտա՛կ... վա՛յ... ամա՛ն... աչքս դուս էկա՛վ... պտուղս խավարեցա՛վ... Թո՛ղ քո ձեռն ինձ սսլանի... որդի ջա՛ն... թո՛ղ քո ոտիդ տակին հոգիս տամ... ախպեր ջա՛ն... թո՛ղ քո՛ ձեռքը մահս առնիմ... ջա՛նըմ ջան... Սիպտակ մազս քեզ փիա՛նդազ, Ա՛ղասի ջան. քանի աչքումս լիս կա, քանի բերնումս՝ շունչ, ոտդ բերնիս դի՛ր, թուրդ սիրտս խրի՛ր. տո՛ւր ինձ մահ, տո՛ւր, թո՛ղ գնա՛մ, կորչի՛մ, հետո ինչ կուզես, է՛ն արա , աչքիս լիսը հանի՛ր... ի՛մ երկնքի բարեբար որդի, ի՛մ սար... ի՛մ աստված...

Է՛սպես էր մեկ ծեր մարդ ընկել Աղասու ոտքը, գլուխը գետնին ծեծում, մազերը ճպռում ու վախտ-վախտ Աղասու ոտներովը փաթաթվում:

Սի՛րելի կտրդացողք, էլ ի՛նչ ասիլ հարկավոր ա: Դուք էլ իմանում եք, որ էս խեղճ, տարաբախտ հալևորը Աղասու ողորմելի հերն էր: Հենց խաբար տանողը որ լեղապատառ, լեզուն կպած տուն չընկավ ու գլուխը ծեծելով ձեն չի՛ տվեց՝

— Տո՛, ձեր տունը չքանդվի, գեղը կոխեցին, տարան. Աթոյենց աղջիկը քաշեցին. Աղասին՝ արնի միջումը ծլծլում, ֆառաշները կրակ են քցել, խալխն էրում:

Ինչպես որ մեկ ամալի տրաքոց կամ սաստիկ թոփի ձեն մեկ ձորի խփում, քարափները դղրդում, թնդում, մարդի անկաջները խլանում, մի քիչ ժամանակ շշմում ա, ու գլուխդ սկսում ա դժժալ, պտիտ գալ, աչքերդ սևանում, մութ ու խավար քեզ կոխում, խելքդ թռչում, մնում ես քարի պես կանգնած, ոտքդ ու ձեռքդ թուլանում, ջանդ սրտում, լեզուդ կաշում ա, էլ չէ՛ս իմանում, թե ո՛ւր ես՝ երկրո՛ւմը, թե դժոխքումը,— Է՛ս հանգին Աղասու հոր ոսկերքը սարսափեցուն, է՛ս հանգին ուշ ու միտքը թռավ, մնաց սառած, փետացած ու աչքերը չառած՝ քցեց Է՛ս կողմն, Է՛ն կողմը: Ծերությունը ջա՛նն առած՝ մի ոտը հողի երեսին, մյուսը գերեզմանումը, աշխարքի վրա է՛ն մեկ պտուղն ուներ, Է՛ն մեկ գավակը: Նրան մըտիկ տալիս՝ հենց իմանում էր, թե աշխարքի թագավորն էլ ա ինքը, շահն էլ: Նրան ջիրիդ խաղաղիս տեսնելիս՝ հենց իմանում էր, թե ոտը գետնիցը կտրվել ա, թև առել, թռչում. ծերությունն էլ էր մոռանում, մահն էլ, դժոխքն էլ, արքայությունն էլ: Է՛նպես էր կարծում, թե նո՛ր ա ծնվել, ու ուրախությունիցը ճխում, ճչում, ո-

տիւն-գլխին էր անում ու, ինչպէս ուր տարեկան երէխա, խնդում, ծիծաղում: Նրա անունը որ տալիս էին, լերդի ծերը խաղում էր, սիրտն ուզում էր պատռի: Ամեն մեկ նրա աչքերին պաշ անելիս, ամեն մեկ նրան խտիտն առնելիս՝ հենց գիտում էր, լիս ա վեր գալիս գլխին, պատերը վարդ են դառել, դաշտ ու սար՝ ծաղիկ: Նրա ճակատին մտիկ տալիս, նրա բոյն ու սուրաթը աչքովն ընկնելիս՝ նրա համար նոր արեգակ էր բացվում, ուզում էր սիրտը նդի ու նրան մեջը դնի:

Էն հասակը հասել էր նա, նրան մեկ չոռ չէ՛ր ասել, չէ՛ր էլ ասել, թե աչքիդ վերևն ունք կա, յա ծուխը դեպի քեզ: Ջանն էլ որ ուզեր, չէ՛ր խնայիլ նրան. հոգին էլ որ հաներ, ձեն չէ՛ր տալ նրան. գլուխը պտի ծախեր ու նրա մուրազը կատարեր: Խանի, բեկի մոտ գնալիս՝ նա իր որդուն էնպէս էր զարդարած դուս բերում, որ ամենի աչքը մնում էր վրեն սառած: Սարդարն էլ էր տեսել նրա տղի կտրճութիւնը, նրա քաջութիւնն ու ձեռի հունարը: Ծատ անգամ, ազիզ օր ըլելիս, ինչքան չիրիդ խաղացողներ կային, պատածսկն էր կոխում, հետ ածում: Փահլեանները հո, նրա անունը լսելիս, զրգնդում, դող էին ընկնում: Նա մեղդան դուս գալիս՝ աշխարքի բերանը բաց էր մնում: Մեկն էլա սիրտ չէ՛ր անում, որ նրան մոտանա: Բերդումը շատ անգամ, հանաքովեր, ոչխարի տեղ եզ, ուղտ էին բերում, որ բալքի կարենան նրան մեկ օր ամաչացնիլ, շատ անգամ թուրը փոխում էին, որ բալքի չի՛ կտրի, ու մնա ամոթով, բայց քաջ երիտասարդը մեկ խփելով եզան կամ ուղտի գլուխը է՛ս կողմն էր թռչում, լաշն՝ է՛ն:

— Հալի՛Ֆ, հալի՛Ֆ, որ հայ ես,— ասում էր սարդարը շատ անգամ, գլուխը պտտելով,— թե որ թուրք էիր էլել, խանություն պետք էր քեզ տված:

Կռվի միջումը, էն գլուլի ու կրակի թեժ ժամանակին, նետի պէս արձակվում, ընկնում էր դոնշունի գլուռ տեղը, ասլանի պէս որին էս կողմը, որին էն կողմը քցում, ջախըբուրդ, թիքա-թիքա անում ու օսմանցվի մազերիցը բռնած, քաշ-քաշ անելով՝ հետը սուրութմիշ բերում, սարդարի առաջին կանգնացում:

— Ասլա՛ն Բալասի (առլուծի ճուտ),— սարդարը ձեն էր տալիս ու ճակատին պաշ անում,— ի՛նչ կըլեր, որ քեզանից մեկ տասն էլ ունենայի. քո մոր մեջքը կտորվի, ընչի՞ չէր քեզանից մեկ չորսն էլ բերում. աֆա՛րիմ, բա՛րաքալլա, էրեսդ պարզ կենա՛, քեզանից շա՛տ ունենամ:

Յորս գնալիս՝ առաջ նրա գտնվեմ պետք է վեր քցեր: Խա-
ներ, բեկեր մնացել էին նրա սուրաթի, նրա լեն թիկունքի վրա
զարմացած, հիացած: Շատ անգամ, հանաքըվեր, խոսք էին քը-
ցում, թե որ թուրքանա, բեկություն, խանություն կտան նրան:
Մուլք էին խոստանում, ողհաթ, մալ, դովլաթ, աղջիկ էին ասում՝
կտանք. բայց նա է՛ն կաթը չէ՛ր կերել, որ իր սուրբ հավատն
ուրանա, փուչ աշխարքիս մալին, դովլաթին թամահ անի:

— Իմ ցամաք հացը լավ աշեմ ինձ համար, քանց ձեր դաբլու
փլավը: Իմ տերտերի մեկ մոռտառ մազը հազար ձեր մոլլի ու
ախլունդի հետ չե՛մ փոխիլ: Գութան վարեմ իմ հավատովը, ցանք
անեմ, բահի տամ լա՛վ ա, քանց խան, բեկ դառնամ, աշխարքի
տեր ըլիմ ու իմ օրենքն ուրանամ:

Թուրք սարդարն էր բաշխել, թվանքը՝ Ջավաթ խանը, ձին՝
Նադի խանը²⁵: Նոր էլ Հայոց սարվազի նալիբությունը նրան էին
տվել²⁶: Ա՛խ, ո՛րն ասեմ. մեկ Աղասի էր, մեկ քյու Երևան. ո՛վ
ասես՝ նրա անունովն էր օրթում ուտում. ո՛վ ասես՝ նրա արևովն
էր խնդում, նրա գլխովն էր ուզում պտիտ գա:

— Էս ո՛ր եմ... քնա՛ծ եմ, զարթո՛ւմ եմ, երագո՛ւմ եմ. օ՛հ,
օ՛հ, օ՛հ... արյան ծովն է՛ս ա, որ ասում են,— սկսեց ողորմելի
ծերունին Էսպես իրան-իրան խոսալ, երբ առաջի տաքությունն
անց կացավ, ու թմբրություն էկավ վրեն:— Դժոխքի տարտարուն
է՛ս ա, որ պատմում են... Իսրի պունախն է՛ն ա... Վա՛յ ինձ,
վա՛յ ինձ... վա՛յ ինձ... Միսս սրտում ա... աչքս խավարում ա...
չանգալ ա, որ հազրում են... մանգաղ ա, որ սրում... շիշ ա, որ
կալծակին ա տալիս... Ա՛ստված, քո փառքդ շա՛տ... էլ ընչի՞
մեզ ստեղծեցիր... որ էս կրակի մեջը պետք է էրեիր... Երանի՞
նրան, որ մոր փորիցը դուս չի՛ էկել... Էս ի՛նչ եմ տեսնում, ա -
րա՛րիչ աստված... Հրե՛ն, խորովում են... հրե՛ն, միսը կտրատում
են... Ամա՛ն... ամա՛ն... ամա՛ն... Գլուխ առե՛ք, կորե՛ք... Շատ
գինի խմողի փորն են ճղում... փիս խոսողի, բամբասողի, խա-
բարբզանի... տուն քանդողի լեզուն են բողազիցը դուս ճոթում,
էրում, տապակում... Շատ փող սիրողի ջանին մանեթներ ա, որ
կրակիցը հանում են, կպցնում... Կաշառք ուտողի միսը քալիաթ-
նով պոկում են, բերանն են տալիս... Վատ ճամփի ման էկողի,
գողի, բոգի գլխրներին հալած արճին են ածում... տաքացրած
շամփրներ սրտները կոխում ու էրում, փոթոթում... Մեկ տեղ վընգ-
վընգում են, մեկ տեղ թնգթնգում... Մեկ տեղ վլվլում են, մեկ տեղ

թլթլում... Մեկի էրեսիցը քրտնքի տեղ կայծակ ա վեր թափում... մեկի բերնիցը կրակ, բոց ա դուս գալիս, իրան էրում... Կայծակը մեկ կողմիցն ա խփում, ամպը մյուս տեղից գոռում... Երկինք, աստղեր, արեգակ, լուսին՝ կորել, խավարել են... Էնպես պատկերներ են առաջս գալիս, որ մեկի լեզուն կրակած թուր ա, մյուսի ձեռը՝ օձ. մեկի աչքիցը կրակ ա թափում, մեկի քթիցն ծուխ վեր ըլում... Ա՛ստված, էս ո՛ր տարան ինձ... էս ո՛վ բերեց ինձ էստեղ... Աշխարքի վերջը հո չի՞ հասել... Էրեկ չէ՛ր, որ էլով, գյուճով նստած՝ քե՛ֆ էինք անում... Քոմակ արե՛ք, օգտեցե՛ք, աստծու խաթեր, ի սե՛րը Քրիստոսի. հրես գալիս են, որ ինձ էլ տանին... Աղա՛սի ջան, ո՛ր ես. էդ դոչադ ձեռդ մի հասցրո՛ւ, է՛, անումի՛դ մեռնիմ... Էլ քո հորը ո՛ր օրը պետք է քոմակ անես...

Որդու անումը անկաջն ընկավ թե չէ, հենց բռնես՝ կայծակը խփեց. ջանը մեկ թափ տվեց, սասանմիշ էլավ, աչքը բաց արեց, տեսավ, որ բոլորը մտաց ցնորք էր. ո՛չ դժոխք կար, ո՛չ կրակ. էլի են սուփրեն էր, էլի են հացը, բայց դոճաղների շատը հեռացել, տերտերը ավետարանը նրա գլխին էր դրել, աչքը երկինքը քցել, սաղմոս էր ասում, աղոթք էր անում, վրեն խաչ հանում ու մարմանդ արտասունքը սրբում, հեկեկում:

— Տե՛րտեր ջա՛ն, դո՛ւ ես. ձեռդ մի տո՛ւր, համբուրեմ, աջի՛դ մատաղ գնամ: Ուխա՛յ... Սիրտս հովացավ, ջանս տեղն ընկավ. հլա մեկ քանի տարի էլ ումուղ ունիմ, որ քո աղոթքովն ապրիմ: Էս ի՛նչ էր, տո՛... ուզում էին ինձ սաղ-սաղ դժոխքը տանին... Դեռ Աղասուս էրեսը չպաչած, դեռ կնկանս ու հարսիս օրհնություն չտված ո՛ր կերթամ... Տղերքն ո՛ր են, Վիրապն ո՛ր ա, խի՛ստ էք ձենըներդ կտրել, հա՛յ յա՛սսարներ. էլի ֆուսանդ են նարել, ինձ քնած թողել, իրանք դուս գնացել, որ չալի տան (պարգան): Տեսնո՛ւմ ես, էն հաբամզադեքն ի՛նչ են բերում իմ գո՛ւխը: Ասենք՝ ծերացել եմ, ոտներս չի՛ պար գան, հո մեկ թևերս էլա կբարձրացնե՛մ, ծա՛փ կտամ, հետըները քե՛ֆ կանես: Ծերության երեսին նալլաթ. ո՛վ ասես՝ ծերի դնչին էլ չի՛ մտիկ տալիս: Գինի ածա՛, խմե՛նք, տերտեր ջա՛ն: Դժոխքն էլ քանդվի, աշխարքն էլ, մենք, քանի աչքըներումս լիս կա, քե՛ֆ անենք:

Ծեր մարդը, դորդ ա, ցավի է՛նքան չի՛ դիմանալ, չունքի կենդանական գորությունը հատած է, էլ է՛ն արինը, էլ է՛ն սիրտը չունի, ամա ցավն էլ շուտով կմոռանա, չունքի ջիգարն էնքան տաք չի՛, միտքն էն կարողությունը չո՛ւնի, որ բանը երկար պա-

հի: Առաջի բոցն որ անց կացավ, թմբորությունիցը զգաստացավ, էլ մտքումը բան չէ՛ր մնացել: Հենց իմանում էր, թե գինու զորությունն ա նրան հաղթել, թուլացրել, կրակի տաքությունը գլխին դիպել, քնացրել: Աչքը որ բաց չարեց, էն սարսափելի երազն էլ, որ տեսել էր, հենց իմանում էր ողորմելին, թե նո՛ր ա էկել աշխարք, նո՛ր ա ծնել, ուզում էր, որ ինչ ունի-չունի տա՛, թաք ըլի մեկ քանի տարի էլ ումբր ունենա, աշխարքի սեռը վայելի:

Էնպես, ինչպես որ մեկ մարդ մեկ սարսափելի երազ տեսնի՝ իրան ապանում ըլին, թշնամիք ըլին չորս կողմը փակած, որ գլուխը կտրեն, ի՛նչ սրտով տեղիցը վե՛ր կթռչի ու էրեսին խաչ կհաննի, որ էլի իրանց տանն ա, իր չորդան-դռնակի միջին պառկած, է՛ս հանգին էր հենց նրա հալը: Ուզում էր, որ դուս թռչի, պատեր, դռներ լիզի, հարս, էրեխա, դոստ, դուշման դռին քաշի, համբուրի, սիրի, հոգին նրանց տա, որ քանի էս աշխարքումն են, իրար հետ լավ ապրին, իրար սիրեն, աշխարքի բարին վայելեն, որ էլ էն աշխարքումը մուրազները պակաս չմնա, էլ աչքըները էս կողմը չունենան: Բաղ, հանդ, սար, ձոր, տուն, ապրանք, մալ, դովլաթ, ծառ, ծաղիկ՝ որ միտքն էր ընկնում, որ տեսնում էր, թե էլի իր ձեռին են, էլի բաց աչքով նրանց մտիկ էր տալիս, էլի նրանց հոտն ու համն էր առնում, ուզում էր, որ քարերն էլ լիզի սրտի սիրուն, հողն էլ: Ուզում էր բոլորի առաջին չոքի, ծունդր դնի, մասաւղ ւանի: Իր օրումը էն սրտով ժամ չէ՛ր մտած, իր օրումը էնպես ջերմեռանդ աղոթք չէ՛ր արած, էրեսին էնպես հավատով խաչ չէ՛ր հանած, տերտերի ձեռն էնպես տաք-տաք չէ՛ր համբուրած, երկնքին, գետնին, աշխարքին էնպես քաղցր աչքով չէ՛ր մտիկ տված, էճպես հոգին չէ՛ր փառավորված, ինչպես էս սհաթին: Հենց գիտում էր, թե աշխարքս դրախտ ա, մարդիկը հրեշտակ են, էլ մեկ վատ միտք, մեկ փիս խորհուրդ նրա սրտումը չէին մնացել: Էլ ո՞վ կտար նրա մտքումը բարկություն, չարություն, նախանձ, ատելություն, չկամություն, բախլություն. բոլորը, բոլորը ջնջվել, փչացել էին: Հիմիկ էր իմանում, թե ժամ գնալն ի՛նչ ա, սղոթքն՝ ընչի՞՝ համար, պատարագի զորությունն՝ ի՛նչ:

Արա՛րիչ իմ, մարդ որ մտածի, թե քանի՞ օր, քանի՞ տարի կյանք ունինք, թե աստված մեզ ստեղծել ա, որ օր քաշենք, իր բարությունը վայելենք, թե մեր աչքն ա՝ մեկ բուռը հողը, մեր տեղըն ա՝ երկու գազ կամ ոտնափոխ գերեզմանը, թե մեր առաջին էլ կա էն օրը, որ է՛ս հիանալի երկնքի պայծառ դեմը, է՛ս սիրուն

երկրի ծաղկազարդ սարերն ու ձորերը մեր աչքիցը պետք է փակվին, խոր, սառը, մութը գետնի տակին մարներս՝ որդունք, ոսկորներս փոշի պետք է դառնան, ու ո՛վ ա խաբար, թե ո՛ր աթրաֆի տակն, ո՛ր երկրի պուճախն ընկնի, էլի ասում եմ, ու աչքերիցս արտառունքը թափում ա, ջանս փշաքաղ ըլում: Որ մտածենք, թե է՛ս անկաջը, որ չար բանի էնպես քաղցր դեմ ենք անում, մեկ օր պետք է խլանա, է՛ս աչքը, որ չի՛ ուզում, թե ուրշի աչքումն էլ փոքր լիս տեսնի, մեկ օր պետք է քոռանա, կիրանա, փշվի, է՛ս լեզուն, որ օձի պես օրը հազարին կծում ու յաղու ա տալիս, մեկ օր պետք է պապանձվի, չորանա, քրքրվի ու օրթունքի կերակուր դառնա, բա՛ս էլ չարություն մեր մտքովն ա՛նց կկենա: Բաս չե՛նք ուզենալ, որ ամենին պաշտենք, պատվենք, սրբի տեղ գլխներովը պտիտ գանք:

Աչքըներս սովորել ա, սիրտըներս սառել, մտքըներս քարացել: Ժամ որ գնում ենք, հենց իմանում ենք, թե, էն ա, ամեն բանից պրծանք, պարտքըներս տվինք, որ մեկ քանի խաչ հանեցինք էրեսներին, մեկ քանի ծունդր դրինք, պատարագի էրես տեսանք, պասըներս բաց արինք, սրբություն առանք: Ինչ ասում են, մեզ համար մեռած ա, մեզ չի՛ ազդում, չունքի մեր սրտի բառը չի՛, մեր լեզվի խոսքը: Ուրըշներն ասում են, մենք էլ անկաջներս կախ արած, աչքըներս ցցած՝ լսենք-չլսենք, տեսնինք-չտեսնինք, ե՛րբ ա մեր սիրտը մեկ օր վառվում, որ իմանանք, թե էս ի՛նչ հրաշք ա, որ աստված ամենաբարին մեզ համար ստեղծել ա, մենք ի՛նչ ենք, որ մեր ասած գոհությունը, փառաբանությունը, ծունը, երկրպագությունը աստծու սուրբ առաջին ի՛նչ ըլի: Պետք է մտածենք՝ ո՛վ ա աղքատ, որ նրան օգնենք. ո՛վ ա հիվանդ, որ նրան մխթարենք. ո՛ւմ են գրկում, գնանք, նրան թափենք: Ո՛ւմ սիրտը նեղացրինք, գնանք, էլ ետ հաշտվինք: Թե սիրտըներս մաղձով, թունով, հազար մեկ դառնությունով լիքը մտնում ենք, լիքը դուս գալիս, էլ ի՛նչ օգուտ մեզ: Հենց պետք է մե՛ռնինք, որ սիրտըներս թամուզանա՞, հենց պետք է դժոխքի էրեսը տե՛սնինք, որ աշխարքիս համն իմանա՞նք. հենց պետք է հո՞ղը մտնինք, որ ձեռն ածենք, թե, երա՛բ, մեկ իսան կթքնվի՞, որ էրեսը տեսնինք, լեզվըներս նրանց լեզվին առնի, ականջներս նրանց ձեռն իմանա՞:

Ա՛խ, մտածի՛ր, թե որ հնար ըլեր՝ մեռած վախտդ գերեզմանիդ տակիցը դուս գալիր, էլի է՛ն խելքը, է՛ն զորությունն ունե՛նալիր, որ հիմիկ ունիս, չէի՞ր ուզիլ էն մարդի ոտը համբուրիլ,

որ գերեզմանիդ մոտովն անց կացալ: Չէ՞իր ուզիլ էն մարդին խտտես, արտասընքով էրեսը լվանաս, էրեսն էրեսիդ կպցնես, բերանը՝ բերնիդ, փարվիս, էլ դոշիցը պոկ չի՞ գաս, որ քեզ մեկ «Աստված հոգին լուսավորի» ասեց կամ գերեզմանիդ վրեն մոմ վառեց: Չէ՞իր ուզիլ, որ է՛ն հողն էլ ջուր անես, խմես, որ քո սիրուն աչքերդ ծածկել էր, քո ազնիվ պատկերը փչացրել, քո անուշ լեզուն, քո քաղցր շունչը բռնել, պապանձացրել, է՛ն քարն էլ պաշտես, որ քեզ դաշին բռնած ուներ: Բաս հըմիկ ի՞նչ ա էլել, որ խելքդ՝ վրեղ, սիրադ՝ փորումդ, միտքդ՝ գլխիդ, էդպես բաներ չէ՛ս մտածում: Ա՛խ, սիրելի, երանի թե էս սհաթին իմ սրտումս ըլեր ու իմանայիր, թե ի՞նչ ծով ա պտիտ գալիս սրտիս միջումը: Ձեր էրեսներիցը մեկ օր պետք է գրկվիմ, ձեր քաղցր լեզուն ու ձենը մեկ օր պետք է չլսեմ, ձեր ազնիվ երեսը մեկ օր պետք է չտեսնիմ, հոգվույս սի՛րելիք, բա՛րեկամք, սի՛րեկանք, դո՛ւստ, ը՛նկերք, իմ բոլոր պատկերակից մարդիկ: Դուք ինձ գերեզմանը կդնեք, դուք իմ հոգուս ողորմի կտաք, դուք իմ էրեսիս հող կքցեք. կըլի, թե բազրնի սիրտը մըմնջա, կըլի, թե բազինն էլ մեկ կաթ արտասունքի ինձ արժանի համարի. բաց, ա՛խ, լեզուս պապանձվում ա, որ միտք եմ անում, ձեռներս թուլանում... Ա՛խ, մեկ դարտակ շնորհակալություն էլա իմ բերնիցը չէ՛ք կարող լսիլ: Էլ ի՞նչ եմ անում դժոխքը: Քանց էս էլ մեծ դժոխք ո՛րը կըլի, որ ձեզանից հեռանամ, ձեր խոսքը չիմանամ, ձեր էրեսը չտեսնիմ:

Էս տեսակ մտածմունք էին մեր խեղճ հալևորի ուշ ու միտքը բռնել, գրավել: Ուզում էր տերտերի փեշերն էլ համբուրի. էրեսին էր քսում, աչքերին էր քսում, մրա ձեռը իր ծոցն էր տանում յա բերնին էր դնում ու հոտ քաշում: Նաչար քահանեն մնացել էր մաթալ. թե աչքին էր հուպ տալիս, բերնիցն ու քթիցն էր ծուխ դուս գալիս. թե ձեռը բերնին էր դնում, աչքերն էին իրանց աղի ծովը բաց թողում: Ասեք, ինչ անց էր կացել... Վախում էր, թե ողորմելի ծերը գնա, էլ ետ չի՞ գա. թե չէ՛ր ասում, ի՞նչպես կմնար բանը թաքուն, շխարքը դմբդմբում էր: Բալքի թե որդին մեռներ, ու հոր աչքը մնար կարոտ, որ մեկ էրեսն էլա տեսնի: Ի՞նչ աներ, աչքը մնացել էր դռանը. ինքը դիմիշ չէ՛ր անում, որ ջրատար հալևորի էլած հոգին իր ձեռին դուս գա. սիրտը քրքրվում էր, աղբրները կտրատվում էին, մնացել էր երկու սրի արանքում. դվորը շարժում էր, իրան էր կտրում:

— Օհանէ՛ս ջան, ո՛րդի, վե՛ր կաց, մի քիչ գնանք դուս,

մա՛ն գանք, էրեսներիս հո՛վ դիպչի, ի՞նչ ենք տան պուճախը բռնել, նստել: Օրը տաքացել ա, հավեն կոտրել. գնա՛նք, աստուծո էրեսն էլ մի տեսնինք,— գեջդանգեջ բերանը բաց արեց էրվելով աստվածահոգի քահանեն ու տանուտերի գլխին, միրքին պաշ անելով՝ ուզում էր մեկ մհանով վեր կացնի, որ բալքի թե դուս գնալիս՝ ձենն անկաջն ընկնի, չիմանա, թե ի՞նչ խաբար ա, ուրըշների հետ խառնվի, գնա, իրան աչքովը տեսնի, չունքի որ անկաջի լուսածն ուրիշ ա, աչքի տեսածն՝ ուրիշ, ու քանի ցավը հեռու ա, ավելի ա քյար անում, բայց երբ առաջներիս ա, մնում ենք թմբրած, մինչև յարեն իրան-իրան սկսում ա կամաց-կամաց սզլթալ, մրմընջալ ու ետո սաղանալ:

— Էս մեկ թասն էլ խմե՛նք, տերտեր ջա՛ն, ետո ո՛ր տանում ես, տա՛ր ինձ. այսուհետև քո եսիրն եմ, քո շունն եմ. որ գլուխս կոխես էլ, ձեն չե՛մ տալ: Ախր Աղասուն էլ էսօր, սաղ օրը չե՛մ տեսել. առավոտը տանիցը դուս ա գնացել, չի՛ էկել. բաս նրա ջիրիդ խաղալը չի՞ պետք է տեսնիմ, բաս նրա աչքերին չի՞ պիտի պաշ անեմ: Առանց նրան կես սհաթ չե՛մ կարալ ապրիլ: Գընա՛նք, ա՛չքիս վրա, կենդանություն, աստված կարգիդ հաստատ պահի:

Հենց ասեց՝ «Աղա՛սի ջան, գո՛՛գ բալասի (աչքի որդի), էս խմում եմ քո արեսադաղին, արևի՛դ մեռնիմ...», հենց բռնես՝ մեկ թոփի գլուխ տրաքեց, դուռն ու փանջարեն ջախըբուրդ արեց, դուռ ճակատի մեջտեղին դիպավ, դուռն ու բեինը տաղըթմիշ արավ, է՛նպես քամակի վրա գետնին դիպավ մաշված, չորացած հալնորը ու մնաց մորթած ոչխարի պես սուսը-սասը կտրած, ընկած հենց է՛ն սհաթին, որ վեր էր կացել, գդակն ուզում էր գլխին դնի, փետը ձեռն առնի, որ դուս գնա:

— Աղասին ո՛ր ա... Աղա՛ ջան... Աղասուն տարա՛ն... գլխի՛ս տեր... տոներս քանդեցի՛ն... Աղա՛ ջան... օջախդ խավարացրի՛ն... իմ սա՛ր ջան... դո՛ւող փակեցին, ի՛մ գլուխ... Աղա՛... դա... դա... սի... Աղա՛սի, Աղա՛սի, Աղա՛սի, Աղա՛սի... հրես էկա՛ն, հրես տանո՛ւմ են... ձեռները կապեցին... ոտները բխով դրին... վա՛յ... վա՛յ... վա՛յ... աչքս փորեցին... ո՛ւմ էի մեկ չոռ ասել, որ առաջս էկավ... Գնացե՛ք, հասե՛ք, էն սուրահի բոյին մտիկ արե՛ք... Տեսե՛ք, ի՛նչպես ա ջիրիդ խաղում... Գալիս եմ, գալիս, Աղա՛սի ջան... սաբր արա՛, որ մեկ չարսավս քցեմ, գլուխս կապեմ... Տո՛, տնաքանդի աղջիկ... մեկ ձեռներդ էլա բարձրաց-

րո՛ւ... Ի՞նչ ես փետացել, էդտեղ կա՛ղնել... Վա՛յ... վա՛յ... վա՛յ...
ամա՛ն, էրվեցի՛, խորովեցի՛... Չորանա՛ք դուք, ա՛յ ձեռներ...
Խավարի՛ք դուք, ա՛յ աչքեր... Հարսի ջան, խաղա՛, է՛: Տո՛, մեկ
կոննրդ բարձրացրո՛ւ, է՛ն. Վարդի՛թեր ջան, ի՛մ մանիշակ²⁷, ի՛մ
սմբուլ, ի՛մ ալվան լալա՛գար, ի՛մ խնկան ծաղիկ... աչքերի՛դ մեռ-
նիմ... Էրեսի՛դ մատաղ գնամ... Ի՞նչ ես ձեռներդ խաչել... Ի՞նչ ես
քեզ ջարդում... սպանում... Ջանգուն մոտիկ ա, մի քիչ կա՛ց, Ա-
ղասուն ճամփու դնե՛նք... Դեռ նրա հոգին երկիւնքը չի՛ հասած...
մենք նրանից առաջ կէրթանք է՛նտեղ: Դարդ մի՛ անիւ... Անկաջ
արա՛, մի Աղասու խաղն ասեմ...

Աղասի՛ ջան, գըլ...խի՛դ... դո՛ւր...բա՛ն...
Դու... ես... մեր... թա՛գն... ու... պարծա՛նքը...
Թա՛գն է՛լ գնա՛ց... պարծա՛նքն է՛լ...
Թո՛ւրն է՛լ գնա՛ց... թվա՛նքն է՛լ...
Տո՛ւնս է՛լ քանդվե՛ց... պունա՛խս է՛լ...
Ա՛չքս է՛լ փորվե՛ց... ումբը՛ս է՛լ:

Աղասի՛ ջան, Աղասի՛... Տո՛, ջրատա՛ր... քանի՞ քնիս. լա՛վ ա,
լա՛վ... Գնա՛... որդուդ տարա՛ն... գնա՛, ջուրն ընկի... մենք էլ, էս
ա, գալիս ենք:

Էս սհաթին էր, որ ողորմելի հերը տասն անգամ գնաց է՛ն
դիմեն, էլի ետ էկավ... Քանի որ գլուխը վեր էր քաշում, հենց ի-
մանաս, էլի թաքար խփում, նրան անդունդն էին տանում... Ջա-
հել, քսան տարեկան հարսը մեկ կողմն էր գլուխը ծեծում, ջար-
դում, մազերը քրքրում, իր խեղճ պառավ կնիկը՝ մյուս: Էլ հաքը-
ներին շոր չէ՛ր մնացել, էլ էրեսներին սաղ տեղ չկար, բոլոր ճը-
ղել, քրքրել էին. արիւնը լաչակ, օշմաղ, ճակատ, դոշ շիլի պես
ներկել էր: Ինչ պստի հարսն էր անում, աստված ո՛չ շհանց տա:
Բարձր ձենով լւար՝ ամոթ էր... Էս պատճառով սիրտը դհա ավելի
էր էրվում, խորովվում... ուզում էր դոշը պոկի, գնա, բաշնըվեր
ընկնի... Առաջին խաբարն որ իմացել էին, նրանք էլ հենց, խելքը
թոցրածի պես, հացատանը, որը մեկ պունախում էր անշունչ մնա-
ցել, որը մյուսումն: Նրանց տեսած էրագներն էլ պակաս սարսա-
փելի չէին... Մորը՝ ջիրիդ խաղալիս էնպես էր էրևում, թե Աղասու
ձին բուդուրմիշ էլավ, վեր ընկավ. հենց էն ա, վրա վազեց, որ որ-
դուն խտտի, վեր թռավ: Հարսի աչքին երևում էր, թե հարսանիք

էր, հարամիք վրա տվին, Աղասին մեկ բոզ ձիու վրա նստած՝ նրանց առաջ արեց, թրով ծեծելով՝ թոզ ու դումանումը կորավ: Իր թայդաշ հարսներն ուզում էին, որ իրան բռնեն. փեշը թափ տվեց, ուզում էր, որ նրա ետևիցը կորչի, երեսի վրա վեր ընկավ. աչքը բաց արեց, տեսավ, որ տունը գլխին պտտում ա: Անց կացած բաները որ միտքը չէկավ, էնպես մեկ ծվաց, ծղրտաց, որ ձենը երկինքը հասավ, պատերը զրզնդացին: Էս ձենի վրա կեսուրն էլ, հենց բռնիր, հինգ գազ ծուլ էլավ, հենց բռնես, մեկ թուր քիզարը խրեցին. հարաչ տալով, մազերը պոկելով՝ հարսնի կոնիցը բռնեց, դուռ թռավ ու իր կիսամեռ մարդի առաջին թավալ-թավալ էր տալիս, գետինը պոկում, գլխին հող ածում ու նոր մորթած հավի պես, որ դեռ քանի արինը տաք ա, ոտն ու էրեսը քարերին էր ծեծում, ինչպես որ տեսանք: Ա՛խ, ես չե՛մ ուզում բանը երկա-րացնեմ, թե չէ նրանց արածն ու ասածն լսողի սիրտը կերեն, կփոթոթեն:

Էս ձենի վրա էր, ինչպես ասեցի, որ մեր անբախտ ծերունին բիրադի վե՛ր թռավ, էլ ո՛չ գդակ, էլ ո՛չ քուրք հարցրեց, տանիցը բղղալով, գլուխը ծեծելով, միրուքը պոկելով դուռ ընկավ ու հոգին բերնին հասած՝ գլորվելով, տրորվելով իր որդու ոտի տակին գետնին դիպավ ու թրպրտում էր: Ընչանք էն տեղ հասնիլը հարչուր տեղ վեր էր ընկել, հարչուր տեղ ոտն ու ճակատը քարին էր առել, գլխումն ու ջանումն էլ սաղ տեղ չէ՛ր մնացել, հազար քարի էր դիպել ու յարալու--փարալու էլել, ձնի նման սիպտակ միրուքը արնի մեջը սառել, չանին էր կպել, ու հմիկ էլ որդու ոտները լիզում էր, որ մեկ թուր էլ իրան խփի, որ շուտով էս դառն աշխարքիցս արծնի:

Վա՛յ է՛ն ազգին, որ աշխարքումս անտեր ա,
 Վա՛յ է՛ն երկրին, որ թշնամու գերի ա,
 Վա՛յ է՛ն խալխին, որ ինքն իր կյանքն, աշխարքը
 Չի՛ պահպանիլ ու հարամու ձեռ կտա:

Ո՛վ որ սարեր կերթա իրան ֆորսն անի,

Ո՛վ որ կուզի տեղը նստած մուլք դատի,

Անտեր ազգին նրա գյուլեն կդիպչի,

Անտեր գլուխն նրա քիսեն կլցնի:

Հավատ, օրենք, տուն, ընտանիք, սրբություն

Հողի, քարի հետ կքալին, կփչանան,

Թե մեկ ազգ իր ջիւալն, յախեն թշնամուն

Իրան-իրան կտա, կմնա անվայթան:

Կատաղած ծովն ի՞նչ կհարցնի լաց, շիվան,
Նրա ֆրթնեն (ալիքը) ո՛չ սիրտ ունի, ո՛չ հոգի.
Թե ճար ունիս, մի՛ տար նավիդ գլուխն իրան,
Աչքդ թեքեցիր՝ ծովի տակին կբացվի:

Դառած արջը՝ փնջացնելով դուս պրծավ,

Սարեր, ձորեր սասանում են ձենիցը.

Անմե՛ղ գաւը, ո՛ր ես կանգնել դու անցավ,

Քեզ կքրքրի՛, փախի՛ր նրա ձեռիցը:

Դաշտ ու գետին դմբդմբում են, դղրդում,
Ամպի գոռոցն աշխարքն իրար գլխով տալիս.
Ա՛նցվորական, ի՞նչ ես ճամփիդ մղկտում,
Գնա՛ էլա մեկ քարի տակ, որ պրծնիս:

Ա՛խ, արեգա՛կ, բարի՛ հրեշտակ, մե՛ր մտի,
Ի՞նչ ես կանգնել, սիրուն աչքերդ բաց արել.

Հայի համար որ դուս էլ չգաս դու իսկի,

Դարդ չի՛ անիլ: Վաղուց է նրա աստղը թեքվել:

Թախտ, ապարանք, զենք, զարդարանք փչացան,
Թագավորներ, իշխանք, քաղաքք հողը մտան,
Էլ ո՞վ նրանց էթիմներին խեղճ կգա.

Մեկ թշնամու սրտումն մըգամ աստված կա՞:

ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻ ՎԵՐՋԸ

Բա՛գի վախտ, որ մարդ մեկ քանդված տեղի՝
Վրա կանգնում ա ու ինքն իր մտքի
Հետ ա ընկնում ու անց կացած բաները
Ֆիքր անում, տխրում, տրորում աչքերը,
Էնպես գիտես, թե է՛ն անբան քարերն
Մեզ ասում ըլին, որ մենք մեր օրերն
Լանք ու զգաստանանք, չունքի էս աշխարհ
Զի՛ մնալ մեզ համար դադմի մոլորարար:
Հենց իմանաս, թե լեզու եմ ատել
Պատերն, ուզում եմ մեզ լալով ասել.
«Ա՛յ աղամորդի, տե՛ս, քո վերջն է՛ս ա.
Էստե՛ղ էլ կային նորահարս, փեսա,
Էստե՛ղ էլ կային ծնող, երեխա,
Հարուստ, մեծատուն, իշխան համեշա:
Բայց ո՞ր եմ նրանք՝ հողի հավասար.
Բայդուշն ա նստում նրանց գլխին անճար»:
Բայց ա՛խ, թե մեկ տեղ արին ա թափել,
Աշխարհ կործանվել, ազգեր փչացել,
Գազան բուն դրել, ավազակ բնակել,
Մարդի լերդն ու թոքն կրակ է ընկնում,
Միսը սրտում, աչքը չկանում:
Էս ցավն ա Հայի սրտում բհամ գալիս,
Յրևանու բերդն, Զանգին տեսնելիս:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1

Ըն՛ո քարափի վրա ցից գլուխը բարձրացրնում, թամաշա ա
անում հանդարտ, հազար գլխանի դեի պես, Երևանու հազար տա-
րեկան քաղթառ, պառաված, չորս կողմը խանդակով կապած, բըր-
ջերով դալիմացրած, սուր-սուր ատամները գլխին շարած, հինգ
գազաչափ հաստ պարսպով երկու տակ բռնած, մեկ ոտը Կոնդումը,
մեկ ոտը Դամուրբուլաղի գլխին դրած², մեկ բերանը հյուսիս, մեկը
հարավ բաց արած, չորացած գլուխը երկինքը ցցած, լեւն փեշերը
երկրումը փռած, անամոթ երեսը կոկած, սվաղած, հազար բնով,
հազար փանջարա աչքերը դես ու չեն չռած, ջուխտ չանգերով
Ջանգվի քարոտ, զարհուրելի, սևադեմ ձորը խտտած, դոշին կպցը-
րած՝ անմազ, անլեզու, մարդակեր բերդը ու դեղնած երեսը հեռու
տեղից ծածկում, ազահ աչքերը գետնին քցում, որ միամիտ տես-
նողին դհա շուտով խաբի, դհա հեշտ իր ծոցը քաշի ու բիրադի,
անձեն, անսաս կուլ տա, փչացնի:

Պարսիկ նրան շինեց՝ խորամանկ, խաբերա, թե օսմանցի նրա
հիմքը դրեց՝ կատաղի, անհաշտ, ո՛չ գիր կա, ո՛չ թարեղ: Նրա
պատմությունը խավարի միջումն ա³, մարդ ուղիղ չի՝ գիտի, չի՝
լսել. բայց հազարավոր ժամանակավ՝ ամահ, անվախ, պինդ երեսը
լիրբ գազանի պես դեմ տված, որքան թոփի, թոփխանի գուլլեք
էլ նրա կոշտ քամակին, նրա կակոդ դոշին, նրա բաց գլխին դի-
պան, ո՛չինչ չի՝ ազդեց, քար չարեց: Կորցրած թևերն էլ ետ սա-
ղացրած, ջարդած ոսկորներն էլ ետ պնդացրած՝ գլուխը վեր քաշեց,
էլ ետ շունչ սռավ, վեր կացավ, կանգնեց, ուսերը դգեց, ոլորեց,
սարքեց ու էլ ետ հարբա գալով, հաթաթա տալով, իր գլուխը քո-
րողի, իր շ՛աքի հետ խաղացողի թուլության, փոքրոգության,
անգորության ու հիմար հանդգնության վրա ծաղր անելով, ծի-
ծաղելով, ծափ տալով՝ պափն կանգնեց, մատը ցցեց էս հողաշեն,

ալ ո՛չ քարաշեն բերդը ու խենեշ դիմոք, իր կոտրած ոտները Ջանգվի բերանը խցկելով՝ մնաց տեղը նստած, Ջանգվի, որ գիշեր-ցերեկ անքուն, անդարար, գծված, կատաղած՝ նրա բաց դռ-շին, նրա ւանհրավ սրտին իր պլոկած ջրի անբերան թրովը, քարի ուրագովը վեր հատում, զարկում ա, բաց տեսնելով, թե չի՛ կա-րում ջիգրը հանիլ, վրեժն առնիլ, նրան քանդիլ, գոռալով, գան-գատելով, կական բառնալով, քիչ-քիչ ձենը փորը քցում ու մունջ-մունջ երեսը կալնում, Ջանգիրասարի ծոցն ա մտնում ու հույսը կտրած, սիրտը կոտրած՝ տխուր դես ու դեն ցրվում, ցնորվում ու հազար քարի, հազար պտուղ ու արդյունք տալով, բաշխելով՝ ճամփեն մոլորում, կորչում ու չի՛ կարում իր սիրուն քվորն էլա՛ Արագին, մեկ խաբար տանի, չունքի Երևանու թամարգու, կարոտ բնակիչքը նրա ճամփեն բռնում, նրան սիրով խտտում, իրանց մեջը, իրանց հանդն են տանում, որ նրա սուրբ, կաթնահամ ջրո-վը իրանց էրված սիրտը հովացնեն, իրանց դառը քրտինքը նրա-նով լվանան ու նրա տված պտղովը իրանց գլուխը պահեն:

Երևանու բերդն, Հայաստանու հողն, որ հազար տարուց հետ սկսած՝ դառել էր գողի ու ավազակի բնակարան... Է՛ն հողը, Է՛ն հիանալի աշխարհը, ուրտեղ որ դրախտն էր եղեմական, ուր որ աստված, բոլոր աշխարհը ջրհեղեղովը երբ որ կործանեց, հայոց սուրբ Մասա սարը միայն արժան տեսավ, որ Նոյան տապանը նստի, ու Հայոց երկրիցը էլ ետ մարդիկ բազմանան ու ուրիշ եր-կրքներ էլ շինություն քցեն: Է՛ն սուրբ հողը, ուր որ անպարտեյին Հազի՛ անաստված Բելա՛ չար մտքին չհավանելով, իր ընտանի-քը, իր քաջ, պատվական զորքը հավաքեց, Էկավ ու Հայաստանի զարմանալի սարերի, սիրուն դաշտերի տեսուն մալիլ մնացած, Ջանգվի դրախտանման ձորը, Ջանգվի փրփրադեզ, անառ ջուրը, Երասխի մարմանդ ծոցը, Մասա ու Ալագյազի երկնանման գու-խը, Սևանա ծաղկափթիթ ձորերն ու սարերը տեսնելով՝ իր մըզ-րախը ցցեց ու իր սուրբ ւնեւնովը Հայաստան կանչեց ու Բելա ան-հոգի մարմինը իր նետ ու աղեղին մատաղ արեց: Է՛ն սուրբ տե-ղը, ուր որ Ծափրամ՝ աշխարհ տիրելով⁵, ո՛չինչ տեղ էն պատ-կերը չճարեց, որը որ իր սիրտն ուզում էր, ու մեր հրեշտակա-նման Արայի⁶ սիրուն երեսին կարոտ՝ զորք ժողովեց, Էկավ, որ թե նրա սուրբ սիրտը լայով, սիրով չգրավի, զոռով նրան գերի անի, որ բալքի նրա սուրբ շունչը իր երեսին դիաչի, ու մեռած ժամանակն էլ նրա մարմինը առաջին դրած՝ գիշեր-ցերեկ սուգ

էր անում, որ կամ մա կենդանանա, կամ ինքը մրա ոտի տակին
 հոգին տա: Է՛ն աշխարհը, ուր որ Ջարմայր⁷ Աքքիլեսի հետ Հեկ-
 տորի դեհն ուզեցավ պահի⁸, Պարույր՝ Արքակի հետ Սարդանա-
 բադին էրեց⁹, Տիգրան՝ Կյուրոսի հետ Ածդահակա հոգին առավ¹⁰,
 Վահե՝ Դարեհ Կողոմանի հետ Աղեքսանդրի ճամփեն ուզեցավ
 բռնի¹¹, Վաղարշակ Պարթևն՝ իր եղբայր Արշակա ուղը¹² իր երկ-
 րիցը կտրեց ու Հայաստանին կարգ տվեց, մախարարներ հաս-
 տատեց, Տիգրան՝ արքա արքայից, Ասորոց աշխարհն իր ձեռի
 տակը բերեց ու կարթագինացոց հսկային՝ Աննիբալ գորապետին,
 իր մոտ հրավիրեց¹³: <Է՛ն աշխարհը>, ուր որ քաջահաղթն Տըր-
 դատ¹⁴ Հռովմ իր քաջությունովը ու իմաստությունովը զարմացնե-
 լեն հետո, էկավ, իր հայրենական հողին տիրեց ու ալանաց, պար-
 սից շունչն ու ոտը կտրեց. ուր որ որդին աստուծո երևեցավ ու սուրբ
 Լուսավորչու՝ Իջման տեղի կերպը¹⁵ լուսով չափ տվեց: Է՛ն տեղը,
 որ Վարդան Մամիկոնյան, Վահան՝ ընտիր հղբայր մորա¹⁶, աջօրի-
 մակ քաջությամբ, որ աշխարհ դեռ չի տեսել, իրանց օրենքն ու
 սուրբ եկեղեցու պատիվը արընով գնեցին: Է՛ն տեղը, որ Վռամ-
 շապուհ¹⁷ բոլոր աշխարհի լուսավորությունն ու իմաստությունը իր
 կողմը քաշեց, իր աշխարհը բերեց: Է՛ն ընտիր աշխարհը, ուր
 Ռուբինյանք, Բագրատունյանք¹⁸ իրանց՝ հազար թշնամու ձեռի
 անտեր մնացած Հայրենիքը (վաթանը) էլ ետ գերեզմանից հա-
 նեցին, էլ ետ մո՛ր հոգի տվին: Է՛ն օրհնյալ հողը, ուր ասորիք,
 պարսիկք, հոնք, ալանացիք, մակեդոնացիք, հռովմայեցիք, ա-
 րաբք, օսմանցիք ջրհեղեղի պես վրա էկան, հարչուրավոր ազգ ու
 աշխարհ ոտնակոխ արին¹⁹, ջնջեցին, սրբեցին, թրի, կրակի մա-
 տաղ արին, ուրտեղ որ սար չի՛ մնացել, որ արին չտեսնի, քար չի՛
 մնացել, որ մարդ տակով չանի, ու հարիր մեր հարևան ազգեր
 էնպես են հողի հետ հավասարվել, կորել, որ էսօր ո՛չ մրանց
 շունչը կա, ո՛չ անունը, բայց սուրբ Հայոց ազգը, անհաղթելի
 Հայկա որդիքը իրանց կյանքը, թագավորությունը, մեծությունը,
 փառքը, իշխանությունը, գորքը կորցնելեն ետև որ տեսան, թե
 է՛ս աշխարհակործան ջրհեղեղին, է՛ս գազան ազգերին, որ մեկը
 մյուսի ոտիցը ճուլակ՝ ուր որ կամենում էին գնալ, Եվրոպա թե
 Ասիա, Հայոց հողովը պետք է անց էին կացել, չե՛ն կարող դի-
 մանալ, աչքըները երկինքը քցեցին, գլխըները գոգները դրին ու
 հազար թրի տակից, հազար կրակի միջից՝ սիրտ-սրտի տված,
 հոգի-հոգու կացրած, մինչև էսօր էլ իրա՛նց գլուխը, իրա՛նց սուրբ

հավատը, իրա՛նց սուրբ օրենքը է՛ն վեհաճճությունովը պահ-
պանեցին, որի օրինակը աշխարքում ո՛չ էլել ա, ո՛չ կրլի: Է՛ն
աշխարհը, է՛ն անօրինակ ազգն էր էս վերջին ժամանակը, շուն-
չը բերանը հասած՝ աչքը երկինքը կթել, որ ռուսաց հզոր արծիվը
գա ու իրա՛նց հողն ու զավակը իր թևի տակովն անի:

Քսան տարու միջում լուսավորչալ, քրիստոնյա, խաչապաշտ
եկրոպացոց ոտը ողորմելի Լմերիկա էնպես քանդեց, ջնջեց, հո-
ռի: հետ հավասարեց, որ հինգ-վեց միլիոն ազգերիցը էսօր հա-
զար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած՝ վայրենի գա-
զանների պես են իրանց սև օրը լալիս ու կոտորվում. բաս ի՛նչ
աներ հալոց խեղճ ազգը, որ Նոյան դեսը, վեց հազար տարի, ո՛չ
թե քրիստոնեի կամ լուսավորչալ ազգի, այլ հեթանոսի, կռապաշ-
տի, մահմեդականի, անօրենի ձեռին էր աչքը բաց անում, նրանց
հետ քյալլա տալիս ու շատին, շատ անգամ, իր ոտի տակը քը-
ցում, բայց կարո՛ղ է վարդը ծովի միջում զորանալ, մանիշակը՝
կրակի առաջին դիմանալ. կարո՛ղ է կակող ցորենի հասկը է՛ն
կալճակին ու կարկտին համբերիլ, որ մեր ազգը իր թշնամուն
համբերել էր յա դիմացել:

Հայո՛ց ազգ, Հայո՛ց ազգ, ձեր ջանին մեռնիմ, Հայո՛ց ազգ,
քո հողին մատուռ, Հայո՛ց աշխարհ. էն ո՛ր կաթը դուք ծծեցիք,
է՛ն ո՛ր մեջքը ձեզ բերեց, է՛ն ո՛ր ձեռը ձեզ գրկեց, է՛ն ո՛ր բերա-
նը ձեզ օրհնեց, որ դուք է՛ս հոգին ունենաք, է՛ս սիրտը ձեր մի-
ջումն ըլի, է՛ս հրաշքը դուք աշխարքին ցույց տաք: Է՛ն ի՛նչ աչք
պետք է ըլի, որ քոռանա, ձեզ չտեսնի, ձեր դադրը չիմանա. է՛ն
ի՛նչ բերան պետք է ըլի, որ կապվի, ձեր փառքը չգովի, ձեր ա-
նունը չպաշտի. է՛ն ի՛նչ քարացած սիրտ պետք է ըլի, որ ձեզ չսի-
րի, ձեզ իր հոգին մատաղ չտա: Օրհնեցե՛ք ռսի ոտը, ջան-ջանի
տվե՛ք, իրար սիրեցե՛ք. դուք է՛ն աշխարքի ծնունդն եք, է՛ն ազգի
զավակը, որ աշխարհ ամենայն զարմացրել են ու կզարմացնեն:
Դո՛ւք, դո՛ւք իրար պահեցե՛ք, ինչպես ձեր նախնիքը, դո՛ւք իրար
թասիր քաշեցե՛ք, ձեր նախնիքը միտք բերե՛ք, ձեր հողն ու ազ-
գը պաշտեցե՛ք, ես ետ եմ դառնում էլի իմ պատմությունն անեմ,
բայց աչքս ճամփի ա, անկաջս՝ ձենի, ձեր ջանին դուրբան. չթո-
ղա՛ք, որ էս մուրազը հետս գերեզմանս տանիմ, ու հողումն
մարմինս քրքրվի, երկնքումը հոգիս տանջվի, երբ իմանամ, թե
ձեր սերը պակսել ա, ձեր բարեկամությունը ցամաքել:

Գնա՛նք Երևանու բերդը, օրը մթնում ա, խավարը բռնում,

աչքերս սևանում, սիրտս տրորվում, ու ինչ տեղ որ ծնել եմ, է՛ն հողն էլ ա աչքիս փուշ դառել, սրտիս՝ դանակ: Ղուշն իր բունը սիրում ա, ես իմ հողը ատում, փնտվում, չունքի լսած ու տեսած բաներս կրակ են դառել, սիրտս էրում, փոթոթում, չունքի Երեվանու բերդի հողի ու ջրի շատ փայլը, հե՛նց բռնիր, հայի արընով ա շաղախած. ի՛նչպես անես, ո՛ր ջուրն ընկնիմ, որ սիրտս հովանա, յա մեռնիմ, պրծնիմ, ու էս դարդերը ինձ սաղ-սաղ չուտեն, չսպանեն:

Երևանու բե՛րդն, Երևանու բե՛րդն, ուր որ,— քանի Հայոց թագավորությունը իր աշխարքիցը ձեռք վերցրեց, ու քրիստոնեությունը դառավ Հայոց ազգի հույսն ու ապավենը, ու երկնից արքայությունը, ու պարսիկ, օսմանցիք հռովմայեցոց գլուխը Եվրոպա ուտելով, հունաց ազգը էնտեղ տանջելով, ասորոց, բաբելոնացոցը՝ Ասիա վերջացնելով, թուրքները սրած, կատաղած ասլան-դափլանի պես, մեկն էս դիհից, մյուսն՝ էն, մեր ազգի արնին էին ծարավել, որ իրանց անկուշտ փոքին մատաղ անեն, ու մեկը ծամում էր, մյուսին տալիս, մյուսը արինը խմում, մեկի չանգը քրցում,— մնացել էր հարիր հիսուն տարուց հառաջ օսմանցոց ձեռին, որ Նադիր շահը²⁰ դուս էկավ ու Հնդստան, Արաղստան ոտի տակը տալուց ետև երեսը ետ դարձրեց Երևանու վրա: Սար ու ձոր նրան գլուխ էին վեր բերում, մեկ բուռը հողը ու լեռնաշալվար օսմանցին ո՛վ էր, որ առաջին դիմանա: Հենց Մուրադ թափի գլխին, Քանաքոռուց մի քիչ բարձր, նրա չադրի ծերն էրևաց, դաջար Հասան Ալի խանը²¹ օսմանցվին ընչանք Ղարս մին քշեց, ու կտրիճ գորապետը էնքան թուրն ածել, օսմանցվի գլուխ էր թոցըրել յա ուս վեր բերել, որ ձեռը փետացել էր, թուրը գուլացել, ու ինչ ժամանակ ետ դառավ ու Նադիր շահի չադրի առաջին որ մըգրախը չշարտեց, մգրախը դողալով գետնունը ցցվեց, բայց քաջի արած տղամարդությունը շահի աչքումը տնկվեց, ու պատվի, փառքի փոխանակ՝ ողորմելի խանի աչքերը իսկույն հանել տվեց, որ արեգակի առաջին լուսինը չերևի, ու իրան անունը չկոտորվի: Էս կույր ողորմելին էր, որ օսմանցվից հետո Երևանու խանությունը ստացավ, ու էլի պարսից անիծած ոտը մեր աշխարհը մտավ: Սրանից հետո իր ախպեր Հուսեյն Ալի խանը²² սկսեց նստիլ, որ է՛նքան աջիգ, խեղճ էր, մինչև վրաց Հերակլ թագավորն²³ էկավ վրեն, ջարդեց ու 3000 թուման էլ հարկ դրեց ուսին: Սրա որդի Մահմադ խանը²⁴ էլ որ նստեց, Աղա Մահմադ խանը²⁵,

որ ավելի անուան Ախտա շահ էին կանչում, դուս էկավ, Նադրի պես սար ու ձոր ջարդելով՝ ինքը դեպի Ղարաբաղ ու Թիֆլիզ երըմիշ էլավ, իր ախպեր Ալի Ղուլի խանին Երևանու վրա դրկեց: Բայց մինչև Թիֆլիզու գերին Երևան չհասավ, Մահմադ խանը երկրի խալխը գլխին, բերդումը թոփ արած՝ իր ջիլավը թշնամու ձեռը չի՝ տվեց, որ Երևանու բերդի չորս կողմը կտրել, նստել էր, բայց կռիվ չէ՛ր տալիս, չունքի խանն ասում էր.

— Երբ Թիֆլիզ կառնիք, ես ձերն եմ ու ձերը:

Թիֆլիզ առան, էրեցին, եսրի տուտը Երևան հասավ թե չէ, խանի մեջքը կոտրվեցավ: Ալի Ղուլի խանը մտավ բերդը, Մահմադ խանին դոնադ արեց ու, հացի վրա հենց, ոտն ու ձեռը կապիլ տվեց ու Պարսկաստան ուղարկեց:

Պատմում են, թե բոլոր խաների միջին սրանից լավը չէ՛ր նստել: Մեկ քանի օր որ անց ա կենում, մեկ գիշեր հանկարծ մելիք Աբրահամին²⁶ կանչիլ ա տալիս: Ողորմելու արինը ջուր ա դառնում, բայց հենց կուշտն ա գալիս, սրան բարկացած հարցնում ա, թե ինքը լսել ա, որ հայերը առանց զանգակի ժամ չեն գնալ, ի՞նչպես ա, որ զանգակի ձեն չի՛ լսում: Մելիքը որ դողալով չի՛ ասում, թե նրա ահու չե՛ն տալիս, իսկույն բարկանում, հրամայում ա, որ գնա, հայերին ասի, թե նա էկել ա, որ խալխին պահի, նրանց տիրություն անի, նրանց ցավին հասնի ու ո՛չ նրանց նեղացնի: Ու էս արժանահիշատակ խանն ա, որ խալխի խարջը, կողը բաշխում, շատ ումուդ, շափաղաթ ա տալիս, բայց թուրը երկար չի՛ կտրում: Ախպորը որ Ղարաբաղումը Սադըղ խանը²⁷ չի՛ սպանում, Երևանու հայ, թուրք բերդը բռնում, սրան զոռով դուրս են անում, որ դաջարի անունը իրանց վրա չըլի, էնպես որ ողորմելին հազար մուննաթով ու աղաչանքով, բռանց ա գլուխը պրծացնում ու էլ ետ իր երկիրը քաշվում: Փոքր վախտ սրանից հետո Մակվա խանն ա գալիս, Երևան նստում, չունքի որ Մահմադ խանի ազգականն ա ըլում: Ֆաթ Ալի շահը²⁸ որ նստում ա, Մահմադ խանը շահի մորը մեջ ա քցում, մինչև 10 000 թուման Երևանու փող ոռովաթ (կաշառ) խոստանում ու էլ ետ գալիս, իր տեղը բռնում:

Էս միջումն ա ըլում, որ Նախչվանու քոռ Քյալբալի խանը Ղարաա վրա կռիվ ա դուս գնում, փաշին ջարդում, երկիրը ոտնատակ տալիս, ու ոռան էլ նոր Փամբակ առած՝ էնտեղ մեկ մաշոր ա ըլում, ավելի անունը Ղարա (սև): Խանը ետ դառնալիս ու-

զում ա, որ Փամբակ էլ մեկ ատամին խփի²⁹, ու որ լսում չի՝ թե Ղարա մայորը³⁰ մեկ քանի հարիր մարդից ավելի ո՛չինչ չունի, հրամայում ա, որ գնան, նրան սաղ-սաղ բռնեն: Բայց ուսի սաղ-դալթի ու թոփի հունարը դեռ չեն տեսած ըլում ողորմելիքը: Իրեք-չորս անգամ էնքան ղոնշունը վրա է տալիս, բայց տեսնելով, թե ռուսը պատի պես կանգնած՝ գյուլլից էլ չի երես ետ դարձնում, փոխանը կատու ընկած՝ ձիու գլուխը շուռ ա տալիս ու իր հողը գալիս:

Էլի էս միջոցումն ա ըլում, որ անիրավ Մահմադ խանը շահի հետ խոսքը մին ա անում ու քաջահաղթ Յիցիանովի³¹ խաբընով իր մոտ ա կանչում, որ բերդը ուսին տա: 3000 մարդով որ նա Երևան չի՝ մտնում ու տեսնում, որ խորամանկ պարսիկը կամեցել ա նրան ականաթի մեջ քցի, մտնում ա թուշ Երևանու մեշի-դը, ու իրեք ամիս էս քաջ հսկայն, առանց հացի, առանց օգնության, էն շոգ ժամանակին, որ մարդի գլխին կրակ ա վեր թափում, էն թանկությունն ա ըլում, որ աղի լիտրը մեկ մանեթով ճարվելիս չի՝ ըլում, ու շահն էլ անթիվ, անհամար զորքով գալիս, սար ու ձոր բռնում ա, ու ուսի ղոնշունի շատն էլ որը սովն ա սպանում, որը շոգը, ու հայերն են ըլում հաց տվողը, ուսի քոմակը, մաճավանդ կենդանի նահատակ Հովհաննես եպիսկոպոսը³², որ էջմիածնա ամբարները դարտակում ա, որ բալքի թե էնպես բան ըլի, որ ռուսն Երևան մնա, բայց աստուծո հրամանը չի՝ ըլում, Յիցիանովը էնքան զազանի ոխից իր մեկ բուռը ղոնշունը ու հայերին հավաքում, էն վախտն ա քաղաքը մտնում, որ սաղ Վրաստանը, Կապկազը ղոնմիշ էլած՝ մեկ-մեկու ուտելիս են ըլում: Մինչև Ղազախ ղզլբաշի ղոնշունը նրա աղաքն ու քամակը բռնած՝ կովելով գալիս են, բայց էլի գլխըները քորելով ետ են դառնում, ու Յիցիանովի ոտն ու երկրի խաղաղությունը մեկ ա ըլում, էնքան անուն ա ունեցել էս քաջ հսկայն: Հալվաբարու հայերը որ կան, էն ժամանակն են իրանց երկիրը թողում, քոչում ու որը մե-լիք Աբրահամի, որը Հովհաննես ուզբաշու³³ ձեռի տակին՝ գալիս, քաղաքը մտնում:

Ռուսը որ ետ ա դառնում, Մահմադ խանին բռնում, Պարսկաստան են տանում, ու նրա տեղը Թավաքյալ խան³⁴ ա գալիս, նստում, որ Գուդոպիշի³⁵ հետ կռիվ ա տալիս: Սրան էլ փոխում են, Հուսեին խան սարդարը³⁶ ու իր ախպեր Հասան խան³⁷ են Երևան ղրկում, որ մեկ քանի տարվան միջումը Ղարա, Բայազիդ,

Արգրում ոտի տակ տվին ու օսմանցվին կատու էին շինել: Կարելի ա, թե Երևան էնպես բարի, ազնիվ, խալխի ցավին հասնող, աշխարհաշեն մարդ չէ՛ր տեսել, ինչպես որ սարդարն էր. բայց ինչքան նա բարեսիրտ էր, էնքան չար, գազան, դժոխք էր նրա ախպերը, որ ոտը փոխելիս՝ սար ու ձոր դողում էին: Նրա ճամար հո՛ մարդի, հո՛ տխի գլուխը, բոլորը մեկ էր:

Էս էր, որ աստված գլխին բարկացավ, էլածն էլ ձեռիցը խըլեց ու խեղճ հալերի էրված, խորովված սիրտը անջախ մի անջախ հովացրեց, ու էսօր խաչն ա նրանց պահում, ու ո՛չ Ալու փանջեն նրանց սուսանացնում:

Օրհնվի՛ էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ ու դլբաշի անիծած, չար շունչը մեր երկրիցը հալածեց: Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է գիշեր-ցերեկ մեր քաշած օրերը մտքըներս բերենք ու ռսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ ռուս թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռի տակը բերեց: Բայց թե մինչև էս բախտին հասնիլը ի՞նչ օր ենք քաշել, ի՞նչ գյուլլեք ա դիպել մեր խեղճ ազգի գլխին, ի՞նչ թրեր ա նրանց լերդն ու թոքը կերել, էրել, նրանց արինը վեր ածել, քանի՛, քանի՛ անգամ են քոչել, տնըհան, տեղըհան էլել, քանի՛, քանի՛ իշխանք՝ որը կրակով, որը փետի տակին, իրանց հոգին տվել, ով ուզում ա իմանալ, հետս գա, գնա՛նք էլ ետ Երևան:

Թո՛ղ լսողը չի՛ իմանա, թե ես Երևանու ծնունդ ըլելով՝ նրա հողի ու ջրի սերն ա էնքան սիրտս քաշում, տանում. չէ՛, գիտե աստված: Երեխա եմ էլել, որ էնտեղանց դուս եմ էկել, ամա էսօր էլ, որ մտածում եմ, թե Ջանգվի կարմնջի վրովը յա բազարի մեյդանովն անց կենալիս ինչպես էր իմ լուսահոգի հերը ինձ ոտով-ձեռով անում, չունքի լեզվով խոսալն էլ դազաբի էր բերում, որ թեզ անց կենանք, մեզ թուրք չտեսնի, որ մտածում եմ, թե քանի՛, քանի՛ անգամ, հենց մեր այգումը, յա մենք ենք դլբաշ յարալու արել, յա նրանք մեզ, ջանս վրես սրսռում ա, միսս վեր թափում:

Դեռ ռսին չտեսած՝ մեկ էլ մտնինք Երևան, չունքի մեր հայրենիքն ա, մեր նախնիքն են էնտեղ կացել, տիրել, մեռել, թաղվել, էն ժամանակը կիսմանաք ռսի դադրը ու մեր բախտավորության գինը. ով ուզում ա՝ գա:

Երևանու բե'րդն, Երևանու բե'րդն, ա՛խ, որ առավոտը բաց-վելիս նրա էն լաչար գլուխը մարդի աչքով չէ'ր ընկնում, հենց իմանաս, թե դժոխքն ա իր բերանը բաց անում, ստամները դրճը-տացնում ու իր ապականյալ, թունավոր, դառը շունչը չորս կող-մը փրփրալով փչում, ցրվում, փռնչացնում, որ կարենա իր հո-տած աղքեների կերած, լափած արդար ջանը մարսի, էլի չանգերը դուրարա քցի, էլի հազար անմեղ, արդար հոգի անծամ կուլ տա, իր անկուշտ փորին մատաղ անի: Արեգակը մտնելիս հո, հենց իմանաս, թե Սադայելի որդիքն ու զավակները, նրա զորքն ու զորապետներն ըլին իրանց դիվական խաղը խաղում, իրանց դժո-խալին քեֆն անում, ու բռջերի գլխին մեկ կտրած գլուխ էստեղ էին ոտի տակ տալիս, մեկ անգլուխ լաշ էնտեղ էին կտոր-կտոր անում, վրեն թքում, ծափ տալիս, ծիծաղում, հրհռում, քրքրում ու թրով, մզրախով յա փետով մեկ մեռած մարմին էս կողմն, էն կողմն գլորում, քացի տալիս ու ներքև քցում: Ծաշվա ժամանա-կին, հենց իմանաս, մեկ կրակի սար ըլեր էնտեղ կանգնած՝ փոր, ծոց տաք քուքուրթով, բոցով լիքը, ծխում, բորբոքում էր, որ բիր-դանբի՞ր ճոնչա, բացվի, տրաքի ու ինչ կա, չի՛ կա, տակովն անի, լափի: Ամեն մեկ բուրջը, ամեն մեկ բադանը ոսկորով, ջամդա-քով յա անմեղ դուրսաղներով լիքը, քած խոզի պես, հենց իմա-նաս, ծանրացել, փորբներն էլ չէին կարում քաշել, էնպես ուռել էին, որ բիրադի ճաքին, պատռին, կտոր-կտոր ըլին:

Մեչդների ոսկեվարսող գլխերինն արեգակի շողքը դիպչե-լիս, պլպլալիս, հենց իմանաս, էն իրանց միջի անսիրտ նամազ անողների անխղճտանք հոգու շնչովը փքված՝ ուզում ըլեին աստծուն փառաբանություն, աղոթք անելու տեղը, որ երկրին խա-ղալություն, դինջություն տա, սողոմական կրակն ըլեին ուզում երկնքիցը վեր ածիլ տան, որ սար, ձոր էրեն, խորովեն, տակով աճեն: Հալի թշմամի մոլլեն, որ գիշեր-ցերեկ ուզում էր, որ յա քրիստոնեության անունը վերանա, յա Հալ ազգի, մինարեն որ չէ'ր Ըի ըլում, որ ազան տա, ու իրան հավատացյալ ժողովուրդքը գան, իրանց իմամներին, իրանց Ալուն, Մուրթուզալուն աղոթք անեն, որ էն դինումը դժոխքի փալ չըլին, ձեռն անկաջին որ չէ'ր դնում ու ծվում, հենց իմանաս, հալի համար սադայելյան փողն ըլի փչում, որ իրանց գլուխը լան, չունքի շատ անգամ էր պատա-հում, որ մեկ խեղճ, անճար գեղըցի հալ, որ բազարն էր գալիս

էս հաղաղին, որ իր առըտուրն անի, մեկ քանի շահի ձեռք քցի, որ տանի, իր քյուֆաթներին պահի, է՛ն տեղն էին քցում, է՛ն-քան էին ոտին, գլխին վեր հատում, որ հացն էլ էր մոռանում, էկած ճամփեն էլ, իր օղլուշաղն էլ, չունքի բեղաֆիլ մեկ թուրքի շորի դիպած, մուռտառած էր ըլում:

Աշխարքի գլխին, հենց գիտես, կրակ պետք էր վեր գար, է՛նպես էր ամեն մարդ սասանահարվում, սարսափում, որ իր գլուխը պահի, բալի տակ չընկնի: Ի՞նչ ասեմ, ի՞նչ պատմեմ. կըլի, որ ի՛սկ սաղաւելյան փողն ու դատաստանի օրը էնքան սարսափելի չըլին, չունքի աստուծո ողորմության հույսը էլի կա, ինչ-քան էս օրերը, որ ռիգունը գալիս՝ մարդ չէ՛ր իմանում, թե երաբ առավոտը կհասնի՞, լիսը բացվելիս՝ ումոդ չո՛ւննր, թե սաղ-սալամաթ, մթանն աչքը խփի՞, էնպես ահում, դողում էին երկրի խալխը:

Երևանու բե՛րդը, Երևանու բե՛րդը, ա՛խ, աչքս դուս գա, քա-նի՛, քանի՛ ողորմելի հաչի միս ա կերել, քանի՛, քանի՛ անմեղ հոգի՝ տարիքներով չարչարվելուց, տանջվելուց, կենդանի նահա-տակ ըլելուց, կրակի, բոցի, երկաթե շամփրի, թոխմախի, կրա-կած քարփջի տանելուց, համբերելուց ետը կամ թոփի գլուլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ տարաղաջի (կախաղանի) վրա ա գոռալով, երկինք, երկիր աղաչելով, իր միսն իր ատամ-ներովը կրծելով, աչքերը դուս տրաքելով, դովում, դարդաշ, իրա-վորի, ազգականի, իր որդոց, գավակաց ձենը լսելով, տրորվելով, փոթոթւելով՝ հոգին ավանդել, երկինքը գնացել, որ պրծնի էս դառն աշխարքիցը, էն կատաղի գազանների ձեռիցը: Քանի՛, քանի՛ ջահել երիտասարդ՝ մեկ սաղ օջախի մեն մենակ որդի, մեկ աղքատ, չքավոր տան սին, մխիթարություն, մեկ տասը զը-լուխ քյուֆաթի տեր ու ապավեն, իր ծաղկած, դալար հասակին, իր ըմբրի ու արնի նոր բաց էլած ժամանակին կամ սաղ-սաղ քերթվել ա, կամ իր պատվական գլուխը գառան պես թրին դեմ արել, որ երկնքումը իր ջահելության մուրազն առնի, վայելի, չունքի երկիրը նրա անարատ արնին էր ծարավ, որ շուտով խմի ու բալքի կշտանա:

<8>

Սի՛րելի կարդացող, իմ ա՛չքի լույս հալ, էս քո հավատա-կիցքն ու հայրենակիցքն էն, որ ես ասում եմ ու էրվում. քեզ հետ

մեկ ավազանից ծնվել, քեզ հետ մեկ մեռոնով օծվել, մեկ խաչով կնքվել, երա՛բ, որ լսում ես, սիրտդ ի՛նչ ա ասում, ջիգյարդ՝ ի՛նչ։ Գիտեմ, որ ասում կլլիս մտքումդ՝ էսպես օրը գնա, ո՛չ էտ գա, քո թշնամին էս կրակի մեջը չընկնի։ Գիտեմ, որ սիրտդ էրվում, խորովվում կլլի, ու ուզում ես, որ էս անիրավ ազգի երեսին էլ մտիկ չանես, նրան տեսնելիս՝ գլուխդ առնիս, կորչիս, բայց, հավատացի՛ր ինձ, մեղավորը նրանք չեն, մենք ենք։ Մենք որ իրար թասիբ քաշենք, իրար քոմակ անենք, իրար պայծառացնենք, շենացնենք, ծովն էլ տեղիցը վեր կենա, մեզ տակով չի՛ կարալ անել, ինչ թե օսմանցին յա պարսիկը։ Մեզ ամենաբարի արարիչը է՛ն՝ հոգին, է՛ն խելքը, է՛ն շնորհքը չի՛ տվել, որ նամարդի մոհտաճ մնանք։ Աստված հիմիկ մեզ լիս ա բաց արել, ռուսաց թրին սարերը չեն՝ դիմանալ, որ ջանք անենք, մեկգմեկու սիրենք, մեր լեզուն, մեր եկեղեցին էնպես դալիմ բռնենք, ինչպես մեր երջանիկ նախնիքը, հավատացի՛ր ինձ, աստված էլ կսիրի մեզ, մարդ էլ։

Լավ չի՛ սկսած բանը թողալ ու էսպես քարոզ ասիլ, ես էլ գիտեմ, ամա սիրտս չի՛ դիմանում, ի՛նչ անեմ։ Էլի մեր գեղըցոնց ասածն ա միտքս գալիս։ Խալխի մեղքը չի՛, որ ճամփից դուռ եմ էկել, իրար մոռացել, մեզ նման կարդացողի ոտները պետք է ծառիցը կապած, ամսով սոված պահած։ Ախր թե շատ առնողիցը շատ կպահանջեն, բաս դատաստանի օրը ի՛նչ ջուղաբ կտան ինձ նման գրի սեն ու սիպտակն իմացողները, որ էլ ուրիշ բան չենք ֆիքր անում, հենց ուզում ենք՝ լավ ուտենք, լավ խմենք, քյահլան ձիու վրա նստինք, չալ-չալ մանեթները ջեբըներումս չխկչխկացնելով, ձեռքներիս դողդողալով, խաղացնելով ման գանք, քեֆ ու մարաքյա անենք։ Շինած արաղ կոնծիլը, Կախեթու գինին անոշ-անոշ խմիլը, կառեթով, դրոշկով փառավոր, ուռած-ուռած ման գալը, գառ, դումաշ հաքնիլ-մաշիլը, նոքար-բեքարի՛ ձեռին ջուր ածիլը, երեսի հով տալը, տաք յորդանի տակին, փափուկ դոշակի միջում շնթոխն ու թավալ տալը, ոտ ու գլուխ զարդարիլը մեզ թե դժոխքը չտանին, դրախտը ըսկի չեն տանիլ, հարկիզ։

Էդ երեխեքն էլ գիտեն, կասես ինձ, բայց ի՛նչ անես. բանը գիտենալը չի՛, բանն անիլն ա։ Ես ինձ վրա եմ ասում, թո՛ղ ուրըշի սիրտը չնեղանա։ Ընչանք փողը չեմ առնում, ո՛չ գիրք եմ տալիս, ո՛չ աշակերտ կարդացնում։ Լազգին ու թուրքի մոլլեքը

էնպէս չեն անում, անփող են իրանց ազգի երեխեքը կարդացնում, էլի աստված նրանց ոգոյը հասցնում ա: Հենց մե՞զ պտի սոված սպանի: Ամեն մէջըդի հալաթում, գեղ տեղարեւնքն էլ, մեկ մեծ վարժատուն կա, ուրտեղ երկու-երեք լեզու են սովորում. մեր եկեղեցըքանց հալաթներումը լազլագն էլ բուն չի՝ դնիլ, բաս ի՞նչ կըլի, որ ազգի սիրտն էլ քիչ-քիչ չի՝ հովանալ:

Ով թուր չի՝ առել ձեռքը, թրի դադրն ի՞նչ կիմանա. ով թը-վանք չի՝ քցել իր օրումը, ֆորս ի՞նչպէս կարա անիլ: Քրդին հա-զար տարի ասա՛, թե հնդուհավի միսը, դաբլու փլավը հիանալի կերակուր ա, տո՛, որ նա իր օրումը նրանց համը չի՝ առել, իր սոխն ու մածունը, թանն ու ճաթը կթողա, քո ասածի՛ն անկաջ կանի, խելքդ ի՞նչ ա կտրում: Ասենք՝ ես չասեմ, սաքի դու չե՛ս գիտել, որ երեխի ընչանք ատամները դուս չի՝ գան, կոշտ բան չի՝ պետք է տվա՞ծ: Դու ուզում ես անհիմքը տուն շինիլ, կրակ չի՝ վառած՝ հաց թխիլ. մմի ծերը թողել ես, մատդ ես կրակին դեմ անում. առանց պատրուգի ուզում ես ճրագուն ինքն իրան քեզ լիս տա՞: Կացինը դնում ես ծառի քոքին, դու քնում յա ձեռ-ներդ խաշում, ղրադին կանգնում, ծառն ինքն իրան քեզ ցախ կդառնա՞, խելքդ ո՞ւր ա: Խմորն առանց թխտըմորի չի՝ գալ, չի՛, հնախ տեղը ոտներդ գետնին մի՛ ծեծիր: Անբանացնիլ թուրը կծու-գոտի. նամ տեղի ցորենը կբոբբոսի: Անվարիլ հողը թե ցանե-ցիր, դուրդ ու դուշը կուտի սերմդ: Առաջ մեկ վարի՛ր, հիմքը քցի՛ր, մեկ ազգի աչքը բաց արա՛, դուզ ճամփեն որն ա, էն ճամ-փովը տա՛ր, սար ու ձոր մի՛ քցիլ, դու նրան քո սերը ցույց տո՛ւր, տեսնիմ, թե նա քեզ չի՞ սիրիլ: Ուրըշները մեզ բամբասում են, հերիք չի՛, մենք էլ ենք մեր ոտիցը մեզ ու մեզ ճողլակ ըլում, էսաով հո բան չի՞ դառնալ: Հայոց ազգի ջանին դուրբան, մեկ նրա երեխին ուսումն տո՛ւր, նրա էն լուսաթաթախ հոգին կրթի՛ր, կրթիլ եմ ասում, թուղթ խաղալ, ֆրանցուզերեն խոսիլ, անգիր բերան անիլ, գլխիցը դուս տալ չեմ ասում, ու շարական, փոխ յա շիլափլավ ուտիլ սովորցնիլ, որ մեզ էս տեղն ա քցել, տեսնիմ, թե ջան կտա՞ քեզ, թե չէ՛:

Մինչև գարունքը չգա, ծառը չի՛ ծաղկիլ, առանց ամառի պը-տուղ չի՛ հասնիլ, դու ուզում ես, որ ձմեռվան էն սաստիկ ցուրտ, սառած ժամանակին վարդի հոտ առնիս քո բաղումը, հասած պտուղ քաղես քո բաղչումը, էդ էլա՞ծ բան ա կամ կըլի ըսկի՞: Պինդ ոսկորն էլ, որ շատ ծալած մնում ա, թմբրում ա, ճում ա

ընկնում. երկու օր որ թեք եւ ընկնում, քամակդ ցավում ա, ոտ-
ներդ ման գալիս բեզարում. տո՛, ախր հազար տարի ա էս բեռը
մեզ վրա, էս բխովը մեր ոտումն ա էլել, ախր որ ասում ես՝ վա-
զի՛ր, բաս ի՞նչ կանես, որ գլխիս վրա վեր չեմ ընկնիլ: Շաբթով
սոված մարդին մի՛ս կուտացնեն, ցուրտը տարած տեղը կրակի՛ն
դեմ կանեն: Անձողի հոտը դիպած գլուխը ձնո՛ւմը կղենեմ, թե՛
կրակումը: Խեղճ ազգի հոգին մինչև էսօր քաղել են, հազար տար-
վա լարա ունի սրտումը, որ դեռ չի՛ սաղսցել: Էնքան դառն ար-
տասունք ա կուլ տվել, որ ո՛չ աչքումը լիս կա, ո՛չ բերնումը համ,
ո՛չ սրտումը եղ. դու հենց ուզում ես, որ էստոնք մեկ սհաթումն
անց կենա, ի՞նչպես կլլի: Տո՛, որ մեկ գերեզմանատան համար,
մեկ դարտակ ողորմի տալու խաթեր քո ազգի պատվական իշ-
խանքը՝ պարոն Զավրովն, Խերեղինովը, Դավիթ Թամամշովը,
Մովսես Տեր-Գրիգորովը, հազար մանեթներով կխարջեն, իրանք
իրանց տեղ կբաշխեն, ժամ կշէ՛նեն³⁸, խալիը ինքն իրան կերթա,
իրան հացովը մշակութայուն կանի անփող, բաս խելքդ ի՞նչ տեղ ա,
էսպես ընտիր իշխանքը, էսպես բարեսիրտ ազգը վարժատուն շի-
նելուց, մեկգմեկու օգնելուց կփախչի՛ն, որ մեկ համն առնին: Զու-
րը դարիդուս չի՛ գնալ, սիրելի՛, չի՛: Ճամփեն գտի՛ր, առուն սըր-
բի՛ր, քար ու քոլ դեն ածա՛, տեսնիմ, թե ջուրն ինքն իրան կգա՞,
թե չէ՛: Բանը երկարացավ, լսողը չի՛ նեղանա, էլի գնա՛նք մեր
դժոխքը:

Հե՛րիք ա, հերիք, ասող կլլի ինձ, ձե՛ռք վերցրու էդ դժոխ-
քիցը, ի՞նչ էլավ քեզ: Ա՛խ, ի՞նչպես ձեռք վերցնես, բաս ո՛ր թո-
ղանք մեր ազգի են սիրուն-սիրուն, լուսաշաղախ աղջկերքը,
բաս մեկ ողորմի էլա չի՛ պետք է ասե՛նք, որ երեսների վրա, քա-
րի, ավազի, փշի, տատասկի վրով՝ մազըներիցը բռնած, բարքա-
շան անելով, գլխըներին խփելով, մեջքըներին դամշելով, շատ
անգամ փռըներին վրա պար գալով, քացի տալով, թրևելով, թուր
քաշելով, տրորելով, թվանքի ոռքով, լաբչընի նալչով տալով յա
կխշորելով, ձեռքները կապած, ոտըները բխոված՝ շատ անգամ
հարիր վերստ տեղից, հերնըմերն երտևներիցը ընկած, քիր, ախ-
պեր՝ բոբիկ ոտով յա գլխաբաց, քեռի, փեսա, ազգական՝ դոշը-
ները ծեծելով, մազըները սոկելով, հող ու քար գլխըներին տա-
լով, ինչպես մեկ սուրու գառն ու մերը կորցրած ոչխար, տանում
էին, բերդն ածում, որ իրանց արդար իմամներին փայ շինեն,
հարսնացնեն, թուրքացնեն: Շատը հենց տանն էր հոգին տալիս,

շատը ճամփին, հորն ու մոր աչքի առաջին, էն կյանքը գնում, ուր ցավ, ուր վիշտ էլ չկա: Ծառի սիրտն էլ որ մի քիչ պինդ էր ըլում, ընչանք ա, բերդն էր հասնում, հաջի, մոլլա, քյալբալայի, սուխտա, խան, բեկ, ախունդ, սեիդ վրա էին թափում, որ չա խաբնով հավատից հանեն, չա պատժով, բայց տեսնելով, որ նրանք ո՛չ փառքից են խաբվում, ո՛չ պատժից վախում, ո՛չ խանգաղության թամահ անում, ո՛չ մահից ահ քաշում ու ուզում էին՝ Քրիստոսի հարսնաճալ, կույս գնալ աշխարքիցս, որ հրեշտակաց դասը դասակվին, իրանց սուրբ հավատը չէին ուրանում, պատիժ, պատուհաս, սուր, հուր, բոց, կրակ, սով, մահ, մեկն էլա աչքըները չէին բերում, որի ոսկեթել գլուխն էին հորնըմորը տալիս, որի լուսաթաթախ լաշը, որի ձեռն ու ոտը: Աղջիկ, ու էսքան սի՛րտ... քար ըլեր՝ կպատտեր: Աստված նրանց հոգին լուսավորի:

<4>

Է՛ս սիրտը, Է՛ս հավատը, Է՛ս հոգին, Է՛ս սերն ուներ Հայ ազգը, որ թշնամու, գազանի ձեռի, երկիր, աշխարհ, ազատություն, թագավորություն, իշխանություն, մեծություն, բոլոր, բոլոր կորցրեց, իր հավատին մատաղ տվեց, աղքատություն, նոքարություն, գերություն, դարիբություն, տանջանք, չարչարանք, սով, մահ հանձն առավ, որ իր սուրբ եկեղեցին, իր լիս, լուսավորչադավան օրենքը ամուր, հաստատ ու անխախտ պահի: Է՛ս ա հսկայություն, սրտապնդություն, մեծահոգություն, քաջություն, կամաց հուսատառություն, հոգու կարողություն ու զորություն, որ աշխարքիս վրա, ջրհեղեղիցը դեսը, մեկ ազգ էլա մինչև էսօր չի՛ կարաց ու չի՛ էլ կարող ցույց տալ: Սար ըլեր՝ փուլ կգար, երկաթ ըլեր՝ կհալչեր, կմաշվեր, ծով ըլեր՝ կպակսեր, կցամաքեր, բայց աստվածսներ Հայ ազգը մինչև էսօր գերօրինակ հսկայությամբ տարավ բոլոր ու իր անունը պահեց:

Թողա՞նք էն խեղճ, քոթոմած, աչքից, ձեռից, ոտից ընկած, էն սիրուն տղամարդ երիտասարդ հսկերը, որ էսօր էլ Երևանումը, որը ջուխտ աչքով քոռացած՝ ա՛խ, ո՛իւ քաշելով մաշված ա իր հարսի, օղլուշաղի երեսին մտիկ տալիս, որը ո՛չ գոյալով ա հաց կարում ուտիլ, ո՛չ ձեռով, ուրիշը պետք է, երեխի պես, թիքեն բերանը դնի, չունքի ո՛չ պոռշներ ունի, ձեռներն էլ ուսաբերնիցն են կտրել,— որը քոթոմացել, անդամալուծ ա դառել, սելով են ման ածում, որը քիթ չունի, որը լեզու, սրտըներն ուզում

ա տրաքի, որ ուրիշը խոսում, խնդում ա, երեխեքը լալիս յա ծիծաղում են, բալքի թե մեկ ազար, մեկ մուրազ ունի սրտումը, լալի (մունջ) պես, մանուկ օրորոցկանի պես ոտին-գլխին պետք է անի, որ միտքը հասկանան, բայց ինքն ուրշին ո՛չ մեկ չոռ ա կարում ասիլ. ո՛չ մեկ ջան: Քանդփի՛ էսպես տերությունը, հաստատման՝ Ռսի թագավորությունը, որ մեր ազգն ու աշխարքը գերությունից ազատեց, իր բարեգութ ձեռի տակը բերեց ու հոր պես մեզ խնամում, պահպանում ա: Էն ի՞նչ լեզու, էն ի՞նչ աչք պետք է ըլի, որ ամեն մեկ երկինքը տեսնելիս փառք չտա աստուծո, երեսը գետինը չքսի ու մեր ամենողորմած կայսերը կյանք, ատող-ջություն, գորություն, նրա արքայազն որդոցը ու զավակացը՝ կենդանություն, բարեբախտություն, ու հզոր տերությանը՝ հաստատություն, պայծառություն, մշտական տևողություն չխնդրի, չաղաչի:

Էսքան բաները լսեցիր, սի՛րելի կարդացող, բաս ի՞նչպես չի սիրտդ վառվիլ, որ դու է՛ն ազգի որդին ես, որ Էսքան տանջանք քեզ համար քաշեց, ինքը նահատակվեց, քո կաթդ ու արինդ ուրիշ ազգի հետ չխառնեց: Էնպես կարծում ես քի՛չ բան ա, հազար տարով էս օրը քաշիլ, էլի ազգ պահիլ, որդի մեծացնիլ, անուն, լեզու հավատ ունենա՛լ: Ա՛խ, էս միտք անողը էլ ի՞նչ սիրտ պետք է ունենա, որ իր լեզուն, իր ազգը չսիրի:

Ասենք՝ բլբլուլի լեզուն քաղցր ա, վերու հավին (խոխոբին), սիրամարգին աստված գեղեցիկ գույն, սիրուն թներ ու բմբուլ ա տվել: Ասենք՝ վարդը շատ գովելի ա, բաս ընչի՛ չի մանիշակը իր ռանգը, իր հոտը նրան տալիս: Մի՛թե վարդին տեսնողը մանիշակին չի՛ սիրիլ: Սարի անհոտ ծաղիկն էլ իրան տեղը, իրան փառքը վարդի հետ չի՛ փոխիլ: Մի՛թե բլբլուլի լսողը կանարեկին էլ չի՛ պետք է պահի: Ամեն բան իր գինն ունի. շաքարեղենը քաղցր ա, ամա հացի տեղը ե՛րբ կբռնի: Շամպանսկի գինին անոշ ա, ամա ի՞նչ անես, որ մեր երկրումը չի՛ դուս գալիս, մեզ թանկ է նստում: Ասենք՝ ջավահիրը, ալմազը շատ ջուհար ունի, շատ մեծ գին, ի՞նչ անես, որ նրանով տուն շինիլ չի՛ կարելի, ամեն մարդի ձեռք չի՛ ընկնում: Ասենք՝ հարևանդ հարուստ ա, օրը տասը տեսակ կերակուր ա ուտում, ձեռդ որ չի՛ հասնի, պետք է որ քո հացն է՛լ դեն քցես:

Ա՛խ, լեզուն, լեզուն. լեզուն որ չըլի, մարդ ընչի՛ մաման կըլի:

Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը: Լեզուդ փոխի՛ր, հավատդ ուրացի՛ր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգիցն ես: Ինչ քաղցր, պատվական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մոր կաթը նրա համար շաքարից էլ ա անոշ, մեղրից էլ: Մեր կաթն էլ որ ծախենք, առնող չի՛ ըլիլ: Մեր աչքը որ հանենք, ուրշին տանք, ուրիշը կարելի՛ ա դնել տեղը: Մեր օրորոցի վրա մեր լեզվով մեզ նանիկ ասեցին, է՛ն էլ ա մեր միտքը չի՛ պետք է ընկնի՛: Ասենք՝ նոր ապրանք շատ ես առել, հինը պետք է դե՛ն ածած: Է՛ն վայրենի ազգերն էլ իրանց սոպո լեզուն աշխարքի հետ չե՛ն փոխիլ: Հո լսել ես շատ անգամ մուգիկի ձեն, ասա՛, քո սազն ու բայաթի՛ն ա քեզ դիր գալիս, թե՛ էն: Է՛նպես մարդ կա՛ տասը-տասնըհինգ լեզու գիտի, ամա նա իր լեզուն միշտ ամենիցը լավ աշի, իր ազգի հետ խոսալիս ամոթ ա համարում կամ ուրիշ լեզվով իր միտքն ասի, կամ ուրիշ բառ հետը խառնի: Խառնի՛ր քո սիրեկան խաշի հետ ձուկը, շաքար, կանֆետ (շաքարեղեն), չամիչ, չիր, խիզիլալա, տե՛ս, ի՞նչ համ կուցենա:

Ախր որ ասում ես՝ փրոքուլիվաթսա արի, սքուչնա եմ, օփի-ժաթսա էլա, փրոշենի տվի, սանյաթիե շատ ունիմ, գլուխս քրու-ժիթսա էլավ, փեզչեսթնի մարդ ա, րազփոյցիք ա, լասիեթնիք օքմին ես, գնանք քուփաթսա ըլինք, սոփրանիեմեն եմ գալիս, փրոիգրաթսա արին, ճամփին ֆութթի ութոփնո ա, շատ խլա-փոթ սլուչիթսա չի՛ ըլում և ալն: Ա՛չքի լիս, մի մտածի՛ր, թե լսողն ի՞նչ կասի: Իսկ գիտուն, լուսավորյալ մարդը նա է, որ ամեն լե-զու, քանի կարա, իստակ խոսա: Դու քո լեզուն որ իստակ խո-սաս, ի՞նչ վնաս ունի, հենց գիտում ես խելքդ ծեռիցդ կառնե՛ն, թե՛ սովորած իմաստությունդ ջուրը կթափի, կամ թե չէ, տերու-թյան սիրտն ես ուզում շահի՛լ: Բարեխնամ տերությունը ե՛րբ կու-գի, որ մարդ իրա՛ն լեզուն կտրի, իր ազգիցը հեռանա: Բաս էլ ո՞ւր են էսքան վարժատուն շինում, վարժապետ պահում, աստիճան, պատիվ տալիս: Ֆրանցուզ, Գեմեց, ինգլիզ որ քո լեզուն սիրում, գովում են, քանի՞պատիկ դու էլ պետք է սիրես ու գովես: Քե-զանից չեմ նեղանում, ա՛չքի լույս, մեր բախտիցը ժամանակն էն-պես ծովել էր մինչև հիմա, որ մարդ իր գլուխը չէ՛ր կարում պա-հիլ, ո՞ւր մնա՛ լեզվի դարդը քաշիլ: Էս ա պատճառը, որ մեր նոր լեզվի կեսը թուրքի ու պարսից բառ ա: Բայց սրա դեղն էլ հեշտ ա, քիչ-քիչ կարելի ա իստակել, երբ որ ազգը ուսումն առնի ու իր լեզվի բառերը քիչ-քիչ հասկանա: Էս էլ հերիք ա, որ թուրքի լե-

գում, որ իրանք թուրքերը չեն գրում, միմիայն խոսում են, ու մեզանից որքան բռի են ու կռպիտ, բայց էլի էնքան ա նրանց լեզվի համն ընկել մեր ազգի բերանը, որ խաղ, հեքաթ, առակ թուրքերեն են ասում, իրանց լեզուն թողում. պատճառ՝ չունքի սովորությունն ա ընկել: Ազգին անճավատ են կանչում, լեզուն սիրում. գաբանաալու չէ՞: Ախր ո՞վ ա լսել, թե ծծմոր կաթը մոր կաթիցը լավ ըլի: Էսքան խառը լեզվի հետ դու էլ որ քո փրոքնով լաթասան, մրոքնով լաթասան ես խառնում, ախր դրանից ի՞նչ համ դուս կգա: Էլ ավետարան, գիրք, ժամասացություն ի՞նչ կհասկանաս:

Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնի՛մ, ձեր արևին դուրբա՛ն. տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք: Մեկ դարտակ լեզուն ի՞նչ ա, որ մարդ չկարենա սովորիլ: Բաս չե՛ք ուզիլ, որ դուք էլ գրքեր գրեք, ազգի միջումն անուն թողաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա անմահ: Ինչ կուզե ֆրանցուզերեն, անեցերեն գիտենանք, մենք չենք կարող էնպես բան գրիլ, որ նրանց միջումն անուն ունենա, չունքի նրանց միտքն, նրանց սիրտն ուրիշ ա, մերն՝ ուրիշ. մեկ էլ, որ նրանց միջումն էնքան գրող կան, որ ո՛չ թիվ կա, ո՛չ հեսար: Ռուսաց լեզուն մեր տերությանն ա, պետք է ամենից առավել համարինք, հետո մեր լեզուն ձեռք բերենք: Բաս ձեր սիրտը չի՞ ուզիլ, որ դուք էլ ոտանավոր գրեք, ձեր միտքը, ձեր խորհուրդը հայտնեք, որ ալլազգք իմանան, թե մեր միջումն էլ ա էլել երևելի գրող, ու մեր լեզուն դհա ավելի սիրե՛ն: Աստված կյանք տա էն ծնողացը, որի որդիքն ինձ մոտ են: Նրանց առաջին խընդիրն միշտ են ա էլել, որ նրանց որդիքը հայերեն լավ գիտենան: Գերեզմանն էլ որ մտնիմ, նրանց էս սուրբ խոսքը մտքիցս չի՛ գնալ:

Ընչանք Երևան գնալը մեկ քանի ամիս ժամանակ ունեի, էնդոր համար էսպես ճամփես ծոեցի: Ձմեռն անց ա կացել, ամառն էկել, վա՛յ նրան, որ էս շոգին գնա էնտեղ: Ես պետք է գնամ. ո՞վ կուզի՝ հետս գա:

<5>

Ծաշվա շոգն անց էր կացել: Սար ու ձոր գլխըներն էլ ետ քարձրացնում էին, որ փոքր շունչ առնին: Արեգակը Մասսա քամակիցը հանդարտ աչքը բաց էր արել, մունջ-մունջ Երևանու բեր-

դիմ մտիկ էր տալիս ու էն ա, ուզում էր, որ կամաց-կամաց մեր մտնի: Թանձր խավարը, սև դումանը էկել, բոլոր դաշտերի, ձորերի երեսը բռնել, օդը ծանրացրել, կալել էր: Ղուշը տեղիցը չէր ուզում ժած գա, հավը բնիցը գլուխը հանի: Ամեն տեղից ոտքը խաղաղվել, ամեն տեղից ձենըձոր լռվել, պապանձվել, փասափուսեն քաշվել էր: Ջուր ջրոդը առվի վրա էր թեք ընկել, քնած մնացել, վար ու ցանք անողը՝ հանդումը, բաղմանչին իր ծառի տակին, շվաքումը քուն մտել, դիմջացել: Մարդ, ինս, ջինս՝ գեղերումը էլ չէին երևում: Բազի կոնդի (բլուր) ծերից, բազի սարի դոշից, բազի ճամփում, չոլում մեկ սև մագի չափ դարալթու սևին էր տալիս, ձիու քամակիցը դես ու դեն թեքվում, երեսի, քամակի վրա շուռ գալիս, էլ ետ գլուխը դգում, օրգանգում ու դանթարդեն ժած տալիս, ձիուն քացի տալիս յա դամշով խփում, որ ոտները մի քիչ եգին փոխի, թեզ տեղ հասնի: Բազին էլ ձեռն անկաջի քոքին դրսւ՝ տխուր, բարակ ձենով մեկ բալաթի էր քոքել, քթի տակին, ձիու ջիլավը գլխին քցած՝ ինքն իրան բզզում, գնում էր, որ տուն հասնի ու իր բեզարած, ջարդված ջանը կամ մեկ շվաքի տակի դիմջացնի, յա իր տան դուռը, իր օղլուշաղի երեսը, քանի որ դեռ մութը վրա չէ՝ հասել, տեսնի, ու սիրտը բաց ըլի:

Հոտաղներն (մեխեր) էլ իրանց գութանի տավարը բաց էին թողել, լուծը ետ արել ու մեկ քոլգի տակի՝ գութանը մեկ կողմը, եզըները՝ մյուս, ջրերի դրաղին վեր էին թափել, քաղցր քուն մըտել: Նախիրը մեկ դգում, ոչխարի սուրում՝ մյուս, շվաք տեղը նստել, չանեն չանի էին քսում, փնչացնում, արոճ անում: Չոբանն էլ գլուխը մեկ քարի վրա դրած՝ նղղել, աչքը կպցրել էր, որ շոգը քաշվածին պես վեր կենա, սուրում իրիկնահովին մեկ լավ խոտավետ տեղ տսնի, արածացնի: Օյաղ շների մեկը է՛ս ցցի վրա, մեկը մյո՛ւս թափի ծերին, յա չոբանի ոտի տակին, գլուխը դրել, նոթերը կիտել, մարաղ էր մտել, որ թե գող, գել կամ գազան սիրտ անի, մոտանա, բիրդանբիր վրա թռչի, թիքա-թիքա անի, իր տիրոնջ ոչխարները պահի: Մեկ կանաչ խոտ, մեկ դալար թուփ կամ մեկ ծաղիկ մեկ տեղ էլա չէր երևում, որ մարդ հոտն առնի կամ երեսին մտիկ տա, սիրտը բացվի ու իր ճամփի երկարությունը մոռանա, կամ շոգի ձեռիցն էրված, խորոված ջանին հովություն տա, էնպես էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձվել, պապանձվել: Միմիայն խոտերի չոփերն ու քոլերի

սուր-սուր ծերերն էին էստեղ-էնտեղ ցից-ցից գլուխ բարձրացրել, տխուր, տրտում, մոլորված, պաշարված կանգնել, մնացել:

Սև-սև ջամդաքակեր ագռավները յա վախլուկ տուլաշներն էին հենց մեմակ մնացել, որ էստեղ-էնտեղ, մեկ քարափի ծերի յա մեկ բրջի գլխի, յա թե չէ, մեկ ճամփի միջում, իրար գլխի հավաքվել էին, նստել կամ պոստ էին գալիս, իրար կոցահարում, իրար թևերից քաշում, որ մեկի գտած որսը ձեռիցը խլեն, փսյ անեն, իրանց ձագերին էլ տան կամ հետըները տանին: Օձ, կարիճ, խլեզ, բզեզ ու ինչ կերպ ջանավար սուես՝ մորեխ, մժեղ, մեշդան էին բաց արել: Որը մեկ քոլի տակից, որը մեկ քարափի բաշից, որը խոտերի միջին, կամաց-կամաց ժած գալով, պոչ ու գլուխը իրանց քաշելով կամ ծլունգոլելով, էլ ետ տազ անելով կամ գետնի ապառաժի վրա սողալով, փշտացնելով, շվացնելով, փըշ-շացնելով, ծվալով, ծղրտալով՝ ոտն էին էլել, ուզում էին իրանց արևի ձեմն ածեն: Որն էլ իր բնի առաջին արևկող անելով՝ գլխըները հանել, մունջ-մունջ անկաջ էին դրել, սուր-սուր աչքըները ցցել, պեշացել, շլացել՝ էս կողմն, էն կողմն մտիկ էին տալիս, որ ոտքը խաղաղվելիս դուս գան, մի քիչ շունչ քաշեն, իրանց քեֆն անեն, իրանց ոզղը ճանկեն, էլ ետ իրանց բունը մտնին, էլ ետ գնան, քնին, դինջանան:

Բազի պատածակի արանքից կամ քարի ծերից էլ մեկ նաչար բալդուշ (բու)՝ գլուխը խոր վեր թողած, քիթ ու պոունկ կիտած, ծանրացած, գետնին նայում էր, իր սև օրը լաց ըլում: Հավի թշնամի ուրուրն էլ (ձերեն) թևերը փռած, չանգերը սրելով, բաց ու խուփ անելով, կտուցը սրբելով կամ դոշը քուջուջելով, երկնքի տակին գլուխը դոշի տակին քաշ քցած՝ սուր աչքերը էս դեհն, էն դեհն էր քցում, պտտում, հագրվում, որ բիրդանքիր, ական թոթափել վեր վազի, մեկ լղպոր ճտի գլխի,— որ իր մոր թևերի տակին կամ մոր գլուխը քորելով, թևը քաշելով, ծվծվալով, կտկրտալով կամ կտուց-կտցի տալով, մոր կրխալուն, ծվալուն անկաջ դնելով՝ սուս-փուս նստում էին իրար հետ կամ քուջուջ էին անում,— կամ մեկ խեղճ, անճար լորի քամակի խփի ու ճվճվացնելով, ծղրտացնելով՝ վեր քաշի, քրքրի, թեբռի ու իր ազան փորին մատաղ անի:

Ահա՛ գեղեցիկ, անգույզ օրինակ անսիրտ, բարբաբոս Պարսից՝ ժանդ բռնակալաց, մաշոդաց ազգի, երկրի Հայկա զավակաց:

Էսպես մեռել, լուվել էր բնությունը, ու մեկ շփլթու էլա մեկ տեղից չէր լսվում: Միսիայն հեռու տեղից մեկ բարակ քամի բազի-բազի վախտ փչում, ծառերի տերևները սլացնում, ծած էր քցում ու գոլ-գոլ՝ մարդի երեսին, բերնին ձեռը նագուկ քսում, շուտով անց էր կենում ու փշերի, խոտերի, քարափների, ձորերի մեջը մտնում: Ինչպես ծխի մեջը խրված՝ հեռու տեղից դաշտի գեղերը, հանդերը, փոսերը մթնած, լուված, ինչպես սև ամպի կտորներ կամ էրված, խանձված տեղեր, էս տեղից, էն տեղից սևին էիմ տալիս ու խառնիխառն երևում: Արագը, ինչպես մեկ նետ օձ կամ էրծաթի գոտի, արևմտյան կողմիցը, ձորերի միջիցը իր սուր, լուսափայլ ճակատն ու գլուխը բաց էր արել ու մրմունջ, հանդարտ, լուռ գալիս, Մասսա փեշին մի քիչ թևով խփում էր, շփում ու էլի ծուռն աչքով նայելով, նրան հաթաթա տալով, ձենըձոր անելով, գլուխը պտտելով՝ գնում, Զանգվին ու Գառնու գետն իր ծոցն առնում ու խաղալով, խաչտալով, վոժոալով հեռանում քվերտանց հետ ու պոռնկ-պոռնկի, դոշ-դոշի, քամակ-քամակի տված, իրար գլխի, երեսի ձեռքները քսելով, փաղաքշելով, հանաք անելով, աչքըները խփում, նղղում ու Շարուրի դուզ ծոցումը ծեծված, ջարդված՝ քուն մտնում:

Էս տխուր մեղացի չորեքշուբքը, աչքդ որ բաց չես անում, մեկ էլ էն ես տեսնում, որ բազի վախտ երկինքն ամպակալած՝ ուզում ա, որ սար ու ձոր ոտնատակ տա, Ալագյազա, Մասսա ու մյուս սարերի գլխին բամբաչի, պոկի, նրանց գետնի, խցկի, որ համարձակում են իրանց գագաթը էնպես բարձր վեր քաշել, որ բոլոր ամպերը վերևը ոտի բռնելու տեղ չունենալով՝ իրանց երկինք մորիցը խոռված, վեր են գալիս ու նրանց գլխին քուլա-քուլա դիզվում ու էնպես իրար վրա նստում, որ շատը տեղ չունենալով՝ մյուսներին քոխ ա տալիս, բոթբոթում, դուս ա քցում ու նրանց տեղը բռնում:

Էս հադադին էր, որ մեկ սև դարալթու բարակ օձի պես կամաց-կամաց գլուխը դուս քաշելով, դզվելով, աջ ու ձախ ծանր-
<ծանր> մտիկ տալով, մեկ բարձր մինարեթի ձերի պտիտ տալով, քնահարամ մարդի պես ձեռը ուսուլով բարձրացրեց, անկաջին դրեց, գլուխը քամակի վրա թեքեց ու ճլերք ընկած հիվանդի պես սկսեց ձենը ծոր քցել և, ինչպես մեկ խոր ձորից, կանչել. Ալլա՛հո՛ւ-ալաքքա՛-րո՛ւ... (բարձրելոյն աստուծոյ):

Էս ձենը դուս էկավ թե չէ, հենց իմանաս, մեկ ամպ տրաքեց,

ու ձենի տուտը հազար կտոր ըլելով, գետինը ժած տալով, սար ու ձոր իրարոցով քցելով՝ քարափների, էրերի արանքներովն անց կացավ ու քիչ-քիչ ձգվելով՝ բարակացավ, խզվեցավ, կտրվեցավ: Ինչպես մեկ բունը քանդված մեղրաճանճի թաբուն, էնպես դուս թափեցան ուղղափառ մահմեդականքը. որն իր դուքանիցը, որը բաղիցը, ձորիցը, որը քնաթաթախ, որը սովու աչքը կու գնացած, ձենը փորն ընկած, ռանգը սփրթնած, ունքեր, նոթեր կիտած, գըլուխը կախ քցած, որը մեկ ավթաֆա ձեռին, փեշերը վեր քաշած, գոտիկը խրած, Խորասանու սև մորթի երկար գդակը ունքերինք քաշած, միջի վրա կոտրած, թուխ ճալվերը (քոչորը) երկու տակ՝ անկաջների էս կողմն, էն կողմն ոլորած, քցած, գլուխը պոկած, կլեկած, վեր արած, վիզն ու բուկը կեղտով, քրտնքով սևացած, կոշտուցած, տարթի պես բասմա ընկած, երկար, բարակ միրուքը հինա դրած, սևացրած, կոկած, մեկ սև կամ մուգ կանաչ լեն բորանի ֆարաջա՝ անշախա, անկոճակ, ուսերին քցած, փեշերը դաշիմ բռնած, երկուտակ կապի, չիթ արխալուղի բաղանները (չաքերը) բղիցը մինչև ոտը ճղած, անթիվ դուզմեքով (կոճակ) թև, դոշ իրար հետ սխ, պինդ կոճակած, կպցրած, շապկի բահաճև, սիպտակ յախեն, ինչպես մեկ դաշդա եզան ճակատի խալ, թամուգ դուս թողած, բկին կպցրած, որը թիրմա շալի կամ սիպտակ կտավի մեկ բեռը գոտիկ, ինչպես մեկ մարգի (կվալի) թումբ կամ մեկ բոչքի կապ մեջքովն ոլորած, պիրկ կապած, մեկ ոսկորագլուխ, ծուրը խանչալ կամ մեկ հաստ, սրած կոլոլ թուղթ թեք մեջը խըրած, կապած, մեկ ջվալի դդար, բերանը բաց արած, դրաղները սիպտակ դերձանով մանր-մանր կարած, լեն, կարմիր դասաբ կամ մուգ մավի սադա փոխանն ու շորերի փեշերը գաբերին (լուլա) տալով, քարերին խփելով, հող ու թոզ սրբելով, քսմու առաջին, ոտների արանքին դես ու դեն ծալվելով, բացվելով, ֆըռ-ֆըռալով, ոտները կապ քցելով, գորտի բերանի նման սաղրի քոշերը՝ ծերը նեղ, բերանը լեն, ճոթած, կրունկը սուր, բարձր, երկաթով նալչած, ոտի տակին քառքստացնելով, ծլփծլփացնելով, չալ, ճիտը կարճ, բրդի հաստ գլուխքանց հետ, սև, բաց-բաց գաբերի հետ հանաք անելով, խաղալով, կրնկին ծեծելով, թոզ, ավազ գետնիցը հավաքելով, անոշ-անոշ կու տալով, դուս ածելով, էլի հատիկ-հատիկ բերանը քցելով, չարագ անելով, ոտների տակը ծակելով, բզելով: Որը մեկ փալան սիպտակ կտավե չալմա (գլխի փաթաթան) գլխին փաթաթած, որը մեկ շիլա թասակ

անկաջները պրծացրած, որը մեկ ոչխարի քոսոտ փոստ կատարին կպցրած, որը մեկ գելի բուրբ ուսերին քցած, որը մեկ իծի յափնջի՝ կտրատված, քրքրված, բուրդ ու մազը զգզված, դուս դառած, ճողովակ կախ էլած, հազար տեղից ճղված, ճոթոած, հազար թելով, դազով շուլալած, կարկատած, տոպրակի պես ծակած, շլնքովը քցած, չաթվի կտորով բողազի տակին պինդ դաշիմացրած, չարմխած, գոմշի կամ եզան տրխըները հաքին, զանգալները կամ մաշված պանունները վրեն, երեսին ու միրքին հազար տարվա կեղտ, աղբ տարթ դառած, նստած՝ թարաքլամա յա դարափափախ, մեկ չաթու ճտին, մեկ մոթալ փափախ գլխին, տոպրակն էլ հո յափունջին էր,— դուս թափել, գնում են:

Մե՛ր տղա, չծիծաղաս, լավ չեն ասիլ, ամոթ աս. կարելի աս մեկ քացախած ճամփորդի քեֆին դիպչի, տրտինգ անի, փալանը շուռ տա, հետո տուրուդմբոց քո գլխին գա: Տե՛ս, ես իմ պարտքիցը դուս էկա, կուզես ծիծաղի, կուզես պա՛ր արի, չունքի հանաք-մասխարութիւն չի՝ էսքան հրաշք տեսնիլ, աչք ու բերան բռնիլ, ո՛չինչ չասիլ կամ սուս ու փուս կշտովն անց կենալ: Հմիկ դու գիտես:

Էսպես, ինչպես տեսանք, մեր ուղղափառ, աստվածապաշտ, ճամազասեր, ալ ո՛չ քրիստոնասեր մոլլեքը, ախունդները, հաջի, թաջիր, արախլու, դզլբաշ, թարաքլամա, դարափափախ, մսկլլու, չոբան, բուրդ, պարսիկ, բեկ, խան սարից, ձորից, տանից, հանդից, գեղերից, յալլաղից, բազարից, առից, տրից, ինչ ունին-չունին, վեր ածած՝ գութանը հանդումը, ոչխարը սարումը, տավարը նախրումը, ջուր, վար, ցանք տեղնուտեղը երեսի վրա թողած, ինչպես մեկ թունդ կռվի ժամանակի, իրար գլխով դիպչելով՝ երևան էին թափում:

Մեկը ուղտի վրա նստած՝ տմբտմբալով, մեկը իշի քամակին բազմած՝ չո՛շ, չո՛շ ասելով, մեկը չաթվի վրա ուռած՝ դա՛հ, դա՛հ անելով, մեկը գոմշի մեջքին՝ հա՛ տպոո՛ւ կանչելով, մեկը եզան պոչի տակին՝ հո՛, հո՛ ձեն տալով, մեկը դաթրի ուսին՝ բզելով, ը՛մ, ե՛րի գոռալով, մեկը արաբում, մեկը քեջավում՝ հազար տեսակ ձենով իր ուլախին քշելով. որը քահլան ձիու վրա նստած, յարադ-սուպաբը կապած, զարդարված, թվանքն ուսին դրած՝ ծվծվացնելով, օրզանգուն զնգզնգացնելով, որը ոչխարի, իծի սուրուն առաջին, որը մեկ գառն ուսին քցած, որը մեկ գիլի պարկ վզաքոքին կապած յա թվանքը միջովն անցկացրած, որը մեկ

արջի մորթի շուռ տված, հաքած,— մե՛ր տղա, տե՛ս ու քե՛ֆ արա, էս թամաշեն թանկ ածի,— որը գոմշի կաշի, որն իծի մորթի, որը մեկ շան թուլա ետևին քցած, որը մեկ առըխ թագի ձիու կողքին կապած, որը մեկ գոմփոռ շուն սելի ականը թոկած՝ էնքան վազել, հեթեթացել էին էս խեղճ գազանքը, որ լեզվըները մեկ գազ կախ էր ընկել, աչքըները դուս պրծել: Որի արաբումն խնոցի, օրորոց, աման-չաման, ամա բոլորը դարտակ. որն իր լակոտը քամակին դազլով կամ փալասով կապած, չունքի շատի հաքին էնքան շոր չի կա, որ երկու աբասով առնես, էն էլ կեղտով, ծխով սևացած, մուր դառած: Որի սելումն կամ ծոցումն ֆեկ կտոր, հազար տարվան, ժանգոտած, բորբոսնած, քարացած ճաթ (ալսինքն՝ կորեկի հաց), որը քթոցով յա քաղալագով՝ հալ, ճիվ, ձագ, թուխսը, ձագեր, ճուտեր, չալ-չալ վառկըներ մեջն արած:

Հիմիկ ով մարդ ա, չծիծաղի, բարաքյալա կասես. չունքի էս լավ, հնազանդ անասունքն ու թռչունքը իրանց տիրոջ տվածը կամելով էլ ետ տալ, հեսաբը դրստիլ՝ գոգ ասես թե ջեբ, խուրջին, սուփրա, սման, մարթաբա, միրուք, երես էլ չէին խնայում, չունքի տերերի շատը շոգի ձեռիցը անոշ-անոշ քնած ա սելումը ու երազ ա տեսնում:

Էսպես՝ մեկի ձեռին դամշի, մյուսի՝ դագանակ. մեկի ուսին մանգաղ կամ երկար ձողի՝ չադրի համար. մեկի գդակի արանքումն դագիլ ու մախաթ կամ թալսման կարած, սուրբ մոլլի բաշխած. որը մեկ ֆորթի թոկ, որը մեկ շան բհիր, որը մեկ ձիու նոխտա, որը ձիու կամ իշի փալանը քամակին դրած. շատ տեղ խեղճ հայերի կալն ու դեզը տաղըթմիշ անելով, կամ ձին խլելով, կամ բաղը քանդելով, խոռը վեր ածելով, բաշը ցրվելով, տնքալով, ճրրալով, մնջելով, բուդուրմիշ ըլելով, բալաթի ասելով, խաղ կանչելով, քալլեի զլելով, մինչև գազանների քեֆն էլ բաց էլավ. որը վնգվնգում էր, որը տրլնգում, որը բղղում, որը խրխնջում, անջախ մի անջախ մեկ ջրի դրաղ հասան, հենց էշը գռաց, շունը մոռաց, փառք հավիտյանս ամեն, մոլլա Մասրադնի առակը տեղն էկավ³⁹, մեր ուխտավորքն էլ վեր էկան, որ ոտ ու ձեռք լվանան, հետո մոնին Երևան, չունքի էսօր նրանց Մհառլամն էր*:

* Բնագրում այնուհետև ջնջված արտահայտություն՝ [Գլովսդ ա՛ն, կորի՛ր, թե չէ քեզ էլ կրնեն, եզդի կշիեն: Չունքի հայերիցն են էսօր իրանց իմամների սպանողներին շինում, որ բանից խաբարություն չունին]—Պ. Է.:

— Ալլա՛-հո՛ւ, բս՛-մլլա՛հ... ըլ ոա՛հ-մա՛ն... ըլ ոա՛-հի՛մ... չախսե՛-վախսե՛... Հասա՛ն, Հո՛ւ... սեյն, աղա՛մ... վա՛... Յա՛ Ալի՛... չախսե՛-վախսե՛...

— Հերի՛ք ս, հերի՛ք, նամազ հո չի՛ պիտի անենք,— ինձ ասող կըլի:

Ո՛վ ա ասում, թե նամազ անենք. միտքս էն էր, որ ցույց տամ, թե մեր դրացի պարսիկքը ինչպես են սկսում իրանց աղոթքը:

Հմիկ գնանք Երևան, որ Մհառլամը տեսնինք, ի՞նչ կասես. էս ձեռնընտրը էնտեղանց ա գալիս, էս սաս ու մարաքեն էնտեղ ա. ամա ծածուկ պետք է մտնինք, չունքի ինչ ունինք չունինք կառնին, մեզ էլ եզըդի կշինեն, որ իմամներին սպանեցին, էստուր համար էսօր որտեղ որ մեկ հաչ ձեռք են քցում, ոտն ու ձեռը կապում են, լավ շորեր հաքցնում, ձի, յարաղ, ասպաբ տալիս, ընչանք որ սուգ ու շիվանն անց կենա, Հասան-Հուսեյնի կարգը կատարեն, կտակը կարդան, հետո վա՛յ քո օրին, արևին. շորերդ հանում են ու ոտիդ-գլխիդ տալով դուս խոկում, հետ ածում: Ո՛վ կարա խոսալ, տերությունն իբանցն ա:

— Սվանդուլի խանը⁴⁰, յա Ջաֆար խանը⁴¹, իմ փիրս ա, իմ տերս, իմ աղեն,— մեկ երևանցի հաչ ասում ա քեզ,— գնանք նրանց տունը ու էնտեղանց գնանք, թամաշ անենք:

Ի՞նչ անես, մարդի փիրն աստված ա, ու իր տղամարդությունը, ամա սրանք փետի տակին են մեծացել, էսպես որ չասեն, բանը բան չի՛ դառնալ: Էս անգամ էլ մեր երևանցու խոսքին անկաջ անենք ու գնանք, որ էս հանդեսը տեսնինք, թե չէ ժամանակն անց կկենա: Աչքդ սառչի ո՛չ. սրտիդ ու բերնիդ հուպ տո՛ւր, որ չծիծաղիս, թե չէ գլուխդ կկտրեն, աղիքդ վեր կածեն: Քուչեք, փողոց, մեյդան, բազար, հաչաթ, կտուր՝ մարդի ձեռիցը ղլվում են: Էս ո՛չինչ. կարելի ա քեֆ են անում. դու ո՛չ մեռնիս. սև ըլի էնպես քեֆը, իրանց սպանում են. մեկը դռնին ա խփում, մեկը գլխին վեր հատում. մինը բողազը դուս ճոթոտում, մյուսը միրուքն ու մազերը պոճոկում, սուգ անում, ոտ ու գլուխ քարերին ծեծում, վա՛յ, հարա՛յ տալիս, գոռում, բղավում, է՛ս պատին, է՛ն պատին քոռի պես գլուխը խփում: Ախր ընչի՞, ընչի՞. էս ի՞նչ խաբար ա, դատաստանի օրը հո չի՛ հասել, ո՛վ ա սրանց տունը քանդել: Հլա համբերի՛ր մի քիչ, քո ցավը տանիմ, տոհմաչություն ի՞նչ հարկավոր ա, լոբի հո չե՛ս կերել. մի քիչ ձեռնդ փորդ արա՛, հե-

տո կիմանաւ: Գնա՛նք մեչիդը, մեր երևանցիմ մեզ ձեռաց չի՛ թողալ, մի՛ վախենաք:

Վա՛յ քո տղիս-տղա, էս ի՛նչ բան ա. տո՛, մի մտիկ արա՛, տո՛, է՛յ, քե՛զ չեմ ասում, շլնքիցդ հո ջաղացքար չի՛ կապած: Էս մարդը գծվե՛լ ա, է՛ս ինչ մարաքլա ա: Կա՛ց, կա՛ց, մի մտիկ ա-նենք, հետո բանի գորությունն իմանանք, մեզ ո՛վ ա հետ ածում, կրակ չի՛ վառվել հո ոտըներիս տակին, մի քիչ համբերենք:

Մեկ հաստափոր թուրք՝ մեկ դաբա միրուք, վրեն իծի քուրք, բալքի արջի ա, հլա քննելու վախտը չի՛, երեսը եղ քսած, մատ-ները հինա դրած, կեղտոտ շորերով, վզին հո, աստված ո՛չ շհանց տա, տարով ջրի երեսը չի՛ տեսել,— մեկ եքա ձողի ջուխտ ձեռով դայիմ բռնած, կոթը դոշին կպցրած, գլխին Ալու փանջեն (ձեռը) ցցած, լալով, սգալով, իրան կտրատելով, պատմություն, նաղլ ա-նելով, մեկ սուրու խալխ հետը, ի միաւին գլխըներին թակելով, նամազ անելով, չախսե՛-վախսե՛ ձեն տալով, թոզ, թոփրաղ կուլ տալով, շորըները վեր քաշած՝ կամըներն առել, դներն են ընկել ու ուզում են մինչև Մեքքա մեկ գնան: Բանն էս ա, որ մեր բարե-պաշտ ուխտավորը է՛նպես ա կրակվել, էշխ ընկել ու յա ոտը քա-րին դեմ անում, յա գլուխը ետ քաշում, յա դոշը դեմ տալիս, քա-մակի վրա ծովում, ձգվում, ոլորվում ու դեմն էլ վազում ու Ալու գորությունն ու հրաշքը գովում, որ տեսնողը հենց կիմանա, թե թոկ են դբել վիզն ու քաշում: Բայց ո՛վ չի գիտի, որ անիրավ չար սատանեն հենց բարեպաշտ ուխտավորների ճամփին ա թոզ ու դուման անում, աչքըները հող ածում:

— Զրի՛կ, թրխկ...

Մեր տղա, հեռու կանգնի՛ր. մեր ուխտավորը մուրազին հա-սավ, աստանեն քոռանա. աչքդ հո ձնով չի՛ ընկել, ա՛յ տնաշեն: Տո՛, մի մտիկ արա՛, տե՛ս, ի՛նչպես ա նա պատի տակին արինը սրբում, գլուխը կապում, է՛: Ախր պատի հետ հանաք անիլ՝ ո՛վ ա լսել: Դու էլ գլուխդ խփիր պատին, թե կարաս, տեսնիմ, արին դու կգա՛, թե՛ մեկ անկաջ էլ կավելանա:

Տո՛, էս փոսիցն ո՛վ ա ձեն տալիս, բղղում, հարա՛յ, մաղա՛թ անում, որ խալխը դեն կենան, ետ քաշվին: Տուն քանդվե՛ց, էս ի՛նչ խաբար ա: Տուն քանդվե՛ց... Տո՛, բաս տունը, որ լեզու չու-նի, էրդիկ է՛լ չունի, որ քոռըքոռ գնացողի հախիցը գա: Տան դար-դը թողանք. քանդվեց, է՛լ կշինեն. բանն էս ա, որ մեկ ուխտա-վոր էլ մեկ հորից ա իր սև օրը լաց ըլում: Անջախ մի անջախ

խալիւր ետ քաշվեցին. հաժարեալ սուրբ ա, աղոթքը՝ զորավոր, ո՛վ չհաժարեալ, նա մնա պարտավոր. էլի մեր աղոթքի պարկը տեղիցը վեր կացա՞վ թե չէ, ոտն ու գլուխը դռում, սրբում ա ու տնքալով, հազալով, ճրրալով, մրրալով, անկաջները թափերթափ տալով, ուները քաշելով՝ չու ու փալասը հաժարում, քափ ու քրտինք՝ երեսը, փրփուրը բերանը կոխած, աբեն մեկ կողմը, չալմեն մյուսը ցխակոլով ընկած, տոտ քոշերը չխաչխապացնելով, ծլփծլփացնելով, ծլունգ ըլելով՝ իր կոտորած ձողին էլ ետ պաշում, սրբում ու էն հալին էլ ետ ճամփա ընկնում:

Քո տունը չքանդվի, էս ի՞նչ անսիրտ մարդիկ են, տո՛ւ. գլուխ առնի՛նք, կորչի՛նք: Տո՛ւ, մեկ ֆորթ որ ցխումը խրվում ա, պոչիցն էլա բռնում, քաշում են, որ հանեն, մեր համշարիքը բոլորեշուրջ կանգնել, փառք են տալիս աստուծո, որ իրանց կարդացողը էս փսոթին հասա՞վ. էս դիմումը պատժվեց, որ էն դիմումը պսակվի: Խաշը տերը զորավոր կանի, բան չի՛ կա. մոտանա ո՛չ, թե չէ մեծ թիքեղ անկաջող կմնա: Իր հաժարտին պինդ մարդի գլխին քար էլ աղա, հենց կիմանա, թե դափ ու գոռոնա էս ածում: Քո քիսիցն ի՞նչ ա գնում, որ գլուխ են ջարդում, դու քո գլխի դարդը քաշի՛ր. վա՛յ նրան, որ գլուխը հաստ ա, ծուծը՝ բարակ:

Տո՛ւ, ճանճերն էլ են էսօր գծվել, կատաղել, էսպես հրա՛շք կըլի: Ծները հո, էլ ճամփա չեն տալիս. ընչի՞.— ո՛սկոր կա, ոսկո՛ր, խա՛նի խարաբ: Ծզվզոցն ընկել ա դուքան, բազար: Խորովածի, խաշլամի, փլավի, սանգակի (հաց) հոտը աշխարհ ա բռնել: Հլա մեկ մտիկ արա՛, քո աստվածը կսիրես, էս սիպտակամիրութ ծերերն էլ չեն ամաշում, որ իրանց տունը թողել են ու էս մեյդանումը որը սանգակն ա մեկ կտոր խորոված միջին դուրում արել, մշրում, որը շերեփով ա փորի կամքը կատարում, որն էլ մեկ թիքա ջիլ միս, կեսառեփ, էնպես ատամի տակն ա քցել, ծամում, ծամլամորում, եղը շորերին քսում, դմակը՝ միրքին. փորը նեքսկիցն ա ձեն տալիս, դլվլացնում, բողազը մեկ կողմիցն ա իր գլուխը լսլիս, բաց ու խուփ ըլում, աչքերումը հո, էլ լիս չի՛ մնաց, ամա նա հենց զոռ ա անում ու թիքեն դարիվեր բոթում: Աստված բարի ճանապարհ տա՛, թե կերթա նեքս. էս գիտեմ, թե ո՛ր էշը նախրումը կզոա: Տո՛ւ, զոաց էլ, պրծա՞վ էլ: Մհառլամբաշրամը կերան, գնա՛նք, էս թամաշեն ուրիշ օր էլ կտեսնինք: Զիող դամշի՛ր, դո՛ջա բաբա, ալլա՛հ սախլասն: Տո՛ւ, նա իր փորի

դարդն ա քաշում, քո ի՞նչ բանդ ա, գնա՛նք, նա քո դնչիդ չի՛ մոռալ, գնա՛նք:

Մեչդի մեջը մտնիլ կարելի չի՛, մարդի միս են ուտում. պետք է մոտիկ տների կամ մոլլեքանց օթախների կտրներիցը, խալխի հետ խառնվիլ ու հեռրվանց թամաշ անել: Լավ սիրտ պետք է, որ դիմանա, լավ աչք, որ տեսնի ու լաց չըլի: Մեչդի աղոթարանի առաջին մեծ բազմություն կա թոփ էլած. թե՛ նրանք, թե՛ մյուսները էնպես են լալիս ու դռըներին վեր հատում, որ հենց իմանա, թե Հուսեյնի նահատակության օրը է՛ս ա, որ էս ա: Ախունդը մեկ բարձր արծռի վրա բազմել, մոլլեքը իր չորս կողմը բռնած՝ է՛նպես ա Ալու, Մահմադի ու Ալու որդի Հասան-Հուսեյնի պատմությունն անում, լալիս, իրան կտրատում, որ քարերն էլ ձեն են տալիս, մղկտում: Նրա առաջին մեկ քանի ջահել աղջրկերք՝ մազըները ցրված, խճճած, կեսն երեսներին, կեսը դռըներին քրցած, մեկ դրադում կուչ են էկել ու իրանց մոր հետ սուգ են անում: Մեկ քանի ջահել տղա էլ ադիոդորմ ձենով իրանց խեղճ հոր մահվան սուգն են ետ ասում: Մեկ քանի ձիավոր էլ՝ թուրքները հանած, պլոկած, ձի չափ քցում, նրանց վրա վազում, որ նրանց սպանեն: Սրանք էլ եզրդեքանց օրինակն են, որ վրա պրծած գալիս են, որ իրանց խալիֆի հրամանը կատարեն: Ջիու վրա նստած՝ դես ու դեն են վազում ու կամենում են որպես թե Հուսեյնի ընտանիքը կամ սուրը քաշեն, կամ եսիր անեն: Բոլորն էլ խոսում են, բոլորն էլ է՛նպես կենդանի իրանց խաղը խաղում, որ տեսնողը հենց կիմանա, թե հենց է՛ս օր ա Հուսեյնը մեռել: Օրինակի խաթեր, մեկ քանի խոսք էստեղ գրենք, որ կարդացողն իմանա, թե ի՞նչպես են մեր համշարիքն իրանց սուգն ասում:

ՄՀԱՌԼԱՄԻ ՍՈՒԳԸ

Առաջին բոթաբերը

Աչքըս խավարի, լեզուս կարկամի,
Ռոներս կոտրվեր, ա՛խ, ջանըս դուս գար,
Որ սկի նաչարս ձեզ մոտ չգայի
Ու ձեզ չտայի էս դառը խաբար:

Էլ ի՞նչ եք մնացել էստեղ լուռ նստած,
Ձեր արևն հանգավ, ձեր աստղը թռավ.
Ծար ունի՞ք՝ տեսե՛ք, ի՞նչ եք շվարած,
Թև առե՛ք, թռե՛ք, թշնամին հասավ:

Եզդի խալիֆեն Դամասկոսի մեջ
Չի՞ ուզում գլուխ տա մեր սուրբ իմամին.
Զորքն էկավ անթիվ, չորս կողմներս բռնեց,
Կրակ է տալիս մեզ չար հարսմին:

Մեր քաջ արաբի ազգի էս յադին
Շլինքը ծոեց, հրես մոտացավ.
Մեր գորքի տուտը Հալեք հասցրին,
Իմամ Հուսեինն դրդու չանգն ընկավ:

Երկրորդ գուժկան

Հարա՛յ, մադա՛թ, վա՛յ, թուր խփի սրտիս.
Ամա՛ն, Ֆաթմա ջան, քո գլխիդ դուրբան.
Հասան, Հուսեյն վա՛յ, վա՛յ իմ արևիս,
Հասան, Հուսեյն վա՛յ... վա՛յ... վա՛յ, վա՛յ, ա՛խ, ջան:

Աչքըս դուս գա, վա՛յ... խանում ջան, վա՛յ...
Երեսիդ մեռնիմ, օ՛խ... ըմբրիդ դուրբան, ա՛խ...
Երկի՛նք, քանդվի՞ք, վա՛յ... մեր գլուխը տարան, վա՛յ...
Գլխիդ ճարը տե՛ս, ա՛խ... իմամին տարա՛ն,
աստված ջան...

Վա՛յ, ես քոռանամ, վա՛յ... վա՛յ, ջանս դուս
գա, վա՛յ...

Վա՛յ, օրս խավարի, վա՛յ... վա՛յ, գետին,
պատուվի՛ր, վա՛յ...
Վա՛յ... ամա՛ն... մադա՛թ... հարա՛յ... ջան, դուրբան...

Մերն ու դատերքը

Մերը

Ա՛խ, ի՞նչ եք ասում, էդ ի՞նչ եք պատմում,
Կրակ եք բերել, որ օջախս էրեք.
Լուվի էդ լեզուն, չորանա բերնումն.

Տունըս քանդեցին, ջիվա՛ն երեխեք:
Հող ըլի գլխիս, ըմբրիս, արևիս.
Վա՛յ, իմ անցկացրած, իմ սև օրերիս.
Վա՛յ, ես ի՞նչ կանեմ, ո՞ր ջուրն ես ընկնիմ,
Ո՞ւմ դուանը մնամ, ո՞ւմ ձեռինն նայիմ.
Յարադանդ խոռվ, իմ բա՛խտ անիրավ.
Ոտս ընչի՛ չկոտրվեց, էս ի՞նչ եմ լսում.
Ա՛խ, իմ ծովսս հատավ, օրս խավարեցավ,
Ինձ ո՞վ անիծեց էս դառն աշխարքումն:
Քո սուրբ իմամի նամագիդ ղուրբան, վա՛յ...
Քո Ալու փանջի գլխին ես մատաղ, ամա՛ն...
Արդար պատկերիդ, ա՛խ, ես մեռնիմ, ջան...
Ջանս քեզ ղուրբան, ա՛ղա ջան...
Երեսս ոտիդ տակը փիանդազ, մադա՛թ...
Եթմներիդ գլխովն պտիտ կտամ, ա՛ղա ջան...
Հասան, Հուսեյն՝ իմ սա՛ր, իմ գլուխ, ա՛խ...
Սրանց ի՞նչ ջուղաբ տամ, ջա՛նմ ջան, վա՛յ...
Ախր էս ի՞նչ բերիր էսօր մեր գլխին, ա՛ղիզ ջա՛ն...
Կրակ ածեցիր մեր սրտին, ջանին, թա՛ռլան ջան...
Ի՞նչ կըլեր, մեկ ձեռնդ էլա լսեի, ա՛խ...
Ի՞նչ կըլեր, մեկ երեսս երեսիդ դնեի,

ա՛յ իմ օրս խավարի:

Ի՞նչ կըլեր, հոգիս ոտիդ տակին՝
Քո հոտն առնեի, շունչս փչեի:
Ա՛յ իմ երկնքի հրեշտակ, իմամի որդի,
Երկրի թագավոր, աստուծո՛ւ սիրելի.
Մեկ թևդ երկնքումն, մեկ թևդ գետնում,
Սարերն էին թրիդ առաջին դողում:
Արարած աշխարհ ոտի տակ տվիր,
Բյուր ջամհաթ, օլքյա ձեռիդ տակը բերիր.
Ոտդ փոխելիս՝ դող էին ընկնում
Սարերն ու իրանց գլուխն քեզ ցածացնում:
Ծով, գետ ու ցամաք երբ քո ձեռնն առան,
Իրանց ոտովն, ա՛խ, քո դուռը էկան:
Աչքդ քցելիս՝ ամպերն էն սհաթին
Թև էին առնում, գոռում, սասանում.
Ոտդ թափ տալիս՝ գետինն իր տակին

Լերդը պատուում էր, սասանած մնում:
Արեգակն իրա գլուխը քեզ տվեց,
Լուսինն իր մազերն ոտիդ տակն փռեց,
Երկինքն քեզ համար ծոցը բաց արեց,
Ամպերով տարավ ու մեզ որք թողեց:
Էլ ո՞վ աշխարհիս տերություն կանի,
Էլ ո՞ւմ շվաքի տակին կհովանան:
Քյուլ աշխարհ, ջամհաթ քեզ կկարոտի,
Քո ձեռն էր պահում, էդ ձեռիդ դուրբան:
Քյար ու Մեքեն մեր գլխները ծեծում,
Ծով, ցամաք, աշխարհ քո սուգն են անում,
Հող տալիս գլխին, հիմիկ էրվում են,
Անունդ հիշելիս՝ մաշվում, տոչորվում:
Քո եթմների սլետք է ձեռը բռնած՝
Գլուխս առնիմ, կորչիմ, ես խեղդվիմ.
Անտեր մնացի՞նք՝ սրտըներս մեռած,
Էս դառն աշխարքումն էլ ի՞նչ օր կտեսնիմ:
Իմ տե՛ր, թագավոր, լուսին, արեգակ,
Իմ գլխի դու թագ, իմ հոգվույս ճրագ.
Ամենն փչացան, բայդուշս մնացի,
Որ իր սև օրը, ա՛խ, միշտ լաց ըլի:
Թե թուր կոխեմ սիրտս, սրանց ո՞վ պահի.
Թե լերդս ճոթեմ, սրանք ի՞նչ անեն.
Ո՞վ սրանց կաթ կտա, ո՞վ կմեծացնի,
Թե ծծերս էլ կտրեմ, սրանք ո՞ր կորչին:

Աչքս լալուցը բռնացավ, մաշվեց,
Ծատ սգալուցը ջիգյարս խորովվեց.
Ա՛խ, ի՞նչ կըլեր, որ մեկ երեսդ տեսնեի,
Հետո հազար թուր սիրտըս խրեի:
Ընկե՛ք իմ գլխիս, սարեր ու ձորեր,
Ինձ տակով արե՛ք, կերե՛ք, մաշեցե՛ք.
Թո՛ղ ես մեռնեի, չմնայի անտեր:
Ջա՛ն, դո՛ւս արի, ջա՛ն. դժոխք, ինձ կերե՛ք:
Անհեր իմ եթիմ դստե՛րք, խղճալի,
Չեզ ո՞վ էլ դոշին, գոգումն կդնի,

Ա՛խ, ո՛վ էլ սիրով, ձեր խաթրն առնելով,
 Ձեր դարդը կքաշի՝ դուրքան ասելով:
 Ո՛ր ա էն աչքը, որ ձեզ տեսնում էր,
 Խնդում, զմայլում, ձեզանով փարվում.
 Ո՛ր, ա՛խ, էն ձեռքը, որ ձեզ գգվում էր,
 Համբուրում, սիրում, ձեզ մխիթարում:
 Ձեր ծովն հավիտյան ցամաքեցավ, վա՛յ...
 Շլիմքը ծուռը, ձեզ դարդավարամ
 Թողեց ու գնաց, ձեռք վեր առավ, վա՛յ...
 Ո՛ր ա ձեր հերը, ո՛ր էլ նրան ման գամ:
 Սիրտս յարալու՝ կրակ է ընկել,
 Ո՛ր ա ձեր տերը, քա՛ղցր բալեք ջան.
 Թախտը փուլ էկավ, ո՛ր կտեսնիք էլ,
 Որ քաղցր լեզվով ձեզ մեկ բարով տան:
 Հուսելն աղամ ջա՛ն, ջանս քեզ դուրքան,
 Մեր տունը քանդեցիր, մեր սիրտն էրեցիր.
 Ո՛վ մեզ ճար կանի, գլխովդ տամ ման,
 Ո՛ւմ դուռը գնանք, մեզ էլ տանեի՛ր...

Աղջկերք (դասերք)

Աթա՛մ, անա՛մ, վա՛յ... բաբա՛մ, ջա՛նմ, վա՛յ...
 Հերներս ո՛ր ա, վա՛յ... նա ե՛րբ կգա, վա՛յ...
 Ո՛ր է գնացել, վա՛յ... էլ ետ չի՛ գալ, վա՛յ...
 Աթա՛մ, ջա՛նմ, վա՛յ... նանա՛մ, գյո՛գմ, վա՛յ...
 Ա՛խ, լաց մի՛ ըլի, վա՛յ... Աչքիդ մեռնիմ, վա՛յ...
 Մեզ տա՛ր, ջուրն ածի՛ր, մեզ եսիր տո՛ւր, վա՛յ...
 Բիգունը կգա, օրը կբացվի,
 Մեր դուռն բաց անող, ա՛խ, էլ ո՛վ կըլի,
 Մեզ բարով տվող, ա՛խ, էլ ո՛վ կըլի:
 Բաբա՛ ջան, վա՛յ... աղա՛ ջան, վա՛յ, վա՛յ...
 Անա՛ ջան, վա՛յ... գյո՛գմ, ջա՛նմ վա՛յ...
 Մեր աղեն, խալիֆեն էլ չի՛ գա՛լ...
 Մեզ բարով, ա՛խ, սիրով էլ չի՛ տա՛լ...
 Մեզանից խոովել ա, ձեռք վերցրե՛լ...
 Մեր երեսն, մեր տունը չի՛ տեսնիլ...

Ախր ո՞ր գնաց նա, մեկ բան էլ չասեց...
Ախր ի՞նչ արինք, որ մեզ դեն քցեց:
Մեր աչքը հանեիր, ախր ի՞նչ կըլեր,
Մեզ սաղ մորթեիր, քեզ ո՞վ բան կասեր.
Ղրղի ու ագռավ թո՛ղ մեր միսն ուտեր.
Մեզ սուր քաշեին, մեզ կրակ քցեին:
Ախր ի՞նչ կըլեր, դու էն չար մարդին
Մեզ տալիր, որ, ա՛խ, տարավ մեր աղին.
Բաս նա էլ չի՞ գալ, մեզ աչքից քցի՞լ,
Բաս նա մեր դարդը իմանալ չուզի՞լ,
Բաս որ լաց ըլինք, սիրտը չի՞ ցավիլ,
Մեռած վեր ընկնինք, չի՞ գալ, մեզ օգնիլ,
Մեզ եսիր տանին, չի՞ պրծացնիլ:

Որդիքը, աղջկերքը ի միասին

Ախր ի՞նչ արինք նրան, որ էսպես խռովեց,
Ընչո՞վ կոտրեցինք սիրտն, որ մեզ թողեց.
Էլի որ վազինք, ետևիցը հասնինք,
Ոտի տակն ընկնինք, սուրույթմիշ ըլինք,
Փեշը համբուրենք, ուները լիզենք,
Ծնկներն խտտենք, լանք ու վեր ընկնինք,
Ասենք՝ կմեռնինք, թե տուն չգաս, մեր շլինքն
Կտրի՛, դուս ճոթո՛ւի, էլ տուն մի՛ դրկի,
Էստեղ սպանի՛, մեր հոգին հանի՛,
Քեզ մատաղ կըլինք, ոտիդ հող կդառնանք,
Մեզ մի՛ կորցնի, գլխովդ ման տանք:
Բաս նրա սիրտը, ա՛խ, գուց չի՞ ընկնիլ.
Բաս մեր սուգն ու լացն նրան քյա՞ր չանիլ:
Կասենք՝ հետդ տա՛ր, ուր որ գնում ես.
Մերներս մեռավ, բաս դու ցավում չե՞ս.
Բաս ետ չի՞ դառնալ, սիրտը չի՞ ցավիլ,
Բաս մեզ չի՞ խտտիլ, հողից վեր քաշի՞լ,
Երեսներս սրբի՞լ, աչքներս պաշի՞լ,
Գոգին աստացնի՞լ, դռնին կպցնի՞լ,
Ղանդ ու շաքար տալ, գուրգուրի՞լ, ասի՞լ.

«Գլխովդ ման տամ, երեսիդ մեռնիմ,
Էլ մի՛ լաց ըլիլ, քո չարը տանիմ.
Աղեն նոքարդ ա, քեզ դուրքան ըլիմ,
Սիրտը քեզ կուտա, անումիդ դուրքան.
Դուք որ լաց եք ըլում, ձեզ մատու՛ղ գնամ,
Աչքս փուշ ա ցցվում, ձեր փուշն աչքս ըլի»:

Բաս մեզ աղեն էլ չի՞ գալ... վա՛յ...
Բաս մեզ բարով էլ չի՞ տալ... վա՛յ...
Բաս ձեն տալիս՝ ջա՛ն չասիլ... վա՛յ...
Մեռնում ըլինք, լաց չի՞ ըլիլ... վա՛յ...
Սովան ըլինք, դա՛րդ չանիլ... վա՛յ...
Անումը տանք, տուն չի՞ գալ... վա՛յ...
Հետը վազինք, ետ չի՞ գալ... ա՛խ...
Բաս մեր աղեն ո՞վ կըլի... ա՛խ...
Բաս մեր տունը ո՞վ կպահի... ա՛խ...
Ո՞վ մեր դարդին դարման կըլի... ա՛խ...
Մեր հավարին ո՞վ կհասնի... ա՛խ...
Մեզ որ տանին, ո՞վ կփրկի... վա՛յ...

Չէ՛, մեր աղեն բարի ա,
Դուս ա գնացել, տուն կգա...
Նրա ջիգյարն ազիզ ա,
Նրա սիրտը մեզ վրա ա:
Նա մեզ աչքից ավելի
Ուզում, սիրում, պաշտում ա.
Նա մեզ անտեր չի՛ թողա,
Մի՛ դարդ անիր, ջան ա՛նա.
Քո ցավը տանինք, ա՛խ, ա՛նա,
Մեզ մի՛ սպանիր, մատաղ գնամ.
Մեզ տա՛ր, թաղի՛ր, քեզ դուրքան,
Ա՛խ, անա ջան, ջա՛նմ ջան:
Մենք ո՛ր կորչինք, ա՛զիզ ջան.
Ո՛ւմ ասենք՝ լաց մի՛ ըլիլ.
Քեզ դուրքան, հողդ ըլինք,
Երեսիդ մենք մեռնինք:

Զենդ թո՛ղ չլսենք,
 Լացդ չտեսնինք,
 Քեզ տխուր չիմանանք,
 Քեզ դարդոտ չգտնինք:
 Զուրն ածի՛ր, մեզ խեղդի՛ր.
 Սուրը քաշի՛ր, մեզ սպանի՛ր.
 Առաջ մեզ քո ձեռովն
 Հողը դի՛ր, դու պրծի՛ր,
 Հետո դու մեր Կշտին,
 Մեզ վրա լաց ըլի՛ր:

Անա՛ ջան, վա՛յ... Հրես էկան, վա՛յ...
 Մեզ կտանին, կսպանեն՝ն... վա՛յ...

Տարե՛ք, տարե՛ք, անա՛ ջան, բաբա՛ ջան, բա՛ջմ ջան, դո՛վո՛ւմ
 ջան... ալլա՛հ, ալլա՛հ... վա՛յ... ա՛խ... վա՛խ... մեռա՛... հասի՛ր,
 հասի՛ր... հարա՛յ... դա՛տ... բեղա՛տ... վա՛յ... վա՛յ... հը՛-հա՛,
 հը՛-հա՛. հը՛-հը՛, հը՛-հը՛. հո՛... հը՛... հո՛ւ...

— Սաւն քյա՛ս, վե՛ր ջանն, իմա՛մ ուշաղի, սանն նա՛ հաղդն
 վար քի դհա ուզըն բիզդան դոնդարիսան, աղլիրսան, բաղրիր-
 սան. դո՛ւրն, դո՛ւրն, գեղա՛խ (Զենդ կտրի՛ր, ջանդ տո՛ւր, իմա՛մի
 որդի. քո ի՛նչ հաղդն ա, որ էլի երեսդ մեզանից քաշու՛մ ես, լա-
 լիս ես, ձեն տալիս):

<6>

Հենց էն ա, սուգը պրծնելով էր, որ բեղափիլ թամաշաչոց
 աչքը մեկ կողմով ընկավ, ու ամենն էլ սկսեցին փսփսալ, իրար
 երեսի մտիկ անիլ: Ուշթափալարի (երեք սարի) գլխին⁴² հան-
 կարծ մեկ քանի դարալթու երևացին, որ ո՛չ արախլվի (պարսիկ)
 նման էին, ո՛չ հասարակ ճամփորդի: Հենց իմանալիք, թե նրանք
 գու էն բռնել, որ գան Երևան, չափմիշ անեն, տանին: Զին քչե-
 լիս՝ սուր գդակների ծերերը բռանց էին երևում: Էնպես գիտես,
 թե ամեն մեկի գլխից մեկ մեծ մահրամա կապած, ծերը մախսուս
 բաց թողած ըլի, որ քամու հետ խաղա, ու ամեն մեկը մեկ ածղի
 նման էին աչքի առաջը գալիս, էնպես էր քամին նրանց ծոցը
 մտել, շորերը ետ տարել, ու չափ քցելիս՝ ձիու վրիցը դես ու դեն

տանում, ֆռռացնում: Էն էլ էր լավ պարզ երևում, որ էս էկողները ո՛չ թվանք ունեին, ո՛չ թուր, ո՛չ ջիրիդ: Հենց ձիանը բաց էին թողել ու իրար ետևից դարիվեր, դարիդուս իրանց քեֆին քշում: Տեսնողը մնում էր սառած, թե ի՞նչպես են նրանք սիրտ անում, էն սուր սարերի ծերիցը դարիվեր էնպես չափ քցում, որ մարդ ոտով էլ չի՛ կարող վազիլ, էնպես դիք ա էն սարերը: Փոքր ժամանակից հետո բոլորն էլ գյում էլան ու ընկան Դալմեքանց ձորերի, բաղերի մեջը⁴³: Ամենն էլ ուզում էին իմանալ, թե էս զարմանալի ճամփորդները ո՞վ պետք է ըլեին: Կարծեմ, որ մինչև չասեմ, դու էլ չե՛ս իմանալ: Մեր երկրացոնց աչքը էնպես սուր ա, որ շատ հեռու տեղից դարալթուն իր շարժմունքիցն են ճանաչում, բայց էս միջոցին, հենց բռնի՛ր, բոլորի աչքերն էլ կապվել էին: Ո՞վ ա գիտում, բալքի թե շատ էին լաց էլել:

Կես սհաթ չքաշեց, Գյոռխանեքանց կողմիցը⁴⁴ վեղարների սուր-սուր ծերերը ավաշկարա ցույց տվին, որ էն Ուշթափալարի դոշաղ ձի խաղացողները մեր սուրբ Աթոռից էկող եպիսկոպոս-վարդապետներն էին, որ էսպես հանդիսավոր օրերը միշտ պետք է գալին, լավ-լավ փեշքաշներ բերեին, որ Երևանի սարդարի, խաների խաթրը առնեն, տոնըները շնորհավորեն ու իրանց ծառայությունը ցույց տան, որ նրանց աչքը մեր ազգի ու մեր աշխարքի վրա քաղցր ըլի: Իրանք էլ, դորդ ա, խալաթ էին ստանում, էնպես ետ գնում, ամա մեկին տասը քթըներիցը, ջանըներիցը հանում էին հետո, ու շատ անգամ շաբթով, էրկու-իրեք հարիր մարդով գնում էջմիածին, նստում, քեֆ անում, վարդապետներին մզում, քամում, էնպես դուս գալիս: Ցավն էս ա, որ սարդարը կամ Հասան խանը գալիս՝ բոլոր միաբանքը պետք է խաչով, խաչվառով, զանգակ տալով, շարական ասելով առաջ գնալին ու նրանց տուն տանեին:

Քյահլան ձիանոնց վրա նստած մեր փառահեղ հոգևորականքը՝ փոքրավոր, տիրացու, թվանքչի ետևներին քցած, մեկի ձեռին գավազանը բարձր բռնած, մյուսները՝ որը առաջ էր վազում, որ ճամփա բաց անի, տեղ պատրաստի, որը աչքը իր մեծավորի աչքին քցած՝ մտիկ էր անում, որ նա աչքը թերթելիս՝ իսկույն հրամանը կատարի: Կոնդի, Շհարի տերտերներն⁴⁵ էլ, որ տիրացրվերով, խաչով, խաչվառով դուս էին էկել ու սաղ օրը բերդի մոտին չորացել, սպասում էին, որ նրանց առոք-փառոք տուն բերեն, էնքան ահ ու դող էին քաշել անց կենող անհավատների

ձեռիցը, որ թուրքները բերնըներումը սառել էր: Ամեն անց կենող մեկ բան էր ասում. որը մատներն էր իրար վրա խաչաձև դնում, ավերիցփեղ գլխիցը դուս տալիս, բերանը հոտացնում, որը շարականի հանգով բան էր ասում, մոռում, տերտերների վրա ծիծաղում. որը դունչը ծոռում, ձեն տալիս.

— Քեշիշ, բելա ի՞շ (տերտերն ու էսպես գո՞րծ):

Բազի թաջիր ու ախունդ էլ անց կենալիս հո, աստվա՛ծ ազատի, աչքերը առաջը քցած, նոթերը կիտած՝ էնպես մեկ խորթ ձևով տակնըհանց նրանց վրա քիթ ու պոռունկը հավաքում, խոժոռած, քափը բերանը կոխած՝ մտիկ էր տալիս, որ թե ձեռին ճարլեր, կուզեր, որ հենց է՛ն բոպեին նրանց արինը ծծի, սաղ-սաղ ուտի: Էս էր, որ հենց էսօր էլ Երևանումը, շատ եկեղեցու սրբերի՝ որի աչքերն ա հանած, որի բերանն ա քերած, որի կես երեսը պոկած, շատ եկեղեցու գլուխը քանդած, դռներն ու սեղանը խարաբա, շատի միջում ոչխարի տարթը մեկ գազ բարձրացել, բեմ ու դուռը ծածկել ա, ամեն ծունր դնողի յա մեջը մտնողի հոգին էրվում, խորովվում ա, որ միտք ա անում, թե որ անշունչ պատկերների, քարերի գլխին է՛ս օյինն են բերել, տե՛ս թե կենդանի քրիստոնեից հալը ի՞նչ կրլեր:

Անտեր երկրի, անօգնական ազգի կամ անճար մարդի ցավն ո՞վ կքաշի, թե ինքը չքաշի:

Եպիսկոպոսին տեսան թե չէ, խեղճ տերտերները դողդողալով՝ ամենը մեկ պուճախից դուս էկան, շուրջառները քցեցին, տիրացուքը շապիկ հագան, խաչվառները բարձրացրին, գդակները վերցրին, խոր-խոր գլուխ տվին, եպիսկոպոսն էլ մեկ ծանր-ծանր խաչակնքեց ու հետո, առոք-փառոք, շարական ասելով, երեսները դեպի Անապատը շուռ տվին⁴⁶, ուրտեղ որ Երևանու առաջնորդը նստում ա: Հայոց միջումը, ինչպես որ հայտնի ա, ամեն տեղ էս սովորությունը կա, որ նվիրակին յա եպիսկոպոսին էսպես պատվով ներս տանին: Շատ անգամ խալխն էլ ա առաջները դուս գալիս, փեշերը, աջը համբուրում, օրհնություն առնում ու էսպես ճամփից էկած, բեզարած էկողին մեկ քանի վախտ էլ քաղաքիցը դուս կանգնացնում, որ, ինչ ա, իր մուրազն առնի, բայց, փառք աստուծո, որ էսպես անկարգ սովորությունները հմիկ քիչ-քիչ վերանում են, ու էլ էկողին չեն ինջմիշ անում:

Մեր եպիսկոպոսունքն էլ խոր հոգոց քաշելով՝ մեկ աչքըները քցեցին մեշըդի կողմն ու անասա գնացին Անապատը, ուր քեղ-

խողեքը, իշխանք էկան, հավաքվեցան, ձեռքները համբուրեցին՝ գոակները վեր կալած, օթախը ներս գնացին. մեկ քանի աղքատ-ուղբուտ էլ տերտերների ու թվանքչոց հետ մնացին դռանը, ու փիլոնները կռնատակներին զրից էին անում, իրանց աղի հրամանին սպասում: Եպիսկոպոսունքը հենց ներս մտան, չաքմեք-ները հանեցին, շորըները փոխեցին, վեղարների ծերը ետ քաշեցին, խալըչի վրա նստեցին, բարձին թինկը տվին, իշխանաց որը երևելիքն էին, էս կողմն, էն կողմը պատի տակին չոքեցին, վարդապետ, տիրացու, փոքրավոր՝ աչքըները իրանց աղի աչքին քցած, ձեռքները դռներից, առաջին կանգնած՝ իշխանների համար յա արաղ էին բերում, յա մազա թավազա անում: Ամենի աչքըն էլ էկողների բերնի վրա էր, նրանք եռալիս՝ իրանք էլ բարձր ու ցածր էին անում, նրանք երեսները շրջելիս՝ իրանք էլ հետը-ները շրջում, մեկ բառով՝ էնքան էր իշխանաց պատիվ տալը ու եպիսկոպոսաց ահարկությունը, որ հենց կիմանայիր, թե նրանց հոգին սրանց ձեռին ա:

— Հլա գալուստդ շնհավոր, հա՛յր սուրբ, մեր գլխին, մեր երեսին. աստված ձեզ մեր գլխիցը չի՛ պակսացնի: Մեր աչքը հենց միշտ ձեր ճամփին ա. աստված մեր սուրբ Աթոռը դադմի հաստատ ու պայծառ պահի,— սկսեց իշխանների մեկը գլուխ տալով ու տեղը դրստելով՝ բերանը բաց անիլ:— Մառա եմ աջիդ, ի՛նչ պես ա մեր հոգևոր տիրոնջ քեֆը, ջանը սա՛ղ ա, դամաղը չա՛ղ ա, լավ դո՛հ ա, թե՛ ոտից-ձեռից ընկել ա: Աստված նրան իր թախտին հաստատ պահի, նրա սուրբ աղոթքը մեր գլխիցը անպակաս ըլի՛. քանի որ նրա շունչը կա, աստված մեր ոզղը միշտ կհասցնի: Մեկ Աթոռ ունինք, մեկ Հոգևոր տեր, էլ հո ուրիշ բան էս աշխարքումը չունի՛նք: Գիշեր-ցերեկ մեր խնդիրքն է՛ն ա, որ աստված մեր Աթոռը շեն ու պայծառ պահի, մեր հոգևոր տիրոնջ կյանքը երկար անի: Ինչ ունինք՝ ձերն ա. մեր որդիքն էլ, տեղն ընկած տեղը, ձեր ուղուրին կծախենք, թա՛ք ըլի՛ ձեր աչքը մեզ վրա քաղցր ըլի:

— Օրհնյալ լինիք, աստված ձեր հավատն օրհնի, աստված Հայոց ազգը միշտ շեն ու պայծառ պահի,— պատասխանեց եպիսկոպոսը,— դուք որ կաք, Լուսավորիչ պապի գառներն եք, հալբաթ որ ձեր եղը պետք է ուտենք, ձեր կաթը՝ կթենք, ձեր բուրդը՝ խուզենք, շոր կարենք, թե չէ հո՛ մերն ա, էն սև քարը. ո՛չ թուր ունինք, որ չափմիշ անենք, ո՛չ իշխանություն, որ գոռով

խլենք: Ինչ որ կտաք, մենք էլ պետք է աչքըներս խփենք, ձեռքներս դեմ անենք, էն առնինք, ձեզ օրհնող ըլինք, ընդով յոյա գընանք: Վաճառականություն ասես թե ռաչպարություն, ջուրկալություն թե բաղմանություն, դուք էլ գիտեք, որ մեր ձեռքը չի՝ գալ: Սևագլխի փիրն իրան խոով ըլի, ընչի՞ ա պետքը էս աշխարքումս. օղլուշաղի երես չի՝ տեսնում, մարդամեջ չի՝ դուս գալիս, ի՞նչ ա մեր կյանքը, մենք հո մարդի կարգում չենք: Դուք մե՞զ կտաք՝ աստված էլ ձեզ կտա, մենք էլ մեր մեղավոր բերնովը աստված կաղաղակենք գիշեր-ցերեկ, որ դուք միշտ բախտավոր ըլիք, ձեր մինը հազար ըլի, ու որդով, գավակով ծաղկիք, ծիք, զորանաք:

— Հա՛յր սուրբ, գլխիդ դուրբան, քո ոտի հողն եմ, լավ ես հրամանք անում, ամա ի՞նչ անես, որ ընչանք բանը բանին ա հասնում, դանակն ոսկորին դեմ ա ըլում, էլ հանիլ չի՝ կարելի,— էն դհիցը բլոնդալանա մեկը ձեն տվեց ու փափախը դգեց:— Մենք էլ լավ գիտենք, որ խաչն էլ ա մերը, ավետարանն էլ, մենք էլ գիտենք, որ տասներկու խաչապաշտի, եթմիշիքի միլլեթի գըլուխն հայն ա⁴⁷, հայի ժամի արարողությունն ու շարականը, հայի մեռոնն ու Հավատամքը մեկ ազգ էլա չունի, ամա էս անօրենքները մեզ հավատից էլ են քցել, հալից էլ. մալ են տեսնում մեզանում, խլում են. աղջիկ են գտնում, քաշում են. մեզ կրակն են դրել, սաղ-սաղ էրում են, փոթոթում. թե մեկ խոսք էլ ասում ես հո, վա՛յ քո օրին, արևին, գլխիդ էնքան բռնցքում են (մուշտում), որ աչքդ բուռդ ա ընկնում: Տունդ էլ որ քանդեն, ձեն չպետք է տաս: Ախր որ մեր միսն էսպես գազանի պես ուտում են, սրա չարեն ի՞նչ կըլի: Տեղից վեր կենողը ոտը մեզ վրա ա բարձրացնում: Չի՛լում, որ մեկ օր գնանք, ջուրը թափինք, պրծնինք: Ախր էս հո օր չի՛, որ մենք քաշում ենք: Մնացել ենք եթմի պես շլինքներս ծռած. սրա վերջն ախր ի՞նչ պետք է ըլի, գիր չե՞ք բաց արել, ի՞նչ ա ասում. էս աշխարքս քանի՞ տարի էլ պտի մնա, վախտը հասել չի՞, որ մեկ Գաբրիելյան փողը փչեր⁴⁸, աշխարքս հալու պես դգվեր, էնպես, որ մեկ պստիկ ասեղ էլ մեկ օրվան ճամփից էրևեր, անուճ-պանուճը, Եղիա մարգարեն գալին, մարդիկ մեկ թգի չափ դառնային, մեր սուրբ Էջմիածինը ու Երուսաղեմը մնային, մեր ազգը զորանար, էս անհավատ անօրենքները մի կորչեին, ջնջվեին, ու մենք սկսեինք երկնքի ու երկրի փառքը վայելիլ, ինչպես որ հրեշտակը երազումը մեր սուրբ Լուսավորչին

պատմել ա: Մենք էլ ասողից ենք լսել, հո մեր գլխի՞ցը չենք ասում: Ախր աթաղան, բաբաղան էսպես ենք իմացել, թե աստված պետականը որ մեր սուրբ Լուսավորչուն էնքան չարչարեց, տասնըչորս տանջանք տալ տվեց, տասնըչորս տարի Խոր Վիրապումը⁴⁹, ծառա եմ նրա սուրբ գործությունին (ասեց ու երեսին խաչ հանեց), պահեց, մե՛ր խաթեր էնպես արավ, որ մեր ազգն էլ տանջվի, չարչարվի, էլ էս աշխարքին թամահ չանի, որ աստուծո մոտ պարզերես գտնվի ու երկնային թագավորությունը վայելի: Ա՛խ, ի՞նչ կըլեր, որ էս օրը մի շուտով գար, մեր աչքն էլ մի լիս տեսներ. երկրի թագավորությունը մեր ընչի՞ն ա պետքը. երկընթումը պտի մեր աստղը բանի, որ ամեն ազգ էլ տեսնին ու մեզ էրնակ տան: Մեր գլխին՝ թագ, իրանցը բաց տեսնին ու ամաչին, փոշմանին, որ երկրիս մեծությանը էնքան եսիր էին էլել: Տերտերն<երն> էլ են գիր բաց անում, դորդ ա, ամա շատը իրանցից են ասում. նրանց ասածը ո՛վ մեկ չվանի կոնի. սուրբ Աթոռն էնտեղ էլած տեղը մենք նրա՛նց մունճաթը պտի ընկնինք: Մեկ ջուղաբ տո՛ւր, է՛, ա՛ջիդ դուրբան գնամ. ձեր ոտը շատ գիտի, քանց մեր գլուխը: Մենք որ կանք՝ սարի հաչվանի պես առավոտները վեր ենք կենում, էրեսներս լվանում, խաչ հանում, մեկ քանի խոսք էլ գլխըներիցս դուս տալիս ու գնում մեր բանը: Գիրն էլ ա ձեր ձեռին, գրի բալանիքն էլ: Զեր մեկ մազը աշխարքի բարեբար բան գիտի: Ասում են, թե ընչանք աշխարքս չվերջանա, մեր ազգին ո՛չ թագավորություն կըլի, ո՛չ թախտ, հենց էսպես պտի չարչարվինք՝ մենք դատենք, ուրիշներն ուտեն: Ղորդն ու սուտն աստված գիտի, պարտական մնա ասողն էլ, գրողն էլ: Ասում ա՝ մեկ գիծ մեկ կարաս կտրեց, հարիր խելոք վրա թափեցին, չկարացին սաղացնիլ: Բանն ընկել ա բերնեբերան, ասածդ հո չե՛ս կարալ ետ ուտիլ: Մեր պապերիցը մեր անկաջն ա ընկել, մեզանից մեր որդիքը կիմանան: Վա՛յ հախին, վա՛յ նհախին: Լավ արիճներս էլ եռ ա գալիս, լավ սիրտ էլ ունինք, տղամարդություն էլ, որ մեր դուշմանի հախիցը վեր գանք: Մեկ հաչ, տեղն ընկած վախտը, լավ տասը թուրքի էլ տակն ա դնում ու միսըները բերանները տալիս: Ղորդ ա, նրանք պաս չեն պահում, միշտ եղ ու կարագ ուտում, ու մենք շատ վախտ, շաբթով, ամսով, հենց ցամաք հացով ու խոտով, բանջարով ենք յուր գնում, ամա, դուրբան ըլիմ մեր սուրբ մեռոնի ու Լուսավորչի լիս հավատին, նրանց գործությունը շա՛տ, շա՛տ ա: Փի՛ր ըլին մեր սրբերն ու մեր ամենափրկիչ.

սուրբ Գեղարդը⁵⁰. մեկ բան ըլելիս յա դոնշուն դուս գնալիս՝ մեր մի հաշը մեկ դագանակով էլ շատ անգամ տասը թուրքի գլուխը կջարդի, մեկ մատով որ խփի, տեղնուտեղը բանհոգի կըլին, հայի փիրն ու սոյը ա՛տված օրհնի: Ամա ի՛նչ անենք, որ մեզ հրաման չկա թուր բանացնել: Քրիստոս ինքը Պետրոսի ձեռիցը թուրն առավ⁵¹, որ հայ քրիստոնէն էլ թուր չի՛ վերցնի: Քրիստոնէի թուրը աղոթքն ա, ժամը, պատարագը, պասը, ծոմը, ողորմություն տալը: Ասիլը հեշտ ա, անիլը՝ դժար: Թո՛ղ ժամ, պատարագն էլ ըլին, ո՛վ ասում՝ չըլի <ն>, լեզուն քրքրվի՛ ասողի, ամա թրի ու թվանքի փիրն օրհնած ա, թեկուզ բողազս էլ դուս կտրեն, ես դրուստն եմ ասում: Թուր որ չունիս՝ գլուխդ կտրում են, օղլուշաղդ քաշում, կերածդ հարամ անում, դատածդ խլում, քեզ էլ եսիր անում. աշխարքն էսպես ա, ի՛նչ կարաս անիլ: Տո՛ւր էն աջը, որ բռնի էն խաչը: Աղոթքն իր տեղը, թուրն՝ իրը: Աստված դշին, հաշվանին էլ յա՛ չանգ ա տվել, յա՛ պոզ, յա՛ ատամ, որ չանգոի, հարու տա, կծի, իր գլուխը պահի⁵²: Ես մեղա աստծո: Սիրտս էրվում ա, էն դուր համար եմ ասում, թե չէ՝ ինձ մման շատերն էկել, ա՛խ, վա՛խ քաշել, իրանց սև օրը լաց էլել ու էլ ետ ա՛խ, վա՛խ քաշելով՝ հողը մտել. ես էլ նրանց մեկը. թե մենակ իմ դարդն ըլիմ քաշում, թո՛ղ աչքս հանեն: Թողություն արա՛, ծառս եմ սուրբ աջիդ. գիտում եմ, որ դուք էլ կցավիք, էնդուր համար եմ ասում, թե չէ՝ պունախ էլ ե՛ս կճարեմ, որ միջումը ձգվիմ. մեկ բուռը հող էլ հալբաթ կըլի, որ մեկ օր, աչքս խփելիս, երեսիս քցեն:

— Լա՛վ ես հրամայում, լա՛վ, ա՛ղա Պետրոս⁵³,— պատասխանեց սրբազանը,— ամա ի՛նչ անես, որ մենք Քրիստոսի ծառեն ենք և ո՛չ աշխարքի: Երկնքի որդին ենք և ո՛չ երկրի: Քրիստոս Տերն մեր, սի՛րելիք (երեսներին խաչակնքեցին), երկնի և երկրի արարիչը, եթե կամենար, որ իր սուրբ տնօրենությունը հեշտությամբ անց կենար, ու ինքը չչարչարվեր, չխաչվեր, էլ չէ՛ր գալ էս փուշ աշխարքը ու մարմին առնիլ, որ մեզ ազատի: Մեկ որ հրամայել էր, ամեն բանը թամամ կըլեր: Ամա չէ՛, Ադամա մեղքը մնացել էր մեր վրա. մինչև էն մեղքը չջնջվեր, դժոխքը չքանդվեր, մեզ ազատություն չէ՛ր ըլիլ: Մենք սուրբ ավետարանի աշակերտն ենք, սուրբ ավագանի՝ որդիքը. Էդպես մտքերը չար սատանեն ա ձեր սիրտն ածում, որ գիշեր-ցերեկ մեր շվաքի ետևիցը ման ա գալիս: Ինքն՝ Տերն մեր, էկավ մեր մեջը, խոնարհեցավ, մեր մար-

մինն ու արինը առավ, մեր խաթեր խաչվեցավ, մեռավ, թաղվեցավ, որ մեզ, մեզ օրինակ ըլի, թե ով կամենում ա երկնային փառացը, Քրիստոսի սուրբ արքայությանը արժանանա, ընչանք չխաչվի, չչարչարվի, չտանջվի, իր գլուխը մահու չտա, աստուծո սուրբ տեսուն չի՛ կարող արժանանալ:

Ավետարանն ինքն ա ասում⁵⁴. «Որ ո՛չ առնու զխաչ և ո՛չ եկեացէ զկնի, որ ո՛չ թողցէ զհայր, զմայր, զկին, զորդիս և ո՛չ եկեացէ զկնի իմ, նա չէ՛ ինձ արժանի: Եւ թէ՛ յարիցեն ազգ յազգի վերայ և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ, նեղեացեն, տանջեացեն, հալածեացեն զձեզ վասն իմ, այլ դուք ուրախ լերո՛ւք, զի վարձք ձեր բազում են յերկինս, և մազ մի ի գլխոյ ձերմէ ո՛չ կորիցէ առանց հօր իմոյ՝ որ յերկինս է: Այսպէս հալածեցին զմարգարէս՝ որք առաջ քան զձեզ էին» և այլն: Տեսե՛ք, սի՛րելիք, էս էլ ավետարանի խոսքը. ինչ գրվածն ա, պտի կատարենք: Առաքյալը, մարգարեք, մարտիրոսք էսպէս արին, իրանց արինը թափեցին, ինչպէս ամեն օր լսում, կարդում ենք, որ աշծմ աստուծո աջակողմյան դասումը նստած՝ իրանց վարձքն ստացել, փառավորվել, երկնային ուրախությունը վայելում են, մենք մեկ սհաթի հետ հավիտենական կյանքը պտի փոխե՛նք: Էդ ո՞ր գիծը կանի: «Փառք աշխարհիս, իբրև զծաղիկ խոտոյ, այսօր է և ի վաղիւն ցամաքի»⁵⁵: Մեզ պէս մեղավոր, անարժան մարդիկը պետք է աստծուն ընդիմանա՛նք: Էդպէս սարսափելի, չար միտքը ձեր սրտըներովն էլ չի՛ պտի անց կենա, ո՛ւր մնա՝ բերան բերեք յա լեզվով էլ ասեք: Ինչ աստուծու կամքն ա, էն պտի ըլի: Պողոս Առաքյալը չի՛ ասում⁵⁶, թե «Հնազանդ լերուք թագաւորաց, զի յԱստուծոյ են կարգեալ»: Պրծա՛նք, գնա՛ց: Ով այլ տեսակ կմրտածի, անհավատ ա ու դժոխքի բաժին. մեր պարտականությունն ա, որ ասենք, ձերը՝ որ լսեք: Չե՛ք լսիլ, պարտականը դուք մնաք:

Բաս թե իմանաք՝ մե՛ր գլուխն ի՛նչ են բերում էս հավատի թշնամիքը, էն ժամանակը դուք ձերը կմոռանաք: Ամեն մեկ բեկ, մեկ խան սուրբ Աթոռը գալիս⁵⁷ մեզ կրակն ա դնում, էրում, շամփրի պէս պտտում: Ո՛չ հաց ու ջուրն ա նրանց փորը կշտացնում, ո՛չ պատիվն ու փեշքաշները նրանց աչքը բռնում: Ծաբթով նրստում են մեզ վրա. ինչ որ ուզում են, տալիս ենք, էլի ուզի չե՛ն ըլլում: Սարդարն ու Հասան խանը գալիս հո, երկինքը մեր գլխին փոկ ա գալիս, աշխարքն աշխարքով դիպչում. էլ շունը տերը չի՛ ճանաչում, էնքան գել են մեր գլխին թոփ ըլլում: Քչիցը-քչիցը,

ամեն մեկ գալիս, չորս-հինգ հարիր մարդ ետեկցն ընկած՝ տուն են թափում, ո՞ւմ առաջը բռնես: Խան, բեկ, ծառա, մեհտար, աշ- չի, դուշչի, դալանչի, էրկու էնքան էլ ձի, ջորի, ուղտ, բարգ, բար- խանա հետըները քցած՝ գալիս են, մտնում վանքը. դե արի՛, նը- րանց կառավարի՛: Ինչ օր որ նրանց ոտքը մեզ մոտ պետք է մտնի, հացըներս էլ ա հարամ ըլում, ժամըներս էլ: Սաղ օրը յա ժամի ծերին, յա ճամփի մեջտեղը, շոգում, անձրևում, թոզում պտի կանգնինք, մտիկ տանք, որ նրանք գան: Իրեք-չորս եպիս- կոպոս պտին առաջը գնալ: Բոլոր միաբանությունը դուս ա գա- լիս, մեկ վերստաչափ տեղ էլ գլխաբաց, խաչով, խաչվառով, շուրջառով, բուրձառով, խնկով, մոկով առաջ գնում ու շարական ասելով, վազելով, ձիանոնց առաջին քափ ու քրտինքները կոխած՝ նրանց ներս բերում: Ծատ անգամ, վանքի դուռը մտնելիս, պետք է զառ ճոթից, դումաշից, խասից փիանդազ քցած, որ էս անօրեն- ների ոտը խեղով ըլի, մեկ վնաս մեզ չհասնի, թե չէ ամենիս էլ կկոտորեն: Փիանդազը ֆառաշների փալն ա, դե արի՛, նրանց սիր- տը շահի՛: Էսպես՝ գալիս են, վանքը լցվում: Վեհարան, խցեր, Ղա- գարապատ⁵⁸ էլ տեղ չի՛ մնում, որ միջումը կույ գանք: Հլա սար- դարի, խաների սիրտը փեշքաշներով, փողով ենք առնում, ու կա- թողիկոս, եպիսկոպոս՝ գիշեր-ցերեկ գլխըներովը պտիտ գալիս: Ամա ինչ որ մեր խեղճ միաբանի ու նոքարների գլխին ա գալիս, քո դուշմանդ չտեսնի: Փետի, թրի առաջ արած, սաղ օրը ուշունց տալով, ծեծելով՝ հազար մեկ բան են ուզում: Յա ձիանոնց տեղն ու խոռակը լավ չի՛, յա իրանց սրտի ուզածը բանի պետքը չի՛: Մեր ձիանքն էլ են դուս անում, տավարն էլ: Խոզերին հո, վա՛յ նրանց օրին, որտեղ որ տեսնում են, թրատում, միջիցը կես են անում. ախր խոզի թշնամի են, բաս ի՞նչ կըլի: Մեր թխած հացը, էփած կերակուրը, մորթած միսը, ձեռը տված գատը հարամ ա ու հարամ: Իրանք են ամբարը մտնում, մառսներ ընկնում, դոները կոտրատում, ու ինչ սիրտըներն ուզում ա, շատ փալը շաղ տա- լով, ոտի տակ քցելով, կոտրելով, ջարդելով, փչացնելով՝ իրանց ձեռովը դուս բերում, ուզածները շինում, էլի մեր լախիցը կպչում:

Էսպես՝ մոյդա ասես, դարաչի, քյամանչի, սագաւնդար, սաղ գիշերը որը պար ա գալիս, որը ֆալ բաց անում, որը բերնին զոռ տալիս, որը գլխին, որ էս անիրավի սիրտը շահվի: Գինի խմիլն էլ հո, նո՛ր են սովորել, էլ ի՞նչն ա պակաս: Աստված ո՛չ շհանց տա. մենք էլ ձեռըներս դռըներին՝ սաղ գիշերը նրանց առաջին

յա պետք է չոքինք, յա կանգնինք, որ քեֆըները թամամ ըլի: Շատ անգամ վարդապետ էլ ա թրատվում, յարալու ըլում: Էսպես՝ ընչանք մենք նրանց մեր հասարիցը դուս ենք տանում, մերը մեզ ա հասնում:

Ախր մեզ որ է՛ս են անում, ձեզ ի՞նչ կանեն: Պոտի համբերենք, համբերությունը կյանք ա: Կարելի ա, որ մեկ օր աստուծո ողորմությանը դուռը բացվի. յա են ա, բոլորս էլ կկոտորվինք, կվիշամանք ու աստուծո սուրբ տեսությանը կարծանանանք, կամ թե չէ՝ մեկ ճար կըլի մեզ: Քրիստոնեն սրով չի՛ պետք է իր բանը յոլա տանի. նրա թուրը իր համբերությունն ու հավատն ա: Էսպես արեց մեր էն էշ գեղըցի, հիմար Աղասին էլ, որ մեկ աղջկա խաթեր սուր քաշեց, ու խեղճ քանաքոցիք էնքան ջառմա տվին, ու նրա հալկոր հերը ու գելի քեղխուղեքը էս ա, հինգ տարի ա, բանտումը, քոթկումը չորանում, մաշվում են, ու աստված գիտի, թե վերջըները ի՞նչ կըլի: Ո՛չ մեկիք Սհակի⁵⁹, ո՛չ Կաթողիկոսի⁶⁰ մունաթը մեկ օգնություն չարին: Ինքն էլ գժի պես ընկել ա սարեսար, չափմիշ անում, ճամփա կտրում ու իր թշվառ օրը էսպես անց կացնում: Ո՛վ ա գիտում, թե ո՞ր քարի վրա գլուխը վեր կդնի ու ի՞նչ տեղ շներոց-գիլերոց կըլի: Լավն է՛ն չի, որ մարդ գլուխն իրան քաշի ու տազ անի: Չէ՛, չէ՛, սի՛րելիք. քանի կարանք, մեր գլուխը պահենք. «հա՛» կասեն, «հա՛» ասենք. «չէ՛» կասեն, «չէ՛» ասենք. կասեն՝ նստի՛ր, նստի՛նք, վե՛ր կաց՝ վե՛ր կենանք. մինչև տեսնի՛նք, թե բանն ի՞նչ տեղ կհասնի: Ասում են, թե որսներն էկել, Ապարան են հասել. ո՛վ ա խաբար. բալքի նրանցից մեկ ումուղ ըլի, աստուծո բանն անքննելի ա: Աստված նրանց թուրը կտրուկ անի. թե մեկ նրանց ուր մեր հողը կմտնի, էն ժամանակը թո՛ղ մեզ էլ տանին, մատաղ անեն: Շտապիլ հարկավոր չի՛: Ցիցիանովն ու Գողվիչը Երևան չառան, բալքի թե աստված չէ՛ր կամեցել, որ մեզ էլի փորձի: Շատը տարել ենք, քչին էլ համբերենք, տեսնի՛նք, վերջըներս ի՞նչ կըլի: Ամա էլի եմ ասում՝ քրիստոնեն թրի կոթն էլ ձեռ չի՛ պետք է առնի, կարճ, որ քար էլ աղան գլխին : Իրիկնաժամի զանգակը տվին, գնա՛նք ժամ, աղոթք անե՛նք, հլա շատ կխոսանք: Ա՛յ տղա, վեղարս տո՛ւր,

ա. Էս խոսակցությունիցը իմացողը կիմանա, թե ի՞նչ էր մեր խեղճության պատճառը: Էլ ես չեմ ուզում բերանս բաց անի: Ինչ ավետարանի կողքին գրած ա, սուրբ ա. քե՛ր հասկացողը, էն ժամանակը գլխիս խփի՛ր:

մաշիկս դի՛ր. ժամիցը ետը գիշերն՝ երկար, մենք՝ պարապ, էնքան խոսանք, որ քուններդ տանի:

Աստված բարի ճամփա տա՛, հա՛յր սուրբ. էդ բերանդ լիս դառնա. է՛դպես պետք է քարոզել խալիսին: Աշխարքումը կենալը ի՞նչ լազաթ ունի. անապա՛տը պետք է գնացած, անապա՛տը, որ աստված երկնքիցն ուրախանա, երկիրս քիչ-քիչ քանդվի, սա-տանեն ճաքի, տրաքի, հրեշտակները մեզ շուտով տանին, մեր փառքին հասցնեն: Ազգն ի՞նչ ա, աշխարքն՝ ի՞նչ: Բոլոր սուտ բան ա: Ամեն մարդ իր հոգու ճամփեն պտի գտնի: Քանի կարաս՝ օր առաջ թաղարեքդ տե՛ս, որ ետ չընկնիս:

Տիրացուն իսկույն վեղարը տվեց, ֆարաշեն հաքցրեց, վարդապետը մաշիկը դրստեց, առաջը դրեց, իշխանքը գլխըները սըմբացնելով, քուրք ու աբա ուսըներին քաշելով, գդակները դգելով ետ կանգնեցին, ու սրբազանը դուս էկավ: Նրանք էլ ետևիցը մեկ-մեկ ճամփու ընկան, քոշըները հաքան, որ դռանը թողել էին. մեկ սարկավագ փիլոնը վերցրեց, մեկ վարդապետ՝ գավազանը, ու դռանը ձեռը տվեց. տերտերները հո, փիլոնները ուսըներին, դռանը էնքան կանգնել, վրվրթացել, դողացել էին, որ դատաստանի օրն էլ էն մահվան քրտինքը չեն տեսնիլ: Եպիսկոպոսը դուս էկավ թե չէ, երկու կարգ դառան, փիլոնները քցեցին ու եպիսկոպոսին հանդիսով, տիրացու, սարկավագ, վարդապետ, իշխան, թվանքչի քամակիցն ընկած՝ տարան ժամը: Ներս մտնելիս՝ տիրացուն հողաթափը առաջը դրեց, սարկավագը փիլոնը քցեց, մեկ տերտեր էլ մեկ խալիչա ծալած, ձեռին բռնած՝ հենց եպիսկոպոսը ժամը մտալ, սեղանի առաջը հասավ, մեկ քանի խաչ հանեց երեսին, մեկ խոր գլուխ տվեց, խալիչեն բաց արեց, ետ կանգնեցավ. եպիսկոպոսը մեկ քանի խոսք իր մտքումն ասեց, սուրբ սեղանին գլուխ, երկրպագություն տվեց ու փառահեղ կերպով գընաց, ձախու դասումը, իր աթոռումը բազմեց. ժամն օրհնեց, Հա՛յր մերն ասեց, ժամը կանգնեց:

<7>

Ժամը դեռ կես չէ՛ր էլել՝ հարաչ-հրոցն աշխարքս բռնեց. սար ու ձոր իբարոցով ընկան: Թուրք, սարվագ, արախլու եկեղեցին լցվեցին. ժամ ասողների ձենը փորըներումը մնաց: Էլ մեծի, պըստըրկի չի՛ մտիկ արին. ով ոտումը հարաքաթ ուներ ու ջանումը՝ դը-

վաթ, դուս թռավ, գլուխն առավ, կորավ. ով՝ չէ, տեղնուտեղը մնաց քարացած, սառած: Գլուխ ասես, որ պատովում էր, ասամ ասես, որ ջարդվում էր: Անիրավ արախլուն ո՛չ ժամի էր խնայում, ո՛չ մարդի. թվանքի ոռքով ամեն մեկին մեկ պատի կպցրին, վրա թռան, եկեղեցու ինչ գարդ, զինգինաթ, խաչ, ավետարան կար, դես ու դեն դաղթմիշ արին, շուրջառ, բուրվառ, ինչ տեղ մեկ էրծաթի նշան էր երևում, բոլոր քանդում, ջախըբուրդ էին անում, վերջնում, ոտի տակ տալիս: Մեկ քանիսն էլ եկեղեցու դուռն ու շենը բռնեցին, որ դուս գնացողին ձեռք քցեն, թալանեն: Էսպես՝ ում վրա մեկ նոր շոր էլ որ տեսան, հանեցին, զավթեցին: Ինչ կնանոնց հալն էր, աստված ո՛չ շհանց տա. երեսի ոսկի ասես, ձեռի մատանիք, դոշի շարք ու քորոց, զառ մինթանա (լեհին), դիբա արխալուդ, սամուր քուրք, ինչ կար չկար, բոցքելով, ոտի տակ տալով էին հաքըներիցը հանում: Ծերունի եպիսկոպոսը մեջ բնկավ, որ մեկ քոմակ անի, բռնեցին, կոները կապեցին. տեքտեր<ներ>ն էկան, ամեն մեկին մեկ պատի զարկեցին, ու ով կար չկար, ոչխարի պես թրի առաջն արած դուս քշեցին, հետ ածեցին:

Լացի, սգի ձենը երկինքն էր հասել, բայց էս անողորմ ազգի համար, հենց իմանաս, քյամանչի, սագի ձեն ըլեր: Եկեղեցուցը դուս էկան թե չէ՛, աչքդ ո՛չ տեսնի էն օրը: Մհառլամի ձենն էլ էր կտրվել, Հասան-Հուսեյնինն էլ. սար ու ձոր ոտն էր առել, փախչում էր, աչք առել, լալիս էր: Զորագեղի⁶¹ ու Կոնդի քուչեքումը որ ասեղ քցեիր, գետինը չէ՛ր հասնիլ. էնքան արախլու, դարափափախ, քուրդ, սարվազ էին լցվել, որ գետինը սևացել էր: Բերդի չորս կողմն է՛լ տեղ չկար. դուքան էր, որ թարաշ էին տալիս. տուն էր, որ թալանում, կրակ տալիս ու տանտիրոնջը չիփ-չիփլախ, իր ողորմելի օղլուշադի ձեռը բռնած, դառ ու դարտակ դուս խոկում, թրի, թվանքի առաջն անում: Ով շուտով մեկ բան տեսել, թաղել էր. լու հացի, լարի ջվալում մեկ բան թաքցրել, էն մնաց իրան: Քուչեքանց միջին երեսեքանց, հարսների ու աղջրկերանց ձենը քարերը մղկտացնում էր, լացացնում: Ծատը ձիոռ ոտի տակին էր հոգին տալիս, շատը ահիցն ու դողիցն էր լեղապատառ ըլում. շատին երեսի վրա էին քաշ տալիս, որին մագերիցն էին ձիու ետևիցը սուլութմիշ անում, քարեքար տալիս: Էն օրը գնա, ո՛չ ետ գա, ինչ Երևանի հալն էր:

Ծատ հեր, շատ տղամարդ կամ հանդումն էր, կամ բաղումը,

կամ ուրիշ տեղ գնացել ու չիմացել, թե ի՞նչ կրակ ա գալու իր տան ու աշխարքի վրա: Նորագեղի դուզն⁶² ու կարմնջի ճամփեն, Կուզեռան դոշը⁶³ ձիավորներով խլխլում էր: Մեկի տեղակ հագարն էին դուս թափել, որ գնան, խեղճ գեղցոնց էլ էս դառն ավետիքը տան: Ղուշը գլխըներովն անց կենալիս՝ վեր էին քցում, թերբում, պլոկում. մարդ չէ՛ր կարում տեղիցը եռա: Էսպես՝ որը ունևոր էր ու ջահել, շոր ու փալաւ, բարգ ու բարխանա շալակները տւի՛ն, տարան, բերդն ածեցին. որը հալևոր էր ու աղքատ, օրվասն հացի կարոտ՝ ծեծելով, ջարդելով տանից դուս արին, որ հենց էն սհաթին տունը, տեղը թողան, երբմիշ ըլին, որ գնան, գնան մյուս գեղցոնց հետ խառնվին, որ քոչեն, չունքի դալաբանդլլ էր, Ռուսը գալիս էր⁶⁴: Երանի՛ Ըրան, որ մեկ սել, ձի, կով, եզը կամ մեկ էշ էլա ուներ: Էնքան կարացին, որ մեկ քանի կարպետ, խալիչա, չորդան, դոշակ, աման, մի քիչ ալիր յա չալթուկ հետըները վերցրին, որ անձրևի ու արևի տակին, սովի ձեռիցը չմեռնին: Բայց քաղաքումը շատը ո՛չ գրսւտ ուներ, ո՛չ մարդ, սել հո, սկի լսված չի՛: Անիրավ թշնամին Էնքան ժամանակ էլա չէ՛ր տալիս, որ էստոնք էլա վերցնեն: Ինչ ուտելիք կար՝ ձուկն ասես, եղ, պանիր, հաց, գինի, տան բոլոր տարվան թաղարեքը, կամ ջարդում էին, դեն ածում, կամ էրում, ջուրը քցում. տոնները կրակ տալիս, փետումիս անում, որ շուտով ճամփա ընկնին, քոչին: Եկեղեցքանց, տների, ջաղացների դռները մնացին կրկկների վրա բաց կանգնած: Տանող-տանողի էր, քաշող-քաշողի, շունը տեր չէ՛ր ճանաչում, հերը որդուն ուրացել էր: Էս սարսափելի ձևովն ընկան գեշդանգեշ ճամփա. օձերը ծնեցին, քարերը պատռվեցին, քոչը երմիշ էլավ:

Շատ ողորմելի, երկու հոգիս մեր կինարմատ՝ շունչը բերնին դեմ առած, մեկ քոռփա ծծին ուներ բռնած, մեկը՝ քամակին կապած, որի էլ ձեռիցը բռնած՝ հազար տեղ չոքում, հոգին ուզում էր տա ու իր սև սհաթիցը պրծնի: Չէ՛ր գիտում՝ ի՛ր գլուխը լաց ըլի, թե ողորմելի երեխեքանց ձենը կտրի, որ սոված, ծարավ, շոգի ձեռիցը թուլացած, ոտները յարալու-փարսլու, չունքի շատը բոբիկ էր գնում, իրանց մոր ծնկներովն էին փաթաթվում, ճտովն ընկնում, որ իրանց կտոր հաց յա մեկ պուտ ջուր հասցնի: Շատ հեր՝ երեխեն ուսին յա շալակին, խալիչա, խուրջին քամակին, դեմը գնում, դեմը լալիս. հենց որ ուզում էր մի քիչ նստի, շունչ քաշի, թրի ոռքն յա թվանքի լույեն էին աչքը բուռը քցում, որ

տեղիցը վեր կենա, վազի, որ ետ չմնա: Որի հերք էր մերձիմահ՝ տանը մնացել ընկած, որի հարսը կամ կնիկը, կամ պառկած ծննդկանը, կամ ծծկեր երեխեն՝ օրորոցումը: Տեսնողի սիրտը կորակ էր ընկնում, բայց անողորմ ղզլբաշի թուրն ու արինաթաթախ ձեռք ո՛չ հեր էր հարցնում, ո՛չ հիվանդ, ո՛չ ծեր, ո՛չ տղա, ո՛չ մեր, ո՛չ աղջիկ: Որին քարով էին սպանում, որին թրով, որի ոտիցը քաշում, ջուրը քցում, որին բանհոգի անում, որ մնացողները ձեռք վերցնեն, գնան: Անբան, հալվան շները շատ էին ցավում, կսկծում էս դառն, սոսկալի տեսարանի վրա, քանց բանական մարդիկը: Ա՛խ, ո՞վ կարա է՛ն ողբը, է՛ն կսկիծը, է՛ն սուգն ու արտասուները պատմիլ, ինչ որ էս ողորմելի խալխը վեր էին ածում ու քաշում: Մարդի սիրտ պատռվում ա, բայց երկինք-գետինք մեկ փուլ էլ չէին գալիս, որ նրանց տակով անեն, մեկ չէին էլա ճաքում, սիրտըները բաց անում, որ նրանց կուլ տան, պրծացնեն:

Ինչ որ գեղցոնց հալն էր, աստված հեռու տանի: Շատի տավարը հանդումը մնաց, մալը՝ չոլումը, ոչխարը՝ սարումը: Ում ձեռը հասավ, էնքան արեց, որ արաբեն լծեց, երեխեքը մեջն ածեց, մեկ քանի փայաս-փռչուս էլ վրեն քցեց ու լալով, աղի արտասնքով ճամփա ընկավ: Տուն, տեղ, բաղ, մասիլ՝ մնացին աստուծո ապով: Որդին հորն ուրացել էր, բայց էլի էս օրհնած գեղը-ցիքն էին, որ ճամփի կիսին բազի քաղաքացու երեխա, բարգ, օղլուշաղ իրանց սելումն էին դնում, կամ նրանց հիվանդներին տիրություն անում, չունքի լավ-օսալ, էլի գրաստ, ուտելիք, տավար սրանք ունեին, նրանց ո՞վ կտար, ու ինչքան ձեռըներիցը գալիս էր, քոմակ էին անում նրանց:

Շատ ողորմելի հերնըմեր, հենց ճամփին, մեկ սովամահ, ծծկեր երեխա՝ երկու-իրեք օր ձեռըներից պահում, ուզում էին, որ մեկ էնպես տե՛ղ հողի տակովն անեն, որ բալքի թե գազան չդիպչի, ու իրանք՝ էլի ետ գան, իրանց ջրատար մեռելի ոսկորները հանեն ու տանին իրանց հետ, ժամով, պատարագով թաղեն: Բայց որ ճարըները կտրվում էր, գլխըներից կրակ էին վառում, երեխեն կամ ջուրն էին քցում, կամ մեկ քարի տակ դնում, իրանք էլ վրեն էրվում, խորովվում ու մյուս օրը լալով, կիսամահ ճամփա ընկնում: Շատ հղի մեր հենց ճանապարհին կամ մեռած էր ծնում իր ինն ամիս դուռը ցավով արգանդումը պահած, հասցրած մանուկը, կամ թե չէ, սաղ էլ որ ըլում էր, մերը բարուրում, ուզում էր,

որ կամ ինքն էլ հետը մեռնի, կամ մանուկը չթողա, տանի, բաց ա՛խ, անաստված ղզլբաշի թրի բերանը կամ երկսին էլ ի միասին էր կտրատում, կամ բարուրը մոր ձեռիցն առնում՝ կամ սպանում, կամ ջուրը քցում, կամ քարին տալիս, փչացնում:

Ծատ հալևոր կամ ոտից-ձեռից ընկած պառավ, որ էլ չէին կարում ոտը ոտի առաջ դնեն ու կիսաշունչ մեկ քարի տակի նըստում էին, որ բալքի թե գազանք գան, նրանց կտրատեն, ուտեն, որ գլխըները բաց չէին անում, լալիս, մղկտում ու իրանց որդոցը օրհնում, բարի նամփա, բարով մնա լսում ու ձեռաց գնում, յա արախլվի ոտներն ընկնում, աղաչում, պաղատում, որ իրանց էնտեղ թողա, հենց խոսքը բերնընկերումն էին թրախորով ըլում՝ ո՛չ որդու ձեն լսում, ո՛չ թոռի երես տեսնում ու թամարգու աչքը խփում: Ծատ որդի՝ իր հալևոր հորնըմոր, շատ փեսա՝ իր նշանածի կամ նորահարսի, շատ ախպեր իր քվոր, աներ-գոքանչի հալը տեսնելով, որ էլ ջան չունին, որ տեղըներիցը շարժին, իրանք էլ կիսաջան՝ էլած ղվաթներն էլ որ ատամների տակը չէին առնում ու իրանց անգիճ բեռը շալակում, որ յա իրանք էլ մեռնին, յա նըրանց չթողան, մեկ էլ էն էին տեսնում, որ քամակները թեթևացավ, ու իրանց քաղցր, ազիզ բեռան արինը շընքներով շոռալով ծոր ընկավ, գետինը ծած էկավ, իրանց գլխըները աչք ու լիս, ուշ ու միտք կորցրեց, դժժաց: Ծատի բախտն էնքան բանում էր, որ թուրը իրան էլ էր գողը ցույց տալիս, իր սիրելու հետ տանում, պրծացնում: Բաց ա՛խ, իրանք, դորդ ա, պրծնում էին, բաս իրանց քոռփա մանուկների, էրեխեքանց ցավն ու հոգսը ո՛վ պետք էր քաշեր, ո՛վ նրանց մեկ պուտ ջուր, մեկ կտոր հաց տար, սովից, մահից ազատեր: Վա՛յ նրանց օրին. յա անիրավ արախլուն էր նրանց զաւթում, յա սովը իր ճանկը քցում:

Բոքիկ ոտները քարերն էին ճղում, բաց գլխըները՝ արեգակը էրում, փոթոթում: Ծատ մոր երեխեն գրկիցը խլում էին ու կտորկտոր անում, որ եզին գնա: Ո՛վ. երկինքը՝ աչքը բաց, հանդարտ մտիկ էր տալիս, երկիրը՝ բերանը փակ, անկաջ էր դնում. ում տալիս էին էնպես անմեղ քոռփին, դեն էր քցում, մեկ բուռը հողի էլա արժան չէ՛ր տեսնում: Վա՛յ նրան, որ կամ սելի ակն էր կոտորվում յա ձին սովի ձեռիցը բեզարում, կամ գրաստը ծարավի, շոգի ձեռիցը թուլանում, վեր ընկնում. կամ տիրոնջն էլ անասունի հետ էին սպանում, կամ սել, մանր երեխեք միջումը վեր ընկած յա քնած թողում ու տիրոնջը թրածեժ անելով առաջ քշում, հետ

ածում. շատը, դորդ ա, վազում, գնում էր, չունքի ջանն ազիզ ա, բայց շատը զլուխը դնում սելի վրա, աղաչանք էր անում, որ կտրեն, մեռնի, պրծնի ու իր ողորմելի գավակները չոլումը չթողա:

Ա՛խ, ո՛ր մեկն ասեմ. սիրտս արիւն ա դառնում, ձեռներս դող ընկնում, աչքերս սևանում: Երանի՛ր Բրան, որ էսպես բան ո՛չ տեսել, լսել ա, ո՛չ էլ կտեսնի, կլսի. բայց մեր ողորմելի ազգը հազար անգամ ա տեսել, լսել, քաշել: Քար չկա մեր երկրումը, քո չկա, որ Հայի արնով ներկած չլլի: Դո՛ւ էլ սրանց հետ գնացիր, սի՛րելի եղբայր իմ Մոսի⁶⁵, իմ գառնուկ ախպեր: Ա՛խ, հենց մանուկ երեսիդ էի կարոտ, էն էլ չտեսա: Մորս ծոցիմ⁶⁶, իրեք տարեկան, սովը քեզ տարավ, էդ լիս երեսիդ դուրբան: Գերեզմանդ ի՛նչ տեղ ա, չգիտեմ, բայց երկնքումն էլա երսր մի քեզ կտեսնի՛մ, մի ճտովդ կընկնի՛մ, ա՛յ քո անմեղ ջանքն մեռնիմ:

Ա՛խ, սի՛րելի Հայ, էս բաները լսելիս, ինչ ունիս-չունիս, տո՛ւր, որ քո ազգը քիչ-քիչ մեկ լավ օր քաշի: Սրանք են, որ դռնեդուռը ման են գալիս, ողորմություն խնդրում, որ գնան, իրանց գերիքն ազատեն, որ էս դառն ժամանակին Բալազիդ կամ Ղարս ծախել են, որ մյուսներին պահեն: Որդուդ նայի՛ր, աստծուն փառք տո՛ւր, որ քո առաջին խնդալով, խայտալով խաղում են: Ա՛խ, քո դուռն էկողի ցավն իմացի՛ր, մի՛ երեսդ դարձնի՛ր: Սրանք տանից, տեղից ընկած, որդուց, օղլուշաղից զրկված, սոված, ծարավ՝ քե՛զ են ապավինել: Մի՛ ասիր, թե թամբալ են, բանից փախչում են, սրանց ամեն մեկի սրտումը հազար թուր կա ցցված:

Սրանց ուտելիքն էր խոտը, ծառերի կնեպը, թուփը ու իրանց սատկած տավարի ջամդաքը, չունքի մորթիլ չէ՛ր կարելի էսպես ժամանակին: Մեկ արտ ոռատ գալիս կամ մեկ խարաբա գեղ տեսնելիս՝ հենց իմանում էին, թե դրախտն են գնում, չունքի լավ-օսալ, էլի մեկ բուռը ցորեն յա մեկ պտղունց գարի ճարում էին ու հենց էնպես բովում, աղանձում, հատիկ անում. աղը հո դհաթ էր: Էսպես էին քոչում մեր խեղճ, ողորմելի խալխը. չունքի ղզլբաշն իմացել էր, կամ ինքն էր ուզում ոսի հետ կռիվ բաց անի, ուզում էր, որ թե երկիրն առնեն, խալխն էլա չի՛ կորցնի, որ տանին Թեհրան, իրանց ծառա շինեն՝ յա թուրքացնեն, յա հողի հետ հավասար անեն:

Ա՛խ, հոգիս դուս ա գալիս, ընչի՛ հին դարդերս էլի մորոգեցի, ընչի՛ էս բանին ձեռք տփի:

Էսպես՝ տասը-տասըհինգ օր քաշեց, որ Երևանու էլիգը

կեսվեկես էլած, ծեծված, ջարդված, կոտորված՝ որը քրդի, որը դարափափախի ձեռը եսիր գնացած՝ կեսը Ղարսա հողը մտավ, կեսն էլ Մասսա սարի էն կողմն անցկացավ, Բայազիդ գնաց, բայց ո՞ւմ մոտ, ո՞ւմ տունը, աստված ո՛չ գիտե: Էջմիածնա միաբանքն էլ ցրվեցան: Առաջին եպիսկոպոսը՝ Եփրեմ, Բարսեղ, Հովհաննես⁶⁷՝ այժմյան կաթողիկոսը ու այլք, վանքի զարդն առան, Էկան բերդը: Հինգ-վեց օր էլ է՛ս քաշեց, ընչանք թուրքի մհաշիլը նրանց կցրվե: Գրքատուն, ամբար՝ որը դարտակեցին, որը փակեցին: Էրկու <հարյուր> ջանիցը հինգն էլա չմնացին, որ սուրբ տաճարին ու Աթոռին պահպանություն անեն, էն էլ ծերացած, ոտից-ձեռից ընկած հաբեղա, վարդապետ էին, որ լավ համարեցին իրանց չոր գլուխը Է՛նտեղ վեր դնեն, ուրտեղ որ էն-քան տարի ծառայություն էին արել, քանց աշխարքն աշխարք ընկնին կամ ճամփին մեռնին:

Բագի խեղճ մարդ էլ է՛սքան հեռու տեղիցն ու Է՛նքան վտանգավոր ճամփերով՝ գլուխը փեշն էր դնում, օղլուշաղն ուրշի յա աստծուն պահ տալիս, ետ դառնում, գալիս, որ համ իր բաղերին ու հանդին, համ իր հարևանների մլքին օրոն անի, ջրի, պահի, որ չի՛ չորանան: Էս խեղճերն էլ ցերեկը փշերի տակին, քոլերի միջումն յա քարափներումն էին տափ կացած, ու գիշերը՝ մութը գետինն առնելիս, ոտ ու շփլթու կտրվելիս, մահվան դողով ու քրտնքով դուս էին գալիս, իրանց բաղերը, հանդերը ջրում, իրանք էստեղ հալվում, մաշվում ա՛խ ու վա՛խ քաշելով, իրանց ողորմելի օղլուշաղն՝ էն դարիք երկրներումը: Շատը հենց իմանալով, թե ոտը խաղաղվել ա, որ դուս չէին գալիս, իսկույն հարամին բկին չոքում, գլուխը կտրում, հոգին առնում էր: Գլուխը դառել էր մեկ սոխի գլուխ, ինչպես որ ասում են: Սար ու ձոր հարամով, գողով, ավագակով լցվել էին. դուշը երկնքիցը վեր էին բերում: Օղը ապականվել էր ջամդաքի հոտով, ու հարամի դշերը, որ աշխարքի տակիցն ասես, թռել, էստեղ էին հավաքվել, որ իրանց փորը կշտացնեն: Զուր ասես՝ մարդ էր բերում, քամի ասես՝ մարդահոտ. քար չկար, որ սրինաթաթախ չլլեր էլած: Երկինքը պեղացել, մըտիկ էր անում, որ տեսնի, թե ի՞նչքան չարություն մարդ կարա անիլ, որ Էնրգյորա նրա պատիժը տա:

Էս ժամանակին էր, հունսի ...*-ին 1825-ին*, որ արինակեր Հասան խանը՝ սարդարի փոքր ախպերը, որ հազար անմեղ զլուխ կերել, հազար տուն քանդել, քաղաք, գեղ ավերել, Ղարս ու Բայազիդ հինգ-վեց անգամ ոտի տակ տվել, Արզրումա սարասկյարին խղճացրել՝ աշխարհ ձեռին զվիրն էր բերել, ոտը բարձրացրեց, որ գնա, Պետերբուրգն էլ առնի, ավերի, Թիֆլիզու սիրում օղլուշաղը իրան գազան զորացը մատաղ անի, հրամայեց Նադիխանին, որ իր դարափափախները ու մսկլուն վերցնի, գնա, Ղազախու բերանը բռնի. քրդերի գլխավոր Օքյուզ ադին էլ դրկեց⁶⁸ Ղարսա սնըռը, ու ինքը իր սարվազներովը, ղոնշունովը գնաց Ապարան, որ Փամբակու վրովը, ֆոսանդ ճարածին պես, ռուսի սահմանը անց կենա: Բերդերը բոլոր դայիմացրին, Երևանումն ու Սարդարաբադումը, որքան հարկավոր էր, զորք ու ջաբախանա թողին ու մնացածը հետքները վերցրին:

Ո՛վ էս սհաթը Երևան էր մտել, հենց կիմանար, թե ջրհեղեղը նոր սւ էկել, աշխարհս քանդել: Ապարան դառել էր մարդի դասաբխանա: Օր չէ՛ր ըլում, որ սարից, չոլից մարդ չի՛ բռնեն ու Հասան խանի առաջը չբերեն: Ամեն զլուխ բերող նրա աջու ձեռն էր դառնում, փեշքաշի տուտը Ղարս էր հասել: Առանց մարդ սպանելու մեկ օր աչքը չէ՛ր կացնում: Տեղիցը վեր կենալիս, նամազը պրծածին պես, առաջին գործն էն էր, որ ջրատար, մոլորած եւրոների, որ էստեղ-էնտեղ ճանկում, բերում էին, կամ աչքըները հանի, քիթ ու պոռնկը կտրի, կամ ոտն ու ձեռները կտրիլ տա, կամ կտրատած ձեռները դադած եղի պղնձի մեջը կոխիլ տա, որ արինը կտրվի, կամ իրանց սաղ-սաղ փառչալամիշ անի: Նադիխանի ու Օքյուզի ղոչաղ ծառերը հրաշք էին գործում:

Բոլոր Ղազախ-Բոռչալու ղոնմիշ էր էլել, շատ էսիր սրանք էին բռնում իրանց միջիցը ու դզլբաշի ձեռը տալիս: Ծամփա ասես, վելադություն ասես՝ սրանք էին անում ու թշնամուն կամ իրանց մեջը բերում, կամ իրանք խեղճ հայերի աունն ու տեղը թալանում: Ծատ անգամ էն մարդի, որի հետ որ աթաղան, բաբաղան, մուղարար, տարերով նստել, վեր էին կացել, հացը կերել, հարևանություն արել, գալիս էին ափաշկարա, օրը ճաշին

* Բնագրում ամսաթիվը չի՝ նշված, իսկ թվականը պետք է լիներ՝ 1826.—

տումը կտրում, ունեցած չունեցածը վերցնում ու հետն էլ ասում, որ՝

— Մենք տանինք լավ ա, քանց թշնամին. մենք ձեր դոստոն ենք, մենք ուտենք ձեր մալը, թե չէ՝ թշնամին կգա, կտանի:

Է՛սքան բանն անց էր կացել, խորամանկ պարսիկքը իրանց բանը էնպես էին գողի պես սկսել, որ մեր կողմը ո՛չինչ խաբար չկար: Էսպես անօրեննություն շա՛տ էր պատահում: Շատ տարի, Ղարսա կամ Բալազդու վրա գնալիս, էս օրը հագիր էր: Ապարանը ամեն տարի էր դուս գալիս սարդարը իր ղոնշունովը, իրեք ամիս մնում, Փամբակու մեծավորին փեշքաշ ուղարկում, իր մոտ հրավիրում ու հազար օրթումով հավատացնում, թե ոուսը քանց նրան էլ մեծ բարեկամ չունի: Էս էր պատճառը, որ Փամբակու իշխող մեծավոր իշխանն և գորապետն՝ Սավարզամիրզա⁶⁹, ո՛չինչ կասկած չէ՛ր տանում: Ղորդ ա, էստեղ-էնտեղ տավար, եսիր տանում էին, ամա էս բարի սովորությունը էսօր էլ ունին մեր պատվական դրացի Ղազախ-Բոռչալուն: Էսօր էլ են մարդ սպանում, թալնում, կոտորում, նրանց բան ու գործն է՛ս ա միշտ: Էստուր համար զարմանք չի՛, որ ո՛չ ոք մեկ չար բան չէ՛ր մտածում, թե Երևանը քոչում էր. նրանք հավատացնում էին, թե սարդարը ուզում ա գնա Արգրումու վրա: Ղալաբանթղ հազար անգամ էր պատահել, էս նոր բան չէ՛ր, ու նրանց աղալարները էնպես էին Սավարզամիրզի սիրտը ձեռք քցել, որ ինչպես ուզում էին, էնպես էին շուռ տալիս: Բազի հաչ էլ, որ Երևանիցը, իր բարեկամներիցը գիր էր ստանում՝ ու գիտեր, թե բանի զորությունն ի՞նչ ա, ձեռն հանելիս՝ Ղարաքիլիսումը վրեն ծիծաղում, ռխին խփում էին ու վախլուկ հաչ կանչում: Աղալարները մեծավորի դուռն ու շեմը էնպես էին բռնել, որ մեկ հաչի չէին էլ թողում, որ շունչն էլա հանի:

Էլի Փամբակու հայերը պարսից խորամանկությունը լավ իմանալով և իրանց քաշած դառն օրերը միտք բերելով՝ ամեն տեղ պատրաստություն էին տեսել: Համամլու, Պարնի գեղը, Գյումրի, որը բերդ ուներ, պատերը շինել, մեջն էին մտել. Խլղարաքիլիսեն բերդ ու էր չունենալով՝ սելեր ու գութան իրար վրա էր դրել, սանգար կապել.— ունեցած-չունեցած էնտեղ <էին> դալիմացրել, գեղարենքն էլ իրանց մեջ առել, ինչ հին ժամանակից թուր, թըվանք ունեին, հավաքել, տղամարդիկը գիշեր-ցերեկ ասպաքավորած՝ օղլուշաղը էնտեղ էին հավաքել, տավարը բերդի տակն

արել, որովհետև նրանց մեծ հարստությունը տավարն ա, գիշեր-
ցերեկ դարավուլ էին քաշում. հանդն էլ բազմությունով էին գնում.
ճամփեքը համարյա՝ թե փակվել էին. շատ գիշեր, շատ վախտ էլ
Քրիստոսի խոսքին չէ՛ին մտիկ անում, մեկ թուրք աչքը թեքելիս,
գլուխը հետն էր թեքվում. չունքի յալաղի ժամանակն էլ էր:

Թուրքերը լավ էին իմանում, թե էշը ո՞րտեղ ա կորել, ու ինչ
տեղ ուզում էին, որ իրանց գազանությունը բանացնեն, իրանց
արիւնը իրանց սիրտն էր թափում, չունքի, թե քիչ, թե շատ, էի
Փամբակու, Լոռվա, Ղարաբաղու, Մշու, Բայազդի հայերը սա-
րում, չոլում մեծանալով, շատ տերտերի ու ժամի ձեն չլսելով՝
մինչև էսօր էլ իրանց սոպոության հետ են քաջ տղամարդության
հոգին էլ ունին, որը որ ունեցել են մեր անհաղթելի նախնիքը,
ու տեղն ընկած վախտը է՛լ ավետարանի ու վարդապետի խոսք
նրանց չէ՛ր վախացնում, թե որ արին վեր ածեն, դժոխքը կեր-
թան, ու մատը բարձրացնողի սաղ ձեռն էին բերանը կոխում,
հավ թոցնողի՝ գլուխը թոցնում: Էս էր պատճառը, որ թուրքերը
էսօր էլ էս ձորերովը անց կենալիս՝ էնքան քարափի լեռ քարիցը
չեն վախում ու գետի կատաղությունիցը, որքան քարափների բեր-
նիցը, որդիանց որ քաջ լողըցոնց թվանքի գլուխն, կամ մեկ լող-
րանի թուրը անցկենողի գլուխը սոխի պես էին թոցնում ու իրանց
թշնամու մարմինը իրանց ձորերին մատաղ անում:

Մենակ դստեղեցի Մեհրաբյան-Թումանյան Հովակիմի անու-
նը⁷⁰ քարերը սասանացնում էին: Սաքերի, ձորերի միջում մեծա-
ցած՝ գազանի ու հարամու աքիւնը թափելով էր նրա ոսկորները
հաստացել: Երկու տղամարդ նրա մեջքը չէին կարող խտտել.
հինգ մարդ նրա մեկ ձեռը չէին կարող ոլորել. նրա գլուխը մեկ օր
չէր ցավել: Կերածը մեղր ու կարագ էր, հաքածը՝ շալ, կոխածը՝
ծաղիկ ու չիման. աղբրների վրա, մեշի միջումն էր նա օրորոցու-
մը աչքը բաց արել: Նրան ի՞նչ կղիմանար: Ածղհա՛, ու ո՛չ տղա-
մարդ: Չորս գազ ու կես բոյն էր, գազ ու կես՝ թիկունքի լենու-
թյունը, դռը՝ ապառաժի պես հաստ. ամեն մեկ ձեռը՝ մեկ սնի
դղար, ամեն մեկ ոտքը՝ մեկ կաղնու ճուղքը, շլինքը՝ մեկ ծառի քո-
քի հաստությունով. երեսը մազն էկել, կոխել, երկու թիզ ճակա-
տի տակին սև-սև ունքերն է՛նպես էին բռնել ու նրա արծվի աչ-
քերն ու քիթը կոխել, ինչպես կարկտախառ ամպը՝ գիշերվան
աստղերը: Քիթ ու պոունկն էնպես էին մազի միջումը կորել, ինչ-
պես մեկ ապառաժ քար՝ ջանջալի թփի միջումն: Ութ ախպեր ու-

ներ, մեկը քանց մեկը ածղհա. ամեն մեկը հինգ-վեց որդի ունեին, շատի չէ թե հարսանիքն էին մենակ նրանք տեսել, թոռներն էլ մեծացրել՝ առաջներին խաղում, սարն էին գնում: Վաթսուն ջանից ավելի հոգի՝ հարս, փեսա, թոռը, ծուռը, առավոտը նրանց տանիցը դուս էին գալիս, բիգունը մթանը՝ նրանց օճորքի տակին քնում, ու նրանց հարյուր տարեկան հեր Մեհրաբը⁷¹ դեռ երեկվան երեխի պես բեղերն օլորում, միրուքը սանդրում, փափախը կոտրում, նրանց հետ պար գալիս՝ պար գալի, խաղալիս՝ խաղում, սազ ածելիս՝ շատ անգամ ինքը սազը ձեռներիցը խլում, ածում, խաղասում, քսան տարեկանի պես ձիու վրա նստում, ասպաբը քցում, ու սարերում, ձորերում, չադրի տակին՝ պարզիկա գիշերը որդվոցը իրան արած քաջությունները, լողըցոնց տղամարդությունը, հին-հին բաներից, լազգուց, թուրքից հազար բաներ պատմում ու նրանց էլ ասում, որ քնած վախտին էլ՝ թուրը ու թվանքը բարձի տակին, ոտը գերեզմանումը՝ թուրը յա կողքին քաշ, յա պատանի հետ պետք է հողը տարած, որ անբան քարն էլ իմանա, թե ո՞վ ա իրան տակին թաղած:

Էն Հովակիմը, որ մեկ օր լեղանալիս մեշիցը հանկարծ որ տասնըհինգ լազգի չե՛ն դուս գալիս, ինքն էլ կամաց-կամաց ջրիցն ա դուս գալիս ու որպես թե նրանց բանի տեղ չի՝ քցում, սկսում ա շորերը հաքնիլ: Լազգիքը սովորաբար մարդ չեն սպանիլ, սաղ-սաղ կբռնեն, որ տանին, ծախեն: Հենց որ մոտանում են, ձեն ա տալիս էս ածղհեն, որ կանգնին, ու ասում, որ տղամարդությունն էն չի՛, որ տասնըհինգ մարդ մեկի վրա թափին, բռնեն. թե սիրտ ունին, իրանք մեկ կողմը կանգնին, ու ինքը մեն մենակ՝ մյուս, թե որ հաղթեն, թո՛ղ էն ժամանակը բռնեն, տանին: Լազգիքն էլ իրանց գլուխը էնքան ցած չհամարելով՝ համաձայնում են: Ասլան Հովակիմը թվանքը քցիլն ու առաջի մարդին սպանիլը մեկ ա անում: Էս դղում վախառ էլ գլուլի չի՝ մտիկ անում, թուրը հանում ա, մեջըներն ընկնում. թշնամին երեսը ետ ա շուռ տալիս: Տասնըչորսին էստեղ-էնտեղ, որը թրով, որը փշտովով սպանում, աղցան ա անում: Վերջին տասնըհինգերորդն էլ որ էսրի պես չոքում, գլուխը դեմ չի անում քաջին, նա թևիցը բռնում, վեր ա կացնում ու ասում.

— Քեզ քո կյանքը կբաշխես, որ գնաս ձեր երկիրն ու ձեր քաջ ազգին պատմես, որ իմանան, թե մենակ իրանք չի թուր խըփիլ գիտեն, թե Լոռու Դսեղ գեղումը էսպես, ինձ նման հազարա-

վորները կան, որ թե ուզենան, ձեր երկիրը ոտի տակ կտան, կջնջեն: Ամա՛ հայ քրիստոնեին մեղք ա էսպես բանը, մեր օրենքը չի՛ հրամայում:

Է՛ս Հովակիմը, է՛ս Լոռու ձորերի աստվածը, է՛ս սարերի արծիվը, է՛ս մեշեքանց ապանը մենակ հերիք էր, որ մեկ քարի քամակից ձեն տալիս կամ մեկ չոլում ռաստ գալիս՝ հարյուր թուրքի լեղին օտր կտրի, աչքերը սևանա: Էն սևացած, արևի, անձրևի տակի մուր դառած ունքերի տակիցը որ աչքը չէ՛ր ընկնում մարդի երեսի, էնպես էր իմանում, թե կայծակն ա խփում, ու սար ու ձոր սևանում էր գլխին, գետինը պտտում, ու ինքը քար դառած մնում առաջին կանգնած: Քանի՛, քանի՛ էսպես դոշաղ տղերք քամակին քցած, գիշեր-ցերեկ, էս ահագին հսկայն վիշապի պես պտտում ու Լոռվա ձորերումը ու սարերի գլխին դուշը երկնքիցը վեր էր բերում ու ձիավորի ոտի իզը բռնած՝ ձորեձոր ընկնում, ֆորսի քամակիցը հասնում ու տասը ձիավորով հարյուր ձիավորի մեջը ճղում, ջախքբուրդ անում ու էլի, թուրքերի օբեքանց միջովն անց կենալիս, մեկն էլա չէ՛ր սիրտ անում, որ աչքն էլա խեթի: Ինչպես ինքն էր մեծացել, էնպես էլ իր բոլոր ընկերքը. ամեն մեկ տան հինգ-վեց տղամարդ կար, զարթոնե մեծն ու պստիկը, ու սարի չափի-չիմանը, ծաղիկն, աղբյուրը, ձորի քարն ու էրն էին նրանց ջանը, նրանց հոգին, նրանց կյանքը:

Տաք յորդան-դոշակում, բուխարու առաջի, շկոլում կամ եկեղեցում չէին մեծացել, որ նրանց սիրտ կամ ահ ունենա, կամ թուլություն: Շատ անգամ, անձրև, կարկուտ գալիս էլ, նրանք չոլումը կամ սարումը, քնած տեղը գլուխ չէին բարձրացնում, որ քումը չփախչի: Նրանց բուխարին, նրանց փեշը իրանց տան մեջտեղն էր, ուրտեղ որ երկու-իրեք ահագին ծառ իրար վրա քցած՝ առավոտեց մինչև մութը էրվում ա, ու իրանք էլ դռները բաց, շատ անգամ շապկանց, գլխաբաց, կրակի չորս կողմը կտրում, խմորը գունդ են անում, միջումը թխում, միս են խորովում, հաց են ուտում ու իրանց ձորերի պատմությունն անում, ու որդին հոր ճտովըն, ախպերը քվորը խտտած՝ ամմեղ գառի պես բոլորեշուրջը վեր թափում, քնում: Մեկ դալմադալ ընկնելիս՝ իրանց ապրանքը, օղլուշաղը տանում էին էնպես քարափների, էրերի մեջ պահում, որ դուշը սիրտ չէր անիլ մոտ գա: Հագար գազ բարձր, սուր քարափների դոշին, որ մարդ մտիկ անելիս աչքը սևանում էր, սըրանք էնպես էին ման գալիս, էնպես էին էս քարափի ծերիցը

օձի պէս է՞ն քարափի ծերին թռչում, որ հեռը վանց տեսնողն էլ մնում էր քար դառած, աչքերը կալնում էր ու դուզ գետնի վրա չէր կարում ահիցը կանգնիլ, նստում: Տավար, ոչխար, իլիսի՝ մեշեքն էին քշում, ու իրանք, թվանքները ուսըներին, սար ու ձոր ոտի տակ տալիս:

Ա՛խ, ի՛նչ տեղ են կենում, որ էսպէս չանեն, էս սիրտը չուցենան: Վարժատան չէին՝ մեռած բառով, անհոգի շնչով, թույլ լեզվով լսել, թե Հայք էլ վաղ թագաւորոյթյուն ունեին, որ կամ չհավատալին, կամ քունները վարպետի անսիրտ պատմութեան վրա տաներ: Ամեն քար նրանց համար գիրք ա, ամեն ապառաժ՝ նրանց համար պատմություն, ամեն հին բերդ, քանդված մատուռ կամ եկեղեցի, որ սար ու ձոր լիքն են էստեղ, նրանց համար կենդանի վարժապետ: Ամեն գերեզման, ամեն արձան՝ նրանց համար կենդանի վկա ու պատմագիր: Լոռվա անառիկ բերդը, Սաճահնա և Հախպատի վանքերի պատերը⁷², տաճարները, սրահները՝ նրանց համար վարժատուն: Իրանք, դորդ ա, կարդալ չեն գիտիլ, սո՛ւա սրտներումը երկաթի պէս ա գրված, թե էս է՛ն սուրբ հողերն են, է՛ն սուրբ դաշտերն են, ուր մեծն Ծահն-շահ Աշոտ Բագրատունի, Մմբատ...⁷³*, Զաքարե Սպասալար⁷⁴, Արդությանց-Երկայնաբազուկ Ռախնիք⁷⁵, Հովհան Օձնեցի իմաստասեր⁷⁶, Հովհան Երզնկացի⁷⁷՝ արծփի պէս խոյանալին, առյուծի պէս մոնչալին ու հրեղեն սերովբեի ու քերովբեի պէս թուրը ձեռ առած՝ երկրումս Օմարի⁷⁸, հոճաց, Զինգիզ խանի⁷⁹, Թամուրլանգի⁸⁰ հոգին քաղեին, երձնքումը իրանց համար անմահութեան բրաքիոն, անթառամ պսակ պատրաստեին:

Նրանց ծնկները՝ սրանց գերեզմանի վրա չոքում. նրանց երեսը սրանց սուրբ հողին ա քսվում. նրանց ոտը սրանց երեսին ա կանգնում. նրանց արտասունքը սրանց հողի հետ ա խառնըվում: Նրանց սերմը՝ սրանց հողիցն դուս գալիս, իրանց պահում: Նրանց տան հիմքը՝ սրանց գերեզմանի վրա շինած: Նրանց մեռելը՝ սրանց միջումը պառկած:

Քնից են վեր կենում, սրանց գերեզմանը տեսնում,
Թե՛ քուն են մտնում, սրանց երազում տեսնում,

* Բնագրում տեղ է թողնված Ռամապատասխան թագավորի պատվանունը (ամենայն Ռավանականությամբ՝ տիեզերակալ), կամ մեկ այլ անուն (թերևս՝ Կյուրիկե) Ռետագայում լրացնելու համար, բայց... մոռացվել է:—Պ. Հ.

Թե՛ օրթում ուտում, նրանց անունը տալիս,
 Թե՛ ճամփա գնում, նրանց աղոթքն հիշում,
 Թե՛ կոիվ անում, նրանց հիշում, հաշտվում:
 Ո՛վ սուրբ լեռինք, ձորք, Հախպատ, Սանահին:
 Ձեր սուրբ դաշտերումը, սարերի գլխին
 Հազար արձաններ անմոռունչ կանգնին,
 Կենդանի լեզվով՝ խեղճ անցավորին
 Կանգնացնեն, ասեն, էլ լույին կրկին.
 «Լա՛ց քո տարաբախտ արևդ ու օրերդ,
 Լա՛ց քո խեղճ գլուխը, բա՛ց էդ ձեռներդ.
 Տո՛ւր հոգիդ անտեր, ողորմելի հաչ,
 Էլ ո՛ւր ես գնում, գլխիդ չտալիս վա՛շ:
 Կա՛ց, մեռի՛ր էստեղ, թո՛ղ քո ոսկերքն էլ
 Էս սուրբ հողումը կարենաս թաղել,
 Որ մարմինդ էլա էս աշխարքումը,
 Քո թագավորաց հետ ու միջումը
 Էստեղ դինջանա, չունքի քո աչքը
 Կարոտ մնաց, տեսնի քո ազգի փառքը:
 Նրանց սուրբ հողն էլա թո՛ղ երեսդ ծածկի,
 Նրանց կոխած թուփը քո գլխիդ ծաղկի»:

Թողե՛ք, սրբազան նախնիք մեր հզոր,
 Ձեր սուրբ երեսին զոհ լինիմ մեկ օր.
 Ա՛խ, շունչս քաշելիս կրակ է դուս գալիս,
 Աչքս խփելիս, բերանս բանալիս
 Ա՛խ ու ո՛խն ու լաց ամպի սլես խառնվում,
 Էրում, խորովում, օրս խավարացնում:
 Ա՛խ, ի՞նչ օգուտ, որ սիրտս ա իմանում,
 Աչքս չի՛ տեսնում, հոգիս մխիթարվում.
 Ընչի՞ ձեր թնի տակին չծնեցի,
 Ընչի՞ ձեր շունչը ես էլ չլսեցի,
 Որ վեհ Ծահնդահն կամ Մեծն Սմբատ
 Ինձ էլ ասեր, թե «Որդի հարազատ,
 Տե՛ս, է՛ս հողումը ես քեզ սրահեցի,
 Տե՛ս, է՛ս հողումը քեզ մեծացրի.
 Ծունչդ տո՛ւր, հոգի՛դ, բա՛յց քո հայրենիք
 Մի՛ տար թշնամյաց ու անաշխարհիկ

Ընկնիլ սարեսար, լինիլ չարաչար,
Ծառա օտարաց կամ գերի անճար»։—

Փակի՛ր երեսդ, աստվածասեր հա՛յ.
Վա՛յ մեր խեղճ օրին, մեր արևին վա՛յ.
Ամպել ա երկինքը, կայծակին տալիս,
Սար ու ձոր գոռում, հառաչում, լալիս:
Էլ ի՞նչ ես կանգնել ձեռդ ծոցումդ,
Մնացել շվարած՝ շունչդ բերնումդ:
Փախի՛ր, ա՛խ, գլուխդ ա՛ն, կորի՛, որ պրծնիս,
Էս հեղեղին դու ի՞նչպես դեմ կընկնիս.

Ա՛խ, ի՞նչպես էսօր դու գլուխ բարձրացրիր,
Բարի՛ արեգակ, երեսդ հանեցիր.
Ա՛խ, ի՞նչպես սիրուն աչքդ չխփեցիր,
Ու էդպես հանդարտ էկար, կանգնեցիր,
Որ վկա լինիս անիրավ գործքի,
Որ լիս տաս խավար, անողորմ սրտի
Ու խեղճ հայերի արինն ու ջանը,
Էրված տան ծուխը, փակված բերանը,
Կտրատված լաշը, սուգ ու շիվանը
Լսես, տեսնիս, գնաս էլ ետ քո բանը:
Անողո՛րմ երկինք, ի՞նչպես դուք թողիք,
Ո՛ր ձեր ամպը, կայծակն էսօր պահեցիք.
Չարի սուրը տեսած՝ դուք պապանձվեցիք,
Ու փուլ չի՛ էկաք, ձեր տակով չարիք:
Ապառա՛ծ գետին, անկո՛ւշտ հողի փոր,
Հենց անմե՛ղ արին կուգեիր էսօր.
Հենց անշո՛ւնչ մեռել ծոցդ կտանիս,
Ծնողաց սուգ, շիվան ո՛չինչ համարիս:
Աչքերդ կխփես, բերանդ կբանաս,
Թշվա՛ն դու գազան, որ ո՛չ կշտանաս:
Ի՞նչ կըլեր էսօր մեկ գութ շարժեիր,
Անմեղի լացն, սուգն դու մեկ լսեիր,
Քո չար որդիքը հրով խրատեիր,
Բարի որդիքդ սիրով պահեիր,
Քեզ քանդողի դու տունը քանդեիր,

Քեզ շինողի դու տունը շինեիր,
Ու հազար անմեղ հոգի գառնի պէս
Սրի չտալիր, խնամեիր մոր պէս:

Ետ դա՛ն, անցավոր, ա՛խ, ո՛ր ես գնում,
Մի՞թե արշան ծովն առաջիդ չտեսնում.
Քո խեղճ ազգի ջանն առաջիդ ընկած,
Արինաշաղախ հողումը քցած՝
Մանուկն մոր սրտին, հարսը փեսային,
Որդին հոր դռնին, աղջիկն մոր ծծին,
Կաթը բերնումը, ձեռը նրա ծոցին,
Արլուն, արտասուք, մազ ու հող, երես՝
Իրար շաղախված, հեճաճ ծաղկի պէս,
Քուշա, ճանապարհ բռնել են, փակել,
Քար ու դաշտ ու հող արնով լվացել,
Քեզ ձեն են տալիս, թե որ անց կենաս,
Խլարաքիլսեն մտնես կամ դուս գաս,
Աչքդ մեկ գետնին քցի՛ր ու ասա՛,
Աղլուխն ա՛ն ձեռդ, սրբի՛ր ու մեկ լա՛.
Չոքի՛ր էն հողի, է՛ն դաշտի վրա,
Նայի՛ր երկինքը ու լա՛ց, սուգ արա՛,
Հիշի՛ր նրանց հոգին, պահի՛ր քո մտքում.
Թե մեկ ազգ իրան, որ էս աշխարքում
Չի՛ պահի, թշնամուն ինքը գերի կըլի,
Աստված էլ նրան աչքից կրքից:—

<9>

— Տղե՛րք, օյաղ կացե՛ք, թվանքներիդ հագրեցե՛ք, երեխեք,
օղլուշաղ բերե՛ք, մեր տունն ածեցե՛ք,— ասեց Խլարաքիլիսի
իշխան պարոն աղա Սարգիսը,— փառք աստուծո, տունս հացով
լիքն ա, գոմեշներս՝ կթի. ինչ ունիմ ձերն ա. ձեր տավարն էլ,
որքան կարեք, գեղին մոտացրե՛ք. սիրտըներիդ պինդ պահեցե՛ք,
քանի իմ ծուխս չի՛ կտրվել, ու շունչս՝ բերնումս, ջանս ձեր ու-
ղուրին դրած ա: Մենք քրդերի ու օսմանլվի հետ ենք քյալլա տը-
վել, էս անսիրտ աջամն ի՞նչ ա, որ մեր առաջին դիմանա: Եր-
կինքն էլ որ թռչին, տեղվետեղ կրակ դառնան, մեր մազին չե՛ն

կարող դիպչիլ: Մեր ոսկորները Ղարսա սարերումն ա պնդացել, սրանք ո՛վ են, որ մեզ դեմ կենան: Թո՛ղ մեզ բարութ ու թվանք չտան, մեր տղամարդությունը մեզ համար բարութ էլ ա, պարիսպ էլ: Լավ նայեցե՛ք, որ սելերը դայիմ ըլին: Մեկ դաստեղ գնա գեղի էն կողմը, մեկ՝ էս կողմը. թե կարաք, մեծ ու պստիկ խառը կանգ-նեցե՛ք, որ թշնամին հենց իմանա, թե մենք շատվոր ենք, ու սիրտ չի՛ անի, մոտանա: Ես իմ դաստովը ճամփի առաջը կկտրեմ. առաջի դուս էկողի ճակատը էս գյուլին դուրբան կանեմ, որ հրես քցում եմ:

Ղորդ ա, շատ օր մտիկ արինք, չէկան, ամա էս գիշեր ինձ սուրբ Սարգիսն երևաց, ծառա եմ նրա սուրբ գործությունին, ու ինձ ասեց, որ մեր գլխի թաղարեքը տեսնինք: Սուրբ Սարգսի անունը տվե՛ք⁸¹, աղոթք արե՛ք, հրես աղոթարանը, որտեղ որ ա, կբացվի: Նրանք մեր ազգի արինը շատ են վեր ածել, մեկ օր էլ մենք նրանց արինը վեր ածենք: Հայ չե՞նք, հայի արարչին մեռ-նիմ, նրա ամեն մեկը մեկ սարի բարեբար ա: Էլ վախտ մե՛ք կորց-նիլ. կապրինք, էլի մեր հողումը, մեր օղլուշաղի հետ կխնդանք, կմեռնինք, էլի մեր ճնջեցելոց հողի վրա արին կթափենք: Վարդանա թոռները չե՞նք, Տրդատա արինը չի՞ մեր սրտումը. Տիգրանի շունչը չի՞ մեր բերնումը: Սար ըլեր՝ կհալչեր, էլի մենք՝ հայերս չե՞նք, որ ամեն տեղ անուն ունինք, մեր հավատը ամեն տեղ գո-ված ա. մեռնի՛մ ձեր արևին, էնպես մեկ քաջություն անենք էսօր, որ աշխարհ ամենայն իմանա: Դե՛, էլե՛ք, Սմբա՛տ, Աշո՛տ, Տի՛գ-րան, էլե՛ք, ձեր խոքուն (հոգուն) դուրբան, տեսնիմ, թե ի՞նչպես էսօր ձեր անունի լայաղ՝ ձեր հունարը նշանց կտաք: Էդպես անուն ունեցողը, սար ըլի առաջին, պտի վրովը թռչի. ծով ըլի, պտի ոտնակոխ տա, ո՛ւր մնա էս քլամալսզ, թուլ աջամը, որ ո՛չ հոգի ունի, ո՛չ հավատ, ո՛չ օրենք: Մեկ մարդ որ մեռոն չունենա ճա-կատին, նրանում ի՞նչ գործություն կըլի: Մեր ձեռը որ թուլանա, աստուծո հրեշտակը, սուրբ Լուսավորչու բարեխոսությունը մեզ քոմակ կըլին, է՛նքան ա մեր հավատի գործությունը:

Տե՛րտեր ջան, վեր կա՛ց, ամենին էլ սրբություն տո՛ւր. դրա գործությունին դուրբան. մեռնի՛նք, հոգու փրկություն ա, ապրի՛նք՝ մարմնի առողջություն: Խոսսովանության վախտը չի՛. աստված ինքը գիտի, որ մեր սիրտն արդար ա: Թե մեռնիմ, ինձ թաղե-ցե՛ք, իմ հոգուս հացը տվե՛ք ու էս ջիվան որդուս պահեցե՛ք: Հինգ որդի ունիմ, իրեք՝ ախպեր, վեց-օխտը՝ ախպոր զավակներ,

հարսն ու թոռը, ամա իմ աչքի լիսը սա ա էլել: Ամենից ավելի սրան եմ ուզել, սիրել: Ա՛խ, թե գիտենաք՝ սա ի՞նչ ցեղից ա: Վա՛ն, ի՞նչ ասեցի, դուք լավ գիտեք: Սա մեր քաջ նահատակի՝ Վարդան Մամիկոնյանի արնիցն ա: Երեխա էր, որ հերնըմերը մեռան, ես սրան վեր առա, ինձ որդի շինեցի, ու ինձ որդուց ավելի համ տվեց: Զուրը որ քցեի, կընկներ. կրակը քցեի, երեսը ետ չէ՛ր դարձնիլ: Տեսնո՞ւմ եք է՛ս լեն ճակատը, է՛ս պարթև բույր, է՛ս արծվի աչքերը, է՛ս գեղեցիկ պատկերը. լսե՛լ եք սրա անուշ լեզուն: Եկեղեցին մտնելիս, հենց իմանաս, հրեշտակ ա մտնում մեր մեջը, դուս գալիս. հենց բռնես՝ արեգակ ա ծագում: Ա՛խ, ամեն մեկ սրան մտիկ տալիս, ամեն մեկ սրա ձենը լսելիս՝ էնպես եմ իմացել, թե սուրբ Վարդանն ա առաջիս կանգնած: Տե՛րտեր ջան, սրան օրհնի՛ր, ձեռդ դի՛ր գլխին. ո՛վ ա խաբար, աղոթա-րանը բացվում ա արնով լցված. սրտովս դառը մտքեր շատ ա անց կենում, ամա մեր հավատը զորավոր ա:

Վա՛րդիկ ջան, արևի՛դ մեռնիմ. քանի շունչս վրես ա, արի՛, մեկ քեզ համբուրեմ, արի՛, էդ սուրբ երեսիդ դուրբան ըլիմ: Թե հողն էլ մտնիմ, էդ արդար ձեռովդ իմ աչքս խփի՛ր. իմ հողը դո՛ւ քցիր, իմ մեծ որդին դո՛ւ ըլի՛ր, իմ տեղը դո՛ւ բռնիր, իմ տունը դո՛ւ հովվիր: Քանի ոտդ իմ շեմումն ըլի, իմ տունը կծաղկի, քա-րերն էլ ինձ պտուղ կտան: Արի՛, երեսիդ մեռնիմ, իմ երկրո՛րդ Վարդան, իմ ազի՛զ Վարդան. գերեզմանումն էլ որ ըլիմ, որ դու գաս, երեսս կոխես, հենց կիմանամ՝ հրեշտակ ա թևերն վրես փռել: Արի՛, արի՛, երեսս ոտիդ տակը, բալքի թե է՛ս ձեռը, որ հիմիկ քեզ խտտում ա, է՛ս աչքը, որ սուրբ երեսդ տեսնում, է՛ս լեզուն, որ հետդ խոսում, էսօր բոլորն էլ լռվին, ու մարմինս քո առաջին անշունչ, անլեզու ընկած ըլի: Լաս՝ ես չլսեմ, սգաս՝ ես չտեսնիմ, չիմանամ: Վարդանի՛ աստված, Վահանի՛ աստված, ո՛վ սուրբ Լուսավորիչ. թե էս ծերացած գլուխը էլ ջեր օր չի՛ պտի տեսնի, թո՛ղ սրա ոտի տակին մեռնիմ: Թե էս հալւոր աչքը էլ արեգակի լիս չի՛ պտի տեսնի, ա՛խ, աստված, քո հողն եմ ու մոխիրը, թո՛ղ սրա ձեռն իմ երեսիս մեկ բուռը հող քցի:

Վա՛րդան ջան, արևիդ մեռնիմ. մի՛ լար, քո արտասունքը սիրտս էրում, խորովում ա: Մի՛ լար, էդ քո հրեշտակի աչքերիդ դուրբան: Քո սուրբ պապի օրհնությունը մեզ վրա ա, սրբի՛ր աչ-քերդ: Մկամ քեզ որ օրհնեմ, ես պտի մեռնի՛մ. քեզ ո՞ր օրը չե՛մ օրհնել, ո՞ր օրը չե՛մ գովել ու երեսդ երեսիս, աչքերս երկինքը

քցել, քեզ ումբր ու արև խնդրել: Արի՛, ո՛րդչակ իմ. արի՛, հո՛գի իմ. իմ տան սին, իմ կենաց գավազան. իմ օրհնությունը հոր օրհնությունն ա: Հոր ձենն աստված թեզ կլսի: Արի՛, քեզ օրհնեմ. վախտը հասել ա, գնա՛ մորդ մոտը. մյուս տղերքանցս սիրտն ա՛ռ, քեզ պահի՛ր: Աստված էս ձեռը, որ մինչև էսօր մեկի մազի չի դիպել, չի՛ թուլացնիլ: Դուք ինձ համար աղոթք արե՛ք ձեր արդար բերնովը: Էս քաջ տղերքանց ջանն ըլի սաղ. արծիվը երկընքիցը վեր կբերենք:

Տե՛րտեր ջան, Պահպանիչդ ասա՛, ավետարանը կարդա՛, մեկ կարճ աղոթք անե՛նք, աստուծո էս սուրբ երկնքի տակին, բալքի թե դհա շուտով մեր ձենը առ աստված հասնի: Երեխե՛ք, չոքեցե՛ք, ծունր դրե՛ք. ձեր՝ էս սհաթի ամեն մի շունչը Աբելյան պատարագի պես⁸² երկինքը կվերանա. հանեցե՛ք թրըներդ, թո՛ղ ձեր հայրն օրհնի:

Տան կտրներին, հալաթի միջին,
Դաշտի երեսին, հողի բաց դռնին,
Երկնից առաջին, աստղերի տակին
Նրանք չոքեցին, նրանք կանգնեցին:
Էրեխանց ձենը, տղայոց լացը,
Ծնողաց սուգը, նրանց մաղթանքը
Իրար հետ խառը երկինքն վերացան:
Հերը որդին օրհներ, մերը գավակն հանձներ:
Մութն ու խավարը քիչ-քիչ հեռանար,
Լիսն ու արևը ծանր մոտանար:
Երկիրը նրանց արտասունքը սրբեց,
Երկինքը նրանց աղոթքը լսեց.
Ուրախ երեսոք տեղից վեր կացան.
Տերտերի ձեռը, խաչն, ավետարան
Ծակատին դրին նրանք, համբուրեցին.
Զեռ-ձեռի տված՝ իրար սիրտ դրին,
Աչքները սիրով երկինքը քցեցին.
Թե մահ էլ, թե կյանք նրանց հանդիպին,
Իրար հետ ապրին, իրար հետ մեռնին,
Իրար հետ արին թափեն ու կովին,
Իրար հետ թաղվին, իրար հետ պսակվին:
Ահ ու տխրություն էլ չէ՛ր երևում.
Երեսն արև՝ լիս դառած փայլում,

Արինն սրտիցը կրակի պէս վառվում,
Հոգին մարմնիցը ձեն տալիս, ասում.
«Էլ մի՛ կորցնէք դուք ձեր ժամանակն,
Գրվեց երկնքումը ձեր սուրբ հիշատակն:
Սար ու ձոր հրեն ոտն են վերցրել,
Գալիս ձեզ վրա՝ ոտնատակ անել,
Բայց ձեր քաջությունն, երկնից զորությունն
Կարեն աշխարքումս թողալ ձեր անունն.
Թե սերն ու հաւատն, հայրենյաց նախանձն
Որքան զորավոր են ու շնորհասպանծ,
Որ մինն հազարին կարա խորտակիլ,
Երկուսը բյուրին՝ կոտորիլ, նվաճիլ»:
Ձեն տվին միմյանց, սիրտ տվին միմյանց,
Օրհնություն առան, գնացին ի բաց:

Բայց անմեղ Վարդանն մինչև էն վախտը,
Շլինքը ծուռը, աչքերը գետնին՝
Մեկ հորը նայելով, մեկ լացը սրբելով,
Մեկ ա՛խ քաշելով, մեկ սիրտը բռնելով,
Խալխին նայելով, սուգը կուլ տալով,
Երկնքին աղոթքը, երկրին արտասուները
Տալով, հանելով՝ մեկ ձեռը թրին,
Մյուսը հոր ուսին, հոր ճտովն ընկած՝
Լար ու մղկտար՝ աչքերը լցրած:
«Անուշ իմ դու հա՛յր, անգին բարերա՛ր,
Իմ կենաց տվո՛ղ, իմ հոգուս դու ճա՛ր.
Մկամ տո՛ւնն կարա իմ ոտը փակել,
Մկամ շե՛մ կարա իմ աչքը կապել:
Մի՛թե էս արինն ինձ դո՛ւ չե՛ս տվել,
Մի՛թե էս ջանք ինձ դո՛ւ չե՛ս բաշխել.
Կարե՛ն դիմջանալ, ինձ հանդարտ թողալ:
Բանտումն էլ ըլիմ՝ ոտս բխովումն,
Մահն իմ առաջիս, սուրն իմ դռշումս,
Էլ քեզ կուգեմ, որ ես իմ հոգիս տամ,
Քո ոտիդ տակին մեռնիմ, հող դառնամ,
Որ ես քո կողքումն, ա՛խ, չըլիմ կանգնած,
Իմ կյանքը քեզ չտամ, հոգիս քեզ առաջ,

Հետո քո ոտը երեսս կոխի,
 Հետո բերանդ իմ հոգիս օրհնի:
 Ա՛խ, հա՛յր իմ, հա՛յր իմ. քո ըմբռիդ մեռնիմ,
 Առանց քեզ մեկ օր թո՛ղ ես լիս չտեսնիմ.
 Մեռնիմ՝ ինձ թաղի՛ր. ապրիմ՝ ինձ պահի՛ր,
 Ինձ տա՛ր քո հետը, ինձ մի՛ սպանիր:
 Տե՛ս, էս սուրը, որ ձևոխս բռնած եմ,
 Առանց թշնամու իմ սիրտս կխրեմ.
 Միճչև քո աչքի, քո տան առաջին
 Հարիր թշնամի քեզ մատաղ չլիին.
 Միճչև էս ձևը քեզ գյուլլա բցողին՝
 Հավի պես չմորթի քո ոտիդ տակին.
 Միճչև էս թուրը հարիր թրավորի
 Ըլինքն առաջին կամ ձիու փորի
 Տակքն չջարդի, էլ ո՛ւր ես ծնա.
 Իմ կերած հացը քթովս չի՞ դուս գա:
 Չէ՛, հա՛յր իմ, հա՛յր իմ, քեզ մատա՛ղ ըլիմ,
 Ինձ էլ տա՛ր հետդ, որ ես էլ կուլիմ:
 Աշխարք իմանա, թե քաջ Վարդանի
 Ցեղն ու բոլոր ազգն՝ անմահ, անվանի,
 Հայրենյաց սիրուն, հավատի խաթեր
 Պատրաստ են զոհ տալ իրանց կյանքն, օրեր»:

— Սեղավն վրա պրծավ, գլուխդ պահի՛ր, Վա՛րդ ջան. տու-
 տը բաց էլավ, մնաս բարով, դո՛ւրբան:

«Ինձ ո՛չ սեղավի, ո՛չ թրի, թվանքի,
 Ո՛չ ամպի կայծակ, ո՛չ ֆրթնա ծովի
 Չե՛ն կարող հաղթել, քեզանից խել:
 Տե՛ս, սֆթա էկողն ի՛մ ֆորսս պտի ըլիլ.
 Թե սելի տակիցն չե՛ս ուզում՝ կովիմ,
 Դուս կգամ դաշտը, մենակ կկանգնիմ,
 Կընկնիմ նրանց մեջը կեծակի նման,
 Դաղըթմիշ կանեմ, ինձ կտամ դուրբան:
 Յա՛ արագահաս զինավոր Սարգիս,
 Քեզ եմ կանչել, դու ղվարթ տո՛ւր ձեռիս»,
 Ասեց պատանին՝ Վարդիկն Հայկազուն,
 Ոտը վեր քաշեց՝ թվանքի ու իսկույն

Ական թոթափել՝ թշնամու գլուխն
Զիւն անուլն ընկալ, լիսը բացվեցաւ:

Կամեցաւ երկինքն՝ ամպերն հավաքի,
Որ էս դառն վիճակն բնաւ չտեսնի,
Բայց արեգակի լիսն, քամու թնն
Առան, տարան նրանց սարերի ետնն,
Որ տեսնին Հայոց քաջության հանդեսն,
Թշնամու հաղթվիլն ու նրանց սև երեսն:
Ինչպես կառաղի գազան՝ Հառան խանն
Թափի տակիցը դուս պրծաւ, հաւաւ.
Ծորագլաւի դռն մթնեց, սևացաւ.
Խլղարաւքիլիսեն մխումը կորաւ.
Հենց բռնես, երկինքն հանկարծ փուլ էկաւ,
Ամպ ու կայծակով քանդեց սար ու ձոր.
Էսպես էր նրանց խեղճ հալը Էսօր:
Տաւարն մեկ կողմից քշեցին, տարան,
Գեղը մեկ կողմից կրակ տվին, առան:
Ինչպես մեկ կաթիլ գարնան անձրևի՝
Սաստիկ մրրկի, քամու ձեռ ընկնի,
Կամ մեկ անմեղ գառը հարիր գազանի
Ռաւտ գա ու մնա կանգնած նրանց միջի,
Էնպես մնացին չորս կողմը պատուած.
Վերևն՝ երկինքը, ներքևն՝ հողը սառած:
Բայց քաջ Հայկազունք սիրտ-սրտի տվին,
Վարդանն մեջ արած՝ իրար կանչեցին.
«Մեռնի՛նք թո՛ղ Էսօր մենք էլ միասին,
Որ սուրբ Վարդանի հասնինք, ա՛խ, փառքին:
Ընկե՛րք, մի՛ վախիք, դուք դռնալ կացե՛ք,
Քամակ-քամակի տվե՛ք, միացե՛ք,
Թո՛ղ մեկ հող, մեկ սուր փրթի, մեզ թաղի,
Միմչև ետին մարդն, մեկն էլա չփախչի»:

Արեգակը կրակ դառած՝ Ալագյազի կողմիցը բարձրացաւ.
աչքերը սրել, երկրի մեջն էր ուզում մտնի, քարերը ճոթռի, որ
պարզ տեսնի մեր ազգի քաջահաղթությունն ու տղամարդություն-
նը: Ամպերի գլխին բոց էր վեր ածում, որ չհամարձակին նրա ե-
րեսը կալնին ու իրանց տեղը տազ արած մնան: Սար ու ձոր սիրտ

ու գլուխ բաց էին արել ու իրանց խոնարհությունը, իրանց ծառայությունը ցույց տալիս: Բայց Խլղարաքիլիսեն է՛ն խավարն էր բռնել, է՛ն շամանդաղն էր պատել, որ աչքը իր առաջը բռանց էր տեսնում: Թվանքի ձենը, թշնամու գոռոցը, ձիանոցն խրխինջը, տավարի բառանջը, գետնի թոզը ու դումանը Շորագյալու դաշտը բռնել, կապել էին: Քրիստոսի խաչի ու Ալու փանջի հոգին ո՛չինչ օր էնպես իրար չէին դիպել, ինչպես էս սհաթը:

Հարյուր անգամ պարսից սևագունդ զորքը զու արին, երիշ քաշեցին, ամեն անգամն էլ հարյուրով կոտորվեցան, իրանք իրանց լաշերի վրովը էլի ետ փախան, շունչ առան, էլ կրկին էկան, էլ կրկին մեկ բուռը խալխի թվանքի համն առան, էլի ամոթով ետ դարձան: Ո՛չ Նաղի խանն էր կարում իր հունարը ցույց տալ⁸³, ո՛չ Օթյուզ աղեն, ո՛չ Սվանդուլի խանը: Ղազախ, քուրդ, սարվազ՝ ինչ տղամարդություն ունեին, թափեցին, ո՛չ նիզամով կարացին, ո՛չ երշով մեկ քանի հողագործի տուն առնեն: Որտեղ մոտանում էին, տան դռներիցը, սելի արանքներիցը թվանքները էնպես էին ճոռում, որ շատ պարսիկ իր ընկերին էր ոտնատակ տալիս: Տա՛վար, ո՛չխար գնացին. արտերի կրակի բոցը և ծուխն երկինքն էր հասել:

Հասան խանը հուսակտուր սկսեց Սահակ աղին⁸⁴ դրկել, որ նրանց սիրով հորդորի, գան, նրան գլուխ վեր բերեն, ոսիցը դոնմիշ ըլթն, իրան հնազանդին, նա նրանց մագին չէր դիպչիլ: Բայց Սահակ աղեն՝ էս երևանցվոց փրկիչը, որ օրը հարիր մարդի գլուխ պրծացնում, գազանի ձեռիցը իր ազգին խլում, պահում էր, օրը հարիր աղքատ հաչի դարդին հասնում ու թուրքիցն ազատում էր, ի՞նչ սրտով պետք էր նրանց խրատ տա, որ աստված թողան, սատանին հնազանդին: Բայց հրամանը ծանր էր. չաներ, հազար հաչի սարվազ ու ձիավոր, որ ղոնշումումն էին, մեկ րոպեումը սուրը կքաշեին: Աղլուխը աչքին դրած՝ մոտացավ էս պաշտելի իշխանը: Նա չէր արտասվում, թե գան, հնազանդին, նա լաց էր ըլում, թե իրանց գլխի ճարը տեսնին ու գազանի ձեռը չընկնին: Հենց հաչի ղոնշունը մոտացավ, Սահակ աղեն՝ նրանց գլխին, հենց բերանը բաց արեց, որ խոսի, ո՛չ թե նրանց դարձնի, այլ խրատ տա ու մխիթարի, հարիր թվանքի բերանը ցցվեց.

— Գնա՛, աջամի հաչ, էդ երեսիդ միռոնին ենք խաթր անում, թե չէ վաղուց ձեր արինը մեր հողը կներկեր, վաղուց ձեր հոգին մեզ դուրբան կըլեր: Լուսավորչուն գնացե՛ք, խունկ ու մոմ վառե-

ցե՛ք, որ ձեզ սաղ-սաղ ետ ենք դարձնում: Մենք աջամի հացը չե՛նք կերել, աջամի ձեռի տակին չե՛նք մեծացել, որ նոքար դառնանք: Դուք մեր թրի հունարը լավ գիտեք, դուք դրադ կացե՛ք, ձեր ի՛նչ գործն ա. թո՛ղ մեր թշնամին մեր առաջը գա, սիրտ ունի, մոտանա, սովորել ա գողի պես գեղեր քանդի, տավար հետ ածի. թե կտրին ա, թո՛ղ իր հունարը ցուց տա: Մենք հազար մարդ չենք ըլիլ, ձեր ղոնշունը քսան հազարից էլ ավելի ա. քանի շունչ ունինք, մեր հողն ու օդուշաղը ձեզ չե՛նք տալ, ե՛տ դառ:

Ինչպես մեկ կատաղած դափլան (վագր), էս բանը որ լսեց Հասան խանն, հրամայեց զորացը, որ թրի, թվանքի մտիկ չանեն. յա՛ էն օրը մեռնին, յա՛ իրանց ամթըր ծածկեն, յա՛ Խլդարաքիլիսեն տակնուվեր անեն, յա՛ իրանք տակովն ըլին: Ինքը թուրը հանած՝ ուզում էր, որ նրանց առաջին գնա ու առաջին թուրը ինքը խփի, սելի սանգարը ինքը կտտրի, ավալի եսրի գլուխն ինքը թոցնի, Օքյուզ աղեն՝ մեկ կողմից, Նաղի խանը մյուսից՝ հազար մուննաթով նրան կակղացրին, որ իր անօրեն կենացը խնայի, իր գլխի պատիվը չի՛ կորցնի, ինքը չադրումը նստի, սարիցը նայի, տեսնի, թե ի՛նչ հրաշք կգործեն նրա ծառեքը. երբ իրանք կմեռնին, էն ժամանակը թո՛ղ գա, որ նրանց արնի ջառը՝ մեն հանի: Խնդրները կատարվեցավ. երկաթի երեսը մի քիչ դինջացրեց, քոսա միրուքը սղալեց ու քավթառ քոսի աչքերը դես ու դեն քցելով, անատամ չանեքը իրար խփելով՝ նոթերը կիտեց, դալլանը քաշեց, որ քիթ ու պոռնկը դեռ ծխով լիքը՝ իր դժոխքի բերանը բաց արեց, որ ինչ հայի ձիավոր ու սարվազ կան, առաջ քցեն, իրանք ետևիցը գնան, որ սրանք կոտորվին, նրանց բարութը հատնի, որն էլ իրանք ետևիցը սպանեն, թե իրան հավատակցին դիմի՜ աճի ու երմի՜ չըլի. կամ թե խլդարաքիլիսեցիք իրանց դավանակիցը տեսնելով՝ թուլանան, թվանք չի քցեն, որ ետո իրանք հանկարծ վրա թափին, սելերը դաղըթմի՜ աճեն ու նրանց ապավինողներին կամ սրով ջարդեն, կամ սաղ-սաղ կրակը դնեն, էրեն:

Հասան խանը մեկ քանի ձիավորով նի էլավ սարը, դուրբիներ առավ ձեռքը, մեկ քարի վրա պըպկեց ու ձեռով արեց: Օքյուզ աղեն իր քրդերովը, Նաղի խանը իր դազախներովը՝ աջ ու ձախ բռնած, Սվանդուլի խանը իր սարվազներովը, Ջաֆար խանը՝

* Բնագրում՝ խանը, որ անուշադրության սխալ է. ուղղում ենք՝ աղեն, ինչպես ամենուր գրված է:—Պ. Լ.

սարդարի մեծացրած փեշղսմաթը (փոքրավորը), իր դոնշունովը, հայերին, ինչպես մեկ սուրու ոչխար, մեջ արած՝ ծեծելով, ջարդելով սկսեցին առաջ խաղալ: Քաջածաղիկ պատանին Վարդան, որ հինգ սհաթումը քառասնից ավելի մարդ կամ սպանել էր, կամ չարալու արել, որ արծվի պես էս կտրից էն կտուրն էր ընկնում ու որին բարութ, որին սիրտ տալիս, մխիթարում, լեղապատառ վազեց, հոր անկաջը մտավ ու լացակրկնած, մազերը պոկելով՝ հորը ցույց տվեց, ճտովն ընկավ, երեսը համբուրեց, ոտները պաշեց, որ չունքի մեկ օր պետք է մեռնեին, թո՛ղ էսօր մեռնեին, սել ու տուն կրակ տալին, օղլուշաղներն էրեին ու իրանք ընկնեին թշնամու մեջը, որ որտեղ թուրը կտորվեր, բարութը հատներ, իրանք էլ էնտեղ նահատակվեին, որ իրանց ազգի վրա ո՛չ թուր քաշեն, ո՛չ թվանք քցեն:

— Ամեն մարդ իր գլխի տերն ա,— գոռաց էս անսիրտ հալւորը էնպես, որ աշքերիցը կրակ էր վեր թափում,— ընչի՞ են էսքան խղճացել, որ իրանց թուրը իրանց սիրտն են կոխում: Մարդ որ իր տանը, իր աշխարքին մուղայիթ չի՛ կենա, իր հողի դադրը չգիտենա, մեռնի մեկ օր առաջ լա՛վ ա, քանց սաղ մնա. հողն էլա հո կդինջանա՞: Նրանք էն վախտը կըլին մեր ազգը՝ հայ քրիստոնյա, որ թե էս սհաթին դոնմիշ կըլին ու համ իրանց կազատեն, համ մեզ քոմակ կանեն: Գլխիցս ձեռք վերցրո՛ւ, դու դեռ ջահել ես. հալա մեծացի՛ր, ետո ինձ խրատ տո՛ւր: Աշխարքը դեռ փակ աքո աշքին:

— Հա՛յր, հա՛յր, նրանք ի՞նչ մեղավոր են, գլխիդ մեռնիմ, էդ սիրտը մի՛ ունենար, մեր ազգին խեղճ արի. թո՛ղ մենք մեռնինք, նրանք ապրին: Մեր օղլուշաղը մեր մոտին ա, նրանցի աշքը՝ ճամփի, մի՛ աճիլ:

— Զեռք վերցրո՛ւ, ասում եմ, հրես էկան: Տղե՛րք, էլ մե՛ք մտիկ անիլ:

— Աղա՛, ձեր ազգն ենք, աղա, քո արևի սաղաղին, ամեն մեկս տասը. քսան գլուխ քյուլֆաթ տանը վեր ածած՝ թողել, էկել ենք. թրով են բերել, մենք չէինք գալիս: Աղա՛, գլխիդ դուրբան, տեսնո՞ւմ ես, որ մեզ զոռով կրակն են ածում. յա՛՛ բաց արե՛ք ձեր սանգարը, որ մենք էլ ձեր մեջը գանք, ձեզ հետ թուր տանք, մեր օղլուշաղի տերն էլ աւտված, յա՛՛ թող հայի թրով մենք չմեռնինք: Մեզ մորթի՛ր, գլխիդ մեռնիմ. չէ՞, մենք էլ քո ազգն ենք, մեկ ավազանում ծնված, մեկ խաչի պաշտող: Մեզ ջուրն ածի՛ր,

խեղդի՛ր, մեզ մի՛ սպանիր, մեր դառն օրը մեզ հերիք ա: Մեր փրկիչն էսօր դու դա՛ռ: Թուր էլ ունինք, թվանք էլ, ամա հազար թուր՝ մեր գլխին սրած, հազար գազան՝ չորս կողմներս բռնած: Ի՛նչ անենք, ո՛ր ջուրն ընկնինք:

Ամպերն սկսեցին սարերիցը գոռալով բարձրանալ. երկինքը երեսը ետ դարձացրեց. արեգակը աչքը խփեց: Արին էին ուզում հալոց հսկալքը պրծացնիլ, իրանց ազգի արինը պետք է թափեին. հազար մարդ էին ուզում պահպանիլ, հինգ հազար ջիվան տը-դերք նշախորով անիլ, տասը հազար մանր երեխա՝ մեծ, պստիկ, անհեր, անախպեր թողալ: Մեկ գեղ էին ուզում շինիլ, մեկ սաղ աշխարհ քանդիլ: Իրանք բոլոր մեռնեին, ետի եկողները կասեին, թե թշնամին նրանց կոտորեց. բայց թե իրանք իրանց ազգի վրա սուր քաշեին, հազար բերան ազգե-ազգս պետք է նրանց անիծեր, թե հալը հալի տունը քանդեց, հալը հալին կոտորեց: Տղամարդու-թյուն էին ջանք անում ճարեն, ամոթք, նախատինք պետք է նը-րանց հավիտյանս հավիտենից մնար: Ծառ էլ ուզեց, որ աղա Սարգիսը աչքին, սրտին հուպ տա, բայց արինը ետ դառավ, ար-տասունքն էկավ, լցվեց, կրակը հանգավ, դող ու սրսուռ ընկավ ջանը: Առաջին էր նայում՝ իր ազգն էր լալիս, ետևն էր նայում՝ գեղը վա՛յ տալիս, երեխեն գոռում, օղլուշաղը մեռնում.

— Էկա՛ն, էկա՛ն, վա՛յ մեր օրին:

Բայց ո՛չ երեխեքանց սուգը, ո՛չ կնանոնց լացը, ո՛չ մահն ու կյանքը էլ նրանց աչքը չէկան: Երկնային հրեշտակն՝ անմահու-թյան պսակը ձեռին, էկավ, նրանց վրա կանգնեց, նրանց ձեն տվեց.

— Հազար ու բիլոն ձեր ազգիցը էս օրը քաշեցին. թե ազգ եք ուզում պահիլ, ահա՛, ձեր առաջին. մեռե՛ք նրանց ուղուրին, որ քանի աշխարհս կա, ձեր անունն հիշվի, թե դուք ձեր ազգի արինը լավ համարեցիք, քանց ձեր իսկ կյանքը, քանց ձեր որդի-քը: Էլ ի՛նչ եք կանգնել, կրակ տվե՛ք, տուն, օղլուշաղ էրեցե՛ք ու վրա թափեցե՛ք:

— Կրակ տվե՛ք, տուն, օղլուշաղ էրեցե՛ք, վրա թափեցե՛ք. տղե՛րք, երեխե՛ք, մնա՛ք բարով. ամպեր, թափեցե՛ք. երկինք, գո-ռացե՛ք. հողե՛ր, դաշտե՛ր, ձորե՛ր, սարե՛ր՝ սուգ արե՛ք, վկա կա-ցե՛ք: Ով անց կենա էստեղ, ասեցե՛ք, թե մենք մեր ազգի համար մեզ մատաղ արինք, մեզ գերի տվինք, սուրը քաշվեցինք: Սեղավ ըլեր, մեզ տանիլ չէ՛ր. դժոխք ըլեր, մեզ մոտանալ կարող չէ՛ր.

երկիրը բացվեր, մեզ կուլ տալ կարող չէ՛ր. սաղ Պարսկաստան
պոկ գար, մեր մեկ մագը թեքիլ չէ՛ր. Հասան խան, քո ամեն մեկ
թիքեդ հազար սատանի՝ ձեռ ընկնի՛, քո ջիդեն սրտումդ ցցվի՛:
Որդիք, բալա, օղուլ, չոջուղ, դոփում, դարդաշ՝ էլ սուգ մե՛ք անիլ:
Մեր տները թո՛ղ մեզ գերեզման ըլին, մեր արինը՝ մեզ մեռլա-
ջուր, մեր հողը՝ մեզ պատան, մեր ձենը՝ մեզ ժամ, պատարագ:
Սուրբդ Վարդան քաջ նահատակ, դո՛ւ տուր մեզ պսակն:

Խոտի դեզերի կրակն ու բոցը,
Խեղճ օղլուշադի հարաչ հրոցը,
Դարմանի ծուխը, կալերի մուխը
Ամպի պես ելին, օրը խավարացրին:
Գեղի չորս կողմը առավ ալավը,
Տների մեջը ծով դարձավ լացը.
Էլ ո՛չ հեր կարաց որդուն համբուրի,
Էլ ո՛չ մեր կարաց տղին մեկ տեսնի:
Հարսի սրտումը իր սերը մեռավ,
Փեսի բերնումը լեզուն չորացավ.
Քիրն ուզեց ախպորն ջան էլա ասի,
Ախպերն՝ քվորը իր խտիտն առնի:
Մեր ու խեղճ հարսներ՝ իրանց երեխեքն,
Տղերք, ծերունիք իրանց սուրն ու գենքն
Դոշին կացրին, երկինքն նայեցին,
Աչքները խփեցին ու ա՛խ քաշեցին:
Մեկը դուռը փակեց, որ կրակումն էրվի,
Մեկն աչքը խփեց, որ ցավ չտեսնի:
Տղերքը գեղիցը դուս թռան դաշտը.
Տանըցիք փախան, որ ընկնին կրակը.
Էլ լաց չէ՛ր գալիս նրանց կարոտ աչքը,
Նրանց բուրջ, բադան մնաց երկինքը:
«Տունը քանդեցին տանըցունց գլխին,
Սելը քանդեցին, վրա թափեցին»,
Զայն տվեց Վարդանն՝ հզոր պատանին,
Աշոտն քաջասիրտ, Մուշեղ Արծրունին,
Մեկն Նաղի խանի, մեկն Օքյուզ աղի,
Մեկն Զաֆար խանի քամակը բոնեցին.
Երկուսն հրեշտակի պես թռան, գնացին:
Բայց սուրն Վարդանի՝ Օքյուզ ածղհին,

Որ սաղ առյուծին թե խփեր գլխին,
 Իսկույն կսատկեր, կնապաղեր գետնին,
 Միջիցն երկու կես արեց էն սնաթին.
 Կեսն ձիու էս կողմը քաշ էլավ,
 Կեսն մյուս կողմին դիպավ ու կպավ:
 Իսկույն սարիցը ամպը տրաքեց,
 Երկինքը բաց էլավ, թե հողը պատուկեց՝
 Քսան ձիավորով հսկայն Աղասի
 Ղարսի սարերիցն թռած, իր դշի
 Զիու ականջումն մտած՝ վեր էկավ
 Բրդի շորերով, սարին վրա պրծավ:
 Գազան Հասան խան նրանց քուրդ կարծելով՝
 Հենց որ մոտացան, ընկավ քարերով:
 Փեշղամաթքյարի, խանի, բեկերի
 Գլխըներն, ինչպես մեկ անջան ծոփ,
 Թռան առաջները, ձիանոնց տակերը:
 Հարամու գլխին ջուր, կրակ մաղվեց.
 Զին էլ տիրոջ վրա ոտը բարձրացրեց.
 Գյումբրու դզիցը ոսի բալաբան,
 Քաշ սալդաթների դաստեն, կապիտանն
 Արծվի պես հասան⁸⁵, թշնամուն մեջ առան:
 Թոփը մեկ կողմիցն, թուրը մյուսիցն,
 Մինը առաջիցն, մինը ետևիցն
 Հնձեցին թշվառ թշնամու զորքը,
 Զարդեցին, բերին էլ թոփի կողքը:
 Արինը ծովի պես գնում էր, կանգնում,
 Հայերն լաշերի վրով անց կենում,
 Նոր հոգի առած՝ իրանց տունն ընկան.
 Հեր ու մեր, որդի դոշ-դոշի կպան.
 Հարսն ու փեսայի ջուր դառած աչքը,
 Երկինքն վերացած հոգին ու կյանքը
 Էլ աշխարհ էկան, էլ իրար քթան,
 Իրար գրկեցին, իրար մոռացան,
 Իրար ձեռք տվին, բայց դեռ չիմացան՝
 Երկնքո՞ւմն են, թե՞ աշխարքիս վրա,
 Երազո՞ւմ, քնա՞ծ, թե՞ աչքները բաց:
 Հազար անգամ էն սուրբ հողին, գետնին

Ընկան, համբուրեցին ու ծունր դրեցին,
 Աղոթք, պաղատանք աստծուն մատուցին:
 Սար ու ձոր նրանց վրա խնդային.
 Դեզերի բոցը դառավ չրադդան.
 Որդի ու ծնող իրար ճառով ընկան.
 Ինչ որ ունեին՝ առան ու էկան,
 Որ թոփի տակին, սալդաթի մոտին
 Հավաքվին, որ էլ վնաս չտեսնին,
 Մինչև թշնամիքն գնան ու կորչին:
 Բայց էս հադադին քաջն Աղասին՝
 Հազար աչք ուզեց, որ տեսնի նրան,
 Գյոււմ էլավ իսպառ, կորավ նա անձայն:

<10>

Արեգակը դեռ երկնքի մեջտեղը չհասած՝ ուզում էր, որ կրակ
 վեր ածի, սար ու ձոր խորովի: Հյուսիսային կողմիցը մեկ մթնած,
 սևակողով ամպ, երկնքի երեսը ջարդելով, վազում էր, որ նրա
 առաջը բռնի: Ալագյազի գլխիցը մեկ դառնաշունչ բորչազ վեր ա-
 ցավ ու քար ու հող իրար գլխի տալով՝ էկավ, Խլդարաքիլիսի վրա
 դահիճի պես բռնեց: Արինակեր Հասան խանը, որ էսօր ավելի իր
 ձիուն, քանց իր քաջության հունարովը գլուխը պրծացրեց, կա-
 տաղած գազանի պես հոգին բերանն առած որ ետ չի՝ մտիկ ա-
 րեց, աստված ո՛չ շհանց տա. գորքը ամեն մեկը սար ու ձոր ըն-
 կած, շատի ձիանն՝ որը լկամը կոտրած, որի թամբը փորի տա-
 կին, որն էլ իր տերը էնքան էր գլխի վրա քաշ տվել, քարեքար
 տվել, որ գլուխ, երես ջարդվել, կոտրատվել, ոտներն էին օր-
 զանգվումը մնացել ոլորված, կախ ընկած, կամ կես մարմինը ջա-
 խըբուրդ էլել, սիրտն ու թոքը արինքամ էլել, փորիցը դուս թա-
 փել, ու խրտնած ձին, քանի ոտներին էր դիպչում, է՛նքան խըր-
 խընջում, սար ու ձոր ընկնում:

Ղուլ ու նոքար Աղասու թրին էին դուրբան էլել, որ էս միջո-
 ցումը Ղարսա սարերի վրա մեկ քանի դոչաղ քրդատանցի հայ
 ետեն էր քցել ու արծվի պես, որտեղ մեկ ֆորս ճանկում էր, ա-
 կան թոթափել վրա էր հասնում, ցրվում, փարա-փարա անում:
 Հարիր տեղ նրան ղզբաշի ղոնշունը՝ Մաստարա, Ղոշաւանքի
 ղզերումն, ռաստ էին բերել, հինգ հարիր մարդով վրա տվել ու
 քառասունով, հիսունով ջարդվել, էլ ետ դառել: Սուդագյան մեկ

օր⁸⁶ Նաղի խանին՝ էս ահագին գազանին, որ հարյուր մարդի չէ՛ր ասիլ, թե աստված ա ստեղծել, է՛ն տեղը քցեց, որ իր մարդկերանցովը մեկ բարձր թափից վեր ընկավ ու դզբաշի հողը մտավ, որ պրծավ, թե չէ՛ Աղասու ձեռին պետք է իր բոլոր սպանած անմեղ հայերի արնի ջառըմեն տար: Բայց Աղասու արածները թողանք ուրիշ ժամանակի ու գնանք մեր բանը:

Հասան խանը որ աչքը չի՛ բարձրացրեց ու Աղասուն՝ ձիու անկաջը մտած, ետևիցը քշելիս տեսավ, ոտն ու ձեռքը թուլացան. ուզում էր ձին բաց թողի ու քարափնվեր, Արփաշայի ձորն ընկնի, ուզում էր, որ ինքը իր թուրը իր սիրտը խրի, որ չասեն, թե Հասան խանին սպանեցին. քարին իր գլուխը մատաղ տա, քանց մեկ ռհաթ հայի, որ հազարներով հենց էն տեղարենքն էր սուրը քաշել, տանով, տեղով էրել, գերի արել. բայց էլի ռաշդի սիրտը ո՛չինչ տեղ էնքան դալիմ չի՛ ըլիլ, որքան ետին սհաթումը, կյանք ու մահ կռվելիս: Մեկ չարեք վերստաչափ տեղ էր մնացել, որ շունչը քամուն տա, հենց էն ա, թուր, ասպար ուզում էր, որ ետ անի, ձին բաց թողա, մեկ քարի տակ չոքի ու բալքի իր թշնամուն գլուլով էլա վախացնի կամ սպանի, վախտն անց էր կացել: Հըսկայն Աղասի թուրը սրտին դեմ արեց.

— Վե՛ր քցի թուր ու թվանք ձեռիցդ, որ էս սհաթիս փառչալամիշ կանեն: Դու էստեղ չի՛ պետք է սատկիս, հայակեր շո՛ւն, իմ թուրն ասիսո՛ւ ա, որ քեզ պես թշվառ ճինուն սպանի. չէ՛, ամոթ ա իմ տղամարդությանը, որ քեզ քարի տակի կամ չոլումն սատկացնեն, որ դշերը ջամդաքդ ուտեն, քարերն ու հողը քո մոռտառ արինդ ծծեն, ու լսողը էնպես կարծի, թե կռվումը մեռար. է՛դ անիրավ լաշդ չի՛ գտնի, մեռած հողիդ վրա էլ չի՛ թքի, ու ամեն անց կենող մեկ քար չի՛ վրեդ քցի ու գյոռիդ ուշումն տա, թե քո անաստված ոսկերքն են էմտեղ հող դառել: Հլա քանի Երևան չէ՛ն առել, քեզ հետս շան պես քաշ կտամ, սարեսար կքրցեն: Ծանճը սպանիլ ի՛նչ տղամարդություն ա: Հլա շատ օր պետք է հալի հաց, խոզի միս ուտես, հալի մեծահոգությունը ու մարդասիրությունը տեսնիս, որ մեղ օրվան դադրը իմանաս, իմանա՛ս, թե տնաքանդությունը, մարդասպանությունը ի՛նչ գատ ա, իմանա՛ս, թե Քրիստոսի օրենքն ո՛րքան սուրբ ա, ու կամ մեր խաչին դուլ դառնաս, մեր հավատը պաշտես, որ հոգուդ փրկություն ըլի, յա թե չէ, որ էդ արինաթաթախ ձեռներովդ, էդ սատանի փայ հոգովդ ուզենաս ձեր ջհանդամը գնալ, քեզ էն հայերին տամ,

որի որդիքը կոտորել, տները քանդել, աչքերը քոռացրել <ես>, որ միսդ՝ դիմա-դիմա, արինդ շանը տան ու գլուխդ գեղեգեղ, աշխարքե-աշխարհ ման ածեն, առաջիդ մատաղ մորթեն աստծու համար, չունքի մատաղի ու մարդի արնի էղքան ծարավ էր քո հարամ սիրտը, որ բալքի թե իմ խեղճ ազգի սիրտը հովանա: Հագար-հագար գլուխ ես կտրել, Ղարս ու Բալագիդ քանդել, ավերել, ափսոս չի՞ էդ դոչ գլուխդ քարի տակի մնա: Զէ՛, չէ՛, Հասան շուն, հաչի սիրտը մեծ ա. քեզ վրա պետք է գլոռ շինած, քար կաղնացրած⁸⁷, անունդ ու պատմությունդ վրեն գրած, որ մեր որդիքն էլ քո տղամարդությունն իմանան ու ձեզ պես շան ձեռին գերի չընկնին, ձե՛զ գերի անեն, ձե՛զ կոտորեն, ձե՛ր հոգին հանեն: Էս էն քարերն են, որ ոտնառակ էիր տալիս ու հագար գերի վրներովը տանում կամ սպանում, որ հմիկ ոտդ բռնել են, քեզ ուզում են կուլ տան, քեզանից վրեժ պահանջեն. բայց ես չե՛մ տալ, ես քո արինը էղպես էժան չե՛մ ծախիլ, էդ թանկ ջանդ ի՞նչ պես շուտով վարթարաֆ կանեն. հլա ինձ շատ պետք է տեսնիս, որ արածներդ միտքդ բերես. դու ամաչես, որ հաչի դուլ ես դառել. ես ուրախանամ, որ քեզ լավություն կարողացա անիլ ու մեկ քանի ժամանակ էլ կյանքդ երկարացրի: Երեսիդ խաչ հանի՛ր, երեսդ մեր աղոթարանը դարձրո՛ւ. դու մեր անտեր հայերին շատ ես քո քյաբի կողմը դարձրել ու շինքը կտրել. էսօր էլ դու մեր աղոթարանը ճանաչի՛ր. մերիցը արեգակն ա դուս գալիս, մեր դաշտերը ծաղկացնում, ձերիցը տաք քամի գալիս, հանդերը էրում, չորացնում: Զոքի՛ր, Հա՛սան խան. տերտեր չե՛մ, ամա գետը մոտիկ ա, ջուրը կքաշեմ, Հասան անունդ կոնենք Օհան: Մեր պասը դեռ չե՛ս պահել, չունքի միս ուտելու սովոր ես: Օ՛, մեր սրբությունը, որ էնքան ոտի տակ ես տվել, թե որ աստված տա, հա՛մն առնիս, էն ժամանակը է՛դ սե երեսդ կսպիտակի, է՛դ գիլի աչքերդ գառնի կդառնա, է՛դ հոտած բերանդ կդառնա աստուծո տաճար: Մինչև մեր Քրիստոսին չպաշտես, մեր սրբերի առաջին հագար անգամ չչոքես, մեր մեռունը երեսիդ չքսվի, մեր տերտերի ձեռը չպաչես, Աստված երկնքիցը ձեն տա, քեզ չէ՛ թե բաց թողամ, փառչա-փառչա կանեն, էդ փիս հոգիդ սատանեքանցը կտամ: Ծո՛ւտ, չոքի՛ր, չոքի՛ր, թե չէ, տեսնո՞ւմ ես թուրը, գլուխդ սոխի պես կթոցնե՛մ, չոքի՛ր...

Քար ըլեր՝ կպատովեր էս խոսքերիցը, ի՞նչ թե Հասան խանը՝ աշխարքի տերը, երկրի՝ քանդողը: Ամեն բանը տարավ համ-

բերությամբ, ձեն չի՝ հանեց: Քուրդ ասեր, օսմանցի ասեր նրան էս խոսքերը, ե՛րբ էնքան կցավեր. հաշից էսպէս թուք և մուր ստանա, որ մինչև էն օրը խո՛տ, ա՛ղբ էր համարո՛ւմ: Հաչը նրա հավատը ոտի տակ տա՛: Արիւնը կոխեց աչքերը, մեռած հոգին, հենց գիտես, նոր շունչ առավ. ատամները դճտացրեց, աչքերը կայծակին տալով՝ տեղիցը վեր թռավ ու կատաղածի պէս դամեն հանեց, վրա պրծավ:

— Հաշի շուն, դո՛ւ մնացիր Հասան խանի վրա ոտք բարձրացնես, դո՛ւ մնացիր ձեր հոտած հավատի լափն իմ գլխին ածես. գլուղ պատռվի, Հասան խան, հողը գլխիդ, էս ի՛նչ էս լսում: Գլխիդ փափախը քամին տանի, քառանայիր, ո՛չ լսեիր, էս ի՛նչ իմացար: Հազար-հազար մարդի փոր վեր ածես, մեկ հաշի կտորի առաջին էսպէս կո՛ւչ գա՛ւ. էլ ո՛ր եմ ուզում աշխարհներ առնեմ, որ էս խոսքը պետք է լսեի: Ընչի՛ չի՝ պետք է էս հալ-օլանի քոքը կտրեի, որ ձեր անհավատ հոգին երկրի վրա էլ չլլեր,— ասաց ու կատաղությամբ դամեն էնպէս Աղասու վրա շարտեց, որ թե ձին չէ՛ր խրտնել, ու Աղասին գլուխը կռացրել, դամեն սրտի մեջտեղը պետք է ցցվեր:

Աղասին քարիցը կկարծեր, նրանից չէ՛ր կարծիլ էս բանը:

— Խա՛ն, կատաղած գիլի կերած մսի համը դեռ ատամների տակը կըլի, արինակե՛ր գազան. էդպէս հո չե՛ն խփիլ կամ գողի պէս վրա պրծնի՛լ: Ձեռս ափսո՛ւ ա, որ քեզ դիպչի. գազանին գազանով պետք է պատժած: Խա՛ն, հլա ձիուս հունարը տե՛ս, հետո կիմանաս, թե ի՛նչ թուր ա վրեդ խաղում,— ասաց հսկայն ու ձիուն դամշեց:

Կատաղած ձին՝ բերանը փրփուրը լիքը, առաջին ոտները որ չի՛ բարձրացրեց ու թռավ, Հասան խանի լեղին ջուր կտրեց, բաց բախտը բանեց. ձին որ թռավ, նա մնաց մեջտեղը անվճառ: Մինչև Աղասին ձիու ջիւալը կքաշեր ու ետ կդառնար, Հասան խանը հոգի առավ, փշտովը հանեց, ձիու ճակատը ետ դարձնիլը ու փռշտովի տրաքիլը մեկ էլավ: Հաշվանը փոնչաց, երկու քթիցը արիւնը պրծավ, առաջի ոտների վրա էնպէս չոքեց ու գետնին դիպավ, որ Աղասու ոտի մատները օրգանգովին կպավ, աչքը կեծակին տվեց, սևացավ, արիւնը սրտումը թան դառավ: Մինչև Աղասին ոտը օրգանգովիցը կհաներ, մինչև ձեռը թրին կհասներ ու ձիու տակիցը կբարձրանար, ասլան Հասան խանը վրա հասավ. երկու լտրանոց թուրը շողաց. քար ու ձոր սկսեցին, էն ա, էլ ի-

դրանց գլուխը լալ, ասլան Աղասին գլուխը որ սաստիկ թափ չի՝ տվեց, էլ ետ փոքր արհնը տաքացավ, մեկ ոտը օրգանգվումը, ձախու ձեռը թրին դուրբան տալով, թշնամու դեմը բռնելով, աջու ձեռը որ Հասան խանի գլխովը չի՝ պտտեց, քաքուլի կամ միրքի մազի տեղ չանեն ընկավ ձեռքը. մատները բերնումը, բիրը բողա-
զի տակին՝ չանին որ հուպ չտվեց, էն թաք-թաք հին ատամներն էլ, որ էստեղ-էնտեղ երևում էին, ճոռացին, իրար կպան ու փշուր-
փշուր էլան. գլուխը հավի գլխի պես սլտտելով՝ էնպես սաստիկ ոլորեց, որ բոլոր տամարները ճոռացին, ու Երևանու աստուծո
գլուխը Աղասու մեկ ոտի տակին մնաց, փորը՝ մյուս, ու էսպես կաղնած վրեն, ինչպես սուրբ Գեորգ իր վիշապի գլխին, սկսեց մեր հսկայն մուշամբեն հանիլ, որ միշտ հետը ման էր ածում, դեմն ատամով ու աջու ձեռով յարեն կապիլ, դեմը էլ հավատի քարոզը կարդալ.

— Հայի ձեռի դու չե՛ս արծան, ոտը համբուրի՛ր, հայակե՛ր գազան: Հայի արնի ծարավ էիր, դե՛, կշտացի՛ր, ա՛նհոգի,— ա-
սաց ու մինչև կուտը կկապեր, արհնն էնպես էր վեր ածում, որ խանի աչքին ու բերնին թափի:— Քեզ ասում եմ՝ մինչև հայ չի՛ դառնաս, մինչև երեսիդ խաչ չի՛ հանես, չե՛ս պրծնիլ, չե՛ս, ի՛նչ էս մտածում. ես էսօր քո լուսավորիչը պետք է դառնամ:

Բայց ա՛խ, երանի թե հավատը էսքան չըլեր մեր Աղասուն մոլորացրել, ու վիշապն ընկել էր ձեռքը, տար, վարթարաֆ աներ: Սատանեն իր պոչը մի բանում չխառնի. մինչև դու խաչը կհա-
նես, նա իրան բանը կհոգա: Հենց յարեն կապեց, պրծավ մեր կտրիճը ու ձեռը շարժեց, որ արհնը էլ ետ իր տեղը գնա, ու ու-
զում էր, որ թշնամու չար ձեռները կապի ու էնպես նրան հավատ բերի, աչքը որ բարձրացրեց, աստված ո՛չ շհանց տա. իր ըն-
կերտիքը, ամեն մեկը մեկ սարի ծերից թռած՝ էկան, վրա հա-
սան:

— Ա՛ղասի ջան, գլխիդ ճարը տե՛ս. քեզ ման գալով հոգիքս թռավ, ախր ո՛ր մնացիր. Հասան խանը նոր դոնշուն ա հավա-
քել, գալիս ա: Խղարաքիլիսեն էլ ետ կոխեցին. Բոռչալվի թուր-
քերը կապիտանին գլխից հանեցին, թե ղզլբաշը Գյումրու բերդը կառնի, թոփ ու թոփխանա հետըներն առան, ետ դառան. ջրա-
տար, ողորմելի խալխը մնաց չոլումը, ոչխարի պես սառած. ոտը ո՛չ առաջ կարաց փոխել, ո՛չ ետը. որը ձի ուներ, էլ ո՛չ բարե-
կամի մտիկ արեց, ո՛չ ազգականի, վեր էլավ, փախավ Գյումրի.

մնացածները, աստված ո՛չ շահաց տա, իրար ճտով ընկած՝ մնացին գառն ու ոչխարի պես բղղալով կանգնած: Ի՛նչ նրանց հալն ա, աստված ո՛չ նշանց տա. սար ու ձոր սուգ են անում, լալիս:

— Ձեր տունը չքանդվի, ի՛նչ եք ասում՝ Հասան խան: Տասը Հասան խան հո չկա՝ աշխարքումս. հրես, ոտիս տակին ընկած, հոգին տալիս ա. դուք երազ ե՛ք պատմում, թե՞ գինովացել եք: Հասա՛ն խան, Հասա՛ն խան. տո՛, հրես գլուխը ճտի պես ձեռոմս, դուք ինձ պառավի հեքաթ ե՛ք ասում: Ամո՛թ ձեր փափախներին, տո՛, մեկ մտիկ արե՛ք, է՛:

Ո՛վ կհավատար ապա, թե էն ահագին ասլանը մեկ գառի ոտի տակի ըլի. որ աչքըները չի առավ նրա զարհուրելի կերպարանքին, արինն աչքըները կոխեց. բոլորն էլ թուր հանեցին, որ նրան թիքա-թիքա անեն. էլի մեր խաչապաշտ Հսկայն իր սազն ածեց.

— Ո՛վ իմ գլուխը կսիրի, թուրը էլ <եռ> տեղը դնի. էդ ո՛չինչ տղամարդություն չի՛ չոլումը մեկ ու մորթել: Թողե՛ք, հալա սրան մեկ հավատ բերենք, ետո ի՛նչ ուզում ա ամեն մարդ, թո՛ղ էն անի:

— Տո՛, տո՛ր, գլուխը ջնջխի՛ր, դրա հոգին աստված առնի, դրա ամեն մեկ շունչը յաղու ա. օձը քանի շուտ սպանես, էնքան քո խերդ ա: Դա էլ օ՛ր պտի տեսնի: Ձէ՛, դրա օրը պտի խավարի, դրա գլխին քար ընկնի: Քարը քցի՛ր գլխին, դրա արինը մեր վզին: Տո՛, մեր ազգի տունը քանդողին էլ թոպե պետք է կյա՛նք տված, շունչը բերնումը թողա՞ծ. սպանի՛ր, ասում ենք, թե չէ քեզ էլ հետը կսպանենք:

— Ինձ սպանեցե՛ք, սրան ձեռը մեք տալ: Թո՛ղ սրա մահը մեկ քանի մարդ էլա տեսնի, որ սրտները հովանա, է՛:

Էս խոսք ու գրուցումն էին, որ բիրդանքի ձիավորի տուտը նրանց վրա բաց էլավ: Ընկերքը վրա թափեցին, որ անօրենի թոգը քամուն տան. ամփոքձ Աղասին, որ մինչև էն օրը նհախ տեղը մեկ արին չէ՛ր վեր ածել, նրանց դեն արեց, խանին քաշեց մեկ քարափի գլուխ, ինքը գլխին կանգնեց, խանի ձեռները կապած՝ ոչխարի պես առաջին վեր դրեց, ընկերներին հրամայեց, որ ձիանը ձորն անեն ու թվանքները հագրած՝ ձորի բերնումը կանգնին, ու իրեք գազաչափ խանիցը հեռու կանգնած, դոշը քարափին դեմ տված՝ էնքան մնաց, որ ձիավորների տուտը մեկ թվանքի մանգ-գիլ էկավ, մոտացավ:

— Գլխըներդ ոտիս տակին ա, ա՛յ թուրքեր, ձեր ճակատը՝ գլուխիս առաջին, քսան ինձ նման իգիթ (դոշաղ) տղերք՝ քամակիս. ամեն մեկս մինչև ձեզանից քսանը չսպանենք, մինչև մեր բարությունը չհատնի, կրակ դառնաք, մեզ չե՛ք կարալ մոտանալ: Հինգ սհաթ ա ձեր հոգին, ձեր գլուխը իմ ձեռիս ա էլել. էն Հասան խանը, որ սարեր էր դողացնում, ոտիս տակին ընկած. սրան մայեցե՛ք, ձեր սև օրը լաց էլե՛ք: Խա՛ն, հրամայի՛ր, որ Խլղարա-քիլիսեն ազատեն, կյանքդ էլ ազատ ա, թե չէ՛ հավի պես կմորթեմ. իմ ձեռի հունարը դու լավ փորձեցիր: Մարդ դրկի՛ր, որ դոնշունդ ետ դառնա, թե չէ՛ քարափիցը վեր կքցեմ, հազար թիքա կըլիս: Ինչքան որ ըլի՝ մեկ հողում ենք մեծացել: Խա՛ն, կոնի ունիս, դուշմանիդ հետ արա՛, խեղճ հալերը քեզ ի՛նչ են արել: Էն ժամանակը քեզ խան կասեմ, թե որ էս տղամարդությունն անես: Մեծություն ունիս, բանացրո՛ւ:

Ջանն ազիզ ա. Հասան խանի նամագն էլ էս էր, որ մեկ պրծնի. հազար արախլու ու թուրք սպանեին նրանք, ի՛նչ հաջաթ: Իրան դարդը քաշելով՝ իսկույն հրաման տվեց, որ մեկ քանի ձիավոր հասնին, դոնշունը ետ քաշիլ տան, մինչև ինքն էլ գա: Բայց դեռ կիսաճամփի՝ Աղասու սիրտը գնաց. քաջ հսկայն չէ՛ր իմացել, թե մհլամը լարի վրա կդնեն: Կտրած տեղը մնացել էր բոշ. արիներ թներովը գնացել, ջանը բռնել էր. արեգակի շոգը մեկ կողմիցը, սովածությունը՝ մյուս, արիներ էլ հո, հենց բռնի, ցամաքվել էր. էն հաղադին, որ զորքը ետ դառան, ու նա էլ սկսեց կրկին Հասան խանին հավատ բերի, քիչ-քիչ աչքերը շաղվեցավ, գլուխը պտտեց, ուզեց, որ մեկ գլուխը բարձրացնի, տեղիցը վեր կենա ու ընկերներին իր գլխի էկածը պատմի, թուլացավ, քամակի վրա վեր ընկավ, աչքերը խփեց, մեկ բարակ ախից ավելի էլ ոչինչ չկարաց ասիլ: Մար ու ձոր ձեն ավիհ: Աղասու անունը որ տվին, քարափները զարգանդեցին: Ողորմելի ընկերքը քար ու հող գլխըներին տալով որ վրա չի թափեցին ու հարալ տվին, ձենն ընկավ ձիավորների անկաջը: Լացի, սգի ձենը որ իմացան, հենց գիտես, արեգակը նոր ծագեց, ական թոթափել թև առած՝ ետ դառան. էլ ո՛ւմ գլխումն էր մնացել խելք: Թշնամին էն ա, մեկ թվանքի մանգզիլ մոտացել էր, հարիւր տեղից թվանքները բաց էլավ: Աղասին աչքը բաց արեց կամաց, ա՛խ քաշեց ու ձեռով իշարաթ արեց, որ ձորը թափին: Ընկերքը իմացան նրա միտքը, ուղերներին դրին իրանց թանկագին բեռը ու ձորը թափեցին:

Հենց ուն ու ձեռ բաց էլած որ տեսավ իրան, արյունակեր Հասան խանը թուրը ավալ ինքը ձեռն առավ. մինչև դռնունը ձորի բերանը կհասներ, Աղասու ընկերքը Անի քաղաքի բուրջը մըտան ու էնտեղ, ուր հարյուրավոր եկեղեցի, հազարավոր տներ, քոչք ու սարեք դիմացի սարերին՝ ամաչացնում, վախացնում էին, ուր, ըստ ասության ուսմէկին, այնքան էր հարստություն և ճոխություն, մինչ մեկ հովիվ տեսնելով մեկ զատկի, թե կնիկը եկեղեցումը տեղ չէ՛ր ճարել, էս պատճառով մեկ ահագին տաճար շինեց, ու մեկ անսիրտ վանքականի խաթեր⁸⁸ աստված հալոց վերջին կենաց ճրագը փչեց, թագավորաց թախտը կործանեց, իրանց սրո, հրո գերի արավ: Ա՛խ, անմեղ սնապաշտություն. թագավորաց հաբեղայից մատաղ տվինք, որ էստեղ ընկա՛նք, է՛: Ու էն հիանալի ավերակքը, եկեղեցիքը թողեց մեզ սգո և լացի տեղեր: Էս բրջերի ծոցն էր, էն սրբոց աղոթքը ու մեր թագավորաց՝ Գագկի...՝ երկնային հոգին, որ Աղասուն պահեցին:

Մինչև նրան հինգ ընկերքը խտտած՝ գետնի տակի ճամփովը գետի դրաղը հանեցին, մինչև ընկերտանց հինգը թաքուն էս կողմից, հինգը՝ էն, անց կացան, որ ձորից, սարից ձեն տան, հարաչհրոց անեն, մյուս հինգը բրջի ծակերիցը քսան-ավել մարդ սպանեցին: Նրանք լավ գիտեին, թե հենց էսօր էլ թուրք, քուրդ, հա՛յ ո՛չ ոք սիրտ չի անում Անու միջովն անց կենա, որովհետև կարծում են, թե մեջը քաջքերով լիքն ա, որովհետև աստված մեկ անգամ անիծեց. էս իրանց պատճառ շինեցին. առաջուց էլ էնտեղ էին նրանք շատ բրդի ու թուրքի միսը խորովել ու ամեն ծակ ու խող էնպես իմացել, որ սատանեն նրանց չէ՛ր գտնիլ. մեկ կողմից դըզըլբաշի սնապաշտությունը գիտելով՝ որ ձորից, բրջից, սարից թվանքները չճոռացին, հաչերը չգոռացին, ձորերը, խուլ-խուլ էրերը, խոր-խոր եկեղեցիքը, մատուռները նրանց ձենը ետ չի՛ կրկնեցին, Հասան խանի շիկնքը թեքվեց, էնպես կարծեց, թե հազար մեռել, հազար հրեշտակ, հազար սատանա ոտն են առել, գալիս են: Էլ ձեն չկարաց հանիլ. խելագարի պես ձեռով արեց, ինքը թռավ, իրան դաստեն՝ քամակին: Երեք-չորս վերստ հեռացած՝ որ մեկ քանիսը էլ ետ սիրտըները պնդացրին, որ մեկ տեսնին, թե ախր էս դիվանը ո՛րտեղանց դուս էկան, ո՛ւր մնացին, գա՛լիս

* Բնագրում տեղ է թողած համապատասխան անունը (հավանաբար՝ Սմբատ կամ Աշոտ) լրացնելու համար, որ մոռացվել է:—Պ. Հ.

են, թե չէ՛, մեկ չորան, աստուծո ողորմությունիցը որ մինչև հիմա մեկ եկեղեցում դողալով ջանն իրան էր հասել, ոտը խաղաղված տեսնելով՝ իծանը, սեիզները դուս արեց, որ շուտով գնա, ձորը թափի ու թշնամու ձեռք չընկնի, սատանի պատկեր սեիզների գըլուխը որ չտեսան պարսիկքը, որ իրանց սատանեքը միշտ իծին են մամանություն տալիս, հենց իմացան, թե Սադայելի բոլոր գորքը աշխարհ են եկել. իրար գլխով ընկան, թոզն աչքըներն առավ. ամեն մեկ ձիու ոտը փոխելիս, հենց իմանում էին, որ հմիկ, որտի որ ա, գլխըները կերթա. էսպես՝ որ աչքըները բաց չարին, աստված ո՛չ մեր թշնամու առաջը բերի. իրանց դժոխքի փորը սկսավ բաց ըլիլ, իրանց գորքն սկսավ Խղարսքիլիսեն մտնիլ, որ երեք սհաթվան ճամփա ա էստեղանց. քյաքի առաջին էնպես հավատով չէին չոքիլ, որ էստեղ չոքեցին, մամազներն արին, ձեռըները լվացին, միրքները սանդրեցին, չունքի ճաշը հասել էր. թորըները սրբեցին, Ալուն իրանց շնորհակալությունն արին, քյաքին՝ իրանց երկրպագությունը, ու թամուզ ձեռներով, մուռտառ սրտով վեր կացան, որ իրանց աստուծո տված մատաղը կտրեն, տոն կատարեն, որ ջաննաթի դուռը շուտով բաց ըլի նրանց առաջին:

Բոլոր տիեզերք, հորիզոնք երկնից, գագաթք լեռանց, սահանք բարձանց սկսեցին տապալիլ. թխպագին, արջնաթույր, սևաթև ամպն, որ բարձրացել էր, հստավ արեգակի մոտ ու արյան ծովի պես առաջ փոքր ժամանակ կարմրատակեցավ, ապա կուտակվելով, ծավվելով՝ էնպես ալլագունեցավ, սևացավ, մինչև հեռու տեղից տեսնողք էլ են օրը էնպես էին կարծել, որ մեկ տեղ աշխարհ ա կործանվում. օրը դառավ գիշեր: Հավ, ճիվ, թռչուն, անձսուն՝ վաղուց փախել, քարափների արանքը, մեշեքանց ծոցըն, էրերի պուճախն էին մտել ու դողալով հեթեթում, հեթեթալով շունչ քաշում:

Խղարաքիլիս խոտերի, արտերի բոցը քամին քշելով՝ տարել էր, մեշեքն էր քցել. դուզ, չու, դռ, քու, յավշան, թուփ, խուփ, ծղճոտ, տերև, ծառ, ինչպես ամառվան գիշերը կրակ տված չու, սարերը աստղեր էին շինել, ձորերը՝ երկինք, որ պարզիկա վախտը ամեն գիշեր մեր գլխին էրվում են: Կատաղի քամին բոցին առաջն արած որ չէր դամշում ու քացի տալիս, հենց իմանում էր մարդ, թե Ծորագյալու դաշտը հրեղեն ծով ա դարձել, ու կրակի, բոցի ֆրթնեն (ալիքը) քուքուրթ, կայծակ ածում դաշտերի գլխին: Խուլ ձորերը, խոր էրերը բողազները ետ ճոթռած որ կուլ տված

քամին էլ ետ չէին քշում, տալիս քարափների ճակատին, քարերը, ծառերը ուզում էին անկաջները կալնին, ոտ առնին, փախչին, ու նրանց դողի ու զրգնդոցի ձենի մեկ տուտը երկինքն էր հասել, ամպերն իրարոցով տալիս, մյուսը գետնի գլուխը, մեջքը, ոսկորները ջարդելով՝ անդունդը խրվում ու հազար տեղ գոռալով, ջարդվելով գնում, կորչում, լուվում, պապանձվում: Կայծակի ամեն մեկ ճամբարակը, ճոպանը, ինչպես մեկ հրեղեն սուր, որ երկինքը չէ՛ր ճղում, ամպերի մեջքը կոտրում ու Ալագյազի, Մասսա, Դվալու գլխին, թափին տալիս, ուզում էին, որ էս ահագին երկրի գլխերը, իրանց աչք-ձորերը տակուվեր անեն, քոռացնեն, իրար սպանեն ու սաղ-սաղ անդունդը խրվին, բաթմիշ ըլին: Ամպերը օխտը գլխանի վիշապի նման, երկնքիցը ճուլակ էլած, որ բերանը չէին բաց անում, խփում, ուզում էին, որ սաղ երկինքը կում անեն, ծամեն, փշուր-փշուր անեն ու էլ ետ հազար թիքա արած՝ ածեն անիրավ մարդի գլխին, որ ո՛չ երկնքիցն ա պատկառում, ո՛չ աստվածանից վախենում, ո՛չ ջուր իրան օրինակ առնում, ո՛չ հողից մեկ խրատ վերցնում, ո՛չ իր խեղճ հոգու ներքին ձենը լըսում, որ գիշեր-ցերեկ լալով, արտասվելով, քնած թե զարթուն, ձեն են տալիս, գոռում:

— Երկնքի արեգակի պես, երկրի հողի պես, դու, աստուծո պատկեր, բարի կա՛ց, բարություն արա՛, քեզ պահի՛ր, լավություն արա՛, աստծուն նմանի՛ր, ընկերդ պահպանի՛ր, աստուծո աշխարքը շինի՛ր, նրա ձեռագործը մի՛ քանդի՛ր, որ դու էլ մնաս շեն, դու էլ չի՛ քանդվիս, հողին չի՛ հավասարվիս:

Երկինք, երկիր, սար, ձոր՝ անկաջ, աչք խփել, լալիս, սուգ էին անում, դռներին ծեծում, գլխներին տալիս, երեսները պոկում, պոճոկում. ամպք ուզում էին Խլղարաքիլիսեն վերև քաշեն, անդունդք՝ իրանց ծոցը քաշեն, պահեն. քար ու հող իրար կտրատում, սպանում էին, բայց աստուծո պատկեր մարդը՝ աչքը բաց, անկաջը սրած, կոները վեր քաշած, կայծակի թուրը ի՛ր գլխին էր խփում, նա իր թուրը՝ ողորմելի խլղարաքիլիսցվոց գլխին: Ամպի կարկուտն ի՛ր դռին էր վեր հատում, որ աստվածանից վախենա, նա իր թվանքի կարկուտը անճար հայերի էրեխեքանց, ամենեղ մանկանց, նորահաս հարսների գլխին էր վեր ածում: Երկիրն իրա՛ն էր ուզում քարի, հողի տակով անի, նա մեր ազգի ողորմելի ջիվան որդիքն էր արյան ծովումը խեղդում, ջախըբուրդ առնում: Սարերն ուզում էին պարսից գլխին թափին, խո՛ր տանին,

ճրանք մեր անտեր խալխի տուն, տեղ կրակում, իրանց սրի բեր-
նով դիմա-դիմա տալիս:

Ա՛խ, սիրտս կտրատվում ա. լեզուն ի՛նչ ա, որ բառով կա-
րողանա էն սարսափելի տեսարանը պատմիլ, որ լսողը կամ կար-
դացողը իմանա, թե իր խեղճ ավագանի քիր ու ախպերը ի՛նչ
հալումն էին էս սհաթին, ի՛նչ էին քաշում, ի՛նչ էին տեսնում,
ո՛ւմ առաջին, ո՛ւմ ձեռին, ո՛ր աշխարքում, ո՛ր հողում: Ա՛խ, շի՛ն-
քըդ չկոտրի, Ա՛ղասի. ա՛խ, ո՛ր էիր էս սհաթին: Թագավո՛րք
Հայոց, որ Անու միջումը անուշ քնած, ձեր որդիքը հարամու ձե-
ռին՝ դուք մեկ գլուխ չի՛ բարձրացրիք, որ ճրանց հավարին հաս-
նիք. է՛ն որդիքը, որ մեկ սհաթից առաջ աշխարք զարմացրին ի-
րանց քաջությանբը, երկիրը սասանացրին իրանց տղամարդու-
թյամբը ու, ինչպես դուք, հսկայաբար պահպանեցին իրանց աշ-
խարհը, ձեր հողը, ձեր հայրենիքը, ու դո՛ւք, անգութք, թողիք
ճրանց էսպես փորձանքի միջում, թշնամու թրի առաջին:

<11>

Բայց վա՛յ ինձ, ո՛ր հասա, ո՛ր տարավ ինձ իմ կսկիծը, իմ
էրված սիրտը: Լեզուս չի՛, որ խոսում ա, հոգիս ա, որ զգում ա,
ազգիս արինը առաջիս թափում, իմ հայրենիքն առաջիս քանդ-
վում, իմ սիրելի ախպոր աղի արտասունքը ու դառը սուզը՝ սիրտս
էրում, խորովում: Ի՛նչպես բերնիս հուպ տամ. արինս քթովս ա
դուս գալիս, աչքս կայծակին տալիս. ջանս էլ տամ, էլի իմ թան-
կագին ազգի արինն ու ոսկերքը Շորագլալու հողումը չորացած՝
կարելի ա, թե մեկ մարդի չէրևեր, մեկ մարդ չիմանար, թե էս էլ
էստեղ պետք է զոհ ըլե՛ի⁹⁹, չիմանայի, չտեսնեի, չլայի ու աղի
արտասնքով չխնդրեի. ով Խլղալաքիլիսու պատմությունը կարդա,
ինչ աստվածասեր հայ ճրանց տարաբախտությունն իմանա, գլու-
խը պահի, ճրանց հոգին հիշի, իր հոգին ու մարմինը էլ թշնամու
ձեռք չտա՛, չտա՛. ջուրն ընկնի, կրակումն էրվի, բայց իր չախեն
պարսից ձեռը չի՛ քցի, չի՛ քցի. գլուխը ծախի, իր ազգի դարդին

ա. Էս ժամանակին վարժատանիքը դուս էկա ու Թիֆլիզուցը գնացի
Հախպատ, Եփրեմ կաթողիկոսի⁹⁹ մոտ, որ թուղթ առնիմ, գնամ, իմ ծնողացը
հասնիմ, ճրանց հետ քոչիմ ու գնամ Վենետիկ: Ամեն բանս հագիր էր. Օս-
մանլիկն էլ մեկ տերտեր էր էկել իր որդովը⁹⁰, ուզում էր ետ դառնար: Սրանց
հետ էի ուզում ճամփու ընկնիմ, բայց դերձիկը դեռ շորս չէ՛ր հասցրել: Ո՛րքա՞
նեղացա, որ ճրանք գնացին, էս մնացի: Էրկու օրից հետո հենց մտա Ղարա-
քիլիսեն, Խլղարաքիլիսու եսրներն՝ էկան: Ողորմելի տերտերն իր որդովն էնտեղ
էր սպանվել:

հասնի, իրան գերի չա՛նի, չա՛նի: Ա՛խ, երաբ ասածս տե՛ղ կհաս-
նի, թե՛ հետս գերեզմանը կերթա ու հողումն էլ ոսկերքս կմաշի,
կտանջի, դրախտն ինձ դժոխք կշինի, գերեզմանն՝ ինձ գեհյա՛ն
(քուրա):

Էրեխե՛ք, ձեր ջանին մեռնիմ, ձե՛զ եմ ասում իմ դարդը, ձեզ
հմար եմ գրում, ձեր երեսին դուրբան. հողումն էլ ըլիմ, էկե՛ք, վը-
րեա կանգնեցե՛ք. թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը
ձեզ վնաս տա, անիծեցե՛ք ինձ, թե օգուտ՝ օրհնեցե՛ք ու լսեցե՛ք
ձեր ընկերների լացն ու սուգը, նրանց հորնըմոր կսկիծն, ու ձեր
հորնըմոր ծոցումը դինջ հանգստանալիս՝ ասածներս մտքըներդ
բերե՛ք: Խլղարաքիլիսեցոց անմեղ երեխեքանց ձենը քանի ան-
կաջներդ ընկնի, փառք տվե՛ք աստուծուն, որ էնպես երկնքի տա-
կի ծնվեցի՛ք, որ ձեր աչքը էսպես բան չտեսավ. նրանց ծոցումը
մեծացաք, նրանց կաթովն ապրեցիք ու նրանց արինը չխմեցիք,
նրանց դոշի վրա քնեցիք ու չմորթվեցիք, նրանց կռան վրա խա-
ղացիք ու ո՛չ նրանց մեռած, կտրատված, թիքա-թիքա արած, ա-
րինաթաթախ լաշի վրա ընկաք ու լալով, արտասնքով նրանց ա-
րինը չծծեցիք: Կենդանի մոր փորից դուս էկաք, նրանց սերը վա-
յելեցիք ու ո՛չ թե նրանց ճղած փորը դուք կենդանի մտաք, ու ձեր
գլուխն էլ նրանց սրտումը արինաթաթախ ցցվեց: Բարձի վրեն,
յորդան-դոշակի տակին նրանց խտտեցիք, խնդացիք ու ո՛չ հողի
միջումը, քարերի վրա, նրանց արնումը թավալ տալով՝ ձեր արի-
նըն էլ հետը խառնեցիք:

Ա՛խ, մի՛ լաք, մի՛ նախատեք ինձ, որ ես ձեր առաջին դժոխք
եմ բաց անում. իմ սիրտս էլ որ դժոխքումն էրվի, էսքան չե՛մ
կսկծալ, չե՛մ մորմոքվիլ, չե՛մ տանջվիլ, ինչպես Խլղարաքիլիսու
պատմությունը միտքս բերելիս: Չբարկանա՛ք ինձ վրա, չասե՛ք,
թե երազ եմ պատմում. հազարիցը մեկը չե՛մ ասում, որովհետև
ձեռքս թուլանում ա, աչքս սևանում: Իմ լեզուս ի՛նչ ա, հարցրե՛ք
էնտեղ ըլողներից, նրանք հազարապատիկ լավը կասեն, թե ի՛նչ-
պես էին անողորմ պարսիկքը մոր փորը ճղում, երեխեն հանում,
թիքա-թիքա անում, առաջ ոտները կտրում, հետո՝ ձեռները, ապա
մզրախի, թրի ծերը հանած՝ նրա մղկտալուն, թրպրտալուն երկար
ժամանակ մտիկ տալիս, իրանց դժոխային քեֆն անում, ասում,
լսում, խնդում, ծիծաղում ու հետո, ա՛խ, հետո, էնպես անմեղ
քոռփին հորնըմորը տալիս, կամ նրանց գլուխն էլ սրանցի հետ
մատաղ անում:

Թողե՛ք, թողե՛ք անց կենա՛նք, հերիք ա. բայց ի՛նչ անեմ, ճենց գիտեմ՝ էսօր ա Սահակ աղեն առաջիս կանգնել, աղլուխը աչքին դրել, աղաչանք անում, որ Հասան խանի սիրտը ռահմ ընկնի. էսօր են հայ սարվազներին են երեխեքանցը տալիս, որ նրանք բռնեն, իրանք փառչալամիշ անեն. էսօր են տասը պարսիկք Վարդանի քիր ու ախպերը, հերընմերը առաջիս սաղ-սաղ քերթում, կաշիները հանում, ոտ ու ձեռ քարով, թոխմախով ջարդում, քացով երեսներին տալիս, ու Վարդանը՝ էս հրաշագեղ պատանին, ձեռները կապած, էս երկնային հրեշտակը՝ նրանց վրա կանգնած. ոտն ա կամենում շարժի, ճոպանը չի՛ թողում. ձեռն ա ուզում մեկ բանի հասցնի, չվանն ա դաչիմ. թրի առաջն ա ուզում ընկնի, թուրքը չի՛ թողում. սիրտը պատռում ա, ձեն չի՛ կարում հանի, չունքի նրա հասակի ջահել տղա, աղջիկ հավաքել, ձեռ, ոտ, բերան կապել, տանում են, որ իրանց դնին մատաղ անեն: Ողորմելի պատանին ուզում ա, որ մեկ ետ էլա մտիկ տա, իր ծնողաց սուրբ արինը ու կտրատված լաշը մի տեսնի, փափագն առնի, մեկ կաթ արին էլա վրեն քսի, մեկ բուռը հող էլա ծոցը կամ ջեբը դնի, որ հիշատակ մնա, մեկ համբուրի էլա ու ետին բարովն ասի, մեկ չոքի էլա, նրանց օրհնությունն առնի, բայց ա՛խ, ա՛խ, հարիր սուր գլխին պոկած, աչքերը կապած՝ իր ընկերների հետ քշում են, անկաջները՝ փակ, որ նրանց ձենն էլա իմանան, բերանները՝ կապած, որ իրար հետ խոսին. ձիու երմիշ ըլելուցն են իմանում, որ շարժում են, բայց չգիտեն՝ ո՛ր. դժո՛խքը, թե՞ դրախտը.— դժո՛խքը, սիրելի, դժո՛խքը. սրանց տանում են, որ թուրքացնեն, իրանց դնին մատաղ անեն:

Ետ դառնա՛նք, պրծա՛նք. հազար ծեր ու պառավ, հազար տղա ու աղջիկ, մանուկ, ծծկեր իրար վրա փրթած՝ վաղուց ձենըները կտրեցին, երկնային քունը մտան: Ժահահոտությունը քիչ-քիչ սկսում ա բարձրանալ, հարավի չոր քամին՝ փչում. ամպերն էլ ետ սարերի գլխերին հավաքվեցան, նրանց աղաղակը աստված չիմացավ: Արեգակը վազում ա արևմուտը հասնի, դալբաշը՝ Ապարան քաշվում. խլղարաքիլիսեցոց հոգիքը՝ ո՛ր.— դրախտը. արդարը դժոխքը ե՛րբ կերթա: Խլղարաքիլիսեն էրվեց, ամպերը քաշվեցին, սարերը դիմջացան, հարիր տասը-տասնըհինգ տարեկան տղա, աղջիկ Հասան խանի օրդուն մտան: Ղոնշունը նաղրախանեն անելով, պար գալով ետ ա դառել. դահիճքը իրանց թերեմ են հազրում, մոլլեքը իրանց լեզվները սրում, որ Քրիստոսի որդի-

քը Ալուն մատաղ անեն: Վա՛յ, վա՛յ, Հայոց ազգ ջան, է՛ս օրի՞ն
էիր դու արժան:

Իրիկունը որ գա, ա՛խ, գել, արջ, սարերի գազանները պտի
գան, ձեր կացած տեղը իրանց ուրախությունն անեն: Էլ ո՛վ կլսի
մոր ձեն, հոր աղոթք, երեխի խաղ ու ծիծաղ, ժամի ու զանգակի
ձեն ձեր լաշերի վրեն: Գազաններին կմնա բոլոր մեյդանը. նը-
րանք պետք է էս գիշեր մարաքյա անեն էստեղ: Գնա՛նք, գնա՛նք,
միսս սրտում ա. օ՛հ, ո՛վ սիրտ կանի մոտանա. բաս էրեխեքանց
ճարն ի՛նչ կըլի. նրանք կերթան Հասան խանի օրդուն, լաց կը-
լին, ջան ասող չի՛ ըլիլ. կերվին, կմորմոքվին, մեկ ցավող չի՛
ըլի: Ամեն մեկը մեկ խանի կամ արախլվի ձեռի՝ հավի պես կծվա
կամ լեղապատառ կըլի, կամ սուրը իր դոշը կխրի, իրան կսպանի,
կամ տանջանքին չդիմանալով՝ կթուրքանա. ո՛վ, լսողը ի՛նչպես
չպտի սարսափիլ:

Տեսնի՛նք, ո՛ր գնացին էս անմեղ գառները: Մեր բախտիցը,
թե տարաբախտությունիցը, մութը գետինն առել ա, էլ մեզ մարդ
չի՛ տեսնիլ, որ եսիր անի:

Մթնագիշերը քեզ մեկ դարալթու ա երևում. գլուխը ցից, պա-
տերը քանդված, հազար կայծակի ու երկրաշարժության երեսը
դեմ տված, դռներն ու փանջարեքը խարաբա, խորան ու սեղան
ավերակ՝ կանգնել ա տխուր եկեղեցին Ապարանո՞⁹¹: Ուր հազար
գող ու ավազակ աղոթքի ու պատարագի տեղ անմեղ հայերի որ-
դիքը՝ ձեռքները կապած, բերան ու աչք խուփ, իրանց չար կա-
տաղությանը պատարագ արին: Ուր հայոց թագավորքը, իշխան-
քը ու պապագատքը Ապարանի բյուրատեսակ ծաղկների հոտը,
էն պատվական աղբրների համն առնելով՝ իրանց ամառվան օ-
րերը հովացնում, իրանց հովացած, զովացած սիրտը աստվածա-
յին սիրովը վառում, իրանց սուրբ սրտի աղոթքն ու մաղթանքը
ծաղկների հոտի հետ խառը, թռչնոց ձենի հետ հավասար, մեկ
բերնով՝ իրիկուն, առավոտ երկինքն էին ուղարկում: Ուր էս սհա-
թին էլ մեկ ահագին չորս ջաղացի ջուր մեկ քանդված բլրի տա-
կից, ուրտեղ որ Վաղարշակա, Տիգրանա, Տրդատա ապարանքն
էին, երկրի երեսը ճոթռելով, Ալագյազի սրտիցը, գետնի տակովը
ճանապարհ բաց անելով՝ բերանը փրփրով լիքը, աչքերը խոժո-
ռած, դուս ա պրծնում կատաղած, որ իրան պսակողների երեսը
տեսնի, նրանց սիրտը հովացնի, քնելիս, զարթնելիս՝ երկնային
ցողը նրանց երեսիցը գողանա, իր ցողը նրանց վրա թափի, բայց,

ա՛խ, գլուխը քանդված տեսնելով, վրի շինած ապարանը՝ բրիշակ, եկեղեցին՝ ավերակ, չորս կողմը նրանց հմքի, սեղանի քարերը արինաթաթախ, մամռապատ, փշրված ընկած, բերանը կրկին բաց ա անում, որ արտասունքը կուլ տա, էլ ետ իր փորը տանի, բլրի չորս կողմը պատում, ոլորվում, խոտ ու ծաղիկ պոճոկում, սուս, մունջ՝ իր ձենը փորը քաշում, աչքը խփում. ջուրը հողի, քարերի տակին ցրվում, էլ ետ գետինը մտնում, ու կես փայը առու դառած՝ գնում Երևանու դաշտը, որ նրա էրված, խորովված սիրտը հովացնի էլա, Ապարանու սուգը, տարաբախտությունը Էջմիածնին, Վաղարշապատին, Արմավրին, Երասխին, Մասսին պատմի ու նրա սև ջրի դառը արտասունքը իր հետ խառնի, որ Արարատի սրտիցն ու աչքիցն, ահագին գետի պես, լուռ, հանդարտ դուս ա գալիս,— Արարատյան դաշտի քանդված, ավերած երեսը տեսնում, վրըները սուգ անում ու քիթ ու պոռնկ աղի արտասնքով լիքը, տխուր երեսը անհոգի դամշով ծածկած, քամու առաջին, թշնամու ձեռին ծալվելով, չոքելով, կանգնելով՝ մյուս սարերի աչքի ջուրը, որ էստեղ էկել, ծովացել, կանգնել են, դամշի ու իլդունի միջումը կորել, վերցնի, գնա, Խոր Վիրապա, Արտաշատա դգովն անց կենա, ու տրտում Երասխի հետ Զանգին ու Գառնու գետն էլ մեջ անեն, որոց մինը Սևանա աչքիցն ա կաթում, մյուսը սուրբ Գեղարդա սրտիցը բղխում⁹², երեսները կալնին ու սուգ անելով, գոռալով, Նոյան, Նախիջևանի, Մարանդի գերեզմանի⁹³, Նարեկա վանքի⁹⁴, Սյունյաց դաշտերի սրտըները հովացնելով, աչքըները սրբելով՝ գնան, Քուռն էլ մեջ անեն, իրանց արտասունքը նրանի հետ խառնեն ու տանին, Կասպից ծովի սիրտն ածեն, նրա աղի ջրումը կորչին, պարսից նավերը ջախըբուրդ անեն, ռուսաց նավերը իրանց քամակի վրա տանին ու բերեն, որ ճամփին չհուսահատվին, չբեզարին ու էն իրանց բարի ոտը մեր աշխարհիցը չկտրի, որ բալքի մեր հալոցնիքը նրանց արծվի թևերի տակին գորանա, մեծանա, դարդերը մոռանա ու էլ ետ իր առաջին փառքին հասնի:

Է՛ս եկեղեցումը, Է՛ս քարերի տակին ու աղբրի մոտին, քուլումը կույ գա՛նք, որ մեզ չբռնեն: Գիշերն էս ա, հասել ա, օրդուն՝ մեզանից մոտիկ, ու թուրք ազգը ցերեկն էլ էս կողմերովը չի՛ անց կենում, որովհետև Քրիստոսի թշնամի ա, ու անկաջ դենք գիլանոցն ոռնալուն, պարսից գոռալուն, հալոց լալուն ու սգալուն ու էն անմեղ էրեխեքանց էրվելուն, ծեծվելուն, մղկտալուն, չուն-

քի էստե՛ղ պետք է նրանց աչք ու բերան բաց անեն, որ նրանց գարշելի երեսը տեսնին, իրանց ծնողաց երեսը, իրանց քաղցր հոր տունը մոռանան ու նրանց արինաթաթախ չանգերումը՝ իրանք մրմնջան, նրանք փրփնջան. իրանք մղկտան, սրանք վխկրտան. իրանք գլուխ ու երես ծեծեն, խորովվին, սրանք միրուք ու ճալվեր սղալեն ու փառավորվին. իրանք հերնըմեր, քիր ու ախպեր ձեն տալով՝ դռըները ետ ճոթեն, նվաղին, սրանք իրանց իմամ Հուսեյնի անունը հիշելով՝ յա ծոցըները ուզենան նրանց առնեն, յա դանակները, թրերը սրելով՝ նրանց սրտըներին դեմ անեն, որ լուվին:

Ա՛խ, չէ՛, չէ՛. անկաջդ կա՛լ, սի՛րելի, մարդի միսը սրտում ա, գլխին կրակ վառվում: Աստղերը դուս են էկել, պելացել. ցավակից լուսինը տխուր, դառնա՛վարամ՝ հենց աչքը Ապարանի երեսին առավ թե չէ, էլ ետ չոքըչոք արևմուտն ա փախչում, որ անկաջները կալնի, էս ողբալի աղաղակը չլսի. երկիրն իր սև սգի շորը հաքավ, աչքերը խփեց, որ էս դառը տեսարանը չտեսնի. միմիայն անսիրտ, անգութ սարերը սիրտ ու բերան բաց արած՝ չար հրեշտակ քամու ձեռովը խաբար են իմանում, խաբար տալիս. ծիծաղելիս՝ ծիծաղում, հրհռալիս՝ հրհռում, հառաչելիս՝ հառաչում, գոռալիս՝ գոռում, լալիս՝ լսւց ըլում, ու մեկ րոպեում հազար տեսակ ձեն իրար հետ խառնում, ու մեկն էլա իրանք չիմանում:

— Նա՛նի ջան... ջա՛նի ջան... ա՛խպեր ջան... ա՛ստված ջան... բա՛բա ջան, հո՛գի ջան... վա՛յ, վա՛յ... վա՛յ մեր սև օրին, արևին, վա՛յ մեր ջրատար գլխին: Ա՛խ, ի՞նչ կըլեր՝ ձեր ձեռովը մեզ ջուրն ածե՛իք, ի՞նչ կըլեր՝ մեզ չէ՛իք ծնել. ընչի՞ չի՛ մեզ էլ ձեր սրտի վրա մատաղ արին, ընչի՞ չի՛ մեզ էլ դիմա-դիմա տվին. էս ո՞ւր են հասցրել մեզ, էս ո՞ւր բերել. գետինը չի՛ պատռվում, մեզ ներս տանում. երկնքի աչքը քոռացել, մեզ չի՛ տեսնում: Ա՛խ, ո՞ւմ ծոցից գրկվեցինք, ո՞ւմ ձեռն ընկանք: Ա՛խ, տեր աստված. ընչի՞ մեզ էսպես պատժեցիր. քեզ ի՞նչ էինք արել, որ մեր աչքը էսպես հանեցիր. ո՞ւմ մեկ վնաս տվինք, որ մեր գլխին քար քցեցիր: Մեր հորնըմորը, մեր քիր ու ախպերը մատաղ արիր, ախր մեզ էլ նրանց հետ տանեիր, ի՞նչ կըլեր:

Մորն էկել ա, գետինն առել, նա՛նի ջան, սար ու ձոր խավարել, փակվել, մեք մերը կորցրած հավի ճտերի պես ընկել ենք չոլ ու դուգ. ո՛չ աչքըներս ա քուն գալիս, ո՛չ սրտըներս՝ դարար,

ա՛խ քաշելիս՝ կրակ ա դուս գալիս լերդըներիցս. ո՛ւմ երեսին մտիկ անենք, որ մեր սուգը տեսնի. ո՛ւմ ճտովն ընկնինք, որ մեր արտասունքը սրբի. ո՛ւմ մոտ գնանք, որ մեզ գոգն առնի, մեր սիրտը մխիթարի, մեր դարդն իմանա: Քարերը անկաջ չունին, որ մեր ձենը լսեն. սարերը սիրտ չունին, որ մեզ վրա ցավին. երկինքը՝ հեռու, որ մեզ քաշի, տանի. երկիրը թուր չունի, որ մեզ էլ փրթի, կոտորի. ո՛ւմ ասենք մեր դարդը, ա՛խ, ո՛ւմ: Ընչի՞ մեզ աշխարհ բերիք, ընչի՞ մեզ կաթը տվիք, պահեցիք. դուք շուտով պրծաք, երկինքը գնացիք, մեզ՝ որբերիս, էս փո՛ւշ աշխարքի վրա թողիք, որ դհա ավելի տանջվինք, դհա ավելի չարչարվինք. ձեր կարոտը մեկ կողմից քաշենք, մաշվինք, մեր ցավը մյուս կողմից սրտըներս անենք, էրվինք, փոթոթվինք:

Ձեռքներս կապած, գլխըներս բաց, երկնքի տակին, Ապարանու չուլումը՝ ձեզ ենք կանչում, ձեզ ենք ուզում, ձեր անունը տալիս, ձեր խաթեր լալիս, ա՛յ մեր ազիզ ծնողք. երկնքո՛ւմն ա ձեր հոգին, թողե՛ք, մեկ սհաթ գա, վրըներս պտիտ տա. երկրո՛ւմս ա դեռ, մեր աչքին մի երևի, հասրաթներս առնինք ու հետո, ա՛խ, հետո մեր հոգին էլ ձեր հոգուն տանք. ձեզ հետ թոչինք, ձեզ հետ միանանք, դժոխք թե դրախտ, միասին տեսնինք. ուր որ ըլիք, առանց ձեզ չմնանք. ա՛խ, ի՛նչ կըլի, ի՛նչ... Ա՛խ, ի՛նչպես չի մեր սիրտը պատռվում, մեր ջանը էրվում, մեր բերնիցը կրակ դուս գալիս, մեզ խորոպում. ի՛նչպես ա մեր լեզուն խոսում, ու չի՛ քըրքըրվում. մեր աչքը տեսնում ու չի՛ դուս տրաքում. մեր շունչը դուս գալիս ու չի՛ կտրվում. մեր արինը եռում ու չի՛ ցամաքում. մեր անկաջը լսում ու չի՛ քառանում. մեր ոտները փոխվում ու չի մեր տակին փշրվում, խուրդուխաշ ըլում. էս ի՛նչ օր ա, որ մենք քաշում ենք:

Նանի՛ ջան, ա՛խպեր ջան, բա՛բի ջան, վա՛յ, վա՛յ... Է՛ս օրվան համար մեզ օրորոց դրիք, Է՛ս օրվան համար մեզ սրից, ջըրից ազատեցիք, մեր ցավին դարման արիք. մեզ ջան ասելով, մեր աչքը սրբելով, գոգըներդ առնելով, դռըներիդ կացընելով, քրտինք թափելով, անքուն մնալով, սար ու ձոր ընկնելով՝ մեզ ապրուստ ճարեցիք. ձեր կյանքը խավարացրիք, մեզ ծաղկացրիք. դուք թառամեցիք, մեզ դալարացրիք. ձեր ումբը չորացրիք, մեզ տանը քուն դրիք. դուք հանդում, չուլում, արևի, անձրևի տակի՛ ջանըհան էլաք, որ մենք գորանանք. աչքըներիդ լիսը սալիտակացրիք, որ մենք մեծանանք, հասնինք, ձեզ քոմակ ըլինք. Է՛ս

ա մեր քոմակ ըլիլը, է՛ս էր ձեր մուրազը: Էստո՛ւր համար աստ-
ծուն՝ լիսը բաց ըլելիս, մութը մթնելիս, գիշեր-ցերեկ աղոթք էիք
անում, որ մեր ոտին քար չդիպչի, մեր մատը փուշ չըլի, մեր գըլ-
խին կարկուտ, արև չխփի. մեզ իր աչքի առաջին, իր թևի տակին
ցավից, չոռից ազատի, որ մենք բարի զավակ ըլինք. Քրիստոսի
խաչի դուլ դառնանք, ավետարանի՝ ծառա, եկեղեցու՝ հող, ազգի
պարծանք, աշխարքի՝ շինություն: Ա՛խ, ո՛ւր էս սհաթը աստուծո
անկաջը, որ ձեր արդար ձենն մեկ էլա չլսեց, ձեր հազար մու-
րազի մեկն էլա չկատարեց ու մեզ էսպէս քարին տվեց, ու մեր
հոգին էլա չի՛ առնում, որ պրծնինք, ա՛խ, կորչինք էս անօրեն
աշխարքիցը:

Սրբություն էիք առնում՝ մեզ հետընդերդ տալ տալիս. ժամ
էիք գնում՝ մեր ձեռը մոմ տալիս. գատիկ էր գալիս, ջրօրհնեք
ըլելիս, կիրակու ժամին, սուրբ պատարագին՝ մեզ խտիտ անում
կամ ձեռով տանում, քար, ավետարան, սեղանի, բեմի, խաչի,
պատկերի առաջին, սրբերի ոտի տակին, գիրքը կարդալիս, սկին
դուս գալիս՝ մեզ տերտերի ոտը քցում, խաչի առաջը դնում, մեզ
համբուրիլ տալիս, դուք էլ համբուրում, աղաչանք անում, որ
սուրբ ավագանի, մեռոնի շնորհքը մեզ վրա մնա. ջուրն ընկնինք,
մեզ պահի. կրակն ընկնինք, մեզ պրծացնի, մեզ զորացնի, որ
էսօր է՛ս կրակումը, է՛ս բոցումը էրվինք, տանջվինք, մեր ձենը
չիմա՛նաք. մաշվինք, փչանանք, մեր սուգը չանե՛ք. թրով մեզ
կտրատեն, մեզ դուք չազատե՛ք:

Ո՛վ արարիչ, մեր հոգու տվող աստված. ինչպէս մեզ ստեղ-
ծեցիր, էլ ետ մեզ սպանի՛ր. ինչպէս կյանք տվիր, էլ ետ դու խը-
լի՛ր. հող էինք քեզ մոտ, էլ ետ հող շինի՛ր. շունչ տվիր՝ ապրինք,
էլի շունչդ ետ ուզի՛ր: Ի՞նչ ենք անում մենք էլ փառքն ու կյանքը,
մեզ ի՞նչ հարկավոր՝ երկիր, աշխարքը: Մեր չունենաս, լա՛ դու
լաց ըլելիս, հեր չունենաս, գա՛ դու կսկծալիս, քիրդ մոտիդ չըլի՛
դու սուգ անելիս, ախպերդ ձենդ չլսի՛ սիրտդ պատռվելիս: Ո՛վ
մեր արարիչ, մեր տե՛ր ու մեր հե՛ր. հերըմերըներս տարար, մեզ
էլ տանեիր. քիր, ախպեր առար, մեզ էլ սպանեիր. էլ չենք ու-
զում քո սերն ու խնամքը, էլ չենք խնդրում, որ պահես մեր կյան-
քը. հրեղեն սերովբեդ թո՛ղ մեզ սպանի, բոցեղեն քերովբեդ թո՛ղ
մեզ էրի, խորովի. մեզ դրախտը մի՛ տանիր, դժոխքը ուղարկի՛ր.
հրեշտակի մի՛ տար, սատանեն թո՛ղ գար. մեր ծնողքը մի տես-
նեինք, թող դեր մեզ կո՛ւլ տար. նրանց սերն առնեինք, նրանց

տեսնեինք: մեր հոգին տալինք, նրանցն ստանայինք ու էս դառն օրը հե՛շ չտեսնեինք, ա՛խ, չտեսնեինք:

Էսքան մեծամեծ մարդիկ՝ խաներ, բեկեր, աղեր, ֆառաշ, մոլլա, ախունդ, էս ի՞նչ են էստեղ կանգնել, հավաքվել. չե՛ս ուզում դու էլ մի աչքդ քցես, նայե՛ս: Հայ սարվազները աչք ու բերան կալել, փափախով են անում, որ հեռանանք, մոտ չգնանք: Սաքի մոտ էլ գնացիր, ի՞նչ օգուտ. միսդ ջանումդ կմաշվի, կքրքրվի: Ետ դա՛ն, ես քեզ կասեմ: Քսան-երեսուն էրեխա փարչալամիշ արին: Մոլլի թույնը քյար չարեց, չեն թուրքանում, պտի մատաղ ըլին: Դահիճը մեկը-մեկի ետևիցը շախկա տալով կոտորում ա: Վարդանը՝ էս թագավորածին պատանին, երեսը լուսափայլել, հրեշտակի պես կանգնել ա, ո՛չ Հասան խանի պարզեին ա մտիկ տալիս, ո՛չ ոսկուն, մարգարտին, ո՛չ ալվան-ալվան շոբերին, ձիուն, յարադին, ո՛չ մոլլեքանց խրատին, ո՛չ հալերի աղաչանքին, ո՛չ թշնամու ահ տալուն, ո՛չ թրին, սրին, վառած կրակին, տաքացրած շամփրին, որ պտի միսը կոխեն, ո՛չ քարփջին, որ պտի ոտների արանքը դնեն, ո՛չ քյալփաթնին, որ հենց, էն ա, բարձրացնում են, որ միսը քաղեն, ո՛չ կրակած պղնձին, որ պտի գլխին դնեն, սարի պես դոշը դեմ ա տվել. ո՛չ պատծիցը վախում, ո՛չ պատվիցը խաբվում, իրան կսկիծը մոռացել, ընկերներին էլ ձեն ա տալիս, սիրտ դնում:

— Էս է՛ն անիրավ թուրն ա, սի՛րելիք, որ մեր հորնըմոր սիրտը էսօր մեր առաջին դուս ճոթեց: Էս է՛ն անաստված ձեռներն են, որ էսօր մեր մանուկ, ծծկեր քիր ու ախպոր մարմինը թիքա-թիքա արին, կտրատեցին: Էս է՛ն սնողորմ ազգն ա, որ մեր նաչար ազգի արինը մինչև էսօր խմել ու խմում ա. էլ ի՞նչ ենք կանգնել սրանց միջին ու սրանց գարշելի երեսին նայում: Ձեր ջանին մեռնիմ, երեխե՛ք ջան. մենք ո՛ւմ որդիքն ենք, որ թրից վախենանք. ո՛ւմ գավակներն ենք, որ կրակը մեզ թուլացնի: Մեր ծնողք ու ախպերները չէի՛ն, որ էրեկ էնպես քաջությամբ մեռան, որ արարած աշխարքը զարմացավ ու հուրն հավիտենական պտի զարմանա:

Մտի՛կ արեք, ձեր երե՛սին դուրբան, էն պաշժառ երկնքին. է՛նտեղ, է՛նտեղ էն մեր սիրելիքը, մեր ազիզ բարեկամքն ու ազգականքը մեզ սպասում: Մի՛տք արեք՝ թե գլխըներդ ցավի, ո՛վ պետք է ձեզ մեկ ջան ասի. հիվանդ ըլիք, ո՛ւմ կոան վրա պետք է

քնիք. լաք, ո՛վ ձեր արտասունքը կսրբի. մեռնիք, ո՛վ ձեզ կթա-
ղի: Մեր սո՛ւրբ լեզուն պետք է հարամ լեզվի հետ փոխե՛նք. մեր
սո՛ւրբ պատարագն ու ժամը թողանք, ազանի ձենին անկաջ դը-
նե՛նք. մեր սո՛ւրբ մեռունը մոռանանք, մեր խաչ, ավետարանը
մտքից հանենք, Ալուն, դուռանին հետևի՛նք: Մտի՛կ արեք սրանց
էս դժոխք, ժանդ, մրրած, կեղտոտ երեսին. դժոխքը սրանից լավ
կլլի՛. սրանց աչքերիցը կրա՛կ չի վեր թափում: Վա՛յ մեր գլխին
ու արևին, էնքան պետք է խղճանանք, որ մեր հորնըմորը սպա-
նողներին, մեր ժամն ու աշխարքը քանդողներին նոքար դառ-
նա՛նք: Ա՛խ, թե էս փուչ փառքիցը խաբվինք, էս անպիտան
պատժիցը վախենանք ու մեր սուրբ հավատն ուրանանք, որ մեռ-
նինք, ի՛նչ երեսով պետք է գնանք մեր ծնողաց մոտը, ի՛նչ աչքով
պետք է նրանց նայենք: Ասենք, թե էս աշխարքումը նրանցից
գրկվեցանք, բաս չե՛ք ուզիլ, որ երկնքումն էլա նրանց հետ միա-
նանք, նրանց երեսը տեսնինք, նրանց սերը վայելենք:

Ձէ՛, չէ՛. մեռնի՛նք միասին, երթա՛նք միասին, հասնի՛նք մեր
ծնողաց փառքին, պսակին: Երկինքն մեզ համար է իր սիրտը
բացել. հրեշտակք մեր գլխին թևները փռել. նահատակք, կու-
սանք, սուրբք և մարտիրոսք մեզ ձե՛ն են տալիս, մեզ կանչում
ամոք: Նրա՛նց մոտ գնանք, նրա՛նց սիրուն մեռնինք, մեր մար-
մինը տանք, որ հոգով ծաղկինք: Ձեզ մոտ ենք գալիս, ծնո՛ղք
սիրելիք, ձեր տեսուն կարոտ՝ դուք մի՛շտ պաշտելիք. ձեր արդար
կաթը, ձեր սուրբ խրատը մենք ե՛րբ կմոռանանք, որ մտնինք
կրակը:

Արի՛, երկնային հրեշտա՛կդ լուսեղեն,
Տա՛ր մեր աղաչանքն աստծուն էս կողմեն:
Բարո՛ւ մնաք դուք՝ լերի՛նք, հո՛ղ, աշխարհ⁹⁵,
Բարո՛ւ կացեք դուք՝ ծառք ու ձո՛րք, անտա՛ռ:
Մենք չէինք արժան ձեր սուրբ երեսին,
Մեր ոտն անիրավ դիպավ ձեր դոշին:
Քանի՞ցս ձեր պտուղն, ձեր համն ու հոտը,
Ձեր շվաքի տակին, ձեր ծաղիկն, խոտը
Մենք հարամ ձեռով քաղեցինք, առանք:
Կոխեցինք ձեր սուրբ երեսն ու դոշը,
Ձեր դադրն ու խաթրը մենք բնավ չիմացանք:
Աղբրի գլխին, առվի դրաղին,
Սիրելյաց միջին, ծնողաց գոգին

Մեր վայելեցինք, մեր օրն անց կացրինք:
Աստղերն մեր գլխին քաղցր ծիծաղեցին,
Լուսին, արեգակ իրանց լիսը տվին.
Թռչունք երգելով, ծաղիկք հոտ տալով
Մեզ քնացրին, մեզ զարթեցրին.
Բայց, ա՛խ, անհրավ մեր ձեռն, երեսը
Քնով ծածկեցինք, ձեզ մտիկ չարինք:
Քո սուրբ հողին, մեր քա՛ղցր Հայրենիք,
Ծունը չդրինք, մենք չսլաշտեցինք,
Սիրուն վաթանին մենք կյանք չտվինք,
Մեզ մատաղ չարինք, մենք չսիրեցինք:
Թշնամուն հիմիկ մենք եսիր դառանք.
Թե որ ուզենան էլ, որ տան մեզ կյանք,
Էլ չի՛ հարկավոր. դո՛ւ ա՛ն մեր հոգին,
Ո՛վ բարի հրեշտակ, որ կաս մեր գլխին:

Մնացե՛ք բարով, հողեր ու դաշտեր,
Ա՛խ, թո՛ղ վայելեն ձեր սերն ուրիշներ.
Վարդանի աչքը, էս մանկանց ոտքը
Էլ ձեզ չե՛ն տեսնիլ, ձեր վրեն շրջիլ,
Ձեր հոտովն զմայլիլ, ձեր գրկովն փարվիլ:
Ո՛չ հոր ոտ կգա մեր գերեզմանը,
Ո՛չ մոր արտաշունք կթափի մեր տանը.
Ո՛չ ժամ, պատարագ, ո՛չ խունկ կամ բաժակ
Մեր հոգուն տվող կըլի մեկ ժամանակ:
Ո՛չ քիր ու ախալեր կգան մեր քովը,
Ո՛չ մեկ անց կենող կըլի մեր մոտովը.
Մեր ծնողաց մալոմինը մեր գեղի չոլումն,
Մեր փուշ ոսկորներն էս օտար հանդումն՝
Ձեն միմյանց տեսնիլ, իրար հետ թաղվիլ.
Նրանք գազանի, մենք գիլի, դշի
Փայ կըլինք, մեզ վրա մեկ ասող չի ըլիլ.
«Աստված ձեր հոգին միշտ լուսավորի,
Իր սուրբ երեսին արժանի անի»:

Կըլի, որ դուք մեկ էլ ետ հոտ տալիս,
Գարունքը գալիս, դաշտերն ծաղկելիս՝
Մեր երեսին էլ ծաղկիք, կանաչիք,

Մեր հողիցն էլ դուք դուս գաք, զարդարվիք,
 Ձեր ցողն մեզ վրա թափեք, հովացնեք,
 Ձեր հովն մեր դռնին փչեք, զովացնեք,
 Ձեր պարզ ջրի հետ մեր արինը խառնեք,
 Մեր տված շունչը առնիք ու պահեք,
 Ձեր քաղցր հոտի հետ երկինքն ուղարկեք:
 Ա՛խ, թե մեկ ճամփորդ էս կողմովն անցնի,
 Ձեր միջին վեր գա ու էստեղ քնի,
 Ձեր հոտն առնելիս, ձեր ջուրը խմելիս,
 Բալքի թե հոգին իմանա, ասի,
 Միտքը բերի, թե էս է՛ն դաշտերն են,
 Որ էսօր մեր չար թշնամու ծառեն
 Ուզում ա, որ մեզ խաչին մատաղ տա,
 Մեր ջանը խլի, մեզ անի դիմա:
 Ի՞նչ կլլեր, ա՛խ, որ մեկ օրհնած հողում,
 Մեր ազգութակի, սիրելյաց միջումն
 Մեր հոգին տալինք, նրանց խառնըվեինք:

Ա՛խ, խա՛չ գորավոր, քո հրաշքիդ դուրբան.
 Մինչև ե՛րբ մեր ազգն, աշխարհն Հայկական
 էսպես կտանջվի, էսպես կմաշվի,
 էսպես կքանդվի, էսպես կխաշվի:
 Խա՛չ, քեզ պաշտողին ընչի՞ չես պահում,
 Խա՛չ, քեզ բռնողին ընչի՞ սպանում.
 Քեզ անարգողին էսպես դվաթ տալիս,
 Քեզ սլարսավողի սիրտը ո՛չ խրվիս:
 Ա՛խ, տե՛ր իմ աստված, թե մենք առաջիդ
 Մեղավոր էինք, քո պատվիրանիդ
 Չհնազանդեցանք, անիրավ էինք,
 Մեզ սպանեիր, ընչի՞ մեզ թողիր,
 Մեր խեղճ ծնողացը թրի տակ տվիր.
 Մեզ կրակ տվին, ընչի՞ չէրեցիր:
 Թողիր, որ էսպես տանջվենք չարաչար
 Անհեր ու անտեր, անմեր, անհավար
 Մնանք էս չղումն, գազանաց միջումն,
 Մեր լաշը թռչնոց, մեր արինը հողին
 Մատաղ տանք, մեր ջանն դնենք էս գետին:

Մնացե՛ք բարով, ա՛յ մեր խեղճ ազգ Հայ,
Էլ մի՛ լաք, ողբաք, ցավիք մեզ վրա:
Սրբեցե՛ք աչքներդ, տեսե՛ք մեր հալը,
Էլ ի՞նչ օգուտ մեզ ձեր սուգն ու լալը:
Թուրը գլխներիս, մահն առաջներիս,
Կրակն էրելիս, շամփուրն ծակելիս,
Բոցն խորովելիս, մեր հոգին տալիս,
Մեր կեսն փոթոթված, կեսն անձող դառած,
Մեր ոտներն մոխիր, շնչերս կրակված,
Մեկ ձեռը կտրած, մյուսը քերթած,
Պղինձն գլխրներիս, քարփիչն ոտներումս,
Սրտներումս արին, արտասունքն աչքումս.
Ո՛չ երկինքն փուլ գա, ո՛չ հրեշտակ տեսնի,
Ո՛չ դահիճն ցավի, ո՛չ երկիրն ճղվի:
Դուք ո՞ր եք լալիս, որ մենք չենք լալիս.
Դուք ո՞ր մղկտում, որ մենք չենք խնդրում:
Պահեցե՛ք ձեր սուգն սև օրի համար.
Ձե՛զ վրա լաց էլե՛ք ու տեսե՛ք ձեր ճար:
Մենք մեր ծնողաց հետ կմիանանք,
Էսօր նրանց տեսուն մենք կարժանանանք.
Էս դառն աշխարքիցս կհանգստանանք,
Դրախտը կերթանք ու միշտ կխնդանք:

Բայց վա՛յ ձեր օրին, ձեր օղլուշաղին,
Թե դուք կենդանի կանգնիք, ձեր աչքով
Տեսնիք սիրելյաց տանջանքն՝ մղկտալով.
Ձեռներդ խաչած՝ ձեր դռը ծեծելով,
Հող տաք ձեր գլխին, թաղեք ձեր որդին.
Ձեր սիրտը հանողին, կյանքը քանդողին
Եսիր դառնաք ու էլի չպրծնիք, էլի միշտ տանջվիք
Ու ձեր հողի վրա դուք մատաղ ըլիք,
Ձեր աշխարքումը էսպես դուք մաշվիք
Ու դեռ սիրտ չանեք, դուք չմիաբանիք,
Մեկ օր էս սուր, թուրն, էս կրակն ու բոցը,
Էս պղինձն, շամփուրն, էս վառ հնոցը
Դուք ձեր թշնամուն միշտ հազիր չպահեք,
Նրան դուք չերեք, նրան չկոտորեք,

Ձեր ազգն, աշխարքը դուք ազատ չանէք
Ու էսպէս թշվառ, տարաբախտ մնաք:

Մնա՛ք դուք բարով, տարե՛ք ձեր որդոցն
Մեր կարոտ սերը, մեր ազիզ բարովն.
Պատմեցե՛ք նրանց մեր խելն օրերը,
Թո՛ղ պահեն նրանք իրանց գլխրները.
Է՛ս օրին չհասնին, է՛ս ցավը չտեսնին,
Տա՛ն իրանց կյանքը ու պահեն աշխարքը.
Մնա՛ք բարով, բարով...

Վա՛յ... վա՛յ... ա՛խ... նա՛նի ջան... բա՛րի ջան... Աստված,
քե՛զ դուրբան... ամա՛ն... ամա՛ն... ամա՛ն... Մեռա՛նք... էրվե-
ցի՛նք... խորովեցի՛նք... ամա՛ն... վա՛յ... Հրեա պրծա՛նք, հրեա
էկա՛նք. ո՛վ Վարդան նահատակ, սուրբ ծնողք. ձեր զավակք գա-
լիս են, մոտ էկեք. կանք տվին, մահ առան, ձեզ չթողին, ձեր
հավատն, ձեր սուրբ խաչն չուրացան: Թրի բերնին, վառ կրա-
կին, տանջանքին դիմացան:

«Փշրեցե՛ք, ջարդեցե՛ք, ոտն ու ձեռ կտրեցե՛ք,
Առաջ փորն, հետո գլուխն էրեցե՛ք, շամփրեցե՛ք,
Մատները հաղըհան, ձեռները կաշըհան
Արե՛ք, մեջքն կրակին դեմ արե՛ք, խսնձեցե՛ք,
Կտրած ձեռն, ոտն ու մատն եղումը դադեցե՛ք,
Ով շուտով սպանի, իր գլուխը կթուչի:
Ուսուլով ու լալաշ կամ կաշին հանեցե՛ք,
Կամ գլուխը քերթեցե՛ք, կամ աչքերն փորեցե՛ք:
Թո՛ղ ոտներն էրվելիս՝ աչքը տեսնի, սիրտն էրվի.
Թո՛ղ ձեռներն կտրելիս՝ բալքի թե ահ ընկնի
Սիրտները ու դարձ գան, մեր հավատն ընդունին,
Խաչը թողան, դուռանին գլուխ տան, մերն ըլին»:

Հաւան խանն անիրավ՝ էս հրամանն ասելով,
Կրակին էր տալիս սուրբ մանկանցն՝ տանջելով:
Բայց արդարքն, վաղուց էր, տվել էին սուրբ հոգին,
Սուրբ արքան պատարագն նվիրել երկնքին:
Ողջակեզ, անուշ հոտն բարձրացել սո վերինն.
Սև սուպերն հեռացան, երկնային լիսն իջալ,
Նրանց մարմինն ամփոփեց, պտտեց, բարձրացալ:

Ու հանկարծ՝ սուկալի վերևիցը ձեն էկավ.
«Հասան խա՛ն, դու գազա՛ն, անօրե՛ն, դիվակա՛ն.
Բա՛ց չար սիրտդ, կա՛ց, կանգնի՛ր, որ ինձ տաս

պատասխան:

Ո՛չ գետինն քեզ կպահի, ո՛չ անդունդն քեզ կքաշի,
Ո՛չ դժոխք թույլ կտան, ո՛չ գեհյանն սուկալի.
Կենդանի դու պետք է քրքրվիս ու տանջվիս,
Մինչև էդ անմեղաց սուրբ արինն վճարես:
Թե շանթ քեզ հանդիպի, թե կալծակ քեզ էրի,
Իմացի՛ր, որ ե՛ւ եմ, որ քեզ տամ տանջանքի.
Երերյա՛լ մնասցես, տատանյա՛լ մաշեցիս,
Փուշ, տատասկ քեզ պա՛տի, թե հողն էլ դու մտնիս»:

Հանգիստ ու խաղաղ մնա՛ք, սիրելի՛ք,
Մինչև օրն վերջին, լիսն գեղեցիկ.
Անմե՛ղ երեխեք, արդա՛ր դուք հոգիք:
Քանի Ապարան տեսնիմ, անց կենամ,
Քանի շունչս առնիմ, ձեր անունը տամ.
Ա՛խ, իմ ազգի դուք հրեշտա՛կ, սո՛ւրբ որդիք,
Որ էդպես կանուխ դուք թառամեցիք:
Երբ երեսս հողին, ծն՛կներս չոքած,
Աչքս ծով դառած, սիրտս արնով լցված՝
Ընկնիմ, ա՛խ, գլուխս քաց ձեր սուաջի,
Համբուրեմ ձեր հողն, մնամ վրա գետնի.
Քաղեմ ձեր ծաղիկն, հիշեմ ձեր հոգին.
Ո՛վ սուրբ հոգիք ջան, երկնալին բեմին,
Աստուծո ասեճին, սրբոց խորանին
Տարե՛ք իմ խնդիրս, տարե՛ք արտասունքս,
Որ մեր խեղճ ազգը, մեր սուրբ աշխարքը,
Որ ձեզ պես մատաղ տվեց աստծուն,
Էլ չի՛ ավերվի, չմնանք գերի,
Սրի մատաղ ու եսիր թշնամուն,
Անտեր ու անճար, անտեղ ու անտուն:

Գ Լ ՈՒՄ ԵՐՐՈՐԴ

<1>

Հայաստան աշխարքը շատ վախտ էր նեղության, ավերման տակ ընկել¹, ամա էս ամենիցը անց կացավ: Սար ու ձոր դառել էր գողի, ավազակի բնակարան: Ամեն կողմից պարսիկք է՛նպես ոտը բարձրացրին հանկարծ, որ էլ դեմ կենալու ճար չկար: Բայց է՛ս նեղությունն էր, որ հայոց էլ է՛ն հոգին էր տվել, որ թե մեկ կողմից իրանց ազգին ոտի տակ էին տալիս, մյուս կողմից իրանք էին թշնամու արինը ծծելով ման գալիս: Սաղ Պարսկաստան պոկ էր էկել, սաղ Կավկազ՝ դոնմիշ էլել: Էրակլի որդի Ալեքսանդրեն², որ Վրաստան առնելուցը ետը փախել, պարսից դուռն էր ընկել ու հարիր անգամ գլուխը քարեքար տվել, որ իր աշխարքը էլ ետ ձեռք քցի, էլ սար չէր մնացել, որ անց չկենա, որ բալքի թե իր սրտի մուրազը կատարի: Լազգի, Չաչան, Չերքեզ, Ղազախ, Բոռչալու, Շամշադին, բոլոր Կասպից գավառները՝ ձեռքները հինա էին դրել, թև առել, որ թռչին ու ռսի իշխանությունը ստանան: Հայ ազգին յա կրակ էին խոստանում, յա սուր. յա կոտորում, յա թալանում: Ինչքան թույն ունեին, մեր ազգի գլխին էին թափում: Յա սլատիվ, մեծություն խոստանում, որ խաբեն նրանց, յա պատիժ, պատուհաս տալիս, որ վախենան, ոսիցը ձեռք վերցնեն: Շահիցը, սարդարիցը ֆարման ֆարմանի վրա էր գալիս, բայց հայոց արդար սիրտը, ուղիղ սերը, որ ռուսաց հետ ունեին, է՛ն ժամանակն էլ նրանց չթողեց, երբ թուրը գլխըներին խաղում, որդի ու զավակ դռըներին, առաջներին սուրն էր քաշվում յա կրակումն էրվում:

Ինչ որ Պարսից կռվի ժամանակին հալք արին, աստուծո է հայտնի, ու ամենողորմած կայսրն էլ շնորհակալությունով ու հրովարտակներով, խաչով ու նշանով էս արած լավության տեղը շատ անգամ լցրեց: Թո՛ղ բազի հիմար, անասոված մարդ հայոց

ոտը ձգի. թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան: Հալ-բաթ որ մեկ օր մեկ արդար, անաչառ մարդ Վրաստանու պատ-մությունը կգրի, էն ժամանակը կերևի, թե հալք ի՞նչ արին, ի՞նչ հավատարմություն են ցույց տվել տերությանը, ի՞նչ արին են վեր ածել:

Ո՞վ չգիտի, որ էս հաղադին, ինչ ժամանակ Հասան խանը՝ արևմտից, Աբաս Միրզեն՝ արևելից³, ավազակի պես հանկարծ էկան, մեր սահմանը (սնոր) կոխեցին, մեր կողմը ամենեկին խա-բար չուներին: Ընչանք ռուսք իրանց զորքը կհավաքեին, ղզլաշը կաթող էր սաղ Վրաստան ոտի տակ տալ, եթե հալք չէին ամեն տեղ նրա ճամփեն կտրել: Միմիայն Ներսես⁴ ու Գրիգոր⁵ եպիս-կոպոսաց, Մատաթովի⁶ ու Բեհրուդովի⁷ արածը բավական է, որ աշխարք իմանա, թե ի՞նչ հոգի ուներ էն ժամանակը մեր ազգը: Առաջինը՝ խաշը ձեռին, հալոց քարոզում, զորք էր հավաքում, որ գնան, արին վեր ածեն իրանց ազգի համար. երկրորդը՝ Երմա-լովի⁸ խնդրքովը եպիսկոպոսության շորերը փոխած, չերքեզի շոր հաքած, յարաղ-ասպաբ կապած՝ որ Թիֆլիզու, Ղազախ-Բոռչալ-վի միջովը չէր անց կենում, հենց իմանում էր խալխը, թե իրանց փրկիչն էր գալիս:

Էն ժամանակը, որ Շամշադինի մովրովը հարիր մարդով հենց հասավ Մատուշկի ասած կարմունջը ու սարսափելով էլ ետ ե՛տ դառավ, չկարաց առաջ գնալ, էս հսկա եպիսկոպոսը երկու մարդով հազար արինակեր հարամու գլուխ ջարդելով՝ Ղազախ-Բոռչալու անց կացավ, հասավ Շամշադին՝ իր հայրենիքը, իր ընտանյաց մեջը, գրաֆ Սիմոնիչին⁹, որ Գյանջուցը փախած՝ գա-լիս էր, իր բոլոր զորքովը իրանց տանը երկար պահեց ու Երմա-լովի թղթովը բոլոր կառավարությունն ստացավ, մինչև Թիֆլի-զուցը օգնություն գար: ...* գեղը, որ պարսիկք էկան, քանդեցին, գերի արին, ուր յոթանասուն տանից ավելի էր, երեսուն մարդով հինգ հազար մարդի մեջ մտավ, առյուծի պես իր ժողովուրդն ա-զատեց, նրանց եսիրը ետ բերեց: Էս միջոցին Երմալովն էլ էկավ, հասավ: Մեկ պառ օր եպիսկոպոսիցը խնդրում ա, որ կովի ժա-

* Բնագրում տեղ է թողնված համապատասխան գյուղի անունը Ռետագա-լում ավելացնելու համար, բայց մոռացվել է: Պետք է լիներ՝ Ամիրլախ (տե՛ս Ա. Երիցյանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., մասն Ա, էջ 249):—Պ. Հ.

մանակին էլ պատին մտիկ չանի, բայց նա հսկայաբար պատասխան է տալիս.

— Պարսից միսը թողած՝ ի՞նչ հարկավոր է տավարի միս ուտիլ:

Էս միջոմը Ալեքսանդր վալին¹⁰ ու Ջոհրաբ խանը¹¹ էկան, Շամշադինը կոխեցին, ու քիչ էր մնացել, որ բոլորը տակ ու գլուխ անեն. քաջ եպիսկոպոսը իր ընտիր հայերով նրանց քամակը կտրեց, զորքըները կոտորեց ու հինգ պարսիկ իր ձեռովը բերեց ու Երմալովին փեշքաշ արեց: Սա էլ ճակատը համբուրեց ու շատ անգամ խնդրեց, որ իրան ասի, թե ի՞նչ պարզև ա ուզում թագավորիցը, բերիլ տա: Անմահ եպիսկոպոսը է՛ն խնդրեց, որ Շամշադինու ու Ղազախ-Բոռչալվի հայ ազգը թուրքի ձեռիցն ազատվի, չունքի մինչև էն ժամանակը նրանց ձեռին շատ նեղություն էին քաշում: Խնդիրքը կատարվեցավ, ու ինքն էլ արքայական պսակին ու թոշակին (պենսիա) արժանացավ:

Ո՛վ չի զարմանալ, որ սրա ախպեր Գալուստը¹² ինչ ժամանակ Հասան խանի ձեռը գերի ընկավ, ու ուզում էին, որ գլուխը տան, Նադի խանը մեջ ընկավ ու նրան արձակիլ տվեց: Սարդարն էլ էն պայմանավ նրան թողեց ու ֆարման տվեց, որ Շամշադինու, Ղազախ-Բոռչալվի մեծությունը որդոց-որդիս նրան կբաշխեր, թե կարողանար հայերի սիրտն առնիլ, նրանց դարձնիլ, որ դղբաշին ծառայեն: Հրամանն էնպես էր տված, որ թե չորս օրվա միջի խաբար չբերի, գլուխը հազար կտոր պետք է ըլեր: Բայց նա էս բոլոր արիւնը աչքի տակն առած՝ էկավ ու թղթերը Մատաթովին տվեց: Հասան խանը հազար ոսկի նրա գլուխը բերողին, երկու հազար՝ նրան սաղ-սաղ բռնողին էր խոստացել: Շամշադինու սարերը, ձորերը գիշեր-ցերեկ գող ու ավազակ դվլում էին, որ նրան բռնեն, իրանց պարզևն առնին, բայց շատին ինքը իր թրին պարզև արեց: Է՛սքան անվանի, է՛սքան քաջության տեր էր էս օջախը, բայց էլի ով Գրիգոր եպիսկոպոսին տեսներ, հոգին հետը կերթար. է՛ն զարմանալի սրտի տերն էր, է՛ն քաղցր լեզուն, է՛ն անուշ բնությունն ուներ: Երեխի պես կնատեր, կպատմեր, ինչ գլխովն անց էր կացել:

Բայց ի՞նչ հարկավոր է բանը երկարացնիլ: Քանի Կավկասյան սարը կա, Մատաթովի ու սրանց արածը հավիտյան կհիշվի, կասվի:

Միթե Ներսես եպիսկոպոսը չէ՞ր, որ գրաֆ Պասքենիչի¹³ հետ

մտավ Հայաստան ու հայոց մեծ մասը՝ քարոզելով, հորդորելով, ուսի ձեռի տակը բերեց: Քանի՛, քանի՛ քաղաքներ, գեղեր դարտակվեցան ղզլբաշի ու օսմանցվի երկրումը ու քանի՛սն էր Հայաստան, Վրաստան նրանցով լցվել:

Ո՛ր թողանք էն մեր հոյակապ իշխանքը՝ Բարսեղ, Մանուկ, Մկրտիչ աղեքն բայազդցի¹⁴, աշխարհահռչակ տունն Տիգրանյան դարսցի¹⁵, որ, ինչպես հայր, իրանց բոլոր հարստությունը վատնեցին, փչացրին ու իրանց աղքատ ժողովուրդը պահելով՝ բերին էս կողմը: Էսօր էլ նրանց անունը տալիս՝ բայազդցիք ու դարսցիք ուզում են երեսներին խաչ հանեն, էնքան անթիվ է նրանց հերությունն ու լավությունը ազգի վրա:

Միթե էս բայազդցի՞ք չէին, որ երբ մեր գորքը նրանց քաղաքն առավ, մեկ քանի օրից ետը հանկարծ Վանա փաշեն մեծ ղոնշունով որ էկավ, Բայազդի չորս կողմը բռնեց, էս քաջ հայերը հոգին ատամների տակն առած՝ է՛ն տղամարդությունը ցույց տվին, որ դեռ Երեան չեկած՝ շատը աստիճան, իսաչ ստացավ: Էսօր էլ որ էս ողորմելիքը Թիֆլիզումը, մշակություն անելիս կամ բաղնաներումը ծառայելիս, խոսք ա ընկնում, էն կտրատված շորքներիցը էլի իրանց խաչերը հանում, գոռոզությունով ցույց են տալիս իրանց արնի գինը:

Կարելի է, թե պատմությունը, որ հայի համար քոռացել, մեծ-մեծ ազգերի ա ղուլուղ անում, էլի մոռանա, բայց ազգասեր հայն ի՛նչպես չպաշտի էն արծափեցի Մանուկ¹⁶ աղայի գերօրինակ բաշությունը ու հսկայությունը, որ դեռ Բայազդի չառած՝ առյուծի պես, քառասուն քաջ հայազգի բամակին, Մասսա սարին նայելով, իր ազգի մեծությունը միտքը բերելով՝ թև էր առել, սար ու ձոր ոտնատակ տալիս, փաշին ու բոլոր Բայազդու գավառը պահում, քրդերին քարեքար տալիս, հալածում: Տասը տարուց ավելի էսպես իր աշխարքին տիրություն էր անում. վաթսուն մարդով շատ անգամ երկու-իրեք հարիր քրդի մեջ մտել, ջախըբուրդ արել, դուս էր էկել, ու ինչ ժամանակ Պարսից կռիվը բաց էլավ, արծվի պես ընկել էր Մասսա էս կողմը ու Հասան խանի ղոնշունը շատ տեղ կոտորել, ջնջել էր: Էնպես որ, խանը աննարացած՝ գրեց փաշին, որ յա Մանուկին կորցնի, յա թե չէ հազրվի, որ վրեն կռիվ կգնա: Հսկա, բայց տարաբախտ Մանուկ աղեն էն օրը, որ էս խաբարն ընկնում ա քաղաքը, գալիս ա, որ բարութ առնի: Փաշեն, որ նրան աչքի լսի պես էր սիրում, կանչում, աղի ար-

տասընքով խնդրում ա, որ անպատճառ գլուխն առնի, քաշվի, բայց քաջասիրտն Մանուկ իր տղամարդությանն ապավինելով՝ ասածն անկաջըվեր անում ու գալիս, մեկ դուքանի առաջի գրից տալիս, որ տասը դոլքաշ հանկարծ վրա չեն թափվում, վեցին էլ սպանում ա ու հետո ա հոգին տալիս ու խաչվում: Էսօր էլ ինչ բայազդից նրա անունը տալիս ա, ծուխը քթիցը դուս ա գալիս: Լիս կտրի՝ գերեզմանդ ու հողդ, անպարտելի՝ հսկա: Ա՛խ, ե՛րբ կըլի, որ քո հոգին գա, մեր ազգի վրա իջանի, որ մենք էլ մեր ազգին քե՛զ պես տիրություն անենք, քե՛զ պես մեռնինք:

Ո՛ւր թողանք դարաբաղոցոց, երևանցոց ու լոռըցոնց արած-ները¹⁷, որ քար ու հող դոլքաշի արնովը լվացել, արին են թափել: Ղորդ ա, էն վաղուցվան հիանալի մելիքները չկալին, ամա նրանց հոգին շա՛տ տեղ էր մնացել: Ղզլբաշի շատ ղոնշունի գըլուխը սրանք կերան:

Ա՛խ, ո՛ւմ մտքից կերթա է՛ն հսկա կերպարանքը, է՛ն գեղեցիկ պատկերը, է՛ն անոշ լեզուն ու անօրինակ ռաշիդությունն ու սիրտը, որ շուլավերցի Սոսի աղեն ու մելիք Հոհանջանն¹⁸ ունեին: Հրեղեն վիշապի պես ընկել էին Քաշվերու ու Բոլնիսի սարերը, որ թշնամու առաջը կտրեն, տեղ չտան, ու ինչ ժամանակ խաբարը նրանց է հասնում, թե Նեմեցի Կոլոնիեն¹⁹ տվին, քառասուն կտրին տղերք քամակին, իրանց մովրովն էլ մեջըներումը՝ է՛ն վախտն են վրա հասնում, որ քուրդ Օքյուզ աղեն վաղուց Կոլոնիեն քանդել ու իրեք հազար մարդով էսրների կեսը կոտորել, կեսը առաջն արել, տանում ա: Արինն աչքներն առած՝ ընկնում են էս մեկ բուռը գորքը էն անթիվ բազմությունի ետևիցը: Քուրդ ու դարափափախ՝ էսրները տալիս են մեկ քանի մարդի ձեռք ու իրանք ետ դառնում: Էս միջոցումը մովրովը հալի ղոնշունն առնում, փախչում ա, որ իր գլուխը պրծացնի. միմիայն քաջն Սոսի մեկ քարի տակի, իր կտրին ընկեր մելիք Հոհանջանի հետ դալիմանում, ու մեկը մեկին ձեն են տալիս.

— Նամարդությունն ու թուլությունն տղամարդի համար ամոթ ա, քաջությամբ մեռնինք, որ մեր որդիքն էլ իմանան, թե մենք էլ ենք սիրտ ունեցել ու մեր երկրի թասիբը քաշել, մեր աշխարհի սիրով մեռել: Էս մուռտառ արինն էլ ընչի՞ ա պետքը, որ էսպես օրը չենք թափիլ: Չոլումը մեռնիլը տղամարդություն է: Ծանանչ թուրքեր ձեն են տալիս.

— Սո՛սի աղա, քո աղ ու հացը շատ ենք կերել, մեր աչքը

կրոնի, թե քեզ վրա թուր բարձրացնենք: Մենք քեզ կտանինք, սաղ-սալամաթ ճամփու կքցենք. մի՛ անիր, գլուխդ մահու մի՛ տար, քե՛զ ենք ափսոս գալիս, արի՛, քեզ խնայի՛ր:

Բայց հսկայն Սոսի՝ կասկած ունելով, թե իրանց կրոնեն, ե-սիր կանեն, նրանց խոսքին չի՛ նայում ու առաջի թվանքը որ չի քցում, Օքյուզ աղի տղեն է սֆթա ձիու շնքովն ընկնում: Կատա-ղած հարամին ընչանք վրա կհասներ, մեկ տասներհինգ մարդ էլ սպանում են էս կտրին հսկայքը ու թուրըները հանած, երբ բա-րութները հատնում ա, ընկնում են գազանների մեջը, առյուծի պես: Ընչանք իրանց հոգին կտալին, մեկ տասը հոգի էլ թրի են մատաղ անում ու իրանք աստծուն մատաղ ըլում:

Հանգի՛ստ ձեր սուրբ ոսկերացը, ո՛վ քաջ նահատակք: Ձեր ջիվան ջանի արինն ա, որ էսպես սիրտս կրակում ա: Ի՛նչ հայ ձեր անունը լսի ու ձեր լիս գերեզմանին ողորմի չասի, ձեր հիշա-տակը իր սրտումը չգրի: Մի՛ իմանաք, թե ձեր ազիզ արինը նը-հախ տեղը թափվեցավ. էդպես պատվական արինն էր, որ աս-տուծո սիրտը գութ քցեց, մեր աշխարհն ազատեց ու էսօր էլ է՛ն ձեր նահատակության քարի տակիցը ձեն ա տալիս.

— Հա՛յք, մե՛զ պես մեռեք, որ անուն ճարե՛ք:

Էսպես օրինակներ հազարները կան, բայց էլի մենք մեր պատմության տուտն սկսենք:

Բարեխնամ կառավարությունը տեսնելով, որ աշխարքն էս-պես ոտի տակ ընկավ, հրամայեց, որ Փամբակ, Շորագյալ քոչին, գան Լոռի²⁰, որ իրանց պրծացնեն: Աստված հեռու տանի, ինչ խալխի հալն էր: Որի խապերը չկար, որի հերը, որի որդիքը, որի մերը: Ղարաքիլիսեն, ինչ տեղ որ իշխանն Սավարգամիրգա կենում էր, դառել էր սգատուն, գողադարան: Անօրեն պարսիկքն ու թուրքերը ձորից, սարից, օրը ճաշին, մեր աչքի առաջին, մեկ թվանքի մանգզիլ տեղ, վրա էին տալիս գազանի պես ու տավար, մարդ եսիր անում՝ կամ տանում, կամ գլուխը կտրում: Ո՛չ ցերեկն ունեինք քուն, ո՛չ գիշերը: Մեկ ձիու ոտի կամ թվանքի ձեն մերուցը գալիս՝ աշխարքն աշխարքով էր դիպչում: Հերը որդին ուրանում էր ու աչքը ջուր կտրած, շլինքը ծուռը՝ մտիկ անում, թե հրես, որտեղ որ ա, հարամին կգա, նրան սուրը կքաշի: Մեկ դաստա՛ սալդաթ ու մեկ քանի դազախ, որ գնացել էին ճամփեն բռնեն, էնպես ջարդված, յարալու-փարալու ետ էկան, որ մարդի գլխին կրակ էր վառվում: Մեկ օր Նաղի խանը էսպես վրա տվեց, Ղշլաղ

ասած գեղն էրեց ու Ղարաքիլիսու վրա էկավ: Էլած-չէլած դոն-
շունը թոփերն առած՝ քաղաքի առաջը կտրեց, խալխն էլ տուն ու
տեղ բաց թողին ու իրանց էրեխեքանց ձեռը բռնած՝ գնացին, թո-
փի տակը մտան: Ռուսաց քաջ հոգին էր, որ մեզ ազատեց:— Վա-
ղուց էինք սրբություն առել ու մեր սև օրին աչքըներս կթել:

Խալխը քոչիլ չէր ուզում, չունքի սրի ձեռիցը սովի ձեռը
պետք է ընկնեին, ու չէին ուզում էլ, որ իրանց քաղցը հողիցը
բաժանվին: Մտքիցս չի գեալ էն դառն օրը, որ հրամանն էկավ,
թե անպատճառ քոչին: Ո՛վ կուզեր խար է՛ն տունն էրել, որտեղ
որ իր հերընդները կացել, իրան կաթը տվել, պահել, մեծացրել,
մեռել էին. է՛ն իգին իր ձեռովը քանդիլ, որ դառը քրտնքով բնամ
բերել, էն տեղն էր հասցրել: Հաջաթ, գարդ, տան կալեմք, ինչ կար
չկար, բոլոր կրակ տվին, ինչ ժամանակ ռսի ժամի մուխը տեսան,
որը որ մեծավորը ի՛ր ձեռովը կրակ տվեց, ու սկսեցին լալով,
սգով իր քաղցը, ազիզ սիրելյաց գերեզմանը համբուրի, բարով
մնա ասիլ իրանց հողին, ջրին, թոփի, սալդաթի մեջն ընկնիլ ու
Դվալի սարի է՛ն կողմն անցնիլ: Դեռ կիսաճամփի էինք, որ Նա-
ղի խանը իր դոնշունովը էկավ, մտավ Ղարաքիլիսա, ու սարի
դոշիցը ամեն մարդ իր տան կրակի ծուխը տեսնելով՝ քթի ծուխն
էլ հետն էր դուս գալիս, ու աչքը խփում էր, որ էս կսկիծն էլա
չտեսնի: Քոչվորի մեկ տուտը Զալալօղլի էր հասել, մեկը դեռ
հլա սարի էն կողմն էր: Թուրքերը ջամդաքակեր գիլի պես գլխը-
ներիս պտիտ էին գալիս ու սարից, ձորից թվանքները մեզ վրա
կրակում: Էն օրը գնա, ո՛չ ետ գա, ինչ մեր հալն էր: Լացի, սգի
ձենը երկինքն էր հասել, լսողի, տեսնողի սիրտը էրում, փոթո-
թում:

Խալխը սար ու ձոր լցվել, իրար վրա էր թափել. ո՛չ տուն
կար, ո՛չ տեղ, ո՛չ հաց, ո՛չ ապրուստ: Ով բարեկամ կամ ծանոթ
ունեն լոռի, գնաց, նրա մոտ վեր էկավ. ով հարուստ էր, գլուխը
պահում էր. ով մեկ աստվածասերի ռաստ էր գալիս, գեղարեն-
քումը իր քյուլֆաթին մեկ տաք գոմ էլա ճարում, նրանց տեղավո-
րում էր, ով չէ՛, սարում, ձորում, էրում, քարափում բուն փորում,
մեջը մտնում ու գլուխն ու մեջքը լեռ քարին տալիս: Լոռվա ձորի
մեջը, էս գլխիցը էն գլուխը, խալխ էր, որ իրար վրա վեր էր թա-
փել. շատը հողն էր ծակել, մեջը մտել. շատը փետեր իրար վրա
տվել, տակին կուչ էկել, բաց հաց, շոր, ապրուստ ո՛րդիանց ստա-
նային ողորմելիքը: Հացի կոտը դառավ օխտը-ութ մանեթ, էն

Էլ չէր ճարվում: Սարերումն՝ էլ բանջար, խոտ չէր մնացել, քաղել, կերել էին: Զուկը բռնելով, ֆորս անելով ի՞նչպես կարելի էր տուն պահիլ. քչիցը, ամեն մեկ տան տասը ջան կըլեին: Էլ սատկած տավար չմնաց, որ չմորթեն, չուտեն: Ծատ հեր, շատ ախպեր իրանց օղյուշաղի, քոռփա էրեխեքանց ձենին չդիմանալով՝ տասնով, քսանով հավաքվում, գլխըները փեշըներին էին դնում, էլ ետ թաքուն Փամբակ գնում, որ հաց բերեն. բայց, ա՛խ, որը եսիր էր ընկնում, որը գլուխը թշնամուն տալիս, իր տունը քանդում:

Զմեռն էլ էկավ, վրա հասավ: Մարդ, անասուն սովի, ցրտի ձեռիցը ազար ընկավ: Աստված ո՛չ շհանց տա, ի՛նչ էս խեղճերի հալն էր: Քար էր, որ գերեզման էր դառնում, հող էր, որ ջիվան-ջիվան երեխեք, իրեք-չորս օր սոված, թաղաթը կտրած՝ տակովն անում: Մեկ հացի ֆոտ դուս գալիս, հազար աղքատ՝ շիմքը ծուռը, դուռըդ կտրում. չտալիք, սիրտդ էր էրվում, տալիք, երեխեքդ մնում սոված. կարոտ էինք մնացել, որ ցամաք հացն էլա կուշտ փորով ուտենք: Ով ինչ զարդ, զինքս ու զարդարանք, արծաթեղեն կամ մարգարտեղեն ուներ, որը ծախեց, որը գրավ դրեց: Ծատը որդիքը տարան Ծուլավեր, Բոռչալու, եսիր տվին: Իմ տան տերը դերձիկ էր: Որ գնում չէր, բանում ու մեկ քանի շաբթից ետը մեզ համար հաց բերում, հենց իմանում էինք, թե երկնքիցը հրեշտակ է գալիս: Էսպես՝ հազարավորք մեռան, սովամահ էլան, ու շատ փայն էլ էկավ, ընկավ Վրաստանու հողը ու գլուխը արծացրեց: Էսպես ա հայն իր խեղճ օրը հազար տարի պահել, իրան էս տեղ հասցրել, մեկ թշնամի ոտը բարձրացնելիս՝ նրա գլուխը ջարդվել, նրա տունն ու տեղը քանդվել, էլ ի՛նչ անօրեն, անգութ մարդ պետք է ըլի, որ հայի միսն ուտի ու նրան չխղճա:

Հիմիկ էս թողա՛նք, գնա՛նք էլի մեր սիրելի Աղասու մոտ, տեսնի՛նք, ո՞ր մնաց, ու ի՞նչպես պետքը նրա բանը վերջանա:

<2>

Էս խառը, դառը, ալեկոծյալ ժամանակին էր, որ մեր իգիթ Աղասին հինգ տարի սարեսար, քարեքար ընկած, հինգ ընկերիցը իրեքը կորցրած, երկուսը քամակին, մեկի անունը Կարո, մյուսինը՝ Մուսա, մեկ տասը-քսան քրդստանցի հայ էլ իր թշի տակը բերել, սար ու ձոր չափելով՝ ման էր գալիս: Մեկ օր Անի էր ըլում, մեկ օր՝ Ղոշավանք, ու էստեղ-էնտեղ չափմիշ անելով՝ գը-

լուխը պահում էր, որ յա իր ջիգրը հանի, յա մեկ հազար մարդ էլա սպանի, հետո հողը մտնի, որ սրտումը դարդ չըմնա: Ավելի Անի էր նրա բնակության տեղը, որտեղ որ հարիրավոր ղզլբաշի գլուխ էր թրին մատաղ արել: Էստեղից էր, որ վրա հասավ ու իր չար թշնամի Հասան խանին ճանկեց, ամա ջահելությունն ու խաչապաշտությունը նրան գլխից հանեցին, նա խաբվեց ու հագիր ձեռն ընկած ֆորսը էլ ետ բաց թողեց:

Մեր կարդացողների լավ մտքին կըլի, որ նա, երբ Քանաքեռ սարդարի ֆառաշներին սպանեց, ինքն էլ էնպես մնաց ազիզ Թագուհու ու իր արածի վրա սառած, կանգնած: Ընկերներն էլ ժամանակ չկորցրին. գիտեին, որ բոլորի վերջը մահն է, էլ ո՛չ հոր մտիկ արին, ո՛չ մոր, Աղասուն կապեցին ձիու վրա ու ընկան Ապարանու սարը, որ կամ Փամբակ փախչին, կամ Ղարս, կամ Ախլցխա, որ իրանց գլուխը թափեն: Էրկու սհաթից ետը ի՞նչ Քանաքեռու հալն էր, աստված ո՛չ նշանց տա: Սուգ ու շիվանն ընկավ գեղը. տուն էր, որ քանդում էին. մարդ էր, որ փետ ու միս էին արել, փախածներին պտրտում. նրանց հերներմերը, օղուշաղը թրի տակ արած՝ մեկ սհաթի միջումն որի շիները թոկ քցած, որի ձեռները ետևին կապած՝ ոչխարի պես առաջ արին, որ տանին սարդարի դուռը:

Որդի էր առաջները գալիս, որ հոր ճտովն ընկնի ու իր վերջին բարովն առնի. աղջիկ էր մոր դոշին ընկնում, որ հոգին տա. հարսն էր մեջ ընկնում, փեսա էր ոտները կտրել փաթաթվում. ուրիշներն էին յարալու անում, որին թվանքի ոռքով ջարդում: Քար էր ընկնում ձեռները, վրդներն էին քցում. փետ էր պատահում, գլխերն էին խփում: Շատին էլ տան սներիցը կապել, էնպես էին չիփ-չիփլախ ոտին, գլխին վեր հատում, որ մեկ ձեռը երկինքն էր հասել, մեկը՝ գետինը: Սաղ գեղը պոկ էր էկել. որը գլխաբաց, որը բոպիկ ոտով, որը յարալու, որը կուռը կտրած՝ արնաթաթախ, երեսը պոճոկելով, գլխին, դոշին տալով. որը ջուրն էր ուզում ընկնի, որը քարափնըլեր: Քեղխուղեքն էլ հո, ձեռ-ձեռի կապած, էնքան ոտի, թվանքի տակ էին ընկել, որ ջանքներումն էլ սաղ տեղ չկար:

Էս հալին մտան Երևան. գնացին բերդը: Կնանկները քարով, փետով դեն արին, մարդկերանցը ներս քաշեցին, ու անկուշտ Երևանի բերդը առամները սրեց, որ էս նոր էկած ղոնաղներին էլ փորումը լավ տեղ տա, մարսի: Երկար վախտ դեռ նրանց ձեռը

քերդիցը, կնանոնցը՝ դրսիցը, իրար էին հասնում, իրար գլուխ լալիս, մինչև քամին բոլորի ձենն էլ կտրեց,— աշխարք դինջացավ, դահիճքը կատաղեցին:

Էս միջոցին խաբար հասավ Սահակ աղին: Էս Երևանու հայերի փրկիչը, որ ազգով, պապով էնքան հոգի, տուն ազատել էին քանտից, մահից, սրից, թրից, որ թիվ ու համար չկա: Ձին թամբած՝ տանը հազիր էր. թռավ ձիու քամակը ու նոքար, բեքար առաջն արած՝ է՛ն սհաթին հասավ քերդի դուռը, որ կնիկ, օղլուշաղ քար, հող ուզում էին պոկեն, գլխըներին տան, բաց քարն էնքան անիրավ չէր, որքան անաստված ֆառաշները: Ձին որ չքշեց մեկի վրա ու դամշով գլխին տրաքացրեց, տասը տեղ գունդ ու կծիկ անելով՝ մնաց քամակի վրա ընկած:

— Հենց է՛ս սհաթին փորդ վեր կածեմ,— ասեց,— սա՛տկած շուն, քո ի՛նչ հաղդն ա կնիկարմատի ձեռ վրա բերես: Կապեցե՛ք էդ շներին, հենց էս սհաթին դրանց թոզը քամուն տալ տամ, դրանց սոյին նա՛լլաթ:

Էս խոսքի վրա նոքարները էլ վախտ չի՛ կորցրին, վրա թափեցին ու հենց, էն ա, էստեղ-էնտեղ շատին բողմիշ արել, ուզում էին ոտ ու ձեռ կապեն, որ բիրդան Սվանդուկի խանը քերդիցը դուս էկավ: Թուրքերի միջին, կարելի է, մեկն էլա էնքան հայի թասիքը չէր քաշում, ինչքան էս օրհնած խանը: Նրան էլ որ էն դիցը դուս գալիս չտեսան, թուրք, հայ մնացին փետացած, կանգնած: Բաց ո՛վ էր կարող էս հաղաղին էն նաչար, ջրատար եւրոների օղլուշաղի ձեռ ու ոտ կապիլ: Հարայ տվին ու ընկան ձիու ոտը.

— Խա՛ն, գլխովդ ման տանք, ոտիդ հո՛ղ դառնանք, մեր ձեռն ա, քո՛ փեշը. վերևումն՝ աստված, ներքևումը՝ դու. մեզ տա՛ր, ջուրն ածի՛ր, մեզ էստեղ սպանի՛ր, սուրը քաշի՛ր, ձիուդ ոտի տակին մատաղ արա՛, մեզ մի նար արա՛:

Բարեսիրտ խանը ձին ետ քաշեց, ֆառաշներին դամշելով դեն արեց, որին իսկույն վեր քցիլ, բերանը հող ածիլ տվեց, որի առամներն ու գլուխը մաշկի նալչով լավ տրորիլ տվեց, մյուսներին էլ բերդն արեց ու ինքը աղլուխը աչքին դրած՝ սկսեց ձեռը մելիք Սհակի գոտիկը քցիլ ու ասիլ.

— Ա՛խ, ճամփեն փուշ ու տատասկ դառնար էս անիծած դաշարի, որ մեր հողը չմտներ: Աշխարքը քանդեցին, աստված մեկ քար էլա չի՛ քցում սրանց գլխին, որ սատկին, փչանան: Էս ի՛նչ ա էս խեղճ խալխի հալը: Մեկ աղջկա խաթեր էսքան տուն քան-

դիւն աստված ի՛նչպէս ա դաբոյ անում: Աստված մեր թուրը մեկ օր մեր սիրտը կցցի, էս գոլումին քարը չի՛ դիմանալ, ո՛ր մնա մարդը: Գնա՛նք, Մա՛լիք, գնա՛նք, կես սհաթ որ ետի վրա հասնինք, էն խեղճ բռնվածների տունը կքանդեն՝ յա աչքները կհանեն, յա գլխըները կկտրեն: Աֆա՛րիմ, Ա՛ղասի. էս սհաթին էստեղ ըլի, աչքին պաշ կանեմ: Ռաշիդ տղեն էնպէս կըլի, ամա ի՛նչ անես, որ անօրենի ձեռի ենք մնացել: Գնա՛նք, վախտ կորցնիլ պետքը չի:

Էսպէս խոսեց էս արժանահիշատակ թուրքը, որ ամեն սհաթի հաչերի համար գլուխը ետ էր դրած: Նոքարներին հրամայեց, որ էն կնանոնցն ու Թագուհուն իր տունը տանին, ընչանք ինքը գա, ու ինքը Սհակ աղի հետ մտաւ բերդը: Ղարավուները սրբանց որ տեսան, մնացին փետացած կանգնած: Երևանու բնիկ թուրքերը, որ հաչի հետ մեկտեղ մեծացել, խխոր պէս էին վարվում, սարդարին, Հասան խանին անիծելով, թքելով, դզբաշի վրա ատամները դրճտացնելով՝ քիչ-քիչ քաշվեցին ու դէմը գնում էին, դէմը ասում.

— Տե՛ր աստված, ե՛րբ կըլի, որ քո ողորմության դուռը բացվի, ու մենք էս անիծած դզբաշի ձեռիցը մեկ օր ազատվինք:

Չունքի սրանք երլու ըլելով՝ չէին ուզում մեկ օր էլա նրանց ծառայեն, ու շատ անգամ հաչերի հետ միացել, քշել էին նրանց, ամա թրի գոռով էկել, էլ ետ երկիրը զավթել էին:

— Սա՛րդար գլխի՛դ դուրբան,— ասեցին Սվանդուլի խանն ու Սհակ աղեն ու ձեռ-ձեռի տված՝ ընկան դիվանխանեն հենց է՛ն սհաթին, որ խեղճ հաչերի կոներն ու աչքերը կապել, չոքացրել էին, որ գլխըները տան: Դահիճները թուրըները սրել, գլխըներից կանգնել էին:— Սա՛րդար, մեր գլուխն էլ սրանցի հետ տո՛ւր, — ասեցին, չոքեցին ու ուզում էին իրանց ձեռովն իրանց աչքը կապեն:— Տուն, մալ, դովլաթ, օղլուշաղ, դովում, դարդաշ՝ գլխիդ եսիր ըլին: Զեռըներիցը բռնի՛ր, ջուրն ածի՛ր, մեր հոգին ա՛ն ու էս անմեղ խալխին սուրը մի՛ քաշիր: Սարը քո առաջին գլուխ չի բարձրացնիլ, ծովը, քեզ տեսնելիս, բերանը կփակի. ոտդ թափ տաս՝ երկիրը թե կառնի, կթռչի. արարած աշխարքը թրիդ առաջին դու ա դառել. անունդ երկնքումն ա ձեն տալիս. ոտդ որտեղ դնում ես, ծաղիկ է դուս գալիս. աչքդ որտեղ քցում ես, արեգակ է բաց ըլում. ի՛նչպէս ես մեկ լաչար աղջկա խաթեր, մեկերկու նոքարի խոսքով՝ էսքան տուն քանդում. բաս ո՛ր մնա քո

ռահմն ու քարամաթը, որ ալամ աշխարք տեսել, զարմացել ա: Ի՞նչպես էս էդ հալալ բերնիդ լայեղ տեսնում, որ սրանց արհնը վեր ածիլ տաս: Քո քոշք ու սարեն ողորմության դուռն ա, ընչի՞ ես արնի տեղ շինում: Սրանց ծեր հասակին, սրանց խեղճ եթրմներին խնայի՛ր: Սրանք ի՞նչ են արել, որ մեկ տղի, մեկ թուլի, հարամու գլխին եսիր ես անում: Երկինքն էլ ա քոնը, ի՞նչ թե երկիրս: Արարած աշխարքս քե՛զ ա գլուխ վեր բերում. մեկ աղջիկն ի՞նչ ա, որ նրա խաթեր քո խալխի տունն ուզում ես քանդես: Աղջիկ ես ուզում, հազարը կա: Ո՛ւմ աչքդ առնի, որ քեզ մատաղ չըլի: Մեր ջանն ուզի, որ քեզ տանք, աղջիկն ո՛ւմ շունն ա: Դո՛ւ չես, որ էդ հալալ բերնովդ ամեն օր ասում ես. Հայերը քո աջու թևն են, քո երկիրը շենացնողը, խազիկնեղ լցնողը. քո թուրը կտրուկ, երեսդ պարզ անողը նրանք են: Ի՞նչ կըլի, որ էս սհաթին քո ցասումդ մեզ վրա թափես, սրանց խեղճ գաս: Ասլանին ի՞նչ փառք՝ գառի գլուխը ջարդի: Չէ՛, սրանք քո չրաղն են, քո ըմբրիդ դվաշին. ընչի՞ ես նհախ տեղը կորցնում: Անողը պետք է բռնած, սրանք ի՞նչ մեղք ունին: Ում ձեռն արնոտ ա, նրա աչքը պետք է հանած, սրանք ի՞նչ են արել: Սա՛րդար, երկնքի, երկրի տե՛ր, սա՛րդար. Դու չես մեր շլինքը տալ, մե՛նք մեր թուրը մեր սիրտը կխրենք: Թե մեր արհնը քեզ համար թանկ ա, սրանց գլուխը մեզ բաշխի՛ր: Քո դռան շունն ենք, մեզ մի՛ կորցնի՛ր:

Էսպես աղաչանք արին ու չոքըչոք, թրըները տարան, սարդարի առաջին դրին, ոտի տակն ու փեշը համբուրեցին, երեսներին քսեցին ու գլխըները գետնին կացրին, որ տեսնին, թե բանն ինչպես ա վերջանում:

— Ձեռներս կապում եք, Խա՛ն, Մալի՛ք,— սկսեց սարդարը քերանը բանալ,— ի՞նչ անեմ. ի՞նչ կըլեր, մի քիչ ետի էիք էկել: Ինչքան բարկացած էլ որ ըլիմ, ձեզ տեսնելիս՝ թուրը ձեռիս, ձեռս թուլանում ա: Մի՞նչն է՛րբ էս կրակը մեր երկիրն էրի: Հայ ազգը ո՛չ թրից ա վախենում, ո՛չ թվանքից, ո՛չ թոփից: Կրակն էս քրցում, էլի իր հավատն ա պաշտում. ծառին ես կախ անում, միսը պոկում, բերանը տալիս, էլի իր խաչն ա պաշտում, իր Քրիստոսի անունը տալիս: Էս մեկ կտոր փետն ի՞նչ ա ախր, որ սրանք Էսպես ապավինել են. որդին ես քաշում, ինքն ա հետը կրակն ընկնում. հորն ես բռնում, որդին ա գլուխը մահի տալիս: Սրանց մեկ կնիկ են տալիս, մեր օրենքը՝ քանի որ քեֆդ ուզի: Ռահա-

թություն, մշակություն են անում, բուրդ հաքնում, ցամաք հացի կարոտ, մենք սրանց խանություն, բեկություն, աշխարք, պատիվ, դովլաթ, մեծություն ենք տալիս, ախր ընչի՞ համար չեն խելքի գալիս, մեր մասսաքին, օրենքին հավանում, մեր հավատը ընդունում, պաշտում: Բոլորը ջնջես՝ աշխարքը կքանդվի, չունքի երկիր շենացնողը, հաց տվողը սրանք են: Արևի, անձրևի, կոռի, բեգյարի տակին չորացել, չոփ են դառել, էլի որ մեկի մազին դիպչում ես, ասլան ա դառնում, մարդի պատռում: Հսքան մեր ազգը սըրանց կոտորեց, եսիր տարավ, աշխարքը քանդեց, էլի խելքի չեկան: Ծահություն էլ որ խոստանում ես, իրանց գլուխն են դեմ անում, էլ ի՞նչ ասես: Մեկ մարդ փլավի, մսի տեղ խոտ, բանջար ուտի, ամսներով պաս պահի, ցամաք հացի ապով մնա, ախր էն գլխումն էլ ի՞նչ խելք կըլի: Ախր ի՞նչ սատանա է սրանց սիրտը մտել, սրանց ճամփից հանում:

Մեր փեղամբար Մահմադն ասում ա՝ թշնամուդ աչքը հանի՛ր. սրանց Քրիստոսն հրամայում, որ նրան սիրես, քո աչքդ հանես, նրան տաս, նրան օրհնես, թե քեզ հալածի: Հս խե՛ղք ա: Հավն էլ իր ճուտը ուրուրին չի տալիս, սրանք ո՞նց են իրանց որդիքը իրանց ձեռովը մատաղ անում: Մեկ սիրտ անեն, մեր հավատն ընդունին, տեսնին՝ մեր շահն ի՞նչ փառքի սրանց կհասցնի: Ջաֆար խանին թո՛ղ մտիկ անեն. մեկ դարաբաղդի հոտաղի տղա էր, որ եսիր արի, հմիկ աշխարքի տեր ա դառել: Խոսքով-խանն²¹ ո՛վ էր, ո՛ւմ որդի, էնպես էլ՝ Մանուշար-խանը²². հմիկ սաղ Իրանը զավթել են. շահն էլ են նրանք, շահզադեն էլ: Ծահի հոգին նըրանց ձեռին ա. ասեն՝ նստի, կնստի, վե՛ր կա՛ց, վեր կկենա. ինձ նման հարիր սարդար, խան, շահզադա նրանց ձեռին են մտիկ տալիս: Ստամբոլ են գնում հայի տղերքը՝ վազիր ու փաշա են դառնում. Թեհրան են ընկնում՝ նազիր ու խան. սրանից ավելի էլ ի՞նչ պատիվ կուզի մարդ, որ ստանա, ու սրանք էսպես քարացել, ոչինչ չեն ընդունում: Մեր կուռը քեզարեց՝ սրանց կոտորելով, մեր թուրը գլացավ՝ սրանց սպանելով, սրանք էլի, հենց գիտես, թե խիարի սերմ ըլին. մեկ դրաղիցը կտրում ես, մյուս դրաղիցը դուս են գալիս, էլի հասնում, էլի կտրածի տեղը բռնում:

Մարդ կուզի՝ օր քաշի, կյանք վայելի, սրանք իրանց կյանքը իրանք են մահու տալիս, իրանց օրը իրանք խավարացնում: Մեռնին իրանց հավատովը՝ դժոխքը պետք է գնան, սատանի ձեռքը: Մեկ կտոր պանիր ուտիլն, մեկ ուշումնց տալն, մեկ արած մեղքը

չասիւն ի՛նչ զատ է, որ սրանք էնպէս կարծում են, թե իրանք դևի փայ կըլին, թե որ չպահեն: Մեր հավատովը՝ կե՛ր, քանդի՛ր, խըլի՛ր, սպանի՛ր, քե՛ֆ արա՛, աշխարքի վաշելչությունը քաշի՛ր: Կնիկդ փիս ա, դո՛ւս արա, ուրիշն ա՛ռ. ո՛չ պաս, ո՛չ ծում. աչքդ ի՛նչ սիրի, էն կե՛ր, էն հաքի՛ր, մաշի՛ր. մեկ չոռ ասողի աղիքը վե՛ր ածա, քեզ ծուռը մտիկ անողի աչքը հանի՛ր, էլի որ մեռնիս, գնաս էն կյանքը, ի՛նչ դժոխք, ի՛նչ պատիժ. առաջիդ էլի հազար մոլորա ու աղջիկ պար կգան, քեզ քե՛ֆ շհանց կտան. վարդի ջուրն երեսիդ կթափի, ոսկեջուրն տակովդ կերթա, սրանից ավելի փա՛ռք: Էստոնք թողած՝ հոգի ու հավատ կորցրել են էս հիմարները. էս դիմումը ջոկ են տանջվում, էն դիմումը հո, էլ ի՛նչ ասիլ կուզի, չունքի դրախտի բանալիքը մեր փեղամբարի ձեռին ա: Ո՛չ սրից են վախում, ո՛չ փառքից խաբվում: Ծծկեր երեխեն էլ, թուրքի անունը տալիս, ուզում ա՝ մարդի կտրատի: Էլ ի՛նչպէս համբերես, համբերությունը մեկ օր կըլի, երկու օր: Սաղ Իրան հարիր անգամ սրանց գլխին փուլ էկավ, էլի տակիցը դուս էկան, շունչ առան ու տեղն ընկած վախտը մարդի սաղ-սաղ ուտում են, սըրանց արածին ո՛վ կդիմանա: Հմիկ էլ մեկ գյադա իմ դլերին (ծառա) ա սպանել. ախր ի՛նչ անեմ. սիրտս բերնովս դուս ա գալիս, ի՛նչպէս չի սրանց դիմա-դիմա անես: Ախր նա էս օձերի ճուտն ա. ընչանք մորը չսպանես, ձագը ձե՛ռ կընկնի:

Խա՛ն, Մա՛լիք, էլի ասում եմ՝ սրանց արածը տանելու չի, ամա դո՛ւք եք էկել իմ դուռը, ի՛նչ անեմ, ի՛նչպէս ետ դարձնեմ: Որ սիրտս ուզեք, գիտեք, որ կհանեմ, ձեզ կտամ: Սրանց գլուխը ձեր արևին սաղաղ. թո՛ղ բխով քցեն դրանց ոտներն ու շլիքը, ու բերդումն ընչանք մնան, մինչև սուչլուն ինքն իրան ետ գա: Հորնըմոր արինը քաղցր ա, վաթանի հողն ու ջուրն՝ անոշ: Թո՛ղ սրանք գրեն իրանց տղերքանցը, խրատեն, որ ետ դառնան, թե չէ բանը փիս կգա: Կուզեմ, որ է՛ն, է՛ն, է՛ն բեղովլաթ Աղասուն մեկ էլ տեսնիմ, մեկ էլ էն սուրահի բոյին մայեմ, հետո միսը բերանը տամ, որ սրտումս դարդ չմնա: Թո՛ղ նա էլ, ուրիշներն էլ լա՛վ իմանան, թե սարդարի հրամանը գետինը չի՛ պետք է քցած, սրբի պէս պաշտած, որ մեկն էլա չի՛ համարձակի էսպէս բանն անիլ: Թե չէ՝ հայերը գեղ կդառնան, մեզ կուտեն: Էլ էս երկրումը կենալ չի՛ ըլիլ:

Ասում եմ ձեզ, ա՛յ աղսախկալուք (ծերունիք), դուռանի զորությունը գիտենա, թե առնին ձեր որդիքը, երկինքը թռչին, էլի

Արանց վեր բերիլ կտամ. գետնի տակը մտնին յա ծովի, կհանեմ, թիքա-թիքա կանեմ. նրանք որ չգան, սաղ հայ ազգը թոփի բերնին կապիլ, քցիլ կտամ. թե խելք ունին, ձեզ խեղճ գան, ետ դառնան: Հազար ձիավոր նրանց ետևիցն ընկած՝ սար ու ձոր ոտի տակ են տալիս, դազախ, դարափափախ՝ նրանց արինը խմում. թե մեկ ձեռս են ընկել, մեծ թիքեն անկաջները կմնա. ձիու պոչից կապիլ, քաշ տալ կտամ. թո՛ղ ձեզ խաթր անեն, ետ գան, թե չէ, որ ես բերիլ տվի, ո՛չ դուք կարծնիք, ո՛չ նրանք: Քյաք ու դուռանով, շահի գլխովն օրթում եմ ուտում. ասածս ասած ա, դուք գիտեք: Գնացե՛ք. էսօր կգան՝ ազատ եք, էգուց կգան՝ նմանապես: Ձեր ու ձեր խալխի կյանքը նրանցիցն ա կախ. թե ետ գան, բալքի թե սիրտս ռահմ ըլի ընկած, բարկությունս անց կենա, նրանց չըսպանեմ: Սար ու ձոր առաջիս դողում են, նրա՛նք պետք է ինձ դեմ կենան: Գնացե՛ք, միտք արե՛ք. ձեր գլխի դարդը քաշեցե՛ք:

Էս խոսքի վրա Սվանդուղի խանն ու Սհակ աղեն վեր կացան, աթոռի ոտն ու սարդարի փեշը համբուրեցին ու հազար անգամ գլուխ տալով, ոռորո անելով դուս գնացին:

Բանտը բաց արին, ու մեր խեղճ քեղխուղեքը մտան ներս. դուռը վրըները փակեցին, նրանք աչքըները բաց արին: Թագուհին էլ էնքան ոտին-գլխին տվել, երեսը չանգոռել էր, որ էլ սարդարի երեսը չկարացին բերել: Սվանդուղի խանը տարավ իր տունը, որ նրա հոգսն էլ քաշի, նրան էլ ճար անի:

<8>

Բայց ինչ մեր Ադասու հալն էր, աստված ո՛չ շհանց տա: Ձեռն ու ոտը կապած, դժոխքը փորումը, սաղայելյան չար հրեշտակները գլխին պտիտ տալով՝ Ջանգվի վրովն անց կացրին, ու, հենց բռնես, սար ու ձոր բերանները բաց՝ նրանց ըլին ուզում կուլ տան, էնպես փախցրին նրան նրա քաջ ընկերքը: Ծատ տեղ իրանից գնում, քիչ էր մնում ձիուցը վեր ընկնի. էլի ընկերքը հասնում, երեսին ջուր էին ածում, անկաջները տրորում, ետ բերում. էլի նրա սիրտը գնում, ձիու գլխովն էր ուզում ընկնի: Բազի վախտ որ բիրդանքիր «Թա՛գուհի, նա՛նի, բա՛րի, Նա՛զլու» չէր ձեն տալիս, քար ու հող ուզում էին կրակվին:

Հենց մուրը գետինն առավ, նրանք նի մտան Ապարանու քանդված եկեղեցին, չունքի օրն էլ կարճ էր. արեգակը քիչ էր

մնացել մեր մտնի, որ նրանք գեղիցը դուս էկան: Զիանքը որ շունչ չէին քաշում, աչքըները արին էր քցում, քիթ ու բերան՝ կրակ: Ամեն մեկ շունչ քաշելիս փոր ու աղիք իրար էին կաշում, էնքան էին քշել: Վաթոն սկսեց ձիանը ման ածիլ, Կարոն՝ սար ու ձոր աչքի տակն առնիլ, դարավուլ քաշիլ, Մուսեն՝ Աղասուն ուսին դրած մտավ եկեղեցու խարաբեն, գլուխը դրեց գոգն, ձեռը՝ երեսին, ու աչքը երկինքը քցեց, որ իմանա, թե աստղերն ի՞նչ են ասում: Մեկեկներն ընկան դես ու դեն, որ ձիանոցն համար մի քիչ են (շտելիք) ճարեն: Բայց էն վախտին չուլումն ի՞նչ կըլեր: Խոտի չոփերն էին մնացել տեղ-տեղ ցից-ցից կանգնած:

Երկինքն աչք ու ունք կիտած՝ իր չարխը պտտում էր հանդարտ. լուսինը ամպերի տակիցն մեկ երեսն հանում, շհանց տալիս, մեկ էլ ծածկում, կորչում էր: Գերեզմանատունն էնքան սարսափելի չէր ըլիլ, ինչպես էս յաբանի չուր: Ամեն մեկ սարի արանքից կամ քարի տակից դժոխքի ձեն էր գալիս: Գել, չարխալ, արջ՝ մեկ կողմից, դառնաշունչ բորյազը, որ էստեղ, օրը ճաշին, մարդի աչք ու բերան կալնում, խեղդում է՝ մյուս կողմիցը, Սանդարամետը բաց էին արել, սար ու ձոր իրար գլխով տալիս: Ամեն մեկ քար, ամեն մեկ թուփ նրանց աչքին դե էր դառել, ու ձին մեկ ոտը խփելիս կամ փռնչալիս՝ քարերն ուզում էին ճաքին, ձորերը՝ տրաքին: Աղասին՝ նափասը փորն ընկած, որ բազի անգամ ա՛խ չէր քաշում ու ոտին-գլխին անում, գետինն ուզում էր պատռվի, ընկերներին խոր տանի: Նրա հավատարիմ շունը գլուխը նրա ոտի տակը դրել, մնացել էր փետացած: Զին էլ բերին, գլխավերևը կապեցին, որ բալքի նրա շունչն էլա Աղասուն մեկ ճար անի:

— Զա՛նիդ դուրբան, Ա՛ղասի, էս ի՞նչ օրն էս ընկել. մեր աչքը պտեր դուս գար, որ քեզ էսպես չտեսնեինք, էս ի՞նչ ա քո հալը,— ասում էր ջիվան Մուսեն ու գլխին տալիս, երեսն երեսին դնում, ձեռը՝ դոշին. դամարի տալն ու ջանի տաքությունն էլ որ չէր տեսնում, գլխին կրակ էր վառվում:

Էն մեկել տղերքն էլ ձիանոցը ջուր տվին, ձեռները քամակներին քսեցին ու էլ ետ թամբեցին, լգամները բերանները տվին: Թ՛վա: Անքների, փշտովների ոտներն էլ քաշեցին, ազդոթին թազացրին, ու ամեն մարդ, իր ձիու լգամը ձեռին, էկան, Աղասու չորս կողմը կտրեցին: Աչքըներիցը արտասունքը գետի պես էր վեր թափում: Հորընմոր դարդը մեկ կողմից, իրանց սև օրը մյուս կողմից, իրանց սիրելուն էլ է՛ն հալին տեսնելիս՝ ուզում էին քար ու

քոլ պոկեն, գլխըներին տան: Մեկ սա էր ընկնում Աղասու վրա, մեկ նա: Մի՞նը ձեռն էր դնում բերնին, մի՞նը գլուխը քաշում դռին:

— Յարադանիդ դուրբան, աստված, փառքդ շա՛տ ըլի. հենց է՛ս առավոտ ամեն աչք մե՛զ էր էրնակ տալիս, ի՛նչ արինք, որ մեզ էս պատժին հասցրիր: Վա՛յ մեր խեղճ օրին, ա՛յ ազիզ ծը-նողք. երաբ սա՛ղ եք, թե՛ թրի տակին մնացիք. երաբ թո՛փ ձեզ գետնին խփեց, թե՛ զընդան ձեզ մեջն առավ. երաբ մե՛ր ցավն եք քաշում, թե՛ ձեր սև օրը լաց ըլում: Տե՛ր աստված, տե՛ր աստ-ված. ո՛ւմ մեկ չոռ ասեցինք, որ մեր առաջն էկավ: Ո՛ւմ մեկ ծուռն աչքով մտիկ արինք, որ մեր գլխին էսպես բարկացար: Արշան ծովն էկել, չորս կողմներս բռնել ա, ո՛ր կողմն էլ ձեռն ենք ա-ծում, կրակ է ընկնում ձեռըներս: Էստեղ մեր թագավորներն էին վաղ ժամանակը քեֆ անում, իրանց ամառը անց կալցնում, որտեղ որ հիմիկ մենք կրակումն էրվում ենք: Էս ժամումն էին նրանք կանգնում, աղոթք անում, որտեղ որ հիմիկ մենք մեր հոգին ու-զում ենք տալ: Ա՛խ, ո՛ր էն ժամանակը, ո՛ր էն փառքը: Զեր հո-ղը լիս կտրի, ա՛յ մեր ազգի թագավորք, իշխանք. երա՛բ դուք էլ միտք կանեի՛ք, թե ձեր որդիքը մեկ օր էսպես արին պետք է վեր ածեն ձեր գերեզմանի վրա: Էս ի՛նչ չար լեզու մեզ անիծեց, որ մեր օրն էսպես սևանա, մեր աստղն էսպես թեքվի: Ո՛վ արագա-հաս սուրբ Սարգիս, ո՛վ զինավոր սուրբ Գեորգ. էլ ո՛ր օրը մեր հաւաքին պետք է հասնիք: Դժոխքումն էրվում, տապակվում ենք, ախր ի՛նչ կըլի, որ մեզ մի չարա անեք: Ա՛ղասի ջան, Ա՛ղասի. ի՛նչ կըլեր, որ ամենս էլ քո ուղուրին մատաղ էինք գնացել, ա՛խ-պեր ջան, մեր հո՛գի, մեր աչքի լի՛ս: Արին կապեցիր խալխի սիր-տը, կրակ վառեցիր երկրի գլխին, ա՛յ աշխարքի աչք Աղասի: Մեկ ճանճ էլա նհախ տեղը չես սպանել, մեկ սառը խոսք քո բերնիցը չի դուս էկել, ա՛յ աստուծո գառն ախպեր, ախր ընչի՛ պետք է աստված քեզ էլ, մեզ էլ էստեղը հասցներ: Ո՛ր գնանք, ո՛ր, մեր գլուխը ո՛ր քարի առաջին լաց ըլինք: Ո՛ր ջուրն ընկնինք, խեղդ-վինք, պրծնինք: Տո՛, մեկ բերանդ էլա բաց արա՛, քո ջանին մեռ-նինք: Ընչի՛ էս էսպես մեզ էրում, փոթոթում: Ի՛նչ կըլի, որ էդ սիրուն աչքդ էլա մի բաց անես, մեզ էսպես չսպանես: Աշխարքն էլ ի՛նչ պետք է մեզ համար, որ քեզ չենք ունենալ: Մեր գլուխը քեզ դուրբան, ամենս էլ առաջ մե՛ր արինը վեր կածենք: Կաթն ու ծիծ մեկտեղ ենք կերել, որ քեզանից ձե՛ռ քաշենք: Բախտ ու լավ օր մեկտեղ է՛նդուր համար ենք վայելել, որ քեզ նեղ օրը

բա՛ց թողանք: Որիս ուզում ես, վեր կա՛ց, քո ձեռովդ մատաղ արա՛. ով երեսը ետ թեքի, շիմքը տո՛ւր, քո ձեռին դուրբան. ախր մեկ խոսաս, ի՞նչ կլլի:

Էս խոսքին բիրադի մեկ ձիու ոտի շփլթոց էկավ: Երկինք, գետինք գլխըներին սևացավ: Հենց իմացան՝ մեկ ամպ տրաքեց, մեկ սար գոռաց, փուլ էկավ: Յարադ-ասպաբ առան ուսըները, ամեն մեկը մեկ բուռը հող սրբությունի տեղակ բերանը քցեց, մեկ քարի առաջի չոքեց, իր մեղքը խոստովանվեց, մեկ քանի ծունր դրեց, երեսին խեչըհանեց, ժամի քարերը պաշելով տեղիցը վեր կացավ, ձիու աչքերը ճմբռեց, մեջքը սղալեց, որ անկաջները սրել, խլշացրել, էն կողմն էին մտիկ անում էնպես խլշկոտալով, որդիանց որ ձենը գալիս էր: Ծունը դրադ քաշեցին, մատով-ձեռով արին, որ ձեն չհանի, ու իրանք թուր ու թվանք հազրած, ձիու ջիլավը քցած՝ սկսեցին պատի արանքիցը անասա անկաջ դնիլ, որ տեսնին՝ էկողներն ո՛վքեր են: Դամարները ուզում էր տրաքի, ոտըների տակին կրակ էր վառվել: Անիծած բուքն ու քամին հյուսսի դհիցն էր գալիս ու ձենը փակում: Ուզում էին իրանց կրտրատեն, որ չէր թողում՝ պարզ իմանան, թե ի՞նչ խաբար է:

Էսպես՝ կես սհաթ քիմի մնացին փետացած: Էլ չէին ուզում ծպտան: Ծատ մտիկ արին, ձեն չէկավ. հենց էն էին ուզում, որ էլ ետ տեղըները նստին ու թվանքները վեր դնեն, ու մեկն էն կողմիցն սկսեց բերանը բաց անիլ.

— Տղե՛րք, ի՞նչ կլլի՝ ըլի, տղամարդությունն էն ա, որ մարդ իր գլուխը դուշմանի ձեռ չտա: Դուք լավ գիտեք, որ մեր մեկ հալը տասը թուրքի բարեբար է: Երևում ա՝ ետևներիցս մարդ են քցել, ման գալիս: Թո՛ղ գան, դրանց փիրն իրանց խոով կենա: Բոլորին յա կջարդենք, յա կջարդվինք: Քամակ-քամակի տանք, նամարդի մուհոաջ չլլինք:

Հենց էս խոսքն էր Կարոյի բերնումը, որ բեղաֆիլ տեղիցը էրկու գազ ծուլ էլավ, թուրը դուս քաշեց ու ուզում էր, որ դուս պրծնի, ընկերները փեշիցը քաշեցին, ձեռնըները բերնըներին դրին, որ անասա տեղը նստի, չունքի ձիանոցն ոտի թրխկոցն ու փոնչոցը էնպես մոտացավ, որ, հենց բռնես, թե անկաջների տակին ըլի: Բայց նրանք լավ գիտեին, թե գիշերը ձենը շատ թեզ տեղ կհասնի, ու չուզեցան, որ իրանց տեղը իմաց անեն, ու նրանք հազրրված գան: Քիչ-քիչ էկողների խոսակցությունն էլ էին ջոկում, չունքի պարզիկա գիշեր էր, քարերն էլ էին խաբար բերում:

— Լավ հարաքայաթ եմ արել,— ասեց մեկը,— ա՛՛ֆարիմ. ա-
նիծած բորանն էլ իզըները կորցրել ա, գիշեր էլ ա, թե մարդ տես-
նի. ամա ո՛ր կկորչին: Երկնքումն ըլին՝ վեր կբերենք. հլա քշենք,
էս չոլումը նրանք չէին մնալ:

— Աչք ա, որ էգուց առավոտ յա կծիծաղի, յա լաց կըլի-
սարդարին էլ ընչո՛վ իմ հունարը ցուց տամ, որ նրանց սաղ-սաղ
չկալնիմ, չտանիմ, փեշքաշ չանեմ,— ասում էր մյուսը:

— Ախպե՛ր, ինչ առնինք՝ ճոթ անենք: Աղասուն, թե կարանք,
սաղ-սաղ բռնենք, ոտ ու ձեռ կապենք ու ձիու առաջն արած, յա
կողքիցը կապած՝ տանինք, որ իր լալաղ պատիվն առնի. չունքի
ռաշիդ տղամարդ է. մեկելներին սպանենք էլ ի՛նչ հաջաթ:

— Տղամա՛րդ, էս թո՛ւրը էսօր նրան իր տղամարդությունը
կուտացնի աստուծով. հլա մի ձեռս ընկնի, մեկ մեյդան դուս գա,
հետո կիմանա իր ռաշդությունը:

— Տո՛, բերանդ քեզ արա՛, Մա՛մմադ, մենք գիտենք՝ ինչ
պտուղ որ էս. նրան ասլան ըլի, չի հաղթիլ. քանի՛ մեզ մմանին
առաջն է արել տասնով, քսանով ու ջանըները հանել: Բանն ա-
րա՛, հետո պարծեցի՛ր: Էդպէս քամի տալով ֆորս անիլ չի՛ ըլիլ:

Էս խոսքը մեր տղերքանց սիրտը տասը թիզ բարձրացրեց:

— Թուր, թվանք հագիր պահեցե՛ք,— ասեց թուրքի մեկն էլ
ետ,— սատանին նալլաթ. կըի, որ հենց էս քարերի տակին տափ
ըլին կացել, ասածներս լսեն ու բիրադի էնպէս վրա թափին, որ
էլ չկարենանք ձեռըներս գլխըներս տանիլ: Սրան Ապարան կա-
սեն: Աղասու պէս ասլանը էսպէս տեղը քսան ձիավորի մենակ չի
ասիլ, թե աստված է ստեղծել:

— Տո՛, քի՛չ գովիր էդ մոռտառ, անհավատ հաչին. չէ՛, չէ՛,
մեզ սաղ-սաղ կուտի: Հաչն ի՛նչ ա, որ ինչ ջան ունենա: Մեռնիմ
ո՛չ, ընչանք մի աչքս նրան հասնի, կտեսնինք, թե ի՛նչպէս ճուտ
կդառնա առաջիս:

Էս ասեցին թե չէ, մեկը էն դհիցը ձեն տվեց.

— Ա՜յ ադա, ա՜յ ա՛դա, ա՜յ ադա. էս ժամիցը հեռու կենանք,
լավ կըլի, չունքի ասում են, թե ֆլան թարըդին մեկ խան էկել ա,
թե քանդի, բիրադի միջիցը կանաչ ու կարմիր ձիավորներ էնքան
են դուս էկել, որ սար ու ձոր բռնել, խանի դռնունը կոտորել,
փախցրել, իրանք է՛լ ետ գլում են էլել: Սրա միջումը, ասում են,
սուրբ Մողնու մասունք կա թաղած, ու դուք լավ գիտեք, որ էս
գիծ սրբի հետ քլալա տալ չի՛ ըլիլ: Մարդի շիհքը ծովում, երեսն

ետեան ա ընկնում: Հազար էսպես բան իմ աչքովն եմ տեսել: Հայ, թուրք, ցաւարանի՝ ամենն էլ նրա դուլն են:

— Բերնիցդ հաշի հոտ է գալիս, Մա՛շադի, ամոթ էդ մեծ միրքիդ, էլ ո՛ր ես վրեդ պահում, հինա դնում: Տղամարդի փափախ չի գլխի՞դ: Տո՛, հայն ի՛նչ ա, որ իր փիրն ի՛նչ ըլի: Լեզուդ քեզ քաշի՛ր, էդ փափախիցդ էլա ամաչի՛ր: Ես քո ջգրու էս գիշեր ընչանք սրա միջումը քյաբաբ չանեմ, չուտեմ, ձիս միջին չկապեմ, չապականեմ, բաս մարդ չեմ: Էլ էս միրուքը վրես չե՛մ պահիլ: Քանի՛ էդպես ժամի պատ իմ ձեռովս քանդել, քանի՛ սրբերի աչք էս մատովս հանել, դու հմիկ պառավի նաղլ ես գլխիս կարդում: Քյաբդ քեզ խոով, էլ նամազ ո՛ր ես անում, որ էդ սրբտի տերն ես: Քշի՛, քշի՛, գնա՛նք. քյաբաբի կեսն էլ քեզ կուտացնեմ:

Ասիլն, «Յա՛, սուրբ Սարգիս» ձեն տալն ու թվանքների ճրոտոցը մեկ էլավ:

— Տղե՛րք, ձեր ջանին մեռնիմ, էլ մտիկ մե՛ք անիլ. մեր թուրը՝ նրանց գլուխը, էլ ո՛ր օրվա համար ենք կողքըներիցս կախ անում,— ձեն տվեց ածղահա Կարոն,— իրեքի գլուխը գնաց, սըրանց փիրն անիծած:

— Էրկուսինն էլ ի՛մ թրիս մատաղ արի, դոչաղ կացե՛ք,— Էն դիհիցը Վայթոն գոռաց:

— Երկուսին սպանել, մնի գլուխն էլ հրես, ոտիս տակին է,— ասեց Վանին:

— Տղե՛րք, փախան, ձիանը նի՛ էլեք, սրանց էկած ճամփեն քոռանա, սովորել են գեղերումը հավի գլուխ թոցնելով ման գան, հալերի արինը խմեն, սրանց տունը քանդվի: Տղե՛րք, երըմիշ էլե՛ք, սուրբ Սարգսի ջանին մեռնիմ, մեղանը մերն ա:

Ասեցին ու վիշապի պես ընկան հարամու քամակիցը, որին ինչ տեղ հասցրին, Էնտեղ փառչալամիշ արին: Քար ու սար աչքներից լիս էր տալիս, կոըներին՝ դվաթ: Հենց իմանաս՝ հայոց մեծ գորապետքը կենդանացել, նրանց սիրտ լլին տալիս: Էսպես՝ միս ու աղցան անելով ընկան ետևներիցը:

Բայց ա՛խ, արինը աչքըները կոխած՝ հենց քշեցին, գնացին, էլ միտք չարին, թե Աղասին, ի՛նչ նեղ սհաթի միջում, ընկեր ա ձեն տալիս, ընկեր չի կա. ա՛խ ա քաշում, ձենը լսող, իմանող չկա: Թվանքները որ բիրադի չճոռացին, հենց իմանաս, թե հոգին ետ էկավ տեղը: Վրա թռավ տեղիցը, ընկավ ձիու քամակն ու խելքը

կորցրածի պէս էլ չիմացավ, թէ ո՛ր ա գնում: Թուրը որ մեկի քալլին չհասցրեց, գլխի հետ էրկու կտոր էլավ. ընչանք թուրը յա դամեն կհաներ, պարանն ընկավ ճտովն, ու շատ էլ ուզեց, որ ձին առաջ քշի, չէլավ. ձին տակիցը դուս թռավ, ինքը գետնին դիպավ, ու չորս ածղահա տղամարդ վրա թափեցին: Նրա շանը վաղուց էին ուզում սպանել, որ ձեն չհանի: Բայց շունը, շունը՝ էս տիրասեր, հավատարիմ կենդանին, տեսնելով, որ իր տիրոջն էլ խեր չի՝ անիլ, ընկավ գնացածների ետևիցը: Աղասու ձեռները կապեցին, բերանը բամբակով լցրին, աղլխով դաչիմ հուպ տը-վին, ու աչքդ բարին տեսնի. մյուս օրն էր թոփն, ու Աղասու ջանը:

Շատ ու քիչն աստված գիտի, թէ ո՛ր հասան, տղերքը բի-րադի որ ետ դառան, գլխըներին կրակ վառվեց, երբ Աղասու շու-նը տեսան ճամփին:

— Վա՛յ, մեր տունը քանդվեց, տղե՛րք,— ձեն տվին,— էս ի՛նչ արինք, մեր ձեռովը մեր աչքը հանեցինք. հասնի՛նք, գնա՛նք. էլ ի՛նչ ենք անում մեր գլուխը, որ նրան կտանին:

Բայց ո՛ր Աղասին, ո՛ր քարի տակին, ո՛ր չոլումը յա ձորու-մը: Մեկն է՛ս սարն ընկավ, մեկն՝ էն ձորը. քարը լեզու չուներ, որ ասեր. ձին իմաստուն չէր, որ գտներ. շունն էլ առաջներիցը վա-ղուց կորել էր: Ո՛ր գնաչին, ո՛ր կորչեին: Գետինն էլ թէ պատըռ-վեր, ներս կերթաչին, որ նրան հանեն: Լիսնչակ գիշերը շատ որ դես ու դեն ընկան, զատ չգտան, էլ ետ հավաքվեցան մեկ տեղ ու միտք արին: Սուգ ու շիվան անելու վախտը չէր: Նրանք լավ իմանում էին, որ Աղասին էն ձենի վրա պետք էր, որ զարթնած ըլի էլած, փորձանքի մեջ ընկած, որ շունը նրան թողել, էն հալ-վան տեղովը իրանց ետևիցը վազել, որ գան, նրան ազատեն: Էս էլ լավ էին իմանում, որ Աղասու բռնողները առաջ չէին գնալ, պետք էր, որ մեկ տեղ տափ կացած ըլեին, որ ոտը խաղաղվի ու էնպէս ճամփա ընկնին: Ի՛նչ անեն, մնացել էին մոլորված:

— Տղե՛րք, մնա՛նք էստեղ. Աղասու շունը, տեսնո՛ւմ եք, որ կորել ա. նա իմաստուն հաշվան է, ինչպէս որ ըլի, հոտի վրա կա-րող է գտնիլ. թէ ճար կա, նրանից կըլի էս գիշեր, մենք ո՛չինչ չենք կարող անիլ:

Էսպէս՝ խելիմ վախտ տարակուսած նստած՝ միտք էին ա-նում, որ բիրդանքի խելոք շունը՝ լեզուն հանած, հեթեթալով լիս ընկավ: Շունը վազեց, նրանք՝ ետևիցը: Հենց մեկ խելիմ տեղ անց կացան թէ չէ, շունը ետի ոտը վեր քաշեց, կանգնեց: Շատ էլ զոռ

արին, որ տեղիցը եռա, չէլավ: Իսկույն իմացան զգույշ հալվանի միտքը, ձիանոցիցը վեր էկան, մեկին տվին, ու Կարոն առաջ-ները ընկած՝ կամաց-կամաց ոտըները փոխեցին: Մեկ թափի մոտացան թե չէ, էլի շունը կանգնեց, հոտոտաց: Թվանքները առան ձեռըները: Աստուծո ողորմությունը հասավ. նրանք է՛ն կողմիցը գնացին, որ թափի շվաքը մնաց առաջներին: Քարերի տակովը, փորըսող անելով, էնքան գնացին, որ մտան մեկ քանդված փոսի մեջ: Ջուր չկար միջումը, բան չկար, անձրևի ճղած էր: Թափի շվաքը մեկ հինգ գազ էլ էն կողմն էր ընկել նրանց գլխի վրովը: Էս խանդակի միջովն էնքան էսպես ուսուլով գնացին կռացած, որ հարամին մնաց դեմ ու դեմ: Լիսնյակը հենց ընկավ թուրքերի ճակատներին, տեսան, որ Աղասին միջըներումը չի: Սիրտըները ընկան տեղ: Մի քիչ էլ շունչ առան, ու ամեն մեկը մեկի ճակատին նշանիւն, թվանքների տրաքալն ու հարամիքանց բանհոգի ըլիլը մեկ էլավ: Հավի պես դեռ էնպես թրպրտում էին, որ մեր տղերքը վրա հասան: Ա՛խ, ո՛վ է կարող նրանց ուրախությունն ու արտասուները էս սհաթին պատմիլ. երկնքիցը իրանց հոգին ետ բերին, էլ նրանց բերանն ի՛նչ խոսք կգար: Որ էլ վախտ չկորցնեն, վերցրին իրանց կորցրած գանձը, հանեցին թշնամու յարադասպաքը, շորերը, բարձեցին թուրքերի ձիանոցն վրա ու երըմիշ էլան: Ո՛վ կգարմանա, որ լսի, թե Աղասին, ամեն իր շանը տեսնելիս, ուզում էր կյանքը նրան տա: Վարավորդով՝ մինչև տասներ-հինգ մարդ էն գիշերը սպանել էին: Եկեղեցու մոտ որ էլ ետ հասան, հանեցին, մեկ քանի շահի փող դրին սեղանի վրա, չոքեցին, աստծուն փառաբանություն տվին ու ճամփա ընկան:

<4>

Լիսադեմը կարմրին էր տալիս, աղոթարանը քիչ էր մնացել բացվի, որ մեր ճամփորդները մտան Ռսի հողը ու թուշ քշեցին Պարնի գեղի վրա: Աղասին չէր ուզում, որ մարդամեջ մտնի, ուզում էր՝ սարե-սար ման գա, որտեղ իր ճակատին գրած էր, էնտեղ մեռնի: Ինքն էլ ուրախ չէր, որ աչքը լավ օր տեսնի, բայց ձմեռվան ցուրտ եղանակը, դաշտերի սառնությունն ու չորությունը, ողորմելի ձիանոցն սովածությունը ո՛չինչ կերպով չէր կարելի հաղթել:

— Է՛ս վախտին, Է՛ս հալին՝ աջա՛բ-աջա՛բ, Ա՛ղասի ջան,

խեղ՝ ըլի,— ձեռն տվեց աղա Ն.²³, որ նրա հետ միասին տարերով հաց էին կերել, ու ուրախ-ուրախ դուռը բաց արեց, ձիանը ներս քաշիլ տվեց ու ղոճաղների ձեռքը բռնեց, տարավ սաքուն:

Գոմի երկենությունը հարիր գագ կըլեր: Գոմեշ, ձի, եզը, տավար, ոչխար՝ էլ ո՛չ տուտ ունէր, ո՛չ տակ: Իսկույն շոր փոփիլ, բուխարին վառիլ տվեց, հարսներն էկան՝ հարգևոր-հարգևոր, քիթ ու պոռնկ կալած. նրանց ոտները քաշեցին, ջուր բերին, ոտ ու գլուխ լվացին, ու ղոճաղները երկու կարգ սկսեցին նստիլ: Աղա Ն. ամենիցը ներքև էր նստել: Մեկ ութ-իմը մեծ ու պստիկ դոչաղ տղերք էլ, անլվա-անլվա, որը խանչալը կողքին քաշ արած, որը մեկ կտոր հաց ձեռին, կրծելով, որը մեկ փետ չանի տակին դրած, որը գլխաբաց կամ փորաբաց, շապկանց կամ անփոխան, էկան, անկաջները խլշացրած՝ սաքվի չորս կողմը շարվեցին ու աչքըները ղոճաղների երեսին կթեցին: Հերը ծեծում էլ էր, դուս չէին գնում: Դեռ բարիկենդանի մազեն՝ սուջուխ (չուշխել) ասես, ալանի, տանձ, խնձոր, փշատ, չիր, ջիբըներումն ունեին մեր տըղերքը. հանեցին, երեխեքանցը բաժանեցին. աչքըները մնաց բաց, չունքի նրանց երկրումը էնպես արմաղան բաներ չկային:

— Մեր կաղնին ու ֆոնն էլ էս համը չունին,— մեկզմեկու ասում էին ու անոշ անում:— Էնքան մածուն, կարագ, եղ, սեր ու մեղր ենք կերել, որ բերան ու փոր հոտել են. աշխարք, աշխարք է՛ս պետքը ըլի, որ էսպես բաներ դուս են գալիս, մեր հավերիցն ու գոմիցն ի՛նչ լազաթ դուս կգա,— ասեցին ու ուրախ-ուրախ դուս թռան, որ գնան, իրանց հարևանների երեխեքանցն էլ իրանց ճարած նուբարը ցույց տան:

Ընչանք ծիտը ջուր կխմեր, գոմը երեխեքանցով լցվեց. մինը մնին բոթում էր, որ առաջ գնա, միրգ ուզի: Ղոճաղների մեկը որ ձեռը չէր շարժում, հազար տեղ գունդ ու կծիկ էին ըլում: Էսպես՝ հլա խելիմ վախտ երեխեքը նրանց պարապացրին:

Տանուտերը քանի ուզեցավ բան հարցնի, նրանք մատըները բերններին դրին, սուս արին. էստով իմացան, որ սրանում մեկ բան կա: Մեկ քանի սհաթ անց կացավ թե չէ, սաղ գեղն էկավ. հավաքվեցավ նրանց գլխին: Ով տուն էր մտնում, գդակը գլխին, լափունջին վրեն, չիբուխը բերնին կամ ձեռին, թութունի քիսեն ու խանչալը գոտկիցը քաշ արած, քոբաչի չուխեն հաքին, շալվարի ծերը պանուճումը դալիմացրած, տրխըները կուփ-կուփ հաքած՝ ամեն մեկը մեկ սարի դղար տղամարդ: Էլ մեծ ու պստիկ

չէին հարցնում: Գլուխ տալը հո, ըսկի՛ աղաթ չի: Որն էկավ, մեկ Բարի՛ լիս կամ Ողորմի՛ աստված ասեց ու նստեց: Քսան-երեսուն տարեկան ջահել տղերքն էլ որը սնըղուս, որը պատնըղուս շար-վեցին ու իրար անկաջում քսփսալով՝ յա դոճաղներին էին մտիկ անում, յա նրանց յարաղ-ասպաբին, յա մեկ բան ուզելիս՝ ամենն էլ իրար գլխով էին դիպչում, որ իրանց պարոնի պարոնների ա-սածը կատարեն: Տանու տղերքն էլ էկան. որը գոմն էր սրբում, որը ձիանը թիմարում, որը խոտ ու դարման բերում, որը մալը ջուրը տանում, որը չիբուխի կրակ դնում. ամենն էլ ուրախ էր, որ մեկ բան անի, մեծերի ու դոճաղների սիրտը շահի: Սրանք էլ յա-րաղ-ասպաբ հանել, պատիցը քաշ էին արել ու ծալապատիկ նստած՝ զրից էին տալիս: Զիանոնց համար ամոթ էր հարցնիլ. նրանք լավ գիտեին, որ իրանց ուլախին շատ պատիվ կտան, քանց իրանց:

Օրը հենց մի քիչ ետ բացվեց, շատն էլ հանդիցն էկավ, ձիւնն աչքըներն առել՝ երկար վախտ չէին իմանում, թե էկողներն ի՞նչ մարդ են: Գոմն էլ հո, լիս չունեւ, չունքի մեկ պստիկ էրդիկ ու-նեւ: Ով ըլին, չըլին, թաք ըլի՝ ոտըները խերով ըլի, նրանց աչքի, գլխի վրա, տարով կպահեն, պատիվ կտան: Հենց լիսը բացվե-լիս աչքըներն էլ որ բաց էլավ ու տեսան ո՛չ, թե էկողներն ո՞վ-քեր են, խելքըներն էկավ գլխըները:

— Բարո՛վ, բարո՛վ, մեր Աղասին բարո՛վ,— ձեն տվին ա-մեն դիհից ու վրա թռան, իրար պաշպշորեցին:— Էղպես ա, ձեզ յա ձմեռվան հոսանը մեզ մոտ կբերի, յա ամառվան շոգը: Խա՛նի խարաբներ, հա՛, մտի՛կ արա, հա՛, մտի՛կ արա. էնքան մտիկ արինք, որ աչքըներս ճամփին ջուր կտրեց: Մեկ դուշ որ գլխը-ներովս անց է կենում, հազար անգամ փափախով եմք անում, որ ձեզանից մեկ խաբար իմանանք: Մեր սարերը խոմ գել չե՛ն, որ ձեզ ուտեն. ի՞նչ կըլի, որ մեկ օր էլ ճամփեն մեր դիհի վրա ծռեք: Բաղ, բաղաթ չունինք, գինի, մազա չենք կարալ թավազա անիլ, մեր եղին, կարագին ու մեղրին էլա խեղճ էկեք: Փա՛ռք աստուծո, տունըներս՝ լիքը, գոմըներս՝ լիքը, ցամաք հացով ճամփա կըը-ցենք. մարդի սիրտն ա բանը, թե չէ՝ էսօր դաբլու փլավ էլ ուտես, էգուց փորդ էլի իր ուզածը կուզի: Աղ ու հաց՝ սիրտը բաց: Տան-տիրոջը տեր ողորմյա ասիլ չի՛ ըլիլ: Քաղաքը գնում եք, սար ու ձոր ոտի տակ եք տալիս, հենց մե՛ր կողմն ա, որ ձեր աչքին փուշ ա դառել: Զեր հախը չի՛. որ՝ էս սհաթին ոտըներդ կապենք, մեկ

լավ քոթակենք, ինչ ունիք, չունիք՝ խլենք ու ձեզ էլ դարտակ ճամփու քցենք: Էդենց եք անում, որ մենք էլ ձեր դուռը չի գա՛նք, ձեր հացը չուտե՛նք: Հա՛յ նամարդներ, չե՛ք գիտում, որ մեկ օր էս սարերումը թե՛ ձեզ ճանկենք, էլ հազար տարի որ կույ ռ ձիգ անեք, ձեզ բաց չենք թողա՛լ: Ի՛նչ ա, ձեր թունդրի ու քուրսու դրադը կտրել, ձեր կնկա առին նստում եք, էլ միտք չեք անում, թե գընանք, մեր դոստ ու բարեկամին էլ տեսնինք, հալըներն իմանանք, քանի մեռել չեն, մեկ բարով էլա տանք, որ մեզ կարոտ՝ հողը չմտնին: Քա՛ր է ձեր սիրտը, քա՛ր, ձեզ հո մեր չի՛ բերել: Բիր գյորանդա՛ յոդաշ, իքի գյորանդա՛ դարդաշ (Մեկ տեսնելիս՝ ընկեր, երկու տեսնելիս՝ ախպեր): Տո՛, ձեր տունը չծակվի. էլա մուսուրման օլուբսզ քի աթանըզ խաչի թանըմիրսզ (Էնպես թուրք եք դառել, որ ձեր հոր խաչն էլ չեք ճանաչում): Քրիստոնեի երկիրը՝ մերը, մենք՝ ձեր ազգը, ձեր արինը, ի՛նչ եք էդ շան հողումը կենում, ձեր օրն ու ումբը խավարացնում. ի՛նչ համ եք առնում, որ էդպես ծանր-ծանր նստել, տարենը մի անգամ էլա՝ երեսներդ մեր կուռը չեք շուռ տալիս: Զմեռը հո բան չունինք, վախի՛լ մեք, ձեզ չենք ուտի՛լ. ձի չունի՛ք, ձի կտա՛նք. կով չունի՛ք, կով կըտա՛նք. էկե՛ք, տարե՛ք, ո՛վ ա ձեր ձեռը բռնում: Կուզե՛ք, մեր երեխեքանց անկաջներիցը բռնեցե՛ք, տարե՛ք, ծախեցե՛ք. ով ձեզ ձեն տա, պարտականը ինքը մնա: Չունքի էսպես ա՛, քյո՛խվա, սրանց մեկ լավ պատժենք. հազիր բարիկենդան օր էլ ա. էս շաբաթ սրանց էլ չթողանք, աչքըները հանենք. էնքան ուտացնենք, խմացնենք, որ էլ ճամփեն չգտնին: Սրանց հախն ա. ով տարենը մի անգամ կգա մեր տունը, բոլոր տարվան պարտքը պետք է վճարի. քնի էլ, գարթնի էլ, պետք է ուտի, խմի, քեֆ անի: Հաց ենք դատում, որ մենակ մե՛նք ուտենք, ու չորս պատերը տեսնին. էսպես հացը հարամ ըլի: Մեկ թիքեդ որ հազար կտոր չանես, հազար դուրդ ու դշի չուտացնես, ի՛նչպես կույ կերթա, յա կմարսես: Էստուր համար ենք արևի, անձրևի տակին՝ սարում, չոլում ջանըհան ըլում, որ մեզ մի բարի լիս ասող, մեր դուռը բաց անող, մեր ննջեցելոց ողորմաթասը խմող չըլի՛: Ի՛նչ տուն, ի՛նչ օջախ, որ օրը տասը աղքատ ու ճամփորդ չմտնին, չկշտանան: Էլ էն տանը բարաքլա՛թ կըլի: Էլ էն դաշտը պտո՛ղ կտա: Չէ՛, քյո՛խվա, էսօր ամենս քո դոնադն ենք, էգուց՝ իմը, էլօր՝ սրանը. էսպես՝ մեկ լավ քեֆ անենք ու մեծ պասին սրանց ճամփու քցենք:

Չեն ուզիլ մնան, ոտըները կապենք, մինչև գատիկն ու համբար-
ձումը էստեղ դուրսաղ անենք, պահենք: Ի՞նչ կասեք:

— Հա՛յ, բերանդ ապրի, հա՛յ, ավետարանի կողքիցն ես խո-
սում,— ասեցին չորս կողմիցը,— շա՛տ լավ, շա՛տ բարի, էդուր
ո՛վ ինչ կասի. մեր սրտի ուզածն էլ հենց է՛դ էր:

— Հա՛յդէ, տղե՛րք, գնացե՛ք, աշըղին բերե՛ք,— ասեց քոյս-
վեն ուրախ-ուրախ ու գդակը մեկ լավ կոտրեց, աջու անկաջի վրա
դրեց,— մեծ աշառը մորթեցե՛ք, դավուրմա տվե՛ք, մեկ դոշ էլ հե-
տը, ու կակող տեղերը՝ բդերն ու սուկին, բերե՛ք, որ մենք մեր
ձեռովը խորովենք. զուռնաչին էլ թո՛ղ գա, տերտերին էլ համե-
ցեք արե՛ք: Գինին դուքանումն ա, փողը՝ ջիբումս, մեր ջամըհաթն
ըլի սաղ. եղն ու կարագը, սերն ու մեղրը ու պանիրն՝ կճճներով
տանըս դրած, ամբարս ու հորս՝ լիքը: Ծահն էլ մեր քեֆը չունի.
ուտե՛նք, խմե՛նք, քեֆ անե՛նք, աստծուն փառք տա՛նք, մեր մե-
ռելները հիշե՛նք, մեր դոնաղների սիրտը շահե՛նք, որ իմանան,
թե սարի մարդն էլ սիրտ ունի, քար չի: Աստված ողոս թագավորի
թախտը հաստատ պահի, նրա դովաթիցը՝ ինչ ասես, ունինք. օձի
ձու էլ որ ուզենամ, կճարեմ:

Աղասին, էսքան խոսք ու զրից անց էր կացել, ոչինչ չէր իմա-
ցել. ինքը ճամփիցը բեզարած՝ ցուրտը մեկ կողմիցն էր թմբաաց-
րել, շոգն էլ իր հարարաթը շհանց տվեց ու ջանն առավ: Գլուխը
պատին դեմ տված՝ մնացել էր էնպես ցից քնած: Նստողները բո-
լորն էլ վարավուրդ էին անում, որ նրա երեսը հեշ ծիծաղ չէկավ,
ինչ ասեցին էլ: Աջու կուռը մնացել էր գոգումը, ձախունը՝ էնպես
թուլ, գետնի վրա ընկած: Ծատն էնպես էին կարծում, թե ճամփի
յա ցրտի հարարաթն էր նրան էն տեղը քցել: Ծոր չէր հարկավոր,
որ ծածկեն, չունքի գոմը առանց էն էլ համամից տաք էր: Ղո-
նաղները չէին վարավուրդ արել, որ էն գեղի թուրքերիցն էլ մեկ
քանիսը խալխի հետ խառնըվել, ներս էին մտել ու շատը հայերեն
էլ հասկանում էին, ու էստեղ-էնտեղ, գոդի պես նստել, աչքըները
դոնաղների թուր ու թվանքին էին քցում, ատամները դրճտացնում,
թե ընչի՞ չէին մեկ չոլում նրանց ռաստ բերել ու բոլորը թալանել:

Աղասու քափ ու քրտինքն էկել, ամաի պես աչք-ունքի վրա
կիտվել էին. երեսի ոսնգը ամեն սհաթի փոխվում էր. բազի վախտ
իրան-իրան խոսում, բազի վախտ էլ ձեռը բարձրացնում, ջիլ
ու դամար քաշում, էլ ետ հանգստանում էր: Ամենից ավելի խալխը
նրա վրա էին մնացել զարմացած, որ նրանք վեց հոգի էին, բայց

քսան-ավել մարդի յարադ-ասպաք ունէին հետըրները բերած: Էս-պէս տարակույս, չորս կողմը կանգնած՝ խոսում էին, որ Աղասին բեղափիլ ձեն տվեց.

— Թուրդ քե՛զ քաշիր, դժոխքի պահապան, շինքդ մեկնի՛ր: Ափու ջան, էդ ո՛ր եմ տանում քեզ...— Էս ասին, տեղիցը վեր թռչիլն ու թրին վրա վազիլը մե՛կ էլավ:

Գեղըցիք իրար ջարդելով դուս թափեցին. որը երեսին խաչ էր հանում, որը Տե՛ր, ողորմյա ասում: Մի քիչ որ դինջացան, էլ ետ դռնիցը անկաջ դրին, տեսան, որ ձենը կտրել ա, ուսուլով ներս էկան ու վախվախելով նստեցին: Էլ ո՛վ կարեր հիմիկ նը-րանց բերնին փակ դնել: Բոլորն էլ ուզում էին, որ իմանան, թե ի՞նչ ա անց կացել: Աղասու ընկերքն էլ, ճարակտուր, սկսեցին պատմիլ: Քանի գլուխն էր, ո՛չինչ, էնպէս բան շատ էին լսել. ինչ ժամանակ խոսքն էն տեղն էկավ, թե ի՞նչպէս կոտորեցին, փա-խան, հարիր բերան ձեն տվեց.

— Զա՛նմ սան, ջա՛նմ, Աղասի. օջախի որդին, կտրիճ հալն էդպէս կրլի: Բարիկենդա՛ն, բարիկենդան է՛ս ա. դե տղե՛քք, էլ մեք մտիկ անիլ: Հացը հազրեցե՛ք, սուփրեն քաշեցե՛ք, հալը Աբ-րահամի հրեշտակն²⁴ ա էկել մեր տունը: Էսպէս իգիթ տղի գլխին դուրբան գնամ. բարաքյալա, տղե՛րք, դուշմանի աչքն էսպէս պետք է հանած: Տեսնո՛ւմ եք, ա՛լ գյաղեք (իր տղերքանցն է ա-սում), ռաշիդ տղեն սրանց նման կրլի. ուտում եք՝ տանը նստում: Ա՛ֆարիմ, տղե՛րք, որ ձեր մեծին էսպէս պահել եք. շունն է՛լ էս-տեղ ա:

Մեծամարդիկը, ջահել տղերքն էս կողմից, էն կողմից վրա թափեցին, որ Աղասու ձեռքն, ճակատին պաշ անեն, քլոխվեն չթողաց. որ քնահարամ չրլի: Մյուսներին ուզում էին սաղ-սաղ ուտեն, էնքան դոշըներին կպցրին նրանց:

— Օրհնվի է՛ն կաթը, որ դուք կերել եք, է՛ն հողը, որ ձեզ ծնել ա. տղեն էդպէս կրլի, թե չէ՝ քանի լեզուդ կարճացնես, գլու-խըդ կախ անես, ուսերիդ կնստին, դուղդ կքամեն, աչքդ կհանեն. ջիգյարդ վեր կածեն,— ասում էին ամեն կողմից:

Սազ ու գուռնի ձենը որ վեր չելավ, գեջդանգեջ Աղասին աչ-քը բաց արեց ու էնպէս էր զարմացած դես ու դեն մտիկ տալիս, ինչպէս թե նոր ըլի աշխարք էկել: Ուզում էր էլ ետ աչքը խփի, բայց խալխը է՛նպէս վրա թափեցին, որ քիչ մնաց նրան ոտնատակ տալին. փեշերն էլ էին համքուրում, ո՛ր մնա երեսը: Էսպէս՝ նը-

րան էլ մեջ արին ու մինչև իրիկնապահը, ժամերի վախտը, է՛ն քեֆն արին, որ աչք պտեր՝ տեսներ: Ձենն ընկավ գեղըցունց անկաջը. ով սսես տուն էր ընկնում, որ նրան տեսնի, մուրազն առնի: Հենց իմանաս՝ ուխտ ըլեին գալիս: Տանուտերը Ղարաքիլիսա մարդ դրկեց կնչագի մոտ ու բանի ահվալն իմացում տվեց: Հրաման էկավ, որ մեկ-քանի օրից ետը՝ Աղասուն վերցնեն, կնչագի մոտ գնան:

<5>

Փամբակու թուրքերը տխրել, հայերը թև առել, ուզում էին թռչին: Բարիկենդանն անց կացավ, մեծ պասն էկավ: Աղասին քսան ձիավորով որ Ղարաքիլիսա չմտավ, աշխարք ամեն առաջն էր էկել, որ նրան տեսնին: Հազար բերան նրան գովում, բարաքլալա էր ձեն տալիս: Կնչագ Ս.²⁵ շատ ումուղ, շաֆաղաթ տվեց նրան ու խոստացավ էլ, որ բալքի մեկ կերպով սարդարի սիրտն առնի, չունքի շատ բարեկամ էին իրար հետ: Ինչ հարկավոր էր, հրամայեց, որ նրանց տան ու լավ մուղալիթ կենան, որ նրանց վնաս չհասնի: Բայց Փամբակու հայերը մե՛ռել էին, որ նրանց վնաս հասներ: Էսպես՝ սաղ ձմեռը, քսան-երեսուն ձիավորով, տնետուն, գեղեգեղ էնքան ման էին ածել ու օրով, շաբաթով պահել, որ իրանք էլ էին բեզարել:

Քաջ Լոռըցիք էլ որ իմացան²⁶, էլ դինջություն չունեին, սըրանք էլ էին ուզում նրանց իրանց մեջը բերեն, պատիվ տան: Մեկ ամսաչափ էլ էստեղ մնաց:

Էս պատվական խալիխ պարզ սիրտը, նրանց տաք ջիգյարն ու անոշ սերը, տեղի քաղցր հավեն ու ջուրը, կնչագի տված ումուղը՝ Աղասուն մի քիչ ետ բերին, սիրտը բաց արին: Ղորդ ա, ասում, խոսում, լսում էր, ամա տխրությունը նրա երեսի ու աչքերի վրա էնպես էր կիտված, ինչպես սև ամպ: Շատ անգամ որ ա՛խ չէր քաշում, քար ու հող լաց էին ըլում: Ծիծաղելիս՝ բերնի չորս կողմը, էնպես գիտես, թոռոմած վարդի տերև ըլի, որ շաղը տալիս մի քիչ զվարթանում, էլ ետ ճլորում, թուլանում է:

Շատ անգամ մեկ քարի ծերի նստած, կամ մեկ քարափի գլխի թինկը տված, աչքը ձորին, գետին քցած, գլուխը ձեռին, կամ մեկ աղբըրի դըրադի՝ կողքի վրա ընկած, թփերի, խոտի, ծաղկի, ջրի հետ խաղալիս, լաց ըլելիս էին նրան ռաստ բերում: Բազի

վախտ որ «Նազլո՛ւ» չէր ձեն տալիս յա հորնըմոր անունը հիշում
ու ա՛խ քաշում, սար ու ձոր հետը ձեն էին տալիս, մղկտում: Ինքը
որ տխուր ու մաշված էր, հենց իմանում էր՝ մարդիկ սիրտ չունին,
որ ուրախանում, ծիծաղում էին: Էստուր համար իր ընկերքը սար
ու ձորն էր շինել, էսպես էր ծնողաց կարոտը, քիր-ախպոր հաս-
րաթը, դարդը նրա սիրտն առել: Երեսնու մեկ ծուխն էլա չէր
ընկնում աչքովը, մեկ սար էլա էն կողմիցը չէր տեսնում, որ բալ-
քի սրանով էլա սիրտը մի քիչ հովանա:

Էս ժամանակին էր, որ մեկ օր ընկերներին հավաքեց, գնաց
Փորս, Համզաշիման²⁷ ու Զբխլու²⁸ անց կացավ, Ղառնիշարաղ²⁹
հասավ ու հենց Մասիս աչքովն ընկավ, ընկերներին ձեռով արեց,
որ մի քիչ հեռանան, ինքը նստեց մեկ թփի տակի, գլուխը դրեց
քարին, աչք ու բերան արտասնքով, ծխով լիքը՝ էս խաղն ասեց:

Սար ու ձոր ընկած՝ մեկ չոր թփի տակի,
Գետինն նայելով՝ մնացել եմ նստած.
Ձեռս ծոցումս, գլուխս մեկ լեռ քարի
Տված՝ լալիս եմ, օրս խավարած:

Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մոտիկ տալով, ա՛յ իմ քա՛ղցր Մասիս,
Աղի արտասնքով էրված, խորոված՝
Երեսիդ նայիմ, մնամ քարացած:

Ծնո՛ղ, ազգակա՛նք հեռու ինձանից.
Լուսնին նայելով, ձեր սերն հիշելով՝
Երաբ, ե՛րբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարոտս առնիմ, ձեզ ջան ասելով:

Երաբ ձեր ճտովն մեկ օր էլ կընկնի՞մ,
Երաբ ձեր երեսն մեկ էլ կտեսնի՞մ,
Երաբ ծունկ-ծնկի տված՝ ձեզ կասե՛մ.
«Ա՛յ իմ խեղճ ծնողք, ձեր ջանին մեռնիմ»:

Աչքս ծով դարձավ ճամփին նայելով.
Մեկ դուռ որ գլխիս պտիտ ա գալիս,
Թե ե՛րբ մեկ խաբար կհասնի ինձ բարով.
Հոգոց հանելով՝ ասում եմ, լալիս:

Երաբ գետնի վրա դեռ սո՛ւգ էք անում,
Ձեր կորած որդուն կարոտ մնալով,
Թե՛ հողի տակը մտած՝ դիմջանում,
Ինձ թողիք, տանջվիմ՝ ա՛խ, ո՛խ քաշելով:

Երաբ ձեր ամակն ինձ հալալ արի՞ք,
Երաբ սուրբ բերնով ձեր ինձ օրհնեցի՞ք,
Ծերունի՛ իմ հայր, տարաբա՛խտ իմ մայր.
Էլ իմ հավարիս ե՞րբ կհասնի աշխարհ:

Էն սուրբ, անարատ կաթնին ես դուրբան,
Ձեր լիս ձեռներին, ձեր անոշ լեզվին.
Մեկ բուն հողի էլ ե՞րբ կըլիմ արժան,
Որ գամ ձեր հողումն, քնիմ ձեր միջին:

Է՛ն ի՛նչ օր էր, որ ձեր քաղցր ծոցին,
Գլուխս ձեր դռնին, աչքս խուփ կամ բաց,
Ձեր սուրբ ձեռի վրա, երեսս բարձին՝
Կամ խաղում էի, կամ մնում քնած:

Է՛ն ի՛նչ օր էր, որ մեկ ծառի տակի,
Ծոճումն, ձեռներս ձեր ճտովն քցած՝
Ձեր սուրբ երեսին ես համբույր տայի,
Նանիկ ասելով՝ թողեիք քնած:

Ո՛ր էն շվաքը, էն կանաչ՝ ջրի ափը,
Էն խոտն ու ծաղիկն, էն դաշտն ու տափը,
Որ ձեր առաջին անմեղ խաղայի
Ու ձեր բարի սիրտն ինաղով բանայի:

Լալիս՝ դուք լայիք ինձ հետ ցավելով,
Ծիծաղս տեսնելով կամ ձենս լսելով՝
Կանչեիք. «Արի՛ մոտս, Ա՛ղասի ջան,
Երեսիդ մեռնիմ, քո ջա՛նին դուրբան»:

Ա՛խ, էս խոսքերը ինձ կրակ են դառնել,
Լերդս ու թոքս հիմիկ էրում, խորովում.

Ի՞նչ կըլեր՝ ես է՛ն վախտն էի մեռել,
Զեր շվաքի տակին, ա՛խ, քնել հողումն:

Մեկ բուն հողի էլ կարոտ եմ մնացել.
Քարափից թե ցած կամ ջուրը ընկնիմ.
Զեր սուրբ երեսը դեռ որ չեմ տեսել,
Ի՞նչպես ես հանդարտ էս հողը մտնիմ...

Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, անմա՛ն Նազլո՛ւ,
Սիրտս խորովի անունդ հիշելով.
Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, հրաշալի՛ Նազլո՛ւ,
Աղասին քեզ տա իր ետին բարով:

Սարերի դռին, ձորերի միջին
Վա՛յ գլխին տալով քո խեղճ Աղասին՝
Երեսիցդ զրկված, քո սիրովն մաշված,
Տատրակի նման փշի վրա նստած:

Լիզեմ հող, գետին, այրիմ, մղկտամ,
Կամիմ օր առաջ, ա՛խ, որ հոգիս տամ,
Երբ մահն մոտանա սառը թևերովն,
Հոգիս պահանջե, որ տանի շուտով,

Էս դառն աշխարհիցս մի ինձ ազատի,
Ոսկերքս գազանաց կերակուր անի.
Կամ երբ գետի ափն նստած, շվարած՝
Աչքերս նվաղին՝ թմբրած, սասանած,

Գլորիմ կատաղի գետի փրփրի մոտն,
Հոգոց քաշելով պարզեմ ես իմ ոտն.
Կամիմ գերեզմանս որ էս ջուրն ըլի,
Էս սառը պատանն ինձ հողը տանի...

Կամ մեկ քարափի բաշից նայելով,
Աչքս մեր տան ծուխն հանկարծ տեսնելով,
Քո անոշ երեսն ինձ լիակ մնալով՝

Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, անո՛շ իմ Նազլո՛ւ.
Թեքիմ, ու հանդարտ գա ինձ քուն մահու.
Երևի աչքիս, թե անդունդը խոր
Մոտ է ինձ գրկել, տանիլ իր լեճ ձոր:

Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, մեկ շունչս ա մնացել,
Ոսկերքս քրքրվել, աչքս խավարել.
Թո՛ղ մեկ շունչդ առնիմ, հետո հողը մտնիմ,
Դժոխքն էլ տանիմ, ես հանգիստ կըլիմ:

Քե՛զ եմ մնում, քե՛զ, քո ջանին մեռնիմ.
Հող ու գերեզման ես վրես ունիմ.
Քանց իմ սառն մարմինը էլ ի՞նչ գերեզման
Ինձ պետքը կգա, երեսի՛դ դուրբան:

Արի՛, ասածդ արա՛, ինձ թաղի՛ր,
Բե՛ր իմ երեխեքս ու վրես կանգնի՛ր.
Մեկ նրանց տեսնիմ աչքս խփելիս,
Մեկ նրանց ասեմ լեզուս լուվելիս.

«Մնա՛ք բարով, ո՛րդիք, ազի՛զ, սիրեկա՛ն.
Է՛լ չէ՛ք տեսնիլ ինձ, ա՛խ, դուք հավիտյան.
Ձեր անբախտ հորը հոգին հիշեցե՛ք.
Մնա՛ք բարով, իմ քա՛ղցր, սիրո՛ւն երեխեք.
Ձեր հոր տեղակ ձեր խեղճ մոռն հիշեցե՛ք
Ու իմ ողորմին, ժամն կատարեցե՛ք»:

<Յ>

Ո՛վ չի գիտի, որ մարդի սիրտը արնով լցվելիս՝ ո՛չ սուր էն-
քան քյար կանի, ո՛չ դեղ, ո՛չ քուն, ինչքան բառն ու խոսքը ու
իլլահիմ խաղը, բայաթին, էստուր համար Աղասու ընկերքն էլ
դրաղ քաշվեցին ու հեռրվանց նրան մտիկ էին անում, որ գլխին
մեկ փորձանք չգա, չունքի սար ու ձոր թրա արինն էին խմում:
Էնքան անկաջ դրին, որ ձենը կտրեց, քունը տարավ, հետո էկան,
մեջըներն առան ու էլ ետ Ղարաքիլիսա տարան:

Մեկ օր էլ էսպես, էլի էս հալին, դռանը մեկ քարի վրա նըս-

տաճ էր, որ մեկ դարիբ մարդ քիչ-քիչ նրան մոտացավ, առաջին կանգնեց, երկար նրան մտիկ արեց, ու հենց էն ա, Աղասին ուզում էր նրանից հեռանա, որ իր դարդն օքմին չտեսնի, դարիբը դռը բաց արեց, վրա թռավ, նրան խտտեց ու հենց «Ա՛ղասի ջան» ասեց ու ձենը փորն ընկավ, լեզուն պապանձվեց ու էսպես մնաց չարալու-փարալու՝ Աղասու դռնին փետացած, ընկած։ Աղասին գեջդանգեջ որ խելքի չէկավ ու աչքը բաց արեց, աստված, ո՞վ կարեր նրա արտասունքը բռնիլ, նրա սրտին մեկ ճար անիլ։

— Ա՛մու ջան, Ա՛վետիք ամու ջան, դո՛ւ ես,— ասեց ու իրանից գնաց։

Տեսնողներն էս դիհից, էն դիհից վրա թափեցին, երկուսին էլ, էնպես մեռած, տուն տարան, ջրով, հոտով ետ բերին։ Հենց աչքըները բաց էին անում, իրար երես տեսնում, էլ ետ դուբարա ընկնում էին իրար ճտով, իրար անում տալիս, գնում էին էն դիմեն, ետ գալիս։ Մոտըներին կանգնողների աչքերիցը արտասունքը գետի պես էր վեր թափում։ Ճարըները կտրվեց, տերտեր կանչեցին, ավետարան կարդացին, խաչ ու մասունք գլխըների վրա դրին, որ անջախ մի անջախ ուշքներն էկան։

Էս էկող դարիբը, սի՛րելի կարդացող, Աղասու հորախալերն էր, որ գլուխը փեշն էր դրել, էկել՝ իր ազիզ կորածին գտնի, տեսնի, մուրազն առնի, էնպես մեռնի։ Ո՛վ ըլեր՝ էնպես չաներ։ Միտըները որ մի քիչ դիմջացավ, ջանըները հովացավ, Ավետիքը գդակի ծալիցը մեկ թուղթ հանեց, Աղասուն տվեց, ինքը մհանով տանիցը դուս գնաց, որ նրա աչքի արտասունքը չտեսնի, չերվի, չփոթոթվի։ Երկու թուղթ էր բերել հետը. մեկը Աղասու մերն էր գրել, մեկը՝ նշանածը։ Երանի՛ էն աչքին, որ էսպես թուղթ իր օրումը ո՛չ տեսել ա, ո՛չ էլ կտեսնի։ Էլի Աղասին էր, որ դիմացավ, բայց վա՛յ էն դիմանալուն. հարիր անգամ թուլացավ, նվաղեց, թուղթը դրեց երեսին ու աչքերը խփեց, էլ ետ ջուր ածեցին, ետ բերին։

Մոր թղթի խոսքերն էս ա.

«Ա՛ղասի ջան, Ա՛ղասի. գլխովդ փարվան ըլիմ, Աղասի։ Ընչի՛ չեմ էս սհաթին կրակ դառնում, ինձ էրում. ընչի՛ չի լեզուս չորանում, աչքս խավարում. ընչի՛ չեմ թոզ դառնում, որ բալքի թե քամին բերի, գամ, ոտիդ տակին ցրվիմ, սարեսար ընկնիմ, քարեքար, որ ի՛մ երեսը կոխես, որտեղ որ ման գաս, որ ի՛մ աչքը

հաճես, որտեղ որ մտնես, որ ի՛նձ վրա գլուխդ դնես, որտեղ որ քուն մտնես. Նամն ըմբրիդ մեռնի, իմ թագավո՛ր, իմ աղա՛ Ադասի:

Տնկած ծառերդ փուշ են դառել³⁰, ինձ սպանում. պահած ծաղկըներդ կրակ են դառել, ինձ էրում, խորովում. ման էկած տեղերդ՝ աչքիս լսումը մզրախի պես ցցվում, սիրտս դուս ճոթոռում: Ո՛ր կորչիմ, որ ձենս օքմին չիմանա. ո՛ր գնամ, որ աչքս քո տեսած բաներն էլ չտեսնի, միտքս քո ասած խոսքերն էլ չհիշի. ջանս քարանա, որ էլ անունդ չտամ. սիրտս ջուր կտրի, որ էլ քո սերը չզգամ. ումբրս փչանա, օրս խավարի, որ երկնքի տակին էլ չասես, թե ե՛ս էլ եմ մեր, ե՛ս էլ որդի բերի, ի՛նձ էլ մեկ օր աչքալիս տվին, ե՛ս էլ մեկ օր որդու, զավակի արևի ձենը պետք է ածեի. ես էլ որ աչքս խփեի, մեկ բուռը հող դո՛ւ պետք է երեսիս քցեիր, դո՛ւ իմ մաշը խտտեիր, դո՛ւ իմ լաշը հողին տայիր, դո՛ւ վրես սուգ անեիր, գլխիս վրա կանգնեիր ու էդ ազի՛զ, էդ սո՛ւրբ բերնովդ ասեիր. «Հոգիդ լի՛ս դառնա, ա՛յ իմ մեր, ա՛յ իմ մեր. ի՛նչ կլեր, որ մեկ էլ աչքդ աչքիս, բերանդ բերնիս առնեմ, ու հետո աստված հոգիս տանեմ»:

Հոգիս խոր է, թե հաճես, աստծուն տամ. սիրտս ձեռիս չի, որ կրակը քցես, էրես. երկնքին ձե՛ռս չի հասնում, անկաջդ ձե՛նս չի ընկնում: Դու՛ ա գլխավերես թռչում, քո անունն եմ տալիս. շունչս ա բերնիցս դուս գալիս, քո հասրաթը ջիգյարս էրում, փոթոթում. աչքիս եմ հուպ տալիս, սիրտս ա տրաքում. բերանս եմ կալնում, միտքս ա ցնորվում. տունն եմ մտնում, պատերն են ինձ դժոխք դառել. դուս եմ գալիս, սար ու ձոր սև օրս լաց ըլում. երկընքին եմ մայում, մեկ ձեն չի գալիս. երկրին եմ մոտիկ տալիս, մեկ խաբար չիմանում: Բարձին եմ գլուխս դնում, շունչս ա ինձ խեղդում. քնած թե գարթուն՝ դո՛ւ ես աչքիս առաջին պտիտ գալիս: Արտասունքս ծով ա դառել, Ա՛դասի ջան. ա՛խ ու ո՛խ քաշելուցը շունչս կտրվել, հոգիս մաշվել. գլխիս էլ մազ չմնացել, որ քամուն չտամ. երեսիս էլ տեղ չկա, որ չըլիմ կտրատել. տան ու դռան էլ քար չկա, որ չըլիմ դռնիս խփել: Գլուխս ծեծելուցը ձեռներս բեզարեց. շատ լաց ըլելուցը աչքս խավարեց, բայց ա՛խ... ա՛խ... Հոգիս իմ տված չի, որ ասեմ՝ դուս գնա. սաղ-սաղ էլ գեթեզմանը մտնիմ, ո՛ւմ ձենը լսեմ, ո՛ւմ երեսը տեսնիմ, ո՛ւմ հոգիս տամ, ո՛ւմ ոտի տակին գլուխս դնեմ, ո՛ւմ էս փետացած ձեռներովս խտտեմ, ո՛ւմ էս չորացած լեզվովն ասեմ. «Մեռնիմ էլ, Ա՛դասի ջան, հոգիս գլխովդ պտիտ կգա. ապրիմ էլ, ո՛րդի ջան, ջանս

քո ուղտորին դրած ա: Հոգիս երկնքումն ըլի, մարմինս՝ քո առաջին, փիանդագ. շունչս վրես ըլի՝ դո՛ւ ես իմ սրտի մուրազն: Հոդ կդառնամ, հոդս քե՛զ պտուղ կտա. ջուր կկտրվիմ, քո՛ հանդի, ծաղկի վրա կթափիմ. դրախտումն ըլիմ, քո՛ ծառի ճղքների վրա բլբլուլի պես կկանգնիմ, քե՛զ անուշ բուն կդնեմ. աշխարքումս ապրիմ, ջանս քե՛զ դուրբան կտամ, թաք դու ծաղկիս, ծլիս, գորանաս, անումի՛դ մեռնիմ»:

Անումի՛դ մեռնիմ, արևի՛դ մեռնիմ, Ա՛ղասի ջան. մոր ազիզ պահած, հոր աչքի լիս, ո՛րդի ջան. Ալամ աշխարքի գոված, աստծու՝ սիրեկան, մարդի՝ դիրեկան. ջա՛նս քեզ մատաղ, Ա՛ղասի ջան. փուշ էիր տնկում, վա՛րդ էր քեզ դառնում. քարին էիր ձեռը տալիս, քա՛րը հոգի առնում: Մեկ հոգի ունեիր, հազար աղքատի սրտում. մեկ շունչ ունեիր, հազար հիվանդի բերնում. մեկ անուն ունեիր, արարած աշխարքի միջում: Երկու ձեռք ունեիր, մեկը՝ ողորմություն տալիս, մյուսը՝ աչք սրբում: Երաբ, ո՛ւմ մեկ թթու խոսք ասեցիր, որ ինձ անիծեց. ո՛ւմ վրա դուռը հետ արիր, որ ինձ վա՛յ տվեց. ո՛ւմ վեր ընկած տեսար, անց կացար, որ մորդ գլուխը լաց էլավ. ո՛ւմ կաթը կերար, որ քեզ լեղի դառավ. ո՛ւմ ձեռին մեծացար, որ գիշեր-ցերեկ քեզ չօրհնեց. ո՛ւմ ծնկան վրա քնեցիր, որ երեսիդ քրտինքը տեսնելիս՝ հազար անգամ աչքը երկինքը չքցեց, արտասունքը երեսիդ չթափեց ու իր մեղավոր բերնովը չասեց.

— Փառքդ շա՛տ ըլի, ա՛րարիչ աստված. դո՛ւ տվիր՝ դո՛ւ պահիր, իմ կյանքս ա՛ռ, սրա վրա դի՛ր, սրան մեկ փորձանք գալիս՝ ի՛մ աչքը հանիր: Թուր պետք է սրան դիպչի՝ ի՛մ սրտումը առաջ ցցվի. կրակ պետք է սրան էրի՝ սփթա ի՛նձ փոթոթի. սրա աչքը ցավելիս՝ ի՛մ աչքը դուս գա: Թա՛ք ըլի, սա, ո՛վ երկնային թագավոր աստված, գորանա՛, մեծանա՛, իր մուրազին հասնի՛: Հաց չունենամ՝ դռնեդուռը կընկնիմ, սրան կպահեմ, գլուխս կծախեմ, չեմ թողալ սրան ուրըշի ձեռին մուհդաջ, որ թաք, ես մեռնելիս, սա՛ իմ երեսիս հոդ քցի, սա՛ իմ աչքս խփի, սա՛ իմ գերեզմանս օրհնի, իմ օջախի սինն ու ճրագը սա՛ դառնա, որ իմ հիշատակը աշխարքի երեսիցը չկտրվի, իմ տան ծուխը չհատնի, չպակսի:

Ա՛ղասի ջան, ծուխս հատավ, կտրվեցավ, տունս քանդվեց, հիշատակս քո՛ռ էլավ, հիմքս՝ տակ ու վեր. աստղս խավարեց, իմ

փայ արեգակը վաղուց մեր մտավ, իմ փայ երկինքը վաղուց փութ էկավ: Ինձ համար էլ լիս չի՝ բացվում, ինձ համար էլ աղոթարանը չի՝ ծեփում. օրն ինձ համար՝ գիշեր, գիշերն ինձ համար՝ տարտարո՛ւ, դո՛ո՛խք: Վաղուց եմ գերեզմանիս դրաղին կանգնել, հորը փորել, հազար անգամ մեջը մտել, դուս էկել, բայց, ա՛խ, հողն ինձ ի՞նչ տեղ կտա, որ քեզ չեմ տեսել. աչքս ի՞նչպես կկաշի, որ քեզ չեմ նայել. գերեզմանումը կդինջանա՛մ, որ դեռ բերանս բերնիդ չառել, լեզուս՝ լեզվիդ, աչքս՝ աչքիդ, դոշս՝ դոշիդ, էդ ջիվան ջանիդ դուրբան, Ա՛ղասի: Հրեշտակս ի՞նչպես սիրտ անի, որ ինձ մոտանա. էն ձեռը չի՛ չորանալ, որ ինձ լվանա. էն լեզուն չի՛ փետանալ, որ իմ սուգն անի. էն բեմը ի՞նչպես տեղը կմնա, որ իմ նաշը տեսնի. էն բաժակը կրա՛կ չի դառնալ, որ հոգուս համար պտի խմեն. էն խունկը բո՛ց չի դառնալ, որ ինձ վրա պտի ծխեն: Որ որդին մոր գլխին կանգնած չլի, էն մորը ո՛նց պետք է թաղեն. որ որդին ծնողի սուգը չանի, էն ծնողին ո՛նց պետք է հողը դնեն. որ որդին մոր գերեզմանը օրհնիլ չտա, էն քարը ո՛նց պետք է քցեն:

Ա՛ղասի ջան, Ա՛ղասի. երեսս ոտիդ տակն, Ա՛ղասի. ի՞նչ կըլի՝ մեկ շվաքդ էլա տեսնիմ, հետո հոգիս տամ, մեկ ձենդ էլա լըսեմ, հետո աչքս խփեմ, մեկ ձեռդ բերանս առնիմ, հետո շունչս կտրեմ: Էն ի՞նչ օր էր, որ գլուխդ գոգումս, ձեռներիդ դոշիս՝ ջուրն էի գնում, քամակիս կապում. հանդն էի գնում, ուսիս քեզ դնում. մեկ ձեռս բերնումս, մլուսովն քեզ խտտում. խոտ էի հնձում, քեզ ճոճումն պահում, հետդ խաղ ասում ու քեզ օրորում. պտուղ հավաքում, քեզ մեջքիս կապում. հացը բերնիցս հանում, քեզ դեմ անում, ծառիցը պտուղը քաղում, քո խաթրն առնում. հարիր անգամ գիշերը վեր կենում, քեզ ծածկում, ջա՛ն, դուրբա՛ն ասելով հետդ քաշ գալիս, արտասունքդ սրբում, երեսդ համբուրում, վրեղ խաչակնքում ու աղոթք անում, կամ քեզ գիրկս առնում, հետդ քուն մտնում:

Հերդ՝ զընդանում, ոտները՝ բխովում. Նազլուն՝ կիսաջան, մահի հետ կռվում. հենց ե՛ս եմ մեմակ չոր գլուխս պահում, որ մեկ շունչդ քաշեմ ու քո սուրբ գոգումը գլուխս դնեմ ու քեզ բարով մնա՛ ասեմ. բարով մնա՛ ասեմ ու աչքս խփեմ, որ քո արտասունքն հեշ չտեսնիմ, քո սուգը չլսեմ: Ա՛խ, ա՛յ իմ կորած որդի, ըմբրի՛ս լուսատու. բւսս քո խեղճ մերդ հեշ միտդ չե՛ս քցում, բաս քո ջրատար հոր հալը հեշ չե՛ս հարցնում, բաս ջիվան Նազլուդ, որ քեզ

ա ուզում. անունդ տալիս, թե աչքը բանում. քո սիրովն էրվում, թե քեզ ա հիշում. շունչը բերնումը, հրեշտակն առաջին, ոտը հողումը, խաչը գլխատակին, պատանը ծալած, խունկն ու մոմն հազրած, աչքը խոր գնացած, բերանը փակված. լեզուն չի բռնում, որ անունդ տա. <Ա՛խ քաշելու տեղ մա Ա՛դ... է ասում, ո՛խ ասելու փոխ մա սի՛... հանում:> Արտասունք չունի, սիրտը հովացնի. էլ թաղաթ չունի, որ ինձ էլ չէրի: Ոտդ ի՛նչպես ա քարերին բռնում, աչքդ ի՛նչպես ա քուն գալիս, որ մեր մեռնիլը միտդ ա գալիս. գլուխդ էդտեղ լվա՛, էտեղ չորացրո՛ւ. թո՛ղ մեկ սհաթ ըլի. թո՛ի՛, արի՛, հողին տո՛ւր մորդ, որ էլ մեր չունենաս. մերդ քա՛ր դառնա. Նազլուն հետդ տա՛ր, սա էլա ապրի, քեզ մխիթարի. գնա՛, արևի՛դ մեռնիմ, Ա՛ղասի, արևիդ ձենն ածի. ինձ թաղի՛ր, բաց Նազլվիդ մի՛ թողար, մի՛ դեն քցիր. քեզանից ավելի սա էլ ո՛վ ունի. քեզ ապավինեց. արի՛, սրան հասի, քանի շունչ ունի. տա՛ր, չտեսնիմ: Հենց քեզ տեսա թե չէ, հոգիս ձեզ կտամ. էս հողը կմտնիմ, ձեզ բարով կտամ: Էկե՛ք, թաղեցե՛ք, փախե՛ք, գնացե՛ք, էս դառն աշխարքի՛ցս, ոտըներդ քաշեցե՛ք ու ձեր անբախտ մոր հոգին հիշեցե՛ք»:

Էս թուղթը կարդալիս էլ հարիր անգամ իրանից գնաց ու էլ ձեռ՝ ետ էկավ ու սկսեց կրկին կարդալ ու ինքն իրան սիրտ դնիլ: Վերջը թուղթը ծալեց, ծոցը դրեց ու մտքի ծովն ընկավ: Իրիկ-մահովն ընկել էր, որ աչքը բաց արեց, ձեռը ծոցը տարավ, որ մոր գիրը մին էլ կարդա, իր սիրեկանինն ընկավ ձեռը, իր Նազլվինը, ու քիչ էր էրվել, նորեն հազար խանչալ սկսեց սրտումը ցցվիլ. շշկլած, շշմած սկսեց կարդալ:

Նրա թղթի միտքն էլ է՛ս էր:

«Երա՛բ, որ սիրտս հանեմ, էս թղթումը դնեմ, երա՛բ, որ բաց անես ու հազար թուր միջումը ցցված տեսնիս, կիմանա՛ս էն ժամանակը, թե Նազլուդ, քո ջրատար Նազլուդ, ի՛նչ ցավ ա քաշում, ի՛նչ օրումն ա, ի՛նչ հալումն, իմ գլխի՛ տեր, իմ ըմբրի՛ թագավոր, Ա՛ղասի: Ո՛ր սարեր են առաջդ կապել, ո՛ր գետեր՝ ճամփեդ կըտրում, ո՛ր ձեռն ա թևիցդ բռնում, էտ քաշում, ա՛յ իմ թագ ու պարծանք, որ էսպես ինձ կրակում թողել էս. ինձ դժոխքը դրկում, դու արքայությունը վայելում. ինձ սուրը քաշում, դու ձեռներդ լվանում. ինձ դիվանոցը տալիս, դու հրեշտակների միջին արևիդ

ձեռն ածում ու երեսդ էլա չե՛ս ետ դարձնում, որ ինձ հողը դնես:

Ա՛ղասի ջան, Ա՛ղասի. երաբ սիրտդ քա՛ր ա դառել, երաբ աչքդ ծաղիկ ու թուփ էլ չի՞ տեսնում, երաբ երեսդ մի երկնքին չե՛ս քցում, որ տեսնիս, թե ի՞նչ մորած ամպեր են առաջիդ կանգնած, ի՞նչ կրակ է վերնիցը վեր թափում. չե՛ս իմանում, միթե, ա՛նհրավ, ա՛նջիգյար, թե էս կրակն ու էս բոցը, էս ծուխն ու էս ամպը ի՛մ բերնիցն են դուս գալիս, ի՛մ սիրտս ա քուլա-քուլա ի-րանից հանում, վերնն աստղերը խավարացնում, բռնում, ներքեր սար ու ձոր պապանձացնում, անձող շինում:

Հարիր անգամ գերեզմանի դուռը հասել, էլ ետ՝ ետ եմ էկել. հարիր անգամ արեգակը, որ մեր մտավ, ես էլ իմ հոգիս հետը ճամփու քցեցի ու, ա՛խ, էլի, ծեզը բացվելիս, հենց իմանում էի՝ հողումն եմ, չէի ուզում շունչ քաշեմ. հենց իմանում էի՝ մեռելների կողքին եմ, չէի կամենում գլուխս բարձրացնեմ, ու էլի մորդ, ա՛խ, քո ումբը խավարած մորդ ձեռն որ անկաջս չէր ընկնում, էլ ետ աչքս բաց էի անում, մազերս նրա ոտի տակին փռում, որ կամ ինձ սպանի, կամ թե չէ՝ մահի ձեռիցը չխլի, ինձ սաղ-սաղ էսպես չէրի, չխորովի. մամ էլի, որ նրա է՛ն խավարած աչքերը, է՛ն չորացած, մազ դառած ջանը որ աչքովս էր ընկնում, որ իմանում էի, թե նա էլ քո ցավն ա քաշում, քո դարդովն ա էնպես փոթոթվում, քո՛, քո ջանի՛ն մեռնիմ, միտք էի անում, որ թե ես էլ մեռնիմ, էլ նրան աշխարքումը պահող չի՛ ըլիլ. որ ես կորչիմ, նա էլ կենդանի հետս պետք է հողը մտնի կամ ջուրն ընկնի, խեղդվի. որ միտք էի անում, թե նրա խորոված սիրտը ինձանով ա մի քիչ հովություն գտնում, քո կարոտը, քո հոտն ու համը, քիչ թե շատ, ինձանից ա նա սուռնում. ինձ որ չունենա՝ կամ սովը պետք է նրան սպանի, կամ քարեքար ընկնի, մեկ բուռը հողի, մեկ օրհնած տեղի էլ հասրաթ մնա: Ի՞նչ պետք է անեի, ո՞ր ջուրն ընկնեի: Հոգիս իմը չէր, որ հանեի, նրան տալի, բալքի նա ապրեր, քեզ տեսներ, քո արդար ձեռը բռներ, գար գերեզմանս ու գլխիս կանգներ, ա-սեր.

«Ա՛ղասի ջան, է՛ս ա Նազլվիդ հանգստարանը, է՛ս հողին նա իր ջանը դուրբան տվեց: Հետս խոսում չէր, որ դարդն իմանալի. ես էլ չուփ էի դառել, աշխարքն աչքիս փուշ կտրել, որ մեկ մոտին նստեի, քրտինքը սրբեի կամ մեկ սառը ջուր տալի: Ես ի՛մ տեղումն էի կրակի միջումն էրվում, սա՛ իր բարձի վրա. ես ի՛մ գլուխս էի բարձրացնում, որ հոգիս տամ, սրա հրեշտակն էի տես-

նում գլխին պտիտ գալիս. ես ա՛խ էի քաշում, որ ձենս քո՝ անկաջն ընկնի, սրա անկաջն էր ընկնում, սրան էրում, մաշում: Ա՛խ, հինգ ամիս էսպես տանջվեց, չարչարվեց էս խեղճ ջրատարը. ո՛չ դեղ կարաց սրան ետ բերիլ, ո՛չ դեղապետ. ո՛չ տերտեր, ո՛չ հսկումն. ո՛չ աղոթք, ո՛չ սրբություն: Մեկ առավոտ էլ, ա՛խ, էն սհաթը գնա, ո՛չ ետ գա, աչքս բաց արի, որ վեր կենամ՝ կամ երեսը ծածկեմ, կամ տեղը փոխեմ, տունը գլխիս փուլ էկավ. աչքերը երկինքն էր քցել, երեսն՝ աղոթարանը, ձեռ ու դոշ բաց արել. հենց իմանաս՝ էն ետին սհաթին էլ իր հրեշտակին ուզեցե՛լ էր խնդրի՝ մի քիչ համբերի, որ բալքի թե էս սհաթին էլս մեկ դուռը բաց էիր արել, մեկ քեզ տեսել էր, մեկ հասարաթ առել էր ու հետո հոգին տվել:

Ընկի՛ր գերեզմանի վրա, Ա՛ղասի ջան. էս գերեզմանը քո արնի գինն ա, քո աչքի լիսն ա էստեղ թաղած. երեսդ հողին տո՛ւր, որ բալքի հողն էլս նրա մուրազը տա, բալքի հողիցն էլս գալդ իմանա ու գերեզմանումն էլս դինջանա: Ա՛խ, ի՛նչ կլլեր, որ էնքան ցավը քաշեց, մեկ օր մեկ ձենն էլս իմանալի, մեկ օր մեկ խոսք էլա ասեր, որ սրտումս դարդ չմնար, ինձ էսպես չէրեր, չխորովեր: Ա՛խ էլ որ քաշում էր, էն կրակված շունչն էր երեսիս դիպչում. լաց էլ որ ըլում էր, էն գետնման արտասունքն էի միայն տեսնում. մեկ աչքն էլա չէր բանում կամ գլուխը բարձրացնում, որ բալքի երեսն երեսիս առներ, աչքը՝ աչքիս, որ մեկ սիրտս հովանար, մեկ լացը դինջանար, աչքս իրան տալի, որ ինչ արտասունք ուներ, ինձ բաշխեր, գետնին վեր չածեր. սիրտս իրան հանեի, բաշխեի, որ բոլոր ցավն ինձ տար, ես էլ անկորուստ էսօր քեզ ամանաթ տալի, որ քանի տեսնիս, իմանաս, թե քո խեղճ, անճար Նազլուդ քո սիրովն մեռավ, քո կարոտովն գետինը մտավ, որ քանի նրա անունը տաս, հրեշտակ էլ որ ըլի, էլ թամահ չանես. էլ է՛ն բարձի վրա ուրիշ գլուխ չդնես, որի վրա որ քո հարազատ Նազլուդ հոգին տվեց. որ է՛դ դոշդ էլ ուրիշի դեմ չանես, որ Նազլվի ջանը հանեց. է՛դ լեզուդ էլ ուրիշի ջան չասի. որ Նազլվին կրակ դառավ, էրեց:

Չէ, Ա՛ղասի ջան, թե քո մերն եմ, ասածս արա՛. քանի Նազլվիդ գերեզմանն աչքովդ ընկնի, քանի քնից վեր կենաս, երեսդ երկինքը քցես կամ իգին մտնիս, ծաղկերդ ջրես կամ պտուղ քաղես, դոշդ բա՛ց արա, նրա անունը տո՛ւր, նրա գլուխը լա՛ց իլթուի չկա, որ նրա արտասունքը տեսած չըլի. քար չկա, որ նրա

դոշին չըլի դիպել. ծաղիկ ու թուփ չկա, որ նրա գլուխը չըլի խտր-տել, սուգը տեսել, հետը սգացել, արտի ծուխը մեջն առել ու թա-ռամել, չորացել, որ նրա կսկիծը չտեսնի, ձենը չլսի: Թե իմ կաթն ես կերել, Ա՛ղասի ջան, թե իմ ձեռին մեծացել, քանի շունչդ բեր-նումդ ա, ոտդ՝ վրեդ, արի՛, արի՛, էս սուրբ հողի վրա կանգնի՛ր, ինձ էլ նրա հետ թաղի՛ր, ու հետո, աստված քեզ հետ: Քանի որ կենդանի եմ, թուր կցցեմ սիրտս, աչքս կհանեմ, ուրիշի էլ հարս չեմ կարող ասիլ, ուրիշի էլ մեր չեմ դառնալ. ինձ էլ աչքալիս չի՛ հարկավոր, չի՛ հարկավոր. իմ աչքիս լիսն էլ էր սա, իմ օր ու ումբրս էլ, որ կորավ, փչացավ. սրա կոխած տեղը թե ուրիշի ոտ ա դիպել, հոգիս կտամ. սրանից ետը աշխարքս ջավահիր էլ դառ-նա, էլ ո՛ւմ աչքը կգա, ո՛վ թամահ կանի: Մեռնելիս էլ՝ անկաջո-մըն էն եմ ասել. գնա՛, իմ ջա՛նի հանող. քանի շունչս վրես ա, Աղասին էլ կարմիր չի՛ կապիլ, էլ ձեռները հիմա չի՛ դնիլ, նրա հիմեն վաղուց քամուն տվի. մե՛կ բարձի գլուխ դրիք՝ մե՛կ հողում պտի քնիք, ինձ էլ միջոցներդ առնեք, որ ձեր սերը գերեզմանումն էլ տեսնիմ, երկնքումն էլ վայելեմ, ձեզ օրհնեմ, ձեզ որդի ասեմ ու աստծուն, ինչպես առա, էնպես ամանաթ տամ»:

Գերեզմանի դրաղին կանգնել եմ, քե՛զ եմ կանչում, Ա՛ղասի ջան, ձեռս ու դոշս բաց եմ արել, քե՛զ եմ կարոտ, ջանի՛դ դուր-բան: Հողն իմ ձեռովս եմ առել, որ երեսիս քցեմ, քո մատաղդ գնամ. պատանս ե՛ս եմ կարել, որ մեջը մտնիմ, Նազլո՛ւն չարդ տանի. խունկս ու մումս ու ժամոցս ի՛մ ձեռովս եմ տվել, ա՛նու-միդ մեռնիմ. էլ ժամ կամ պատարագ, տերտեր կամ բաժակ ինձ չի՛ հարկավոր, ե՛րեսս ոտիդ տակը: Հազար անգամ հրեշտակիս ոտն եմ ընկել, ետ դարձրել, որ մեկ էլ ձենդ լսեմ էս քառացած անկաջովս, մեկ էլ երեսդ տեսնիմ էս խավարած աչքովս, մեկ էլ էդ սուրբ ձեռդ էս քարացած դոշիս կայցնեմ, մեկ էլ էդ ազիզ պատ-կերը էս հող դառած երեսիս դնեմ ու էս էրված, խորովված, քրր-քրրված հոգիս ու շունչս քեզ տամ, Ա՛ղասի ջան. բաս սիրտդ էնպես մեռել, փետացել ա, որ էլ ինձ չե՛ս սիրում: Ա՛խ, ի՛նչ ա-նեմ, ի՛նչ ասեմ. սիրտս՝ լիքը, ձենս՝ կարճ, տեղդ՝ հեռու. ո՛վ մեր դարդին ճար կանի»:

Ողորմելի աղջիկն էլ չէր կարացել իրան պահի. կեսուրն էլ էն վախտը վրա հասավ, որ էսպես փետացել, վեր էր ընկել. ձե-ռիցը բռնեց, դողդողալով տուն տարավ ու տեգորը խնդրեց, որ

գնալիս՝ էս բայաթին էլ մեկ աստվածասերի գրիլ տա, հետը տանի, որ Նազլուն վաղուց իրանից հանել էր ու ամեն օր սգալով ասում.

ՆԱԶԼՎԻ ՍՈՌԳԸ

Գարունը բացվել ա, դաշտեր կանաչել,
Ծառերը ծաղկել, սարեր զարդարել,
Բլքյուն իր վարդի սիրովն կշուացել,
Հենց ե՛ս, ա՛խ, սիրույդ կարոտ մնացել: Ա՛խ, կարոտ...

Ինչ քար տեսնում եմ, դո՛ւ էս առաջիս.
Ինչ խոտ կոխում եմ, դո՛ւ միտս գալիս.
Աղբրի ջուրն էլ քո՛ համն ա տալիս,
Հանդի ծաղիկն էլ ի՛մ օրը լալիս: Ա՛խ, օրս լալիս...

Աչքիս լիսն էլ, ա՛խ, լալով փչացավ,
Ա՛խ, ո՛խ քաշելով լերդս չորացավ.
Ո՛ւմ սիրտս բանամ, ո՛ւմ ասեմ իմ ցավ,
Ասեմ էլ, երաբ, ո՛ւմ սրտին կտա ցավ: Ա՛խ, կտա...

Չե՛մ ուզում աչքս երկինքը քցեմ,
Լիսնյակն, արեգակն ինձ հավար կանչեմ.
Սի՛րտ ունին նրանք, որ իմ դարդս ասեմ.
Արի՛, արեգա՛կ իմ, քե՛զ կարոտ եմ: Ա՛խ, քեզ...

Երաբ քո սիրտն էլ հետս ցա՛վում ա,
Երաբ անունս միտդ գա՛լիս ա,
Թե՛ չոր քարերը ձե՛նս ու սուգս լսում,
Ո՛չ հետս խոսում, ո՛չ սիրտս առնում: Ա՛խ, սիրտս...

Է՛դ սուրբ երեսդ մեկ էլ էս տեսնիմ,
Մեկ էլ մոտիդ նստիմ, մեկ ճտովդ ընկնիմ,
Թո՛ղ էն ժամանակն էս տամ իմ հոգին,
Մեռնի՛մ արևիդ, էդ ոտիդ տակին: Ա՛խ, ոտիդ...

Նազլվիդ աչքը ճամփին մի՛ թողար,
Նազլուդ մի՛ սպանիր, Նազլուդ ջրատար
Քեզ դուրբան ըլի. հասի՛ր նրան հավար,
Հասի՛ր, հողը դի՛ր, հոգին հետդ տա՛ր: Ա՛խ, հետդ...

<7>

Ա՛խ, ա՛յ իմ աստվածասեր կարդացող. քար ըլեր, էս խոսքե-
րը կպատռեր, ո՛ր մնա մարդ, էն էլ Աղասին, որ սիրտը բարա-
կել, փոշի էր դառել: Բայց մարդիս հոգին խոր ա, ջիլը՝ կակող.
քանի ձգվում ա, բարակում է ու հանկարծ կտրվում: Էնն օրին ա
մարդ շատ անգամ իրան մոռանում, թե չէ նեղությունը միայն հո-
գին մաշում է, բայց շուտով չի հանում: Աղասու էսքան էրվիլն ու
տանջանքը որ տեսնում էին փամբակեցի կտրին հաչի տղերքը,
խոսքըմին արին, որ գնան, թաքուն նրա մորն ու կնկանը փախցը-
նեն, բերեն, բայց խելոք մարդիկ խորհուրդ չտեսան, չունքի խեղճ
ծերունի հորը բանտումը թիքա-թիքա կանեին: Ծատ անգամ վա-
րավուրդ էին անում, որ Աղասին միտը ծռել, ուզում ա գնա հոր-
նումոր հավարին. բուսուն բռնում, ետ էին դարձնում: Էսպես՝
տանջվելով էս ձմեռ էլ անց կացրեց, մինչև գարունքն էլի բացվեց,
ու թուրք ու հայ յալլադ դուս էկան: Աղասին էլ հետըները գնաց:

Աղբրների գլխին, ծաղիկների վրա օրեքը իրանց չաղրները
տվին ու մալն արին էն անմահական դրախտը: Առավոտը որ տե-
ղիցդ վեր էիր կենում, հազար սարի ծերից ամպն ու ծուխը, իրար
հետ խառը, երկինքն էին վերանում ու շաղն ու ցողը անձրևի հետ
նրանց շորերի, երեսների վրա դնում: Կնանիքը կթի տավարի հետ
էին ըլում, կաթը հավաքում, եղ ու պանիր շինում. մարդիկը տա-
վարը սարը տանում կամ բուրդ ու եղ բազարը բերում, ծախում,
իրանց տան պակասությունը հոգում: Մենակ էս չէր կնանոնց գոր-
ծը. ցերեկը ջահրա էին մանում, շալ ու խալիչա կամ կարպետ գոր-
ծում ու իրանց օրը ուրախ, միամիտ անց կացնում: Էլ ի՞նչ ասիլ
կուզի, որ տան պես աղջիկ ու հարս էստեղ կուչ ու ձիգ անելով
չէին ման գալիս կամ երեսները կալնում: Մեկ տան պես, ում օ-
րեն մտնեիր՝ թուշ էր, որ վարդի պես փալցում էր, աչք էր, որ մար-
դի խելք տանում էր: Է՛ն օդի ու ջրի, է՛ն ծաղկի ու կանաչի հոտն
ու համն առնողի հոգին ու ռանգն ի՞նչ կըլեր բաս: Հայտնի բան
է, որ ֆորսի ու, շատ անգամ, գողի ու հարամու հետ շաբթով էին
ման գալիս ջահել տղերքը, ու սպանած կամ բռնած ժամանակը

մեկ հարսանիք էր ըլում բոլոր օրեքանց միջին: Ղոնաղ պատահեր՝ էստեղ պատահեր: Շաբթով, ամսով էլ չէին թողալ հեռանա. ու աղբրների քչքչոցը, ջրերի խշշոցը, ծառերի պլլոցը, դշերի ծլվլոցը, չոբանի թութակը, գառուն, ոչխարի ու տավարի ձենն ու բառանչը ամեն մարդի ուզում էին ասեն. «Թե դրախտ ես կամենում, է՛ստեղ կաց, է՛սպես կաց. սիրտդ՝ անմեղ, միտքդ՝ հիստակ»:

Չէ՛մ կարող ասիլ, թե էս տեղի փոփոխությունը Աղասու սիրտը բաց չի արեց. քար ըլեր, կկակղեր, կրակ ըլեր, կհանգզեր, ո՛ր մնա նրա սիրտը: Բայց Աղասու գլխին դեռ չար հրեշտակ էր պատում, ու ինքը՝ ողորմելին, չէ՛ր իմանում: Շատ անգամ սարից որ օրեն չէր մտնում, հազար աչք մնում էին վրեն հալիլ-մալիլ: Իլահիմ որ իմացան նրա պատմությունը, ամեն աչք ուզում էր նրա՝ համար բացվի, ամեն բերան՝ նրա՛ն իր շունչը տա: Ում որ մեկ ծաղիկ չէր թավազա անում, աչքը արտասնքով լիքը՝ ուզում էր ձեռի տեղակ սիրտը դեմ անի, քթի տեղը հոգումը դնի նրա տված ծաղիկը: Ով մեկ անոշ թիքա ուներ, նրա համար էր պահում. մեկը սե՛ր էր նրա առաջին դնում, մեկը՝ ձվածեղ, մեկը՝ գառան միս, մեկը՝ պախրի խորոված: Շատը նրան ղոնաղ կանչելիս՝ գառն ու ոչխար էին մորթում, որ նրա սիրտն առնին: Նրա տխուր բալաթու ձենը, նրա աղիողորմ սուգը կամ արտասուները որ չէին տեսնում, մեծ, պստիկ ուզում էին նրան մատաղ գնան: Աղջկերքը որ չէին դաստա-դաստա սարի դռին ման գալիս, ծաղիկ քաղում, գլուխ ու դռ զարդարում, սիրտն ուզում էր, թե տրաքի, որ իր Նազլուն էստեղ չէ՛ր:

Բայց Մուսեն, ջիվան Մուսեն. ո՛չ Նազլու ուներ, որ դարդ անի, ո՛չ հեր, որ բանտումը տանջվի³¹. մեկ ջահել մեր ուներ, էն էլ էսօր-էգուց էր ընկել, որ մեկ քիր կամ ախպեր էլ նրա համար բերի: Բոյն էկել, շիշակացել էր, չինարի դառել. բեղերն նոր էր բերնի վրա ծաղկել. թուխ-թուխ ճալվերը շարմաղ երեսին հովին անելիս, հենց իմանաս, հրեշտակ ըլի թևով խփում: Տասներվեց տարին անց էր կացել, դեռ նա ծուռն աչքով մեկի երեսի չէ՛ր մտիկ արել: Բազի վախտ, մեկ քող կամ սիպտակ լաչակ տեսնելիս, դորդ ա, խելքը գլխիցը գնում, սիրտը կրակով լցվում, աչքերը արտասուները կոխում, ուզում էր սար ու ձոր ընկնի, գլուխն առնի, կորչի: Ամա մեկ քանի օր որ անց էր կենում, աչքը էլ որ չէ՛ր տեսնում, սիրտն էլ հովանում էր: Բազի վախտ, էնպես գիտես, թե նրան վեր ըլին քաշում: Հովը տալիս, ծառը ծաղկելիս, ջուրը

քչքչալիս, հենց գիտես, թե մեկ աներևույթ ձեն նրան ասում ըլի. «Մո'ւսա ջան, քնի'. ես աչքդ կկայցնեմ, երազումդ հետդ կխոսիմ, որ զարթնիս, գլուս կըլիմ, չունքի վախտը չի' հասել, որ դու քո նասիքը գտնիս: Ինչ որ ճակատիդ գրած ա, էն պետք է ըլի»: Քնից որ վեր էր կենում, հենց իմանում էր, թե հրեշտակները մոտիցը նոր թռան: Նա չէ'ր իմանում, թե սերն ա էս, որ քիչ-քիչ նրա սրտումը տեղ էր պատրաստում:

Մեկ օր էլ էսպես, մեկ ծառի տակի քնած տեղը, երազում մեկ թաս գինի բերին, դեմ արին նրան ու մեկ հրեշտակի պատկեր նրան՝ թներն երեսին փռած, կամաց ձեն տվեց.

— Մո'ւսա ջան, յա խմի'ր էս թասը, յա ինձ սպանի'ր, իմ կյանքս քո ձեռին ա: Հերմըմեր չունիմ, ընկել եմ մեկ անօրեն տաճկի ճանկ: Ղարսա սարումն ա մեր օրեն, թե սիրտ ունիս, թե աստվածդ սիրում էս, արի', ինձ ազատի'. չե'ս ազատիլ, քո օրումդ դու կյանք չե'ս տեսնիլ: Մո'ւսա ջան, գնում եմ, դու գիտես: Արի', թե չէ, էս ա, քսան օր ա, ինձ տանջում են, որ թուրքանամ, չեմ թուրքանում, քեզ եմ սպասում: Ինձ երազումս ասացին, թե դո'ւ ես իմ ազատողը:

Աչքը որ բաց արեց, հենց իմացավ, թե ծառ, խոտ, ծաղիկ անմահական հոտով լցված ըլին. ու արեգակի շողքը երեսը սղալելով՝ ուսուլով սարի քամակը անցավ: Ուզում էր խոսա, ձենը չէ'ր դուս գալիս. ուզում էր վեր կենա, ոտն ու ձեռը չէ'ին գորում: Թութակի ու շվու ձենն էլ որ անկաջը չընկավ, էլ ետ աչքը խփեց: Ա՛խ, ի'նչ կըլեր, ջահելությունը նրան չէ'ր էսքան հաղթել, սերը չէ'ր էսքան նրան թմբաջրել:

Մութը գետինն առավ: Մատդ որ կոխեիր մարդի աչք, չէ'ր տեսնիլ: Ամպերը սարերիցը գլխները բարձրացրին, ոտները կրտրեցին. չանկ ու դուման սար ու ձոր բռնեց: Հենց գիտես՝ հազար վիշապ բերանները բաց արած, գալիս են, որ սար ու ձոր կուլ տան: Կալծակը էստեղ-էնտեղ որ չախմախին չտվեց, սարըցիք իմացան, թե ի'նչ խաբար ա. տավար, ոչխար աղալի մեջն արին, թվանքներն առան, շները բաց թողին, չունքի լավ գիտեին, որ գողի, հարամու, ջանավարի ղզղուն վախտը հենց էս ա: Ամպերը որ թոփ ու թոփխանեն չսարքեցին, ո'վ ոտ ուներ, փախավ, ո'վ աչք ուներ, փակեց, օղլուշաղը ալաշուխի տակն արեց, ճրագ, կրակ հանգցրեց, որ աչքը մի քիչ էլա բան տեսնի, ու հենց ոտի վրա՝ ամենը մի կտոր հաց առան, էն էլ գոտիկը դրին, չկերան, որ տես-

նին, թե վերջըները ի՞նչ կըլի, ի՞նչպես կուսանա: Մեկ բարակ կարկուտ, անձրևի հետ խառը, էկավ, վրըներովն անց կացավ: Երկինք, գետինք սկսեց կրակվիլ: Կալծակը որ չէր դամշում սարերի գլխին, ուզում էին, թե հազար գագ խոր գնան: Ամպը որ չէր թոփի բերանը բաց անում, գետինն ուզում էր հազար կտոր ըլի ու հոգին տա: Ծրագ չկար, որ մարդ տեսնի. ձեն մարդի անկաջ չէր հասնում:

Աղասին պատռեց գոռալով, Մուսի անունը տալով, բայց ջուրը տանի նրա մորը. նա ի՞նչ տեղ էր, որ խոսք իմանա, ի՞նչ նեղ սհաթի, որ գլուխ առնի, փախչի: Աղասու ընկերքը ամեն մեկը մեկ սար ընկավ, գլուխը մահու տվեց. հարիր տեղ թվանք քցեցին, ու ո՞րքան էր նրանց ահն ու երկյուղը, երբ որ իմացան, թե նրա թվանքն էլ վրեն չի՛: Աղասին մահվան դուռը գնաց: Ամպն էլ ետ դառավ, կալծակն էլ, բայց գիշեր էր, ի՞նչ տեղ պետք է նրան քթնեին: Ընչանք ծեգը բացվեց, օձերը ծնեցին, ու ո՞վ նրանց հալը կարա պատմիլ, երբ էկան տեսան, որ ջիվան Մուսեն՝ արնի միջումը շաղախված, չորս կողմի խոտն ու թուփը պոկած, մեկ ահագին քաֆթառ նրա դոշին նստած, Մուսի ձախու ձեռը բերնումը, քիչ մնաց, որ թուրն իրանց սիրտը կոխեն. որ ձեն չտվին ու վա՛յ տվին, հսկայն Մուսա աչքը բաց արեց, ընկերներին որ տեսավ, գլուխը ժած տվեց ու ժպտելով ասեց.

— Աֆա՛րիմ, լավ վախտի եք գալիս. էկե՛ք, կուռս հանեցե՛ք. դամեն շատ խորն ա գնացել, ձեռս էլ հետը. ինձանում էք թաղաթ չկա, որ հանեն:

Ո՛ւմ աչքը էն ուրախությունը կտեսնի, ինչ նրա ընկերների աչքը տեսավ: Վրա թռան, քաֆթառին դեն քցեցին, ու Մուսեն որ կուռը չհանեց, կեսը, հենց բռնի՛ր, ծամած էր: Մեկ սաղ սհաթ Աղասին նրա դոշիցը չէ՛ր պոկ գալիս: Էնպես գիտում էր, թե է՛ն կյանքիցն ա վեր էկել: Սարըցիք էլ էս ջիվան, իգիթի սիրտը տեսնելով՝ մնացել էին զարմացած, ու սաղ շաբաթը հենց է՛ն էին խոսում:

Բայց Մուսի աչքիցը քունն էր փախել, սրտիցը՝ դարարը: Արեգակն էր դուս գալիս, նրա օրը մեր էր մտնում. օրն էր մեր մտնում, նրա ցավերն էին նոր ի նորո բացվում: Սար ու ձոր նրա համար դժոխք էր դառել: Գիշեր-ցերեկ նրա կերած հացը, նրա խմած ջուրը, նրա տեսած լիսն ու երազը է՛ն սքանչելի պատկերն էր, որ իրան կանչել էր: Ծառերն էին սլալում թե ջուրը

քչքչում, քամին էր փչում թե հովը հնչում, նա ո՛չինչ ձեն չէր ի-
մանում, ո՛չինչ չէր տեսնում, եթե ո՛չ՝ իր սիրեկանի երկնային
դեմքը:

Հսկայն Աղասի, որ իր վերջին օրումն էլ չէ՛ր ուզում, որ իր
ընկերների մեկի մազն էլա թեքվի, վաղուց էր վարավորդ արել
սրա էս նեղությունը, վաղուց էր իմացել, որ իր սիրեկանի սիրտը,
ուշ ու միտքը թռել ա, էլ վրեն չի՛. ամա չէ՛ր իմանում, թե պատ-
ճառն ի՞նչ ա: Գիտեր, որ նրան աչքի լսի պես էր մինչև էն օրը
պահել, բայց թե ի՞նչն էր էսպես նրան էրում, խորովում, չէ՛ր կա-
րում հասկանալ: Նա տեսնում էր, որ ջիվան Մուսին մեկ աղջկա
ձեն լսելիս, մեկ աղջկա պատկեր տեսնելիս, իրանից գնում, խել-
քամաղ էր ըլում, ամա էնպես կարծում էր, թե էս էն առաջին
կրակն ա, որ ամեն ջահել մարդի սիրտ վառում, բորբոքում ա,
երբ ինքն իրան ճանաչում ա, երբ արինը եռ ա ընկնում, ու սար
ու ձոր մարդիս աչքին յա սազ ու քյամանչա են դառնում, ուշ ու
միտքը տանում, յա թուր ու դանակ դառնում, սրտումը ցցվում:
Շատ օր ճտովն էր ընկնում, լալիս ու աղաչանք անում, որ իր
դարդն ասի, արտասունքից ավելի ո՛չինչ չէ՛ր տեսնում, լացից
ավելի ո՛չինչ չէ՛ր լսում:

Շատ անգամ սիրտը բերանն էր գալիս, որ իր ցավերն ասի,
ամա լեզուն չորանում էր, պապանձում, երեսը կարմրատակում,
չէ՛ր գիտում, թե ի՞նչ ջուղաբ տա. դողդողալով սարերն ու ծա-
ռերն էր նրան նշանց տալիս: Ընկերքն էլ էին մնացել մաթալ. որ
մի ֆոսանդ էր ճարում, էլ հաց ու ջուր միտքը չէ՛ր բերում, գլուխն
առնում, կորչում, ու սար ու ձոր պետք էր ոտնատակ տված, որ
նրան մեկ տեղ քնած քթել էին:

Մեկ օր էլ էսպես Մուսին ման էին գալիս, որ մեկ քարափի-
տակից էնպես մեկ ձեն էկավ, որ մարդ լսելիս՝ ջանը վրեն սրսը-
ռում էր: Քամին ձենը ձորն էր քցել, ու քարերն էին խոսքերը ետ
առնում:

ԱՍՏԱԹՈՒ ԳՈՒՆՈՎ

Հրեշտակ էիր, որ ինձ երևեցար, ա՛խ, ինձ երևեցար,
Երկրո՞ւմն ես ծնվել, թե՞ երկնքիցն էկար,

Մեկ ջան ունեի, էն էլ դու տարար,
Ա՛յ իմ սուրբ պատկեր, արի՛, հոգիս ա՛ն:
Ա՛խ, հոգիս ա՛ն...

Մեռնիմ՝ չե՛ս տեսնիլ, կորչիմ՝ չե՛ս ման գալ,
Սո՛ւր կոխեմ սիրտս, դու չե՛ս իմանալ.
Ո՛ւր կորչեմ, որ էս անողորմ չանգալն
Սիրտս չխրվի, չթողա ինձ լալ: Ա՛խ, չթողա...

Երա՛զ թե քուն ինձ, ա՛խ, մահ եմ դառել,
Իմ սև օրս՝ գիշեր, կյանքս խավարել.
Ի՛նչ պետք է անեմ, ո՛ւր եմ ապրում էլ,
Թե ոտիդ տակին մատաղ չե՛մ ըլիլ: Ա՛խ, մատաղ...

Ամպին իմ սրտիս դարդերը պատմում,
Ցրվում, գալիս չի՛ ու քեզ ետ ասում.
Քար ու սար աչքիս աղի արտասունքն
Էլ ետ սիրտս ածում, էլ ետ ինձ էրում: Ա՛խ, ինձ էրում...

Քանդեցիր անմեղ իմ հանդարտ հոգին,
Կրակ քցեցիր իմ ջանն ու մարմին.
Թե հրեշտակ էիր, ո՛ւր էն սուրն, էն կրակն.
Խրի՛ր իմ սիրտս, թափի՛ր իմ գլխին: Ա՛խ, թափիր...

Կգա՛մ, հո՛գի ջան, կգա՛մ քո ոտքը,
Քեզ մոտ ա սիրտս, քեզ հետ՝ իմ միտքը.
Բայց ի՛նչ տեղ ես քո աննման դեմքը
Տեսնիմ, կատարեմ իմ տված խոսքը: Ա՛խ, իմ խոսքը...

Որ ընկերքս էլ ինձ, ա՛խ, քոմակ չըլին,
Երես դարձնեն ու չըլին խոսքըմին,
Կընկնիմ սարեսար ու քո հավարին
Կըհասնիմ, դարդ չանես, քեզ մատաղ ըլիմ:
Ա՛խ, քեզ մատաղ...

Թո՛ղ մեկ էլ տեսնիմ քո սուրբ պատկերը,
քո սուրբ պատկերը,

Թո՛ղ մեկ էլ տա ինձ բաժակ քո ձեռը,
Մեկ շունչդ առնիմ, ընկնիմ սարերը,
Քեզ մատաղ անեմ իմ գլուխս, իմ օրը:

Ա՛խ, իմ գլուխս...

Ասեց ողորմելի պատանին ու սկսեց գլուխը քարին դնիլ:

Արեգակն ուզում էր մեր մտնի: Աղասին, որ թաքուն ետեիցը դուռ էկել, մեկ թփի տակից անկաջ էր անում, սիրտը էրվում, չուզեց ողորմելու քունը խառնի, մնաց քարի վրա նստած ու աչքը իր ազիզ ընկերի աչքին քցած՝ սկսեց իր դաբդերը միտքը բերիլ, իր ջահելությունը ֆիքս անիլ ու մտքումն ասել. «Ա՛յ ջիվան, ջիվան տղա՛. լավ իմանում եմ՝ ի՞նչ թուր ա էկել, սրտիդ դեմ առել. ի՞նչ կրակ ա ընկել, լերդդ էրում ու ջիգջարդ. բայց ի՞նչ անեմ, ընչի՞ չես սիրտդ ետ բանում, որ մեկ քո ցավդ իմանամ ու էլած կյանքս էլ քո ուղուրիդ մատաղ անեմ: Ա՛խ, լավ եմ իմանում, ա՛զիզ ջան, որ սիրո թեք երեսիդ քսվել, սիրո նետը քեզ էլ ա դիպել, բայց ընչի՞ չես պարզ ասում, որ գլուխս ետ դնեմ, սիրածդ գետնի տակին էլ որ ըլի, հաճեմ, ձեզ ձեր մուրազին հասցնեմ ու ես էլ ձեր ոտի տակին հոգիս տամ: Մեր ու նշանած գլխիս կրակ եմ ածում, սար ու ձոր ինձ, քիչ ա մնում, ուտեմ, մեկ քար չունինք, որ գլխըներս վրեն դնենք, էլի դու, ո՛վ սեր, ո՛վ բնություն, ուզում ես ցույց տալ քո զորությունը: Ա՛խ, ո՛ւր կորչի մարդ, որ քո ձեռիցը պրծնի, քո ցավը չտեսնի: Առաջ վառում, բորբոքում ես մեր սիրտը, հետո էրում, խորովում. առաջ վարդի հոտով գալիս, մեր սիրտը մտնում, հետո փուշ ու սուր դառնում, մեզ կտրատում»:

Էս խոսքերը միտք անելիս՝ բիրադի անկաջն ընկավ.

— Հա՛, Հոփսիսիմն ջան, քո ջանի՛ն դուրբան. քո սրբի անունը կտամ ու էգուց, էգուց Ղարսա սարերումն ինձ կտեսնիս:

Աղասու էրված սիրտն էլ հենց է՛ս էր ուզում իմանա: Էնքան կացավ, որ սիրելին քնից կշտացավ, ու իրան-իրան որ աչքը չի՛ բաց արեց Մուսեն, վրա թռավ, ճտովն ընկավ, կպցրեց նրան դոշին ու լալով ասեց.

— Ա՛խ, ա՛յքի լիս, որ սրտումդ էդպես դարդ ունիս, հենց իմանում ես՝ քա՞ր եմ, որ ինձանից բան ես թաքցնում: Չէ՛, էնպես ես կարծում, թե էս իմ խորոված ջիգջարը, որ էլ սաղ տեղ չունի, քո դարդի համար էլ տեղ չի՞ քոնիլ, քո ցավը չի՞ քաշիլ,

Էլած շունչս ու ումբս քե՛զ չեմ տալ: Հենց իմանում էի՝ աստվածանից դու բան կթաքցնես, ինձանից չե՛ս թաքցնիլ: Է՛դ ա քո սերդ ու սիրտդ: Հենց իմանում էիր, թե Աղասին էնպես մեռել ա, որ քեզ համար մեկ ա՛խ էլա չի՝ քաշիլ, քեզ համար մեկ կաթ արտասունք էլա չո՛ւնի: Հերմըմբս, դորդ ա, մահվան դուռն են հասել, նշանաժս, ո՛վ ա գիտում, հողի տակին ա, թե երեսին, ամա քանի նրանց ձեռս չի՝ հասել, ե՛րբ կթողամ ձեր մեկի աչքը ցավի, ձեր մեկի մազը թեքվի: Մինչև ես մեռնիմ ո՛չ, մինչև ինձ թիքաթիքա չանե՛ն, ձեզ կթողա՛մ, որ մեկ դուշ անց կենա գլխըներիդ վրա: Վե՛ր կաց, երեսդ սրբի՛ր, ինձ ուղիղ ասա՛՝ էդ քո ջանը հանող Հոփսիսմեն, էդ հրեշտակն ո՛վ ա, որ քեզ երևացել ա, քեզ տանջում, մաշում, ու դու մեզ բան չես ասում: Հազար սար ու ծով մեր մեջն ըլի, էլի կթոշիմ, նրան կհանեմ, կբերեմ, թաք ըլի դու դարդ չանես, երեսիդ մեռնիմ: Ասում ես՝ Ղարս ա: Էդ հո երկու ոտը տեղ ա, դրա համար էդքան պետք է է՛րված: Վե՛ր կաց, դեռ երեխա ես, դեռ գլխիդ բաներ չի անց կացել շատ, որ մարդ ճանաչես: Վե՛ր կաց, էլ ամաչելու, գլուխը կախ անելու վախտը չի՛:

Մուսի աչք ու երեսը կրակ էր դառել ամոթու, չէ՛ր իմանում, թե իր մեծահոգի բարեկամի ո՛տներն ընկնի, թե՛՝ ձեռը համբուրի: Արտասունքն ու դամարի սաստիկ խփիլը ցույց էին տալիս, որ Մուսին ուզում էր ասի, լեզուն չէ՛ր բռնում. բերանը փակվում էր, պապանձվում, որ ձեն տա. «Ա՛ղասի ջան, յա մորթի՛ր ինձ, յա սպանի՛ր էստեղ. յա ասածս արա, իմ մուրազին հասցրո՛ւ. Հոփսիսմեն որ չըլի, էլ ինձ ո՛չ կյանք ա հարկավոր, ո՛չ օր. նրա շունչը որ չառնիմ, ես ինքնս իմ շունչս բերնիցս կհանեմ, կկտրեմ. նրա աչքը որ աչքիս չառնի, աչքս կփորեմ, դեն կքցեմ: Դո՛ւ ես իմ տերը, իմ աստվածը. իմ ձեռս քո փեշն եմ քցել. յա ձեռս կտրի՛ր, յա գլուխս, յա իմ մուրազը անկատար պետք է չթողաս, պետք է ինձ սաղ-սաղ չէրես, չփոթոթես»:

Էսպես՝ որ ձեռք-ձեռքի ետ էին դարձել, գալիս էին, Աղասին իր սիրելու գլուխը դռշին կպցրած՝ քաշում էր նրան, քանց թե բերում, մյուս ընկերքն էլ, որ սաղ գիշերը չէին քնել դարդու, ուրախ-ուրախ վազեցին առաջ, հենց իմացան՝ արեգակը նոր ա բացվում, էկան, երկուսին էլ մեջ արին ու չադիրը գնացին: Սարըցիք էլ ուզում էին, որ ուրախությունիցը հոգիները տան:

Աղասին մտածման մեջ ընկած, աչք ու ունք կիտած՝ չադիրը մտավ թե չէ, տղերքանցը իշարաթ արեց, որ ձիանը հավաքեն,

յարադ-ասպաբ հազիր անեն, որ էն գիշեր դուս պետք է գնան: Զէ՛ր ուզում, որ մարդ իմանա. վախում էր, թե իրան բռնեն, չթողան: Էն իրիկունը բոլոր սարըցոնցը գլխին հավաքեց, նրանց խոսքով արեց, որ կասկած չտանին, հազար բերնով իր շնորհակալությունը էնպես էր ուզում ցույց տա, որ նրանք ո՛չ նրա միտքը իմանան ու, թե փախած ըլի, չասեն, թե ի՞նչ վատ մարդ էր նա, որ մեկ դարտակ շնորհակալություն էլ նրանց չասեց: Էնքան աղ ու հացըները կերավ, բոլոր ոտի տակ տվեց ու վեր կացավ, փախավ: Ծատ էին նրան աղաչել ու լալով ասել, թե նա նրանց միջումը մնա, իրանք իրանց կերթան, կնչագին կխնդրեն, որ իրանց ուզեաշին, իրանց կառավարիչը նա ըլի, ու ասում էին.

— Մենք գիտենք, թե ի՞նչպես հոգի կտանք քեզ, որ արա՜նք աշխարհ իմանա, թե հայի ազգումն էլ սիրտ կա, հայումն էլ ռաշիդ տղամարդին աստծու տեղ պաշտիլ գիտեն:

Էս իրիկուն էլ գլխին ժողոված մեծ ու պստիկ էլի էն էին ասում ու վրա բերում, թե որ նա իրանց միջիցը հեռանա, աշխարք նրանց համար քանդված ա, ու նրանց աչքն էլ արեգակին ուղիղ չի՛ մտիկ տալ, նրանց սիրտն էլ լավ օր չի՛ քաշիլ: Քանի նրա ասած խոսքերը, նրա տեսած բաները տեսնին, կուզեն, որ էրթան, ջուրը թափին, նրանց օրն ու ոմբըրը կսեանա: Ամեն էսպես խոսք լսելիս՝ ինչ Աղասու բերնիցն էր դուս գալիս, լեզու պետք է ըլի, որ պատմի. սիրտ պետք է ըլի. որ իմանա: Տեսավ, որ անմեղ սարըցիք հենց նրա բերնին են կարոտ, ուզում են, որ սաղ գիշերը նրա կշտիցը չհեռանան, նրա մոտին նստին: Հա՛, շատն էլ էկել, գլուխը նրա գոգին էին դրել ու երեսին մտիկ անում, ասածն իմանում. աղջիկ ու հարս էլ չադրի դուռն ու դրաղն էին կտրել ու ա՛խ քաշում. տղերքանցն իշարաթ արեց, որ ձիաները հագրեն, առավոտը ֆորս պետք էր գնար, գան, մի քիչ քընին, դինջանան, ամեն բան հազիր ունենան, ու ինքն էլ գլուխը թեքեց, որ սաքի թե աչքը կպցնի, խալխը քաշվեցին, բարի գիշեր ասացին, ու ամեն մարդ իր չադիրը գնաց:

Հենց աղոթարանը կարմրատակեց, ու ամպերն սկսեցին գլխըները քիչ-քիչ սարերիցը բարձրացնիլ, տղերքը ձիանը թամբեցին, յարադ-ասպաբ քցեցին, էկան, չադրի դռանը կանգնեցին: Աղասու ձին ոտին-գլխին էր անում: Սարերի ծաղկըները ու ջուրը նրա միսը անկաջովն էին դուս բերել, էնքան չաղացել էր: Ընչանք սարըցիք վեր կկենեին, որ իրանց կով ու ոչխար կթեն, նրանց

դոճաղները մնաք բարով ասացին, ձիանոց գլուխը ծռեցին ու
թռան: Աչք էր, որ ետևներիցը մայիլ էր մնացել. սիրտ էր, որ
ասում էր իր միջումն՝ երանի՛ նրան, որ էսպես զավակ, էսպես
փեսեք կունենա: Սարը բարձրացան թե չէ, Աղասին, որ ման է-
կած սարերին ու ձորերին, իր տեսած ծաղկներին ու աղբրներին,
իրան սրբի պես պաշտող անմեղ սարըցոնց օրեքանցը մտիկ
չարեց, խելքը թռավ, աչքերը լցվեց ու սկսեց բարակ ձենով էս
բալաթին ասել:

Բարո՛վ մնաք, բարո՛վ, սարեր ու ձորեր,
Ալվան ծաղկրներ, սիրուն աղբրներ,
Որ ինձ պահեցիք դուք էսքան օրեր,
Ա՛յ անմեղ հայեր, սիրուն աղջրկներ:

Աղասին բալթի ձեզ էլ չտեսնի,
Աղասին ձեր վրա, կըլի, էլ չքնի,
Ձեր հոտը չառնի, ձեր կշտովն չանցնի,
Ձեր ձենը չլսի, ձեզ կարոտ մեռնի:

Հալալ արե՛ք նրան ձեր աղ ու հացը,
Քանի նա ձեզ մոտ կանգնած՝ իր լացը
Ծոցն ա հավաքում, քանի աչքը բաց՝
Ձեզ միտքը բերի, օրհնի ձեր արածը:

Ա՛խ, ի՞նչ կըլեր՝ ոտս կոտրեր, էստեղ չգար,
Ձեր ազիզ երեսն չտեսներ, էսպես չլար.
Ի՞նչ կըլեր՝ աստված ամեն մարդի տար
Ձեր անմեղությունը, ձեր հալալ պաշարն:

Երաբ, յարալու սրտիս ասածը
Կպահե՞ք ձեր մտքումն, թփե՛ր բաց էլած.
Ձեզ վրա ման գալիս՝ ձեռ-ձեռի տված
Աղջիկ ու հարսներ, ձեր մոտին նստած:

Սիրո՛ւն աղբրներ, լաջվա՛րդ ծաղկրներ.
Երա՛բ, որ նրանք ձեզ քաղեն, ծոցերն
Լցնեն, հոտ քաշեն, զարդարեն դռներն,
Իրար տան, կապեն փունջ ու պսակներ,

Մեկ-մեկու ասեն՝ մեզ չմոռանա՛ք.
Պահի՛ր էս ծաղիկն քեզ մոտ հիշատակ.
Երա՛ն, իմ լացս էլ դուք չե՛ք մոռանալ,
Ու ձեր հոտի հետ իմ սուգս նրանց տալ,

Նրանց իմ օրհնությունն, իմ խնդիրն ապիլ,
Որ ինչքան շունչս կա ու չեմ մեռնիլ,
Նրանց սերը կհիշեմ, նրանց կուզեմ պաշտիլ.
Ինձ չի՛ մոռանան, ես նրանց չե՛մ քցիլ

Մտքիցս, ու նրանց սերն սրտումս կպահեմ,
Հետս ման կածեմ, հողը կտանիմ.
Աստված թո՛ղ ձեզ տա, ինչ որ ես կուզեմ,
Մնաք բարո՛ւ, սարեր, էլ ձեզ տեսնիլ չե՛մ:—

<8>

Մեկ տափարակ, դուզ տեղ բաց ա ըլում հանկարծ տեսնողի առաջին մեկ մեծ դաշտ՝ չորս կողմը սարերով պատած, աջ ու ձախ սևին տալիս, ու քանի գնում ա մարդ, ամպ ու դիման քաշվում, պարզում են, ու հենց իմանում ես, թե առաջիդ մեկ էնպես քաղաք ա բաց ըլում, որ հազար-հազար կենող միջումն ունի, ու ցրտի լա շոգի ձեռից բեզարած՝ ուզում ես, որ շտապիս, գնաս, մեկ աստվածասերի դռան վեր գաս, դինջանաս, էլ ետ ճամփեղ բռնես, գնաս: Մեկ տեղից ահագին բերդի պարիսպն ա քեզ խաբում, մեկ տեղից՝ զարմանալի եկեղեցքանց գրմբեթն ու մեծությունը, մյուս տեղից՝ բարձր մինարեթքը, քոշք ու սարայի գլխըները: Մտքումդ ասում ես, թե էս տեսածդ մեկ մեծ, գորեղ թագավորի թախտ պետք է ըլի. էստեղ ոսկին ու արծաթն աղբի հետ պետք է խառը ընկած ըլի, էստեղ օրը հարիր քարվան ներս մտնի, հարիրը դուս գա: Հենց իմանում ես, թե ցերեկը թոզն ու դումանն ա աչքդ բռնում, գիշերը մութն ու խավարն ա քեզ խաբում, որ ինս, ջինս, մարդ, անասուն չե՛ս տեսնում, հենց ջամդաքակեր ագռավներն են աչքերիդ սևին տալիս: Մարդ չի՛ կա մոտիդ, որ հարցնես. գիր չե՛ս կարդացել, որ իմանաս. մտքիդ հետ ընկած՝ տեսածդ հրաշք կարծելով լա աչքակապություն, որ հանկարծ գլուխդ չես բարձրացնում, ա՛խ, սի՛րելի իմ հայազգի, ջանդ դող

ա ընկնում, կոներդ թուլանում: Հենց իմանում ես, թե մեկ վիշապ յա մեկ հարամի հենց էն սհաթին ա մտել ու բոլոր կենողներին յա կուլ տվել, յա սուրը քաշել, յա գերի արել, ինքն էլ փախել: Ուզում ես, որ աչքդ խփես, ետ դառնաս:

Ա՛խ, չէ՛, չէ՛, ետ մի՛ դառնալ. էստեղանց ծուխը հազար տարուց ավելի ա, որ կտրվել ա. կա՛ց, մի՛ վախենալ, անշունչ քարերն ու եկեղեցիքը մարդակեր չե՛ն: Աչքդ բա՛ց արա, սիրտդ քե՛զ հավաքիր ու գլխիդ վա՛շ տուր: Է՛ս սրբատաշ տաճարները, Է՛ս ահագին բերդը, Է՛ս քարերը քեզ կասեն, թե սա է գոռոզն Անի, քո թագավորների հզոր մայրաքաղաքը, որ էնքան էր իր հարըստությունովը, իր փառքովը փարթամացել, ճոխացել, մեծամտել, որ չոբանն էլ եկեղեցի էր շինում³², ոչխարարածն էլ արծաթե նալչով, սաղրի քոշերով ման գալիս, ուզվորն էլ հացի տեղակ՝ փլավ, դանդ ու շաքար, սև փողի տեղակ արծաթ ու ոսկի պահանջում, որ եկեղեցի մտած ժամանակ էլ էնքան էին նրանք աստված մոռացել, որ կարճ վարդապետ գալիս՝ բարձր գրքակալ էին գնում, բարձր եպիսկոպոս ըլելիս՝ ցած գրքակալ դուս բերում, որ յա ձգվին, յա կռանան, յա չոքին, յա գիրքը չտեսնին, ու իրանք ծիծաղին, աստուծո տաճարումը քեֆ անեն: Բայց սուրբն Հովհանն Երզնկացի հանաք չվերցնելով՝ մեկ օր օրհնած բերանը բաց արեց, երկիրը տրաքեցավ, տակըվեր էլավ, խալիսը ցրվեցին, փախան՝ որը Ղրիմ, որը Պոլշա. էս անշունչ քարերը մնացին ցից-ցից, հազար եկեղեցուցը հինգը մնացին շեն. տաճարք, սպարանք, գանձ, հարստություն ամենքի փայ էլավ, հողը մտավ հալոց ազգի մնացած փառքն էլ, ու մինչև էսօր էլ երկրի ձենը գալիս ա: Գող, ավազակ են միջումը բուն դնում, նրանց բանն աստված հաջողում ա, նրանք չե՛ն տակով ըլում, ու աստված էնքան իր գուրը հայերիցը պակասացրեց, որ էնքան անմեղ հոգիքը, էնքան միլիոնավոր մարդիկ մեկ սհաթումը մեկ սևագլխի խոսքով ջնջեց, Հայոց Տունը քանդեց, էլած փառքն էլ ձեռիցը խլեց, որ գնա, էսպես երերյալ, տատանյալ մնա աշխարքիս երեսին:

— Լա՛ց գլուխդ, ա՛նցավոր, տե՛ս, թե աստուծո դատաստանըն ի՛նչպես արդար է. կարգավոր տեսածին պես ոտները ջուր արա՛, խմի՛ր, որ էսպես քաղաքը ամենքով քանդեցին, ու էսօր էլ քանդողին եկեղեցումը տոնում են: Դու չե՛ս իմանում, որ նրա անունը տաս, սուրբ աղոթքն ու բարեխոսությունն հիշես, որ քեզ էլ չանիծի, քու որդիքը պահի, մեծացնի: Նրա տոնի օրը լավ մըտ-

քումդ տպավորի, ի՞նչ կանես Անի քաղաքի անունը: Նա քանդ-
վեց, պրծավ, ամա սուրբը քեզ միշտ օգնական ու բարեխոս կըլի:

Ղրաղին կանգնել ես, ձեռդ ծոցդ դրել,
Խելքդ ցնորվել, լեզուդ պապանձվել.
Ո՛վ էսքան հրաշք տեսավ, վաչելեց:
«Երա՛գ եմ տեսնում, քնա՛ծ եմ, ա՛չքս ինձ խաբեց»,
Ասում ես մտքումդ, ուշագնաց ըլում:
Հո նո՛ր եմ սրանք. բաս սրանց միջումն
Ընչի՞ չկա ձեռն, ընչի՞ եմ լուվել:
Ա՛խ, թշնամյաց սուրն ա նրանց վերջացրել:
Հմիկ հավատո՞ւմ ես, ա՛յ իմ խեղճ ազգ,
Թե քո երկրումն բյուր էսպես քաղաք
Կամ կրակով փչացան, կամ սուրը քաշվեցին,
Ու քեզ չոր քարեր մենակ թողեցին,
Որ տեսնիս ու լաս, տաս քո գլխիդ վա՛յ.
Խելքդ ժողովես, լինիս կտրին հայ,
Ռուսաց հզոր, քաջ ձեռի տակին
Փոքր դինջանաս ու քո աշխարքին
Մուղայիթ կենաս, արյունդ թափես,
Քո ազգը պահես, քեզ անուն ճարես:

Հանգստարանի ձեռն էր գալիս, որ մեր ճամփորդքը գիշերվա
կեսին էստեղ հասան: Լավ կտրին մարդ պետք է ըլի, որ էս ժա-
մանակին էսպես չոլ, յաբանի տեղը սիրտ անի, մտնի: Կարելի է,
թե մեր բեգարած ճամփորդքն էլ էստեղ չէին հասել, թե գիշեր-
վան լիսնյակի լիսը, էս տաճարների, բրջերի գլուխը ու իրանց
տգիտությունը նրանց չէին խաբել, էս տարտարոսը քցել: Անու
քաղաքի անունն էլ չէ՛ին լսել, ո՛ր մնա իմանային, թե նրա խա-
րաբեքը դեռ աշխարքումս կան: Հեռըվանց որ ցից-ցից տների
գլուխը չտեսան, ռսի հողիցը դուս էին էկել, հարամու հողը էլ ետ
մտել: Ղորդ ա, աքլորի ձեռն չէ՛ր գալիս, ամա սարերի չոբանի
շների ձեռնը լսելով՝ էլ մտիկ չարին, զո՛ւ քաշեցին ու, քու դուշ-
մանի գլխին չի գա, որ չմտան էս լուռ, տխուր պարսպների մեջը,

հենց իմացան, թե մեկ մեռլատուն կամ գերեզմանատուն ընկան, ու ամեն մեկ ձիու ոտի շփլթոցը յա իրանց քաշած շունչը սար ու ձոր կատաղացնում աս:

Ամեն մարդ փորձած կըլի, որ մութը ժամանակի մարդ, որ մեկ գերեզմանատան կամ մեկ քանդված եկեղեցու դրաղով էլ ասանց կենում, սիրտը թուլանում աս, ջանը զարգանդում, հազար միտք հոգի՞ն կտրատում, քարերն էլ դև համարում ու հարամի, որ իրան կամենում են ուտիլ, շատ անգամ ուշագնա էլ աս ըլում: Սրա պատճառը բոլոր էս աս, որ մարդ սովոր աս, ինչ տեղ տուն աս տեսնում յա շինություն, կարծելով թե մարդ էլ կըլի, ու ետո, որ ձեն չի՛ լսում, էնպես կարծում աս, թե անպատճառ չար հոգիք են էնտեղ բնակույ՛մ. թե չէ մեռելի չոր մարմինը յա խարաքա պատերը ի՛նչ գորություն ունին, որ մեզ ի՛նչ անեն: Էլ ո՛վ սիրտ կաներ ապա կամ եկեղեցու մոտանա, յա մեկ բուրջ մտնի, էն էլ է՛ն երկրումը, որ ամեն քարի տակի հարիր գլուխ էր կտրվում, ամեն մեկ ձորում՝ հազար լաշ հոգին զոռով տալիս:

— Տղե՛րք, չար սատանի թուրը գլխըներիս խաղում աս,— ձեն տվեց պինդ սրտով քաջն Աղասի:— Տղամարդությունն էսպես տեղը մալում կանի. յարաղ-ասպաբ հազրեցե՛ք, ձիանոցը դինջացրե՛ք, որ թե աստված տա, մինչև առավոտը գլխըներս վրըներս ըլի, տեսնի՞ք, թե էս ո՛ր գեղարգյալմագն ընկանք: Նամարդությունը էլ ձեռք չի՛ տալ. ձիանները ջրեցե՛ք, քաշեցե՛ք մեկ պատի տակ, էս մեկ շունս առնի՛մ, յավաշ-յավաշ մեկ աչք ածե՛մ, տեսնի՛մ, թե տեղըներս ոահա՛թ աս, թե՛ էլի սրով ու արնով պետք է յա գլուխ պահենք, յա գլուխ կտրենք:

Շատ էլ խնդրեցին ընկերքը, որ չանի, անկաջ չարեց, թըվանքն ուսին դրեց, փշտոբերը հազրեց, սուրբ Սարգսի անունը տվեց ու ոտը փոխեց: Գիծ կըլի էն տղամարդը, որ իր գլուխը մահու կտա, ամա Աղասին իր գլխիցը վաղուց էր ձեռք վեր առել: Հավատարիմ շունը գլուխը նրա ոտիցը չէ՛ր հեռացնում. մեկ հոտ առնելիս յա շփլթո իմանալիս կանգնում էր, ետի ոտների մինն էլ ցցում, երկար վախտ անկաջ դնում, հետո երըմիշ ըլում:

Հենց մի քիչ հեռացան թե չէ, մեկ եկեղեցու դռնից կրակի լիսն ընկավ Աղասու աչքը. արինն աչքն առած՝ էլ միտք չարեց, թե էսպես տեղը գողից, հարամուց ավելի ուրիշ օքմին չի՛ ըլիլ, թուշ կրակի վրա գնաց: Աստված հեռու տանի, ինչ նա տեսավ. տասը բուրդ եկեղեցու մեջտեղը կրակ էին արել, չորս կողմը նըս-

տել, խորոված էին անում, շամփրըներով բերանները քաշում, ուտում, խնդում ու աչքըները օյաղ որսկանի շան պես յա դուռը քցում, յա պուճախը: Հարամին ինչքան գազան էլ ըլի, շատ անգամ իր շվաքիցն էլ կվախենա: Ընչանք նրանք կրակի մոտիցը ձեռները աչքըներին կղնեին ու դռան դարավթուն կտեսնեին, Աղասին յավաշ-յավաշ ներս մտավ, ծանր դեմքով, առանց բարով տալու կրակին մոտացավ ու ձեռը մեկնեց, որ մեկ խորովածի շամփուր էլ ինքը քաշի: Նրա դեղնած, մեռելի պատկերը, նրա անահ շարժումնքն ու էնպես անժամանակ վախտը ներս գալը որ չտեսան քրդերը, հենց իմացան, թե նա էն աշխարքիցն ա վեր էկել: Լեզվըները չորացան, ձեռըները թուլացավ: Ի՞նչ կկարծեին, թե էն հաղաղին իսանաորդի մեն մենակ սիրտ կաներ էն ավագականոցը մտներ, որ ցերեկն էլ հարիւր մարդ զարգանդում էին՝ մոտովն անց կենան, որ հազար տարուց ավելի՝ էլ ինսանաորդի սիրտ չէր անում, որ գա, էն հագիր շինած տներումը կենա: Հենց գիտես, թե մարդիկ չըլին առաջին. աչքը խոժոռած՝ մեկ դես քը-ցեց, մեկ դեն, քրդերեն էլ չգիտեր, որ մեկ բառ էլա խոսի, բայց է՛ս էր, որ նրան պրծացրուց, չունքի թե խոսացել էր, կիմանալին, որ մարդ ա, դե չի՛, թիքա-թիքա կանեին. մեկ շամփուր խորովածի որը կերավ, որն էլ ետ կրակը քցեց, տաճարի հիանալի շինվածքին ու գեղեցկությանը մտիկ արեց ու գլուխը ժած տվեց. քրդերը փետացած՝ մնացել էին նստած. աչքը որ հանկարծ նը-րանց վրա չխոժոռեց, ամեն մեկը տեղնուտեղը ուզեցավ, որ հալ-չի. էնքան էսպես նրանց աչքը մոխիր ածեց, որ ընկերների ոտի շփթուն իմացավ, ու շունը ուրախ-ուրախ ներս ընկավ, ոտներովը փաթաթվեցավ: Հենց շունը տեսան հարամիքը թե չէ, աչքըների փառը վեր ընկավ. ամեն մարդ թրին վրա վազեց, որ նրան փառ-չալամիշ անի. առաջի թուր վրա բերողի գլուխը կես էլավ. փըշ-տովների երկուսն էլ իրանց ֆորսը ճարեցին, ու դամեն ձեռն ա-ռած որ գոռաց ո՛չ՝

— Տղե՛րք, ձեր արևին դուրբան, աստված մեր կողմն ա. դուռը կտրեցե՛ք, որ սրանց մատաղն էս գիշեր անե՛նք...

Հայի լեզուն որ բաց չէլավ, հենց բռնես, պատերը լեզու ա-ռան:

— Ամա՛ն, ձեր էկած հողին դուրբա՛ն, ճար ունի՛ք, տեսե՛ք, մեզ ազատեցե՛ք, տնով-տեղով ձեզ եսիր կդառնա՛նք:

Տասը-տասնըհինգ քրդստանցի հալ էլ որ էս կողմից, էն կող-

մից գլուխ չի՝ բարձրացրին ու քրդերի մնացած թերն ու մզրախները ձեռք առան, քրդերի աստղը թեքվեցավ. ութը կոտորվել էին, երկուսը մնացել յարալու ընկած: Սրանց էլ կապեցին մեկ ձիու բհրի վրա, ու աչքդ բարին տեսնի. ոչինչ սհաթի մարդի քաջությունը էն բարերարությունը չի՝ արել, ինչպես հիմիկ: Աղջիկ ասես, տղա, հարսը, երեխա, ծծկեր. հազար չվանով կապած՝ տուն էին արել, Ղարսա գեղերիցը եսիր բերել, որ տանին յա սարդարին փեշքաշ անեն, յա Ախըլցխա ծախեն³³: Ո՛ւմ էսպես սհաթին մարդ կյանք տա, որ նրա առաջին ծունր չղնեն, երկըրպագություն չանեն: Բայց հսկայն Աղասի ինքն էր ընկնում նրանց ճտովը. ինքը նրանց կապը ետ անում, ինքը երեխին ջոկ, մորը ջոկ սիրում, գուրգուրում, որ աստծուն փառք տան, սուրբ Սարգսին խունկ ու մոմ վառեն, թե չէ էս իր հունարը չէ՛ր: Ոչի՛նչ գիշեր էն լիսը, էն կյանքը չի՝ տեսել, չի՝ քաշել, ինչպես՝ էս: Ազատվողք թե ազատողք, իրար տեսնելիս, հենց իմանում էին, թե երկնքումն են ու ո՛չ երկրումս:

Փոքր-ինչ որ դիմջացան. աչքդ բարին տեսնի: Քրդերի շորերն, ասպաբն, ձի ռախտը ու խուրջիները որ բաց չարին, հազար արնի գին կար միջըներումը, ամեն մեկի վրա հարիր թումանի գինքս, արծաթ ու ոսկի, թո՛ղ նաղդ փողը: Աղասին օ՛չ մեկին էլա մտիկ չարեց, դրկեց, ձիանը բերել տվեց, ներս քաշեց ու քրդստանցի հայերին հարցրեց, որ իրան միամտացնեն, թե էն գիշերը կարո՞ղ են էնտեղ ոհաթ մնալ, թե ո՛չ:

— Աղա՛, գլխուդ, արևուդ դուրբան, վալլախա, չընք գինա, թե էս շան լաջերիցն էլ կա՛ն, թե՛ չէ. ամա օլադությունն աղեկ է: Սրանց չանգիցը շունը չի՛ խլսի, մարդն իմա՛լ կխլսի: Մգա աստծուն փառք, խազար էնպես ջանավար մեր առաջը գան, գէնոնց խերն անիծեն, մեկ թուր տո՛ւր մեր ձեռը, մենք գինանք, թե իմա՛լ քո ճակատը պարզ կէնենք: Մեր ամեն մեկը, սուրբ Կարապետ գինա, էտնց տասնին խավի պես կծալի, տակը կքաշի: Դու դարտ մի՛ արա: Ռահաթ պարկի, մեր երեսը ողացդ հողն ըլի: Էտնց քոքը կտրվի. քանց շուն շատ են, քանց գել՝ առավել: Թե մեզ կխարցնես, մենք էմլա խելրաթ կտեսնինք, որ մեր կես պարկի, կես դարավուլ քաշի: Էս ձորեր խանա լիքն են:

Հենց էս մալըհաթին էին, մեկ էլ էն տեսան, որ ձիավորի ոտի ձեն ա գալիս: Արիասիրտն Աղասի միտք արեց, որ սրանք նրանց ընկերները պետք է ըլին, ական թոթափել, երեխա, օղլու-

շաղ դրաղ քաշեց, հագար անգամ ձեռն էստուր <-էնտուր> բերնին դրեց, որ ձեռն չհանեն, երկու քրդին էլ բերան, ձեռ, ոտք դհա դա-լիմ կապեց ու մեկ իգիթ քրդստանցու՝ թուրը հանած, վրըները կաղնացրուց, մյուս քրդստանցուցը կրակի չորս կողմը նստա-րուց, որ կարծիք չընկնին, ու ինքն իր ռաշիդ տղերքանցովը եկե-ղեցու դռան աջ ու ձախ կողմը կտրեցին, թուրները հանած պատ-նըդուս ցցվեցին ու թշնամուն ճամփա տվին:

«Հո՛, լո՛...» ձեռն տալով՝ քսանից ավելի ձիավոր ժամի դռա-նը վեր էկան, բալուր տվին մեկ-երկուսի ձեռքը, որ մահ ածեն: Հայի երեխեքանց ու կնանոնց սուգ ու շիվանի ձենը որ ժամը չէ՛ր ընկնում, պատերն էլ սուգ էին անում. բայց խեղճերը չէին իմա-նում, թե ի՞նչ բարի հրեշտակ ա աստված երանց համար ուղար-կել: Հենց գյուռ արած, որ դալմադալ անելով ներս չընկան, էլ չիմացան, թե մարդ ա, որ իրանց գլուխը կոտրում ա, դե կարծե-ցին կամ սուրբ. էլ թրի, մզրախի յա դալխանի վախտ չէ՛ր: Քրդըս-տանցի հալերը մաջալ էլ չտվին աջամի հալերին. շատին հենց կրակի շամփուրն կամ թերէրեցն էին բերանը կոխում, գլխին, դո-շին քարով, փետով ծեծում, որ շուտ չմեռնին ու տանջվին: Էլի Աղասին էր, որ էս կատաղությանը չափ դրեց, սպանածներին դուս ածիլ տվեց, ու որը սաղ էին յա յարալու, ձեռ ու ոտք կա-պիլ տվեց ու դրաղ քաշիլ տվեց:

— Աղա՛, մեր տուն քագող էսոնք են, էսոնց խոր տունը քագվի. էսոնք մեր ճիծը ու մահն խատացրին. թո՛րկ, թո՛րկ, է-սոնց սատանի կեր անենք, էսոնց խոր գաղտը գյոռբեգյոռ ըլի:

Թո՛ղ կարդացողը ինքը միտք անի, թե էս գիշեր ի՞նչ գիշեր կըլեր էս ջրատար եսրների համար, որ ամեն մեկ ոտք փոխելիս՝ իրանց մահն էին տեսել, իրանց մահին էին սպասում, թե ի՞նչ սրտով նրանք աղոթք կանեին, ի՞նչ հոգով իրար կնայեին ու աստ-ծուն փառք կտային: Հենց էն կոտորելու ժամանակին էր Աղասին դուս թռել, էն դռան երկու քրդի մընին էլ սպանել, մյուսը փախըն-րել, ու խեղճ հայի երեխեքանց աչքերի ու ձեռների կապը իրան ձեռովն ետ արել, իրան ուսին ներս տարել: Ջարմացած, մահի դուռը գնացած ու ետ եկած հալերը որ աչքըները բաց չարին, իրանց ազատողին տեսան, ուզում էին ոտներն արտասանքով լվա-նան, բայց համեստ պատանին հենց էն էր խնդրում, թե աստծուն փառք տան, սուրբ Սարգսի անունն հիշեն: Տեսնելով, որ քրդըս-տանցիք սուրբ Կարապետին ավելի են ճանաչում, ասեց.

— Թո՛ղ էդպէս ըլի, սուրբ Կարապետին հիշեցե՛ք: Սրբերը չե՛ն խոտվիլ յա նախանձ պահիլ: Ո՛վ ըլի՝ նրա գործությունն ու բարեխոսությունն շատ ա:

Աղասու սիրտը վկայում էր, թե էն գիշերը էլ փորձանք չի կա. բոլորին էլ խնդրեց, որ չոքին, աղոթք անեն: Նրանց բախտիցը՝ եսրների միջումը տերտեր էլ կար, տիրացու էլ: Սրանք սկսեցին առավոտվան ժամը, ու Անի քաղաքը, հազար տարուց ավելի, որ ո՛չ ժամ էր տեսել, ո՛չ աղոթքի ձեն լսել, էս գիշեր հենց իմացավ, թե իրան երևելի, շքեղ թագավորագույնքը կրկին վեր են կացել, իրա հողն օրհնում, իրա ջուրն գովաբանում, որ հայ ազգը էլ չհավատա, թե իրան աստված էնպէս ա անիծել, որ էլ մարդ չի՛ կարող նրա միջումը կենալ: Ո՛չ երկիրը քանդվեցավ, ո՛չ երկինքը փոփ էկավ: Քրդստանցիք իրանք էլ էին մնացել զարմացած, թե էն ի՞նչ անճոռնի ասություն պետք է ըլեր, որ մինչև էն օրը սրտըներումը հաստատ տպավորել էին:

Առավոտը որ լուսացավ, Աղասու աչքը մնացել էր սառած: 2Է՛ր իմանում՝ աչքին հավատա, թե ո՛չ: Եկեղեցի, պարիսպ, բերդ, միմարեթ՝ էնքա՛ն նոր, էնքա՛ն պայծառաշեն ու անբնակ: Կարդալ չէ՛ր գիտում, որ միտքը բերի, թե էս ի՞նչ քաղաք պետք է ըլի. տերտերին որ չի՛ կանչեց ու պատմությունն իմացավ, խելքը գլխիցը թռավ:

— Վա՛յ իմ օրին, արեւին. մեր ազգն էսպէս քաղաքներ ա ունեցել, էսպէս մեծություն ու հմիկ ամենն էլ կորցրել, հարամու ձեռին գերի ա մնացել,— ասեց հսկայն լալով:— 2Է՛, տեր հա՛յր, մեզ աստված ա բերել էստեղ. աստված մեր թրին, մեր կռանը դվաթ տվե՛ց, որ մեկ գիշեր էսքան բաներ արինք. էն աստվածն էլ էնքան կարողություն ունի, որ մեզ միշտ հաջողի. հարամություն հո չե՛նք անում, որ նա բարկանա. հարամու ոտն ենք կրտրում, աստուծո ստեղծվածը ազատում: Մնանք էս սուրբ հողումը, մեր սուրբ թագավորաց գերեզմանը, մեր սուրբ եկեղեցիքը ազատենք գողի, ավազակի ոտքից: Հարըրից ավել ենք հիմիկ: Ի՛նչ ձեռք ենք քցել, ձեզ ըլի: Մնա՛նք էստեղ. յա մենք էլ մեր արինը մեր սուրբ թագավորաց հողի վրա թափենք, յա քիչ-քիչ նրանց քաղաքն էլ ետ պայծառացնենք: Տուն կա, ջուրը՝ բոլ, հանդը, դաշտը՝ մեծ, մեկի տեղակ հինգ զարմանալի եկեղեցիք. քարի տակիցը ոզղ կհանեմ, ձեզ կպահեմ:

Բայց՝ թե քարին ասած, թե մեր քրդստանցի հայերին: Կըռ-

վում, դորդ ա, ամեն մեկը մեկ ածդահա, բայց ինչ գրումը գրած ա, նրա շլինքը տո՛ւր, նրան ուրիշ բան մի՛ ասիլ: Մեռնիս էլ, նա իր ասածը կանի, էնքան կողքը հաստ ա:

— Իմա՛լ կեղնի, անիծած խողում վո՛վ կմնա՛: Հայսմավորքն սուտ իմա՛լ կխոսի: Մեր վիզը զարկես, մեր ջանը խանես, վալ-լախա, էս չոլում կեցող հմլա մեկն էլա չեղնի, չեղնի: Խազար տա-րի խա ասա՛, խա գլուխդ ի քարին զարկի: Մենք չընք կենա, չընք գինա: Ինչ կասես՝ ասա՛: Մենք մեր խողը չընք թողա:

— Չե՛ք թողալ, աստված ձեզ հետ: Մեր աստղը մեկ անգամ ծովել ա: Մարդ ինքն իր գլուխը որ թրի տակը դնի, էլ ո՛ւմ բանն ա կտրվել նրան քոմակ անի: Էսպես արինք, որ մեր տունը քանդ-վեց, է՛: Գնացե՛ք, աստված բարի ճանապարհ տա ու ձեր սիր-տը մեկ լիս քցի, որ ձեր խերն ու շառն իմանաք: Ես իմ տղեր-քանցովն էս տեղանց էլ դուս գալու չե՛մ: Թե ձեզանից էլ ուզող կըլի, որ ինձ հետ միանա, իմ ախպերն ա, իմ աչքի լիսը: Մեկ թիքա ունենում, կեսը նրան կտամ. ինձ համար աշխարքն յա ըլի, յա չըլի:

Ասեց ու հրամայեց, որ ինչ ճարել են, հավասար ճոթ անեն: Ինքը մատն էլա մի բանի վրա չդրեց, բայց թուր ու ասպար հրա-մայեց, որ վերցնեն, բոլոր ընկերներին մեկ-մեկ ձեռք քրդի շոր հաքցրեց, որ շուտով չճանաչեն. ամեն մեկին մեկ ձի էլ բաշխեց: Էս որ տեսան, քսանից ավելի ջահիլ, կտրիճ տղերք կանգնեցին, խնդրեցին, որ իրանց էլ ընկեր շինի. նրանց էլ գլխին հավաքեց, սրբություն առավ ու մյուսներին լալով խելիմ տեղ էլ տարավ, ճամփու քցեց ու ինքը իր ընկերտանցովը ետ դառավ, փոքր հաց կերան, պարիսպ, եկեղեցի բոլոր իսկույն ման էկավ, ու հարա-վաչին քարափի գլխի բուրջը իստակել տվեց, մեկ-երկու հոգի Ծորագլալ ուղարկեց, որ գնան, հաց առնեն, ու ինքը՝ սիրտն ու թոքն էրված պատանին, ընկավ քաղաքի ամեն ճամփեն ու խողը, ամեն քունջն ու պուճախն աչքի տակ առավ, տեղի դաշիմություն-ը ու վտանգավոր կողմը լավ վարավորդ արեց ու բեզարած, ջարդված էլ ետ վեր էլավ, ձորիցը դուս էկավ, դրաղ քաշվեց, մեկ բրջի վրա նստեց, Արփաչաչին ու արեգակի մտնելուն նայեց, աղ-լուխը ձեռն առավ ու էս բայաթին ասեց.

Ա՛խ, վաթան, վաթան, քու հողին դուրբան,
Քո ծխին դուրբան, քո ջրին դուրբան.

Է՞ս փառքն ունեիր, Է՞ս պատիվն առաջ,
Որ հմիկ ավերվել, մնացել էս անջան:

Ե՞րբ միտք կանեի, թե էս հողերը,
Էս դաշտն ու սարեր, էս սուրբ ձորերը
Էնպես մեծություն, էնպես լավ օրեր
Քաշել են, մնացել, ա՛խ, հիմիկ անտեր:

Ո՞ր ձեր տերերը, թագավորները,
Ջեր պահողները, ձեր իշխանները.
Ընչի՞ մեզ թողին իրանց որբերը
Ու ձեռք վերցրին, թողին էս քարերը:

Ջեր գերեզմանը, ա՛խ, ձեր լիս հողը,
Որ հմիկ չի տեսնում ձեր կորած թողը,
Կրակ է ընկնում ջանն ու ոսկերքը,
Ուզում ա ձեզ հետ պարզի իր ոտքը:

Ընչի՞ ձեր վախտը աչքս բաց չարի,
Մարմինս հողին, ջանս ձեզ չտվի,
Որ հմիկ էսպես չթոչեի, չգայի,
Ջեր հողը չտեսնեի, ձեր վրա չլայի:

Հող ունինք՝ խլած, կյանք ունինք՝ մեռած,
Ա՛խ, թրի, կրակի մենք եսիր դառած.
Ո՛չ երկինքն տեսնի մեր սուգն ու լացն,
Ո՛չ երկիրն պատուվի, մեզ տանի ցած:

Ի՞նչ կըլի մեկ էլ գլուխ բարձրացնեք,
Ջեր որդիքը տեսնեք, նրանց ցավը քաշեք,
Ջեր արինախառն աշխարհն ազատեք,
Յա մեզ էլ ձեզ հետ հողը տանիք, սլահեք:

Աչքս բաց արի, խարաքս տեսա.
Ա՛խ, ո՞վ գիտեր, թե մեր ազգի վրա
Սարեր են էլել, հիմիկ բրիշակ,
Մեզ տակով չարել, որ էլ խեղճ չմնանք:

Ա՛խ, մեր սիրտն էսպես ընչի՞ հովացել,
Արինը ցամաքել, մեր կուռը թուլացել.
Երաբ կտեսնի՞մ, ա՛խ, ես մեկ օր էլ,
Մեր սուրբ երկիրը թշնամուցն ազատիլ:

Էն ի՞նչ շունչ կըլի, որ էս նոր հոգին
Փչի՞, վեր կացնի քնից մեր ազգին.
Էն ի՞նչ ձեռք կըլի, որ մեր աշխարքին
Էլ ետ սիրտ տա ու կանգնացնի՛ կրկին:

Ա՛խ, ես էն ձեռին կյանքս դուրքան կանեմ,
Էն կոխած հողին երեսս կքսեմ.
Ապրիս, իմ արինս նրան մատաղ կանեմ,
Մեռնիս, հողիցն էլ ես նրան միշտ կօրհնեմ:

Կանգնել ես էդպես, գլուխդ ամսին խփած՝
Ա՛յ խեղճ հալևոր, երեսդ փակած.
Ի՞նչ կըլեր, Մասի՛ս, ա՛խ, դեռ աչքդ բաց
Սրի չտալիր քո որդիքն էրված:



Արեգակն սկսել էր, որ մեր մտնի: Մութն էն ա գետինը ա-
ռավ:

Էսպես նստած սուգ էր անում մեր տարագիր Աղասին ու իր
ու մեր սև օրը լաց ըլում, որ հանկարծ աչքը ձորին ընկավ, աչքը
սևացավ: Հինգ հարիր ձիավորից ավելի՝ թարաքյամա, քուրդ,
Ղարսա դգիցը հազարից ավելի քյուլֆաթ, մալ, իլխի, ոչխար ա-
ռաջ էին արել ու վեր հատելով՝ սարիցը ձորն արին, որ տանեն
Երևան՝ յա սպանեն, յա ծախեն, յա թուրքացնեն: Եատին էնքան
թակել, հետ էին ածել, որ ջանումն էլ թաղաթ չէ՛ր մնացել: Ամեն
մեկ ձիավոր մեկ ջահել տղա կամ աղջիկ գավակն էր առել, ձեռն
ու ոտ հազրել, որ էն գիշերը յա նրանց անմեղ հոգին ապականի,
յա սրի, կրակի դուրքան անի: Հենց նստած տեղիցը ընկերներին
ուսուլով ձեռով արեց, որ տեղըներիցը չշարժին, ինքն էլ քարափ-
նըվեր կուզըկուզ նրանց մոտ հասավ, որ հարամին չտեսնի, իր
պատրաստությունը չանի:

Էնքան կացան, որ թշնամիքն էկան, գետի դրադին վեր էկան, թորըները, երեսները լվացին, նամագները արին ու իրանց Սադայելի նոքարներին հրամայեցին, որ ինչ բեզարած, հալկոր, պառավ մարդ ու կին կա, աչք ու ձեռք կապեն, բերեն իրանց առաջին, կարգավ չոքացնեն, որ իրիկնահացն ուտեն, պրծնին ու նրանց անմեղ գլուխը իրանց մուռտառ սրտին մատաղ անեն:

Էլ չթողին էլա, որ հեր ու որդի, յա մեր ու աղջիկ, իրանց ետին բարովն ասեն, իրար մի համբուրեն, մի օրհնեն, իրար մի փարվին. թրի ոռքով վեր հատելով՝ հրամանը կատարեցին ու բերին, ողորմելիքը իրար մոտ չոքացրին:

Աստված ո՛չ շհանց տա, ի՛նչ նրանց քոռփա էրեխեքն անում էին. ջուրն էին ուզում ընկնիլ, քարերը պոկում, գլխըներին էին տալիս, բողազները թրին դեմ էին անում, որ մեկ թողան էլա, իրանց հորընմոր երեսը յա ձեռը համբուրեն, բաց շատի թևից որ չէին վեր քաշում, գետնին խփում, հենց էն սհաթը հոգին հետը յա դուս էր գալիս, յա էնպես բանհոգի մնում վեր ընկած, գետնին կպած: Ողորմելի ծնողքն էն հալին էլի է՛ն ասում, աղաչանք անում, որ որդիքը մեռնին, սրին, կրակին տան իրանց գլուխը ու իրանց հավատը չուրանան: Էսպես՝ հեռավանց խոսալիս էլ էնպես էին խփում գլխըներին, որ աչքըների լսին կրակ էր տալիս:

Ընչանք նրանք մեկ քանի ոչխար կմորթեին, կքերթեին, ու կրակը չաղ կըլեր, սար ու ձոր մույթն առավ. մեր քսի՛ց հայերը թուր ու թվանք հագիր արին, չոքեցին, աղի արտասանքով իրանց աղոթքն արին, վեր կացան, իրար ճտով ընկան, իրար ետին բարովն ասացին, ձիանները թամբած՝ մեկին պահ տվին, ու իրանք աստծու անունը տվին, ճամփու ընկան, ամա էնպես ճամփով, էնպես տեղով, որ դուշը չէր իմանալ: Հինգը մեկ կողմից գնաց, հինգը՝ մյուսից, էն մնացած տասը հոգին էլ էնպես պետք է գալին, որ բոլոր մեջ անեին, թրի առաջը ընկածը կոտորեին, սաղ բռնածը եսիր անեին ու, որքան կարելին ա, հայերին արձակեին, որ քոմակ անեն, իրանց թուր ու թվանք տալին, չունքի ամեն մեկը ամեն յարադիցն էլ ջուխտ-ջուխտ ունեին: Չորս քուրդ էլ, որ բռնել էին, Աղասին ինքը վերցրեց, չունքի նրանք օրթում էին կերել մինչև մահը նրա ձեռի տակիցը չհեռանան, ու նրանց միջումը օրթումը սուրբ ա: Էսպես՝ բոլորը քսանըչորս մարդ, պետք է հինգ հարիր մարդի հախիցը գալին: Լսողը չի գարմանա, թե ի՛նչպես կարելի ա: Քաջությունն սրտիցն ա կախված. մեկ էլ որ ինչ-

<քան> կուգե թշնամին շատ ըլի, հանկարծ վրա տալիս, է՛ն էլ գիշերը, ի՛նչ ա իմանում դիմացի կովոդի շատությունն ու քշությունն: Սրանից գլուման, Աղասին պատվեր էր տվել, որ հայերեն չա թուրքերեն հեշ չխոսան, քրդերեն հարաչ տան, հավար կանչեն, ու էնքան եսիր արած հաչի միջումն ի՛նչպես կըլեր, որ մեկ-երկու հարիր տղամարդ չըլեր. որ սուր չունեին, էնդուր համար էին խղճացել:

Հենց էն սուփրի ու խորովածի չաղ ժամանակը, էն վախտը, որ ամեն մարդ յարաղ-ասպար վեր քցած՝ իր ֆորսի ետևիցն էր ընկել, որ նրան ձեռք քցի, թվանքների տրաքիլը, տասնըհինգ-քսան հարամու հոգին տալը, ձիանոցն խառնվիլը ու հարամու փախչիլը մեկ էլավ: Աղասին, իր ընկերների կեսը վրեն, ձորի ճամփեն էր կտրել, մյուս կեսը՝ հարիրից ավելի հաչ բաց արած, քամակներին քցած, ձորի ետևը: Մեկ քսան-երեսուն մարդ էլ վրա թռան, էն խեղճ չոքածների աչք ու ձեռներ ետ արին, ու էս հալնոր ածղըհեքը, որ կովումն էր մազներն սիպտակել, թուր որ չտեսան ձեռըների, ասլան դառան. որը միջիցը, որը ձորի քամակիցն ու ետևիցը էն կարկուտն ածեցին թշնամու գլխին, որ աստված ո՛չ շհանց տա: Ղարսցի հայերը էս ձորերի քարերն էլ ունեին համարած. ինչ տեղ փշտով, թվանք էր տրաքում յա թուր խաղում, առանց դռշի ու գլխի չէ՛ր անց կենում: Մենակ Նադի խանը ու Օքյուզ աղեն, ինչպես որ էլավ, գլխըները թափեցին, ձիանները ձեռք քցեցին ու մեկ քանի մարդով դուս փախան: Մնացածը, ինչ կոտորվել էին՝ կոտորվել, ինչ չէ, մնացել ձորի միջումն ոչխարի պես չոբանը կորցրած, կանգնած: Ընչանք էսպես պահեցին մեր տղերքը, մինչև ծեզը բացվեց, ու աչքդ բարին տեսնի. տասնըհինգ թուրքի մենակ էն չորս քրդերն էին սպանել. տասից ավելի դուղ մենակ Աղասին էր ցրվել ու փոր վեր ածել:

Լսողը կարելի ա զարմանա, թե ի՛նչպես է՛սքան բաներ մեկ օր ու գիշեր անց կացան: Էնդուր համար, որ ղզլբաշը էս միջոցումը Ղարսա վրա կռիվ էր դուս գնացել, ու ասածս քսան ու մեկ թվին էր³⁴, որ սար ու ձոր, մանավանդ Անի, հարամի ու յադի էր դառել:

Առավոտը լուսացավ. էն առավոտը երանի՛ ամեն խղճի ու տառապելո ուստ գա: Հինգ հարիր հոգուցը վաթսուն հոգի չէ՛ր մնացել, էն էլ ոչխարի պես մեջ արած, շատը անյարաղ-ասպար: Ջիուն, շորին, ասպաքին թիվ՝ ու համար չկար: Լեզու պետք է ըլի,

որ պատմի է՛ն փարվիլը, է՛ն ուրախության արտասուքը, որ էս-
օր Անի տեսավ: Ղարսըցի հաչք դեռ չէին հավատում իրանց աչ-
քին, թե դորդ, թշնամու ձեռից ազատված՝ էլ ետ իրանց աշխար-
հը պետք է գնալին: Էնքան շշկել էին, որ չէին էլա միտք ա-
նում, որ մեկ հարցնեն, թե ո՞վ էր նրանց ազատողը: Գեջդանգեջ
որ Աղասու մարդիկը ձիանը չէին վեր բերում բերդիցը, աշխարհն
իրարոցով դիպավ. հենց կարծեցին, թե թշնամի են. թվանք վեր
առան. բայց Աղասին բոլորին էլ հանդարտացրուց ու հսկայական
քաչիվ որ առաջ չի գնաց փոքր ու իր ընկերներին կանչեց, ամե-
նի աչքն էլ մնաց նրա պարթև բոյի, նրա ազնիվ շարժվածքի վրա
հիացած: Էլ էնքան նրանց փարվելուն ու օրհնելուն չմտիկ արեց,
երբ իմացավ, թե Հասան խանը ղոնշունով Ղարսից ետ ա գալիս
(ղարսըցիք ասեցին նրան), շուտ ական թոթափել՝ մեկ-երկու
ձիավոր Գյումրի դրկեց, մյուսներին հրաման արեց, որ էլ ժամա-
նակ չկորցրնեն, օղլուշաղն տանին, բերդումը յա ձորումը ամրաց-
նեն, մալն ու ոչխարը ձորնըղուս քշեն, Շորագյալու հանդը տա-
նին, ու ինքը, ինչքան թվանք, թուր բռնող տղամարդ կալին, գըլ-
խին հավաքեց ու սարնըղուս վեր էլավ: Տասը-տասներհինգ տա-
րեկան տղերքն էլ ասլան էին դառել, ուզում էին իրանց արընի
ջիգը հանեն: Գերի արած թուրք ու քրդերիցն էլ յարաղ-ասպաք
ետ արին, իրար կապեցին ու բերդը տարան: Աղասին չէ՛ր էլել,
ղարսըցիք ուզում էին նրանց քարով սպանեն յա ջուրն ածեն:

Հուլըսի 23-ին 1821-ին էր, որ հալոց երևելի հին քաղաքն
Անի իրեք հարրից ավելի կտրին գորք, թողունք ջահել տղերքը,
գրահավորված, զարդարված՝ աչքը բաց տեսավ. որ մտան ո՛չ
իրանց որբ մայրաքաղաքը, աչքըները ծով դարձավ. մեկ սհաթ
քիմի տաճարի միջումն ընկել երեսի վրա, գետնիցը պոկ չէին
գալիս:

Բայց գլուխը պահելու ժամանակ էր. Աղասին խնդրեց, որ ինչ
սրտներումն ունին, ետո ասեն, ետո անեն, ու գորքը կես արեց,
կեսը տվեց Կարոյի ձեռքը, որ էս կովըներումն եփվել, հասել էր,
կեսը ինքը ձեռի տակն առավ. ամեն մարդ, ինչ ուտելու էր, ջեբը
դրեց. երեսնաչափ մարդ էլ օղլուշաղի հետ դրեց. ինքը բերդումը
դալիմացավ, Կարոն՝ արևմտյան ձորումը, Մուսեն՝ օղլուշաղի
հետ: Աստուծո ողորմությունիցը՝ բարութ-գյուլեն էլ լավ վախտին
հասավ: Էնպես էին պաշման կապել իրար միջում, որ թե Հասան
խանը ձորը մտնի, էնքան թողան, որ բոլոր ղոնշունի ոռքը կտրվի,

ետո շենլիկ անեն. թե թուշ բերդի վրա գա, էնքան դուս չի գան, մինչև բոլորը նրանց գլխին հավաքվին, ետո կեսը ձորի մեկ կողմիցը, կեսը մյուսիցը, կովի չաղ ժամանակը, վրա տան, որ էնպես շշկացնեն թշնամուն, որ փախչելուց գլուխն էլ ուրիշ ճարչքանին, ու թե աստված էս հաջողությունը կտար, Մուսեն օղլու շաղը թողար մեկ դայիմ տեղ ու ձիանը դուս բերեր իր մարդկերանցովը, որ բալքի թե հնար լինի, բոլորին էլ ջարդեն:

Առավոտյան հովն անց էր կացել, որ ամեն մարդ հեռացավ ու իր տեղը քթավ: Ծաշն էլ եկավ, հասավ: Էնքան շոգը չէ՛ր գետինն էրում, ինչքան քաջ հալերի արինը, իրանց սիրտն ու դամարները, որ իրանց ազգի իշխանաց, թագավորաց հողի վրա արին թափիլն ու քաջությանը մեռնիլն էլ իրանց համար անմահությունն էին համարում: Արեգակը երկնքի միջիցը երկու գազաչափ թեքվել էր, որ բերդիցը մեկ թոզ տեսան. քիչ-քիչ շատացավ ու ամպի պես Անու սաղ դուզը կոխեց: Ջորիցն էլ էին տեսել ու իրանց տեղը անսասել: Դամար էր, որ ուզում էր տրաքի. սիրտ էր, որ ուզում էր պատռի. շատն ուզում էին բերդ ու ձոր թողան, մեղդան դուս գան, իրանց տղամարդությունը ցույց տան: Աստուծո ողորմածությունիցը՝ էնպես էր երևում, որ թշնամին բանից խաբար չի, ու հենց էնդոր համար ա էնպես ոտն առել, որ գան էնտեղ, մի քիչ դինջանան ու ետո, իրիկնահովին ճամփու ընկնին: Հետըները ո՛չ թոփ էր երևում, ո՛չ ջաբախանա. հենց սուբահ ձիավորներն էին առաջ ընկել, որ հասնին Երևան, ավետիք տան, թե Ղարս առան, քանդեցին, բոլոր գեղարենքն էլ քոչացրել, թրի առաջ են արել, բերում են: Էնպես՝ մարդաշատ երկրները քանդող Հասան խանն էլ ի՛նչ կասկած կտաներ, թե մեկ խարաբա տեղում, ուր չորաններն էին անց կենում, ագռավները բուն դնում, գլխին փորձանք պետք է գար:

Թոզ ու դումանի տուտը քաղաքը բռնեց. խարաբա պարիսպն ու բրջերն էլ, հենց գիտես, իրանց քանդողներին տեսնելով՝ աչքըները խփում էին, չէին ուզում թամաշ անիլ: Աստուծո աչքը որ քաղցր լինի, մատաղի գառը իրան ոտովը կգա դուռդ՝ ասած ա: Հենց էս օրինակին բանը պատահեցավ. քաղաքը մտնիլն ու Հասան խանի ձիուց վեր գալը, չաղիր խփիլը մեկ էլավ: Ղզլբաշի սովորությունն ա՝ ձիուց վեր եկավ թե չէ, թվանք, ասպաբ, յափընջի կքցի թամքի դաշը, ձիանը ման ածիլ կտա՝ չորս-հինգ մեկ գյաղի ձեռք տված, ինքը, թե նամագի վախտ ա, նամազը կանի,

թե հացի՝ դալանը կքաշի ու հացի կնստի ծալապատակ: Էս անգամ երկուսի վախտն էլ էր. ճամփից էկած, ջարդված՝ քսանը մեկ տեղ, հարիրը՝ մեկել, յափուճջին փռեցին, կոլոլ քարըները ու սանդղիկը՝ ծոցըներիցը, թրերը բնիցը հանեցին, առաջներից դրին, ու, հենց իմանաս, սև-սև հոգիք են, լեզու, բերան փակած՝ բարձր ու ցած անում, երեսները դնում քարի, թրի վրա, փոքր ժամանակ մնում գետնին կպած, էլ ետ գլխըները վեր քաշում, էլ ետ երեսի վրա ընկնում, գդակը գլխըներից, ետո բարձրանում, կիսով չափ գլխըները կախ քցում, աղոթքները մունջ քնթըների առաջին էնպես ասում, որ իրանց անկաջն էլ չէ՛ր իմանում, ետո ձեռըները ծնկների վրա դնում, քարին, թրին կռացած մտիկ տալիս, էլ ետ չոքում, գլխըները գետնին կայցընում: Մահմեդականին նամազ անելիս որ գլուխը կտրես, ամեն մարդ էլ գիտի, որ երեսը թեքիլ չի, էնքան իր աղոթքի զորությունն զգում ա, բայց մի բառ էլա չի՝ հասկանում, չունքի բոլոր աղոթքները արաբերեն ա:

Հենց առաջին չոքելումը ուզեցան մեր տղերքը, որ վրա տան, բայց քաջն Աղասի մատը բարձրացրեց, որ տեղըներիցը չեռան. թուրքերն ուզում էին իրանց կտրատեն, որ իրանց հավատակցի հավարին չէին կարում հասնիլ: Մեկ-երկուսի փորը տեղնուտեղը վեր ածեցին. որ էս բանը վարավուրդ արին, մյուսներն էլ շուն դառան, ձենըները փորըները քցեցին: Աղասին ղզլբաշի միջումն մեծացած՝ գիտեր լավ, որ նամազը ընչանք կես չլի, վախտը <չի>: Զորի տղերքն էլ տեսնելով, որ թվանքի ձեն չէկավ, իմացան, որ գելը ինքն իրան ա ականաթի մեջն ընկել, էրերը թողին ու քարափե-քարափ էկան, քաղաքին մոտացան: Ծատը ղզլբաշի նոքարների աչքըներովն էլ ընկան, ամա ի՞նչ կարծիք կտանեին. իրանց մարդիկն էին կարծում, որ էնպես վախտին ֆորսի են մանգալիս, որ բերեն, խաներին, բեկերին փեշքաշ անեն, խալաթ առնեն: Նրանց շարժումը բերդըցիքն էլ էին տեսել ու ջանները դող ընկել. էլ վախտ կորցնիլ չէ՛ր հարկավոր, թե որ իմացել էին թշնամիքը, բանը խարաբ կլլեր: Հեռվանց էլ Երևանու կողմիցը մեկ-երկու ձիավոր, ձիանոնց անկաջը մտած՝ թոզին, փափախին անելով գալիս էին:

Թշնամին նամազ էր անում, ի՞նչ մտիկ կտար, թե աշխարքն էլ փուլ գար: Հենց մեկ էլ ձեռնըներն անկաջներից դրին, չոքեցին ու գետնին կպան, թվանքները բերդիցը ճռռացին, սար ու ձոր

թնդացին, եկեղեցիքը գլուխ բարձրացրին. ձիանքը թոկ ու դան-
թարդա կտրեցին, երկու հազարից ավելի՝ յափունջի, թուր, թը-
վանք, գետնի վրա մնացին, ու ղզլբաշի շատը անգդակ, բոբիկ,
ընկավ ձորնըվեր, չունքի հրաշքից յա քաջքից ավելի ո՛չինչ չէին
կարծում: Ղոչաղ հայի տղերքը քար ու ձոր բռնած՝ էլ էնքան
թվանքին չէին գոռ տալիս, որքան թրին ու դամին: Գազան Հա-
սան խանի լավ աջալն էկել, հասել էր, ամա նրա բախտն էր, որ
էն Երևանից էկած ձիավորները հենց էս սհաթին ձորաբաշը հա-
սան. մինչև փիաղա հայի տղերքը նրան կհասնեին, սրանք ներքև
էկան, Հասան խանին ձիու վրա դրին ու թոցրին: Ողորմելին ձորի
էս կողմիցը որ աչքը չի քցեց ու իր ջրատար օրդուն տեսավ, երե-
սը կալավ ու ձիուն օրգանգվիլ տվեց: Հազար մարդից ավելի հո-
գին տվել էին էսօր, մյուսը՝ որը քարափի, քարերի գլխով վեր ըն-
կել, փառչա-փառչա էլել, որը բանհոգի էլած՝ վերընկած մնացել,
որն էլ քարի, քոլի տակի տափ կացել, ճապաղել: Շատին հենց
էսպես տեղերից հանեցին, կոները կապեցին ու դարիդուս տա-
րան: Թո՛ղ նրանց ուրախությունը նա զգա, իմանա, ով սիրտ ու
երևակայություն ունի: Հարիր ավելի գերի էլ էս օր ձեռք բերին:

Փոքր ժամանակի Անի էն անունը հանեց, որ սաղ Երևան
յողում էր: Էն ժամանակը էս ինքս էջմիածին էի, որ Հասան խա-
նը էնպես փախած՝ էկավ, անց կացավ: Առաջուց մարդ էր ու-
ղարկել, որ էջմիածնա միաբանքը առաջը չգնան խաչ ու խաչվա-
ռով, ինչպես միշտ անում էին: Բայց ձեն հանեցին, թե քրդերը
ճամփին վրա են տվել, ու Ղարս ցավ էր ընկել:

Աչալուրջն Աղասի, երբ բոլոր խալիը էկան, հավաքվեցան,
ամեն բանը թողաց, հրամայեց, գնացին եկեղեցին, ըիզնաժամն
ասեցին, աստծուն իրանց շնորհակալությունն արին, ու ժամը որ
դուս էկավ, մարդ քցեց ամեն տեղ, որ դարավուլ քաշեն, տեսնին,
թե հարամու ոտքը կտրվե՞լ ա, թե՞ էլ ահ կա: Գոհություն աստու-
ծո, ոչինչ չտեսան, էտ դառան: Մեռած մարմինները որը քարափ-
նըվեր ձորը շարտեցին, որը՝ հորերը. մնացած ձի, հարստություն
ճոթ արին: Շորին, ձիու, ասպաթի մտիկ անող չկար: Մուրը գե-
տինը չառած՝ ամեն տեղ պահապան դրեց ու մնացած խալիը բեր-
դը հավաքեց: Բիզնահացը որ կերան, Աղասին սկսեց խորհուրդ
անիլ, թե ի՞նչ ա նրանց միտքը, ո՛ր են ուզում գնալ: Նրա միտքն
էն էր, որ բալքի սրանց էլա ճամփու բերի, մնան Անի՝ իրանց
հին աթոռանիստ քաղաքը, ուրտեղ որ նրանց կյանքը ազատվել

էր, կրկին շեն քցեն, գրեն Գյումրի, ոսի ոսհաթ դառնան ու էստով աշխարքումը հաժիտենական անուն ճարեն:

Բայց սնապաշտությունն ու սուրբ Հովհան Երզնկացվո աճեծքի սուրը էնպես էին նրանց սրտումը ցցվել, որ հազար քարոզ ու քյալփաթին ըլեր, չէր կարող հանել: Աստված մի՛ արասցե, որ մարդի գլուխը մեկ անգամ ծովի, էն ժամանակը հազար կարգավոր ու բժիշկ էլ որ հավաքվին, խեր չի անիլ. քանի դգես, էլի կծովի, ու վերջը, թե զոռ արիր, իսպառ կկոտրվի: Գիծն, ասած ա, մեկ քար քցեց ծովը, հազար խելոք վրա թափեցին, չկարացին հանիլ: Աղասին տեսավ՝ ասածը չվանի վրա չե՛ն դնիլ, զուր տեղն անց կկենա, քաշվեց մեկ դրադ, աղլուխը դրեց աչքին ու բերանը բաց արավ.

— Փառքդ շատ ըլի, ո՛վ արարիչ Աստված. էլ ո՛ր ենք ասում, թե մարդ Քո սուրբ հոգին ունի, Քո պատկերն ա, որ քարից էլ շատ անգամ միտքը պինդ ա, գլուխը՝ հաստ: Գող ու ավազակ էստեղ տարերով բուն են դրել, էլի Քո երկիրը նրանց տակով չարել, վրեն պահել ա, հենց մեր ազգի՛ն ա Քո զուլումը հասել, որ չես թողում իրանց աշխարքը շեն անեն, Քո սուրբ անունը փառաբանեն, կյանք ազատեն ու կյանք վայելեն: Չէ՛, ամենակալ Արարիչ, դու Քո ստեղծվածը, Քո որդին էդքան չե՛ս անարգիլ, չե՛ս ոտնահարիլ: Մարդս որ ծնվում ա, մեկ գունդ մսից ավելի էլ ո՛չինչ չենք տեսնում³⁵: Տարիք են անց կենում, որ քիչ-քիչ ոտն ա ըլում, քիչ-քիչ լեզու, ուշ ու միտք գալիս, ձեռը բերանը տանիլը ու դարտակ հաց ուտիլն էլ ա, հաց դատիլը չե՛ս ասում, սովորում: Բայց վա՛յ էն էրեխին, վա՛յ էն ազգին, որ աչքը էնպես գոգում բաց կանի, որ լսի տեղ խավար կտեսնի: Աչքը բաց՝ դուզ ճամփեն կթողա, քարեքար կընկնի: Վա՛յ էն ազգին, որ բնական օրենքը կթողա, անբնականին կհետևի, որ էնպես խրատ տվող չի՛ ունենալ, որ նրան հոգի տա և ո՛չ՝ հոգին էլ հանի: Երաբ, որ լավ կարդացող էր էլել, երեխեքանց ջոկ, ժողովրդին ջոկ գիշեր-ցերեկ խրատ էր տվել, կարդացրել, լուսավորել էր, հիմիկ մեր ազգը է՛ս հալին կըլեր, է՛ս տեղ կընկներ: Սարի հայվանն էլ մեզանից լավ ապրում, հարամուց, ֆորսկանից յա փախշում, յա վրա թոշում, կտրատում, գլուխը պահում: Մտի բունն էլ որ քանդում ենք, դըժվըժում, թեկն-գլխին ա սնում: Մենք ծտի դդար էլա չկա՛նք, որ մեր բունը պահենք: Ի՛նչ օգուտ էն գիրքն ու ավետարանը, էն խաչն ու երկրպագությունը, որ մենք չենք հասկանում: Գետնի

տակին էլ շատ զանձ կա, մեզ ի՞նչ: Ա՛խ, մեր կարդացողներ, մեր կարդացողներ. ի՞նչ կըլի, որ ինչքան ժամանակ քնի, քեֆի հետ են անցկացնում, ավելի փողի թամահ անում, էսպես բանի թամահ անեն, մեզ լուսավորեն, իրանք էլ թշնամուց, հարամուց ազատվին, մեզ էլ ազատեն: Մարդս մեկ անգամ է աշխարք գալիս. էնպես պետք է անի, որ դուս գալիս՝ էս դիմումը անունը հիշվի, տոնվի, էն դիմումը հոգին փառավորվի, լսի փալ ըլի: Բայց ի՞նչ օգուտ, որ ասածս քարերն են իմանում: Ասենք, թե տգետ խալխը էսպես բանը լսել, ասում ա, կարգավորին ի՞նչ ա էլել, որ նա էլ ա հաստատություն տալիս, թե էսպես հրաշալի քաղաքը անեծքով ա կործանվել: Առաջինը՝ սուրբ մարդի բերնից անեծք, դառը խոսք չի պետք է դուս գա, դուս էլ էկավ, Արարի՛չ, երեսս ոտիդ տակը, դու պետք է մեկ մարդի խաթեր միլիոն հոգի կորցընե՛ս: Թե պետք է կորցնեիր, ընչի՞ ստեղծեցիր: Ա՛խ, հազար էսպես ցավեր կա սրտումս, ամա բերանս փակում են, չե՛մ կարում ասիլ:

Էս մտատանջության միջումն էր, որ աչքը հանկարծ որ չի՛ բարձրացրեց, Անու բոլոր դուռը կրակ էր դառել: Նա իմացել էր, որ Ղարսա էլլիզը Հասան խանը քոչացրել, ուզում էր, որ բերի, Երևան ածի: Լավ իմանում էր, որ սրանց վրա թե դոնշուն էլ ըլին, էնպես մարդիկ չե՛ն ըլիլ, որ իրան դեմ կենան: Հասան խանին որ կոտրեց, ի՞նչը նրան կդիմանար: Նրա համար կոպիլը խաղալիք էր դառել. մինչև առավոտն սպասիլ չէ՛ր ուզում, կասկածում էր, թե նրանց գլխին էլ է՛ն բերեն, ինչպես մյուս հայերի, ծեր ու պառավ սուրը քաշեն: Երկու հարրաչափ ընտիր ձիավոր քամակը քցած՝ ընկավ դուռը: Էն հաղադին վրա հասավ, որ մոր էկել, վեր էին էկել, ու շունը տեր չէ՛ր ճանաչում. քոչ-քոչ<ի> վրա վե՛ր էին թափել, ամեն մարդ իր գլխի ցավն էր քաշում: Թշնամին էնպես ցրվեց, տաղըթմիշ էլավ, որ մեկը չմնաց: Հայերին որ չարձակեցին ու մեկ տեղ հավաքեցին, նրանք իրանց դարդը մոռացած՝ ձեն տվին էկողներին, որ թոփ ու ջաբախանեն ձեռք քցեն ու սարվազներին հետ ածեն: Երկու հազարից ավելի սարվազ, որ Հասան խանը թողել էր, որ էլլիզը լավաշ բերեն, շատը հայ, դալմադալը որ ընկավ, հենց իմացան, թե էկողները ոռու են, բոլորն էլ թոփ-թոփխանա թողին ու ձորը թափեցին: Մեկ քանի երևանցի թոփչի ու սարվազ ձեռըներն ընկավ. էլ ի՞նչ էր պակաս, որ Անի քաղաքին հարամի մոտանա:

Ինչպես որ էր, գիշերն անց կացրին: Առավոտը որ լուսացավ,

աստուծո լիսն ընկավ հայերի սիրտը: Էնքան բարութ, թվանք, թոփ էին նրանք ճարել, որ սաղ աշխարքը պոկ գար, նրանց վնաս չէ՛ր ըլիլ: Բայց ինչքան Աղասին խրատեց, ասեց, խնդրեց, չէլավ, չէլավ, հայքը ետ չի՛ դարձան, անհծած տեղը չուզեցան մտնիլ, ու շատը երեսները էլ ետ դեպի Ղարս շուռ տվին: Աղասին շատ ուզեց, որ ոսի հողն էլա գնան, չէլավ. որը կամենում էր, որը՝ չէ՛: Ընչանք էսպես կողովուային, Ղարսա փաշեն դոնշուն հավաքած՝ գալիս էր, որ իր ռհաթը ետ դարձնի: Պետք է ասած, որ թե Ղարսա, թե Բալազդու փաշեն հայերին իրանց որդու պես էին սիրում:

Փաշեն մնաց սառած. երազ էր կարծում աչքի տեսածը: Նա էնպես էր կարծում, թե իր գլուխն էլ սաղ չի դուս տանիլ էս ձորերիցը, բայց ի՛նչքան զարմացավ, որ երբ կամենում էր վրա տալ, խալխը հազար տեղից ձեռըները բարձրաց<ր>ին, անունը տվին ու խնդալով առաջը վազեցին: Հոր պես, որդվոց ազատությունը տեսնելով՝ սկսեց փառք տալ աստուծո, երեսը գետինը քըսել ու դեռ բերանը չբաց արած, որ հարցնի, թե ախր էս հրաշքը ի՛նչպես էր պատահել, Աղասուն ձեռըների վրա բռնած՝ առաջին կանգնացրին, ու հազար բերան ձեն տվեց.

— Էսո՛ւր, էսո՛ւր մեզ, մեր որդիքը դուրբան էրե՛, փաշա, գլխիդ դուրբան: Մեր ազատողը, մեր երկրորդ աստվածը սա է:

Ազնիվ երիտասարդը, որ ամեն մեկ սրտի ցավը հազար անգամ երեսի գունը էնքան փոխել, ներկել էին, էնքան աչք ու թուշ կարմրացրել, սպիտակացրել, որ շարմաղի պես, մեկ ձեն անկաջն ընկնելիս, իսկույն աչքի աղբրները գետ էին դառնում, երեսի գունը՝ դրմզ,— ձեռը անկեզու երկինքը քցեց ու առանց խոսալու ցույց տվեց, որ նրա հաջողողն ու զորությունն տվողը երկինքն էր, և ո՛չ իր ձեռի հունարը:

Ազնիվ փաշեն առաջին անգամ իր կենաց միջումը մեկ հայի տղի ճակատը էնպես համբուրեց, ինչպես իրան նամագի քարը. դոշին քաշեց, էլ ետ գլուխը ձեռն առավ, էլ ետ համբուրեց ու իր քաջության բոլոր ըխտիարը նրան խոստացավ, որ հետը գնա Ղարս ու իր ձեռի տակին մնա. Աղասին ընկավ փաշի ոտը, շնորհակալություն արեց ու ասեց, որ աշխարքի թագավորությունն իրան տան, նա Անուցը ձեռք վերցնողը չի. նրա միտքն էն ա, որ Անի շինություն քցի: Ի՛նչն էր փաշի ձեռին հեշտ, քանց էս. միմիայն խնդրեց, որ հմիկ հետը գնա Ղարս, ոտը խաղաղվի, էն ժամանակը նրա բոլոր մուրազը կկատարի, ինչքան տուն, մալ,

ապրանք ուզում ա, կտա ու ինքն էլ հետը քոմակ կանի: Արտասունքն աչքերը լիքը՝ կրկին ընկավ Աղասին փաշի ոտը.

— Է՛ս գլուխը, որ ինձ էլ պետք չի, է՛ս դոշը, որ հազար անգամ կրակումն էրվել, խորոզվել ա, է՛ս ձեռը, որ հազար անգամ ուզել ա իր թուրն իմ սիրտս խրի, բոլոր, բոլոր քեզ մատաղ, փաշա՛. յա էս սհաթին ինձ սպանի՛ր, յա ասածդ արա՛, որ ես իմ ազգի մայրաքաղաքը էլի շեն տեսնիմ, ետո գետինը մտնիմ:

— Անխավատ աջամ,— քրդատանցիք հազար տեղից ձեն տվին,— ծո՛, ի՛նչ կգրուցե, ծո՛: Գիր չգինա՛, կարդալ չգինա՛. փաշություն կտան, հմլա էլ իր սազ կածե: Ո՛վ է խելք, իման կորցըրել, որ էմալ անիծած տեղ գա, բուն դնե: Ծիդակ ա՛ջամ, աջամի լաճ: Ի՛նչ կուզես, էրե՛, աքլոր-մաքլոր չի խարցնիլ, հմլա կբոռա՛ մեր ճետ խանչեց, մեր ճետ խանչեց (մեր աքլորը կանչեց)»:

Խնդալով, պար գալով դարսըցիք էլ ետ իրանց հողը մտան, ա՛խ քաշելով, աչքը սրբելով՝ Աղասին Անի թողեց: Փաշի կողքին, հազար խոսք, գովասանություն անկաջն էր ընկնում, հենց գիտես, քառացել էր: Հազար անգամ շուռ էկավ, էլի որ դեռ Անու պարիսպը, եկեղեցիքը աչքին երևում էին, սիրտը մի քիչ հանդարտում էր, դոշին խփում էր, ա՛խ քաշում, կրակ վեր ածում: Հենց սարի գլուխը վեր էլան, որ էն կողմն անցնեն, ու Անին պետք է աներևութանար, էլ չկարաց իրան պահիլ. թուլացավ, ձիուց վեր ընկավ, չոքեց, ձեռները երկինքը քցեց, աչքերը՝ Անու վրա, ու գոռաց.

Յա ա՛ն իմ սիրտս, յա տո՛ւր ինձ հունար,
Ո՛վ դու երկնային ստեղծող բարերար.
Յա իմ հոգիս էլ հանի՛ր, քեզ մոտ տա՛ր,
Յա քո երկընթիցդ արա՛ ինձ մեկ ճար:

Քանի շունչս վրես ա, քանի ձեռքս գլուխս,
Կրակ էլ որ թափես, խորովես իմ սիրտս,
Էլի իմ հոգիս ուրախ քեզ կտամ,
Թե Անու միջումն իմ մարմինս թողամ:

Աչքե՛ր, բոռացե՛ք, բալքի թե էլ բաց
Չտեսնիք դուք Անու լուսահողճ օրհնած.

Բալքի թե մեռնիմ էս դարդովն էրված,
Հողս էլս հողին չմնա կորած:

Թո՛ղ հոգիս դժոխքը գնա՛, խորովվի՛.
Իմ սուրբ նախնյաց տեղ՝ իմ ազիզ Անի,
Էլի որ մարմինս մեկ քարի տակի
Ըլի, քո ծոցումն, ինձ դրախտ պետքը չի՛:

Թո՛ղ էն անեծքը, որ քեզ են տվել,
Բանան անդունդը, կույ տան ինձ սաղ էլ.
Քո հողն երեսիս մտնիմ գետնի տակն էլ,
Երկնային լսին էլ ես չե՛մ կարոտիլ:

Սուրբ Երզնկացի, սուրբ Երզնկացի,
Պարծեցի՛ր, թե ես չեմ շինիլ Անի.
Անեծքդ էն վախտը թրի, կայծակի
Պես թո՛ղ ինձ էրեն, իմ հոգիս տանջվի:

Զանս ձեզ դուրբան, ա՛յ սուրբ քար, հողեր,
Տաճարք, ապարանք, պարիսպ, տապաններ.
Թե մուրազս սրտումս պետք է մեռնի, մնա,
Էս չոքած տեղս թո՛ղ ջանս քարանա:

Քարացած տեղիցս կանգնիմ ու ասեմ,
Ամեն անցնողին ետևից կանչեմ
Քարացած լեզվով վա՛յ տամ, աղաչեմ.
«Ո՛ր եք գնում, թողում, ձեր նախնյաց տեղն եմ»:

<10>

Առավոտը, էն ա, լսին էր տալիս, որ իշխանն և քաջահաղթն՝
գեներալ-մայոր Մատթթովն վեր կացավ, Ծամքոռա դահն մտիկ
արեց³⁶, զորաց ինչ հրաման ուներ, տվեց, ու ինքը՝ արծվի աչքե-
րովը Գրիգոր եպիսկոպոսը ու հալերի իշխանները քամակը քը-
ցած, օրդվի չորս կողմովը պտիտ տալով՝ մտիկ էր անում սարե-
րի գլխին, խոռ տեղերին դուրբընով, որ թշնամին հանկարծ վրս
չտա, ու իր պատրաստությունը տեսնում էր: Զորքը, դորդ ա, շատ

քիչ էր, ամա Մատաթովն էր նրանց գլխին, որ սար ու ձոր դողացնում էր, որ աստուծո տեղ պաշտում էին, որ ղզլբաշի հոգին ջուր էր կտրում անունը լսելիս, ու իր հավատարիմ ազգը՝ արիմը աչքումը, շունչը բերնումը, գլուխը փեշումը, հագիր, վառված, քամակին՝ որ տուն, տեղ, որդի, օղուշաղ, մալ, դովաթ թշնամուն յա գերի տան, յա ոսի թուրը նրանց աչքը խրիլ տան: Զոռը խփեցին³⁷, առավոտյան աղոթքն արին, բայց մեկն էլա դեռ չէր գիտում, թե ո՞ր կողմովը գնան:

Ղզլբաշի գորքն Գյանջա, Ղարաբաղ էս կողմիցն էր առել, ոտնատակ տվել, Փամբակ, Շորագյալ՝ էն: Էս կողմիցը՝ Աբաս Միրզեն, էն կողմիցը՝ Հասան խանը, քանդելով, ավերելով էկել, հասել էին, որ գնան Պետերբուրգ: Թիֆլիզ, ինչպես որ տեսանք, սհաթե-սհաթ աչքը կթած ուներ, թե Աղա Մահմադ խանի կրակը, որդիանց որ ա, էլ կրկին իր գլխին կթափի: Երմալովն ինչ հնար, ճարտարություն ուներ, գործ դրեց: Մատաթովը պետք էր վրաստանու փրկիչը լիներ ու ցույց տար աշխարքի, թե հայոց հոգումը իրանց հին հսկայության կրակը, քաջության բոցը, հավատարմության խունկը դեռ կար ու վաղուց մխում էր, որ մեկ հով դիպչի՝ հոտն աշխարք ընկնի, կրակն իրանց թշնամուն, իրանց աշխարքը քանդողին էրի, փոթոթի:

Պատելով՝ էլ ետ չադիրը մտավ գորապետը ու միրզի մեկին կանչեց, որ ասածը գրի, թուրքերին խաբի, թե ֆլան գեներալը ֆլան տեղիցը, ֆլանը՝ ֆլան, անթիվ գորքով գալիս են, որ թըշնամու գլուխը ջնջխեն, հանկարծ ղշղրուն ընկավ գորաց մեջը: «Կարաո՛ւլ» ձեն տվին, թվանքները հազար դհից վրա բռնեցին, բայց «Քրիստիան, Արմյան» գոռալով, երեսին խաչակնքելով՝ մեկ ածղահա որ ղոնշունի մեջը չընկավ, Մատաթովի չադիրը չտեսավ ու ձիուն ետի դամշին տվեց, Մատաթովը ստուլի վրա մնաց փետացած. ընչանք մարդ կկանչեր, անծանոթի ձին առաջի երկու ոտը չադրի առաջին փռեց, փռնչաց ու հոգին քթովն ու փորովը դուս փչեց: Կտրին ձիավորը մզրախը գետնին ցցեց, դարավուլի, բանի մտիկ չարեց ու Մատաթովի չադիրն ընկավ: Քաջ գեներալը, թե եվրոպացի էր էլել, հուշտ կըլեր յա կզարմանար ու էնպես հանդգնությունը, կարելի ա, պատժեր, բայց նա մեր երկրի մարդի խասիաթը լավ գիտելով՝ տեղը մնաց կանգնած, ու էլ էկողին ժամանակ չտվեց, որ խոսի, ինքը հարցրեց, թե ի՞նչ խաբար ա: Զին որ էն հալն էր ընկել, նստողինն ի՞նչ կըլեր: Երկար ժա-

մանակ լեզուն խոսք չէ՛ր բռնում: Գեջդանգեջ որ խելքը գլուխն էկավ, ձեն տվեց:

— Կնյա՛՛գ, թաղարեքդ տե՛ս, որ էսօր ա՛՛ ձեզ դաղթմիշ կանեն, էս գիշեր ա՛՛ նմանապես:

Ու պատմեց, թե ինքն ո՛վ ա, Խլղարաքիլիսումն ի՞նչ արել, Անի՛ ի՞նչ, Ապարան, Դիլի³⁷ ի՞նչ, ու քսան-երեսուն ձիավորով հազար հարամու աչք հանելով, էստեղ-էնտեղ կոտորելով՝ ուզեցել էր հենց ինքը մեկ ֆոսանդ ճարի, ղզլբաշի օրդուն մեկ գիշեր կոխի, ամա բանը տեղը չէ՛ր էկել: Էն օրն էլ, Թարթառ գետի դրաղիցն անց կենալիս, թշնամու աչքովն էր ընկել, սաղ օրդուն վրեն պոկ էկել, ընկերների մեկ-երկուսն էլ բռնել, մյուսները սար ու ձոր ընկել, ինքը հազար թվանքի գյուլից պրծել, նրա անունը լսել, ընկել ռսի հողը, ընկել, որ գա Թիֆլիզ, իմաց անի, բեղաֆիլ նրա օրդուն տեսել ու թուշ էնտեղ էկել:

— Ղզլբաշի շատը, որ ինձ հետ էին ածում, հենց նոր քամակիցս ռադ էլան. երբ ձեզ տեսան, փախան. հմիկ ի՞նչ գիտես, էնպես արա՛. գլուխս ետ եմ դրել, որ ռսին դուրբան անեն: Վաղուց էս մուրազը սրտումս կար, վախտ չէի ճարում: Հույս ունիմ, որ մեկ քանի թշնամի էլ ես իմ թագավորի ուղորին դուրբան անեն: Էս կողմերի քարերն էլ համարած ունիմ, աչքս խուփ՝ մութը գիշերը ես ճամփեն կքթնիմ: Ի՞նչպես կամենաս, էնպես իմ ծառայությունը թագավորին հասկացրո՛ւ: Փաշություն էլ ինձ տվել են Օսմանլիումը, չեմ ուզել: Քրդերն իրանք էին ուզում ինձ իրանց գլխավոր շինեն. հինգ տարի ա, Բալազդու ու Ղարսու գլխու դուշ չի՛ անց կացել. սար ու ձոր ոտի տակ եմ տվել: Միտքս էն էր, որ Անի քաղաքը շինեի: Հայերը, հայերը, աստված նրանց խեր տա, ո՛չ ինձ մտիկ արին, ո՛չ փաշի հրամանին. էնքան էսօր-էգուց քցեցին, մահանա արին, որ դալաբանթղը ընկավ: Ճարս որ կտրեց, էլ ո՛չ փաշի մտիկ արի, ո՛չ փաշության, ետ էկա էլի, Անուն ապավինեցի: Լավ աստված Հասան խանին ձեռս քցեց, ես ջահելություն արի, հոգին չհանեցի. ուզում էի նրան թաքուն չըսպանեն: Ղզլբաշը որ ետ դառավ Փամբակից, ես էս սարի, էն սարի ծերին էնքան գլուխս պահեցի, որ էլի նրան մի ձեռք քցեմ, չէլավ. աստված գլխիս բարկացավ ու էս հալիս ինձ քո ոտը բերեց, որ շատ չի՛ հպարտանամ, շատ չի՛ ամբարտավանամ: Որքան բարութ ունեի, հատավ: Ընկերքս էլ չկարացին դեմ կենալ, ամենը մեկ սար ընկան, ես էլ էս հալին առաջիդ կանգնած եմ. ինչ

հրաման ունիս, ասա՛. մեկ գլուխ ունիմ, էն էլ ռուս թագավորին դուրբան: Թաք ըլի՝ մեր աշխարքը անօրենի ձեռիցն ազատվի, թո՛ղ մեր կերածը ցամաք հաց ըլի: Երևան բոլոր քոչացրին. խեղճ խալխի տուտը Թավրեզ, Բալազիդ, Ղարս հասավ: Մեկ ծեր հեր ունիմ, բանտումն ա փտում. մեկ պառավ մեր ունեի, ճամփին, քոչելիս ա հոգին տվել. մեկ նշանած ունիմ, հազար կրակից, սրից, թշնամուց սաղ ամառը տանջվեցա ու անջախ մի անջախ բերի, ռուսի հողը քցեցի: Էլ ուրիշ բան չե՛մ ուզում, մեկ հորս էլ ազատեի, մեկ մեր ազգը, մեր երկիրը, մեր հավատը ազատ տեսնեի, ետո թո՛ղ աստված, ինչ իմ ճակատիս գրվածն ա, էն կատարի:

Հս խոսքումը էլ սիրտը չդիմացավ: Զիգյարի կրակը բերանը փակեցին, աչքի արտասուները՝ տեսությունը: Հսկայն Մատաթով երկար ժամանակ մնացել էր զարմացած ազնիվ երիտասարդի էնպես ճարտար բերնի, էնպես քաջ սրտի վրա, էնպես հիանալի, պարթև բոյի ու փափուկ ջիգյարի վրա: Խնդրեց, որ քիչ-մի հանգըստանա, ու ինքը իրան թաղարեքը տեսավ:

Ով էն ժամանակը կար, տեսած կամ լսած կլինի, թե Մատաթովն ի՞նչ արեց: Նհախ տեղը չի նրա անունը հաչի, թուրքի, ղզլբաշի բերնումը մնացել: Աշխարք տակ ու վեր կըլի, բայց նրա հիշատակը անջնջելի կմնա մեր ազգի միջին ու մեր աշխարքումը:

Դեռ վարժատան աշակերտ էի ու, ինչպես էսօր, կենդանի է մտքումս՝ Աղասին ի՞նչպես մտավ Թիֆլիզ³⁸: Երևելի իշխանի որդի չէ՛ր, որ նրան մեծ փառքով ներս բերին, բայց ով նրա արածը իմացել էր, ուզում էր ոտները ջուր անի, խմի: Մեկ թղթի միջում ծալած՝ իրան ոսկորները, քսան անգամ հենց ինձ ա ցույց տվել, որը որ զանազան տեղ կովըներումը կոտրել, հանել էին:

<11>

Մեկ քանի ժամանակից ետո, հայտնի ա ամենին, որ երբ Ղարաբաղու կողմն թշնամուցը ազատվեցավ, Ապարան, Երևան դառան ռուսաց քաջ սրտի մեծագործության ու տղամարդության ասպարեզը³⁹: Նհախ տեղը չի Երևանու անունը էնպես անձին պատիվ տվել, որ ռուսաց զենքը Ասիա ու Եվրոպա երկինքը հասցըրեց: Ո՞ր հայը իրան պարծանք չի համարիլ, որ օսմանցվի, ղզըլբաշի ու Պոլշիո աստվածը էսօր իր կոմսության անունը Երևանու անունովն ա զարդարել: Իշխանն Վարշավի և կոմսն Երևանի⁴⁰

Ասիու միջումը Ալեքսանդրի⁴¹ ու Պոմպեոսի⁴², Զինգիզ խանի ու Թամուրլանգի հիշատակը իսպառ ջնջեց ու ռուսաց քաջության, մեծահոգության, բարեսրտության, մարդասիրության անունը աստղերի հետ դասեց: Քանդելու միայն էին սովոր ասիացիք, շինություն ու խաղաղություն տեսան: Ուրիշ՝ թշնամու առաջ իրանց արիճն էին տալիս, ետո իրանց քաղաքն ու օղլուշաղը. ռուսաց, ընդհակառակն, բալանիքն էին ընծայում, ետո իրանց տունն ու ընտանիքը: Գոռոզ կարծիքն պարսից, թե խաչը միշտ պետք էր Ալու փանջին հնազանդեր, ցրվեցավ, ու իրանց անողորմության, անօրեցության տեղակ շնորհք, ողորմություն տեսան:

Հայոց արտասովոր աղոթքը, որ գիշեր-ցերեկ անում էին, թե ե՛րբ կըլի՝ ռուսաց, իրանց հավատակցի երեսը տեսնին, ետո հողը մտնին, լսեց աստված ու կատարեց: Խաչի լիսը ու ռուսաց մարդասիրության շնորհքը ապառաժն էլ կակղացրին, ու Հայաստանի չոլ, ամայի դաշտերը էսօր մարդաբնակ են դառել ու ռուսաց ազգի խնամքը վայելում, իրանց սուրբ աշխարքը կրկին շենացնում: Հայոց ազգի կարոտ աչքը վաղուց էլ արտասունք չի՝ տեսնիլ, իրան Հայրենիքը կտեսնի, նրա ծոցումը կմեծանա, նրա սերը կվայելի ու քոռ, նախանձոտ մարդին գործով ցույց կտա, թե Հայ ազգը ո՛չ թե փողի կամ շահի խաթեր ա ռուսի տերության անունը պաշտում, այլ թե իր սրտի ուխտն ա ուզում կատարի, որ իրան հավատն ու ազգը պահողին արինը, կյանքը, որդին չխնայի: Հայ ազգը, որ ո՛չ թե թուլ էր յա քաջություն չուներ, որ իր երկիրը պահել էր, ո՛չ: Երկիրն ինքն էր պարտական: Աշխարքումն ով ոտը բարձրացրեց, Հայաստանու վրովը պետք էր լոք տար, հայոց ազգին պետք էր ոտնատակ տար, ձեռք քցեր, որ իր թըշնամու հախիցը կարենար գալ: Ո՛չ ասորիք, ո՛չ պարսիկք, ո՛չ մակեդոնացիք, ո՛չ հռովմայեցիք, ո՛չ պարթևք, ո՛չ մոնգոլք, ո՛չ օսմանցիք չէին կարող էն գործությունն ստանալ, եթե հայոց ազգը մեկի դեհը չէ՛ր պահել: Դեհը պահելով, դորդ ա, իր տունը քանդեց, չունքի իր բարեկամը վեր ընկնելուց ետո իր թշնամին ավելի ևս իր չարությունը գործում, իր ինաղը (ջիգրը) հանում էր, բայց էստով հայոց ազգը արարած աշխարքին հավիտյանս հավիտենից կարող է համարձակ ցույց տալ, թե ի՞նչքան հոգի ուներ, ի՞նչքան կամաց գործություն, սրտի հաստատություն, որ իրան չորս կողմի էն հզոր ազգերը կորան, փչացան, անունները չկա, հայոց ազգը

անուն էլ ունի ու իրան հավատն ու լեզուն մինչև էսօր իր արնի գնովը պահեց, հասցրեց, որ մեկ ազգ էլա էսպես օրինակ չունի:

Երևան թևին տվեց, երբ ռուսաց զորքը իր մեջը մտան: Էջմիածնի խնկի, մմի հոտը ու զանգակների ձենը երկինքը հասավ: Քաջահաղթ հսկայն՝ կոմսն Երևանի, Տոբիթա հրեշտակ Ներսես արքեպիսկոպոսի ձեռիցը բռնած մտավ Վաղարշապատ, որ Եփրեմ կաթողիկոսի սուրբ աչքին լիս տա⁴³ ու առողջություն:

Էն ժամանակվան խաղերը, որ հանել, ասում էին, հավիտյանս հավիտենից կարող են աշխարքին վկայություն տալ, թե թուրք ու հայ հենց իմացան, թե աստված վեր էկավ իրանց համար: Հարիր տեսակ խաղ՝ հայերեն, թուրքերեն, Երևանու բաղերն ու ձորերը լսում էին, ու հինգ տարեկան երեխեն էլ էսօր, ուրախ վախտը, ձեռը բերնին ա դնում ու ասում: Որ ասածիս ամեն մարդ հավատա, էն խաղերիցը մեկը թո՛ղ օրինակի խաթեր գրվի էստեղ:

Սար ու ձոր սասանմիշ էլան, զարմացան,

Պասքովիչ սարդարի ոտի տակն ընկան,

Մեր Մասիսն, Ալագյազն փիանդազ էլան.

Անիրա՛վ, էս բաղին բաղմանչի ունի:

Անիրա՛վ, էս բաղին բաղմանչի ունի,

Յարալու սրտիս էդ քարը մի՛ քցի:

Մատաթովն Ղարաբաղ առավ, ազատեց,

Կրասովսկին⁴⁴ Ասպարան ոտնատակ տվեց:

Սաղ Իրանն Պասքովչին չոքեց, ծունր դրեց,

Ղզլբաշն մուկ դառած՝ գլխին վա՛յ տվեց:

Բեկենդորֆն⁴⁵ Սարդարին ջախըբուրդ արեց,

Ասլանի գլուխն արծվին ռուսն մատաղ արեց:

Անիրա՛վ, հայերի արինն մի՛ խմի,

Միտք արա՛, էս բաղին բաղմանչի ունի:

Անիրա՛վ և այլն:

Սրբազան Ներսեսի խաչին ղուրբան գնամ,

Եփրեմի՛ հոգևոր տիրոջն ղուլ դառնամ:

Սուրբ Գեղարդն, մեռոնի զորքն մալում էլան,

Թշնամին քուսացավ, հայքն ուրախացան:

Հայ ազգի աղոթքը երկինքը հատան:

Անաստվա՛ծ, հայիցը ձեռք քաշի՛, կորի՛:
Անհրա՛վ, հայերի արինն մի՛ խմի:
Միտք արա՛ և այլն:

Մենք քամակ-քամակի կտանք, վեր կկենանք,
Ռսին մեր աշխարքը, կյանքն ղուրբան կտանք:
Հասան խանն կատուի պես քարեքար ընկավ,
Ծահգադի դոնշունը ցիր ու ցան էլավ:

Մեր խաշին, անհավա՛տ, արի՛, ճանաչի՛:
Անաստվա՛ծ, հայիցը ձեռք քաշի՛, կորի՛:
Անհրա՛վ, հայերի արինն մի՛ խմի:
Միտք արա՛ և այլն:

<12>

Էջմիածին, Թավրիզ, Աբասաբադ, Սարդարաբադ ոռոսաց
օրհնյալ ոտի հողին արժանացան, բայց դեռ Երևան իր անճար
գլուխը դեմ էր տվել ու հետին շունչն ընկած՝ ուզում էր, որ դեռ
մեկ քանի սհաթ էլ իր ջրատար որդվոց գլուխը լա, նրանց սև
երեսը մեկ էլ տեսնի, որ փրկիչն Հայաստանի՝ կոմսն Երևանի,
իշխանն Վարշավի, էկավ՝ էնտեղանց բանտում, զընդանում մաշ-
ված հայերին էլ մեկ օգնություն անի, ազատի:

...* ամսի ...* էր, որ Երևանու բերդը ծխումը կորավ: Երկնքի
կրակը ջոկ էր վեր թափում խեղճ կենողների գլխին, թոփի, թոփ-
խանի գյուլեն՝ ջոկ: ...* օր ...* գիշեր սար ու ձոր դրմբում, դըմբ-
դըմբում էր: Հենց գիտես՝ Սողոմ-Գոմորի քութուրթն ու կրակը
էսօր ա վեր գալիս: Երևանու բերդը, ձեթը հատած պատրուզի
պես, թե մեկ ճրթճրթում էլ էր, մեկ սհաթ քիմի, էլ ետ հանգչում,
խավարում էր: Էնքան թոփի գյուլա էր գլխին ու սրտին դիպել,
հոգին բերանը հասցրել: Սարդարը, շահգադեն վաղուց էին ի-
րանց սև օրը լաց ըլելով՝ Երանու երկրիցը ձեռ քաշել, Իրան փա-
խել: Հասան խանն էր մնացել մենակ թոռումը, որ իր արած չա-
րության պատուհասն առնի, ու էն մարգարեական ձենը կատար-

* Այս էջի՝ Աբովյանի ձեռքով գրված տարբերակում համապատասխան
ամսանունը, ամսաթիվն ու օրերը չեն նշված: Արտագրողն ամենուր իր կող-
մից ավելացրել է «Ռիզգ» թիվը և աղավաղել բնագիրը: Մինչդեռ Ռայտնի է, որ
Երևանի բերդի գրոհն սկսվել է 1826 թ. սեպտեմբերի 24-ին և շարունակվել
յոթ օր. անձնատուր է եղել հոկտեմբերի 1-ին, ութերորդ օրը:—Գ. Հ.

վի, որ Ապարանումը նրա խուլ անկաջն ընկավ, բայց խելքը գլուխը չեկավ: Նհախ, որքան բերնումը լեզու ու ձեռին հունար կար, բանացրեց, որ իր ազգին սիրտ տա՝ իրանց գլուխը ձեռ չքցեն: ...* օրվանից հետո խալխը, որ տեսավ՝ ճար չկա, իրան միջի մեծամեծներիցը մեկ քանի մարդ ընտրեց, ու հենց, էն ա, վերջի՞ն սհաթն էր մնացել, որ բերդը հոգին տա, կենողները իրանց-իրանց դուս էկան բրջերի գլուխն ու բալանըքերը ձեռըներին բռնած՝ ռաչի էկան:

Քանի որ Երևան բիճա էր ընկել, կարելի ա, թե է՛ն օրը, է՛ն տեսարանը, է՛ն անունը չէ՛ր տեսել, չէ՛ր ճարել, որ էսօր տեսավ ու իմացավ: Կարելի է՝ աշխարք աշխարքով դիպչի, ազգեր գան ու էլ ետ ո՛չնչանան, բայց քանի որ հալի շունչն ու լեզուն կա, ե՛րբ նրանց մտքիցը կերթա էն ավետալից սհաթը, որ իշխանն Վարշավի, գեներալն Գրատովսկի, մեր անմահ Ներսեսին հետըները՝ խաչ, ավետարան ձեռին, մտան բերդը, որ Հայոց աշխարքի ազատության տոնը կատարեն: Պետք է աշխարքումն էլ հալի հոգի չըլի, որ իրանց փրկիչ Պասքովիչի անմահ հիշատակը արտասանքով ու լալով չհիշեն, իրանց աշխարքի հոր ու պահպանողի սուրբ անունը, որ Հյուսիսի բերնիցը սկսած նրանց հոգաը քաշել, նրանց իր թևի տակն էր ուզում բերի, սրբությունի պես չպաշտեն: Կամիլոս, դորդ ա, Հոռով ազատեց⁴⁶: Սցիպիոն՝ հռովմայեցվոց թուրը Աֆրիկոյնը ցցեց⁴⁷: Կեսար⁴⁸: Գալլիա ու Բրիտանիա ոտի տակն առավ, Նապալեոն⁴⁹: Խտալիո, Սպանիո և Եգիպտոսին ազատություն էր խոստանում, բայց ե՛րբ հռովմայեցիք, գալլիացիք, եգիպտացիք է՛ն սրտովը, է՛ն սիրովը իրանց ազատողներին կընդունեին, կպաշտեին, ինչպես հալք, հա՛լք, որ առավոտն էին վեր կենում, է՛ն էին աղաչանք անում աստվածանից, ըհգունն էին քընում, է՛ն էր նրանց աչքի արտասունքը: Մեծ էր հիրավի ու անմոռանալի ռուսաց Փարեժ մտնիլը, բայց ե՛րբ գաղղիացիք էն հոգվովը իրանց բախտավորությունը կվալելեին, ինչպես հալք էս արժանահիշատակ օրը:

Սալդարի տուտը հենց բերդը մտավ թե չէ՛, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասունքը էլ չէին թողում, որ մարդի բերան բաց ըլի: Բայց ով սիրտ ուներ, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքերը, որ քարացել, սառել, երկնքին էին մտիկ

* Ծանոթությունը տե՛ս նախորդ՝ 286-րդ էջում:— Պ. Հ.

տալիս, առանց խոսքի էլ ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէ՛ր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար:

Ինչպես բարեկամ, ինչպես երկնային ավետաբեր հրեշտակ, ազատության ու ողորմության պսակը ձեռին՝ մտավ իշխանն Պաքիչ սարդարի ամարաթը: Նա անց կենալիս հագար տեղ տեսել էր ու արտասուները բռնել, թե ինչպես էին ծեր, մանուկ, աղջիկ, պառավ՝ չէ՛ թե մենակ իր ոտը համբուրում, այլև շատը ընկնում էին սալղաթների ճտովն ու էնպես նվաղած, հոգին քաղված մընում: Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի հայք իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռք քցել, է՛ս օրը, է՛ս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել:

Էջմիածնա եպիսկոպոսունքը, որ բերդումը, հենց բռնի՛ր. մաշվել, հետին թելն էին ընկել, մեկ կողմից, Շհարի ու Կոնդի քահանայք ու դպիրք մյուս կողմիցը որ դուս չէկան՝ երեսները գետինը քսելով, էնպես գիտես, թե քաջն Վարդանն ա՛յն վեր կացել, Տրդատն ա՛յն գալիս Հռովմիցը, որ իրանց հայրենյաց աշխարքը կրկին ազատեն, ա՛յն լիս, ա՛յն կյանք իրանց ազգին տան:

Սցիպիոն Աֆրիկացի Կարթագինեի ծուխն ու էրված, քանդված ամարաթներն էր տեսնում, աչքը բռնել, լալիս, որ հռովմայեցվոց գազան բնությունը նրանց արինը խմեց, կշտացավ, Պաքիչ Մասիս էր առաջին տեսնում ու ուրախությունիցը աչքը սրբում, Տիգրանա, Վաղարշակի, Աննիբալա, Տրդատի, Վարդանի պատմությունն էր մտածում, նրանց պատկերն էր առաջին կանգնել: Նրանց անմահ հոգիքն էին երկնային լուսով նրա աչքի առաջին, նրա գլխովը պտտում, ժպտում, գմայում, ձեն տալիս.

— Տե՛ս Հայկ աստղի կամարը. է՛ն լուսեղեն, է՛ն կապտագույն գրքումն քո անունը գրվեց, փրկի՛չ որդվոց մերոց: Էնտեղ տարանք քո մեծագործության պատգամը: Հայկի մոտ, Լուսավորչու գրկումն իրար կտեսնինք, այժմ պահի՛ր մեր աշխարքը:

Հայկա որդիքն էին նրան երկրպագություն տալիս, հայոց անմեղ լեզուն էր նրա կյանքը օրհնում, հայոց սուրբ աշխարհն էր իր սիրտը բաց արել, նրան պատվում, պաշտում: Երևանու բերդի անվան կեղտը պետք էր նա սրբեր ու իր անունովը նոր կնքեր, երևանցվոց, հայոց մեծ ազգին հավիտյանս հավիտենից հեր, տեր դառնար: Ի՞նչ սիրտ ըլեր, որ էստոնք մտածելիս չվերսնար, չմեծանար: Ի՞նչ աչք ըլեր, որ էս սհաթին իրան բռներ ու էնքան օրհ-

նության, ուրախության ձեներ լսելով՝ դիմջ մնար, ծով չդառնար: Նա արեգակ էր դառել Հայաստանի, ռուսք մոլորակի պես նրա գլխովը պտտելով՝ նո՛ր կենդանություն էին բերել, ո՛վ կարեր էս մտածել ու լուռ կանգնիլ, որ էնպես քաջ հսկայն կարողանար դիմանալ: Հասան խանն ընկել էր ոտը, իր վերջին սհաթին էր սպասում. նա չէ՛ր թե Սցիպիոնի պես իր ազգի կատաղի բնությունն իմանալով՝ ոտնահար արեց, այլ ռուսաց ազնիվ հոգին ճանաչելով՝ էնպես անօրեն ավազակին գրկեց, էլ իր պատվով՝ հրամայեց, որ ճամփու քցեն, գնա, դհա ավելի իմանա, թե ո՛րքան ողորմած է հզոր տերությունն Ռուսաց: Ռուսք էն մութը հոգին չունեին, որ Նապալեոնի պես մարդին, իրանց մեծահոգությանը ապավինելիս, նավ քցեն, որ գնա, իր դառն օրը Ովկիանոսի միջումը վերջացնի, չէ՛: Ռուսք իրանց թշնամուն, էնպես անարգ հոգուն էլ, ցույց տվին էսօր, որ իրանց ոտքը որտեղ որ մտնի, էնտեղ բախտավորություն ու խաղաղություն պետք է ըլի: Հասան խանը գլուխն էր դեմ անում, որ կտրեն, պարսիկք երեսներն էին փռում, որ ոտնակոխ անեն, բայց Պասքևիչ՝ անօրինակ հսկայն, մեկին հանդիսով Թիֆլիս ուղարկեց, մյուսոցը շնորհք, ողորմություն ցույց տվեց: Այլ եվրոպացիք Ամերիկա ավերեցին, հողի հավասարեցին, ռուսք Հայաստան կանգնացրին ու ասիացվոց բիրտ, գազան ազգերին մարդասիրություն ու նոր հոգի տվին, աստված ի՛նչպես չի՛ պետք է նրանց թուրը կտրուկ անի, պատմությունն ի՛նչպես չի՛ պետք Պասքևիչին աստվածացնի, հալք ե՛րբ կարեն ռուսաց արածը մոռանալ, քանի որ շունչ ունին⁵⁰:

<18>

Բայց ա՛խ, սիրելի կարդացող, մի հարցնես, թե ախր էսքան բանը որ անց կացավ, ո՛ր մնաց մեր ջրատար, սիրտը փորումը մեռած Աղասին, որ չի՛ գալիս՝ իր մուրազն առնի, իր մահվան դուռն ընկած խեղճ հորն ազատի, նրա օրհնությունն առնի, թողություն խնդրի, որ էնքան նեղությունն ու տանջանքը իր խաթեր էր քաշել, հինգ տարի բանտումը չորացել, ցամաքել, հազար անգամ գերեզմանի դուռը գնացել, ետ եկել, որ իր որդուն տեսնի, փափագն առնի, էնպես հողը մտնի, որ սրտումն էլ դարդ չմնա, գերեզմանն իր համար դժոխք չդառնա:

Բերդի մեջն ու չորս կողմը, որ ասեղ քցեիր, գետնին չէ՛ր

հասնիլ. աշխարքը իրարոցով էր դիպել: Աչք էր, որ խնդում էր ու լսիս, բերան էր, որ գոփում էր ու օրհնություն տալիս. ազգական, բարեկամք էին, որ իրար փաթութված՝ մնացել էին փետացած: Լեզվի տեղակ արտասունքն էին նրանց էրված սիրտը հովացնում: Սար ու ձոր խնդացին, բաղ-բաղաստան ցնծացին, որ իրանց տներն էլ ետ ճամփու էին ուզում ընկնիլ, որ գնան, նրանց զվարթացնեն: Բերդի դռներն ու քույեքը դմբում էին ոտի ու ուրախությունի ձենիցը: Ռսի դարավույները ամեն տեղ բռնեցին. խալխը քիչ-քիչ սկսել էր, որ քաշվի, բայց որտեղ որ Հասան խանի խերիցը քռուցրած, քոթրոմացրած, ոտից-ձեռից ընկած անդամալույծ կար, էկել, բերդի դուռը բռնել էին, որ իրանց սև օրին մեկ լիս, մեկ ողորմություն, մեկ դիմջություն գտնեն:

Էս միջոցին էր, որ Ներսես սրբազանը Սահակ աղի ձեռիցը բռնած՝ ընկել էր բրջերի, բաղանների գլուխն ու հենց գիտեր, թե երկնքիցն ա Երևանու դաշտին մտիկ տալիս, նոր ըլի դրախտը նրա աչքի առաջին բաց էլել, նոր ըլի ջրհեղեղը դադարել, նոր ըլի որդին միածին վեր էկել, որ իր արդար, սիրելի հայոց ազգին փրկություն բերի: Անց կացած ժամանակները երազի պես էին նրա աչքի առաջին կանգնել: Չէ՛ր իմանում, թե Երևա՞ն ա տեսածը, թե՞ Թիֆլիզ: Է՛ն պուճախներումը, է՛ն ձորերումն ու բաղերումը, որ սև դզլբաշի երեսի էր նրա աչքը սովորել, ռուս էր տեսնում ցրված, նստած. ո՛վ չէր տեսածը երազ համարիլ յա հրաշք:

Էս մտածմանց մեջը խրված՝ էն թանձր ունքերի տակիցը իր հոգելից աչքը Ջանգվի վրա էր քցել ու մնացել վերացած, գավազանի վրա թինկը տված, որ մեկ քաղցր ձեն ետևիցը որ «Հա՛յր սուրբ ջան» չասեց ու ձեռն առաջ դռին, հետո երեսին չկայցրեց, քաջաջան հովվապետը մնաց ուշագնաց:

— Հա՛յր սուրբ ջան, սրբազան տե՛ր. ա՛խ, էս ի՞նչ օր ա,— մեկ ձեն էլ մյուս կողմիցն էկավ ու մյուս ձեռը բերան ընկավ:

— Սմբատով ջան, Երուսալեմսկի ջան⁵¹, ո՛րդիք. թաղեցե՛ք ինձ այսուհետև ձեր ձեռովը: Թե որ մեկ քանի օր էլ աստված ինձ կյանք պետք է տա, թո՛ղ էնդուր համար տա, որ էս էրված սրտիս մուրազը կատարեմ, մեր խեղճ, ցրվալ ազգը էլ ետ իրանց աշխարհը բերեմ, էս մեկ բանն էլ թո՛ղ էս կարոտ աչքս տեսնի, հետո, ա՛խ, հետո Հայաստանի սուրբ հողի տակը մտնիմ: Խնդրեցե՛ք, խնդացե՛ք, խնդացե՛ք, խնդրեցե՛ք, ո՛րդիք ջան, որ ձեր ծե-

քումի հոր էս մեկ խնդիրն էլ աստված լսի, էլ ուրիշ բան չե՛մ ուզում: Հայաստա՛ն, Հայաստա՛ն, տո՛ւր ինձ քո սիրտը, տո՛ւր ինձ գերեզման: Էլ որ նոր ազգեր թե գան ու երթան, ա՛խ, չի՛ մոռանաս քո սե, դառն օրվան նեղությունն, տանջանքն. կա՛ց ու զգաստացի՛ր. քո խեղճ որդոցը սիրով պահպանի՛ր, էլ քո զավակը գերի մի՛ քցիր: Սուրբ հողդ իմ երեսս, ընտի՛ր Հայաստան, աթոռ աստուծո, տուն Արշակունյան⁵²: Ախր ո՛րտեղանց որտեղ թռաք, էկաք, սիրելի ո՛րդիք, որ ձեր Հայրենիքը տեսնիք,— վերջապես հարցրեց սրբազանը զարմացած՝ աչքերը սրբելով ու էս ազնիվ հայկազանց գլուխը դռնին կայցնելով,— ախր մի ասեցե՛ք, որ դիմջանամ. ձեր կարոտն էի քաշում, ձե՛զ էի ուզում, ձե՛զ որ էս սհաթին իմ սիրտն իմանաք, իմ ուրախությանը մասնակից ըլիք, ո՛րդիք ջան, հայոց ազգի բարի շատավիղք: Էդ ո՛ր աստվածը իմ մեղավոր սրտի խորհուրդն իմացավ ու ձեզ ինձ մոտ բերեց:

— Մենք էլ հենց է՛դ մտքովն ու մուրազովը տուն ու տեղ թողինք, իրեք գիշեր ա, չենք քնել, սար ու ձոր ոտնատակ տվինք, որ մի գանք, էս սհաթին ձեզ տեսնինք, քո ուրախությունն ու օրհնությունն առնինք, մեր Հայրենյաց ազատությունը տեսնինք, մեր կարոտ աչքը մի կշտանա, ու էլ հենց էս սհաթին պետք է ետ դառնանք, որ կուսակալը մեր գալը չիմանա:

— Հա՛յ անհրաժս ձեզ, է՛տուր համար եք էդպես չերթեզի շորերում կուշ էկել, որ մարդ ձեզ չճանաչի՞. շատ լա՛վ, հանաքն հո էդպես չե՛ն անիլ. դուք ձեր խաղն եք խաղացել ձեր ջահել տեղովը, ես էլ իմը կխաղամ էս ծեր տեղովս, տեսնինք՝ ո՛րս կհաղթենք: Ձեզ բանտ պետք է քցած, որ մի քիչ քիթըներդ տրորվի, իմանաք. թե Հայրենյաց համար էդքան նեղություն քաշողը, էդքան ճամփա էկողը ու իր դուլլուղից ձեռք վերցնողը՝ թուր էլ որ դեմ անեն սրտին, կրակ էլ որ ածեն գլխին, պետք է երեսը ետ չի՛ թեքի: Դուք էսքան տեղն անահ, աներկյուղ անց եք կացել, ոտի տակ տվել, որ մարդ եմ ուտում, հիմիկ սիրտ չե՛ք անում, որ կուսակալի առաջը գա՞ք: Տո՛, Հայաստանու փրկիչը որ ձեր էդ ազնվական գործն իմանա, հասկանա, թե դուք ձեր աշխարքի ու ազգի ազատության հանդեսը էկել եք, որ տեսնիք, ձեր ձենն էլ նրանց ձենի հետ խառնեք, ձեր ազնիվ սիրտն էլ նրանց սրտի հետ միացնեք, էն էլ է՛ս հրաշալի, է՛ս արժանահիշատակ ժամանակին, ձեզ սիրելու, ձեզ գրկելու խաթեր ձեզ վրա պետք է բարկանա՞: Էն ի՛նչ սիրտ պետք է ըլի, որ տեսնի՝ մեկ որդի սարեսար

ա ընկել, գլուխը մահու տվել, որ իր ծնողին նեղությունից պըր-
 ծած տեսնի, ինքն էլ ջանը ետ դնի, ինքն էլ հետը ուրախանա
 ու, մահապարտ էլ որ ըլի որդին, նրան թողություն չտա՝ Ձեզ
 պես որդիք շա՛տ ունենամ, շա՛տ. էկե՛ք, էկե՛ք, ձեր երեսին
 մեռնիմ, ձեր էդ ազնիվ աչքերին դուրբան, իմ սիրուն պահած
 որդիք, էկե՛ք, ձեր էդ մաքուր ճակատը մեկ էլ համբուրեմ, մեկ
 էլ ձեր էդ սիրուն երեսը դռնիս կայցնեմ, հետո ձեր շուշն իմ վզին:
 Կուսակալը թե խոսք ունի, առաջ ինձ ասի: Դուք է՛ն օրինակն
 եք ցույց տվել, որ մեկ որդի Սիբիրից ոտով գնացել ա Մոս-
 կով, որ իր հորն ազատի⁵³ ձեզ ո՛վ կարա դնամիշ անիլ: Հա-
 յոց դոնշունն էլ⁵⁴, է՛ն ա, հա՛, հազրել եմ. քիչ-քիչ սովորում
 են կովելու կերպը: Մեղի՛ք, էսպես զավակներ որ թագավորն
 էլ ունենա, չի՞ ուրախանալ: Հայոց ազգը է՛սպես որդոց ա կա-
 րոտ, է՛սպես. ի՛նչ կըլի, որ սրանց նման մեկ հարիրն էլ ըլին:
 Հլա մտիկ տո՛ւր սրանց բոյին, սրանց պատկերին, սրանց
 լեզվին, սրանց անճման աչքերին. աստծուն հայտնի ա, ուզում
 եմ, թե էս սհաթը հոգիս հանեմ, սրանց տամ: Օրհնվի՛ էն արգան-
 դը, որ էսպես զավակներ կբերի: Ամեն մեկը, էնպես գիտես, թե
 թագավորագունք ըլին: Ձեզ ստեղծող աստծուն զո՛հ ըլիմ, զո՛հ.
 ինձ պետք է թաղեք, որ հետո վրըներովդ դուշ անց կենա: Ձեր
 Հայրենիքն էիք ուզում, էս էլ ձեր Հայրենիքը: Ես էլ գիտեմ, որ
 չոր, հալևոր սևագլխի խաթեր էդքան ինջըմիշ չէիք ըլիլ: Ինձ սի-
 րեք, չսիրեք, ձեր ազգն ու աշխարհը որ էդքան սիրում եք, հենց
 գիտեմ, թե Գաբրիել ու Միքայել հրեշտակն եք ինձ համար, որ
 մեր Լուսավորիչ պապին Խոր Վիրապումը մխիթարում էին: Գը-
 նա՛նք, իմ հոգուս նրազներ, զնա՛նք, ուշացանք, կուսակալը ինձ
 կըլի մնում. հլա բերդը նոր ենք առել, ո՛վ ա խաբար, թե ի՛նչ դուս
 կգա: Խալխի հոգսը պետք է քաշենք. բանտ ու զընդան լիքն են
 մեր անմեղ զավակներովը, նրանց ախր հանիլ, ազատություն ու
 տերություն կուզի, ո՛վ ա խաբար, թե դրադ-պուճախում դեռ ի՛նչ
 քաներ անց կկենա. չունքի ղզլբաշը, դորդ ա, կտորվել ա, ամա
 դեռ ռխն ու քենը սրտումը մխում կըլի, որ էրեկ իրանք էին Երևա-
 նու տերը, մեր ազգի գլուխը, էսօր մեր ոտն ա նրանց գլխին, մեր
 խաչին պտի հնազանդին ու երկրպագություն տան: Գնա՛նք ”:

ա. Էս ընտիր, հայրենասեր հայկազունքը, որ երկուսն էլ էսօր մեր ազգի
 միջուկը իրանց ազնվությամբ, իրանց ազգասիրությամբ դեռ, փա՛ռք աստու-
 ծո, փայլում են, ու տեր աստված դժա երկար փայլիլ տա, Ներսես եպիսկոպո-

Էս խոսքը բերնիցը դուս գալը ու մեկ ողբալի ձեն հենց է՞մ վրեն կանգնած բրջի տակիցը վեր ըլիլ մեկ էլավ:

— Հա՛յր սրբազան, գլխիդ դուրբան, հասի՛ր. մեկ հայ աֆի-
ցերի սպանեցին իր հոր հետ⁵⁵. ճար ունիս, տե՛ս:

Բրջի դռանը մարդ չէ՛ր երևում. որ մի քիչ կռացան, մտիկ չարին, գլխըներին կրակ վառվեց, բերդը մեկ գազ էլ խոր գնաց, չունքի տեսան, որ էն մարդը փանջարիցն ա գլուխը հանել ու ձեն տալիս:

Ա՛խ, սի՛րելի կարդացող, էլ ի՛նչ երկարացնեմ էս սարսա-
փելի պատմությունը: Կըլի, որ քո սիրտն էլ քեզ ասեց, որ էս հա-
ղադին ի՛նչ աֆիցեր պետք էր էնպես դժոխք մտնիլ, որ գլուխը
մահու տա, եթե ո՛չ մեր ջիվա՛ն Աղասին, որ հինգ տարի սար ու
ձորի, գազան, հարամու գլուխը չի՛ տվեց, պահե՛ց, էն քաներն
արեց, որ աշխարքումը քիչ աղամառողի արած կըլի, վերջը Գրա-
սովսկիյ գեներալի հետ թռավ իր ցանկալի վաթանը, որ իր ջրա-
տար հոր հետին շնչին հասնի, ու հենց բերդն առան թե չէ, նա,
մերը կորցրած գառան պես, էլ չի՛ համբերեց, որ ոտքը մի քիչ
խաղաղվի, ընկավ բրջե-բուրջ ու որ հոր անունը չհարցրեց, մեկ
երևանցի հայ առաջն ընկավ, տարավ նրան էն բրջի դուռը, որ-
տեղ որ նրա տարաբախտ հերը, մեկ քանի հայերի հետ, բռնված
էր: Բայց անիրավ պարսիկքը վաղուց էին իմացել նրա՝ ղոնշունի
հետ գալը, ու նրա սպանածների հեր, ախպեր, ազգական՝ մինչև
տասը մարդ, գնացել, էն բրջումը տափ էին կացել:

Ա՛խ, էլ ի՛նչ գրեմ, ձեռս թուլանում ա, սիրտս արին կաթում...
Ա՛խ, բաս Աղասու սուգն ո՛վ անի, նրա ջիվան ումբոն ու օրը
ո՛վ լաց ըլի: Ե՛ս, ես, ողորմելիս, նրա գերեզմանին դուրբան...
Ա՛խ, բաս նա, որ ինձ էնքան էրեխա ժամանակս իր ծնկա վրա
խաղացրել ու ինձանով մխիթարվել ա, բաս ես քա՛ր պտի ըլիմ,
որ նրա սուգը չանեմ: Բաս սիրտս կհամբերի՞, որ էսօր չուգե-

սի ձեռին էին, հենց բռնի՛ր, մեծացել: Երևան մնալն ու չմնալն էլ չե՛մ իմա-
ցել, ու ինչ արած ունիմ, լավ Ռայազգին պետք է ջոկ-ջոկ գրքեր շինի, որ բոլոր
կարողամա պատմի, ու ամեն տեսնելիս, էնպես գիտեմ, թե նո՛ր Սմբատ, նո՛ր
Վարդան եմ մեր միջումը շրջում: Հետո ժամանակի՝ աստված էնպես նրանց
մուրազը կատարեց, որ Երուսալեմսկին երկար ժամանակ քաղաքապետ (պո-
լիցմեյստր) էր Երևան, մյուսը Ռո՛, որ ազգի աչքի լիսն ա էսօր էլ, տարի ու կես
կառավարիչ էր բոլոր Հայոց Նախագահն: Ո՛չ թե Ռայք, թուրքերն էս նրանց
անուռովը էսօր էլ երդվում են:

ճամ էնպէս հսկա, էնպէս ազնի՛վ, քաջ երիտասարդի վրա հոգիս տամ: Բայց չէ՛, ես ի՞նչ եմ, որ Աղասու սուգն անեմ, իմ բերանն ի՞նչ ա, որ լսողի սիրտը շարժի, էրի, խորովի: Նրա սուգ անողը հետո կգա, ես իմ դառը պատմությունն անեմ:

Իրեք թուրք ջոկ էին ընկել բրջի մէկ դրաղումը, մյուսները փախել. ա՛խ, լե՛զու, լովիս, ի՞նչ կըլի: Աղասին, հրեշտակ Աղասին. երկու խանչալ սրտումը ցցված, իրեքը քամակումը, ու ոտ ու ձեռ հազար տեղ յարալու-փարալու՝ իր ողորմելի հոր դոշին, արիւնը ծովի պէս չորս կողմը բռնած, որ սրբազանը վրա հասավ: Աջու ձեռը որ չէր տարել, որ հոր գլուխը, էն ձնի պէս սպիտակ մազերը, մէկ խտտի, մէկ դոշին կպցնի, որ էնքան տարվան էր ված սրտի մուրազն մի առնի, հովանա, հենց տեղնուտեղը ուսը վեր էին բերել, ու կտրած ձեռը մնացել էր հոր գլխատակին, երեսը՝ երեսին, ու ձախու ձեռն՝ էնպէս փետացած, դոշի վրա ընկած:

— Վա՛յ, աչքս դուս գա, ա՛յ իմ ազգի ազիզ որդի. վա՛յ, մեր ճամփեն փուշ դառնար, ա՛յ ջիվան, ա՛յ մեր ախպեր, հայի զավակ. վա՛յ մեր օրին ու արևին, Երևանու ճրագ, իմ պահած-մեծացրած, սիրուն Աղասի, քո արինն է՛ստեղ պտի թափե՛ր,— սասցին էս ազգասեր հոգիքն ու աղլխներն աչքներին դրած՝ ամեն մեկը մէկ դրաղ քաշվեցին, չորացան, թուլացան, երկինքը գնացին, քարացած մնացին, ու էլ որ մեկն ու մեկը հանկարծ աչքը կամ հոր երեսին՝ էն լիս դառած պատկերին, յա տղի կտրատած ջանին՝ էն արնաթաթախ մարմնին, չէ՛ր քցում ու սիրտը բերնովը դուս բերելով՝ բիրդանքիր ձեն տալիս ու գոռում:

— Հլա մի մտիկ արե՛ք, տեսե՛ք, հորն ի՞նչպէս ա խտտել: Տո՛, էն ծերին նայեցե՛ք, տեսե՛ք, աչքը ի՞նչպէս ա որդու երեսը քցել ու երկու ձեռով ճակատին խփում:

Սի՛րտ, տրաքի՛, սի՛րտ. էլ չեմ կարում տանիլ. ո՛վ ջիգյար ունի, ինքն իմանա, մնացածը էգուց կգրեմ:

<14>

Հայոց ազգը էնպէս ուշիղ, էնպէս ջիվան որդիք շատ էր կորցրել էս կովներումը. էլ ո՛ր կհասներ, էլ ի՞նչ օգուտ շատ սգալն ու մղկտալն, բայց, ա՛խ, Աղասու մերը քոշի ճամփին էր իր սև օրը վերջացրել, հերը՝ որդու արնովը իր փետացած լաշը լվացել, նշանածը՝ ողորմելի Նազուն, դեռ Փամբակ էր. միմիայն

տես ու ճանաչ էին նրա՝ վրա ցավում, կսկծում, իր ռաշիդ ընկեր-
ներ <ից> հո, քանի Մատաթովի մոտ էր գնացել, ո՛չինչ խաբար
չէ՛ր իմացել. էկող-գնացող էնպես էին պատմում, թե նրանց եսիր
էին արել, Հասան խանի մոտ տարել: Ո՛վ էր խաբար, բալքի թե
էն անդամալուծների շատը նրա բարեկամքն էին, բայց մարդ չէ՛ր
գիտում: Էն բրջից ձեն տվող երևանցի հայիցը հենց էսքան իմա-
ցան, թե երբ քաջն Աղասի՝ ուսի ապելատով, բրջի դռանը երևե-
ցավ, դարավուլ սալդաթը դրադ կանգնեց, պատիվ տվեց:

— Ինչպես մեկ հրեշտակ, է՛նպես ներս ընկավ իգիթը,—
վրա բերեց երևանցի հայն:— Անօրեն թուրքերը մեկ դրաղում,
թուր ու խանչալ պոկած, տափ էին կացել: Բերդի առնիլը դեռ
չէինք իմացել: Հենց իմացանք, թե էն թուրքերն էկել են՝ մեզ յա
սուրը քաշեն, յա դուրս տանին, կախ տան: Լերդ ու թոք ջուր կըտ-
րած՝ մնացել էինք սառած, որ հսկայն Աղասի ներս ընկավ. հենց
իմացանք, թե եկել ա, որ էն անհրաժեշտին բռնիլ տա ու մեզ ա-
զատի: Ո՛վ կիմանար, թե ի՛նչ մարդ ա ու ընչի՞ համար ա էկել:
Խեղճ հոր հո, շունչն էր մնացել բերնումը. աչքի լիսը վաղուց էր
հատել, վաղուց էին ոտ ու ձեռք նրան թողել, չորացել: Փորն էկել
էր, ուռել, բերնին դեմ առել. հենց գիտես, թե հոգին ինքը նրա-
նից չէ՛ր ուզում ձեռք վերցնի, չունքի շատ անգամ, էն ուշագնաց
վախտը, լավ պարզ լսում էինք, որ ուզում էր գլուխը բարձրացնի
ու մեռած ձենով մղկտում էր. «Բաս ո՛ր ա... թո՛ղ, թո՛ղ, մի տես-
նիմ... Ա՛ղասի, ո՛րդի, հո՛գի, քա՛նի մի քանի ինձ մաշես. երկըն-
քումը վաղուց եմ տեղս տեսել, ա՛յ իմ ջիվան որդի, քանի՞ մի քա-
նի ինձ մաշես: Արի՛, արի՛, երեսիդ մեռնիմ, արի՛, մեկ շունչդ
առնիմ, էլ հո աչք չունի՛մ, որ քեզ տեսնիմ. էլ հո ձեռք չունի՛մ,
որ քեզ գրկեմ. լեզուս ա մնացել, անկաջս. թո՛ղ մեկ էլ ձենդ լսեմ,
որ մորդ էլա մեկ խաբար տանիմ: Հոի՛փսիմե, Նա՛զու, Կա՛րո,
Փա՛րիխան, Ա՛ղասի»: Սանգարի ժամանակին ձենը իսպառ կտըր-
վել էր: Մենք հենց իմանում էինք, թե վաղուց ա հոգին տվել:
Թոփի, դոմբարի ձենը մեզ խլացրել էր: Երբ ոտը խաղաղվեց, էլի
առաջվան պես նղղալով՝ խոր հոգոց քաշեց, էլի էս խոսքերը
սկսեց ետ ասիլ ու հոգու հետ կռիվ տալ: Վերջին խոսքն էլի էն
էր՝ «Արի՛, արի՛, Ա՛ղասի, ո՛րդի, հո՛գի ջան», որ դռները ճոռա-
ցին, ու ջիվան որդին հոր ձենը որ չիմացավ, «Ա՛փու ջան, գլխո-
վըդ ման տամ, դեռ սա՞ղ էս, երեսիդ դուրբան, ա՛փու ջան»,
«Ա՛փու ջան» ասիլը, գծվածի պես հոր վրա ընկնիլն ու թուր ու

խանչալ վրա գալը մեկ էլան: Հերը հենց ձենիցը մեռավ. որդուն, ա՛խ, ջրատար որդուն էլ ժամանակ չմնաց, որ յա հորը ետ բերի, յա իրան մեկ չարա անի: Էլի աստված մեզ էր խեղճ եկել, որ սալդաթը էս ձենըձորը որ լսեց, խիշտն առած՝ ապլանի պես ներս ընկավ, իրեքին սպանեց, մշուսները փախան: Քոռանա իմ աչքըս, որ էսպես բան չէ՛ի տեսել: Հազար անգամ Աղասու հոր հացը կտրել, հետը քեֆ եմ արել: Բարիկենդանին էլ, որ Աղասին փախավ, նրանց տան քեֆ անողների մեկն էլ ես էի: Իմ որդիս, ա՛խ, իմ ջիվան Մոսին էլ էր նրա հետ փախել: Բայց ես լսում եմ, թե նա դեռ սաղ ա: Աստված, դատաստանդ քաղցր ըլի, էսպես գոլում էլ ո՛չ շհանց տաս, էլ ո՛չ տեսնինք, երեսս ոտիդ տակն,— ասեց ողորմելին ու փեշն աչքերին դրեց:

Րիզնահովմ ընկել էր, թոզ ու դուման՝ բերդի չորս կողմը բռնել: Էսպես վախտին դուշն էլ իր բնիցը չի՛ դուս գալիս, բայց սաղ աշխարհն էկել, Երևանու բերդի չորս կողմը բռնել էր, որն ջիվան Աղասու խաթեր, որը նրա մեհիդը դուս բերելու, չունքի լսել էին, որ մուգիկով ու դոնշունով պտի թաղեն, ու էսպես բան, էսպես տեսարան, Երևանումը դեռ առաջինն էր: Սալդաթ ու մուգիկանդ բերդի դուռը կտրել էին. ժանդարմեքը ճամփա էին բաց անում: Համամների ու սուրբ Սարգսի դուռը էնպես էր սևին, սպիտակին տալիս ու դես ու դեն ծփում, ինչպես մեկ փրփրած ծով, որ քամու ձեռին յա սիպտակ փրփուրն ա, կիտուկ-կիտուկ, քափն, ապառաժին խփում, յա սև ջուրն ա դրմբալով դես ու դեն քցում: Թոզն էլ հո բոլորը թամամ էր անում:

Տամբուր մայորը թոփուզը պտտեց⁶⁶, սալդաթները կարգ ընկան, մուգիկեն իր կսկծալի ձենն սկսեց, սև ձիանոնց գլուխն ու դագաղի ծերն երևեցան, ու գեներալ, աֆիցեր՝ Ներսես սրբազանին մեջ արած, դուս էկան. ոտը շարժիլն ու սգի ձենը մեկ էլավ: Հազար բաշից, հազար կտրից աչք էր, որ մրմնջում էր. սիրտ էր, որ էրվում, մղկտում էր. բերան էր, որ ա՛խ քաշելիս՝ քարերն էլ հետը ա՛խ էին քաշում, սզլթում:

Մեծ ա Անապատի հայաթը, բայց ոռու, հայ, թուրք, մեծ, պստիկ է՛նպես էին լցվել, որ շունչ չէր դուս գալիս: Տեքտերներն եկեղեցու դուռը վաղուց էին բաց արել, ճրագները վառել, շուրջառները քցել, բուրվառ, խաչ, խաչվառ ձեռնների՝ մտիկ տալիս, որ մեհիդը ժամը տանին: Խալխին դեն անելուցը զվիրն էին էկել. շատը պատերովն էին ներս թափում, որ շուտով մեկ տեղ

ճարեն: Էս հաղադումն էր, որ իրար ոտնատակ էին տալիս, մեկ անդամալուծ էլ սուրութիւն ըլելով, քանի որ ոտը խաղաղ էր, գլխին-դոշին վեր հատելով, մազերը պոկելով, «Սուրբ Սարգիս» ձեն տալով՝ հասավ, ընկավ մեկ տերտերի ոտ, որ թույլա, ժամի դռանը վեր ընկնի: Աստվածասեր քահանան՝ Տէր Մարութը՝ Հովսէփ եպիսկոպոսի հերը⁵⁷, հենց իմացավ, թէ յա ուխտ ա էկել ողորմելին, յա ուզում ա մեկ ողորմություն խնդրի, սիրտը մրմնջաց, հանեց, մեկ-երկու գոռշ էլ առաջը քցեց ու տիրացվերին ասեց, որ նրան ձեռ չի՛ տան:

— Ա՛խ, բռնանա քո բռնացնողի աչքը, մեկ բուռը հողի հասարաթ մնա, որ քեզ էդ տեղն ա քցել, ա՛յ խեղճ տղա. էդ պատվական սուրաթը, էդ գլովդեն ու սիրուն բոյը, որ քոնն ա, ընչի՞ պետք է էդպես չուռումիշ ըլեր, չուռումիշ ըլի քո էդպես անողի կյանքը,— ասեց աչքը տրորելով ազնիվ քահանան ու երեսը շուռ տվեց:

Հենց պատվական մարմինը տեղ հասավ, հենց մուգիկի ու շարականի ձենը կտրեցին, մեծից վեր բերին, որ Հոգոց ասեն, հենց Ներսէս սրբազանը էն սուրբ բերանը բաց արեց, ա՛ստված, ո՛վ ունի էն լեզուն, որ պատմի, ինչ որ էստեղ պատահեցավ: Սար ու ձոր կրակ ընկավ, խալիսի գլխին ջուր մաղվեցավ, էլ բերան չէ՛ր բաց ըլում. աչքն էր իր կրակը վեր ածում, սիրտն էր իր խանչալները փոխում, շունչն էր իր ծուխն ու բոցը քթիցը քուլա-քուլա դուս փչում: Ալամ-աշխարք մնաց քարացած, կանգնած: Երազ չէ՛ր, որ աչքըները բաց անեին, պրծնեին. կրակ չէ՛ր, որ փախչեին, դիմջանային. ջիգյար էր, որ էրվում էր, սիրտ էր, որ պատրուկում էր:

— Ա՛ղասի ջան, Ա՛ղասի. աչքիս լիսը վաղուց ա խավարել, որ մեկ երեսդ էլա տեսնիմ,— մեկ ձեն գոռաց,— ոտներիս ջլերը վաղուց են փետացել, որ վրեդ էլա մի կանգնիմ, սուգ անեմ. ձեռներս քթուկի պես դոշիս են կպել, որ մեկ նաշդ էլա խտտեմ, որ մեկ նաշդ էլա դոշիս կպցնեմ, որ մեկ երեսիդ վրա ընկնիմ, երեսդ երեսիս տամ, հոգիս հոգուդ հետ ճամփու քցեմ, էդ լիս երեսիդ դուրբան, Ա՛ղասի, էդ ջիվան ջանիդ մեռնիմ, թա՛գավոր Ա՛ղասի: Է՛դպես էիր ուզում քո խեղճ հոր հավարին հասնիս, Է՛դպես էիր ուզում քո դոստ-բարեկամի սիրտն սուցնիս, Է՛դպես էիր ուզում Անի շինես, ումբող ու արևդ խավարացնես, որ բալքի քո ազգին ու աշխարքին մեկ ճար անես, ա՛յ քո հրեշտակ ջանին դուրբան:

Ա՛խ, մկամ երկիրը քեզ պես ծնունդ ո՛ւնի, քեզ պես զավակ բե՛րել ա, որ էդպես անջիգյար քեզ տանում ա. մկամ երկինքը քեզ պես հողեղեն տեսել, ստեղծե՛լ ա, որ քեզ խլում ա. մկամ հայոց ազգը քեզ պես որդի, քեզ պես ճրագ էլ ո՛ւնի, որ քեզ բերել ա, հողը դնի, քեզանից ձեռք վերցնի, քո ջիվան ջանը գետնին, գերեզմանին պահ տա, էդ երկնքի՛ նման լուսեղեն պատկերիդ մեռնիմ, Ա՛ղասի:

Լոռվա սարերը քեզ պահեցին, քեզ սիրեցին. Անու խարաբեքը քեզ դվաթ տվին, հարամուց ազատեցին. բաս հենց վա՛թանն էր քոռացել, վա՛թանն էր խարաբ էլել, որ խորթ մոր պես իրան գլուխը պրծացրեց, քեզ մահու տվեց, քե՛զ, որ հազար տարի անց կենա, էլ քեզ նման զավակ ո՛չ ունեցել ա, ո՛չ կունենա: Հինգ տարի բոլոր դո՛ւ էիր մեր դաշտերի, սարերի աստվածը. հազար գերի ու անճար քո՛ ձեռիցը իրանց կյանքը նորեն ստացան, բաս է՛նքան սիրտ էլա չուներ քո աշխարքը, որ մեկ սհաթ էլա քեզ պահեր, քո արևը էդպես շուտով չթո՛ղար մեր մտնի: Աչքերս Հասան խանը հանիլ տվեց. ոտ ու ձեռ նրան դուրբան էլան, Ա՛ղասի ջան. երկինք ու երկիր ինձ համար հավիտյան խավարեցան, ջան ու գործություն վաղուց ինձանից ձեռք վերցրին, արեգակ ու լուսին վաղուց ինձ համար մեր մտան. ծնող, ազգական դեռ չե՛մ տեսել, որ սիրտս չերվեր, բայց էլած շունչս էլ քե՛զ համար էի պահում, քառացած անկաջներս քո՛ ձեռնին էին հասարաթ մնացել, խավարած սիրտս քո՛ անունովն էր պայծառանում, մխիթարվում. քո անուշ ձեռնին էի մնում, որ մեկ լսեմ, հետո հոգիս տամ. քո լուսեղեն պատկերին էի կարոտ, որ մեկ գայիր, էն խավա՛ր զնդանին լիս տայիր, որտեղ ինձ պտի դնեին. էն սա՛ռը գերեզմանին շունչ տայիր, որ ինձ պտի ծածկեր. էն տեսնող-լսողին էրեիր, որ իմանային, թե դո՛ւ, դո՛ւ ես ինձ վրա սուգ աճում, քո արևին մատաղ. հմիկ, ա՛խ, ի՛նչ կլլի, երկնքիցը մեկ կրակ ընկնի գլխիս, ինձ էրի, փոթոթի, կամ երկիրը պատռվի, ինձ նեքսե տանի. ա՛խ, ե՛ս պետք է քո սուգն անեմ, որ աչք էլ չունիմ. ե՛ս պետք է քո վրեդ գամ, որ չե՛մ էլ տեսնում. հո՛ղը պտի ըլի քո գերեզմանը, թե՛ սիրտս. մարդիկ են մենակ վրեդ լալի՛ս, թե՛ սար ու ձոր էլ. գիշե՛ր ա, որ քեզ թաղում են, թե՛ ցերեկ. արեգա՛կն ա աչքը բռնել, խավարել, թե՛ լուսինը. հրեշտա՛կք են քեզ շրջապատել, քեզ ողբում, թե՛ մարդիկ. երկընքո՛ւմն եմ քեզ հետ, թե՛ երկրումս, էդ սիրուն ջանիդ մեռնիմ, Ա՛ղասի:

Հերմուներդ առաջիս կանգնել, խնդում են, հրճվում են, քե՛զ են կանչում. թագ ու պսակ, լիս ու ծաղիկ քե՛զ վրա են վեր գալիս, քե՛զ պետք է զարդարեն. թագավոր ու նահատակ քո առաջն են եկել. բոլորը տեսնում են, բոլորի միջումն դո՛ւ ես արեգակի պես փալլում. բաս էս ի՛նչ տխուր ձեն ա, որ անկաջս ա ընկնում. բաս էս ի՛նչ կոծ, կսկիծ ա, որ վեր ա ըլում. բաս ո՛ւր ա Նազլուդ, ո՛ւր քո ջիվան երեխեքդ, որ թողել, գնում ես, չե՛ս հարցընում. բաս էս ի՛նչ քարեր են, որ չոքած տեղս ծնկերս ջարդում, մաշում են. չե՛, վա՛յ իմ գլխիս, արևիս. դո՛ւ ես երկնքումը, ե՛ս, ե՛ս, ողորմելիս՝ միայն երկրումը, էս փո՛ւշ աշխարքումը, էս խավա՛ր տարտարոսումը, էս փշալից ձորումը, ե՛ս՝ առանց քեզ. Մոսիհն, ու ո՛չ Աղասիհն, մարմինն, ու ո՛չ հոգին. լաշը դարտակ, բայց ո՛ւր հրեշտակն: Քե՛զ հետ կյանք քաշեցի, առանց քեզ թո՛ղ չըլի. քո կողքին արևս բաց էլավ, իմ առաջին՝ քոնը մեր մտավ. էս շունչը կրակ կդառնա, ինձ կերի. էս հողը դժոխք կդառնա, ինձ կմաշի. էս մարմինը, որ ինձ պետքը չի՛, քե՛զ, թո՛ղ քեզ դուրբան ըլի, քե՛զ. ինձ ո՛ւր ես թողում, դու գնում. ինձ ո՛ւր ես թաղում, դու թռչում. երկիրն մեկ տեղ վաչելեցինք, օրորոցում, չոլում դու էիր իմ կենաց ընկերը, դու՝ իմ սրտիս սիրեկանը, ես՝ քո ազիզ բարեկամը: Մկամ հերմներ, որ քեզ լաց չըլին, ազգական, սիրելի՛՝ վրեդ չկանգնին, բաս քո ջրատար Մոսիհ՝ քո պահած որդին, քեզ կուղարկի, ինքը կմխիթարվի՞, քեզ հոգին կտա, որ հետդ չի՛ գա՞. չե՛ չե՛, էդ սուրբ երեսիդ մեռնիմ, որ էլ չեմ տեսնիլ. դու գնա արքայությունը, ինձ տա՛ր դժոխքը, տա՛ր, էս աշխարքն էլ չի՛ կարող ինձ պահիլ. մարմնիս աչքը քեզ չի՛ տեսնում, հոգուս աչքը հո բա՛ց կըլի, քո ջանին մեռնիմ. թե երկնքումն էլ քեզ չկարենամ խտտիլ, գրկիլ, հետդ խոսալ, մոտդ նստիլ, հրեշտակ տեսնելիս, գլխովդ շրջելիս, դրախտումը նաչելիս, լիսն վրեդ գալիս, որ քեզ տեսնիմ, քե՛զ, Ա՛ղասի ջան. սուր խրեն սիրտս, էլի կխընդամ. կրակ վառեն գլխիս, էլի կցնծամ. տա՛ր, տա՛ր քո բարեկամն, թե չէ ես կգամ, որ ետ չմնամ... Ա՛խ...

— Ա՛խ, էս ո՛ւմ ձենն էր, որ լսեցի. քար առե՛ք, ա՛յ ջամըհաթ, ինձ սպանեցե՛ք. սուր առե՛ք, ինձ թիքա-թիքա արե՛ք,— մեկ ձեն էլ խալխի միջիցն վեր էլավ ու, հենց իմանաս, մեկ ամպ տրաքեց:— Մոսի՛, ո՛րդի, առաջ ի՛նձ սպանի, ի՛նձ թաղի, ա՛յ իմ կորած որդի, որ իմ ջանը հանեցիր, իմ սիրտը մաշեցիր. քո հա-

չևոր հորը խեղճ արի՛. էս սիպտակ մազերը քեզ դուրբան, բա՛լա
ջան: Թո՛ղ մեկ շունչդ էլա առնիմ, է՛. վա՛յ իմ գլխիս, արևիս:
Մո՛սի, Ա՛ղասի. երկի՛նք, քանդվեցե՛ք, աշխարք, հիմքդ կործան-
վի՛: Հա՛սան խան, դժո՛խք, դժո՛խք. ինձ տարե՛ք, ինձ կերե՛ք:
Մո՛սի ջան, բալա՛ ջան, դու ինձ թողիր, դե՛, կշտացի՛ր. ե՛ս պետք
է քո հողը բուռն անեմ, էս չորացած ձե՛ռները պետք է քեզ թա-
ղե՛մ. ընչանք էս գետինը չմտնիմ, քեզ երկնքումը տե՛ղ կանեն:
Գնա՛ք բարով, ազիզ ո՛րդիք ջա՛ն, գնա՛ք բարով. սիրով ինձ էրե-
ցիք, էս էլ էս սրով հոգիս ձեզ կտամ, մարմինս՝ հողին, որ ձեր
առաջին, աստուծո բեմին, իրա՛ր հետ խնդանք, իրա՛ր հետ ցըն-
ծանք, իրա՛ր հետ տանջվինք, իրա՛ր հետ մաշվինք. գնա՛ք բարով՝
հերընթերով,— ասաց ողորմելին:

Թուրը պապդաց, արինը շոռաց, սմպը գոռաց, օրը խավա-
րեց. թվանքները ճոռացին, դագաղները բարձրացրին, շարական
ու երգ վերջացրին, ու Քանաքոու Վերի եկեղեցին էրկու հեր, էր-
կու որդի մեկ օրում, մեկ տեղում մինչև էսօրը առել՝ պահել ա իր
սուրբ ծոցումը, որ դատաստանի օրը լիս քցի, իրանց փառքին
հասցնի:

Գերեզմանն կորած, հողումը թաղված,
Աչքից հեռացած, մտքից մոռացած,
Իրանք անլեզու, աշխարհն անիրավ,
Որ հայոց ազգիցն անթիվ ու անբավ
Էսպես քաջ որդիք խլեց, չկշտացավ.
Ո՛չ մատուռ նրանց գլխին կանգնեցավ,
Ո՛չ արձան նրանց անունը թողեց,
Ո՛չ ազգի միջումն հիշատակն լսվեց:
Դո՛ւ, քնքուշ Մուսա՛, որ ինձ շարժեցիր,
Իմ էրված սրտին զորություն տվիր,
Ա՛խ, էնքան չառնիս հոգիս, չմեռնիմ,
Որ իմ ազգի սուգն անեմ, հետո մտնիմ
Քո թևի տակը, նազելի՛ Մուսա:
Քեզ թո՛ղ Աղասին, իմ սիրուն Մուսա,
Էնքան ամանաթ մնա, որ սրտիս
Մուրազն, ա՛խ, առնիմ, հետո էս գալիս՝
Իմ ազգի հսկայքն ինձ որ նանաչեն,
Ինձ իրանց կշտիցն չզրկեն, չասեն.

«Անհրա՛վ որդի, մեր հողի վրա
Էնքան կանգնեցիր, կացար համեշա,
Մեր արի՛նը չէիր, որ չի՛ ցավեցիր,
Մեր արինը տեսած՝ դու մեզ չհիշեցիր»:
Ո՛չ, քեզ՝ Ա՛ղասի, սիրուն իմ Մուսա,
Որքան շունչս, արինս դեռ իմ վրես ա,
Ինձ քուն ու հանգիստ, ինձ փառք ու պարծանք
Ես էն կհամարեմ, որ իմ բոլոր կյանքն
Զոհ տամ իմ ազգին, որ ձեր առաջին
Ես, ա՛խ, պարգերես լինիմ, երևիմ,
Զեր գերեզմանին, սուրբ հողին մեռնիմ:—

<ԵՐՐԱՐԴ ԳԼԽԻ ՎԵՐՋԸ>

Զ Ա Ն Գ Ի

<1>

Ինչպես մեկ կատաղած վիշապ՝ երկնքիցը թռած, գլխիվեր ճողուլակ, մեկ տուտը Սևանի հանդարտ ծովումը, մեկ տուտը Արագի քրքրված դրաղումը, սար ու ձոր կխշոր տալով, քանդելով, տապալելով, քափ ու քրտինքը բերանը կոխած, գզգզած մազերը քյալլին ցցած, կապը կտրած, գծված, ռեխն ավազով, քարով, զիբիլով լիքը, էս կողմն, էն կողմն փնչացնելով, ճոթոնելով, ջարդելով, տակ ու դրաղ ծամելով, բրդելով՝ մեկ թևն իր ծոցի, էն սև՝, մուրճն ու չանգը կոխած, խևանդ-խևանդ կտրատած փորն ու դռնը բաց արած, ծառով, թփով զարդարած ձորի գլխովը քցած, մեկ թևն էն նե՛ղ, չո՛ր, տխո՛ւր Կաքավասարի² տակիցը որ ական թոթափել դուս չի՝ պրծնում, վազում,— ու հրո՛վ, սրո՛վ, բոցո՛վ, բրո՛վ, փռնչալով, մռնչալով, խռնչալով, քարի, քարափի գլուխ վե՛ր հատելով, իր փորը խցկելով, վեմ, ապառաժ իրար ծեծելով, կալծակին տալով, ճչալով, ճռնչալով, թնդալով, դղրդալով,— ցած ափները, ասսանահար գետինը պոկելով, պոճոկելով, քրքրելով, քրքրվելով, կենդանի, անկենդան, իսան, հալվան գետնին զարկելով, բամբաչելով, խլացնելով, քառացնելով, սրսրթացնելով, վրվրթացնելով՝ վառված, կրակված աչքերը արնով լիքը, չալը ցցած, ատամները դրճտացնելով, կրճտացնելով, դաշտ ու տափ՝ դրմբացնելով, դրնգացնելով, դմբդմբացնելով, դնգդնգացնելով, ու կալծակի թուրը բերնին բռնած, վրա պրծած որ չի՝ գալիս ամեհի Զանգին ու Ջորագեղ մտնում, որ Հայաստանի սուրբ գետինը ոտնատակ տվողին, մեր նախնյաց մաքուր գերեզմանները քանդողին, կործանողին, մեր նահատակաց սուրբ, անմեղ, արդար արինը թափողին, կխշորողին, մեր աստվածաբնակ տաճարները, եկեղեցիքը սվերողին, ապականողին, մեր հոյակապ թախտերը, քաղաքները խլողին, փչացնողին, մեր անճար, օրվան հա-

ցին կարոտ, եթիմ, ցրված, սասանած, գերի ընկած, հարամու, թշնամու՝ ձեռին կոտորված, երկրե-երկիր կորած, փչացած, խեղճ, անտեր ազգի տունը քանդողին, հողի հետ հավասարողին՝ ու մեր չար հարամու բունը, անօրեն թշնամու տունը, մեր արինը խմողի թախտը, մեր աշխարքը քանդողի ամարաթը, նրա արհմաշաղախ բերդը, նրա ոսկորաշեն բուրջը, նրա գողաբնակ տեղը, նրա գազանաբնակ հողը՝ քանդի՛, տապալի՛, փշրի՛, ավերի՛, տակ ու գլուխ, գլուխ ու տակ անի՛, քարեքար, պատեպատ տա՛, հիմնատակ, բրիշակ անի՛, կլանի ու՝ նրանց միջի ըլողներին, դրսի թաղածներին, գլխումը բուն դնողներին, տակումը քուն մտնողներին՝ քշի՛, տանի՛, սրբի՛, ողողի՛, թիքա-թիքա, փառչա-փառչա անի՛ ու՝ մեր խեղճ աշխարքի, մեր ողորմելի ազգի աղի արտասունքը սրբի՛, էրված, խորովված սիրտը հովացնի՛, զովացնի՛, մեր հագար տարվան թունալից, անբժշկելի լարեն կտրի՛, վերջացնի՛, որ հազարների, բյուրավորների ցավամաշ հոգին ուտում, կեղեքում, մաշում, տոչորում, սաղ-սաղ, դալար ու զվարթ՝ էս անգո՛ւթ ազգին, անողո՛րմ գազանին շատ տարի, շատ դար դուրբան էր տալիս, վերջացնում:

Գիշերվան մութը գետինն առած ժամանակին, որ մարդ իր շվաքիցն էլ սասանում, սարսափում ա, ու բազի դիվահալած, մահատագնապ անցավոր՝ երեսին խաչ հանելով, Հավատով խոստովանիմն ասելով, սրբոց, մարգարեից անունը տալով որ Զանգվի կարմնջի վրովը անց չի կենում ու Կոնդի չոր դարդուսը նի ըլում, սարսափը ջանն առած, լեզուն բերնումը սառած, աջու կողմըն՝ Երեանու զարհուրելի բերդն ու թուրքի գլոխանեքը (գերեզմանատուն), ձախու կողմն՝ դնգերը, ջաղացները, որ չեն ձորումը թխթխկացնում, չխչխկացնում, ու փոքր ինչ հեռու՝ չանգը կոխած, կամարակապ համամները ու տխուր Զորագեղը՝ փոստմն ընկած, ձենըները փորըները քցած, առաջին՝ Երեանու Շհարը, տրտում, դառնավարամ սգի քողն երեսին փռած,— որ չե՛ն երևում, հենց իմանաս, բոլորն անդունդն ա գնում, բարձիշ ըլում, քանի մարդ բարձրանում ա, վեր ըլում,— ու հեռըվանց որ արթուն շները տըների կտրներիցը չեն վնգվնգում, օռնում, հաշում, դշրու տալիս, էլի ձենները փորըները քցում, բարակ ձգում, զլում ու քթերիցը իրանց տխուր, սարսափելի կոնգոռնալը դուս թողում, նվում,— որ սուր-սուր սարերի, թափեքանց գլխըներիցը, տակըներիցը սովամահ գիլանը ֆորսի հոտն առած, փրփրած, անկուշտ բողազ-

Գներն ու ռիւրները չե՛ն բան քցում, ոռնում, շան պէս կոնձկոնձում,
 որ նրանց խաբեն, մոտ գան, Գներս մտնին՝ կամ իրանց գզգզեն,
 պատառեն, խեղդեն, դաղըթմիշ անեն, կամ մեկ անմեղ գառն, մեկ
 կաթնակեր, ճամփեն մոլորած, տունը կորցրած ֆորթ, կամ մեկ
 նախրիցը ետ ընկած, քուչում կամ քարի տակի կուչ էկած ար-
 դար կով, կամ առիւ յաբու, կամ ծնած դստաղ, կամ մեկ բեզա-
 րած, իրան համար հանգիստ, խաթրջամ նստած արոճող ոչխար
 գտնեն ու լափեն, կամ մեկ շատ բանացրած, հալից իսպառ ըն-
 կած, տիրոջիցը խոռված, տանից դուս արած, էստեղ-էնտեղ չոր-
 չոփ, ծերը սուր փուշ կրծելով, ծամելով, դոթուր անկաջները թա-
 փեթափ տալով, իր սև օրիցը բեզարած, ձեռք վերցրած, անա-
 տամ, անպոչ, անլեզու, հաշվան՝ մեկ խղճալի է՛շ, պարապ ուստ
 բերեն, հետը խաղան, ծլունգ-ծլունգ ըլին, ջահելությունը միտքը
 քցեն, որ մեկ քեֆը բացվի, սազը քոքի, ու հետո իրանք իրանց
 բանը տեսնին, մաքրազարդեն: Սրանց սոսկալի ձենի հետ էլ որ
 ձորերի միջիցը, քարափների արանքներիցը, ապառաժների գլխը-
 ներիցը, բաշերիցը, թփերի, քոլերի տակերիցը, դգերիցը, չուերիցը,
 բներիցը մեկ կատաղած արջ կամ խորամանկ աղվես, կամ վախ-
 լուկ չախկալ, կամ մեկ ամենի քաֆթառ, կամ գլխիցը ձեռք վերց-
 րած ալապաստրակ իրանց սոսկալի, զարգանդելի ձեններն իրար
 չեն խառնում, գոռում, մոռում, բռռում, մնկմնկում, ճնկճնկում, ճը-
 չում, խառանչում, բառանչում, բղղում, ճղղում,— կամ անքուն
 աքլորները իրանց տիրոջը կամենալով արթուն պահպանիլ՝ լեղա-
 պատառ, սասանահար վախտ-բեվախտ որ չեն թրպրտում, թևընե-
 րը թափեթափ տալիս ու ճղլանի ձենները նեղ բողազներիցը՝ մեկ
 խոր ձորից, մեկ փոսից, մեկ բաշից յա կտրից հանում, կանչում,
 անկաջ դնում, էլ ետ ծղրտալով կանչում,— կամ հիմիկ ոսի սալ-
 դաթը, էն ժամանակը թուրքի դարավուլ սարվազը, ինչպէս գերեզ-
 մանիցը նոր դուս էկած, դիվանոնց ճանկն ընկած, ոտ ու ձեռք
 կապած, սուրն առաջին հանած, մահապարտ մեղավորի պէս որ
 ուզում ըլին՝ հոգին հանեն, թե բերանը բաց անի յա ծպտա,—
 սևամորթ փափախը խոր, քիթը քցած, աչք ու ունքը կալած, ծա-
 նրը, կամաց, սուս, փուս՝ ոտները փոխելով, աչքերը տրորելով,
 քնահարամ արշտոտալով մեկ մութը պուճախից կամ մեկ բուդկի
 տակից որ գլուխը չի՝ հանում ու խուլ, խոր, զարհուրելի, փորն
 ընկած ձենով «Սլո՛ւ-շա՛ն» կամ «խաբա՛ր-դա՛ր, սա՛ր-հե՛-սա՛ր»
 գոռում, կանչում,

Որ քամին մեկ կողմից, բութն ու բորյազը մյուս դեհից, ինչպես կատաղած դահիճ, սրարձակ դամշով, մաթրախով, թոփով, մզրախով՝ սարերի գլխըներիցը, ձորերի միջիցն թո՛ղ, ա՛վազ, հո՛ղ, ա՛ղբ, գի՛թիլ առաջն արած՝ փոսերիցը հանում, պատեպատ չի՛ տալիս, գետնիցը պոկում, քարափին խփում ու՝ ծառերը ջարդելով, խոտերը ճոթռելով, գետինը ճղելով, մեկ ճուղք մյուս ճղքի, մեկ պատ մյուս պատի, մեկ տախտակ մյուսին չի՛ սաստիկ կացնում, թրխկթրխկացնում, զրխկզրխկացնում, մեկ էս քարափին քարով բռնցքում, մեկ էն սարի գլխին դմբզում, բամբաչում, զրխկացնում, թրխկացնում ու մեկ կիտուկ հող, ավազ՝ շունչդ քաշելիս կամ աչքդ բանալիս, էրկու ձեռով բերանդ ու բաց քիթդ չի՛ խցկում, լցնում, շունչդ կտրում, քիթդ կալնում, փակում, աչքերդ խավարացնում ու անկաջիդ տակին թոփի գլուխի պես կամ սուր մետի մման վզվզալով, դղղզալով ետ դառնում շուտով, երեսիդ էնպես խփում, որ աչքերդ մթնած՝ կեծակին են տալիս, ու դու տեղնուտեղդ չե՛ս շշմում, շշկում, թմբրում, սասանում, քարկտրած մնում ու սառած կանգնում, ու աներևույթ թշնամիդ էլ ետ ձին չափ քցած, էլ ետ հրեղեն բոցով որ չի՛ սարերի, ձորերի ջանին դաստ անում, հասնում, թակում, մեղմանը բաց անում ու՝ թնդում, դղրդում, շաչում, շառաչում, ճալթում, կատաղում, փրփրում, խոնչում, դոնչում, գլուխը թափեթափ տալիս, նալում, ձենը կտրում,

Որ աչքդ կիրացած, ջանդ սասանահար, խելքդ թռած՝ հանկարծ, ինչպես մեկ խոր քնից, գլուխդ ահիվ, սասանմամբ չե՛ս բարձրացնում, առաջդ քցում ու՝ ամեն մեկ խորից, փոսից, ամեն մեկ ճեղքից, մութը արանքից էս կողմն, էն կողմն՝ հեռու տեղերից, ծառերի տակից, բաղերի միջից, սարերի գլխից, Ջանգվի՛ դրաղներիցը ծիրանի փետի չաղ ալավը, կրակի վառ բոցը հրեղեն ձողու պես վռվռալով, խավար գիշերը թրի պես ճղելով, սև մութը, թանձրամած ծուխը, պեծն ու վառ կալծակը վերըվեր չե՛ն խփում, ձորերն ու երկինքը կրակում ու՝ խավարը կոխած սև խոռոչների, բերանները բաց էրերի, օձի պես ոլորված ճեղքերի, քաջքի պես ճուլուակ էլած, չանգըները դես ու դեն քցած, մազերը խճճված, ծամերը կախ ընկած, դոշ ու ծիծ ետ ճոթռած՝ բարձր ծառերի, դիվի պես երեսը դեմ տված կանգնած, անահ, անվախ, սուր, ցից, իրար վրա թիցկը տված, երես-երեսի դրած, բերանբերնի խփած, խավարադեմ ծոցըները բաց արած, ատամները

սրած զարհուրելի քարափների սոսկալի սփաթները չէ՛ն բաց անում ու էլ ետ խփում, ու էլի՝ խելքը ցնդած, ընկնավորի (թուլացկոտ) պես շատ թրպրտալուց, ծեծվելուց, դես ու դեն գլորվելուց, դրճտացնելուց, դնջոտացնելուց հետո իրանց-իրանց էլ ետ աչքըները չեն խփում, տազ անում, անշունչ, անաս մնում, դադարում:

Ու է՛ս հաղաղին, է՛ս սարսափելի սհաթին, որ բազի վախտ էլ երկինքը իր ալեկոծությունը չի՛ սկսում, սարերը ջարդում, ամպերը տրաքացնում, կեծակի լախտին աշխարքի չորս կողմի գլխին վեր հատում, փշուր-փշուր անում, ու Զանգին, սարսափելի Զանգին էլ որ մեկ կողմից չի՛ գոռում, մոնչում ու թուլ ձեռները, անկազմ ոտները քարեքար տալիս, թոզ, դուման անում, բառանչում, ու քամու վզվզոցը, երկնքի տրաքոցը, քարափի ճռճոցը, սարերի դրմբդրմբոցը, ձորերի դրնգդրնգոցը, ծառերի խշխշոցը, էրերի խոնչոցը, դնգերի, ջաղացների թրխլթրխկոցը, գետնի զրզնդալը, տների թնդալը, պատերի տրաքտրաքոցը, շների, գիլանոնց, արջերի, դարավույների, աքլորների ծղրտալը, ճչալը, ծվալը, բառանչիլը, խառանչիլը, վնգվնգոցը, կոնձկոնձալը, ճրնկ-ճրնկալը իր ահագին ձենի հետ չի՛ խառնում, ոլորում, փորը քաշում, էլ ետ, մեկ բուպեից հետո, հազար կողմերով դուս փչում, ցանում ու սարերի, ձորերի, քարափների բերանը էլ ետ լեզու դնում, էլ ետ շունչ տալիս, որ իր քաղցր ձենը քաշեն, դամ անեն, իրանց դժոխային քեֆն արամիշ անեն, պար գան, ծափ, ծիկա տան, ծղրտան, դիծինա քցեն, քեֆ անեն, խնդան, ցնծան,

Էս հաղաղին, որ աստված ո՛չ շհանց տա, մեկ անծանոթ անցավոր որ Կոնդի դուզը չի՛ նի ըլում յա Ապրանքափոսիցը՝

ա. Ապրանքափոսն Ապովենց մեճծ իգու տակին ա: Քանաքոցիք պատմում են, թե մեկ չորան, էը բարձած, տուն գալիս, տեսնում ա բիրադի իրան աղաքին մեկ դուռը բաց էլավ: Մտնում ա ներս, աչքո բարին տեսնի. ջավաճիր, մարգարիտ, ոսկի էճքան ա, որ էլ Ռեսաբ չի՛ կա: Իշի բեռան մոխիրը դեն ա ածում մեր բախտավոր իշարածը ու խարարները պրտեպրո:Նկ ջավաճիրով լցնում, դուս գալիս: Մի քիչ տեղ որ գնում ա, ձեռի փետը միտն ա ընկնում: Աչքը չկշտացած՝ էն փետի խաթեր ետ ա դառնում, Ռենց ուզում ա, որ դուս գա, էլ դուռը չի՛ կա: Նա էն տեղ ա իր սև օրը լաց ըլում ջավաճրի միջում, իշարածի խաթունը՝ տանը, չունքի անբան էը ի՞նչ կիմանար, թե վրիճը ջավաճի՞ր ա, թե աղբ. տնքալով որ տուն չէկավ, դռանը անկաջները կախ արած կանգնեց, ազիզ խանութի լեղին պատռեցավ, որ տեսավ, թե իր սիրելի մարդը չի՛ կա: Քիչ էր մնացել, որ իր գրաստին էլ խոկի, բիրդանբիր մեկ զատ պսպղաց: Էնպես իշին ուրիշ մարդ թագավորություն կտար, ամա մեր տանտի-

վեր գալիս, որ Զանգվի վրովն անց կենա, աչքը շաղվում ա, գլուխը շվարում, ու հենց իմանում ա, թե մեկ ահագին սար վրեն փուլ էկավ: Էլ ո՛չ առաջն ա տեսնում, ո՛չ ետևը: Քարացած, փետացած՝ մնում ա տեղնուտեղը սառած, ցցված: Ինչպես երագում՝ մեկ հեռու, խոր տեղից մեկ խուլ դղրդոց անկաջող ընկնի, ու հենց իմանաս, թե երկինք, արեգակ, լուսին, աստղեր իրարոցով դիպան, փշրեցին, փշրվեցին, կոտրեցին, կոտրվեցին ու գոգռալով, գոռոգոռալով, պատռելով, պատռվելով վեր թափեցին, ու՝ անդո՛ւնդ, դժոխք, արքայություն, տարտարոս, հրեշտակք, դիվանք, սերովբեք, քերովբեք, Սաղալել, Սաղանալել, սասանած, սփրթնած՝ հրեղեն սրով, բոցեղեն թրով, ամպով, կալծակով թոթափում են, վեր ընկնում, որ աշխարհս վերջացնեն ու հետին դատաստանի տեղը պատրաստեն, որ Աթոռ աստվածությանը իջանի, բազմի ու անիրավ մարդիցը հեսաբ պահանջի, որ հենց իմանում ա, թե աշխարքն իրն ա, ինչ ուզենա, է՛ն պետք է անի,— էսպես ա ողորմելի անցավորի հոգին ու սիրտը խառնվում, երկրից երկինքը գնում, իր վախճանը տեսնում ու արյան քրտինքը երեսիցը՝ մեղա ասելով, իր մեղքն հիշելով սրբում, երբ աչքի առուջին կամ Քանաքեռ ա բացվում, կամ Նորագեղի դուռը:

<2>

Էսպես մեկ սարսափելի գիշեր էր, որ Ապուլենց Հարությունը՝ Քանաքոռու ազնվական անձանց մեկը, Ապրանքափոսիցը դուռ էկավ, մտավ իրանց մենծ իգին, տեսավ կատեպանները (բաղմանչի) բոլոր քնած են, էլ դիմիշ չարավ, որ նրանց վեր կացնի, ինքը, քյահլան ձին տակին, ասեց՝ մեկ Գորգոչանը դիպչի չա բանդը գնա, տեսնի, թե ջուրն ընչի՞ չի՝ գալիս: Մութն էնպես էր

կինը չունե: Իր օրումը մարդին էլ չէր էնպես մուրազով, կուշտ փորով պաշարել, ինչպես մեր էշ աղաչին, ու նոխտիցը բռնեց, տուն հրավիրեց: Էշն էս սիրովը զարմացած՝ լեզու էլավ ու, ինչ որ անց էր կացել, պատմեց: Աստված իշարածի դատաստանը քաղոր անի ու ամեն քրիստոնեի էսպես մեկ իշարածի ուստ բերի:

Մեր գեղըցիք էս էլ են պատմում, թե էս տեղ էր, որ մեկ ռիգուն, բազարիցը գալիս, տեսան, որ իրանց Ապով պապը, որի լավությունը հազար բերան էսօր էլ պատմում ա, ետին շունչը հասած՝ վեր էր ընկել: Որդու հարսանքավորը տունը լցվել էին, որ հոր մեկողը ուղնեթին դրած բերում են: Հարսանիքը սուգ ա դառնում: Էնպես են ասում, թե դեղել են:

գետինն առել, որ մատդ կոխէիր մարդի աչքը, չէ՛ր իմանալ: Բայց բոլոր քարերն էլ, որ բերանները բաց անէին, նրան չէ՛ին կարող վախացնիլ, է՛ն աներկչուղ սիրտն ուներ մեր քաջ հայազգին: Թուրք ու հայ էսօր էլ կասեն, թե նրա ո՛չ սրտին, ո՛չ լեզվին սարն էլ չի՛ դիմանալ: Բաղերի գլխովը տվեց մեր սրտոտ իգիթն ու հասավ Գորգոշանի գլուխը. ջրի բաժանվելու տեղն էս էր: Տեսավ, որ էտեղ էլ ա ջուրը պակաս: Հենց Վերի եկեղեցու գլխովը պտըտեց, որ մեկ բանդին հասնի, ջուրը կապի, աչքը որ ետևը չքցեց, մնաց տեղնուտեղը սառած: Զէ՛ր գիտում, թե ի՞նչ տեղ ա: Ուզում էր ետ դառնա, սիրտը չէ՛ր տալիս, ամոթ էր համարում իր գլխին. ձիուն էր զոռ անում, ձին անկաջները խլշացնում, փնչացնում էր, ետ վազում: Չորս կողմը բոլոր մութն ու խավարը կոխել էր, բայց եկեղեցու գլուխը արեգակի պես փալլում, ճաճանչում էր:

— Սո՛ւրբ Մարիամ Աստվածածին, քեզ եմ կանչել,— ասեց քարեպաշտ հայազգին, ձիուցը վեր էկավ, մեկ դրաղ տեղ կապեց, ու երեսին խաչակնքելով՝ մտավ գերեզմանատունը:— Աստված ձեր հոգին լուսավորի, ա՛յ արդար ննջեցյալք,— ասեց ու մտավ ժամի հայաթը:

Քանի Քանաքոռու աստղը ծովել, հազար հարուստ տանիցը քառասուն տուն էին մնացել ու էն էլ աղքատ, ողորմելի, օրեն հացին կարոտ, էս սուրբ եկեղեցին էլ մնացել էր ամալի: Տարեներ մի անգամ էին էնտեղ ժամ ասում, էն էլ սուրբ Աստվածածնի տոնին: Հստուր համար դուռ ու հայաթ բաց էր մնացել: Հենց մեկ քանի ծունր դրեց, էրեսին խաչ հանեց ու ուզում էր, որ սեղանն էլ համբուրի, գնա իր բանը, էնպես գիտես, թե թևիցը քաշեցին: Էնպես որ սառած, կանգնած մնաց ո՛չ, հանկարծ մեկ երեխի ձեն ընկավ անկաջովը: Կարծում էր, թե երազ ա տեսածը, յա միտքն ա իրան խաբում: Մի քիչ էլ որ անկաջ դրեց, մեկ ուրիշ ձեն էլ ընկավ անկաջը, ու պարզ լսում էր, որ մեկ երեխա՝ ձենը փորն ընկած, հեկեկում էր:

— Նա՛նի ջան, նա՛նի. ա՛խր մի աչքդ էլա բա՛ց, ա՛յ քո չաբը տանիմ: Մեզ ո՛ւր բերիր էտեղ. էս մեռելները հո մեզ կուտեն. մեր ճարն ո՛վ կըլի, որ դու էլ քնում ես, աչքդ չէ՛ս բաց անում: Վէ՛ր կաց, գնա՛նք տուն, քանի՞ լաց ըլիս, քանի՞. մեր ափուն հո կորել չի՞, էլ ետ կգա, ի՞նչ ես էդքան սուգ անում: Մեզ թաղի՛ր, նա՛նի ջան, մեզ մորթի՛ր, ջուրն ածի՛ր. մեզ հարամին կգա, կտանի, մեզ ի՞նչ կանես էս չոլումը: Նա՛նի ջան, նա՛նի. էդ սի՛րուն

երեսիդ դուրբան, ընչի՛ չես մեկ խոսք էլա ասում, ախր քո երեսեքը չե՛նք, ի՛նչ արիճք, որ էդպես մեզանից նեղացար: Էլ քո սիրտը չե՛նք կոտրիլ, քո հոգուն մատաղ, թաք ըլի մեզ սիրես, մեզ պահես, մեզանից էլ չխոռովիս:

Ա՛խ, էնպես զարհուրելի սհաթին ո՛ւմ անկաջն էս ձենն ընկնի, որ սիրտը չտրորվի, չխորոզվի: Նազլուն էր, ա՛յ իմ սիրելի կարդացող, էս մերը, որ երեսեքը սուգ էին անում: Թե դու էլ սիրտ ունիս, չե՛ս ասիլ, թե շինովի ա էս պատմությունը:

Սե՛րը, սուրբ սե՛րը, որ բալասամի պես կենդանացնում ա մարդի սիրտը, ու թրի պես կտրատում, սե՛րը, ի՛նչ ասես, որ չանի: Ի՛նչ կրակ կարա անես սիրտը տաքացնիլ. ի՛նչ ջուր կարա սիրով վառված հոգին դինջացնիլ, հանգցնիլ: Սիրով վիրավորված սիրտը ո՛չ հողից կվախենա, ո՛չ գողից. ո՛չ ահ գիտե, ո՛չ վախ. ո՛չ սրից երեսը կդարձնի, ո՛չ ջրից: Քանի շատ ա սերը, էնքան քաղցր ա տանջանքը: Սերին ի՛նչ կդիմանա, որ մահից վախենա: Սիրելուցդ զրկված վախտը հողն էլ ա բերան առնում, քեզ ուտում, քարերն էլ են աչքումդ մզրախի պես ցցվում, քաշած շունչդ էլ ա քեզ կրակ դառնում, էրում, փոթոթում, քո մարմինը քեզ գերեզման դառնում, քո սիրտը՝ քեզ դժոխք, քո աչքը՝ քեզ արյան ծով, քո ձենը՝ քեզ ամպ ու որոտումն, մրրիկ, փոթորիկ, բաս Նազլուն կարո՞ղ էր առանց Աղասուն կենալ, ասած խոսքը, նրա հետ կապած ուխտը չկատարի՛լ: Ճշմարիտ սիրողի մեծ մուրազն հենց էն ա, որ իր սիրելու խաթեր մեռնի. Նազլվի սիրելին էր հողումը, է՛ն թագավոր տերը, է՛ն աշխարքի աչքի լիսը, բաս նա կարո՞ղ էր, առանց նրան, աչքը բաց ու խուփ անի՛լ կամ մեռած, գնացած շունչը երկար քաշի՛լ:— Գլուխը դրել էր գերեզմանի վրա, երեսեքն առել դոշի տակը, լիսն էկել էր, չորս կողմը բռնել, բայց ողորմած երկինքը դեռ չէ՛ր կամեցել նրա սուրբ հոգին առնի, ընչանք էն անմեղ երեսեքանցը մեկ տեր լիս կընկներ: Նա էլ հո գլխըներին կանգնած էր: Մեկ ա՛խից ավելի էլ ո՛չինչ չիմացավ էս էկողը: Երանի՛ էն գերեզմանին, որ էսպես կսիրեն: Երանի՛ էն հողին, որ երկու սիրելու մարմինը էսպես իստակ, անարատ կտանի, կպահի, որ աստուծո առաջին պարզերես դուս գան, մեր երկիրն էլ, որ երկնքի քիրն ա, մեր հոգին էլ, որ աստուծո սուրբ պատկերը:

Նազլուն էլ գնաց, Աղասին էլ, նրանց երեսեքանց տերն էլ աստված հասցրեց, աստված կթողա՞, որ իր որդիքը կորչի՛ն: Մենք

Էլ մեկ օր կերթանք, մե՛նք էլ, ա՛յ իմ սիրելի հայրենակիցք. ասա՛, որ Աղասու գերեզմանն էսօր քո աչքիդ առաջին էլ ըլի, դու չե՞ս ա՛խ քաշիլ, ողորմի տալ ու մտքումդ ասիլ. «Ի՞նչ կըլեր, ես էլ քո ընկերների մեկն էի էլել, իմ Հայրենիքը սիրել, իմ ազգին լավությունն արել, որ ինձ էլ էսպես սիրեին, իմ անունն էլ էսպես աշխարքի միջումը փայլեր»:

Գանձ ու հարստություն, պատիվ ու նշան, իշխանություն ու մեծություն մինչև գերեզմանի դրադն են մեզ հետ ընկեր և ո՛չ բարեկամ: Սառը պատանը երբ որ աչքդ փակեց, էդ հոգելից աչքին դուրբան, ա՛յ իմ Հայկա ազնիվ զավակ, տխուր զանգակը երբ որ քեզ ժամը տարավ, քո պայծառ երեսը երբ որ մահվան դեղնությունն առավ, քո անոշ լեզուն երբ որ փետացավ, սիրուն արևդ երբ որ մեր մտավ, դագաղդ՝ գերեզմանը, մարմինդ՝ հողը, հոգիդ երկինքը գնացին, դինջացան, էն սզավորքն էլ կդինջացան, որ քո խաթեր իրանց սպանում էին, ու նրանք էլ որ մեռնին, խունկն ու մոմն էլ վրիցդ կպակսի, ժամ-պատարագն էլ: Կարելի ա, որ էն քո վրա անսիրտ, անջիգյար ման էկողների, խնդացողների շատը նրանք են, որ հացդ ուտելիս, բարությունդ վալելիս քո սաղ վախտը ուզում էին ոտդ համբուրեն: Աշխարքն էսպես ա: Քո գո՛րծքը, քո գո՛րծքը միայն քո անունը կպահեն: Հայրենասիրությունը միայն քո հիշատակը կտոնի, ազգասիրությունը՝ քո արածը կենդանի կպահի, քեզ սրբի տեղ պաշտիլ կտա: Հայրենաց հողը քո անգին ոսկերքը, քո սուրբ գերեզմանը ամեն անց կենդի առաջին կկանգնացնի ու մատով ցույց կտա.

— Թե ուզում ես քեզ էլ էսպես սիրեմ, զգվեմ, դու էլ ինձ սիրի, ինձ պայծառացրու՝ ի՛մ սիրելի որդյակ:

Աղասու սուգն արինք, պրծանք. ա՛խ, նրա պես հալազգի հիշատակը, նրա պես անմահ հսկայի պատմությունը ե՞ս չպետք է գրեի: Երանի՛ էն սհաթին, որ մեկ ազնիվ հայի ծնունդ իմ անպիտան լեզվի վրա բարկանա, իմ անպիտան գրությունը դեն քցի ու ինքը նորեն էնպես գրի մեր քաջ հայերի պատմությունը, որ լսող-կարդացող վառվի, բորբոքի, զարմանա, հիանա ու էն գրողի դալամն ու գիրքը, ինչպես Պետրարքին³, մասունքի տեղ պաշտի, ծոցումը պահի: Սերն էր, որ ինձ համարձակություն տրվեց, որ գրեցի, թո՛ղ կարդացողը պակասությունս երեսովս չտա:

Գնա՛նք մեկ Զանգվի դրադն էլ, մեկ մեր սուրբ Զանգին էլ տեսնի՛նք, մեկ նրա ձորն էլ օրով տեսնի՛նք, չունքի գիշեր էր, որ

վրովն անց կացանք, գիշերվան տեսածն ու ցերեկվանը մեկ չի՝ ըլիլ. մեկ էլ մեր սուրբ Հայրենյաց հողը մտնինք, հետո ձեռ-ձեռի տա՛նք, սիրտ-սրտի, իրար գրկե՛նք, դռն-դռնի տա՛նք, ու որ արտասուցքը մեր աչքը կալնի, ցավն ու կսկիծը մեր բերանը փակի, սար ու ձոր մեր ձեռնը խլեն, ու թե մեկսումեկս երկնքումն ըլի, մյուսը՝ գետնքումը, ո՛ր լուսնի տակին որ կանգնի, ո՛ր աստղին որ մայի, ո՛ր ծովի դրաղին մտի, ո՛ր սարի գլխով անց կենա, աչքը երկինքը քցի, ձեռը՝ փորը, ու առաջին ա՛խը, առաջին կաթը, որ թափի կամ բերնիցը դուս գա, է՛ն ըլի, որ ասի.

— Բա՛րեկամ, բա՛րեկամ, դու գնացիր, ես մնացի. ասած խոսքդ գետինը չի՛ քցեցի, Հայրենյաց սերը միշտ սրտումս ունիմ, Հայրենյաց ուղուրին կյանքս ետ եմ դրել: Ձի՛ դարդ անես, չի՛ ցավիս, ինձ հիշես, կարողություն խնդրես:

<8>

Զանգի՛, Զանգի՛, գեղեցի՛կդ իմ Զանգի՛: Քո երկնաման երեսը տեսնելիս, քո տխուր ձեռն լսելիս, քո սուրբ ջուրը բերան առնելիս, քո ծաղկազարդ ձորերի միջումն, քո զովարար ափների դրաղին, քո սիպտակ, լուսաթաթախ փրփրի տակին, քո պարկեշտ Մամբոու ափին⁴, քո խնկահոտ ծառերի տակին, քո անմահական ծաղկների միջին, քո էդ տրտում, դառնավարան լացի, բոթի, սգի ձեռն առնելիս, քո սիրուն աչքերի աղի արտասուցքը տեսնելիս բաս ի՛նչ կըլեր, որ քո բախտավոր, վաղուց հեռացած, մեր գլխիցը պակսած մեծագն, քաջագոր, աշխարհասասան, անհաղթելի, անպարտելի իշխանաց, աշխարհակառույց թագավորաց, մեծագոր, քաջաբազուկ հսկայից, տարաբախտ, վատաբախտ, թշվառացյալ, գերեվարյալ, տատանյալ, տարտամյալ, զուրկ, թափուր, սրախողխող, քարակոշկոն, հայրենամերկ, կենսակորույս, տնանկ, սգավոր, աղքատ, չքավոր որդիքը ու թոռունքը մեկ միտք անեին, գլխըներին վա՛յ տային, իրանց սև օրը լաց ըլեին, թե ո՛վ քեզ առաջ՝ ուրախ ձայնիվ, բարձրադիր ճակատով, երկնաման պատկերով, արծվահալաց աչոք, հսկայական դիմոք, քաղցրամոք ժպտիվ ողջույն տվեց, քո համն առավ, <քո լեզուդ ծծեց, քո ջուրը խմեց,> քո ծաղկըներիցը խնդալով, ցնծալով հոտ քաշեց, քո քաղցրահամ պտղըները ախորժանոք ճաշակեց, քո հով, զովարար դրաղին էկավ, բազմեց, քո սուրբ, անարատ գիր-

կը համբուրեց, քո անուշահոտ վարդը, քո պարկեշտ մանիշակը ողջագործելով, խանդաղատելով քաղեց, <ծոցը դրեց,> ու պերճ դիմոք, վսեմ ծանրությամբ իր քաջ բազուկը վրեժ մեկնելով, տարածելով ու՝ իշխանական զորությամբ, խորհրդածու ուշիմությամբ էդ սուրբ ասիներիդ, էդ ազնիվ ձորերիդ, էդ անդրդվելի քարափներիդ սուր նայելով, էդ անահ, քաջ սրտիդ, էդ փրփրուն, ամենի, սարսափելի ալյացո երկա՛ր հիացյալ, ապշյալ մնալով՝ խրոխտ ձայնիվ, հզոր շրթամբք, վճռահատ, ազդու բարբառով, երկնալից բերանով, քերովքեական լեզվավ գոչյաց.

— Հրազդա՛ն՝, դո՛ւ ես իմ այսուհետև նազելի՛ բնակարան:

Այս քա՛ջ բազուկ, այս լայնալի՛ն աղեղն, այս նետ երեքթևեա՛ն, այս կուրծ քաջակո՛ւռ, ամո՛ւր, այս աշխարհասասա՛ն, անընկճելի՛, անվանելի՛ հսկայից սիրագումա՛ր դասք, քե՛զ լիցին յայսմհետև պահապա՛ն, պաշտպա՛ն՝ սխրալի՛դ իմ Հրազդան: Յնծա՛, զուարճացի՛ր, բերկրեա՛ց, փարթամացի՛ր, հրճուեա՛ց, զուարթացի՛ր, գեղեցի՛կդ իմ Հրազդան: Թո՛ղ ծոց քո ցնծալից, թո՛ղ դաշտ քո զուարճալից ուռճացի՛ն, ծաղկացի՛ն. ընձիղեսցե՛ն, բողբոջեսցե՛ն պտուղս հազարաւորս, սերմանիս բիրաւորս՝ ի կերակուր իմ սերընդոց, ի ցնծութիւն իմ զաւակաց, ի վայելչութիւն իմ ազանց դիցազանց: Իմ տո՛հմք ժառանգեսցե՛ն յայսմհետև զայս դաշտ երկնատիպ, իմ շառաւի՛ղք եղիցի՛ն քեզ թըշնամայա՛ղք խնդակիցք: Այս լերի՛նք երկնամբարձք եղիցի՛ն իմ պատուարք մշտահաստատք. այս դաշտավա՛յր չքնաղաղե՛մ իմ քաղցր օթեան: Քո ձո՛ր ծաղկածի՛ն՝ իմ նազելի զբօսարա՛ն: Իմ անուն կնքեսցե՛, դրոշմեսցե՛ զայս մաքուր, վայելչագեղ սահման, զի ո՛չ գտի երբէք ի բոլոր ուղիս, յերկարատև չուս իմ բացական՝ սմա հանգումատիպ տեղի յարանման. սա՛ կոչեսցի՛ այժմ և յայսմհետև, մինչև ցօրն յափտենակա՛ն՝ Հայաստա՛ն...

Զանգի՛, Զանգի՛, անողորքելի՛ իմ Զանգի՛. սի՛րտ իմ մորմոքի, աղի՛ք իմ գալարին, ոսկե՛րք իմ քստմնին, ո՛ւշ իմ աղմկի, հոգի՛ իմ բորբոքի. տուաչտի՛մ ի ցաւս, վարանի՛մ ի ծուփս, հառաչե՛մ լալով, հայցե՛մ ողբալով. ա՛ն զիմ արտասուս, տո՛ւր ինձ սփոփ, յոյս:— Քանի՛ցս, քանի՛ցս կանգնեալ ի վերայ ահեղատեսիլ քարաժայռից քոց, խայտալով ի ծաղկանկար, երփներանգ ծոց քո հրաշագեղ, մինչ տղայն էի, խնդայի, խաղայի, ցնծայի՛

ա. Զանգի: <Հրազդան է անուն Զանգի գետոյն>:

զմայլեալ, ապշեալ, մերթ ևս զարհուրեալ, սասանեալ, յաճեղ-գե-
ղեցիկ դէմս քո զայրագին, ահիւ, սարսափմամբ՝ կամ ի գիրկս
ծնողաց վազէի, կամ խնդութեամբ, ցնծութեամբ յալիս քո կայտ-
ռէի,— այժմ թանձր հառաչք և թախիծք <հոգետանջք՝> կուտա-
կեալք ի մրրկայոյզ, վարանեալ սրտէս, առ քե՛զ համբառնան,
առ քե՛զ գոչեն, ի քե՛զ մեռանին, ի քե՛զ կարկամին:

Զանգի՛, Երա՛սխ, Հրազդա՛ն, Արա՛զ. կաթնահա՛մ ստինք
մօր իմոյ սիրելւոյ և զորովագութ ծնողի՝ Մեծինն Հայաստանի:
Ո՛ր ձեր տիեզերատօն անո՛ւն, ո՛ր այն ոսկեղէն դա՛րք, ո՛ր
դիցազանց բո՛լք. ո՛ր հսկայից կանա՛ռք, ո՛ր արօռանի՛ստք,
ո՛ր քաղաքք, ամբարտա՛կք, <ուր> բրգունք, ապարանք, կըր-
կէսք երկնահրոսք, տաճարք պանծալի՛ք, շէնք զուարճալիք՝ որք
զձեօքն պնդագոյն զօդի, հզոր ձեռամբք, ամուր բազկօք, քնքուշ
սրտի, խանդակաթ սիրով, զորովածպիտ դիմօք պաշարեալ, պա-
տեալ՝ խանդադատէի՛նն, փարէի՛նն, ողջագորէի՛նն, փաղաքշե-
ի՛նն և գիրկս արկեալ զանուշահամ, երկնատի՛պ ձերովք լանջօք՝
համբուրէի՛նն զնոսա ի համբոյր սրբութեան, ի նշան սիրո՛յ մըշ-
տական, ի ջերմեռանդն ուխտ մտերմութեան, հարազատութեան:

Զանգի՛ իմ, Երա՛սխ, Մասի՛ս, Ալագեա՛զ.
Դեռ կանգնիք անմոռ՛ւնչ,
Դեռ հայիք անշշո՛ւնջ:
Գնայք միամի՛տ, հոսէք ի մեր հովի՛տ,
Սպառնա՛յք ամպո՛ց, խիզախէք ձորո՛ց,
Վարսագեղ ալեօ՛ք, կատաղի դիմօ՛ք,
Ոմն ձիւնափա՛յլ, ոմն արծաթափա՛յլ,
Ոմն ի փողփողիւն, ոմն ի փրփրիւն,
Ոմն վանէ զերկին, ոմն ճնշէ զգետին,
Ոմն ի ձիւնեայ պսակ, ոմն ի ծաղկանց թագ՝
Յարշալուսին տես, լուսնին ի պայծառ, հեզ՝
Ողջունէք միմեա՛նց, համբոյր տայք շրթանց
Զեր սուրբ ստորոտաց՝ խնկածին դաշտաց
Հայկազա՛նց վայրեաց, <սուրբ անդաստանաց:>
Երկիր՝ աւերա՛կ. դաշտք մեր՝ անբնա՛կ,
Անսի՛րտք, անողո՛րմք՝ հի՛մ եղէք վկայք
Կորստեան ազգի՛, աւերման դաշտի՛
Զքնա՛ղ քաղաքաց, հզօ՛ր իշխանաց,

Որոց զարմ և ճիռ ի ձեռս թշնամեաց,
 Ի բանտ, դառն յոճիր, անօրէն ազգաց
 Զոհ եղէն ի սուր, մտին ի բոց, հուր,
 Թողին զմեզ ի սուգ, յարեան արտասուք,
 Վտարիլ յալ աշխարհ, զսուրբ Հայրենեաց վայր»
 Սգալ, ողբերգել, կոծել, հեծեծել
 Ի հեռուստ աչօք՝ արտասուօք մաշեալ,
 Աղէկեզ սրտիւ, կարօտով մեռեալ:

Զանգի՛, Զանգի՛, քա՛ղցր իմ Զանգի՛.
 Ի քոյդ հայեցեալ անյողդողդ ճակա՛տ,
 Վառէինն ի զէնս հսկայք քաջամարտ.
 Հայկազեան տոհմի ընտիր պատմանեակք
 Զքո ալիս տեսեալ ահեղ-աղուորակ,
 Մղէին ի մարտ, վանել քաջայաղթ,
 Զինակո՛ւտ բազկաւ, տիգօք, ասպարաւ,
 Աղեղա՛մբք վառեալք, զրահի՛ւք զարդարեալք՝
 ԶԲելայն գունդ ահեղ սրոյ մատնեալ ի զոհ.
 Ելին յասպարէզ, թշնամեաց ետուն գրոհ.
 Ոսկեթել վարսիք, դաբնեայ պսակօք,
 Պսակեալ զիւրեանց գլուխ անվախճան փառօք»
 Ծեմեալ յերկնից խումբս՝ զվերինն վայելեն
 Զկեսնս անտրտում, յերկրի կանգնելով
 Զամմահից անուն <գրաւեալ անձանց>
 Ի դարբս անանց, անհոլով ամաց:

Զանգի՛, Զանգի՛, հրաշագե՛ղդ <իմ> Զանգի.
 Դու զքոյդ սուրբ նախանձ տակաւին տածես,
 Դու ահե՛ղ թնդմամբ տակաւին հերքես,
 Դորդաս յարձակմամբ, մեծաճայն գոչես.
 «Ելէ՛ք, Հայկազեան սերո՛ւնդք քաջագունք,
 Առէ՛ք զէն, զասպա՛ր՝ զաւա՛կք բարեսնո՛ւնդք
 Հարէ՛ք, փշրեցէ՛ք զթշնամեաց ձեր գունդ,
 Տո՛ւք հոգի հոգույ, թիկն ընդ թիկուն,
 Զախջախեսցի՛ թող գազա՛նն նկուն.
 Ռուսիա՛ հզօ՛ր բազուկ եղիցի՛ ձեզ նիգն,
 Նմա՛ զոհ լինիլ լիցի՛ ձեր միշտ ճիգն:
 Վօլգա՛յ՝ իմ մեծ քեռ, ես ՚ի իմ քոյր Երասխ

Համբո՛յր մատուցուք ի Կասպեան կոհակ:
Նա զի՛ր բարութիւն, եւ զի՛մ խեղութիւն
Ի մի մեր մօր ծոց ընդ միմեանս խառնեացուք:
Եւ զի՛մ Աւանայ օրհնութեան մաղթանս,
Եւ զի՛մ սուրբ Մասւայ ողջոյն հալորական
Տարա՛յց, մատուցից սիրելոյն իմ քեռ,
Բերի՛ց ձեզ զողջոյն նորա անտաքեր:

Ո՛հ եւ խղճալի օրհօրդս էի պարտ,
Զի չար թշնամին եմուտ ի մեր դաշտ,
Այլ քոյրս զառամեալ՝ հին աւուրցն Արագ,
Թո՛յլ ետ նոցա գալ՝ բոնի, ինքնահաս:
Տեսեա՛լ զծերունի սկեսրայր իմ Մասիս՝
Ծածկեմ զիմ գլուխ, փսկեմ զիմ երես,
Զի մի՛ ալկորն աղու, ձիւնահեր,
Յալիս հասսակի լիցի՛ դառնալէր:
Թէ քոյր իմ Երասիս անհաշտ բնութեամբ
Ո՛հ տայ խղճալոյն հանգիստ և դադար.
Ծեղքէ, պատառէ զոտս նորա ցայտմամբ,
Ե՛ւ պարտիմ զայս լէրս փարատել իսպառ:
Իմ չե՛ն բայց այդ շնորհք, զի դաշուք, անդաստանք
Ետուն զիս կոչել՝ **Զանգի** ոսկեհանք՝,
Այլ սուրբ Աւանայ, հօր Լուսաւորչի՛
Որոյ արդար նշխարք աստ իմ առաջի
Կան և պահպանեն, օրհնեն, խնամեն
Զիմ անգօր ձեռաց զարդինս, որք աստ **են**:

Բացէ՛ք զճակատ ձեր, ցնծացէ՛ք յամայր,
Իմ քաղցր Վօլգայ քոյր հոգայ միշտ զձեր ճար:
Եւ զի՛մ մտերմութիւն ցուցից նմա համակ,
Նա զի՛ր քաղցրութիւն տացէ՛ ձեզ, ո՛րդեակք:
Այս կա՛պ անխզուն, այս սէ՛ր սրբազան
Մնասցէ՛ ի մէջ մեր ի կեանս յաիտեան:
Դո՛ւք զօրացարո՛ւք, որդի՛ք Արամեան,
Եղերո՛ւք ընդ միմեանս սիրով միաբան.
Սէր, խաղաղութիւն պահեն զամենայն
Զազգս և զազիւնս ի բարօրութեան:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություններից հրաք, որոնք անմիջականորեն վերաբերում են «Վերք Հայաստանի» վեպի հեղինակային բնագրի պակասներին (չլրացված աւանդներին ու թվականներին), նպատակահարմար գտնվեց տալ համապատասխան էջերի տողատակերին՝ աստղանիշներով, և Արովյանի բուն ծանոթություններից զանգագնելու համար վերջում ավելացնել՝ Պ.Հ.:

Սույն բաժնում, այսպիսով, հավաքված են այն բոլոր դիտողություններն ու բացատրությունները, որոնք օգնում են վեպի առանձին դրվագների պատմական հավաստիության և ստեղծագործական հանգամանքների ճիշտ լուսաբանմանը, հայտնաբերում են Արովյանի հերոսների նախատիպերին, բնութագրում նրա հիշատակած պատմական դեմքերին, բացատրում տեղանունները և այլն: Առանձին անձանց ծննդյան և մահվան տարիների վերաբերյալ սկզբնաղբյուրներում երբեմն հակասական տվյալներ կան: Աշխատասիրողը նման դեպքերում նախապատվությունը տվել է առավել հավանական թվականներին:

Իբրև կանոն՝ յուրաքանչյուր ծանոթագրության սկզբում մեջ է բերվում համապատասխան արտահայտությունը կամ աւանդը, որին վերաբերում է տվյալ բացատրությունը, իսկ վերջում նշվում է վեպի (բնագրի) էջահամարը ըստ սույն հրատարակության:

<Ա Ն Վ Ա Ն Ա Ք Ե Ր Ք>

1 «Վերք Հայաստանի» վեպի՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող մաքրագիր տարբերակում, տիտղոսաթերթի վերջում, այս բառերից հետո կա՝ «ի տող ևս՝ ավելացված հետազայում, այլ թանաքով և, գուցե թե, ո՛չ Արովյանի ձեռագրով.

«Ի 1840, Քիֆիզ»

Վեպի գրության սկիզբը կամ իրական թվականը, սակայն, այդ չէ, այլ 1841-ը: Բնագրի հանգամանակից ուսումնասիրությունն ևս ցույց է տալիս, որ սկզբնական ճիշտ թվականը կեղծված է. նախապես թանաքով գրածը, որ ժամանակ անց խուճացել ու եղծվել էր, վերականգնվել է մատիտով՝ հարմարեցվելով 1840 թվականին:

«Բարի» նպատակով արված այդ «շտկման» հետ չի՝ կարելի համաձայնել, որովհետև նախ Արովյանն է այլ առիթով բառացի ասել, որ իր վեպն սկսել է գրել 1841 թվականին, և հետո, որ դարձյալ անմիտելի է, «Վերք Հայաստանի» սկզբության համար օգտագործված է 1841 թվականի դարձգրական

գործի շապիկ: Վերջապես՝ Արուվյանի առաջին կենսագիր Տեր-Ազարյանցն ևս վկայում է, որ վեպի՝ իրեն ծանոթ ձեռագրի վրա 1861 թվականին կարդացել, տեսել է 1841 թվականը, որ անխախտ էր մնացել մահ հետո, մինչև դարավերջ (1896 թ.), ուրեմն և՛ փոխվել ու հարմարեցվել է շատ ավելի ուշ: Ահա՛ այս պատճառով մենք հիշյալ տողը բաց ենք թողնում: Մանրամասնությունները տեսնեն՝ լ սեր «Խաչատուր Արուվյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը» գրքում (Եր., 1955, էջ 60—65):—37

< Ը Ն Ծ Ա Ց Ա Կ Ա Ն >

1 Ազնուատոմ զօրապետի, քաջազարմ հայրենասիրի, վսեմամիտ հայկազոյ Սմբատայ...—Արուվյանի կյանքի և ստեղծագործության վաստակաշատ հետազոտող Է. Ծահագիզը (1856—1951) վաղուց պարզել է, որ «Վերք Հայաստանի» վեպը ձոնված է Հայկական մարզի վերջին կառավարիչ, գնդապետ Գևորգ Ստեփանի Սմբատյանին: Նա ծնվել է անցյալ դարի սկզբին, 1800 կամ, ամենաուշը, 1801 թվականին: Հազիվ 16 տարեկան՝ դարձել է զինվորական, հասնելով մինչև գնդապետի աստիճանի (շնորհվել է 1832-ին): Մասնակցել է ռուս-պարսկական (1826—1828 թթ.), ռուս-թուրքական (1828—1829 թթ.) պատերազմներին և Կովկասի լեռնականների դեմ մղվող կռիվներին: Մխրանքների համար պարգևատրվել է բարձրագույն շքանշաններով (Վլադիմիրի IV, Անդրիի II և III, Կալսերական թագի պատկերով՝ Աննայի II աստիճանի և այլն): XIX դ. 30-ական թթ. ղեկավար պաշտոններ է ունեցել Հայկական մարզում: Եղել է Երևան քաղաքի պարետ, իսկ 1839 թ. մարտի 26-ից մինչև 1840 թ. սեպտեմբերի 16-ը՝ Հայկական մարզի կառավարիչ: Վաղել է մեծ ժողովրդականություն: 1841 թ., մարզի վերացումից հետո, տեղափոխվել է Տփղիս: Գ. Սմբատյանի դեմ 1842-ին չհիմնավորված գործ է հարուցվել, որպես թե առաջներում պաշտոնական չարաշահումներ կատարելու համար: Դատն ու հետաքննությունները ձգձգվել են չորս ու կես տարի: 1845 թ. հոկտեմբերին ռազմական դատարանը որոշել է արդարացնել նրան: Վիրավորված ինքնասիրությունը և հոգեկան տառապանքները արդեն քայքայել էին Սմբատյանի առողջությունը, և նա շուտով վախճանվում է (1846 թ.՝ 1847-ի սկզբներին):

Գ. Սմբատյանը Խ. Արուվյանի մանկական տարիների բարեկամներից էր: Նա քաջալերել է պատանի բանաստեղծի գրական առաջին քայլերը և հայրենասիրական ձեռնարկումները: «Վերքի» սկզբնական էջերին առաջինը մե է ծանոթացել և ոգևորված՝ Արուվյանին կրծքին սեղմելով, բացակացել: «Մեր հայ Լուսինոսովը ծնվել է...: Մանրամասնությունները տե՛ս ստորև, Հառաջաբանի 21-րդ ծանոթագրությունը:—39

2 ...Կիլիկեան վեհից Սմբատաց քաջաց...—Կիլիկյան Հայաստանի պատմությունից ծանոթ են Սմբատ անունով երկու ճշանավոր անձ: Առաջինը եղբայրն է Հեթում Առաջին թագավորի, հայտնի՝ Սմբատ Գումդստարլ անունով (1208—1276), որը ճշանավոր պետական ու ռազմական գործիչ է՝ հայոց բանակի գլխավոր հրամանատարը, դիվանագետ, գրող-պատմաբան և իրավագետ: Միջնադարյան հայ մատենագրության երկու մեծարժեք հուշարձաններ՝ «Տարեգիրք» և «Դատաստանագիրք», Սմբատի գրչի արգասիքներն են: Երկրորդ Սմբատն էլ Հեթում Երկրորդի եղբայրն է. գործել է XIII դարի վերջերին: 1296 թ. մահանակվել է Կիլիկյան Հայաստանի կառավարիչ, իսկ այսպե՛ս հռչակվել թագավոր, իշխելով ընդամենը երկու տարի (զահրեհվեց է արվել 1298 թ.): Արուվյանը սրանց հետ է համեմատել իր բարեկամին՝ Հայկական մարզի վերջին կառավարիչ, գնդապետ Գևորգ Ստեփանի Սմբատյանին:—40

Հ Ա Ռ Ա Ջ Ա Տ Ա Ն

1 Կրեսոս թագավորն Լիդացվոց, երբ Կյուրոս քոյր աշխարքի տիրեց...—Լիդիան Առաջավոր Ասիայի հնագույն պետություններից մեկն էր (գոյությունը

պահել է 685—546 թթ. մ. թ. ա.), իսկ նրա Կրեստս թագավորը՝ Ռայտնի իր շքեղ կենցաղով ու ողբալի վախճանով. իշխել է 560—546 թթ.: Այս վերջին տարին էլ Պարսից Կյուրոս թագավորը (559—530) նվաճել է Լիդիան:—41

2...**Թագավորի միամոր որդին...**—Կրեստսի համր ու խուլ որդու՝ անսպասելի լեզու առնելու մասին եղած հնօրյա գրույցը (որի սկզբնաղբյուրը անտիկ պատմագրության հայր Հերոդոտոսի Պատմությունն է) սիրված ու տարածված էր հայ իրականության մեջ և, որպես այլաբանություն, հիշված՝ հնօրյա երկերում և նամակներում: Արուսյանի գործունեության շրջանում այդ լեզունը վկայակոչել է հայ նշանավոր քաղաքական և հոգևոր գործիչ Ներսես Աշտարակեցին: 1829 թ. սեպտեմբերի 6-ին Քիշինկից Պետերբուրգ, Խ. Լազարյանին ուղղված նրա նամակում կարդում ենք. «...Որդի Կրաստսի համր՝ տեսեալ զվտանգ կենաց հօր իրոյ, ահեղաձայնս բարբառեցաւ. «զԿրաստս» հայր իմ սպանանես», և ես՝ որդի սրբոյ եկեղեցոյ և հայրենեաց, տեսանելով զբեկումն հայրենի ազգի իմոյ և վտանգն հանդերձեալ սրբոյ մօր մեր լուսոյ և աստուածարեալ մեծ քահանայապետութեան ամենայն Հայոց, ո՛չ կարեմ լռել և ո՛չ աղաղակ բարձրացուցանել...» (Մատենադարան, Ներսես Աշտարակեցու դիվան, թղթապանակ 167ա, վավերագիր 150):

Զրույցի մեկ այլ վերապատում հանդիպում է Արուսյանի Դորպատյան ձեռագրերում, «Պատմություն հին դարուց» թարգմանական ձեռնարկում: Ըստ այդմ, երբ Հալիս գետի ափին (Հալաստանի և Լիդիայի սահմանի վրա) տեղի ունեցած անհաջող կովից հետո Կրեստսը վերադառնում է իր մայրաքաղաքը՝ Սարդես, որպեսզի նոր զորք հավաքի, անակնկալ հարձակվում է Կյուրոսը, ջարդում ու ցրում է նրա զորքը և գրավում Սարդեսը. «Անողորմ զօրք անխնայ սպանանէին, զո և գտանէին, և մի ոմն մերձ էր սպանանել և զԿրեստս, այն ինչ՝ որդի նորա, որ ցայն վայր համր էր, ի դառն աղետից առ հայր իր սիրելի, գոչէ. «Խնայեա՛ յարքայն»: Զօրականն զերեալ արքայն՝ ածէ առ Կիւրոս» (հ. V, էջ 882): Զրույցի այս տարբերակը ընդհանուր գծերով է հիշեցնում «Վերքի» Հառաջաբանում պատմածին, որը մի որոշ չափով տարբեր է նաև Հերոդոտոսի բուն պատմածից, որ է հետևյալը (գիրք I, գլ. 85)։

«Կրեստսը մի որդի ուներ՝ չափազանց շնորհալի... բայց՝ համր պատանի: Առաջները, իր կյանքի երջանիկ տարիներին, Կրեստսը հնարավոր ամեն ինչ արեց, որ բժշկի մանկանը: Եվ այսպես, ջանալով օգնել որդուն՝ թագավորն, ի միջի այլոց, մարդիկ ուղարկեց Դելֆոս՝ որդու մասին հարցում անելու պատգամախոսին: Պյութոսն ամա այսպիսի պատասխան տվեց նրան.

Բազում ազգերի տիրակալ, օ՛րդու մայր, անմիտ Կրեստս,

Մի՛ ցանկար հարկիդ տակ լսելու բաղձալի թոթովանքը որդուդ.

Լավ կլինե՛ր նրա շուրթերը հավերժ չբացվեին,

Քանզի առաջին անգամ նա պիտի խոսի քո կենաց ու մահվան օրը:

Միջնաբերդը գրավելու ծամանակ ինչ-որ մի պարսիկ ճանաչելով Կրեստսին՝ նետվում է թագավորի վրա և քիչ է մնում, որ սպանի. Կրեստսը նկատում է հարձակվողին, բայց ծանր վշտերի պատճառով մահվան հանդեպ նա անտարբեր էր դարձել: Իսկ երբ խուլ ու համր որդին է տեսնում հոր կողմը խոչացող պարսիկին, ահից ու վշտից հանկարծ լեզու է առնում և գոռում. «Ա՛յ մարդ, մի՛ սպանիր Կրեստսին»: Սրանք պատանու ասած առաջին բառերն էին, ու այնուհետև, մինչև կյանքի վերջը, նա խոսում էր» (Геродот, История в девяти книгах, Л.-д, 1972, стр. 38):

Դարավոր վերքերից հյուծված հայությունն էլ, ահա՛, կանգնել էր համաճման օրհասի՝ ազգության լինել-չլինելու խնդրի առջև: Կա՛մ, այն է, պիտի փոշիանար և կուլ գնար իր անյայնությունն ու արյունախում թշնամիներից, կա՛մ միավորվեր ու բարգավաճեր: Ուստի Արուսյանը տվյալ այլաբանությամբ իր անձնական վերաբերմունքն էր արտահայտում, զգաստացման հրավեր կարդում՝ լեղապատառ ծայն տալով. «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, Հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում...»: Սա միավորման ու ինքնաճանաչման, արթնացման ու վերածնունդի կոչն էր՝ բնագոյական և տազնապալի մի կանչ, որ մշտապես հնչում է

Արանց ականջին, ովքեր Ռադորդակից են դառնում Արովյանի հանճարեղ խոր-
Ռուրդներին:—41

³ Ո՛չ քսան, երեսուն տարուց ավելի ա...—սովորաբար այս խոսքերի տակ
ուզում են տեսնել վկայությունն հեղինակի տարիքի վերաբերյալ: Ինչպես մեր
հետազոտությունները ցույց են տվել, Արովյանը ծնվել է 1809 թ. Ռոկտեմբե-
րին, իսկ «Վերք Հայաստանի» վեպը գրված է 1841 թ. փետրվարին, հետևա-
բար նա այդ ժամանակ 31 տարեկան ու 4 ամսական էր, ուրեմն՝ իսկապես
երեսուն տարուց ավելի (իսկ քսանը Կրետսի որդու տարիքն է):—42

⁴ Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ...—ավանդական հայ պատմագրու-
թյան համար սրանք բոլորը մեծ հայրենասերների տիպար օրինակներ էին և
սրբազան անուններ: Հայկը հայ ժողովրդի լեգենդար նախահայրն է, ազատա-
սեր Ռուս, որ չհանդուրժելով հեղի բռնությունները՝ ըմբոստացել է Արա-
նես և հիմք դրել Հայաստանի: Վարդան V դարի Ռոչակավոր հայ զորա-
վար և պետական գործիչ Վարդան Մամիկոնյանն է, որ հանուն ազգային ինք-
նությունության պահպանության՝ կռվել ու զոհվել է Ավարայրի ճակատամար-
տում, 451 թ. մայիսին: Ի դեմս Տրդատի՝ Արովյանը նկատի ունի Տրդատ III
Արշակունի թագավորին (մոտ 287—330), որի օրոք Հայաստանը հասնում է
տնտեսական ու քաղաքական հզորության: Լուսավորիչը Գրիգոր Պարթևն է,
հայոց առաջին կաթողիկոսը (մոտ 301—325), որի եռանդուն ջանքերի շնոր-
հիվ քրիստոնեությունը Հայաստանում դառնում է պետական կրոն (301 թ.) և
հայության քաղաքական-մշակութային կյանքը սերտորեն կապվում քրիս-
տոնյա Արևմուտքի հետ:—42

⁵ ...Նոյան՝ թողը, Էջմիածնա՝ որդին, դրախտի՝ բնակիչը...—Արովյանն այս
խոսքերը կապարտությամբ կրկնում էր այն պատճառով, որ ազգային և բիրիա-
կան ավանդությունների համաձայն՝ համաշխարհային ջրհեղեղի օրերին Նոյան
տապանը կանգ է առել հայոց Արարատ լեռան վրա, իսկ ջրերն իջնելուց հե-
տո՝ Նոյն ու իր որդիները բնակություն են հաստատել Հայաստանում և ապա՝
այստեղից տարածվել ողջ աշխարհում: Ըստ այդմ՝ հայերը Նոյի անմիջական
ծառանդներն են, իսկ Նոյի լեզուն՝ հայերենը: Վաղնջական ավանդությունները
պնդում են նաև, որ բիրիական դրախտի տեղը ևս հին Հայաստանի տարած-
քում էր, որ Հայաստանից են սկիզբ առել դրախտի երկու գետերը՝ Տիգրիսն ու
Եփրատը: «Սուրբ գիրքը,—կարդում ենք Արովյանի՝ Դորպատում գրած
գերմաներեն ակնարկներից մեկում,—նրա երկրի կենտրոնում՝ Եփրատի և Տիգ-
րիսի ակունքների մոտ է դնում մարդկային առաջին զույգի բնակության վայ-
րը՝ չքնաղ դրախտը: Վեհապանծ Արարատի տեսքը հիշեցնում է նրան այդ
ամեն օր» («Երկերի լիակատար ժողովածու», հ. VIII, Եր., 1957, էջ 25/37): Մի-
ջին դարերում այս գրույցները թափանցել էին նաև եվրոպական իրականու-
թյան մեջ: Շատերից հիշենք դոկտոր Ֆաուստի կյանքի մասին պատմող գեր-
մանական ժողովրդական գիրքը, ուր ասված է.

«Կովկասը, որն ընկած է Հնդկաստանի և Սկյութիայի միջև, իր լեռներով
և գագաթներով հանդերձ, բարձրագույն կղզին է: Այստեղից դոկտոր Ֆաուստը
դիտում էր բազմաթիվ երկրներ և ծովային հեռաստաններ... Նա հավատացած
էր... որ վերջիվերջո պիտի կարողանար տեսնել նաև դրախտը... Գտնվելով
Կովկասյան լեռնակղզու հենց նույն բարձունքին՝ նա տեսավ Հնդկաց երկիրն
ու Սկյութիան, իսկ արևելյան կողմում՝ մինչ կեսգիշեր բարձրում երևացող մի
լույս ևս, որը կարծես պայծառորեն ճառագող արեգակից գար, մի կրակի հե-
ղեղ, որ բոցի պես երկրից մինչև երկինք էր բարձրանում և օդակում լողչակի
մեծությամբ մի տարածություն: Ու տեսավ նաև, որ այդ նույն հարթավայրի
միջով վազում էին չորս մեծ գետեր, մեկը՝ դեպի Հնդկաստան, մյուսը՝ դեպի
Եգիպտոս, երրորդը՝ դեպի Հայաստան, և չորրորդը՝ դարձյալ այստեղ: Եվ այդ
ժամանակ նրա մեջ ցանկություն առաջ եկավ իմանալու, թե ո՞րն է իր տեսածի
պատճառը, և ո՞վ է այդ կարգը դրել, ուստի և որոշեց, չնայած որ սիրտն անոլ
լի էր, դրա մասին հարցնել իր ուուն (Մեֆիստոֆելին—Պ. Հ.): Իսկ ոգին նրան
հիշտ պատասխան տվեց ևս զուրա. «Դա դրախտն է, իսկ այն ջրերը, որ բաժան-
վում են չորս մասի, հոսում են հենց դրախտի աղբյուրներից և դառնում գետեր,

որոնց անուններն են Գանգես կամ Փիսոն, Գիհոն կամ Նեղոս, Տիգրիս և Եփրատ» (...Легенда о Докторе Фаусте“, изд. АН СССР, М.—Л., 1958, стр. 97—98. *Բապտիստ*՝ „Historia von D. Johann Fausten, Verlag von Nation“ (*Բապտիստ*). Berlin, S. 102—104):—42

⁵ *Ով մեկ լեզու գիտի, ես մեկ քանիսը գիտեմ...*—մայրենի լեզվից բացի՝ Աբովյանը Ռիմնավորապես գիտեր եվրոպական և արևելյան Ռիմ ու նոր մի շարք լեզուներ՝ լատիներեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, գուբար (Ռիմ հայերեն), պարսկերեն, թուրքերեն, քրդերեն։ Գիտեր մասամբ նաև վրացերեն ու իտալերեն (ըստ ժառանգների վկայության)։—43

⁶ *Ի՞նչ գիրք ասես, որ չեմ սկսել թարգմանիլ ու կիսատ թողալ...*—Աբովյանի այդորինակ կիսատ թողած թարգմանություններից է Ժան Ժակ Ռուսոյի (1712—1778) «Ժյուլի կամ նոր Էդիսթ» վեպը։—43

⁷ *Ես միջոցումը աստված ինձ մեկ քանի երեխեք էլ հասցրեց, որ պետք է կարդացնեի...*—Ճկատի ունի իր մասնավոր աշակերտներից, որոնց Ռետ պարապում էր 1837 թ. սկսած։ 1838 թ. Ռուստեմբերին Աբովյանը Ռիմնույն է իր արական պանսիոն-դպրոցը, որի նպատակը ժողովրդական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելն էր։ Պաշտոնապես գործել է (ընդհատումներով) մինչև 1842 թ. վերջը։—43

⁸ ...*բայց Ռեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոֆոկլեսի գրքերը...*—Հոմերոսը (IX—VIII դդ. միջև մ. թ. ա.), Հորացիոսը (65—8 մ. թ. ա.), Վիրգիլիոսը (70—19 մ. թ. ա.) և Սոֆոկլեսը (497/496—405) անտիկ աշխարհի խոշորագույն գրողներն են, որոնց ստեղծագործությունները շատ բարձր է դասել Աբովյանը, իսկ Հոմերոսին՝ թարգմանել։—43

⁹ ...*մեր Նարեկը...*—Գրիգոր Նարեկացու (մոտ 945—1003) «Մատյան ողբերգության» պոեմի (1002 թ.) ժողովրդական անվանումը։ Այդ ստեղծագործությունը Աբովյանը համարել է գեղարվեստական խոսքի բարձրագույն արտահայտությունը։—43

¹⁰ *Քեշիշ օղի—բառացի՝ քաղցածի որդի*. հայ աշուղ, ծնվել է Բորչալուի Ծովապետ գյուղում (այժմ ՎՍՍՀ Ծառուսյանի շրջանի շրջկենտրոն), XVIII դ. առաջին կեսին։ Հռչակվել է 20 տարեկանից։ Ծրջել է Իրանում և Թուրքիայում, հաստատվել՝ Կ. Պոլսում, դառնալով պալատական բանաստեղծ։ Երգեր է հորինել բազումապես թուրքերեն լեզվով։ Վախճանվել է ծեր ու թշվառ, 1830-ական թթ. կեսերին։ Աբովյանը գերմաներեն է թարգմանել Քեշիշ օղու մի քանի խաղերը, որոնք բանաստեղծ Ֆ. Բոդենշտեդի խմբագրությամբ տպագրվել են վերջինիս «Հազար ու մեկ օր Արևելքում» գրքում, 1850 թ. սկսած։—44

¹² *Քյոռ օղին—բառացի՝ կույրի որդի*. կիսալեգենդար հայ աշուղ և ժողովրդական վրիժառու, որի թուրքերեն լեզվով հորինած խաղերը սիրված ու տարածված էին հայ և արևելյան ժողովուրդների շրջանում։ Հները նրան նույնացնում են ջալալիների շարժման մասնակից Քյոռ օղու հետ, որ ապրել է XVI—XVII դդ. «Այս այն Քոռօղին է, որ բազում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշուղներն եղանակեն» («Պատմութիւն Առաքել Վարդապետի Դարիծեցոյ», երրորդ տպ., Վաղարշապատ, 1896, էջ 87)։—«Քոռ օղին, Գգիր օղին և այլ բազումք եղեն ջալալիք» (Ժամանակագրություն Հարություն խալֆայանի, տպ. «Դիվան հայոց պատմության», գիրք Ժ, էջ 124)։—44

¹³ ...*Գրիգոր Թարխանովի հետ խոսա...*—Գրիգոր Մաթևոսի Թարխանովը (Թարխանյան) ծնունդով երևանցի էր, արևելյան երգի ու բանաստեղծության սիրահար. 1830—40-ական թթ. եղել է Հայկական մարզի (Ռետո՝ Երևանյան գավառի) Գյուլչայի (Նոր հայազետի) գավառամասի պետ։ Համակրել է աշխատավոր գյուղացիությանը և պաշտպանել նրանց շահերը թուրք աղալարների ոտնձգություններից։ 1847-ի Ռուկիսի կեսերին արձակվել է պաշտոնից։ Թարխանյանի բանաստեղծական դիմաստվերը գծել է գերմանացի գրող և ճանապարհորդ Ֆ. Բոդենշտեդը («Հազար ու մեկ օր Արևելքում»), որը 1844 թ. վաղ գարնանը այցելելով Երևան՝ իջևանել է նրա տանը (արևելագետ Գեորգ Ֆոգենի հետ), և այստեղ Աբովյանի ու վերջինիս աշակերտների հետ հանդի-

պումներ ունեցել: Երևանի այժմյան Պուշկինի և Կուրմյանցի փողոցները անցյալներում, ի պատիվ նրա, անվանվել են Թարխանյան փողոց:—44

¹⁴ ...գնացի Նեմեցի Կոլոնիեն...—Տիդիսի մերձակայքում դեռևս 1819 թ. գերմանացի գաղթականների հիմնադրած երկու ավան կար: Դրանցից մեկը՝ Նոր Տիդիսը, ընկած էր Քուռ գետի ձախ ափին, քաղաքից երկու վերստ հեռու, այժմյան Պլեխանով փողոցի երկայնքով, մյուսը՝ Ալեքսանդրոպոլիս, քաղաքից հինգ վերստ հեռու, նորից Քոհ ափերին: Արովյանն, ամենայն հավանականությամբ, նկատի ունի Նոր Տիդիսը:—44

¹⁵ Թուպենտոնի պատմությունը...—անգլիացի վիպասան Դանիել Դեֆոյի (1660/61—1731) «Ռոբինզոն Կրուզոյի կյանքը և զարմանալի արկածները» գիրքը XIX դ. հայ իրականության մեջ լայն արձագանք է գտել, թարգմանվել: Արովյանն ու իր վանական ընկերները, ինչպես պատմում է նրա նախորդն ու ժամանակակիցը՝ Մեսրոպ Թադևոսյանը (1803—1857), առաջին անգամ այդ վեպի մասին լսել են 1823 թ., Հաղբառի վանքում, Ֆրանսիայում պարսից դեսպան Դավիթ խան Ծատուրյանի բերանացի պատմությունից:—45

¹⁶ Պղնձե քաղաքի հիմար գիրքը...—միջնադարյան հայ գրականության հուշարձաններից, որ թարգմանվել է արաբերենից («Հազար ու մեկ գիշերներ» հեքիաթների շարքից), առաջին անգամ՝ X դարում, Տալիսի տիրակալ Դավիթ Կյուրոպաղատի կարգադրությամբ, և կրկին՝ 1222 թ., Առաքել Անցեու ձեռքով: Ավելի ուշ, XVI դարում, հայտնի բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցին այն վերստին խմբագրել և հարստացրել է կաֆաներով (չափածո ընդմիջարկություններով): Պղնձե քաղաքի պատմությունը շատ սիրված ու տարածված է եղել հայ իրականության մեջ, պահպանվել են բազմաթիվ ձեռագիր արտագրություններ ու տպագրություններ՝ 1708, 1731, 1748, 1757, 1782, 1807 (չեմիածնով), 1814, 1820, 1834 թթ. և այլն: Գիրքը «հիմար» է անվանված պարզունակ պատմիչի և ընդգծված կրոնական բարոյախոսությամբ համար:—45

¹⁷ ...մեկ աղբ էլ դու դա՛ռ...—այս չի՛ նշանակում, թե Արովյանը եկել էր այն համոզման, որ ապագա «Վերք Հայաստանին» արևելյան սիրավեպի կամ աշուղական նաղլի ձևով պիտի գրվեր: Խուսքն ավելի նույր հարցի է վերաբերում՝ աշուղների արվեստի ներգործոն ուժի գաղտնիքն ըմբռնելուն և ստեղծագործական ստեղծելուն այն կիրառելուն, որպեսզի «Վերքի» պատմումը լիներ անկեղծ ու անմիջական, իսկ գրքի ապագա ընթերցողներն էլ հրապարակներում կամ կալներում հավաքված և աշուղին ունկնդրող, հայիլ-մայիլ մնացած բազմության մասն խանդավառվեին հեղինակի գաղափարներով ու կերպարներով:—46

¹⁸ Մեկ բարիկենդանի...—նկատի ունի 1841 թ. բարիկենդանը, որն, ըստ հայ եկեղեցական օրացույցի, այդ տարի տոնվել է փետրվարի 9-ին:—46

¹⁹ ...իմ ջիվան Աղասին սիտս ընկավ...—Աղասին իսկական սոտոմով գրական կերպար է, բայց ունեցել է իր նախատիպերը: Արովյանը վերջիններից մեկի մասին պատմել է. «Նա օտար մարդ չէ, իմ հայրենակիցն է, Բանաբեռից, իմ ժամանակակիցն ու հետևորդ ազգականը: Այն բարբարոսական շրջանում, երբ Հայաստանն իր վերջին շնչումն էր գտնվում, և այն էլ իրեն՝ խելոճ ժողովրդին, չէր պատկանում, իմիջիպիսոյ, շատ հաճախ, Երևանի պարսից սարդարի հարեմի համար բռնությամբ քաշում տանում էին հայ մատաղաբաս աղջիկներին, թուրքացնում, որի ժամանակ այդ հերոսուհիներից շատերը՝ արհամարհելով փարթամությունն ու շքեղ կյանքը, գերադասում էին նահատակի պսակ ընդունել, քան թե զոհ դառնալ անասնակն կրքերին: Աղասու բրոջն ևս բաժին ընկավ այդ սարսափելի ընտրությունը: Ահավոր վայնասունի մեջ ծնողներն ու ազգականները փորձեցին ընդդիմանալ իրենց հարազատ զավակի առևանգմանը, իսկ տմարդի ֆարաշները դաժանությամբ ու բռնությամբ ուզում էին քաշել տանել աղջկան, քանի որ նա արտակարգ գեղեցիկ էր. ցավով բռնված Աղասին թափով անցնելով ամբիսի միջով՝ իր սրով սպանեց ֆարաշներից մեկին, մյուսներին մահացու վերքեր հասցրեց, որովհետև նրանք ընդամենը երեք հոգի էին, ու մինչ նրան կկարողանային բռնել, անասելի վտանգների ենթարկվելով՝ փախավ ռուսի հողը և ուսաների հետ միասին վի-

րադարձավ, երբ վերջապես սկսվեց պարսկական պատերազմը: Նրա քույրը մեծ գումարով փրկագնվեց ու դեռ ապրում է, դժբախտ ծնողներն, ընդհակառակը, մեռան բանտում, երկարամյա բանտարկությունից հետո, սարսափելի մահով» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Բ. VII, էջ 373—374):

Անցյալ դարի 80-ական թթ. սկզբներին Երևանի ուսուցչական սեմինարիայի դասատու Կ. Շուլգինը, Ռիմք ունենալով քաղաքի տարեց մարդկանց պատմությունները, գրել է. «Աղասին, որն, անտարակույս, պատմական դեմք է, ապրել է Քանաքեռ գյուղում... սարդարի հետ լավ հարաբերությունների մեջ է եղել և հաճախ լինում էր նրա մոտ: Բայց ահա՛ սարդարը Քանաքեռ է ուղարկում հոգարներին՝ իր հարեմի համար գեղեցիկ աղջիկներ քաշելու տանելու: Նշված զոհերի մեջ է լինում նաև Աղասու հարսնացուն: Այդ ժամանակ Աղասին հավաքելով իր նման մի քանի կտրիճ տղաներ՝ բշում է հոգարներին: Իհարկե, դրանից հետո նա այլևս չէր կարող մնալ հայրենի գյուղում, ու Ռիմա արդեն, իր ընկերների հետ միասին, սկսում է պարսիկներից վրեժ լուծել խուլ ճանապարհների վրա, իսկ երբ Պասկևիչը մոտենում է Երևանին, Աղասին ներկայանում է նրան և առաջարկում իր ծառայությունները՝ ցույց տալու համար Երևանի բերդի թույլ ամրացված տեղերը:

Մինչ այդ, սարդարն աշխատում է իր վրեժն առնել Աղասու հորից. նա բանտարկում է վերջինին, ժամապահների հրաման տալով՝ սպանելու և՛ որդուն, և՛ հորը, եթե միայն կփորձեն մեկը՝ ազատել կալանավորին, իսկ մյուսը՝ փախչել: Ռուս առաջին զինվորների հետ Աղասին ներս է խուժում պարսպի վրայով և, իհարկե, անմիջապես իրեն նետում բանտ: Ժամապահները դեռ իրենց տեղերը լքած չլինելով՝ հասցնում են կատարել սարդարի հրամանը. նրանք սպանում են Աղասուն ու նրա հորը»: Ծարունակության մեջ փորձելով բնութագրել Ռնույա ավանդությունն ինքյան՝ Կ. Շուլգինը նկատում է. «Այս բանաստեղծական անհատականության մեջ ցույցում է նույն նրբագեղ պարզությունը, որ հատկանշական գիծն է ժողովրդական վեպի, հակառակ այն տեսակետների, թե ուշ շրջանում հորինված ժողովրդական երգերը միտ և ամենուր իրենց վրա են կրում բանաստեղծական զգացման նվազման կմիք, աչք է զարկում մտքերի աղքատությունը, և, ընդհանրապես, ապացույց են ծառայում բանաստեղծության տկարության: Այդ տեսակետն, ինքնըստինքյան, հերքվում է այնպիսի տվյալներով, ինչպիսիք ժամանակակից, համարյա մեր օրերում հորինված երգերն են Աղասու մասին: Իր պոմենով, մինչև այլ մանրամասներով, այս ավանդությունը չափազանց շատ ընդհարություններ ունի սերբերի յունակական երգերի հետ» (Կ. Շուլգին, Երևանի գրավումը (Ծերերի պատմածներից), տե՛ս СМОЛІК, գիրք IV, Տիգիս, 1884, բաժին II, էջ 37—38):—46

20 ...մանկական սիրելի բարեկամ... դոքտոր Աղաֆոն Սմբատյանը...— «Վերքի» ստեղծագործման օրերին հեղինակին բարոյական աջակցություն ցույց տված այս բժիշկը (իսկական անունը՝ Աղաբեկ) պատահական մեկը չէր, այլ Աբովյանի երկարամյա բարեկամը. մտերմացել էին Տիգիսում, 1824—26 թթ.: Մի քանի տարի անց, մինչ Աբովյանը կատարելագործվում էր Դորպատում, Աղաֆոնն էլ ուսանում էր Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1829-ից). այդ ընթացքում նրանք մտնակներ են փոխանակել: Հետո Աղաֆոնը ընդունվում և ավարտում է տեղի համալսարանի բժշկական բաժինը: 40-ական թթ. սկզբներին նրան հանդիպում ենք Տիգիսում, 1842-ին ծառայում էր Դերբենդում, ավելի ուշ՝ Խոզապիկի մաքսատանը (Ախուրաբաթի գավառ), որպես կարանտինային բժիշկ: 1850-ին նա հրաժարական է տալիս և կրկին վերադառնում Տիգիս: 1863—65 թթ. նույն անուն-ազգանունը կրող մի անձնավորություն, թերևս հենց ինքը, ապրում էր Շուշիում և ֆրանսերեն էր ավանդում տեղի թեմական դպրոցում: Ե՛րբ և ո՛րտեղ է վախճանվել, պարզված չէ:—46

21 Նրա (Աղաֆոն Սմբատյանի—Պ. Հ.) սուրբ բարեկամության նմ պարտական, որ մուցե լեզուս բաց արեց—ըստ «Վերքի» Հառաջարանի՝ այդչափ կարճ ժամանակամիջոցում վեպն ավարտելու մեջ իրենց որոշակի դերն են խաղացել Աղաֆոն Սմբատյանի հորդորները, մինչդեռ իրականում, ինչպես պարզվում է

գերմանացի բանաստեղծ Ֆ. Բոդենշտեդի Ռամար Արուվանի գրած բացատրա-
կան նամակից (1845 թ.), վճռականը նրա եղբոր՝ գնդապետ Գևորգ Սմբատ-
յանի խրախուսանքներն են եղել։ Դրանից բացի, Հառաջաբանում վեպի ստեղծ-
ման շարժառիթներն ու հանգամանքները Արուվանը ներկայացրել է քնարական
որոշակի գունավորմամբ, անտեսելով առանձին մանրամասներ և հայտնի պատ-
ճառներով «մոռացալով» կամ «շփոթելով» անգամ Գ. Սմբատյանի անունը, սա-
կայն այնպես, որ չշեղվի բուն իրողությունից, որի ճշգրիտ վերարտադրությունը
հետագա դրվագն է։ «Ինձ Ռամար այնքան հիշարժան 1841 թվականի բարե-
կնդարեմ, — կարդում ենք այդ վավերագրում, — սկսեցի իմ պատմությունը այն
ձևով, կարծես, մի հայ գյուղացի պատմելիս լիներ իր հարևանին։ Այսպես
որեմն. իմ վեպից ես դուրս ձգեցի ողջ մտացածինը, արհեստականը և անքնա-
կանը։ Իմ առաջին տեսարակները ես կարողացի հախ՝ աշակերտներին, իսկ այ-
նուհետև՝ գնդապետ Սուսբառովի մոտ, որը հաճույքով է ընթերցում այդպիսի
բաներ և պակաս կրթված մարդ չէ... Հարցրե՞ք նրան, եթե ուզում եք իրողու-
թյունը թիմնավորապես իմանալ։ Երեխաներս չէին կարողանում զսպել մերթ
իրենց ծիծաղը, մերթ էլ լացը։ Բարի գնդապետը, հակառակ դրան, հենց հու-
շորի օրը եկավ ինձ մոտ իր եղբոր հետ, քանի որ մինչ այդ ո՛չ մի անգամ չէր
այցելել, և հուզված՝ սեղմելով ինձ իր կրծքին, բացականչեց. «Մեր հայ Լուսի-
նոսովը ծնվել է...»։ Այդ նշանակում էր՝ ճարճատած լուրի վրա ջուր լցնել,
այնպես հանկարծ միանգամից բոցավառվեցին իմ մտավոր ու հոգեկան ու-
ժերը։ Նորի՞ց սպասել։ Երեք օր ու նույնքան գիշեր ուտելը, խմելը, քնելը,
մինչև իսկ տեղից շարժվելը, ինձ Ռամար դժոխային տանջանքներ էին։ Ես կա-
տաղում էի. երբ նույնիսկ ճանճն իմ կողքով էր թռչում։

Իմ այն ժամանակահատվածի իրությունը ձեզ ըմբռնելի դարձնելուն ա-
պացույց կարող է ծառայել հետևյալ դիպվածը։ Մի առավոտ բաց եմ անում
աչքերս այս տեճագահին վիճակից և, ի սարսափ ինձ, տեսնում եմ ահաբեկված
կնոջս և դայակին՝ հեկեկում են ու իրենց կտրատում։ Իմ հարցերին, թե իս-
կապես ի՞նչ է պատահել, երեխայիս հո որևէ բան չի՞ եղել, արդյոք մահվան
անկողնում չէ՞, — կինս վշտից չկարողացավ ո՛չ մի պատասխան տալ։ Վեր-
ջապա մեր դայակը՝ մի ռուս կին, ինձ կարեկցելով, կերկրուն ձայնով սկսեց
բացատրել. «Պարոն, օ՛, պարոն, ի՞նչ արիչ դուք մեզ այս գիշեր ու հենց քիչ
առաջ էլ։ Դուք բարձրաձայն ճչում էիք, լալիս, հառաչում, ձեր մագերը պո-
կում և հուսահատ կանչում, աստված գիտե, թե ինչ։ Ես ու իմ ողորմած տի-
ֆուսին ձեզ ուղքի բերելու Ռամար էլ բան չմնաց, որ չանեինք, շատ ժամեր
չարշարվեցինք ձեզ հետ միասին. իզո՛ւր, իզո՛ւր։ Վերջապես հավատացինք,
թե դուք, աստված մի արասցե, խելագարվել եք։ Նոր միայն ուզում էի բժշկի
եսևից գնալ, որովհետև ցանկանում էիք այդ բանը դեռ գաղտնի պահել։ Այժմ,
փառք աստուծո, դուք ինքներդ ուղքի եկաք»։

Այսպիսին էր, բարեկամս, այն ժամանակ իմ վիճակը։ Ես ճնշում էի միայն
նստած տեղս։ Իմ հացն ու ջուրը գօր ու գիշեր մեն մենակ սուրճն էր։ Հայոց
նոր լեզուն, որով ես մինչև այդ ամենաանճշաճ ոտանավորներն անգամ դժվա-
րությամբ էի գրում, արթնացրել էր իմ հիշողության մեջ պատկերներ, գաղա-
փարներ, որոնց մասին մինչև այդ չէի էլ երագել։ Իմ գրիչը չէր կարողանում
հասնել մտքերիս ու զգացմունքներիս ետևից։ Հանգավոր տողերը հորձանք
տալով՝ թափվում էին թղթի վրա։ Բոլոր ժողովրդական ավանդությունները,
կրոնական պատկերացումները խառնել էի իրար, բայց, իհարկե, առանց որևէ
կարգ ու կանոնի։ Օրական գրում էի ավելի քան 20 թերթ, այն էլ բացառապես
«հանգավոր տողերով»։ Իմ վեպը, որ «Վերք Հայաստանի և ողբ հայրենասերի»
խորագիրն է կրում, վաղուց ավարտված է։ Սա (այսինքն՝ «Աղասու խաղը» — Գ.
Հ.) մի թույլ փորձ է այդ ուղղությամբ։ Իրականում սրանք իմ զգացմունքներն
են, որոնք ես վերագրել եմ Աղասուն, որովհետև ես էլ եմ երկար ժամանակ
հայրենակա՛ն հարկից նետվել օտարության մեջ։ Գրելով նման վիճակում՝ ես էլ
էի նրա հետ արտասվում...» (Խ. Արուվան, Երկերի լիակատար ժողովածու,
Տ. VII, էջ 375—376)։ — 46/47

22 ...իմ խեղճ, դարձրեց գերմանացի կողակցի ձեռն... — Արուվան ամուսնա-

ցել է 1839 թ. սեպտեմբերին, ունելի (այժմյան Տալիհ) օրիորդ Յոհաննա Էմիլիե Լոոզեի հետ (1819—1870), որի նախնիների երակներում հոսում էր Էստոնական, շվեդական և գերմանական արյուն: Էմիլիեն ծնվել է Ռյուսիսային Էստոնիայի Վիկ գավառի Գոլդենբերգ (այժմ Կոլլամաա) ավանում, առաջնագործի ընտանիքում, հետագայում՝ որբացել, իսկ 1838-ին կովկասյան զորքերի գլխավոր շտաբի պետ, գեներալ Պավել Աուգուստովիչ Կոցեբուի կնոջ՝ Ելիզավետա Պետրովնայի հրավերով փոխադրվել է Տիֆլիս, ուր և ծանոթացել է Արովյանի հետ: Ամուսինների մեջ փոխադարձ հարգանքը շարունակվել է, բայց սերը շատ շուտով սառել:—47

²³ ...իմ միայնակ որդին դռնից առած...—Արովյանի որդին՝ Վարդանը, ծնվել է 1840 թ. մայիսի 31-ին: Կրթությունն ստացել է տանը, Երևանի գավառական դպրոցում, ավելի ուշ՝ հոր սիրելի աշակերտ Գաբրիել Խատիսյանի պանսիոնում և Դորպատի համալսարանում, որը չի ավարտել: 1865-ից ըսկըսած՝ ուսուցչություն է արել Էստոնիայի Ֆելլին (այժմ՝ Վիլյանդի) քաղաքում և Անդրկովկասում (Ախալցխա, Թիֆլիս, Երևան, Էջմիածնի Գևորգյան ճեմարան), ավանդելով ռուսաց լեզու, գրականություն, պատմություն: Վախճանվել է 1896 թ. նոյեմբերի 16-ին և թաղված է Գայանեի վանքի բակում, Վաղարշապատում: Կյանքի վերջին տարիներին փորձել է գրել հոր ընդարձակ կենսագրությունը, բայց նախաբանը շարադրելուց հետո ընդհատել է:—47

Գ Լ Ո Ւ Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

¹ ...մեկ գեղ (իմա՝ Հանաքեռ—Պ. Հ.)... այժմ հիսուն տուն կա...—Խ. Արովյանի ծննդավայրը պատմական սկզբնաղբյուրներում հիշատակվում է 1206 թվականից, իսկ ըստ ազգային ավանդությունների՝ բնակելի է եղել ետզրինդեղյան ժամանակներից սկսած: Պաշտոնական տվյալների (Поверка каменной описания) համաձայն՝ 1842-ին Հանաքեռն ուներ 54 հայ և մեկ ադրբեջանցի ծովս, այսինքն՝ գրեթե նույնքան, ինչ Արովյանն է ասում: Այժմ Հանաքեռը ճուլվել է Երևան քաղաքին և մտնում է վերջինիս 26 կոմիսարների անվան ջրջանի մեջ:—50

² ...տանուտեր Օհանեսի...—այս կերպարն ունի նախատիպ, մի հրական պատմական դեմք և անգլայնամոդեռ ողբերգական անձնավորություն: Մատենադարանում պահվող վավերագրերը պատմում են, որ պարսից տիրույթները՝ 810-ական թթ. պարսերի դիմաց հափշտակել և «թուրքացրել» են քանաքեռցի տանուտեր Հովհաննեսի որդիներին ու դստերը:—52

³ ...Օրհնյալ եղերուքն ասեն...—ըստ հայ լուսավորչական եկեղեցու ժամկարգության՝ սրանք պատարագի եզրափակիչ խոսքերն են («Օրհնեալ եղերուք ի շնորհաց սուրբ Ռոգայ, երթալք խաղաղութեամբ...»):—52

⁴ ...ՄԵ կարդալու տեղ... ՂՄ ասելու տեղ...—«Վերքի» բնագրում առկա այս արտահայտությունները, որ հապավումներ կամ համառոտագրություններ են, նշանակում են՝ Սուրբ խաչ կարդալու տեղ... Ղուկաս ասելու տեղ (համանուն ավետարանչին է ակնարկում):—54

⁵ ...հինգ նավակատյացը...—Անատի են առնված հալոց եկեղեցու հինգ գլխավոր տոների նախօրեները, դրանք են՝ Ծնունդ, Ջատիկ, Վարդավառ, Աստվածածին, Սուրբ խաչ, և հաջորդաբար ընկնում են Ռուհվարի 6-ին, մարտի 22-ից ապրիլի 22-ի միջև (հարեկենդանի ավագ շաբաթ օրը), հուլիսին, օգոստոսի 11-ից հետո եկող առաջին շաբաթ օրը և սեպտեմբերի 14-ին (անցյալներում ընդունված էր դրան հաջորդած կիրակին):—55

⁶ ...մեր Տեր Մարկոսը...—հիրավի, անցյալ դարու 20-ական թթ. Հանաքեռ գյուղում հովվում էր Տեր Մարկոս անունով մի կիսագրագետ հոգևորական (Մատենադարանում պահվում է նրա՝ առաջնորդ Գևորգ վարդապետի 1826 թ. հուլիսի 5-ին տված մուրհակը, որի տակ հազիվ կարողացել է ստորագրել ու մատնաճարել), սակայն համանուն կերպարն ստեղծելիս Արով-

յանը առաջնապես նկատի է ունեցել Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի գործերը:—58

7 ...մինչև Սառախաթուն տատը տուն չէկալ...—բւտ որոշ տվյալների՝ այս անունն է կրել նաև խաչատուր Արծվյանի հայրական տատը, որը կենդանի էր տակավին 1817 թվականին:—64

8 Զարգար Պ. որ շատ փող ունի...—վեպի սևագրում զարգարի (ոսկերչի) անունը գրված է լրիվ՝ Պողոս: Արծվյանն բւտ այդ նկատի է ունեցել իրական մարդու՝ երևանցի հարուստ փողատեր, ոսկերիչ Պողոս Բաբաջանյանին, որի անունն առաջին անգամ հանդիպում է 1814 ապրիլի 16-ին կնքված մի պայմանագրի տակ, վկաների շարքում («ես» զարգար Պողոս...» և այլն):—70

9 ...հրմիկ կողը վեր են քաշում, որ տեսնին, թե տակին երար ֆորթ կա՞...—թերևս անուշադրությանն սխալ, պետք է լիներ. «Հրմիկ եզը վեր են քաշում...» և այլն, մի արտահայտություն, որ օգտագործում են որևէ մեկի՝ այլոց հանդեպ անվստահությունը կամ ահավոր կասկածամտությունն ընդգծելու համար (նկատել է «Վերքի» հատվածների ուսուներեն առաջին թարգմանիչներից մեկը՝ Ստ. Տեր-Սարգսյանը, տե՛ս «Восточный сборник в честь А. И. Бесселовского», М., 1914, стр. 444): Նույն արտահայտությունը, փոքր-ինչ տարբեր ձևով, կրկնվում է նաև Առաջին գլխի 4-րդ հատվածում (տե՛ս սույն գրքում, էջ 86, տող 2—3):—71

10 Հարիբ տարի կըլի, որ լուսահոգի Ապովը մեռել ա...—վիպական ակնմասյտ չափազանցություն: «Լուսահոգի Ապովը» իս. Արծվյանի անմիջական պապն է, իրական-պատմական անձնավորություն, որը մասնացել է 1784 թ. մայիսին Երևանում հրավիրված գաղտնի խորհրդակցությանը, որտեղ որոշվում է Հայաստանի ազատագրության շուրջ բանակցություններ վերսկսել Եկատերինա II կայսրուհու հետ: Ապովը վախճանվել է 1794 թ. փետրվարին, ուրեմն՝ «Վերքի» գրությունից 47, իսկ նկարագրվող դիպվածից (այն տեղի է ունեցել 1821 թ.) 27 տարի առաջ: Նրա անձնավորության և բարեգործությունների մասին հանգամանորեն պատմում է գերմանացի տնտեսագետ Աուգուստ ֆոն Հաքստհաուզենը (1792—1866)՝ հիմք ունենալով իս. Արծվյանի մանկապատանեկան տարիների հիշողությունները (գերմաներեն): Ապովի տեղյակ մեծ աչքին, որ սահմանված էր չքավորների ու աշխատողների օգտագործման համար, պահպանվել էր մինչև 1930-ական թթ.: Այժմ նրա տարածքի վրա վեր են խոյացել Երևանի էլեկտրալամպերի գործարանի շենքերը:—71

11 ...մենք իգու անունը Հնդաստան ա հասել...—մենք իգին Ապովի տեղյակ և նախորդ ծանոթագրության մեջ հիշված աչքին է, իսկ «Հնդաստան (Հրդեհաստան) ա հասել» արտահայտությունն անցյալում օգտագործվում էր աշխարհի ծայր կամ ամենահեռավոր երկիր իմաստով (հայ ժողովրդի բանավոր խոսքի մեջ):—71

12 Ժամգիրքը, Եարականը, Սաղմոսն ու Այսմավորքը...—չորսն էլ եկեղեցական արարողության ժամանակ գործածվող ծիսական մատյաններ են: Դրանցից առաջինը՝ ժամագիրքը, ամենօրյա ժամերգության հրահանգարան է՝ պատշաճ աղոթքների մեջբերումով: Եարականը հայոց հին, հոգևոր բանաստեղծության տեսակներից մեկի՝ հոգևոր հիմների ու երգերի ժողովածուն է: Եարականները նվիրվում էին ընդհանուր քրիստոնեական և հայ լուսավորչական եկեղեցու նշանավոր սրբերին, պատմական դեմքերին ու դեպքերին և հորինվել են գերազանցապես հայ դպրության արշալույսից՝ V դարից սկսած մինչև XIII դարը, դասակարգվելով որոշակի կանոններով, որոնցից դուրս մնացածները կոչվել են պարականոն շարականներ: Սաղմոսը դարձյալ հոգևոր բանաստեղծության տեսակ է և Հին կտակարանի համանուն գրքի անունը, որի հեղինակն է բիբլիական Դավիթ մարգարեն: Այսմավորքը կամ Հայսմավորքն էլ միջնադարյան հայ մատենագրական հուշարձանների ժողովածու է, որ գերազանցապես ամփոփված են վարքագրական և վկայաբանական երկեր:—72

13 ...մածունը ես լպստեմ, քեզ գող կստուի կանչեմ—այսպես կոչված՝ «Փխիկի գանալու» ժողովրդական լեզունդի առաջին արձանագրումն է սույնը,

որը հետագայում գեղարվեստական մշակման է ենթարկել Հովհաննես Թուման-
յանը (1886 թվականին):—78

¹⁴ Սևանու ճգնաժամներն են լավ կարգավոր...—անցյալներում Սևանա կղզի-
զու անապատում ճգնող մենակյացները հայտնի էին իրենց խստակենցաղու-
թյամբ: Այս միջավայրում ձևավորված ավանդական գրույցներից է հայ դրա-
մատուրգ Լևոն Մեղրությանը (Ծանթ, 1869—1951) փոխ առել իր «Հին աստված-
ներ» դրամայի պոեմն:—78

¹⁵ ...Մեզ մեկ ասող չի՝ ըլում, թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ընչի՞
համար ենք եկել աշխարհ... երկրումը ի՞նչ պետք է անենք...—այս հարցերը
ծառացել են բոլոր ժամանակների մեծ մտածողների ու արվեստագետների առ-
ջև: Մի առիթով ժամանակակից ռուս գրականագետ Ս. Ավերինցևը անդրա-
դառնալով բյուզանդական գրականության ճախակարապետներից մեկի՝ Գրիգոր
Նազիանզյանի (մոտ 329—380) քնարերգությանը, նկատել է, որ այն լիքն է
«ծանր, անորոշ և անլուծելի հարցումներով», և ի հավաստումն իր մտքի՝ վկա-
յակոչել այս խոսքերը.

Ո՞վ եմ ես, որտեղի՞ց եմ եկել, ո՞ր եմ գնում՝ չգիտեմ,
եվ չեմ կարող գտնել մեկին, որը խրատեր իմն...

(„Памятники византийской литературы IV—IX веков“, М., 1968, стр. 70).
Նույն հավերժական հարցման արձագանքն է նաև Պաուլ Գոգենի «Որտեղի՞ց
ենք գալիս մենք, ո՞վ ենք մենք, ու՞ր ենք գնում մենք...» կտավը (վրձնված է
1897-ին), որը նկարիչն անվանել է իր «Ռոզկոր կտակը» (տե՛ս Բ. Դան-
ельсон, Гоген в Полинезии, М., 1973, стр. 160):

Զնայած որ Գրիգոր Մեծի հեղաբեկված ու անորոշ ժամանակներից մինչև
Պ. Գոգեն բազում դարեր էին անցել, բայց ազգի ու հայրենիքի բախտով ապ-
րող մարդիկ վերստին կանգնած էին նույն անորոշության առջև, նույն երկրնա-
րանքի մեջ: Այսպիսի ծանր ու անորոշ վիճակի մեջ էր աճա՝ նաև ի. Աբով-
յանը, մինչև ստեղծագործում էր «Վերք Հայաստանին», հետևաբար և նրա հար-
ցումները խոր ենթիմաստ ունեին:—74

¹⁶ ... խնամի Հարություն...—այս կերպարի ճախատիպը հեղինակի Ռոր-
եղբայրն է, Հարություն Աբովյանը (մոտ. 1776—1850 կամ 1851), որը մի
պատմաբան և շրջաֆայց անձնավորություն էր: Ժամանակակիցների վկա-
յությամբ՝ Հարությունն է եղել ի. Աբովյանին էջմիածնի վանք, կրթության տա-
լու սկզբնապատճուրդ: Ժամանակ առ ժամանակ նա վարել է Քանաքեռ գյուղի
ժառանգական տանուտերության պաշտոնը, որը պատվավոր կոչում էր: Հա-
րությունի կյանքը նյութ է տվել նաև Ակսել Բակունցին, Աբովյանին նվիրված
վեպի «Գործ Մայրանա, դստեր Մկրտումի» գլուխը հյուսելիս (Միրզամի կեր-
պար):—74

¹⁷ Երանի՜ խաղաղարարաց...—ըստ Մատթեոսի ավետարանի (Ե, 9)՝ այս-
պես կոչված Լերան քարոզի ժամանակ Հիսուսի տված ինը երանիներից յոթե-
րորդը՝ «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք աստուծոյ կոչին», որով կոչ
էր արվում դաշնությունն ու խաղաղությունն հաստատել մարդկության միջև:—82

¹⁸ ...թշնամուղ գլխին կրակ կածես...—տարակարծությունների տեղիք տվող
այս թերի արտահայտությունը, որքան հայտնի է, աստվածաշունչ մատան-
ներից չի բաղված, այլ Աբովյանի հերոսի՝ գեղջուկ անգրագետ քահանա
Տեր Մարկոսի երևակայության ծնունդն է, իբրև հաստատումն ու մեկնաբա-
նումն Լերան քարոզի մտքերի: Տեր Մարկոսն ուզում էր հասկացնել տանուտեր
Օհանեսին, որ եթե նա ձգտի հալածել կամ պատժել թշնամուն (տվյալ դեպ-
քում՝ գզիրին), ապա կոտնահարի աստվածային պատգամները: Բայց, ինչպես
վիպական դեպքերի կածակնային ընթացքն է ցույց տալիս, անհիշաչարության
այդ հորդորը ի վերջո պատուհաս է դառնում կարդացողի գլխին: Ջայրացած
տանուտերը այլևս անկարող լինելով հասկանալու դիմացինին՝ քահանայի ա-
սեկիքը թողնում է բերանում, լիստա, և գոհիկ խոսքերով անվանարկում ու
պատժում հենց խաղաղարարին՝ Տեր-Մարկոսին: Սա իրական կյանքի և ավե-

տարահակաճ ուսմունքի անճերդաշնակությունն ապացուցող առօրեական դիպվածներից մեկն է, որի վրա և հեղինակը հատուկ միտումով հրավիրում էր ընթերցողների ուշադրությունը:—82

¹⁹ Տե՛ր աստված, դու մեր Ռուս թագավորի սիրտը ռահմ քցես, որ գա, մեզ ազատի...—Քաղոց ձգտումն ու աղերսը՝ ռուսաց տիրապետության տակ անցնելու համար, հարյուրամյակների պատմությունն ունի: Տակավին 1703 թ. մայիսի 7-ին հայ մելիքների՝ Պետրոս Մեծին ուղղված աղերսագրում կարդում ենք. «Վաղեսի գրոց լսեր ենք և այսօր երևելի աջօր բացօր կուհաւատամք, որ քեզանով պիտի լինի ամենալն քրիստոնէից արձակումն, և լինիս ամենից ծովու, ցամաքի հրամաօղ մեծ թագաւոր» („Русско-армянские отношения в первой трети XVIII века“, Сборник документов, т. II, часть I, Е., 1964, стр. 240):

Իսկ դեկաբրիստ Ե. Լաչինովը (1799—1875) իր «Խոստովանություններում» ասում է, թե հայերը պատմել են իրեն, «որ արդեն շատ վաղուց մեռնող հայերը կտակում էին որդիներին՝ զանգերի ուրախ դողաճջով լուր տալ իրենց գերեզմաններին, երբ կբացվի հալոց երջանկության արևը, երբ ռուսները կազատագրեն նրանց տանջալից լծից և կհավաքեն Հայաստանի թշվառ ու ցրված զավակներին» (М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. I, Е., 1956, стр. 382): Այնպես որ «Վերջին» հիշյալ էջերը հայության

պատմական տրամադրությունների ճշմարտացի վերարտադրություններն են:—84

²⁰ Ավետի՛ք, քո որդու կարմիրը կապե՛մք...—Ենթադրվում է, որ այս արտահայտությամբ Խ. Աբովյանը նկատի ուներ իր հորը՝ Ավետիք Աբովյանին (1778—1834) և անձամբ իրեն: Կարմիրը կապել նշանակում է ամուսնացնել կամ արժանանալ որդու պսակին (հարսանիքին):—85

²¹ ...«Երևեցալ խնկաբերիցն» ասում...—Աբովյանը նկատի ունի Ներսես Ենոքիայու «Նորաստեղծեալ բանն լանէից...» սկսվածքով հանրահայտ շարականի («Երգ առաջնոյ ատուր միաշաբթին, և ի խորհուրդ արարչութեանն, և լաւութեան Քրիստոսի») նախավերջին տան հետևյալ տողերը.

Երևեցար խընկաբերիցն՝
Յողջոյն կենաց ուրախալից,
Եւ ի լերինըն Գալիլեայ
Առաքելոց մետասանից.
Արժանացո՛ղ զմեզ ընդ նոսին
Ջքեզ տեսանել յօրըն վերջին:
Եկա՛յք, փրկեալք ընդ զուրթնոյն,
Տո՛ւք օրհնութիւն լարուցելոյն:

(«Շարական հոգևոր երգոց», Կ. Պոլիս, 1853, էջ 656:—Նույնը, Ս. Էջմիա-ծին, 1861, էջ 584:—«Հնար հայկական», խմբ. Մ. Միանասարյանց, Ս. Պետեր-բուրգ, 1868, էջ 71 և այլն):

Ինչ վերաբերում է անձամբ «խնկաբերներին» կամ «խնկաբեր կանանց», ապա նրանք, ըստ Մարկոսի ավետարանի, երեքն են՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը և Սողոմեն (ԺՁ, 1), ըստ Մատթեոսի՝ միայն առաջին երկուսը (ԻԸ, 1), ըստ Հովհաննեսի՝ միայն առաջինը (Ի, 1), իսկ ըստ Ղուկասի՝ առաջին երկուսը, Հովհաննան և ուրիշ անանույններ (ԻԴ, 10):—87

²² ...թոփի բերնին կոճեին, կքցեին...—պարսիկների տիրապետության շրջանում պատժի տարածված միջոց էր սա. հանցավորի ձեռքերն ու ոտքերը կապկպում, դնում էին թնդանոթի փողի մեջ ու կրակում: Այսպես են 1827 թ. սեպտեմբերի վերջերին պարսիկները պատժել երևանցի Աստվածատրյանին, որը Ներսես Առաքյալակեցու հանձնարարությամբ, գաղտնի թափանցելով Երե-վանի պաշարված բերդը, թողուցիկներ էր բաժանում բնակիչներին ռուսներին անձնատուր լինելու կոչով: Նույն պատժի միջոցն է ակնարկվում նաև «Թոփի

քերական ա՛ք ջանը» արտահայտությամբ (տե՛ս սույն գլխի 6-րդ հատվածը, էջ 99, տող 13):—92

²³ Ո՛վ զինավոր սուրբ Գեորգ, ո՛վ սուրբ Կարապետ...—անցյալներում հայերի շրջանում տարածված այս արտահայտությունն օգտագործում էին դժբախտության կամ անելանելի վիճակի մեջ ընկնելիս: Երկու սրբերն էլ իրենց հրաշագործությունների համար կիրված էին ժողովրդի կողմից: Նրանց պատվին կառուցվել են վանքեր, հորինվել են շատ երգեր ու խաղեր, պատմվել են զանազան ավանդություններ: Մեծ նախատակ, զորավար սուրբ Գեորգը զոհվել է Դիոկղետիանոս կայսեր ժամանակ, IV դարի սկզբին, քրիստոնեությունը քարոզելու ժամանակ: Նրա հիշատակը հայերը տոնում էին աշնանը, վարազա խաչի շաբաթ օրը: Սուրբ Կարապետը հայտնի Հովհաննես Մկրտչի մականունն է, որին հայերը համարում էին աշուղների և բմբիշների հովանավոր: Նրա սրբատեղին Մշո սուրբ Կարապետի վանքն էր, ուր ամառվա ամիսներին ուխտ էին գնում ժողովրդական երգիչներն ու գուսանները, նաև բազմահազար ժողովուրդ՝ հայության ամենահեռավոր գաղթավայրերից (օրինակ՝ Նոր Նախիջևանից):—97

²⁴ ...զնա՛ Փամբակ, Թիֆլիզ, ոսի հողը...—1801 թվականին, Վրաստանը Ռուսաստանին միացնելու հետ, Ռուսաստանի տիրապետության տակ են անցնում նախ՝ Փամբակի (այժմյան ՀՍՍՀ Սպիտակի) շրջանը, իսկ փոքր անց՝ նաև Ծիրակը, Գյումրի քերդով հանդերձ: Երևանյան նահանգի շատ հայեր, այդ օրերից սկսած, պարսից հարստահարություններից փրկություն որոնելու նպատակով՝ մեծակ կամ ընտանիքներով, փախչում, հեռանում կամ գաղթում էին հիշյալ գավառը, դեպի Տփղիս և Անդրկովկասի՝ Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող մյուս բնակավայրեր:—99

²⁵ Զավաթ խանը... Նաղի խանը...—վերջինը՝ Նաղի խանը, Հուսեյն Ղուլի խան սարդարի իշխանության շրջանում երևանյան նահանգի պարսից պաշտոնյաներից էր, առաջնորդը Ղարափափախների և հայտնի իր ռազմամոլությանը ու դաժանությանը (այդ կիսաքոչվոր ցեղը բնակվում էր Սևանա լճի հարավային ափի երկայնքով): Զավաթ խանի անձնավորությունը պարզված չէ: Այդ անունն էր կրում տակավին 1780-ական թթ. վերջերին Երևանի բերդի պարետը և քաղաքապետը, որը բնակվում էր Դամուրբուլաղ թաղում:—102

²⁶ Նոր էլ Հայոց սարվազի նայիրությունը նրան էին տվել...—սարվազ կոչվում էին պարսից զինվորները: Անցյալներում Երևանի խաները հայերից ևս հավաքում էին զինվորներ, որոնցից կազմում էին հատուկ ջոկատներ իրենց հայ հրամանատարով: Խոսքը վերջիններիս մասին է: Որքան հայտնի է, XIX դարի 10—20-ական թթ. հայոց սարվազների հրամանատարը Մելիք-Աղամալյան Սահակն էր: Դա անուղղակիորեն հաստատում է նաև Ն. Աբովյանն ինքը, վեպի երկրորդ գլխում, Խլղարաքիլիսայի պաշարման նկարագրության մեջ (տե՛ս սույն գրքում, էջ 177):—102

²⁷ Հարսի ջան... Վարդիթե՛ր ջան, իմ մանիշակ...—իմշախ երևում է, վեպի կենտրոնական հերոս Աղասու կնոջ անունը, Աբովյանի սկզբնական դիտավորությամբ, պետք է լիներ Վարդիթե՛ր: Հետագայում սակայն հեղինակն իր միտքը փոխել է և հերոսուհուն կոչել՝ Նազլու, մոռանալով վերացնել առկա հակասությունը:—103

Գ Լ Ռ Խ Ե Ր Կ Ր Ո Ր Ղ

¹ Բա՛զի վախտ, որ մարդ մեկ քանդված տեղի...—«վերջ» մասնավորապես ուսերեն հրատարակությունների մեջ (երբեմն նաև՝ հայերեն), թյուրիմացաբար, այն չափածո հատվածը հաճախ միացվում էր առաջին գլխի վերջաբանին, այնինչ իրականում, երկրորդ գլխի մուտքը կամ բնաբանն է:—111

² մեկ ոտը Կոնդումը, մեկ ոտը Դամուրբուլաղի գլխին դրած...—երկուսն էլ հյին Երևանի խաղամասերի անուններն են: Կոնդում ապրում էին հայեր և բոշաներ, Դամուրբուլաղում՝ բազառապես մահմեդականներ (պարսիկներ, թուրքեր և ադրբեջանցիներ):—112

³ Նրա (Երևանի բերդի—Պ. Հ.) պատմությունը խավարի միջումն ա...—Երևան քաղաքն ու բերդը Ռիմնադրել են ուրարտացիները, Արգիշտի I թագավորի ժամանակ (786—764 մ. թ. ա.), ավելի ճիշտ՝ 782 թվականին, Էրեբունի անունով: Հետագայում այն մի քանի անգամ ավերվել ու վերաշինվել է: Արքվյանի նկարագրած բերդը կառուցված է թուրքերի տիրապետության շրջանում, 1583 թվականին:—112

⁴ ...անասոված Բելա...—Սեմական ժողովուրդների Ռնագույն աստվածներից, Բաբելոնի գերագույն տեր և ամպրոպի աստված Բել-Մարդուկը, որին համապատասխանում են Ռույների Ջևաը և Ռայոց Արամազդը: Ըստ ազգային գրությունների՝ Բելի դեմ է մարտնչել, նրան սպանել և Հայաստանի համար ազատ գոյատևման իրավունք նվաճել Հայկ Նահապետը:—113

⁵ Ծամիրամ՝ աշխարհ տիրելով...—Ասորեստանի թագուհի (IX—VIII դդ. մ. թ. ա.) և Ռնագույն առասպելների հերոսուհի:—113

⁶ ...մեր հրեշտականման Արայի...—Ըստ պամեդական հայ պատմագրության՝ Հայկ Նահապետի զարմիկներից (7-րդ սերունդ), Ռոչակված էր իր մարմնական գեղեցկությամբ ու Ռավատարմությամբ առ Ռայրեհիք ու ընտանեկան սրբություններ: Հեթանոս հայերի շրջանում ու Ռին Արեելյում տարածված է եղել Ծամիրամի և Արայի պաշտամունքը: Ըստ այդմ՝ Ծամիրամը պտղաբերության և սիրո աստվածուհի էր, նման Իշտարի և Դերկետոյի, գեղեցիկ, վաճառու և պատերազմասեր: Արան մեռնող և հարություն առնող բնության անձնավորումն էր, զարնան, երկրագործության և ցանքի աստվածը, որ ավելի հայտնի է Արա Գեղեցիկ անունով:—113

⁷ Ջարմայր—ըստ պամեդական պատմագրության՝ հայ իշխան, որ մասնակցել է Տրոյական պատերազմին և զոհվել: Հոմերոսի «Իլիականում» (երգ II, տողեր 861—862) հիշվում է փոյուզիացիների հետ Պրիամոսին օգնության եկած Ասկանեսու անունով մեկը, ի դեմս որի որոշ հետազոտողներ ուզում են տեսնել հայերին ու Ջարմայրին:

Փյուրգացոց, հեռասահման, Ասկանիայից բերել էին
Ասկանեսոս ու Ֆորգիսը, երկուսն էլ քաջ ու մարտատենչ...

Ջարմայրն, ընդհանրապես, սիրելի կերպար է հայ ուսանողիկների համար և նյութ է դարձել ուրիշ երկերի (Ռ. Պատկանյանի «Ջարմայր Նահապետի մահը» պոեմը):—114

⁸ Աքքիլեսի հետ Հեկտորի դեհն ուզեցավ պահի...—Ռույն հերոսներ, որոնց զուգրգել է Հոմերոսն «Իլիականում»:—114

⁹ Պարույր՝ Արբակի հետ Սարդանաբադին էրեց...—ըստ Խորենացու Հայոց Պատմության՝ Պարույրն առաջին հայ թագավորն է, որի օրոք Հայաստանն ինքնուրույնություն է ձեռք բերում: Ակադ. Բ. Պիտրոպսկու կարծիքով՝ ըստ Արմե-Շուպրիայի կառավարիչն էր և իշխել է ուրարտական Սարդուր III-ի (645—635) ու հաջորդների ժամանակ: Արբակը մարաց Վարբակես կամ Կիաք-ուար թագավորն է (625—584), իսկ Սարդանաբադը՝ Բաբելոնի վերջին թագավոր Նաբոպալասարը (626—604):—114

¹⁰ Տիգրան՝ Կյուրոսի հետ Ամդարակա հոգին առավ...—Արքվյանի աղբյուրը Խորենացու Հայոց Պատմությունն է, որն իր հերթին օգտվել է Ռնագույն վիպական երգերից ու առասպելներից: Ըստ նորագույն հետազոտությունների՝ Տիգրանը նույն Տիգրան Երվանդյան հայ թագավորն է, որ գործել է մ. թ. ա. VI դարում (մոտ. 560—535), նրա մասին եղած Ռնագույն հիշողություններն անփոփոխ են Քսենոֆոնի «Կյուրոպեդիա» երկում: Կյուրոսը՝ արեմենյան համանուն թագավորն է (558—530), իսկ Ամդարակը՝ մարաց թագավոր Աստիագը (585—550): Հայոց պամեդական պատմագրության այս ու նախորդ ականավոր դեմքերից մի բանասի Ռերոսական սխալմաների ու վեհ գործերի նմանօրինակ թվարկումներն ու զուգորդումներն, ի դեպ, առաջին անգամ հանդիպում են Իրավյանի գրքաներեն ակնարկներում (1884/35 թթ.), զրեթե նույն խոսքերով, նույն հաջորդականությամբ և յուրօրինակ մեկնաբանությամբ: «Ասում են, որ Պրիամոսը օգնություն է խնդրել հայերից, իսկ հայ

Քերոս Զարմայրից Մովսէս Խորենացին կամենում է Աքիլէսից հաղթված տեսնել: Կտորոսը դաշն է կնքել Տիգրանի հետ, որի քրոջը, որը Աժդահակի կինն էր, անարգել էր վերջինին: Թո՛ղ այս բոլորը համարվեն ավանդություններ ու մտացածին բաներ, բայց դրանք այնուամենայնիվ անսպառելի ու մեծ արժեք ունեն այս ժողովրդի աչքում և, անշուշտ, ո՛չ պակաս կարևոր ազդեցություն են թողել նրա մտածելակերպի վրա» և այլն (Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, Բ. VIII, էջ 25): Նշանակում է, վեպի երկրորդ գլխի առաջին էջերում առկա պատմական վերնուշերտն ու անդրադարձումները կատարված են ըստ ավանդական ու ժողովրդական պատկերացումների, ակնհեր ժամանակների մասին ժողովրդի հայացքները հարազատորեն վերարտադրելու հոգացությունից ելնելով, և ամեն դեպքում չէ, որ պիտի նույնացվեն հեղինակի սեփական ընկալումների ու ըմբռնումների հետ:—114

11 ...Վահե՛ Դարեհ Կողոմանի հետ Ալեքսանդրի ճամփեն ուզեցա՞վ բռնի...—Վահեն, ըստ Մովսէս Խորենացու, հայոց նահապետներից է և սերում է Վահագն Վիշապաքաղից, իսկ վերջինս էլ, իր հերթին, որդին էր հռչակավոր Տիգրան Երվանդյանի: Դարեհ Կողոմանը Աքեմենյան Դարեհ թագավորն է (336—330), անհարկվող կոնիվը՝ Գավգամելայի ճակատամարտը (331 թ.), որի ժամանակ Դարեհի գործերի կազմում, ընդդէմ Ալեքսանդր Մակեդոնացու (356—323), մարտնչում էին ճակ հայերը: Հույն պատմիչ Արիանոսի «Ալեքսանդրի արշավանքը» երկից պարզվում է, որ հայերը, հիրավի, կոչվում էին բացառիկ անճնազոհությամբ ու հերոսաբար: Ստորև մեջքերվող հատվածին Արովյանը պետք է որ ծանոթ լիներ.

«Աջ թևի առջևում շարված էր հայերի և կապադոկիացիների հեծելազորը, և կանգնած էին 50 մարտակառքեր... Այստեղ դեռ չէր հասել Դարեհի փախստյան լուրը, և հեծյալները շրջանցելով Ալեքսանդրի ձախ թևը՝ հարձակվեցին Պարմենիոնի զինվորների վրա: Որովհետև սկզբում մակեդոնացիների վիճակը կասկածելի էր թվում, ուստի Պարմենիոնը փութով գեկույց է ուղարկում Ալեքսանդրին, թե ի՞նքը արքանի մեջ է և օգնության կարիք է ըզգում...»: Ամմիչապէս դադարեցնելով հետապնդումը՝ Ալեքսանդրը վերադառնում է, և «Սկսվում է հեծյալների մարտը»՝ այս ճակատամարտի ամենաթեժ կոնիվը: Խորքում, ջոկատներով շարված բարբարոսները շրջվեցին և հարձակվեցին Ալեքսանդրի զինվորների վրա՝ կանգնելով նրանց դէմ-հանդիման: Նրանք ձեռքերը տեղեր չառան, չսկսեցին պատվել, ինչպես սովորաբար լինում էր հեծյալների մարտերի ժամանակ. յուրաքանչյուրը խոցում էր նրան, որ իր դիմացն էր, իր միակ փրկությունը տեսնելով դրա մեջ: Ծտապելուց՝ նրանք խոցում էին ու իրենք էլ ընկնում. չէին խղճում ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը. արդեն կոչվում էին ո՛չ թե օտարի հաղթանակի համար, այլ հանում սեփական անձի փրկության... Բայց այստեղ էլ հաղթում է Ալեքսանդրը» (Арриан, Поход Александра, V.—I., 1962, էջ 113, 115—116, գիրք Բ, XI, 7, XIV, 7 և XV, 1—2): Վահեի անունը Արիանոսի գրքում չկա, բայց հայերը պետք է որ հրամանատար ունենային, որն էլ, ըստ ավանդության, Վահեն է եղել:—114

12 Վաղարշակ Պարթևը՝ իր եղբայր Արշակի ոտը...—Վաղարշակին, որպես հայ Արշակունիների հարստության հիմնադրի, հիշում է Խորենացին, որի ցունդների համաձայն այս Վաղարշակը եղբայրն էր Արշակ Մեծի, իսկ վերջինս էլ Պարթևաստանի ճշմարվոր արքաներից էր և իշխել է 53 տարի, մոտ մ. թ. ա. 194-ից (իրականում՝ մոտ 210—190 մ. թ. ա.): Անտարակույս է սակայն, որ առաջին հայ Արշակունի թագավորը Տրդատ I-ն է (54—60 և 63—70 մ. թ.), եղբայրը պարթևական հզոր թագավոր Վաղարշ I-ի (մոտ 50—76 մ. թ.): Այսպիսով՝ շփոթված են թագավորների և եղբայրների անունները:—114

13 Տիգրան՝ արքա արքայից... Անճիբալ գորապետին իր մոտ հրավիրեց...—արքայից արքա Տիգրանը, որ Տիգրան Մեծն է, Մեծ Հայքի թագավոր է եղել մոտ. մ. թ. ա. 95—55 թթ., իսկ Կարթագենի հռչակավոր գորավար և Հռոմի համառ ու երդվյալ թշնամի Հաննիբալը ապրել է մոտ 247/46—183 թթ.: Արովյանը շփոթել է անձերն ու ժամանակները: Դեռ Պլուտարքոսն է ասել, և գիտնականներն էլ այժմ հավանական են գտնում, որ Հաննիբալը Հայաստանում

եղել է Արտաշէս I-ի օրոք (189—մոտ 160 մ. թ. ա.), որը նրա խորհրդով կառուցել է Արտաշատ մայրաքաղաքը:—114

¹⁴ ... ուր որ քաջաճաղ՞ճ Տրդատ...—ըստ ավանդական հայ պատմագրության ու հին փիլասոսական երգերի՝ խոսքը Տրդատ III-ի (մոտ 287—330) մասին է, մինչդեռ իրականում Հռոմում եղել է Տրդատ I-ը (տե՛ս նաև վերելուն, Ռատաբարանի 4-րդ ծանոթագրությունը):

¹⁵ Իջման տեղի կերպը...—նկատի ունի ամենայն հայոց հոգևոր կենտրոնը՝ Էջմիածնի Մայր տաճարը, կառուցված IV դարի սկզբներին:—114

¹⁶ Վահան՝ ընտիր եղբայր նորա...—հինգերորդ դարի հայ նշանավոր պետական գործիչ և զորավար, Վարդան Մամիկոնյանի եղբորորդին: Երկար տարիներ մարտնչել է Հայաստանի անկախության և հայ ճախարարության իրավունքների վերականգնման համար: Գլխավորել է 481—484 թթ. ժողովրդական ապստամբությունը ընդդեմ պարսկական զավթիչների, փայլուն հաղթանակներ տանելով Ակոտի (481 թ.) և Ներսեհապատի (482 թ.) ճակատամարտերում: 484-ի վերջերին ստորագրել է Նվարսակի դաշնագիրը, որից հետո ընտրվել է Հայոց մարզպան՝ կառավարելով Տանուտիրական Հայաստանը շուրջ 15 տարի և ծավալելով շինարարական գործունեություն:—114

¹⁷ Վասմշապուհ...—Արշակունյաց Հայաստանի պարսկական մասի թագավոր, իշխել է 388—414 թթ.: Նրա ժամանակ, 405 թ., Մետրա Մաշտոցը (մոտ 361—440, փետր. 17) ստեղծեց հայոց գրերը և սկիզբ դրեց հայալեզու գրականությանն ու դպրոցին:—114

¹⁸ ...Ռուբինյանք, Բագրատունյանք...—Ռուբինյանները Կիլիկյան Հայաստանի իշխաններ և թագավորական Ռարստունյան հիմնադիրներ էին: Կառավարել են 1080—1375 թթ.: Նշանավոր էին, հատկապես, Լևոն II (1187—1219), Հեթում I (1226—1270) և Լևոն III (1270—1289) թագավորները: Իսկ Բագրատունիները հին Հայաստանի ճախարարական Ռոչակավոր տներից էին, թագադիր ասպետներ, և արդեն IX դարու վերջերից՝ թագավորական նոր Ռարստունյան հիմնադիրներ, որը գերիշխող դիրք ուներ Անդրկովկասի մյուս թագավորությունների նկատմամբ. նրանք կրում էին «Թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը: Բագրատունիներն իշխել են գլխավորապես Շիրակում և հարակից շրջաններում, 885—1045 թթ.: Հռչակվել են մասնավորապես Ռարստունյան հիմնադիր Աշոտ I-ը (885—890), նրա թոռ Աշոտ Բ Երկաթը (914—928), Աշոտ III-ը (953—977) և Գագիկ I-ը (989—1020), որոնց ժամանակ երկրի տնտեսական ու մշակութային կյանքն ապրել է բուռն ծաղկում, կառուցվել են ճարտարապետական հույակապ կոթողներ: 961-ին Անին Ռոչակվել է Բագրատունյաց մայրաքաղաք:—114

¹⁹ ... ուր ասորիք, պարսիկք, հոնք, ալանացիք, մակեդոնացիք, հռովմայեցիք, արաբք, օսմանցիք ջրհեղեղի պես վրա եկան, հարյուրավոր ազգ ու աշխարհ ոռոգակոխ արին... և այլն—Հայոց երբեմնի հոգևոր ու քաղաքական ծաղկուն կյանքի խաթարման պատճառները արևելյան և արևմտյան ուզմամբ ցեղերի ու տերությունների աշխարհակալական նկրտումների և Հայաստանի աշխարհագրական դիրքի մեջ փնտրելու սույն փորձն ու համապատասխան մեկնաբանությունը, որն Աբովյանի համար հաստատ համոզում էր, այս ու հաջորդ պարբերություններից բացի առկա են նաև սույն վեպի երրորդ գլխի 11-րդ հատվածում (տե՛ս էջ 284) և Աբովյանի ուրիշ գրվածքներում, փորք-ի՜նչ այլ ձևակերպմամբ (տե՛ս «Համառոտ ակնարկ հայերի մասին», հ. VII, էջ 28—27:—«Զվարճախ ու կարճ պատմությունը» ժողովածվի «Մեկ-երկու խոսք էլ հայոց վրա» հատվածը, հ. IV, էջ 96—100: —«Ուղևորություն դեպի Անիի ավերակները», հ. VII, էջ 122—123, 147), և իրենց ակունքներն ունեն Լուսավորության դարաշրջանի եվրոպական մեծ մտածողների, մասնավորապես Յոհան Գոթֆրիդ Հերդերի (1744—1803) երկասիրություններում: Վերջինիս «Մտքեր մարդկության պատմության փիլիսոփայության վերաբերյալ աշխատության մեջ (1784—1791 թթ.) հայոց մասին ասված է. «Քրիստոնեությունը Հայաստանում մուտք է գործել վաղուց, սի ինքնատիպ դպրությունը պարզելով այդ հին, սքանչելի լեզվին, իսկ դպրության հետ էլ՝ Սուրբ գրքի երկու-երեք թարգ-

մանությունն և, դրանից էլ բացի, մի Հայոց պատմությունը: Սակայն ո՛չ Մես-
րոպը, որը հորինել էր գրեթե, ո՛չ էլ նրա աշակերտ Մովսես Խորենացին, որը
գրեց այդ երկրի պատմությունը, չկարողացան տալ գրականության ու կամ
կյանքի ազգային կերտվածք: Հայաստանը վաղուց անտի ընկած էր պատմու-
թյան քառուղիներում: Առաջներում նրան տիրել են պարսիկները, հույները,
հռոմեացիները, իսկ այժմ՝ արաբները, թուրքերը, թաթարները, քրդերը: Դեռ
Ռիմա էլ Հայաստանի բնակիչները պարապում են իրենց Ռին գրադուներով՝
առևտրով: Գիտության, պետության շենքերն այստեղ անկարելի էր բարձրացնել
ոչ քրիստոնեության օգնությամբ, ո՛չ էլ առանց նրանց օժանդակության...»
(Հերդերի գլխավոր աղբյուրներն են եղել Ուիստոն եղբայրների 1736 թ. հրա-
տարակած «Մովսես Խորենացու Հայոց պատմության» առաջաբանը և Շրյոդերի
«Գանձ արամյան լեզվի» աշխատությունը: Տե՛ս Иоганн Готфрид Гердер,
Иден к философии истории человечества. пер. А. В. Михайлова, изд.
„Наука“, М., 1977. с. 491):

Խղճամիտ համեմատությունը մեզ իրավունք է տալիս ասելու այսպիսով, որ
Հերդերի որոշակի ազդեցության տակ են կաղապարվել Արեվյանի պատմա-
փիլիսոփայական լուսաբանությունները, և դրա ապացույցներից է ո՛չ միայն
«Վերքի» խնդրո առարկա դրվագը, այլև «Մեկ-երկու խոսք...»-ի հաջորդ պար-
բերությունը, որ կարծես համառոտությունը լինի վեպի երկրորդ ու երրորդ
գլուխների 114—115 և 284—285 էջերի ու, մի որոշ չափով էլ, լեյլայն բանա-
վե՛ճ՝ հայոց մասին գրող օտարերկրացի գիտնականների: «Թե Հայկա, Արամա,
Ջարմայրի, Պարույրի, Վահեի, Վաղարշակա, Տիգրանա, Տրդատա, Վռամշապու,
Վարդանա, Վահանա անվանքը ազգին չեն հայտնի, թե մեր Ռին քաղաքների
փոշին ու մոխիրն են երկրի երեսին այժմ էնպես ցրված, թո՛ղ մեկ մտածենք,
թե ի՞նչն է պատճառը, որ Նոյան ժամանակիցն սկսած մինչև էսօր հարյուրա-
վոր ազգեր ջնջվել, գնացել են, բայց մեր ազգը է՛սօր էլ կա, է՛սօր էլ իր լեզուն
ու հավատն ունի: Ու՛ր են ասորիք, բաբելոնացիք, Ռին պարսիկք, պարթևք,
փյունիկեցիք, լիդացիք, փոյուգեցիք, եգիպտացիք, մակեդոնացիք, հռոմուս-
յեցիք, արաբացիք և այլ անթիվք: Զե՛՛ <որ> արանց էլ մեր ազգի պես Ռին,
մեր ազգիցը դիմ ավելի գորեղ ու մեծ էին իրանց ժամանակին: Ինչ ազգ որ
վեր կացավ, թե երկիր առնի, ճանապարհը մեր խեղճ աշխարհն էր. առաջ մեզ
էին ոտի տակ տալիս, հետո գնում ուրիշ ազգերի վրա: Սաղ Եվրոպա չկարաց
միայն հոնաց առաջին, գազան Ասիայի թրին դիմանալ, Զիզգիզխանն ու Լանգ
Թամուրը հո՛ շատ ազգի հոտը կտրեցին, արաբացիք կայծակի պես շատ աշ-
խարհի գլուխ ջախըփուրթ արին. թե Հայք քաջ չէին, ի՞նչպես դիմացան, ի՞նչ-
պես մինչև էսօր իրանց գլուխը պահեցին» (Ռ. IV, էջ 97):—114

29 Նադիր շահը (1688—1747)—Թուրքմենական Աֆշար ցեղի առաջնորդ,
հայտնի բռնակալ: 1736-ին Ռոչակվել է Իրանի շահ: Նադիրը պայքարել է ընդ-
դեմ թուրքական և աֆղանական գերիշխանության: 1735 թ. գարնանը ձեռ-
նարկել է արշավանք դեպի Երևան, հունիսի 8-ին Մուրադ Թափալի ճակատա-
մարտում ջարդել է թուրքերին և դուրս քշել Երևանյան խանության սահման-
ներից: Սիրաշահել է հայ բարձր հոգևորականությանը և ավագանուն: Նադիրին
մեծ հռչակ է բերել նրա հնդկական արշավանքը (1738—1739 թթ.):—116

21 ...դաջար Հասան Ալի խանը—չնայած Արեվյանը գրել է, թե թուրքերին
Այրարատյան աշխարհից դուրս վճռելուց հետո (1735 թ.) Երևանում նստած
առաջին պարսիկ խանը Հասան Ալին էր, սակայն հայ պատմաբան Հ. Ծախ-
խաթունյանի ցուցումներով՝ նա իշխել է 1755—1764 թթ., հաջորդելով Մահմատ
Ղուկի (1735 թ.), Փիրմահմատ (1736—1752) և Խալիլ (1752—1755) խանե-
րին:—116

22 Հուսեփ Ալի խանը—Երևանի խանությունը կառավարել է 1764—
1778 թթ.:—116

23 Հերակլ թագավորը...—Հերակլ II-ը (1720—1798), որ 1744-ից Կախեթի,
իսկ 1762-ից Քարթլի և Կախեթի տիրակալն էր, մի քանի անգամ արշավել է
332

Երևան (1751, 1765, 1779 թթ.), հարկատու դարձրել Գահանգի պարսիկ խաներին և իր արքայական տիրադուների շարքում ավելացրել՝ «Երևանի տիրակալ»։—116

²⁴ Մահմադ խանը...—Երևանի խանությունը կառավարել է 1779—1795 և 1798—1805 թթ.։—117

²⁵ Աղա Մահմադ խանը (Ախտա շահ, 1742—1797)...—Պարսից նոր թագավորական տան՝ Ղաջարների հարստության հիմնադիր (1779—1797), ռազմատենչ ու արյունաբիրու անձնավորություն։ 1795 թ. գրավել և ավերել է Տիֆլիսը։—117

²⁶ Մելիք Աբրահամը...—սա էր Մելիք-Աղամալյան նշանավոր գերդաստանի զարմիկը և պարսից տիրապետության շրջանում Երևանյան Գահանգի հայոց առաջնորդը, նուրբ քաղաքագետ։ Ունեցել է ռուսական կողմնորոշում և 1780-ական թթ. սկզբներից գաղտնի հարաբերությունների մեջ մտել ռուսական արքունիքի և իշխան Պոպովիկի հետ, միաժամանակ ջանալով առերես հավատարիմ երևալ պարսից տերությանը։ Ցիցիանովի 1804 թ. անհաջող արշավանքից հետո գլխավորել է Երևանի հայոց գաղթը դեպի Տիֆլիս, հետո ետ վերադարձել։ Վախճանվել է Երևանում, 1827 թ. հոկտեմբերին։—117

²⁷ Սադոկ խանը—Պարսկաստանի կիսաքոչվոր ցեղերից մեկի առաջնորդ, որն աչքի է ընկել Աղա Մահմադ խանի թագավորության շրջանում. վայելել է նրա վստահությունը, իսկ հետագայում՝ դավաճանաբար սպանել նրան։—117

²⁸ Ֆաթ Ալի շահ—Պարսից թագավոր (1797—1834)։—117

²⁹ Էս միջումն ա ըլում, որ Նախչվանու քոռ Քյալքալի խանը Ղարաա վրա կոծվ ա դուս գնում... ուզում ա, որ Փամբակ էլ մեկ ատամին խփի...—ակնարկվող դեպքերը տեղի են ունեցել 1802 թ. մարտից մայիս ընկած ժամանակամիջոցում։ Նախիջևանի նախկին Քյալքալի խանը, որ ազգական էր Երևանի Մահմադ խանի (խանի կինը նրա հարազատ քույրն էր) և Աղա Մահմադ խանի անկումից հետո պաշտոնաճակ լինելով՝ փոխադրվել էր Երևան, եռանդով խառնվում էր խանության գործերին՝ վաղուց ռազմական վեճերի մեջ էր Ղարաա փաշայության հետ, ձգտում էր զավթել նրա հողերն ու Շորազյալի դաշտը, նաև՝ արդեն Ռուսաստանին միացած Փամբակը։ Հիշյալ թվականին նա երկու անգամ արշավանքի է դուրս գալիս և երկու անգամն էլ (պարսիկ սկզբներին և մայիսի վերջերին) պարտություն կրելով ռուսական զորքերից (որոնց առաջին դեպքում օգնում էին Կարսի փաշայի զորախմբերը)՝ փութով նահանջում է։ Ինչպես վավերագրերն են պատմում՝ մասնավորապես երկրորդ անգամ ռուսական զորքերը կոպում էին գնդապետ Կարյագինի և ինչ-որ անանուն մայորի հրամանատարությամբ, որը մեծ ժողովրդականություն վայելող Ղարաա մայորը կամ մայոր Մոնտրեգորն էր։ «Վերքի» հիշյալ դրվագը, ըստ այդմ, իրական դեպքերի արձագանքն է և ճշմարտապատում (մանրամասնությունները տե՛ս «Присоединение Восточной Армении к России», Сборник документов, т. I, Եր., 1972, վավերագրեր 46, 60, 65, 68 և այլն)։—117

³⁰ Ղարաա մայորը...—Փամբակի ռուսական զորքերի հրամանատար, իսկական ազգանունը՝ Մոնտրեգոր։ Ծառայել է այս երկրամասը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու օրերից, 1801—1802 թթ.։ Նրա խիզախության և քաջությունների մասին լեգենդներ են հորինվել։ Հերոսաբար զոհվել է 1804 թ. օգոստոսի 21-ին, Սարալ գյուղի մոտ տեղի ունեցած մարտում ընդդեմ պարսից զորքերի։ Մոնտրեգորի քաջագործությունների մասին Աբովյանը պատմել է նաև իր «Առ բարեսնունդ և սիրելի աշակերտս իմ» ուղեգրության մեջ (1838 թ.)։ Մեր օրերում Ղարաա մայորին պատշաճ տեղ է հատկացրել Գ. Դևրիկյանը իր «Սրբաբաժնի հուշարձան» գրքում (Եր., 1975)։—117

³¹ ...քաջահաղթ Ցիցիանովը...—Պավել Դմիտրիևիչի Ցիցիանովը (1754—1806) ցարական զեներալ է։ 1802 թ. նշանակվելով Աստրախանի ռազմական նահանգապետ և Կովկասյան զորքերի հրամանատար՝ սկսել է Անդրկովկասյան խանությունների նվաճումը։ 1804 թ. ամռանը արշավանք է ձեռնարկել դեպի Երևան, սակայն չի կարողացել գրավել քերդը և սեպտեմբերին ետ է վերա-

դարձել: 1806 թ. ծրագրում էր նոր արշավանք, բայց շուտով սպանվում է Բաքվի մոտ:—118

³² Կենդանի ճաճատակ Հովհաննես եպիսկոպոսը...—ծնվել է Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքում, 1802—1810 թթ. եղել է Տփղիսի Ռայոց Ռոգևոր առաջնորդ, փայփայել է Թուսաստանի օգնությամբ Ռայկական պետությունը վերականգնելու գաղափարը և բոլորանվեր աշխատել Ռանուն դրա իրագործման, օգնել ռուսական զորքերին պարենով և այլն: Վախճանվել է 1810 թ. նոյեմբերին: Ժամանակակիցները նրան բնութագրել են որպես «այր Ռաննարեղ», մեծագործ և առատաձեռն»: Կենդանի ճաճատակ է կոչվել մանկության տարիներից թուրքերի ահավոր խոշտանգումներից դիմանալու և Ռավատը շուրանալու համար:—118

³³ Հովհաննես Ուզբաշի (վախճ. 1815)—սերում էր Գեղամյան իշխանական տանից, ուներ ռուսական կողմնորոշում: 1804 թ. Ցիցխանովի Երևանյան անհաջող արշավանքից հետո, եղբոր՝ Գաբրիել լուգբաշու (վախճ. 1812) և Մելիք Աբրահամ Մելիք-Աղամալյանի հետ, իրենց գյուղացիներին առած, գաղթել է դեպի Շիրակ, Լոռի և Վրաստան:—118

³⁴ Թավաթյալ խան—ըստ Աբովյանի՝ սա իշխել է 1805—1808 թթ., որ կասկածելի է, քանի որ պատմական վավերագրերի համաձայն, 1805—1807 հաջորդաբար Երևանում խանություն են արել Մեհտի Ղուկին և Մարաղայի Ահմատ խանը (վերջինը՝ 1806 թ. օգոստոսից):—118

³⁵ ...որ Գուդոփիչ...—Իվան Վասիլիչ Գուդոփիչը (1741—1820) ռուսական բանակի գեներալ-ֆելդմարշալ էր: 1806 թ. ճշանակվել է Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար: 1808 թ. աշնանը գլխավորել է ռուսական զորքերի արշավանքը դեպի Երևան:—118

³⁶ Հուսեյն խան սարդարը...—Երևանյան ճաճանգի պարսից վերջին տիրակալ Հուսեյն խանը (1807—1827) վարել է երկդիմի քաղաքականություն, մերթ սիրաշահել, բայց հիմնականում կեղեքել ու հարստախել է հայերին:—118

³⁷ Հասան խան—Հուսեյն խան սարդարի եղբայրը և Երևանի խանության զորքերի հրամանատարը, արյունարբու և դաժան անձնավորություն: 1827 թ. հոկտեմբերի 1-ին գերի է վերցվել ռուսների կողմից և հետո՝ ազատ արձակվել:—118

³⁸ ...պարոն Զավրով, Խերեղինովը, Դավիթ Թամամշովը, Մովսես Տեր-Գրիգորովը, հազար մանթրոնով կխաբռնեն, իրանք իրանց տեղ կբաշխեն, ժամ կշինեն...—Վեպի այս ու հետագա որոշ կտորներ, ամենայն հավանականությամբ, ուշ լրացում են, կատարված ոչ վաղ, քան 1844 թ., քանի որ Տփղիսի նոր (Վերայի) գերեզմանատանը (այն հիմնադրվել էր 1836-ին, աշնանը, Մոսկովյան ուղեկալի կամ Մոսկովսկի զատապի մոտ) եկեղեցի կառուցելու հարցը հարուցվել է 1843-ին: Ներքին գործերի մինիստրի ու կայսեր հանությունն ստանալուց հետո, 1844 թ. հունիսին, շինարարական աշխատանքները հանձնարարվել են տփղիսեցի մեծահարուստ վաճառականներ Գևորգ Զավրիյանցին, Ստեփանոս Լոռիս-Մելիքյանցին, Դավիթ Խերեղինյանցին, Սողոմոն Աբխալաբյանցին, Մովսես Տեր Գրիգորյանցին: Հիշյալ գերեզմանոցում մի առանձին մատուռ էլ կառուցել էր Դավիթ Թամամշյանը իր դստեր՝ Սոֆիայի շիրմի վրա:—124

³⁹ ... մոլլա Մասրադին առակը տեղն էկավ...—ակնարկվող առակը տարածված էր հայ և հարևան ժողովուրդների շրջանում և ունի զանազան տարբերակներ, որոնցից մեկը Աբովյանն օգտագործել է վեպի սևագրության մեջ: Մի օր Մոլլա Մասրադինը անտառով անցնելիս նկատում է, որ մի գյուղացի ծառ բարձրանալով՝ կտրում էր հենց այն ճյուղը, որի վրա նստել էր. զգուշացնում է, որ վայր կընկնի, բայց գյուղացին արհամարհում է նրա խրատը: Ծառ չէր հեռացել մոլլան, որ ճյուղն իսկապես կտրվում է, և գյուղացին գլորվում է ցած: Կարծելով որ մոլլան իմաստուն է, նա հնիհն վազում է ետևից և խնդրում ասել, թե ինքն ե՞րբ կմեռնի: Զգալով որ գյուղացու ծաղ պակաս է՝ մոլլան ասում է. «Երբ որ սև էշդ յոթն անգամ կզոռն: Եվ ահա՛ հասնում է ճակատառ»:

գրական պահը. գյուղացին ամեն ինչ երեսի վրա է թողնում, փովում գետին ու սպասում մահվան, որը չի՝ գալիս և այլն: Իմաստն այն է, թե մարդկային ճակատագրի հետ ո՛չ մի առնչություն չունեցող անցքերը հաճախ այնքան են ափաթելում անհատին ու, անգամ, ժողովուրդներին, որ սրանք, ասարսփից կուշացած, մոռանում են սեփական պայմանությունը և ամեն ինչ քարծիրների ափսոսանքով, մանավանդ, երբ տոն տվողները լինում են հոգևոր այրերը:—134

⁴⁰ **Սվանդույի խան**—իրական անձնավորություն: Հուսեյն խան սարդարի կառավարության վերջին տարիներին եղել է Երևանի բերդի պարետ: 1827 թ. հոկտեմբերի 1-ին գերի է հանձնվել ռուսներին, իսկ հետագայում՝ անցել Պարսկաստան: Լավ է վերաբերվել հայերին:—135

⁴¹ **Ջաֆար խան**—Հուսեյն խան սարդարի փոքրավորը, ծագումով՝ հայ (ղարաբաղցի), որ մանկուց գերվել է թուրքացվել էր: Սարդարի վրա ուներ մեծ ազդեցություն: Ըստ Աբովյանի՝ սպանվել է Խլղարաքիլիսայի պաշարման ժամանակ (1826, հուլիսի 16), որ կասկածելի է:—135

⁴² **Ուշթափալարի (երեք սարի) գլխին...**—բլուրների խումբ Երևանից Էջմիածին տանող ճանապարհի աջ մասում, քաղաքի արևմուտքում:—145

⁴³ **...Խալեքաճ ձորերի, բաղերի մեջը...**—հին ու արդի Երևանի հոչակավոր այգիներ, որոնք փոված են Ծիծեռնակաբերդի լանջերից մինչև այժմյան Ծառույանի շրջան, Լենինգրադյան փողոցի և Էջմիածնի խճուղու միջև ընկած տարածության վրա:—146

⁴⁴ **Գլուխանքանց կողմիցը...**—հին Երևանի մահմեդական գերեզմանոց, որ գտնվում էր Հրազդանի ձախ ափին, Կարմիր կամ Խոջա Փլավի կամուրջից վերև:—146

⁴⁵ **Կոնդի, Ծհարի տերտերներն...**—հին Երևանի գլխավոր քաղաքամասերը, որոնցից Ծհարը համընկնում է ճերկա կենտրոնին. սկսվում էր այժմյան Բժշկական ինստիտուտից և հասնում մինչև Կարմիր հանակի փողոց, ընդգրկելով Աբովյան, Նալբանդյան և Ալավերդյան փողոցների միջև ընկած տարածությունը: Այս քաղաքամասում էին Կաթողիկե և Պողոս-Պետրոս եկեղեցիները:—146

⁴⁶ **...երեսները դեպի Անապատը շուռ տվին...**—Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցին իր շրջակայքով (այժմյան Լենինի պողոտայի սկիզբը):—147

⁴⁷ **...մեներ էլ գիտներ, որ տասներկու խաչապաշտի, եթմիշիքի միլլեթի գլուխն հայն ա...**—«Տասներկու խաչապաշտ» ասելով՝ Աբովյանի հերոսը նկատի ունի ասուացին քրիստոնյա ժողովուրդներին, որոնց ավետարանական ուսմունքը քարոզել են Հիսուսի տասներկու աշակերտները կամ առաքյալները, չնայած որ «Գործք առաքելոց» մատյանի մեջ Ռիշվող ասուացին քրիստոնյա ազգերի շարքում հայերը չեն հանդիպում (դրանք են՝ հուդմալեցիները, հրեաները, արաբները, կրետացիները, պարթևները, մարերը, եթովպիացիները, իլամացիները, լիբեացիները, փոյուզիացիները, պամփյուլիացիները, Բահիլի, Եփիստոսի, Միջագետքի և Պոնտոսի ժողովուրդները, ընդհանուր թվով՝ տասներկուսից ավելի): «Եթմիշիքի միլլեթ» արտահայտությունը բառացի նշանակում է յոթանասուներկու ցեղ. դրանք էլ աշխարհի առաջին ժողովուրդներն ու ցեղերն են, որոնք, ըստ միջնադարյան պատկերացումների, ձևավորվել են աստվածաշին կամքով, Բաբելոնի աշտարակաշինության ձախողումից անմիջապես հետո, մարդկության համընդհանուր լեզվի այլափոխման ու կոտորակման պատճառով, երբ այլևս ոչ մեկը մյուսին չէր հասկանում: Ինչ վերաբերում է մյուս դավանությունների նկատմամբ հայոց կրոնի գերադաս իրիքի մասին շրջող գրույցներին, ապա հայկական միջավայրում ծնունդ առած նմանօրինակ հնօրյա լեզվեցանքներից մեկը գրական մշակման է ենթարկվել դեռ միջնադարում: Կիրակոս Գանձակեցին (մոտ 1200—1271) անդրադառնալով XII դ. ապրած Հովհաննես Գառնեցու հրաշագործություններին (դրանց մասին պատմիչը լսել է իր ուսուցիչ Վանական վարդապետից), վերապատմում է մի տեսլային գրույց, ըստ որի՝ մինչ Գառնեցին երուսաղեմ էր, նրան են այցելում պարսից Զանգիանա քաղաքից եկած մի քանի մահմեդական ուխտավորներ, որոնք հետևորդներն էին մուրդի աղանդի, և խնդրում են մկրտել իրենց հայ-լուսավորչական ծեսով, իբրև ալլոթրինակ վճռի շարժառիթ վկայակոչելով հայրենի քաղաքում, նորակառույց

մզկիթի միմարեթի կատարից իրենց երևացած տեսիլքը. ըստ այդմ՝ նրանց աշ-
քերի առջևով անցել է վերջին դատաստանի տեսարանը, և պարզ տեսել են, որ
Քրիստոսն աշխարհի կործանման օրը ամենից պատվով ընդունել է հայերին,
ընդառաջ գնացել նրանց, համբուրել և այլն. «Նա (թագաւորն երկնից—Պ.
Հ.),—պատմել են մահմեդականները,—յարեաւ յաթոռոյ ընդ առաջ նոցա և համ-
բուրեաց զնոսա՝ առաջնորդօքն իրեանց, և մեծարեաց քան զասենայն ազ-
գըսն... ազգն Հայոց էին այնքիկ, որ վիճակ հասին Թաղէտսի և Բարդղղի-
մէտսի և սրբոյն Գրիգորի» (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց,
աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 352—353):

Հովհաննես Գառնեցի, պատմել է նաև մեկ ուրիշ դեպք. իբրև թե նույն
ժամանակ Սինա լեռան գագաթ ուխտի գնացած հայերին անձամբ սպառաւորել
են Մովսես և Եղիա մարգարէները (տե՛ս նույն տղում, էջ 353—354): Այս
տեսիլքների նկատմամբ առավել վստահություն ներշնչելու համար Կիրակոս
Գանձակեցին իր պատմագրքում, որպես անմիջական ականատեսներ, մատ-
նանշում է ո՛չ թե հայերին, այլ մահմեդական այլազգիներին, վերապահե-
լով իրեն լույ անկանխակալ արծաճագրողի դեր:

Այս ու նման լեզենդների արծաճագրքներից են նաև «Վերջի» սույն հատ-
վածի շարունակության մեջ Արովյանի հերոսներից մեկի հոճետրական հար-
ցումով արտասանված խոսքերը հայոց բախտի մասին. «Երկրի թագավորու-
թյունը մեր ընչի՞ն ա պետք, երկնքումը պտի մեր աստղը բանի, որ ամեն ազգ
էլ տեսնին ու մեզ էրնակ տան» (տե՛ս սույն գրքում, էջ 150):—149

48 Գաբրիելյան փողը փչեր...—այսիքն՝ վերջին դատաստանի օրը հաս-
ներ, որ պվետելու էր Գաբրիել հրեշտակապետը:—149

49 Խոր Վիրապումը...—հին Արտաշատի միջնաբերդի բանտը, կառուցված
մ. թ. ա. II դարում, ուր նետում էին ծանրագույն հանցագործներին ու մա-
հապարտներին, և ուր, ըստ ավանդության, մ. թ. III դարի վերջերին բանտարկ-
վել է Գրիգոր Լուսավորիչը: Հետագայում Խոր վիրապի կամ բանտի վրա կա-
ռուցվել է եկեղեցի Գրիգոր Լուսավորչի անունով: Այժմյան եկեղեցին և վանքը
վերաշինվել են XVII դարում—150

50 ...մեր ամենափրկիչ սուրբ Գեղարդը...—Էջմիածնի տաճարի գլխավոր
սրբություններից, որով, ըստ ավանդության, Ղուկկիանոս հայրուրապետը խոցել
է Քրիստոսի կողը (տե՛ս Ավետարան Հովհաննո, ԺԹ, 34):—150/151

51 Քրիստոս ինքը Պետրոսի ձեռիցը թուրն առավ...—նկատի ունի Մատ-
թեոսի ավետարանի (ԻԶ, 51—52) այս դիպվածը՝ պատահած Քրիստոսի բան-
տարկության ժամանակ. «Եւ ահա մի ոմն յա՛յնցանէ, որ էին ընդ Յիսուսի,
ձգեա՛ց զձեռն և եհան զսու՛ր իւր՝ և եհար զծառայն քահանայապետիմ, և ի բա՛ց
եհան զունկն նորա: Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Դարձո՛ւ զսուր քո ի տեղի իւր,
զի ամենեքեան, որ սո՛ւր առնուցուն՝ սրո՛վ անկցին»: Պետրոսի անունն այս-
տեղ բացակայում է, բայց այն գտնում ենք Հովհաննո Ավետարանում (ԺԸ,
10—11): Արովյանը խմբագրել է դիպվածն ըստ վերջինի:—151

52 ...ամա թրի ու թվանքի փիրն օրհնած ա... Թուր որ չունիս՝ գլուխդ կըտ-
րում են, օղլուշաղդ քաշում, կերածդ հարամ անում, դատածդ խլում, քեզ էլ
եսիր անում... Աղոթքն իր տեղը, թուրն՝ իբրև Աստված դշին, հայվանին էլ յա՛
չանգ ա տվել, յա՛ պող, յա՛ ատամ, որ չանգոյի, հարու տա, կծի, իր գլուխը
պահի...—երևանցի աղա Պետրոսի և Էջմիածնից եկած եպիսկոպոսի բանա-
վենի ընթացքում շոշափված հարցերն ու օգտագործված վերոհիշյալ արտա-
հայտություններն իրենց զուգահեռներն ունեն Արովյանի պաշտելի գրողներից
մեկի՝ Ֆ. Շիլլերի «Վիլհելմ Տեկ» դրամայի գեղունկ հերոսների դատողություն-
ների մեջ, որոնք մերժելով Վալտեր Ֆյուրստի զգուշավորության հորդորները
(«Արդեն դանակը հասավ ոսկորին, /Բայց հարկավոր է սպասել մինչև...»)՝ հա-
մարձակորեն ասում են.

Մի՞թե մենք իսպառ անօգնական ենք...

Ամեն մի էակ իր պաշտպանությունն

Զենքն է ստացել մեծ բնությունից:

Հոգնած էղջերուն կանգնում է հանկարծ
 Եվ զարթուրելի իր եղջուրները
 Նա դեմ է անում որսի շներին,
 Այծը որսորդին ճետում է ժայռից,
 Եվ նույնիսկ եզն էլ, որ իր պինդ փզը
 Խոնարհ թեքում է նրա լծի տակ,
 Նա էլ, երբեմն, երբ զայրացնեն,
 Իր սուր եղջուրներն արագ շարժում է
 Եվ շարտում է տանջող թշնամուն

Եվ կամ՝

... .. Բնության անխկին
 Վիճակը նորից է վերադառնում,
 Ուր մարդը մարդու դեմ է լույ կանգնած,
 Եվ եթե ուրիշ հմար չի լինում,
 Որպես մի վերջին, վճռական միջոց,
 Նա գոնե իր սուրն է իր մոտ ունենում:
 Մենք էլ կարող ենք բռնության դեմ միշտ
 Սրով պաշտպանել ամենաբարձր
 Մեր ունեցվածքը: Մեր երկրի, կանանց
 Եվ զավակների համար կանգնած ենք:

(3. Շիլլեր, Ընտիր երկեր, Եր., 1952, էջ 782—788, 808—809):

Այս նույն հայեցակետերն առկա են նաև «Վերքի» հետագա էջերում, մինչև Արովյանը վերստին հրավեր է ուղղում իր ընթերցողներին՝ բնական օրենքի կոչով՝ որքան էլ թույլ, այնուամենայնիվ պաշտպանել սեփական արժանապատվությունն ու իրավունքը. «Վա՛ր էն ազգին, որ բնական օրենքը կթողա, անբնական կհետևի... Սարի հայվանն էլ մեզամից լավ <ա> ապրում, հարամուց, ֆորսկանից լավ փախչում, լավ վրա թողում, կտրատում, գլուխը պահում: Ծտի բունն էլ որ քանդում ենք, դժվժում, թևին-գլխին ա անում: Մենք ծտի՞ դուր էլա չկա՞նք, որ մեր բունը պահե՞նք...» (սույն գրքում, էջ 278):—151

⁵³ ...աղա Պետրոս...—1820—30-ական թթ. Երևանում մեծ հեղինակություն վայելող անձնավորություն, Բյալյան ընտանիքից: Նրա մասին ժամանակակիցներից մեկն ասում է. «Պետրոս Բյալեան ի ներկայիս (իմա՝ 1830 թ.—Պ. Հ.) է մի իշխանաց և երևելաց Երևանայ» (Մանուել Կիմիշխանյացի, Պատմություն անցից անցելոց Սեփանայ վանոց, Վաղարշապատ, 1871, էջ 76—77): «Վերքի» նույնանուն հերոսի համար ծառայել է նախատիպ:—151

⁵⁴ Ավետարանն ինքն ա ասում... և այլն—սրան հաջորդող խոսքերն առնչված են ո՛չ թե ուղղակիորեն Ավետարանից, այլ վերախմբագրված են նրա հետևություններով. տե՛ս Մատթեոս, Ժ, 37—38 («Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ո՛չ է ինձ արժանի... Եւ որ ո՛չ առնու զիս՝ իւր՝ և զայ զկնի իմ, չէ՛ ինձ արժանի...»), Մարկոս, Ը, 35, Ժ, 29—31, Դովաս, Թ, 28—29 և այլն:—152

⁵⁵ Փառք աշխարհիս, իբրև զծաղիկ խոտոյ, այսօր է և ի վաղից ցամաքի...—սույնը հարասությունն է մարգարեական գուշակությունների և առաքելական թղթերի հետևյալ խոսքերի. «Գոցցիր՝ ամենայն մարմին խո՛տ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ» (Եսայի, Խ, 6) և «Հանգի ամենայն մարմին իբրև խո՛տ է. և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ, և ծաղիկ թօթափեցաւ» (Ա. Պետրոս, Ա, 24, մասամբ և Թուղթ Յակոբայ, Ա, 10):—152

⁵⁶ Պողոս առաքյալը չի՞ ասում...—նկատի ունի Պողոս առաքյալի՝ Հռովմայեցիներից ուղղված Առաքին թղթի 13-րդ գլխի այս խոսքերը (Արովյանի վերաբերյալ վերախմբագրված են): «Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութեան՝ կայցէ. քանզի ո՛չ ուստեք է իշխանութիւն, եթէ ո՛չ յաստուծոյ, և որ ենն, յաստուծոյ կարգեալ են: Այսուհետև որ հակառակ կայ իշխա-

«Ուրեման, աստուծոյ Բրամանին Բակառակ կայ. և որք Բակառակն կան, ան-
ձա՛րցն դատաստանս ընդունին»։—152

⁵⁷ Ամեն մեկ բեկ, մեկ խան սուրբ Աթոռը գալիս...—Բետազայում Աբովյանը սարսափով էր վերաժիշում Էջմիածնի վանքում սարդար-խանների գործած կամա-
յակահույություններն ու խոփությունները։ «Ես տեսել եմ և թիշում եմ Էջմիածնի
վիճակը...—ասում էր նա,—երբ ո՛չ միայն Երևանի սարդարը, այլև նրա բազմա-
թիվ չնչին խաներն ու բեգերը, ինչն որ ցանկանային՝ գալիս էին քեֆ անելու և
վանքի հաշվին իրենց գրպանները լցնելու։ Նրանց ընդունելությունը, հյու-
րասիրությունը և ճամփու դնելն ամեն անգամ աղմկալի, հանդիսավոր ու բազ-
մամարդ էր լինում։ Բրիստոնական դրոշակներով, խաչերով ու սրբապատ-
կերներով, զանգահարությամբ, եկեղեցական երգեցողության հնչյունների տակ և
հարուստ նվերներով էր տեղի ունենում նրանց դիմավորումը, բայց այնուամե-
նայնիվ, շատ անգամ էր պատահում այդ դերի ներկայությամբ թափելու և՛
արցունք, և՛ արյուն» (Խ. Աբովյան, Ուղևորություն դեպի Անիի ավերակները,
Երևանի լիակատար ժողովածու, Բ. VII, էջ 128)։—152

⁵⁸ Ղազարապատ—Էջմիածնի վանքի հյուրանոցը, որ կառուցվել է Ղա-
զար Զահեդի կաթողիկոսի (1788—1791) օրոք։—153

⁵⁹ Ո՛չ Մելիք Սևակի...—իրական պատմական անձնավորություն, Մելիք
Սահակ Մելիք-Աղամալյան (վախճ. 1834)։ Հուսելն խան սարդարի կառա-
վարչության ժամանակ եղել է երկրամասի հայերի առաջնորդը և հայկական
ջոկատի (սարբազների) Բրամանատարը։ Արևելյան Հայաստանի ազատա-
գրումից հետո ընտրվել է Երևանի մահաբազկան վարչության անդամ։ Վաղելել
է մեծ ժողովրդականություն։—154

⁶⁰ Ո՛չ կաթողիկոսի մունաթը...—այսինքն՝ Եփրեմ Ջորագեղցու միջնորդու-
թյունը Հուսելն խանի առջև՝ տանուտեր Օհանեսի վիճակը թեթևացնելու հա-
մար։—154

⁶¹ Ջորագեղ—թաղամաս հին Երևանում, որ ընկած էր Հրազդանի կիրճում,
գետի ձախ ափին, հին կամրջի և այժմյան ակվեղուկի միջև։—156:

⁶² Նորագեղի դուզն—ավերակ գյուղատեղի Երևանից Էջմիածին ձգվող աչ-
ժռվյալ խղունձու ձախ մասում, Հաղթանակի կամրջից անմիջապես հետո։—157

⁶³ Կոզեռան դռը—Երևանի այժմյան հարեկամության, Մուսկովյան, Սպան-
դարյան և Պոռչյան փողոցների միջև ընկած բլուրը, որի հարավային լանջերին
փոխված էր հայոց գերեզմանոցը, ուր, ըստ ավանդության, թաղված էր XI դա-
րի հայ նշանավոր մատենագիր և Ռոզնոր գործիչ Հովհաննես Տարոնացին՝
մականավանյալ Կոզեռն (վերջինիս անունով էլ հետագայում կոչվել է բլու-
րը)։—157

⁶⁴ ...որ գնան... քոչեն, չունքի դալարանդդ էր, Թուսը գալիս էր...—Երևա-
նի ու շրջակա գյուղերի հայերի գաղթը դեպի հին Բալագետ և Կարս տեղի է
ունեցել 1827 թ. ապրիլի 10-ին, իբրև հակազդող միջոցառում ռուսաց զոր-
քերի գարնանային արշավանքին դեպի Հայաստան։ Աբովյանն այս դրվագը
վերարտադրելիս՝ բավականաչափ ազատ է վարվել և դեպքերը գիտակցորեն
փոխադրել է հունիս ամսին, այն էլ ո՛չ թե 1826 կամ 1827 թթ., այլ 1825-ին, որ
վավերական առումով ճիշտ չէ, քանի որ ռուս-պարսկական պատերազմն ըս-
կըսվել է 1826 թ. հոկտիս 18-ին, իսկ առաջին, կարճատև գաղթը դեպի Սև
ջրի ափեր 1826 թ. սեպտեմբերի իրողությունով էր։—157

⁶⁵ Դո՛ւ էլ սրանց հետ գնացիր, սի՛րելի եղբայր իմ Մոսի...—Աբովյանի
կրտսեր եղբայրը՝ երեքամյա Մոսին (Մովսես), զոհվել է 1827 թ. գաղթի
օրերին, Ղարսի ճամփին, պատմական Հոռոմոսի վանքի (Անիի մոտ) մերձակա
դաշտում, որ ժամանակակիցները կոչում էին Բայազետու չու։—160

⁶⁶ Մորս ծոցին...—Աբովյանի մոր անունը Թագունի էր, մի գթառատ ու
ազնիվ կին (վախճ. 1847)։—160

⁶⁷ Էջմիածնա... առաջին եպիսկոպոսը՝ Եփրեմ, հարսեղ, Հովհաննես...—
երեքն էլ պատմական դեմքեր են և ազդեցիկ հոգևորականներ. Եփրեմ Մարգ-
վանցին (վախճ. 1829 թ. ապրիլի 17) եղել է Էջմիածնի վանքի ժամանակավոր
կառավարիչ (1821-ի նոյեմբերից), հետագայում (1828 թ. հոկտեմբեր) դարձել
է Խ. Աբովյանի խնամակալը։ հարսեղ Կեսարացին (վախճ. 1845 թ. ապրիլի 23)

1824-ից Թադեի վանքի (այժմ՝ Իրաւուն) ու թեմի առաջնորդ էր, 1828-ին մասնակցել է Ատրպատականի հայոց գաղթի կազմակերպմանը դեպի Արևելյան Հայաստան և օգնել ռուսական իշխանություններին: Որքան հայտնի է, նա Երևանի բերդում բանտարկված չի՝ եղել, Արուստանը սխալվել է: **Հովհաննէս Կարբեցի** (1762—1842) Էջմիածնի մայր տաճարի ավագ լուսարարն էր, հետո՝ 1831-ից, կաթողիկոս: Փառամոլ ու քինախնդիր մի մարդ: Հալածել է Խ. Արուստանին (Դորպատից վերադառնալուց հետո):—161

⁶⁸ **Օջուզ աղին** էլ դրկեց...—Արագածի լանջերին հաստատված քուրդ քոչվորների առաջնորդ: Դիմանկարը գծել է անգլիացի ճանապարհորդ Ջեմս Մորիսը (մոտ 1780—1849):—162

⁶⁹ **Փամբակու իշխող... գորպալետն՝ Սավարզամիրզա...**—Փամբակի սահմանային գծի գորպալետնաճառար, գնդապետ Լեոնտի Յակովիչ Սավարզամիճեի մասին է խոսքը, որ ազգությամբ վրացի էր, աղքատ դասի զավակ, հետո ազնվականի կոչում ստացավ: 1828-ի աշնանից նրան փոխարինում է հայտնի պարտիզան Դեմիս Դավիդովը:—163

⁷⁰ **Մեհակ դեղդի Մեհրաբյան-Թումանյան Հովակիմի անունը...**—իրական պատմական դեմք (մոտ 1770—1840-ական թթ.), մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի նախահայրերից (պապի հայրը): XIX դարասկզբից կարևոր ծառայություններ է մատուցել ռուսական իշխանություններին Լոռի-Բորչալուի պահպանության և թշնամական-խռովարար ուժերի դեմ մղվող պայքարում, որ հաստատվում է պաշտոնական վավերագրով (դրանցից մեկը հրատարակված է «Վերքի» ստեղծագործական պատմության նվիրված մեր գրքում, էջ 186):—164

⁷¹ **...հարյուր տարեկան հեր Մեհրաբը...**—Թումանյան Հովակիմի հայրը՝ Մեհրաբը (ծն. մոտ 1740), 1811 և 1828 թթ. հիշվում է որպես Դսեղի գյուղապետ: Բաջ ու անվախ անձնավորություն էր և ըստ ընտանեկան ավանդության՝ ապրել է շուրջ 120 տարի:—165

⁷² **Սանահնա ու Հախպատի վանքերի պատերը...**—միջնադարյան Հայաստանի այս հոգևոր կենտրոններն ու ճարտարապետական հուշարձանները հարուստ են վիմագիր հիշատակարաններով և գտնվում են Լոռիում: Սանահնը կառուցվել է 966 թ., իսկ Հախպատը կամ Հաղբատը՝ 976 թ.: Կանգուն են այսօր էլ: Վիմագրերը հավաքել ու հրատարակել են Հ. Ղրիմեցին, Ս. Զալալյանը, Կ. Ղաֆադարյանը և այլք:—167

⁷³ **Մեծն շահն-շահ Աշոտ Բագրատունի, Սմբատ...**—նկատի ունի Բագրատունյաց հարստության՝ Աշոտ III Ողորմած և Սմբատ II թագավորներին:—167

⁷⁴ **Ջաքարե Սպասալար** (վախճ. 1212)—XII—XIII դդ. հայտնի հայ գորպար և պետական գործիչ, հյուսիս-արևելյան Հայաստանի կառավարիչ, Թամար թագուհու մտերիմ և վրաց գործերի գլխավոր հրամանատար (ամիրսպասալար):—167

⁷⁵ **Արդությանց-Երկայնաբազուկ նախնիք...**—հայ իշխանական գերդաստան, որ սերում էր Ջաքարյաններից: Նստավայրը Սանահն գյուղն էր: Տվել է նշանավոր գորավարներ ու հանրային-մշակութային գործիչներ՝ ռուսական բանակի գեներալ Մովսես Արդությանին (1798—1855) և, մասնավորապես, Հովսեփ արքեպիսկոպոս Արդությանին (1743—1801), որը Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու գործի հետևողական պաշտպան էր և մեծ հայրենասեր, հեղինակներից մեկը հայ-ռուսական դաշնագրի (1783 թ.):—167

⁷⁶ **Հովհան Օձնեցի Խմաստասեր**—VII—VIII դդ. հայ մեծ մատենագիր և իմաստասեր, հայոց կաթողիկոս (717—728): Թողել է մի շարք փիլիսոփայական և դավանաբանական երկեր: Խմբագրել է հայոց Կանոնագիրքը:—167

⁷⁷ **Հովհան Երզնկացի**—XIII դ. հայ մտածող, բանաստեղծ և հոգևոր գործիչ Հովհաննէս Պլուզ (վախճ. 1293): Ըստ հնոթյա լեգենդի, իբր նրա անձնով է կործանվել Անի քաղաքը:—167

⁷⁸ **Օմար**—Մահմեդի հաջորդը, խալիֆ (634—644), արաբական տերության հիմնադիր:—167

⁷⁹ **Ջիհգիզ խան (Չիգգիս խան)**—մոնղոլական աշխարհակալ պետության հիմնադիր (1185—1227):—167

⁸⁰ **Քամուրյանգ**—ճակ՝ Թիմուր կամ Քամեղյան, մոնղոլական խան (1336—1405), Ռայտնի է իր նվաճողական արշավանքներով։—167

⁸¹ **Սուրբ Սարգսի անուրը տվե՛ք...**—Ռալ ժողովրդի ամենասիրած սրբերից, որին դիմում էին «Ով արագաճախ սուրբ Սարգիս» խոսքերով։ Պատմական անձնավորություն լինելով Ռաճեղձ՝ նրա կերպարը պարուրվել է առասպելական թողով։—171

⁸² **Աբեղյան պատարագի պես...**—բիբլիական Ադամի որդի, արդար Աբելի սպանությունը իր չարագործ եղբոր՝ Կայենի ձեռքով։—173

⁸³ **Ո՛չ Նադի խանն էր կարում իր հունարը ցույց տալ...**և այլն—Աբովյանի վկայությամբ (գլ. II, հատված 8)՝ ռուս-պարսկական պատերազմի սկզբին Նադի խանը իր դարափափաններով և օգնական զորքով ուղարկված էր Ղազախի կողմերը, հետևաբար՝ Խղարաքիլիսայի կռվին նրա մասնակցելը պատմականորեն ճիշտ չէ։ Աբովյանը հակասում է ինքն իրեն (տե՛ս էջ 162)։—177

⁸⁴ **Սահակ աղին...**—Մելիք Սահակ Մելիք-Աղամալյան (տե՛ս երկրորդ գլխի 59-րդ ծանոթագրությունը)։—177

⁸⁵ **Գլումբրու դզիցը ոսի բալաբան, /Քաջ սաղաթների դաստեն, կապիտանն/ Արծվի պես հասան...**—պատմական ճշմարտությունն այն է, որ երբ 1826 թ. հուլիսի 16-ին Խղարաքիլիսայի (այժմ՝ ՀՍՍՀ Ախուրյանի շրջանի Ազատան գյուղ) պաշարման լուրը հասնում է մոտակա Գլումբի ամրոցը (այժմ՝ քաղաք Լեհնական), նրա պարետ, գնդապետ Դեխտյարևը օգնության է շտապում, թնդանդներից մի քանի անգամ կրակում է պարսիկների վրա և խուճապի մատնում, բայց հետև եղած բորչավեցի թուրքերը խաբում են նրան, թե պարսիկներն ուզում են գրավել Գլումբին, ուստի ճախագնում է և հայերին թողնում բախտի քմահաճույքին։ Աբովյանը վերախմբագրել է պատմական անցքերը։—182

⁸⁶ **Սուղազյան մեկ օր...**—այժմ մոռացված աշխարհագրական անուն. այդպես էր կոչվում Ռին Ախտա և Քարվանսարա (այժմ՝ Աթարբեկյան) գյուղերի մոտ, Հրազդան գետի արևելյան ափի երկայնքով ընկած ամառի տարածությունը, որ հաճախ էր ջրհեղեղի ենթարկվում, և որով անցնում էր Սևանից Երեվան և Ապարան, ճակ՝ Տիդիսից Երևան տանող ռազմական Ռին ճանապարհներից մեկը։—183/184

⁸⁷ **...քեզ վրա պետք է գլոռ շինած, քար կաղնացրած...**—սովորույթ է եղել հայոց մեջ, որ թշնամուն կամ չարագործին թաղել են քարձր տեղում, ի տես և ի դաս հետնորդների։ Նման ձևով վարվել են ծաղկած ավազակ Լևոն հետ Սևանի վանականները (տե՛ս Մ. Կիսիշխանացի, Պատմութիւն անցից անցելոց Սեվանայ վանուց, էջ 38)։—185

⁸⁸ **...մեկ անսիրտ վանքականի խաթեր...**—նկատի ունի Հովհաննես Երզնկացուն (տե՛ս գլ. III, հատված 8, ճակ վերևում, 77-րդ ծանոթագրությունը)։—190

⁸⁹ **Եփրեմ կաթողիկոս (1750—1835)**—գահակալել է 1809—1830 թթ.։ Ո՛րնայդ եղել է Ռուսաստանի հայոց առաջնորդ և շատ է աշխատել հոգուտ ռուս գեներով Հայաստանի ազատագրության։—193

⁹⁰ **Ծամաճվիցն էլ մեկ տերտեր էր էկել իր որդովը...**—Աբովյանը նկատի ունի իրական մարդկանց՝ Տիգրանակերտից (Արևմտյան Հայաստան) եկած քահանա Տեր Հովհաննեսին ու սրա որդուն, որոնք Հաղբատից մեկնում են 1826 թ. հուլիսի 12-ին և զոհվում Խղարաքիլիսայում։—193

⁹¹ **Եկեղեցին Ապարանու**—Քասաղի նշանավոր բազիլիկ տաճարը՝ կառուցված IV դարում (այժմ ՀՍՍՀ Ապարանի շրջկենտրոնում)։—196

⁹² **Գեղարդա սրտիցը բոխում...**—Ազատ կամ Գառնի գետը, հիրավի, ըսկիզբ է առնում Գեղամա լեռներից, Գեղարդա կամ Ալրիվանքի մոտերքից, իսկ այս մեճաստանը կառուցել են Պողոսյան իշխանները XI—XII դարերում։—197

⁹³ **Մարանդի գերեզմանի...**—բնակավայր Իրանում, ուր, ըստ ավանդության, թաղված է Սոյ ճախապետի կինը՝ Նոյեմբարը։ Իսկ Մարանդ տեղանունն, ըստ ժողովրդական տոմարահաճության, նշանակում է՝ մայրն այնտեղ է։—197

⁹⁴ **Նարեկա վանքի...**—Ռին Հայաստանի նշանավոր հոգևոր կենտրոն, ուր

ՎրոնաՎորել և ստեղծագործել են Անանիա և Գրիգոր Նարեկացիները: Գտնվում է Ռշտունյաց աշխարհում, Վանա ծովի հարավային ափին:—197

⁹⁵ **Բարով մնաք դուք՝ լերի՛նք, ձո՛ղ, աշխա՛րհ...**—պատանի Վարդանի՝ Գա-
հատակությունից առաջ արտասանած այս ու հաջորդ խոսքերը նմանություն
են Ֆ. Շիլլերի «Օդյեանի կոչված» ռոմանտիկ ողբերգության հերոսուհու Յո-
հաննայի հրաժեշտի (տե՛ս Նախերգ, տեսարան 4-րդ):

Մնաք բարով, լեռներ՝, սիրուն արոսներ՝,
Դուք էլ մնաք բարով, խաղաղ հովիտներ՝:
Ես էլ չեմ գալու այստեղ մահ գալու,
Վերջին բարովս եկա ձեզ տալու:
Իմ ջրած դաշտեր՝, իմ տնկած ծառեր՝,
Աճեցե՛ք զվարթ շատ ու շատ օրեր:
Մնաք բարով, ծնակներ՝, դուք ցուրտ աղբյուրներ՝,
Եվ դու, արնագա՛նք, հովտիս անուշ ձայն,
Որ միշտ երգեիրս պատասխանում եք.
Գնում է Յոհաննան անդամ հավիտյան:
Իմ ուրախության անմոռաց տեղեր՝,
Ձեզնից հավիտյան այժմ հեռանում եմ.
Սար, ձոր, անապատ ցի՛ր եղեք, գառներ՝,
Անտեր, անհովիվ ես ձեզ թողնում եմ... և այլն:

(Ֆ. Շիլլեր, Ընտիր երկեր, Եր., 1952, էջ 597):—202

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Գ

¹ **Հայաստան աշխարհքը շատ վախտ էր մեղության, ավերման տակ ընկել...**
—սույն III գլխի սկիզբը իր պատմեղաձևով շոշափման եզրեր ունի ռուս պատ-
մավիպասան Մ. Ն. Զագոսկինի (1789—1852), «Յուրի Միլոսլավսկի» վեպի
հետ (1829), որն Աբովյանը ընթերցել է տակավին Դորպատում ուսանելու
միջոցին: Համեմատության համար բերում ենք մի քանի տող. «Никогда Россия
не была в столь бедственном положении, как в начале семнадцатого
столетия; внешние враги, внутренние раздоры, смуты бояр, а более все-
го совершенное безначалие—все угрожало неизбежной гибели земле
Русской...» (М. Загоскин, Юрий Милославский или Русские в 1812 году,
М., 1956, стр. 11).

² **Էրակի որդի Ալեքսանդրեն...**—Վրաց Հերակլ II թագավորի որդի, վտա-
րանդի արքայազն Ալեքսանդրը (1780—1852) երդվյա լքշնամի էր Ռուսաս-
տանին և ամեն ջանք գործ էր դնում խանգարելու նրա առաջխաղացմանը
Վրաստանում ու Հայաստանում:—208

³ **Աբաս Միրզեն՝ արևելից...**—պարսից թագածառանգ և զորքերի գլխավոր
հրամանատար (ռուս-պարսկական և պարսկա-թուրքական կռիվների շրջա-
նում), Ատրպատականի փոխարքա Աբաս Միրզան (1783—1833), խորհրդա-
տուներ ընտրելով անգլիական ու ֆրանսիական դիվանագետներին ու ռազ-
մական մասնագետներին, անգիջում պաշար էր սկսել Ռուսաստանի դեմ և վեր-
ջինին՝ Անդրկովկասից դուրս վանելու համար գործադրում էր ամեն միջոց
(սպառնալիքներ, կաշառք, տեղական մահմեդական ցեղերի խռովությունների
հրահրում և այլն):—209

⁴ **Ներսես <եպիսկոպոս>**—Ներսես Աշտարակեցի (1771—1857), հոգևոր
և քաղաքական գործիչ, Վրաստանի (1814—1828) և հետարաբիայի (1828—
1843) հայոց հոգևոր առաջնորդ, ամենայն հայոց կաթողիկոս (1843—1857):
Դարակազբից եռանդուն գործունեություն է ծավալել Արարատյան աշխարհը
Ռուսաստանին միացնելու համար, փայփայելով «հյուսիսի արծվի» հովանու
տակ հայկական պետականությունը վերականգնելու գաղափարը: Նա անուրա-

ճալի ծառայություններ ունի Արևելյան Հայաստանի ազատագրման գործում, քարոզել ու հորդորել է հայերին՝ բոլորանվեր աջակցել ռուսական զորքերին և ցույց տալ պետական հավատարմություն, իսկ 1827 թ. զարմանից անձամբ մասնակցել է ռազմական գործողություններին: Հետագայում՝ Գախաձեռնողներից ու գլխավոր կազմակերպիչներից մեկն էր Ատրպատականի հայոց գաղթի՝ դեպի Հայաստան: Նեխուսի պատերազմական շրջաբերականներից, կոչերից, նամակներից ու հրավիրագրերից կարելի է հատորներ կազմել, առանց որոնց լայն օգտագործման անկարելի է գրել նոր շրջանի հայոց պատմությունը:—209

⁵ **Գրիգոր <Եպիսկոպոս>**—Գրիգոր Մանուշարյանց (վախճ. 1835): Ծնվել է Ծամշադինի շրջանի Հախում գյուղում: Չմայած հոգևոր կոչումին՝ իբրև զինվոր ու զորական, իր շուրջը խմբած հայ կտրիճներին, մասնակցել է Ռուսաստանի անդրկովկասյան արշավանքներին՝ 1804 թ. սկսած, և քաջուղյալ համար պարգևատրվել Գեորգիի, Վլադիմիրի և Աննայի շքանշաններով: Արդեն կենդանության ժամանակ՝ նրա սխրագործությունների մասին հորինվել են լեգենդներ: 1826—1827 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին զսպել է տեղական մահմեդականության խռովությունները, կազմակերպել Ծամշադինի և մերձակա գավառների հայոց ինքնապաշտպանությունը, կռվել պարսից զորքի դեմ և ետ վերադարձնել գերության թշվոռ հայերին: Գեներալ Երմոլովը այդ առթիվ նրան շնորհակալության թուղթ է ուղղել՝ խոստանալով նաև Ղազախի ու Բորչալուի գյուղացիությանն ազատել թուրք աղալարների և բեգերի հարկատվությունից: Մատենադարանի հավաքածոներում պահպանվել է այդ ուշագրավ գրությունը, որին, ինչպես երևում է, ծանոթ է եղել Աբովյանը և ընդհանուր բովանդակությունը վերաիշել վեպի սույն դրվագում:

Նկատի առնելով, որ դա այն եզակի սկզբնաղբյուրներից է, որ հնարավորություն է տալիս բացահայտելու պատմական վավերագրերի մշակման Աբովյանի մեթոդը, ստորև հայերեն նոր թարգմանությամբ մեջ ենք բերում.

Ազնվագույն հայր Գրիգոր՝ հայոց արքեպիսկոպոս, ողորմած տեր.

Ի հետևումն ծառայության վերաբերմամբ և վերջինիս միջոցով օգտակար լինելու ամենօրյա պատրաստականության առթիվ Ձերդ սրբազնության ցուցաբերած հրազանց ջանքերի մասին Վրաստանի հայոց հոգևոր առաջնորդի արած հավաստիացումների, ես հրավեր ուղղեցի Ձեզ՝ մեկնելու Ծամշադինի գավառակ (ДНСТАНЦИЯ), որի բնակիչները մեր նկատմամբ պարսիկների արած վտանգավոր ներշնչումների պատճառով ընդվզել էին, իսկ թուրք ալանների մեծ մասը դավաճանել մեզ, և գիտենալով, որ Ձերդ սրբազնությունը ժողովրդի շրջանում վայելում է համընդհանուր հարգանք ու վստահություն, ես խնդրեցի Ձեզ՝ խաղաղեցնել բնակիչներին, որպեսզի նրանք, իրենց պարզամտության պատճառով, չհետևեն մյուսների նեմգություններին: Խորին զոհունակությամբ պիտի ասեմ, որ Դուք լիակատար ձևով արդարացրիք Ձեր հոգևոր առաջնորդի ընտրությունը ու Ձեր մասին ունեցած բարձր կարծիքը, անձամբ Ձեզ վտանգի ենթարկելով, փոքրաթիվ մարդկանցով թույլ չտվիք խռովություն մերձանդների՝ հայոց ընտանիքները քշելու արտասահման, ինչպես նաև անօգնական չթողիք ձեր գլխավոր պրիստավ իշխան Թախանովին:

Ջորամասի հետ ժամանելով Հասան-սու, ես անձամբ վկա եղա Ձեր գովելի սխրագործներին, որի համար և ամփոփական պարտք եմ դնում ինձ վրա՝ կառավարության անունից Ձերդ սրբազնությանը հայտնելով լիաբերան շնորհակալություն և մնում եմ հաճելի հավատով, որ Դուք առաջիկայում էլ չեք զլանա պատրաստ լինելու հոգուտ թագավոր կալսեր ծառայության:

Հարգելով Ձերդ սրբազնության ինձ մատուցած գրության մեջ արտահայտված առաջարկությունը, ես կարգադրություն արի Ծամշադինի գլխավոր պրիստավին՝ հայերին տրամադրելու Կաշկա-Յաթեղ կոչվող անձեռատեղի, որպեսզի ձմեռ ժամանակ անասուններն այնտեղ պահեն, իսկ անձամբ իրենց էլ մոծել արքունի ցուցակների մեջ, քանի որ նրանք իրենց կառավարիչ Նասիբ Սուլ-

թանի որդիների փախուստից հետո այլևս չպետք է պատկանեն մասնավոր ան-
ձանց:

Ձեր երաշխավորած հայ երկու տանուտերերի՝ Մանուչարյանի և Հովհան-
նիսյանի, եւ տվի գովասանագրեր, հավատացնելով նրանց, որ իրենց թափած
ջանքերի համար ժամանակին կարծանանաւ իշխանության ուշադրությանը:

Իսկ ինչ վերաբերում է մյուս թուրքական գավառներում եղած բոլոր հա-
յերի լիակատար անկախությանը, եւ առաջիկայում չեն զլանա կարգադրու-
թյուն անել ու այդ մասին պաշտոնապես տեղյակ պահել յուրաքանչյուրին:

Եւ նաև հրամայեցի մոտորավիճի՝ հավաստիացնել Ծամշադինի գավառա-
կի հայերին, որպեսզի ընդունված կարգով և նախկին հիմունքներով ծառայեն
Ձեզ, իբրև իրենց հոգևոր հովվի ու հոր, իսկ Ձերդ սրբազնությանը էլ խնդրում
եմ խոնարհաբար՝ աչք պահել նրանց վրա, հետևել նրանց վարք ու բարքին,
և օգնել գլխավոր պրիստավին՝ կատարելու համար կառավարության կամքը, ըստ
Ձեր փորձված հավատարմության, և աջակցել նրան Ձեր խորհուրդներով,—
իսկ ես, նկատի ունենալով Ձեր եռանդը, սպասում եմ, որ Դուք բոլորդ ամեն
ինչ կանեք հոգուտ ծառայության և գլխավոր պրիստավ իշխան Թաթխանովի
հետ Ձեր ընդհանուր համաձայնությամբ ի վերջո կհանգեք միևնույն բանին:

Ձեր նկատմամբ ունեցած իմ լավագույն հարգանքներով և նվիրվածությամբ
պատիվ ունեմ լինելու Ձերդ սրբազնության, ողորմած տեր, ամենախոնարհ
ծառա

Ալեքսեյ Երմոլով

№ 410, 1-ը հոկտեմբերի 1826

Հասն-սուի ճամբար

Իսկականի հետ ճիշտ է:— Հարություն վարդապետ Ալամդարյանց

(Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 54, վավերագիր
269):—209

6 Մատաթովի... արածը...—Վալերիան (Ռոստոմ) Գրիգորի Մադաթովը
(Մադաթյանը) (1782—1828) ռուսական բանակի հայ գորավար էր. ծնվել է
Արցախի Վարանդա գավառի Ավետարանոց գյուղում: Փոքրուց անցել է Ռու-
սաստան և դարձել զինվորական: Նրա քաջությունն ու հաղթանակի անկոտ-
րում կամքը դրսևորվել են առանձնապես 1808 թ. ռուս-թուրքական և 1812—
13 թթ. Հայրենական պատերազմների ժամանակ: 1816-ից պաշտոնավարել է
Ղարաբաղում, որպես երկրամասի զինվորական շրջանի պետ: Մադաթովի
ռազմական ունակությունները փայլել են Ծամքորի (1826 թ. սեպտեմբերի 3) ու
Գանձակի (սեպտ. 13) ճակատամարտերում, երբ նա փոքրաթիվ զորքով գլխո-
վին ջարդել է պարսից զերազանց ուժերը և նրանց շարտել Արաքսի այն կողմը՝
դրանով իսկ ամրապնդելով Ռուսաստանի դիրքերն Անդրկովկասում և հաղթա-
նակը՝ ռուս-պարսկական վերջին պատերազմում:—209

7 Բեհրուդովի արածը...—Վասիլի (Բարսեղ) Օսիպովիչ (Հովսեփի) Բեհ-
րուտովը (Բեհրուջյանը, 1791—1858) հայ գեներալ էր. 1812-ից մասնակցել է
ռուսական զորքերի բոլոր արշավանքներին ընդդեմ Նապոլեոնի, Իրանի և Թուր-
քիայի: Հռչակվել է հատկապես Ախալցխայի գրավման ժամանակ (1828 թ.
օգոստոս): Եղել է նորանվաճ Ախալցխայի գավառի, իսկ հետո՝ Հայկական
մարզի կառավարիչ (1830—1838), վարել զինվորական ու քաղաքացիական
բարձր պաշտոններ: Լինելով ազգությամբ հայ և հին Թիֆլիսի քաղաքապետ-
ների տոհմից՝ երբեմն իր ազգակիցների հետ վարվում էր ավելի վատ, քան
օտար տիրողները:—209

8 Երմալով—Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովը (1777—1861) ռուս նշանավոր
գորավար և դիվանագետ էր, Վրաստանի գլխավոր կառավարիչը և Կովկաս-
յան հատուկ զորամասի հրամանատարը (1816—1827, մարտ):—209

9 Գրաֆ Սիմոնիչից...—Իվան Օսիպովիչ Սիմոնիչը (1794—1851) ծննդյամբ
Ղալմատիայից էր. 1816-ից ընդունվել էր ռուսական բանակ՝ ծառայելով մեծ
մասամբ Անդրկովկասում: 1826 թ. փոխգնդապետ էր և վրացական գրեմադե-
րական գնդի հրամանատար: 1832—1838 թթ. եղել է Ռուսաստանի լիազոր մի-
նիստը Իրանում: Ռուս-պարսկական պատերազմի սկզբի ճակատագրական

օրերին և քան իւրջ օգնությունն ու աջակցությունն է ցույց տվել Գրիգոր Մանու-
շարյանը:—209

¹⁰ Ալեքսանդր վալին...—խկությունը չպարզված անձնավորությունն (թերևս՝
արքայազն Ալեքսանդրը, տե՛ս վերևի 2-րդ ծանոթագրությունը):—210

¹¹ Զոհրաբ խանը—մահմեդականացված Ռայ, պարսից բանակի թեղա-
նութաձիգների հրամանատար:—210

¹² ...սրա ախպեր Գալուստը...—Գրիգոր Մանուշարյանի եղբայրը, ռուս-
պարսկական պատերազմի տարիներից օժանդակել է ռուսական զորքերին
տեղական խոռվարար տարրերի դեմ մղվող կռիվներում:—210

¹³ ...որ գրաֆ Գասպրիչի հետ...—Իվան Յուդոբովիչ Պասկևիչը (1782—
1856) ռուսական բանակի գեներալ-ֆելդմարշալ էր, կովկասյան ճատուկ կոր-
պուսի հրամանատար և Վրաստանի կառավարիչ (1827—1830), 1828-ից՝
Երևանի կոմս, 1832-ից՝ Լեհաստանի փոխարքա, վալելի է ցարի մատու-
թյունը և Ռադոսկան ավարտի է Ռասցել 1826—29 թթ. ռուս-պարսկական և
ռուս-թուրքական պատերազմները: Նրա մասին ժամանակին երգեր են հորին-
վել, որոնք ավելի ռուսական պետականության հզորությանն են վերաբերում,
քան Պասկևիչի անձին:—210

¹⁴ Բարսեղ, Մանուկ, Մկրտիչ աղեքն թայազդի...—այս հայորդիները իրենց
խիզախությամբ աչքի են ընկել ռուս-թուրքական պատերազմի տարիներին,
մասնավորապես 1829 թ. հուլիսյան կռիվների ժամանակ՝ պաշտպանելով Ռիհ
Բալազետը թուրքերի նոր հարձակումից: 1830 թ. ստույգ իրենց գլուղացիներ-
ով զաղթել են ռուսական հողեր և հաստատվել Սևանա լճի ափին: Բարսեղ
Արծրունին (1805—1875) հետագայում (1837—38 թթ.) գլխավորել է Նոր Բա-
լազետի գավառի գյուղացիության ընդվզումներն ընդդեմ ցարիկայի
քաղաքականության:—211

¹⁵ ...աշխարհառշակ տունն Տիգրանյան դարացի...—այս տան Գահապետն
էր մահտեսի Ավո Մկրտչի Տիգրանյանը, որը Կարսում թողնելով իր ողջ ունեց-
վածքն ու կալվածքները՝ վերահաստատվել էր ռուսական հողում, Գլուխքիում
(Ալեքսանդրապոլ): 1838 թ. մայիսի 29-ին սեմատոր Պավել Հանի հետ նրանց
տանը հյուրընկալվել է Խաչատուր Աբովյանը և իրազեկ դարձել մահտեսի
Ավոյի կյանքի անցքերին ու առօրյային:—211

¹⁶ ...արծափեցի Մանուկ—իրական-պատմական անձնավորություն, ազգա-
նունը՝ Բանեյան, որի մասին լեգենդներ են հյուսվել և որոնք Աբովյանը լսել
է մասնավորապես 1844 թ. ամառը, Բալազետի փաշայությունում ճամփորդե-
լիս: Մանուկը կարևոր տվյալներ է հաղորդել ռուսական հրամանատարությանը՝
պարսկա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ և օգնել 1827 թ. զար-
մանը Երևան քաղաքից ու շրջակա գյուղերից դեպի Թուրքիա տարագրված
հայերին: Դավադրաբար սպանվել է նույն տարվա կեսերին: Նրա գործերին
Աբովյանն անդրադարձել է նաև իր «Քրդեր» ազգագրական ուսումնասիրու-
թյան մեջ: Պահպանվել է Ներսես Աշտարակեցու՝ 1827 թ. մայիսի 5-ին Մա-
նուկին ուղղված մի ուշագրավ նամակը, որը Աբովյանի խոսքերի ճշմարտու-
թյունն է հաստատում: Նա գրում է. «Եկին ոմանք, որք պատմեցին մեզ, թե
դուք տեսանելով զնեղութիւն ժողովրդեանց սրբոյ Էջմիածնի ի բարբարոսական
բռնութեանց վարողացս զնոսին մերձ առ զիւղն ձեր յԱրծափ, և ազգասիրական
ջերմեռանդութեամբ յայտնելով զկարեկցութիւն ձեր՝ յայտնեալ էք բարձրագահ
գերաստիճան փաշային, և հրամանաւ նորա հալածեալ զվարիչսն ժողովրդեանց
զանհրաւ պարսիկսն՝ տարեալ էք զժողովուրդն ամենայն ի զիւղն ձեր և պաշտ-
պանեալ ապահովութեամբ:

Այս համբաւ բարեպաշտութեան ձերոյ միտքարությունն եղև սրտի մերոյ
յոյժ յոյժ առաւելութեամբ, և գրեցաք զօրապետի յառաջընթաց զօրաց Ռուսաց,
որ յԵրևան, և ունիմք գրել նաև սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց
տեսաւն Եփրեմի, և առանց երկբայութեան կարեմք հաւատալ, թէ ի զիրն կենաց
ևս լինի գրեալ առաջի աստուծոյ, և զհատուցումն բարի հատուցել նա ինքն
ձեզ, որ արարիչն է ամենայն մարդկան և խնամակալու նոցա, և կանի միշտ

զբարին ամենեցուն և զամենայն զբարեգործս անուանէ իւր ծառայ բարի և հաւատարիմ:

Յուսով եմ, թէ մինչև ցլաղճան ևս չունիցիք դուք պակասեցուցանել զմիս-
թարութիւն ձեր ժողովրդեանն սրբոյ Էջմիածնի գիւղի և այլոց պանդոխտացելոց
ի միջի ձերում. այլ և ես պարտ իմն համարելով՝ ոչ անդէպ վարկանմի գրել
զայն առ յարգութիւն ձեր. զի ամենկին չունելով զկարծիս ինչ յապագայական
ի կողմանէ Պարսից՝ աներկիւղ ըստ ամենայնի հոգ կալցիս ո՛չ երբէք թողացու-
ցանել ումեք ի պարսից մերձիլ ի ժողովուրդս հայոց կամ տաճկաց երևանցոց,
որք զտաճին յամենայն սահմանս փաշայութեան Պաշազիտոյ, քանզի որպէս և
ինքն զօրապետն Ռուսաց, նորին գերագանցութիւնն իւրոյ կայսերական մեծու-
թեան դեմերալ-ադիւտանդ դեմերալ-մայիօր Կոստանդին Նրիստաֆօրիչն Բեմ-
կենդորթն գրեալ է առ բարձրագահ գերաստիճան փաշայն, երկիր Երևանու և
Նախիջևանու այսուֆետն է՝ Ռուսաց տէրութեանն, և զօրք Ռուսաց չունին վե-
րադատնալ միւսանգամ, և վաղվադակի յուսամբ առ աստուած, թէ մինչև
ցլրումն ամսոյս լուիջիք դուք գհարթայատակ կործանումն բերդին Երևանու,
և ինքն սարդարն, որ թերես տնօրէնութեամբ աստուծոյ կայ ի միջի նորին,
եղիցի կալանատըր Ռուսաց:

Մի՛ տկարացուցն զմիտս ձեր կարծիք ձեր. թէ քանիցս անգամ եկին
Ռուսք և վերադարձան, քանզի այս անգամ զալուստ նոցա ոչինչ կերպիւ նմանի
առաջնոցն... Եւ կամք կալսերն այժմ ո՛չ միայն է այն, թէ տիրեսցէ Երևանու և
Նախիջևանու և այլոց, այլ զի յանդգնեցան յանցեալ ամին մտանել պարսիկք
ի սահմանս Ռուսաց յանկարծակի, փոխանակ այնմ բարեհաճեալ է ամենողոր-
մած կայսրն և հրաման տուեալ իւրոց զօրապետաց՝ աւելի քան վաթսուն հազար
զօրօք մտանել ի Պարսկաստան և գնալ նաև մինչ ի Թէհրան, և հատուցանել
Պարսից գհատուցումն իւրեանց...» և այլն (Մատենադարան, Ներսէս Աշտարա-
կեցու դիվան, թղթ. 106, վալ. 763):—211

17 Ո՛ւր թողանք դարաբաղոցոց, երևանցոց ու լոռեցոցն արածները...—1826—
1827 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին իրենց քաջություններով
հռչակվել են. դարաբաղցիներից՝ քաջարի բանազանց Ասրի բէկ Բահաթոյան-
ցը, Մելիք Վանի և Հակոբ Աթաբեկյանները, Սաֆար և Ռուստոմ Թաթևաճյան-
ները, տիկին Խաթունիին. երևանցիներից՝ թնդանդոսաձիգ Հակոբ Հարությունյա-
նը, սուրհանդակներ Հովհաննէս Ասլանյանը, Հարություն Մանուկյանը,
Մկրտիչ Կոստանդյանը, Համագասպ Եսայանը, նորքեցի Աստվածատրյանը.
լոռեցիներից՝ Հարոյն գյուղի տանուտեր Դալի Ղազարը, ճոճկանցի Խուդին,
գյուլլուբաղցի Դոնդուզդոյան մականունով հայը, արդվեցի Պետոն, շնողցի Վե-
րան Բեկբաշյանը, հաղբատեցի Հարություն Երզնկյանը և հաղալ Պարոն-
յանը, դարաքիլիսեցի Ավետիքը, Համամլու գյուղից հայուհի Մամուլակը և ու-
րիշ շատ-շատերը: Նրանց մասին երևար ժամանակ պատմվում էին գրույցներ,
պահպանվել են պատմական վավերագրեր:—212

18 ...շուպավերցի Սոսի աղեն ու մելիք Հոհանջան...—Քալանթարյան Սո-
սի աղան և Մելիք-Սարգսյան Հոհանջանը իրական անձնավորություններ են,
գոհվել են 1826 թ. օգոստոսի 14-ին, հորշալուի Եկատերինենցֆելդ (հետո՝ Լուր-
սենբուրգ, այժմ՝ Վրաց. ՍՍՀ Բուլղսիի շրջկենտրոն), գերմանական զաղութից
պարսիկ ու քուրդ Ռոսասկների գերեվարած բնակչությանն ազատելու համար
օգնության շտապելիս: Այդ կոիվների ժամանակ մինչդեռ հորշալուի պրիտավ
իշխան Օրբելիանին լրում է ճակատը ու փախչում, այս երկու քաջարի հայոր-
դիները դիմադրում են մինչև վերջին շունչը: Աչքի ընկնող դեր են կատարել
Սոսի աղեն ու մելիք Հոհանջանը հատկապես ռուս-պարսկական պատերազմի
սկզբին՝ Ցալերի դիմադրությունը կազմակերպելու և ռուսական ջոկատներից
օգնելու գործում: Նրանց գոհվելու առթիվ գրած իր կոնդակում հայոց կաթո-
ղիկոսը Սոսին և Հոհանջանին համեմատում է Վարդանանց նահատակների
հետ:—212

9 Նեմեցի Կոլոնին—գերմանական այս զաղութը գտնվում էր Մաշավեր
գետի ձախ սփին և պաշտոնապես կոչվում էր Եկատերինենցֆելդ, որին տեղա-
օինները տվել էին Մեծ Ռատևան անունը: Հիմնադրել են 1819 թ. Վյուրտեմ-

բուրգից գաղթած գերմանացիները: Նրա վրա հարձակվողը (1826 թ. օգոստոսի 14-ի գիշ. ժ. 2—3-ից) եղել է ոչ թե Օքլուզ աղան, ինչպես կարդում ենք «Վերք Հայաստանի» վեպում, այլ դարափափախների ու քրդերի առաջնորդ Հուսեյն աղան իր որդի Ղահրամանի հետ: Կոիվների ժամանակ սպանվողը այս վերջիցն էր և ո՛չ Օքլուզ աղայի որդին, այն էլ հորչալուի պրիստայի գնդակից: Արքիվանը շփոթել է անձերը (սովելի մանրամասն տե՛ս Լ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 291—293):—212

²⁰ ...Փամբակ, Շորագյալ քոչին, գան Լոռի...—Փամբակի կամ այժմյան Սպիտակի շրջանի և Շորագյալի կամ Ծիրակի դաշտի հայ գյուղերի բնակչության փոխադրումը Լոռի տեղի է ունեցել ռուսական հրամանատարության կարգադրությամբ, 1826 թ. հուլիսի վերջին: Սկզբում նրանք գալիս են Ղահրամանիսա, իսկ հետո, այստեղի բնակչության հետ միասին, օգոստոսի 2-ից մինչև 12-ը գաղթում են դեպի Զալալօղլի (այժմ՝ Ստեփանավան):—213

²¹ Խոսրով խան (1785/86—1858)—Տփղիսի Բեղդեհեմ եկեղեցու քահանա Սամուել Ղայթմազյանցի որդին: 1804 թ. գերի է տարվել Պարսկաստան և մահմեդականացվել: 1815 (թե՛ 1816) թ. գնահակվել է Գիլանի նահանգապետ և աստիճանաբար մեծ ազդեցություն ձեռք բերել պարսից արքունիքում:—220

²² Մանուշար խան—Տփղիսի Եհիկոլայան գնահավոր տոհմի զավակ, 1804-ից Երևանյան արշավանքի ժամանակ գերի է տարվել Պարսկաստան և մահմեդականացվել: Հանել է պետական բարձր պաշտոնների՝ դառնալով շահից հետո ներկորդը: Վախճանվել է 1847 թվականին:—220

²³ ... ձեն տվեց աղա Ն. ...—այս Ն.-ն որոշակի անձնավորություն չէ, այլ գրական կերպար: Հերոսներին այդ ձևով կոչելը տարածված էր Արքվյանի. ժամանակի ռուս և եվրոպական գրականության մեջ: Իրականում 1821—24 թթ. Պարսի գյուղի քոլովանց եղել է ոմն Կոստանդ:—230

²⁴ Հայր Աբրահամի հրեշտակ...—Գնահակում է՝ ուրախ լուր ավետող անձ: Հիմքը բիբլիական լեգենդն է, ըստ որի, երբ աստուծո հրամանով Աբրահամը ուզում էր գոհ մատուցել իր հարազատ ու միևնույն որդուն, անսպասելի հայտնվում է հրեշտակը և ասում. «Աբրահամ՛, Աբրահամ՛, ձեռք քեզ քաշի՛ր, երեխային մի՛ մոտենար. հիմա հաստատ իմացա, որ դու աստվածավախ մարդ ես, և աստուծուն հնազանդ մնալու համար քո սիրելի որդուդ անգամ չես խնայում»:—234

²⁵ Կնյազ Ս.—Գևաթի ունի Լ. Տա. Սավարսամիձեին (տե՛ս երկրորդ գլխի 69-րդ ծանոթագրությունը):—235

²⁶ Քաջ Լոռցիք էլ որ իմացան...—Աղասուն կամ նրա նախատիպին Լոռու Դսեղ գյուղում ցույց տրված ընդունելության մասին Հովհ. Թումանյանը գրել է՝ մի աջանչելի վավերագրական պատմվածք՝ «Քաջերի կյանքից» (1894), որի հերոսների մեծ մասը իր հայրանիքներն են:—235

²⁷ Համգալչիման—գյուղը ՀՍՍՀ այժմյան Գուգարքի շրջանում:—236

²⁸ Չբխլու—այժմյան Ծովագյուղի (ՀՍՍՀ Սևանի շրջան) հին անունը:—236

²⁹ Ղառնիյարաղ—Գնահակում է՝ փորը ճղված: Այսպես են կոչել այլազգիները Հայաստանի Արայի լեռը:—236

³⁰ Տճկած ծառերդ փուշ են դառել...—Աղասու մոր նամակի այս տողերը անուղղակի արձագանք են Դորպատում ուսանելու տարիներին իր ճնողներից Արքվյանի ստացած նամակների, որոնց մեջ նույնպես խոսվում էր, թե ինչպես մայրը՝ Թագուհին, արցունքներով թրջում էր որդու տնկած ծառերը:—241

³¹ Բայց Մուսեյն ... ո՛չ հեր <ունեք>, որ բանտումը տանջվի...—այս խոսքերը հակասության մեջ են վեաի վերջին էջերի հետ, քանի որ, ըստ այդ դրվագների, Մուսեյն ո՛չ միայն հայր է ունեցել, այլև նա բանտարկված է եղել Աղասու հոր հետ միասին (տե՛ս գլ. III, հատված 14, էջ 296 և 299): Մ. Նալբանդյանը այս հակասությունը համարել է Արքվյանի կողմից վեպը մի շնչով գրելու և հետո՝ վերանայել չկարողանալու հետևանք:—250

³² ...որ չորանց էլ եկեղեցի էր շինում...—ակնարկը վերաբերում է հայ ճարտարապետության մարգարիտներից մեկին՝ Անիի պարիսպներից դուրս, ցայժմ կանգուն մնացած Հովվի եկեղեցուն, որն, ըստ ավանդության, կառու-

ցել է մի հասարակ հոգիով, գայրացած նրանից, որ զատկական տոներից մեկի ժամանակ հազար ու մեկ եկեղեցի ունեցող Անի քաղաքում նրա կնոջ համար աղոթելու տեղ չի եղել: Այս նույն ավանդությունը հիշված է նաև վեպի II գլխի 10-րդ հատվածում (տե՛ս սույն գրքում, էջ 180):—200

³³ Ղարսա գեղերիցը էսրի բերել, որ տանին... Ախլուցիա ծախեն...—մինչև հուլիսամյա տիրապետության տակ անցնելը, XVIII—XIX դդ. Ախալցխան (համանուն փաշայության կենտրոնը) յուրատեսակ հավաքատեղի էր Հայաստանից ու Վրաստանից հափշտակված տղաների ու աղջիկների համար, որոնց հատուկ առևտրականներ տանում էին Կարին, Տրապիզոն, Թեհրան կամ Կոստանդնուպոլիս և վաճառում գերիների շուկաներում:—264

³⁴ ...դպրաջը էս միջոցումը Ղարսա վրա կոխվ էր դուրս գնացել, ու սասծաքսան ու մեկ թվին էր...—Իսկապես, 1821 թ. սկսվել էր պարսկա-թուրքական պատերազմը, որի շարժառիթը սահմանային վեճերն էին և սահմանամերձ քրջանների քրդական ցեղերի անկարգությունները, որոնք հափշտակություններ անելով պարսից գյուղերում՝ ապաստան էին գտնում Թուրքիայում, և ընդհակառակը (տե՛ս М. С. Иванов, Очерки истории Ирана, М., 1952, стр. 137—138):—271

³⁵ Մարդս որ ծնվում ա, մեկ գունդ մսից ավելի էլ ո՛չինչ չենք տեսնում...—Աղասու (իմա՝ Արովյանի) դատողությունների այս մասը արձագանք է ժամանակի լայն տարածում ստացած՝ էվոլյուցիոն ուսմունքների:—276

³⁶ ...քաջահաղթն գեներալ-մայոր Մատթթովն վեր կացավ, Ծամքոռա դզին մտիկ արեց...—Ակառի ունի Ծամքորի ճակատամարտի նախօրեի՝ 1826 թ. սեպտեմբերի 2-ի անցքերը: Իսկապես որ այդ ու նախորդ օրերին ռուսական ճամբար են գալիս մի քանի հայեր և կարևոր լուրեր բերում գեներալին, որոնք և օգնում են հարձակման պլանները կազմելիս: Ժամանակներից մեկը Շուշի բերդից եկած Ասրի բեկ հաճախորդն էր, մյուսը՝ Երևանցի Գրիգոր Փիլիպոսյանը: Ըստ որոշ տվյալների՝ մի անանուն հայ ձիավոր էլ Մատթթովի ճամբարն է եկել Գանձակի ճակատամարտի նախօրեին, 1826 թ. սեպտեմբերի 12-ին: Բոլոր դեպքերում՝ Արովյանը ներկա դրվագում հավատարիմ է մնացել պատմական ճշմարտությանը:—280

³⁷ Ջոռը խիեցին...—ռուսական ճ.ա.ռ. 30-րդ արտահայտության հայերեն պատճենն է, որ նշանակում է՝ զորքը զարգացնելու ազդանշան տալ: Ներկա դեպքում խոսքը վերաբերում է առավոտները տրվող ազդանշանին կամ թըմբկահարությանը, մի կարգ, որ կատարվում էր ռուսական զորակայաններում:—281

³⁷ա. Դիլի—ավերակ գյուղատեղի (եկեղեցի և հանգստարան) Դիլիջանի ճանապարհի վրա, հիշյալ բնակավայրից դեպի արևելք, որի ամուրը և հետագայում որոշ փոփոխությամբ անցել է ժամանակակից առողջարանին:—282

³⁸ Դեռ վարժատան աշակերտ էի ու, ինչպես էսօր, կենդանի է մտքումս՝ Աղասին ի՞նչպես մտավ Թիֆլիզ...—Արովյանը «վարժատունը», այսինքն՝ Ներսիսյան դպրոցն ավարտել է 1826 թ. փետրվարի վերջերին, իսկ Տիֆլիսից հեռացել՝ հունիս ամսին, մինչդեռ Աղասին, ըստ վեպի, «Թիֆլիզ է մտել» Ծամքորի ճակատամարտից հետո, սեպտեմբերի կեսերին: Պիտի կարծել, որ Արովյանն իրար է միահյուսել տարբեր ժամանակների անցքեր:—283

³⁹ ... երբ Ղարաբաղու կողմն թշնամուցը ազատվեցավ, Ապարան, Երևան դառան ռուսաց... տղամարդության ասպարեզը...—պարսից զորքը, որ պաշարել էր Արցախը, վերջնականապես Արաքսի մյուս ափը շարտվեց 1826 թ. սեպտեմբերի կեսերին, իսկ արևելյան ճակատի ռուսական խողերը, մինչև Ապարան, թըշնամուց մաքրվեցին 1826 թ. սեպտեմբերի 22-ին, հայտնի պարտիզան և գրող Դեմիս Դավիդովի ղեկավարությամբ:—283

⁴⁰ Իշխանն Վարշավի և կոմսն Երևանի...—այսինքն՝ Ի. Ֆ. Պասկևիչը:—283

⁴¹ Ալեքսանդր—այսինքն՝ Ալեքսանդր Մակեդոնացի:—284

⁴² ...Պոմպեոսի...հիշատակը իսպառ ջնջեց...—Գնեստ Պոմպեոսը (106—48 մ. թ. ա.) հռոմեական պետական գործիչ և զորավար էր: 66 թվականին գալով Արևելք՝ նա ոչ միայն հաղթական ավարտի հասցրեց պոնտական պա-

տերազմն ընդդեմ Միհրդատի, այլև Ռաշտության պայմանագիր ստորագրեց՝ Տիգրան Մեծի հետ, որն այնուհետև հրաժարվելով իր Գլխահաճ երկրներից, մնաց բացառապես Մեծ Հայքի թագավոր, մասն՝ բարեկամն ու դաշնակիցը Հռոմի։ Արտվանան այս առումով է վերահիշում Պոմպեոսի՝ Ասիայում թողած հիշատակի մասին (մանրամասնությունները տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, եր., 1977)։—284

43 ...Կոմսն Երևանի, Տոբիթա հրեշտակ Ներսես արքեպիսկոպոսի ձեռիցը բռնած մտավ Վաղարշապատ, որ Եփրեմ կաթողիկոսի սուրբ աչքին լիս տալ...—Տոբիթը իբրևիական կերպար է, բարեգործ, որ ոչի՛նչ չի խնայում գերության մեջ ընկած իր ազգակիցներին փրկելու կամ օգնելու համար, իսկ նրա հրեշտակը Ռափայելն էր, որին Տերն էր առաքել, որպեսզի Անդրություններից փրկեր Տոբիթին։ Այս կերպարների տակ Արտվանը Գլխոսի ունի Եփրեմ կաթողիկոսին և Ներսես Աշտարակեցուն։ Հայտնի է, որ Եփրեմ կաթողիկոսը 1827 թ. հոկտեմբերին էջմիածնի վանքում չէր (1821 թ. նոյեմբերից մինչև 1828 թ. հուլիսը նա բացակա էր Մայր աթոռից և հաջորդաբար ապրել է Շուշիում, Հաղբատի վանքում ու Տփղիսում), ուստի Ներսեսն ու Պասկևիչն Թաճաճ քչին կարող Եփրեմին ավետել Երևանի ազատագրման լուրը, այն էլ՝ 1827 թ. հոկտեմբերին, էջմիածնում։—285

44 Կրասովսկի (այլ տեղերում՝ Գրասովսկի)։—Աֆանասի Իվանովիչ Կրասովսկին (1780—1843) ռուս զորավար էր, ծագումով Փոքր Ռուսիայից։ 1827 թ. հունիսից անմիջական մասնակցություն է ունեցել ու ղեկավարել ռազմական գործողությունները Արարատյան աշխարհում։ Օշականի ճակատամարտը (օգոստոսի 17), որ նրա զորավարական տաղանդի փայլուն դրսևորումներից էր, շերտադրամից կես դարձավ, որից հետո արագորեն զրազվեցին Սարդարապատի (սեպտեմբերի 19-ին) և Երևանի բերդերը (հոկտեմբերի 1-ին)։ 1827 թ. հոկտեմբերին Կրասովսկին ճշմանակվել է Երևանյան ճահանգի ժամանակավոր կառավարչության պետ, բայց շատ չանցած՝ 1828 թ. փետրվարին, Պասկևիչի դավերի հետևանքով պաշտոնաճն է արվել և հեռացվել Հայաստանից։ Նա հայերի ջրջանում վայելել է մեծ ժողովրդականություն, իսկ իր գործերը Գյուլ Են դարձել ժողովրդական երգերի։—285

45 Բենկենդորֆ։—Գլխոսի ունի գեներալ-լեյտենանտ Կոնստանդին Խրիստոֆորովիչ Բենկենդորֆին (1785—1828), որ հրամանատարն էր 1827 թ. գարնանը Երևան արշավող ռուսական առաջապահ ջոկատների։—285

46 Կոմսիլուս, դորդ ա, Հռոմն ազատեց...—Կոմսիլուս Մարկուս Ֆուրբիոսը (մոտ 447—385 մ. թ. ա.) կիսալեգենդար հերոս է, որ Հռոմը փրկել է գալլերից (մոտ 390 մ. թ. ա.)։—287

47 Սցիպիոն՝ հռոմեացեցվոց թուրը Աֆրիկոսը ցցեց...—Սցիպիոնը կամ Էմիլիանոս Սցիպիոն Աֆրիկացին (185—129 մ. թ. ա.) հռոմեական պետական գործիչ և զորավար էր, որը հողին հավասարեցրեց Կարթագենը՝ մախազգալով միաժամանակ գոռոզ Հռոմի կործանումը։

Ըստ հնորյա վկայության՝ 146 թվականի գարնանը, մինչև նա երկա՛ր-երկա՛ր մայրում էր մոխրացող Կարթագենին, իսկ կողքին կանգնած էր ուսուցիչը՝ ժամանակի խոշորագույն պատմագիր Պոլիբիոսը, հանկարծ վերջինս լսում է, թե ինչպես իր հովանավորն ու աշակերտը վերահիշում է Հոմերոսի հայտնի տողերը։

Օ՛րը կգա, երբ կավերվի Իլիոնը սուրբ, և կործանվի
Պերիամոսն ու Գիզակավոր ժողովուրդը Պերիամոսի։

(«Իլիական», երգ VI, տող 446—447)։

«Ի՞նչ ես ուզում դրանով ասել»,—հարցնում է Պոլիբիոսը։ «Լավ,—պատասխանում է Էմիլիանոսը,—բայց ես վախենում եմ, որ երբևէ այսպիսի լուր բերեմ մահ Հռոմի մասին» (մեջ է բերված ըստ՝ Մ. Ս. Կորաճև, Ганнибал, изд. «Hayk», М., 1976, стр. 350—351)։—287

48 Կեսար...—այսինքն՝ հռոմեական պետական գործիչ, զորավար և մատնագիր Գայ Հուլիոս Կեսարը (100—44 մ. թ. ա.)։—287

⁴⁹ Նապպլեոն—ֆրանսիական կայսր (1804—1814/5) և գորավար Նապոլեոն I Բոնապարտ (1769—1821):—287

⁵⁰ ...Քայք ե՞րբ կարեն ռուսաց արածը մոռանալ, քանի որ շունչ ունիք...— դեկաբրիստ լաշիցովը, որն անմիջականորեն մասնակցել է Երևանի ազատագրման Ռամար մղվող կոիվներից և լավատեղյակ անձ ու ականատես է հայերի ցնծությանը, իր հուշերում գրում է. «Անկարելի է նկարագրել ուրախության հուզիչ տեսարանները, որով յիմավորում էին մեզ հայոց ընտանիքները, երբ մենք գրավեցինք այն (այսինքն՝ Երևանի բերդը—Պ. Հ.): Մի կողմ թողած, որ նրանք կանխատեսում էին իրենց երջանիկ ապագան, որովհետև, ազատագրվելով պարսից ծանր լծից, պետք է երանության մեջ, Ռուսաստանի տիրապետության տակ ապրեին,—բավական էր վերադառնալ պաշարման ժամանակ նրանց թշվառ վիճակը, որպեսզի հավատալիք նրանց ոգևորության արտահայտությունների անկեղծությանը: Ընդհակառակը, մեզ խոյր էին նայում մահմեդականները: Հաղթանակած թշնամիների վրա նետած նրանց կատաղի հայացքներում պարզորոշ երևում էին անվստահություն, վախ, դժկամություն, ասիստանք: Բերդի անսպասելիորեն արագ ու անհավատալի գրավումն այնպես էր շշմեցրել նրանց, որ չէին հավատում իրենց աչքերին: Երևակալել անգամ չէին կարող նրանց, որ թշնամու բանակը, կողոպուտի ետևից ընկնելու փոխարեն, ձգտում էր վերադառնալ ահաբեկ ահաբեկ ու օգտագործվում էր պաշտպանելու Ռամար բնակիչներից իրենց գիշատիչ համաքաղաքացիներից... Ինչ վերաբերում է հայերին, ապա վճռականորեն պետք է ասել, որ նրանք անկեղծորեն են նվիրված ռուսներին... Ինձ բախտ է վիճակվել ականատես լինել, որ հազիվհազ քայլել ու խոսել սովորած երեխան, դեռ հեռվից, ծալտում և ռուսաց լեզվով կանչում էր՝ здрасствуй. ավելացնել, որ նրանց կողքին մեծեր չկային, որ սաղ բանը սովորեցնել կարողանային: Պարզ չէ՞, միթե, որ ազգականների խոսակցություններն իրենց համար բախտավոր իրադարձությունների մասին փոքրիկների մեջ ևս սեր էին ներարկում դեպի ռուսները» (М. Персидян, Զբված աշխատ., գիրք I, էջ 359—362):—289

⁵¹ Մմբատով ջան, Երուսալեմսկի ջան...—Մմբատովի կամ Գևորգ Ստեփանի Մմբատյանի մասին տե՛ս վերևում, Ընծայականի 1-ին ծանոթագրությունը, իսկ Կարապետ Գաբրիելի Երուսալեմսկին (ծն. 1796) ցարական բանակի կապիտան էր, 1816-ից ծառայել է Երևանյան կարաբիներական գնդում, մասնակցել է 1828—29 թթ. ռուս-թուրքական պատերազմին, եղել է նաև Հայկական մարզի գաղթականական կոմիտեի անդամ (1828—1830 թթ.): Իբրև ուսուցիչականպետ՝ հետագայում պաշտոնավարել է Ախալցխայում (1832—1833) և Թիֆլիսում (1837-ից):—290

⁵² Տուգ Արշակունյաց—հայ թագավորական հարստություն, գոյատևել է 61 (թե՞ 66)—428 թթ. Աշակունյի են Տրդատ III, Արշակ II և Պապ թագավորները:—291

⁵³ ... որ մեկ որդի Սիբիրից ոտով գնացել ա Մոսկով, որ իր հորն ազատի...—Անատի ունի իրական դեպք. 1804 թ. Սիբիրից Պետերբուրգ է գալիս մի ջահել, անփորձ աղջիկ՝ Պրասկովյա Գրիգորենա Լուպանովա, դիմում է Ալեքսանդր I-ին, ազատում աքսորական հորը և հետո հոգիին ավանդում՝ ինչ-որ վանքում: Սա նյութ է ծառայել մի շարք գրական երկերի համար (Մարի Կուտունեի «Եղիսաբեթ Լ...», կամ Սիբիր աքսորվածները», Քսավիե դը Մետտի «Երիտասարդ Սիբիրում», Աուգուստ Կոցերի «Ֆեոդորա», Ն. Ա. Պոլսոյի «Պարաշա Սիբիրյալկա» և այլն): «Վերջ Հայաստանի» վեպի ստեղծագործմանը զուգընթաց, 1841 թ. Ռուկիսին, Արովյանը հայերեն է թարգմանել Կոցերուի դրաման, այն խորագրելով՝ «Ֆեոդորա կամ Որդիական սերը»:—292

⁵⁴ Հայոց դոճունն...—ռուս-պարսկական պատերազմի տարիներից ըստեղծված հայկական կամավորական խմբերը, որոնք ոգեկոչվողներն էին Ներսես Աշտարակեցիին և բանաստեղծ Հարություն Ալամդարյանը, ռազմական գործողություններից մասնակցել են 1828 թ. Ռուկիսից: Առաջիկաներից մեկը Գրիգոր Մանուկարյանի խումբն էր և ուներ 500 ձեռյալ: 1827 թ. մարտին հիշյալ խմբերից կազմակերպվում է Հայկական զորքը (армянская дружина), որը մա-

յիսից սկսած՝ փոքրիկ ջոկատներով Տփղիսից դիմում է Երևան և գեներալ Կրասովսկու զորքերի կազմում կոպիտ թշնամու դեմ: Առաջին վաշտի հրամանատարը Կոդլադուրուշիկ Սմբատյանն էր: Երևանի ազատագրումից հետո այդ զորախումբը ցրում են, իսկ նրա կազմակերպիչ Ներսես Աշտարակեցուն մեղադրում անջատողական ձգտումների համար: Հրատարակվել է **Հայոց զորքի կանոնադրությունը** (Տփղիս, 1827, մայիս), որի եզակի օրինակը մերկայումս պահպանում է Մատենադարանում:—292

55 ...**մեկ հայ ափիցների սպանեցին իր հոր հետ...**—Աղասու սպանության հանգամանքների մասին գոյություն ունի մի ժողովրդական գրույց (իբր ականատեսի վկայություն), որն իր հոր բերանից առնելով՝ ներկա դարասկզբին վերապատմել է հայ վիպասան Պերճ Պողոսյանը: «Մինչև այսօր,—գրում է նա,— մեզանից շատերի կարծիքն է, որ «Աղասին» հեղինակի երևակայության մեջ ստեղծված մի անգո հերոս է, բայց ես դեռ տաք տարեկան մանուկ՝ հորիցս լսել եմ, որ Երևանի առման ժամանակ բերդի փակված դռան բանալու ծակից պարսիկները ատրճաճակի գնդակով սպանեցին «Արովեց տանուտեր Օհանեսի տղա Աղասի աղային, որ ուսի ափիցար էր՝ պսպղան ապալաթներն ուսիս: Ու սաղորթների առաջն ընկած՝ բերդի դուռը կտրել էր, թուրքերեն դըրսկից գոռում էր, որ անիրավ շուն Հասան խանը բերդի բաղնիքները դուրս դրկի, քերդի դուռը բաց անի:

— Բաղդի աչքը տրաքի,—այս էր քաշում հայրս,—հենց որ ուսի զորքը մեծ թոփերն առաջ քցած եկավ բերդի դռան մոտ կանգնեց, ես չորեշոր մոտեցա. թոփի բերանը պաշեցի:

— Ա՛յ տղա, ո՞վ էս, ընչի՞ պաշեցիր,—մոտեցավ ու հարցրեց սպիտակ շարքալուով մի հայ ափիցար:

— Աղա ջան,—ասացի,—համ կպսչեմ, համ էս թոփերը քաշող սելի ականտակին կպատկեմ, թող վրովս անցկացնեն. խիստ դու ուսի աշխարհից եկած աղա ես, էս անիրավ ղզբաշի ձեռից հայի քաշած նեղությունին անտեղյակ ես, օրը մին էր՝ մեր հայ քրիստոնեի խաչին հայհոյանք տալը՝ հազար: 21՝ որ էս թոփերն են սրանից հետո մեր խաչի պատիվը բարձրացնողը:

Հետո էն աղեն անումս ու որտեղացի ըլիս հարցրեց ու ասեց.

— Երբ որ բերդը կմտնեք ու քիչ կհանգստանա՞ք, դու արի ինձ մոտ, քեզ ճշմ տալ կտամ: Հարցրու Քանաքեղի Արովեց Աղասուն, էդ ես եմ:

Ասեց, ինձ թողեց ու գնաց, բերդի դռան առաջին, դռան էս երեսին, անհավատ թուրքի փշտովից (ատրճաճակ) գլուխստորով փովեց: Մեյիղը (դիակ) ետ քաշելն ու ներսից բերդի բաղնիքները սողնակի ծակից դուրս տալը մին էլավ՝ («Աղբյուր», 1902, № 3, էջ 133—134):

Բայց, ըստ պատմական վավերագրերի և դեպքին անմիջականորեն մասնակից Ե. Լաչինովի պատմածի, տվյալ հանգամանքներում զոհված սպան եղել է ոչ թե քանաքեղի Աղասին, այլ գեներալ Կրասովսկու թարգման, ավագ արարողապետ Պ. Դ. Բելովը: Ահա նրա խոսքերը. «Գեներալ Կրասովսկին մոտենում է առաջին պարսպի դարպասներին, հրամայում՝ բաց անել դռանք. դիվիզիոնի ավագ-արարողապետը խոսելով թուրքերեն՝ համոզում է պաշարվածներին, որ նրանք՝ չվախենալով ոչնչից, կատարեն հրամանը. դարպասի մեջ նա մի սողնակ է տեսնում, նայում այն կողմը. հանկարծ կամարների տակ հնչում է մի կրակոց, և դժբախտ Բելովի ուղեղը ցրվել է գալիս շրջապատի մարդկանց վրա: Գեներալը հարցնում է պարսպի վրա կանգնած պարսիկներին, թե ո՞վ կրակեց, և լսում է, որ Հասան խանն էր, որն այդ անելով՝ գնում է դեպի մզկիթ» (М. Персисян, **Ոչված աշխատ.**, գիրք I, էջ 848):—298

56 **Տամբուր մայորը թոփուզը պտտեց...**—Ոչանակում է՝ ավագ թմբկահարը զարկեց թմբուկը: Տամբուր մայոր է կոչվել նաև Գվազախմբի ղեկավարը, (ոռուսական ձևը տամբուր տաժոր է): Փոխ է առնված գերմաներենից, վերջինս՝ ֆրանսերենից, իսկ սա էլ՝ արաբերենից կամ պարսկերենից:—298

67 ...**Տեր Մարութը՝ Հովսեփ եպիսկոպոսի հերը...**—Տեր Մարութի մասին կենսագրական տեղեկություններ չունենք, իսկ որդին՝ Հովսեփ Տեր-Մարությանը (վախճ. 1844, նոյեմբեր), 1820-ական թթ. ազդեցիկ դեմք էր Էջմիածնի վան-

քում՝ լինելով Մայր Աթոռի փաստական կառավարիչը և վարելով երկդիմի քաղաքականություն. սկզբում Ներսես Աշտարակեցու համախոհներից էր, հետո դավեց նրան և անցավ Կարբեցու կողմը: Աշակերտական տարիներին Արովյանն ենթարկվել է նրա հալածանքներին:—297

Հավելված

ԶԱՆԳԻ

¹ Ինչպես մեկ կատաղած վիշապ...—Զանգի կամ Հրազդան գետի սույն նկարագրության մեջ ցույցացել են վիշապների պաշտամունքի աղոտ հետքեր, ինչպես ժամանակին նկատել է նշանավոր հայագետ Գ. Տեր-Մկրտչյանը (1860—1918) Ն. Մառից ուղղված մի նամակում (Քրատարակվել է «Քրիստոնեյա Արևելք» ռուսերեն հանդեսում, 1912 թ., հատ. I, պրակ 1): Հրազդանի խոլական ընթացքը գրեթե նույնպիսի զուգորդումներ է առաջ բերել նաև ուրիշների մեջ, որոնք բախտ են ունեցել նույն տարիներին դիտելու նրա շառաչուն հոսքը. «Արագահոս Զանգուն գալարվելով ժայռերի միջով՝ ծառս է լինում ալիքներով դեպի վեր, որոնցից ցած են թափվում ջրվեժներ. հետվում լավում են քարերի վրայով սուրացող գետի աղմուկը, ժայռերին բախվելուց փշուր-փշուր դարձող ջրերի վեժ շառաչը, հատկապես այն ժամանակ, երբ արևի ճառագայթները խաղում են ցայտանքի հետ, արտացոլվում ճերմակ ալիքներում և մարում վարում կուտակվող փրփուրների մեջ» (Ե. Լաչինովի «Խոստովանություններից», տե՛ս М. Нерсисян, ճշված աշխատ., գիրք I, էջ 363—364):—302

² Կաքավասար—Երևանի այժմյան Ծիծեռնակաբերդ բլուրը:—302

³ ...Ինչպես Պետրարքինը...—Ֆրանչեսկո Պետրարքան (1304—1374) իտալացի հանճարեղ բանաստեղծ և հումանիստ է: Արովյանը շատ է ոգևորվել նրա անձով ու ստեղծագործություններով, վերջիններս համարելով գեղարվեստական խոսքի բարձրագույն արտահայտություն: Դեռ Դորպատում՝ կարդացել է նրա «Երգերի գիրքը», իսկ հետագայում, «Կարճաոտտ պատմությունների» տետրակում, մեջ է բերել բանաստեղծի կյանքից մեկ-երկու դրվագ («Երագ», տե՛ս Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, էջ 107—110):—310

⁴քո պարկեշտ Մամբռու ափին...—Հրազդան (Զանգու) գետի ձախ ափից սկիզբ առնող հին ջրանցք, որ ոռոգում էր Երևանի Նորք և Շահաթաղամասերի այգիները և հասնում մինչև բերդ: Գործում է այսօր էլ:—311

ԲԱՌԱՐԱՆ

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ԴԺՎԱՐԱՀԱՍԿԱՆԱԿԻ (ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐ) ԲԱՌԵՐԻ

Ներկա բառարանը կազմելիս՝ նկատի են առնված ո՛չ միայն ժամանակակից ընթերցող լայն շրջանների (և՛ արևելաֆայ, և՛ սփյուռքաֆայ) լեզվական իմացությունները, այլև հայ գրականության օտարազգի բարեկամների պահանջները, որոնք ավելի ու ավելի հաճախ են դիմում դասականների երկերի բնագրերին: Մի շարք բառեր ու արտահայտություններ, որոնք առաջին հայացքից պարզ ու հասկանալի են հայի համար, հայոց լեզուն լսարաններում կամ ինքնուսույցների օգնությամբ սովորած օտարը չի՝ կարողանում դյուրությամբ ընկալել, կամ էլ բնավ չի՝ հասկանում: Վերջապես՝ ասպարեզ են եկել բնագրից «Վերք Հայաստանին» թարգմանող օտարազգիներ, որոնք տարբեր առիթներով խնդրում են տրամադրել իրենց Աբովյանի վեպի բառապաշարի և առանձին հոմանիշների լուրջօրինակ գործածության առավել ընդարձակ ցանկ՝ պատշաճ բացատրություններով:

Այդ ամենից ելնելով՝ բառարանի սահմանները փոքր-ինչ ընդարձակված են, և փոխառյալ ու բարբառային դժվար հասկանալի բառերի կողքին տեղ է հատկացված նաև հայերեն խոսակցական լեզվի մեջ շատ վաղուց մտած, բայց ժամանակակից գրական լեզվից աստիճանաբար դուրս մղվող՝ դարձյալ փոխառյալ ու բարբառային բառերի մի որոշ քանակությանը, ինչպես օրինակ՝ ազիզ, աղա, աղեկ, անջախ, բալա, բաղ, բարութ, դարման, դոշակ, դոստ, դունչ, եմիշ, թարս, լալ (համր), խաթր, խլեզ, կուշտ (կողք), հալ, հայաթ և այլն:

Հայտնի բառերն և իմաստները, որոնք գործածական են այսօր էլ, բառարանի մեջ, բնականաբար, չեն ընդգրկված: Դրանց մանրամասն հաշվառումը «Վերք Հայաստանի» վեպի լեզվի ամբողջական բառարանի կամ համարաբարտի խնդիրն է:

Բառիմաստները որոշելիս՝ կազմողը ձեռքի տակ է ունեցել հետևյալ աղբյուրները.

Աբովյան Խ., Նախաշափող կրթութեան, մասն Բ, տպ.՝ Նրկերի լիակատար ժողովածու, Բ. Վ, Նր., 1950, էջ 118—164:—Աճառյան Հ., Հայերեն գավառական բառարան, Տիֆլիս, 1913 («Էմիմյան ազգագրական ժողովածու», հտ. Թ):—Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1913:—Առձեռն բառարան

Հայկազնյան լեզվի», Բ տիպ.. Վենետիկ, 1865:—Փասպարյան Գ., Բառարան խաչատուր Աբովյանի երկերի (Բարձրադասի և օտար բառեր), Եր., 1947 (Առանձնատիպ Խ. Աբովյանի Երկերի լիակատար ժողովածուի IV հատորից):—«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Բտ. I—III, Եր., 1969, 1972, 1974:—«Խաչատուր Աբովյանի երկերը», խմբագրությամբ Ստեփանոս Տեր-Սարգսյանցի, Մոսկվա, 1897, էջ 501—537 (Բառերը):—Ղանալանյան Ա., Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Եր., 1941, էջ 131—136 (Բառարան):—Նավասարդյան Ց., Բառգիրք Արարատյան բարբառի, Տփղիս, 1903:—Պետրոսյան Լ., Հովհ. Յուսանյանի գեղարվեստական երկերի բառարան, Եր., 1976:—Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Եր., 1963:—Օգտագործված են ըսև զանազան այլ բառարաններ, գրական-ազգագրական-բանահյուսական ժողովածուներ, նախահեղափոխական շրջանի դասագրքեր, մատենախոսություններ (օրինակ՝ Գար. Ենգիբարյանի դիտողությունները Տ. Նավասարդյանի Բառգրքի առթիվ, տպ. «Լուսն», 1903, № 5, սեպտ. — հոկտ., էջ 91—100, «Ժողովրդական գրականությունից») և այլն:

Ա

Աբա, տղամարդու լայն, թևավոր վերնազգեստ, վերարկու
Աբասի: քսան կոպեկանոց արծաթ դրամ (պարսկական)
Աբուռ (աբուռով), պատիվ, ամոթի զգացում (համեստություն), երեսի ջուր
Ադաթ, վաղեմի սովորություն, սովորույթ, կարգ
Ադաթից, սովորության, կարգի համեմատ
Ազան (սալ), մահմեդականների մեջ՝ աղոթքի բարձրաձայն հրավեր (սգկիթի միանրերից), մուլլայի երգ
Ազար (ընկնել), հիվանդություն, տարափոխիկ դավ, ազար ընկնել՝ հիվանդանալ
Ազիզ, սիրելի, թանկագին, սուրբ, նվիրական, լավ, հանդիսավոր, հարազատ, հազվագյուտ
Ազդոթի (ազդոթի), կայծքարե հրացանի փոսիկի մեջ լցվող վառոդ
Աթա (աթամ), հայր (իմ հայր), նաև՝ պատիվ արտահայտող մականուն
Աթադան-բարադան, հայրենական, պապենական, նախնիներից, պապերից մնացած
Աթրաֆ, կողմ, կողմեր
Ալա՛հ սախլասն, աստված պահի
Ալամ (ալամ աշխարհ), աշխարհ, ամբողջ աշխարհ, երկիր, ամբոխ, բոլոր մարդիկ

Ալաչուխ, թաղիքն զարդարուն վրան Ալապաստրակ, նապաստակ
Ալավ, բոց
Ալհադա, առանձին, ջուկ, հատուկ
Ալմազ, ալմաստ (թանկագին բար), աղամանդ
Ալվան, գույնզգույն, երփներանգ, ազնիվ, ընտիր
Ախմախություն, հիմարություն, տղիմարություն
Ախր, չէ՞ որ
Ախունդ, մահմեդական ցածրաստիճան կրոնավոր, գյուղական մուլլա
Ական թոթափել, իսկույն, մի ակնցթաթթում, անմիջապես
Ականաթ, թակարդ, որոգայթ, ծուղակ
Անվալ, վիճակ, դրություն, բանի էություն
Ադա, պարոն, ազնվական հարգարժան, առատաձեռն, հարուստ մարդ
Ադալ, փարախ
Ադալար, ադա, թուրք ավագանի, իշխան
Ադաք, առաջ, առջև, նախ, նախապես
Ադրաթ, վախճան, վերջ, նպատակ
Ադրաթը խեր ըլի, վերջը բարի լինի
Ադրաթիխեր, վերջը բարի
Ադեկ, լավ
Աղլուխ, թաշկինակ, գլխաշոր
Ադոթարան, արևելք, արևելյան կողմ, արևածագ, լուսաբաց, բառացի՝ աղոթատուն

Աղսախկալ, ծերունի, նաև՝ հարգար-
ժան ծերունի, նահապետ
Աղու, անուշ, հեզ, բարեհամբույր
Աղուն, աղալու ցորեն, հացահատիկ
Անուն-պանուն, թզուկ, գանձան, ա-
ռասպելական թզուկների ցեղ,
որ երևալու է աշխարհի կոր-
ծանման օրը
Ամա, բայց, իսկ, սակայն, թեպետ
Ամա՛ն, բացակաճշություն վտանգի
կամ նեղության ժամանակ
Ամանաթ, ավանդ, պահ տված թան-
կագին բան
Ամարաթ, դղյակ, ապարանք, պա-
լատ
Ամբար, շտեմարան, պահեստ
Ամբարտակ, աշտարականման բար-
ձր շենք (գրաբարում)
Այան, հայտնի
Այլ, այսուամենայնիվ, մինչդեռ («Այլ
եկրոպացիք...» արտահայտու-
թյան մեջ, էջ 289, տ. 19)
Անա (անամ), մայր (մայրիկս)
Անկաջաբոնուկ, աշքալույս, ավե-
տիք, ուրախ լուր
Անճող, ածուխ, գործելի
Անդարար, անդադար, անհանգիստ
Անյախա, անօձիք
Անոշ, անուշ, քաղցր, համեղ
Անջախ, հագիվհագ, վերջապես
Անսաս, անձայն, անշշուկ, անաղ-
մուկ
Անվաթան, անհայրենիք
Անուն, անուն
Աշ դնել, թրջոց դնել (կաշի՛ն մազե-
րից մաքրելու համար)
Աշել (լավ աշեն), նայել, դիտել,
խնամել, լավ համարել
Աշշի, խոհարար
Ապելատ, ուսադիր
Ապով, հուսով, համար, պատճառով,
մեկի՛ն ապավինած
Աջաբ (աջաբ-աջաբ), արդյոք (այդ-
պես անսպասելի)
Աջալ, վերջ, վախճան, օրհաս, մահ
Աջամ, պարսիկ
Աջիգ, թույլ, թշվառ, փոքրոգի
Առ, ամոթ, պատվասիրություն
Առ, մոտ, կողք
Առքիս, ցիհար (տավար)
Առի՛ն նստել, մոտը, կողքը նստել
Ասլան, առյուծ, նաև՝ անվախ, քաջ
Ասլան բալասի, առյուծի ձագ, կոր-
յուն
Ասղարույր, ասեղնագործ

Ասպաբ, զենք, զենքուգրան, սարք
Ասպաբավորվել, զինվել, զինավոր-
վել
Ավալ, նախ, առաջ, նախ և առաջ,
սկզբից, ամենից առաջ
Ավալի սֆրա, հին ժամանակներից,
հնուն, առաջներում
Ավթաֆա, պղնձե սափոր (օգտա-
գործվում է մահմեդականների
վազման համար)
Արաբա, սալ
Արախլու, պարսիկ
Արաղստան, իրաք
Արամիշ անել (քեֆն արամիշ անի),
անցկացնել, առաջ տանել (քեֆ
բաշել)
Արևասողադի՛ն, կյանքի, արևշա-
տության համար
Արևի ձենն ածել, կյանք վայելել,
ապրել
Արի՛ն, արյուն
Արխալուղ (արխալդ), վերնազգեստ
(կարճ, թևավոր)
Արձան, արձանագրություն, վիժա-
գիր, կոթող (էջ 167, տ. 18)
Արմաղան, հազվագյուտ, ընտիր,
հիանալի, շատ գեղեցիկ, նուրբ
Արշտոտալ, հորանջել
Ափհիք, եզերք (առվի, գետի, այգու,
մարգագետնի), եզր, ափ
Ափու, հայրիկ
Աքաշ, փոքր կարաս
Աֆարիմ, կեցցե՛ս, ապրե՛ս (զոհու-
նակության արտահայտություն)

Բ

Բաբա, հայր, հայրիկ
Բաբաթ (լավ բաբաթ), արժանի,
կարգին, ինչպես հարկն է, նաև՝
տեսակ
Բաբի, հայրիկ, պապի, ծերունի
Բադան, թիկունք, մեջք, գոտլատեղ,
նաև՝ պարսպ
Բադուրմիշ ըլիլ, տապավել, վայր
ընկնել, կործանվել
Բազի (բազի վախտ, բազի գրքե-
րում), երբեմն, որոշ, մի քանի,
մի տեսակ
Բազկաթան, թան՝ մեջը լցրած բա-
զուկի ցողուններ
Բաթմիշ ըլիլ, սուզվել, տապավել,
գետինը մտնել, գետնի տակն
անցնել, անհետանալ

Բաժակ, հաղորդություն, հաղորդության գլխի, հաղորդության գինի
Բալա (խաթա-բալա բառի մեջ), հոգս
Բալա, որդի, զավակ (որդյակ, ծագ, ճուտ), նաև՝ ցավ, պատիժ
Բալաբան, թմբուկ, փոխ. մեծ, հըսկա, վիթխարի
Բալքի, գուցե (թե), միգուցե, թերևս, կարելի է
Բախություն, չկամություն, նախանձ
Բաղ, այգի, մրգատու այգի
Բաղաթ, խաղողի այգի
Բաղմանչի, այգեպան
Բաղմանչություն, այգեգործություն
Բաղչա, պարտեզ
Բամբաշել, խփել, հարվածել, մեկի գլխին ձեռքի ափով սաստիկ հարվածել
Բայաթի, արևելյան տխուր երգ, երգի եղանակ, եղերերգական ու տանգավորի տեսակ, քառյակ, խաղիկ
Բայդուշ, բու, նաև՝ չարագուշակ, մեծմեծակ մարդ
Բայրամ, մահմեդականների տարեգլուխ, զատիկ, տոն
Բան տալ, փոխ տալ, գործածելու տալ
Բանդ, բանդա, արարած, մարդ, ծառա
Բանդ, առկի գլուխը փակող թուփ
Բանդ աճել, պահել, սպասեցնել
Բանհոգի (բանհոգի աճել), մեռած, սատկած, սպանել, սատկեցնել, տեղն ու տեղը, նույն վայրկյանին մեռնել
Բաշ (տան բաշից), կատար, ծալք, գագաթ, գլուխ, եզր (կտորի, պատի գլուխ, ծալք), ձիու պարանոցի երկար մագեր
Բաշիբոշ, պարապ-սարապ, անգործ, մտամոլար
Բաշխել, նվիրել, պարգևել
Բաշնդվեր, գլխիվայր
Բաջի (բաջմ), քույր (քույրա), քույրիկ (ուրիշի կնոջ վերաբերմամբ)
Բաս (բաս մտնել), գրագ, գրագ բռնել, նաև՝ հապա, ուրեմն
Բասմա, կոռնակ (տների առաջ կամ կաղերին փոված գոմաղբի հաստ շերտ, որից թափար են կտրում), նաև՝ կեղտի շերտ
Բարաքյաթ, լիություն, առատու-

թյուն, անհատություն, օրհնություն, ուժ, զորություն
Բարաքյալա, կեցցե՛ս, աստված օրհնի
Բարգ, բեռ
Բարեբար, հավասար, համեմատ, նման
Բարխանա, մի տեղ ժողոված տան կամ-կարասիք
Բարշել, հաշտվել, սակարկությունը վերջացնել
Բարութ, վառող
Բեգլար, բահրա, պարիակի ձև, անվարձ մշակություն, ճրի աշխատանք, ծառայություն տերության կամ տիրոջ համար
Բեդառ, անիրավություն, անարդարություն
Բեդամաղ, սրտամնա, դժգոհ
Բեդամաղ ըլիլ, վիրավորվել, դժգոհել, սրտամնա լինել, տխրել, վշտանալ
Բեդվաթ, ապերախտ, վատ, անառակ, փուշ զավակ
Բեից, գլուխ, ուղեղ, խելք, ուշք, միտք
Բեկադա, բեկի որդի, զավակ
Բեդաֆիլ, հանկարծ, անսպասելի, անակնկալ
Բեմուրվաթ, անողորմ, անխիղճ, աննոգի, տմարդի, փոքրոգի
Բեվալստ, անժամանակ
Բեքար, անօգուտ, անպետք, անգործ, անբան
Բիլագիգ, ապարանջան
Բինա ընկնել, հիմք գցել, հիմնադրվել
Բիրադի, բուրբ, ամենքը, միանգամից
Բիրդան, հանկարծ, միանգամից
Բիրդանբիր, միանգամից, հանկարծակի, մեկ էլ հանկարծ
Բխով, կապանք, շղթա
Բխովել, կապանք դնել, շղթայակապ անել
Բհամ (բհամ բերել, գալ), ստեղծած, հասցրած (ստեղծել, հասցնել, գոյանալ)
Բհիր (բհիր), բիր, ցից (փայտե կամ երկաթե), որից կապում են շնե-րին կամ անասուններին
Բղդալ, մայել (ոչխարի, գառան ձայն), բառաշել, գոռալ
Բղուղ, խեցեղեն երկարածն անոթ, պոլիկ

Բմբուլ, փետուր, ցան՝ փափուկ
 Բյուրբյուլ, քլբյուլ, սոխակ
 Բոգ, մոխրագույն, գորշ, ցան՝ ա-
 ցառակ
 Բոխ, բոխի (բացջար), ժախ
 Բողազ, բուկ, կոկորդ, վիզ
 Բողմիշ անել, շնչաձեղձ անել
 Բոշ, դատարկ, փուշ, ունայն, թույլ
 Բոշքա, տակառ
 Բորանի, բորենու մորթուց կար-
 ված մուշտակ կամ բուրբ
 Բորյազ, բորենա, հյուսիսային սառը
 քամի
 Բռաց, հազիվ, դժվարությամբ
 Բոնել, փակել
 Բոնոթի, բթախոտ
 Բրարիոն, նարգիզածաղիկ, ցան՝
 հաղթանակ, պսակ
 Բրիշակ, ավերակ, հիմնաճատակ
 եղած, քանդված
 Բուդկա, պահակախցիկ, պահակա-
 տուն
 Բուդուրմիշ ըլել, սայթաքել, գայթել
 Բուդ, գոլորշի, շոգի
 Բուսուն (բուսուն բռնել), դարան
 (դարանակալել), ծածուկ,
 գաղտնի մեկին հսկել, մեկի ե-
 տնից ման գալ
 Բուք (քրքերով), բուրգ, աշտարակ,
 պարիսպ
 Բուք ու բորան, փոթորիկ, ձյունա-
 խառն կատաղի քամի

Գ

Գաք, փայտե կարթ, կեռ
 Գազ, երկարության չափ (Ռավա-
 սար՝ 112 սմ)
 Գալլիա, Ֆրանսիա
 Գաղղիացի, Ֆրանսիացի
 Գաղտ, գագաթ, գլուխ
 Գափ, սրունքի վարի մաս (կրում-
 ևլիմ մոտիկ)
 Գեղարգյալմազ, անդառնալի ճանա-
 պարհ, բառաթի՝ գնացողն ետ չի
 դառնա, լաբյուրիքոս
 Գեհյազ, գեհեն, անշեջ հեղուց, բուրա,
 դոխք
 Գեղանգեջ, վերջապես, ի վերջո
 Գինա (գինալ), գիտի (գիտենալ)
 Գլանալ, փայտանալ, բթանալ
 Գլուխ, կտուր («գլուխը քանդված
 տեսնելով...» արտահայտության
 մեջ, էջ 107, տ. 1)

Գյաղա, ծառա, երեխա, ստոր,
 տմարդի
 Գյոզ (գյոզմ), աչք (աչքս)
 Գյոզ բալասի, աչքի որդի
 Գյոզուկ, ակնոց
 Գյոռ, գերեզման, շիրիմ
 Գյոռքեգյոռ ըլիլ, գերեզմանում էլ
 հանգիստ չգտնել, դժոխքի, սա-
 տանայի բաժին դառնալ
 Գյոռխանա, մահմեդական գերեզմա-
 նատուն
 Գյոռն չաթխան, թո՛ղ գերեզմաննե-
 րը քանդվեն
 Գյովդա, իրում, հսկայական կազմ-
 վածք
 Գյորա (էնրգյորա), համեմատ (նրա
 համեմատ), համապատասխան
 Գյուլաբաթնի, ոսկեթել, ոսկեճուռ
 Գյուլաբանգի (աղուխ), մետաքսե
 ծաղկանկար (մեծ թաշկինակ)
 Գյուլա (գյուլա), գնդակ (հրացա-
 նի), արկ
 Գյուլաչի, թնդանոթի մեջ արկ դնող
 Գյում ըլիլ, անհետանալ, կորչել,
 չքանալ, խորատուվել ջրի տակ
 Գյուման, հույս, ցան՝ բագի
 Գյում (էլ-գյում), ժողովուրդ, ազգ,
 ազգություն
 Գյուն. շատ, խիտ, թունդ, լիքը,
 առատ
 Գոթրոմ (գոթրոմացել), խեղան-
 դամ, անդամալույծ դարձել
 Գոմփոռ, գամփո
 Գուլացել, բթացել

Ղ

Ղաբաղ, կաշեգործ, ցան՝ անասուն-
 ների ռիվանդություն
 Ղա՛թ, դա՛տ, դատ, դատաւտան
 (արդարություն որոնելու կամչ)
 Ղաղթմիշ անել, քարուքանդ անել,
 ավերել, ցրիվ տալ, ցաք ու ցրիվ
 անել
 Ղամ անել, դամ քաշել, ձայն պահել,
 ձայնակցել, նվազակցել
 Ղամաղ, քիմք, փոխ. հաճույք, քեֆ
 Ղամաղը չաղ ա, տրամադրությունը
 լա՛վ է
 Ղամաղները տաքանալ, քեֆները
 բացվել
 Ղամար, երակ, ջիդ
 Ղան, հատիկ, հացահատիկ, աղուն
 Ղաստա, խումբ (մարդկանց), տըր-

ցակ, կապուկ, փունջ, սրի կոթ
Դաստամալ, ուսաշոր (կծով ջուր
կրելիս դնում են ուսին), աման
լվանալու շոր
Դաստուր, արձակուրդ (աշակերտ-
ներից արձակել)
Դատաստանի օր, աշխարհի կոր-
ծանման օրը
Դատ-բեղատ, (դատ-բեղատ անել)
դատ, դատաստան, բողոք (ան-
իրավության, անարդարության
դեմ բողոքել)
Դարա, մետաքս
Դարայի (դարայի միջթանա), մե-
տաքսե գործվածք (մետաքսե
շրջագգեստ)
Դարդավարամ, հոգսերից ճնշված,
վշտահար
Դարդիմանդ, վշտահար, սրտացավ,
սրտաբաց, առատաձեռն, վե-
հաճճ, մեծահոգի
Դարիդուս (դարդուս), զառիվայր,
լեռնալսնջ, թեք, սարն ի վեր
Դարիվեր, սարն ի վար, զառիվայր,
դարիվայր
Դարման, հարդ, անասնակեր
Դարման (դարման անել), դեղ, մի-
ջոց, ճար, հնար (գտնել),
բժշկություն
Դարմանի ջուր, ծածկամիտ, խորա-
մանկ
Դափ, թմբուկ (կիսաթմբուկ), դա-
հիրա
Դելն տալ, զառանցել, անկապ խոսել
Դեհ, կողմ
Դեղասլետ, հիվանդի ուզած կամ
խնդրած բան, մահ՝ հազվագյուտ
բան
Դեղել, թունավորել
Դերձան, բամբակե բարակ թել
(կարի համար)
Դերձիկ, դերձակ
Դիբ, սեպ, դարիվեր, զառիվայր
Դիբա (դիբա արխալուղ), դիպակ,
կերպաս, կտոր, ուկերթել, ար-
ծաթաթել գործվածք
Դիլբանդ, թարգման (թարգմանիչ)
Դին, հավատ, մահ՝ անդրաշխարհ
Դինգ, բրինձը, ցորենը թեփահանե-
լու հարմարանք, աշխատում է
ջրի ուժով
Դինջ, հանգիստ, հանդարտ, խա-
ղաղ, անվրդով
Դիվանխանա, դատարան, ատյան,
խանի ընդունարան

Դիր գալ, դուր գալ, հաճելի, հավա-
նելի լինել
Դհա, էլ ավելի, առավել, շատ
Դմբուկ, բոռնցք
Դմփել, ծեծել, խփել, բոռնցքով
հարվածել
Դոնմիշ ըլիլ, ապստամբել, երես
դարձնել, դավաճանել
Դոշ, կուրծք, լանջ
Դոշակ, մերքնակ
Դոստ, բարեկամ, մտերիմ
Դովթուլաբ, ճարպիկ, արագահաս,
պատրաստակամ
Դովլաթ (դովլաթ), հարստություն,
ունեցվածք, կայք, կարողու-
թյուն
Դոփ, առույգ, աշխույժ, ժիր, կեմ-
սունակ
Դվաշի, աղոթող, աղոթարար
Դվորը, ո՞ր կողմը, դեպի ու՞ր, ո՞ր-
տեղով
Դրոշկա, սալակ
Դուբարա (դուբարա ավել քսել),
կրկնակի, կրկին անգամ, եր-
կուստեք, երկիցս
Դուզմա, կոճակ
Դուզ, ուղիղ, շիտակ, ճիշտ, հարթ,
հարթավայր, դաշտ
Դութաղ, բանտարկյալ, կալամա-
վոր, գերի
Դուման, մառախուղ, մեզ, մշուշ,
փոշի
Դունջ, էրես, դեմք, բունգ, քիթ-քե-
րան (անասունի)
Դուշման, թշմամի, ախույան
Դուրո՞ւա (տալ), մուշտի, բոռնցք
(բոռնցքով հարվածել)
Դուրթմա, հրացանի խզակոթ
Դուրքին, հեռադիտակ
Դուրում, պատառ (լավաշի մեջ կլոր
փաթաթած)
Դուքան, խանութ, վաճառանոց

Ե

Եգին, արագ, շուտ
Եթիմ (էթիմ), որք
Եթմիշիքի, լրբանասուներկու
եմ, անասնակեր, ուտելիք (դարման
կամ խոտ)
Եմիշ, սեխ
Եռալ, տեղից շարժվել, առաջանալ,
արագ շարժվել, բորբոքվել,
հուզվել, փոթորկվել

Եսիր, գերի
 Ետի, հետո, ապա, ուշ
 Երաբ, արդյոք, միթե, յարաբ
 Երբմիշ անել, շարժվել, գնալ, երե-
 րալով քայլել
 Երիշ (երիշ քաշել), գնացք, քնթացք,
 քալվածք, գրոհել, հարձակում
 գործել
 Երլու, տեղացի, բնիկ
 Երկուհոգիս, հղի, ծննդկան
 Եքա, մեծ, ահագին

Ձ

Ձահմաթ, նեղություն, ճանճրություն,
 չարչարանք
 Ձահրմար, զահրումար, օծի լույց,
 նակ՝ ցավ, անպետք, զզվելի,
 տհաճ
 Ձանգալ, սրունքների վրայով հա-
 գած կաշվե ճիւղք, սեռապան
 Ձառ, ոսկի, ոսկեթել, ոսկեջուր,
 հրաշալի, գեղեցիկ, թանկագին
 Ձառ վարադ, ոսկեփողի, ոսկեջուր
 Ձատ, բան, առարկա (իր)
 Ձարբագան, թնդանոթ
 Ձարգար, ոսկերիչ
 Ձարթնե, բացի
 Ձիբիլ, աղբ, կեղտոտություն, աճ-
 պետք, չնչին բան
 Ձինգիհաթ, արծաթեղեն, ոսկեղեն
 զարդարանք
 Ձինքս, արծաթեղեն կամ ոսկեղեն
 Ձլել, բարձրացնել, ուժեղացնել ձաշ-
 նը, արագացնել
 Ձմռութ, գմրուխտ (կանաչագույն
 թանկարժեք քար)
 Ձնջիլ, շղթա
 Ձու, շերտ
 Ձոռ, առավոտյան թմբկահարություն
 («Ձոռը խփեցին...» արտահայ-
 տության մեջ, էջ 281, տ. 6/7)
 Ձոռ անել, լարվել, ուժ տալ
 Ձոռքա, ուժեղ, ազդեցիկ
 Ձվիրք բերել, չարչարել, նեղը զցել
 Ձու, քնթացք, սպցում
 Ձու անել, հարձակվել, վրա վագել
 Ձուլում, դժբախտություն, չարիք, ա-
 դետ, պատուհաս

Է

Էթիմ, որք, տե՛ս եթիմ
 Էլ (էլ-գյուն), ցեղ, տոհմ, ժողո-
 358

վորդ, նակ՝ այլևս, ևս, տե՛ս
 գյուն
 Էլ ետ, կրկին, դարձյալ, նորից
 Էլա, գոնե, գեթ
 Էլած, եղած, ունեցած, ամբողջ
 Էլլիզ, ազգաբնակչություն, ժողո-
 վորդ, բնակչություն, համայնք
 Էլօր (էգուց-էլօր), մյուս օրը, հետո,
 մոտ ապագայում
 Էնդուր (էնդուր համար), այն բանի
 համար, այն պատճառով
 Էնըզյորա, նրա համեմատ, տե՛ս
 գյորա
 Էշխ, սեր, փափագ, եռանդ
 Էշխ բնկնել, սիրել, ոգևորվել, ինք-
 նամոռաց ոգևորության մեջ լի-
 նել

Էսիր, տե՛ս եսիր
 Էր, այդ, բարանձավ, քարայր
 Էրել, էրվել, այրել, այրվել
 Էրլու, տեղացի, բնիկ, տե՛ս երլու
 Էրծաթ, արծաթ
 Էրնակ, երնեկ, երանի
 Էրված, այրված

Ը

Ըխտիար, իրավունք, կամք, իշխա-
 նություն, արտոնություն
 Ընչանք, մինչև, մինչև որ

Թ

Թաբաղա, երկծալ, մեծադիր թերթ
 Թաբուն, պարս (մեղուների), խումբ,
 բազմություն, խաժումուժ
 Թադարեք (տան թադարեքը), պատ-
 րաստություն, նակ՝ ծախսելիք
 Թագա, նոր
 Թագի, բարակ, որսորդական շուն
 Թախտ, զանափորակ, բազմոց, ա-
 թոռ, արքայական զան, աթոռա-
 նիստ
 Թադաթ, ուժ, զորություն, կարողու-
 թյուն
 Թադումելեք, թադման ծախք, վճար
 Թամահ անել, մի բան ունենալու
 ցանկություն, տե՛նչ, ցանկալ,
 տե՛նչալ, նակ՝ ազանություն,
 ընչասիրություն
 Թամամ, լրիվ, կատարյալ, ողջ,
 ամբողջ, բոլոր

Թամաշ (թամաշա անել), տեսա-
 րան, հանդես նայել, դիտել
 Թամաշավորք, հանդիսատեսներ,
 դիտողներ
 Թամարզու, կարոտ, ծարավի
 Թամբալ, ծուլ, դանդաղաշարժ
 Թամբաֆ (թամբաֆ անել), պատվեր
 (պատվիրել), հանձնարարել,
 հրամայել
 Թամուզ, մաքուր
 Թամուզանալ, մաքրվել
 Թայդաշ (տուլ), հասակակից, ըն-
 կեր, ընկերակից
 Թանխա տալ, մատնանշել, վկայակո-
 չել, սուտ խոստում, հույս տալ
 Թաջիր, վաճառական, առևտրական
 Թասիք, պատիվ, հարգ, նամուս,
 արժանապատվություն, ինքնա-
 սիրություն
 Թասիր անել, պակասեցնել, կտրել,
 խնայել
 Թավազա անել, մատուցել, հրամ-
 քոցնել, տալ
 Թավա, ախոռ, գոմ
 Թարաքյամա, թուրքական խաշնա-
 րած ցեղ, ընդհանրապես՝ խաշ-
 նարած թուրք, աղբրեջանցի
 Թարեղ, թվական, տարեթիվ, նաև՝
 պատմություն (թարրղ)
 Թարս, հակառակ, ծուռ, շրջված,
 կամակոր
 Թափա, բլուր, կատար
 Թաք (թաք ըլի), միայն (միայն թե),
 կենտ
 Թաքար, նորից (նորից-նոր),
 կրկին, վերստին
 Թեբեռել, փետրահան անել, փետել
 Թեզ, շուտ, արագ, շտապ
 Թերերեց, կիսայրած փայտ, խան-
 ծող
 Թիմարել, երկաթե քորիկով կամ
 խոզանակով անասունների մար-
 մինը շփել, մաքրել, քորել
 Թիկնը տալ, հեճվել
 Թիրմա, բրդե նուրբ գործվածք, ա-
 սեղմագործ ծաղկավակար բան-
 վածք
 Թիքա, պատառ, կտոր, բաժիմ
 Թխտըմոր, թթված խմոր
 Թոզ, փոշի (փոշու ամպ)
 Թոխմախ, փայտե մեծ մուրճ, մահակ
 Թո՛րկ, թո՛ղ (թողնել), բաց թո՛ղ
 Թոնթորալ, տրտմջալ, քրթմջալ,
 փնթփնթալ, մրթմրթալ

Թոփ, թնդանոթ, հրանոթ, նաև՝
 զնդակ
 Թոփ ըլիլ, հավաքվել, կուտակվել
 Թոփխանա, զինարան, զինանոց,
 վառողարան
 Թոփչի, թնդանոթածիզ
 Թոփրաղ, հող
 Թոփուզ, ոզնեզլխիկ, թմբկահարի
 մուլանիկ
 Թվանք, հրացան
 Թվանքչի, հրացանավոր, Մայր Ա-
 թոռի (Էջմիածնի) պահապան-
 զինվորներ
 Թութակ, սրինգ, շուռ, շվի
 Թուլա, ծագ, լակոտ, շան ծագ
 Թուլի, ավազակ, սրիկա
 Թումամ, պարսից (արևելյան) դրամ,
 տասը ոտրի
 Թունգի, հեղուկ նյութերի չափ, հա-
 վասար՝ հինգ շշի
 Թունդիր, թոնիր
 Թուշ, ուղիղ, ուղղակի, դեպի, նաև՝
 այտ

Ժ

Ժամի վախտ, ժամերգության ժամա-
 նակ
 Ժամոց, քահանային տրվող դրամ

Ի

Իգի, ալզի
 Իգիթ, քաջ, կտրիճ
 Իզ, հետք
 Իզ ու թոզ, հետքը
 Իլիկ (մեջքի իլիկ), թեշիկ, ողնաշար
 Իլլահիմ, մանավանդ, հատկապես,
 առավելապես
 Իլխի, ձիերի երամակ, օտկ, նախիր
 Իլդուն, կարմրան (սվազուտներում
 աճող թուփ. օգտագործվում է
 որպես վառելիք)
 Իմալ, ինչպես
 Իմամ, մահմեդական կրոնավոր,
 կրոնապետ, սուրբ, որին հե-
 տնեկով են մզկիթներում կատա-
 րում աղոթքները
 Իմանազ, անհավատ
 Ինազ, վրեժ, ջիգր, համառություն
 Ինջըմիշ ըլիլ, տանջվել, չարչարվել
 Ինջ, կենդանի արարած, հոգի, շունչ,
 մարդ

Ինս-քինս, ազգութակ, ցեղ
Իշարաթ, նշան
Իշտահ, ախորժակ
Իսան, մարդ (մարդու զավակ)
Իսանորդի, աղամորդի
Իստակ, մաքուր, զուտ, իսկ և իսկ,
անաղարտ
Իսրի, տաք, գեղեցական
Իսրի պունախ, դժոխք
Իրավոր, յուրային, մերձավոր, ար-
յունակից ազգակից

Լ

Լաբչից, սուր, երկար, վեր ուղրած
քթով ունաման
Լազան, կոնք, լվացվելու տաշտակ
Լազլազ, արագիլ
Լազաթ, համ, բավականություն, հա-
նույք, ախորժակ
Լալ, համր
Լալազար, լալա, կակաշ
Լախտի, գոտի, հյուսած թուկ
Լայադ, հարմար, համապատասխան,
արժանի, վայել
Լաշ, լեշ, դիակ, մարմին
Լաշար (լաշտ), լիբբ, անզգամ, ա-
նամոթ, կովարար, լպիրշ
Լաշ (լաճ), տղա, որդի
Լավ աշել, լավ տեսնել, լավ համարել
Լավ-ոսալ, լավ-վատ, մի կերպ
Լացակրկնած, լացակումած, հեղձա-
մաղձուկ
Լգամ, սանձ, երասան
Լեդ (լեդանալ), լոդ (լոդանալ)
Լեռ, որձաքար, ապառած քար, կար-
ծըր, ամուր
Լերդ, լարդ
Լիս, լույս
Լիտր (լիդր), ծանրությամ չափ,
երևանում, Արովանի ժամանակ,
մեկ լիտրը հավասար էր 12
ֆունտի կամ մոտ 5 կիլոգրամի
Լդպոր, խիստ փափուկ
Լոնդի, երկար, հսկա
Լոշ, բարակ հաց, լավաշ
Լուվա, բարակ խողովակ, սառցի
ձող (սառցաշիթ), փող (հրա-
ցանի)
Լուվա, սրունք

Խ

Խաբար (ի՞նչ խաբար ա, խաբար
առնել), լուր, տեղեկություն,

համբավ, իմանալ, տեղեկանալ,
տեղյակ (բանն ինչումն է, ինչ
է պատահել)
Խաբար-դա՛ր, զգու՛շ, ուշադրու-
թյուն (պարսկերեն բացական-
չություն)
Խազիհա, զանձ, զանձարան
Խաթա, փորձանք, պատուհաս
Խաթա-բալա, գլխացավանք, հոգս
Խաթեր (խաթրու), համար (մեկի),
սիրուն, ի պատիվ, փոխարեն,
պատճառով
Խաթր, հարգանք, պատիվ, կամք,
ցանկություն (օրինակի համար)
Խաթրն առնել, սիրաշահել, գուրգու-
րել
Խաթրամ, միամիտ, անվրդով, ան-
երկմիտ, վստահ, ապահով
Խալաթ, թանկագին հագուստ, վեր-
նագոյեստ, նաև՝ ընծա, նվեր,
պարգև
Խալիֆա, վեհապետ, մահմեդական-
ների աշխարհիկ և հոգևոր գը-
լուխ, առաջնորդ, թագավոր
Խալխ, ամբոխ, բազմություն, ժողո-
վուրդ, մարդիկ
Խան, պարսից ազնվականական
տիտղոս, իշխան
Խանա, ահա, ահավասիկ
Խանդակ, փոս, խրամ, հեղեղատ,
ճեղքվածք
Խանգադա, խանի որդի, զավակ
Խանի խարաբ, տնաքանդ, ավեր-
ված, խանգարված
Խանչել, կանչել
Խանում, տիկին, տիրուհի
Խաչվառ (խաչվառ), խաչադրոշ,
տերունական պատկերով դրո-
շակ, որ դուրս են բերում եկե-
ղեցական թափորների ժամանակ
Խաս, մետաքսյա գործվածք, ըն-
տիդ, նուրբ ճոթեղեն, մետաքս,
նաև՝ նուրբ, ազնիվ, անխառն
Խասիաթ, բնավորություն
Խարաբ, փչացրած, անսարք, վատ
Խարաբա, ավերակ
Խարար, կարպետից կարված մեծ
պարկ
Խարբ (սրտի խարբ բան), հարկ,
տուրք, համապատասխան, վա-
յել, արժանի
Խարջել, ծախսել
Խեթ նայել, կասկածանքով, տարա-
կուսանքով, անբարյացակամու-

թխամբ, խողոր, ծուռ, ատելու-
 թխամբ մայել
 Թեխիմ, բավականաչափ, շատ, մի
 քիչ
 Խելյութ, բարվոք
 Խենեշ, գարշելի, գազրելի, նողկալի,
 վավաշտոտ, լպիրշ
 Խեռութիւն, անհնազանդութիւն,
 ըմբոստութիւն
 Խնանդ, աստիճան
 Խնանդ-խնանդ, աստիճան-աստի-
 ճան
 Խեր, բարիք, օգուտ, վաստակ, շահ,
 բարեգործութիւն
 Խիզիլալա, խավիար, ձկնկիթ
 Խիշտ, սպիմ
 Խլափոթ, Ռոգս, դարդ, ցավ, գլխա-
 ցավանք
 Խլեզ, սողես
 Խլխլալ, չափից ավելի լցվել, խլթ-
 խլթալ, եռալ
 Խլշացնել, խրտնելուց կամ երկյու-
 դից ականջները ցցել, լարվել
 Խլշկոտալ, գաղմաճից, շփոթվելուց
 այս ու այն կողմ մայել, Ռուշտ
 լինել
 Խլսել, ազատվել, պրծնել
 Խոբոր, վերու հավ, փասլամ
 Խոմ, ապա ուրեմն, արդյոք
 Խոռ, պատի քանդվելուց առաջա-
 ցած փոքրիկ անցք, ճեղք, ճեղք-
 վածք, բացվածք
 Խոռակ, ուտելիք, կերակուր
 Խոսքըմին անել, համաձայնել
 Խոր (շատ խոր), կատարյալ, շատ
 լավ, հիմնավոր
 Խոր, Ռոր, փոս
 Խոկել (ճամփից խոկում), զոռով
 դուրս անել, քշել, վռնդել
 Խտիտ (խտտել) գիրկ (գրկել)
 Խուլասա, մի խոսքով, ինչևիցե,
 վերջապես, մախլաս
 Խուրդուխաշ, ջարդուփշուր

Շ

Ծանրագոգոթ, ծանրաբար, փառա-
 վորապես, հանդիսավոր, առոք-
 փառք
 Ծեղ, շլուղ
 Ծիկա տալ, ճղող հանել, ճչալ
 Ծլանել, ծվեն, հագուստի պատա-
 ռոտված, կախ ընկած կտոր
 Ծլունգ ըլլել (ծլուկ ըլել), վեր թըռ-
 չել, ցատկել, թռչկոտել, խրտնել

Ծղնոտ, ցորենի կամ գարու ցողուն,
 հնձած արտ, խոզան
 Ծպտալ, ձայն հանել
 Ծուլ ըլել, ցատկել, տեղից վեր
 թռչել
 Ծունը բարակ, անխելք, թեթևամիտ
 Ծուղա, ոլորուն քթով, թեթև մաշիկ
 (դեղին, սև կամ կարմիր կաշ-
 վից)

Կ

Կալնել, խփել, ծածկել, փակել
 Կակող, փափուկ
 Կանարեկա, դեղձանիկ
 Կապա (կապի), երկար վերնա-
 զգեստ
 Կառելք, ծածկված կառք
 Կատեպան, այգեպան
 Կատեպանություն, այգեպանություն
 Կարաուլ, հերթապահ, ժամապահ
 Կարգավոր, կրոնավոր, Ռոզնոր
 աստիճան ունեցող
 Կթել (աչքը կթել), հառել, սկեռել
 Կիր, կիրանալ, կույր, կուրանալ
 Կխշորել (կխշոր տալ), ոտքի տակ
 տրորել, կոխկոտել
 Կոլոլ, փաթաթած, կլոր, գունդ դար-
 ձած
 Կոնդ, բլուր, բլրակ, թումբ, մակ, ան-
 դամալույծ
 Կոնդալ, ճաղատ, անմազ, կումդ
 Կոնձկոնձալ, կաղկանձել
 Կոռ, արքունական ձրի, հարկադիր
 աշխատանք, մշակություն, մակ
 առհասարակ ձրի աշխատանք
 Կու, թրիք
 Կունդկի (կունդկի տալ), գլուխկոն-
 ծի, գունդ ու կծիկ
 Կուշտ, կողք, մոտ, մոտը, մակ, հա-
 գեցած
 Կուռ, ձեռք, թև, մակ, կողմ
 Կուի-կուի, հավաք, սիրուն

Ը

Հաբգա, խորջին
 Հադադա (էս հադադին), միջոց,
 պահ, ժամանակ, անմիջապես,
 իսկույն
 Հադդ, իրավունք, զորություն, հա-
 մարձակություն, սիրտ
 Հազ անել, սիրել, հավանել, ախոր-
 ժել

Հագիր (հագիր անել), պատրաստ
 (պատրաստել), պատրաստի
Հաթաթա (հաթաթա տալ), սպառ-
 անալիք (սպառնալ)
Հալ, վիճակ, դրություն
Հալքաթ, երևի, մի գույն, հավանա-
 բար, անշուշտ, անկասկած, ի-
 հարկե
Հախ, ճշմարիտ, արդար, իրավա-
 ցի, պատշաճ, վճար, վարձ, հա-
 սանելիք
Հաղ, հող (ձեռքի, մարմնի)
Համամ, բաղամիք
Համեշա, միշտ, մշտապես, շարու-
 անակ
Համշարի, համերկացի, ման՝ պար-
 սիկ, անշնորհք
Համքլար, արհեստակից, գաղափա-
 րակից, մման (իր մմանի)
Հայաթ, բակ, սրահ
Հայիլ-մայիլ մնալ, զմայլվել, սքան-
 չանալ, հիանալ
Հայիֆ, ափսոս
Հայվան, անասուն, կենդանի, ան-
 հասկացող, տգետ, անուսում
Հայվարա, դատարկ, փուշ, ան-
 օգուտ, պարապ-սարապ
Հայ-օլան, հայ կոշվածի
Հանգ (հանգի), ձև, կերպ, եղանակ,
 տեսակ
Հաջաթ, գործիք, փույթ, պետք,
 կարևորություն, ճշանակություն
Հաջի, Մեքքա (Երուսաղեմ) ուխտ
 զննացած մահմեդական (քրիս-
 տոնյա)
Հասար, պատ, պարիսպ
Հասրաթ, կարոտ, փափագ
Հավա, եղանակ, կլիմա, օդ
Հավար (հավարից հասնել), օգնու-
 թյուն, ահագոչ, ահագանգ, օգ-
 նության կանչ, աղմուկ, իրա-
 բանցում
Հարամել, պղծել
Հարամզադա, հարամու, ավազակի
 որդի, սանձարձակ
Հարամի, ավազակ, թշնամի, գի-
 շակեր (թշնուններ), մարդա-
 սպան, շատակեր
Հարայ տալ, աղաղակել, օգնության
 կանչել
Հարայհրոց, իրարանցում, ժխոր,
 աղմուկ-աղաղակ
Հարարաթ, զորություն, ազդեցու-
 թյուն, շնորհք
Հարաքաթ, հարաքյաթ, ուժ, կարո-

դություն, շարժվելու հնարավոր-
 ություն, աշխատություն
Հարբա գալ, սպառնալիք կարդալ,
 սպառնալ
Հարզևոր, համեստ, խոնարհ, ամոթ-
 խած, պարկեշտ
Հարկիզ, ամենևին, բնավ, երբեք
Հեթեթալ, արագ-արագ շունչ առնել,
 հևալով շնչել, հեկեկալ
Հենց բռնիր, համարի՛ր թե, Հշմա-
 րիտն ասած, իսկ և իսկ, ճիշտ
 որ, կարծես, ուղղակի
Հեշ, բնավ, ամենևին, ոչինչ
Հեսաք, հաշիվ, կարգ
Հերիք, բավական, բավ է
Հերս, բարկություն, զայրույթ, ջղաշ-
 նություն
Հլա, տակավին, դեռ, դեռևս, ա-
 վելից
Հմա, արդ, ահա, այնպես
Հոսան անել, փոշեխառն կամ ձյու-
 նախառն քամի բարձրանալ,
 բուք անել
Հոտաղ, փոքրամասնակ հովիվ կամ
 վարձու մշակ, եզնարած, անա-
 սունները պահող երեխա
Հրես, ահա՛, այստեղ է, հենց հի-
 մա, ուր որ է
Հուհար, շնորհք, ձիրք, ճարտարու-
 թյուն, վարպետություն, հմտու-
 թյուն
Հուշտ ըլնել, խրտնել

Ձ

Ձի ռախտ, ձիու սարք՝ արծաթե կամ
 պղնձե զարդարանքներով
Ձողի, ձող
Ձորնըդուս, ձորն ի վեր

Ղ

Ղաբա, մեծ, հսկա, բոլորակ
Ղաբլու փլավ, լուղ ու մեղրով,
 մրգեղենով ու սիսեռով համեմ-
 ված փլավ
Ղաբուլ, համաձայն
Ղադար, չափ
Ղադաք (ղադաք միթթանա), կտո-
 րեղեն, մեծ մասամբ՝ սև, կա-
 պույտ կամ կանաչ գույներով
 ներկված միտկալ, որից կարում

եմ արխալուդ, շապիկ կամ շըր-
ջազգէստ
Ղադմի (ղադըմի), հարատև, մշտա-
կան, մշտապես
Ղադր, արժեք, նշանակություն, լա-
վություն, պատիվ, հարգանք
Ղադր անել, արժեք, նշանակություն
տալ
Ղազար, պատուհաս, դժբախտու-
թյուն, պատիժ
Ղազախ, կոզակ (ռուս զինվոր)
Ղազախ, թուրքական ցեղ
Ղազիլ, մազե (բրդե) թել կամ գործ-
վածք
Ղաթր, ջորի
Ղաւարանդղ, թշնամու մոտենալու
ժամանակ, կոիվ, իրարանցում
Ղալաթ անել, սխալվել
Ղալամ, գրիչ
Ղալամով քաշած, նկարեմ, անթերի
Ղալամքար, ծաղկավոր, տպածո,
ընտիր չիթ
Ղալբ, կեղծ, շինծու, խարդախ
Ղալխան, վահան, ասպար
Ղալմաղալ, աղաղակ, արվուկ, վեճ
Ղամա, դաշույն
Ղամիշ, եղեգ
Ղամշի, մտրակ. խարազան
Ղամշել, մտրակել
Ղաշիմ, ամուր, ուժեղ, պինդ, ուժ-
գին
Ղաշիմ-ղադըմի, մշտահաստատ, հա-
րատև
Ղալանշի, դալան (նարգիլե) պատ-
րաստող և մատուցող ծառա
Ղալու, բացի
Ղանդ, փուխր շաքար (թե՞ գլուխ
շաքար)
Ղանթարդա, սանձ
Ղանջղ, էգ շուն (անարգական խոսք՝
կնոջ հասցեին ասված)
Ղաշ, թամբի գլուխ (փայտե մաս)
Ղաշդա, պիսակ, սպիտակ նշան կեն-
դանու ճակատին կամ մարմնի
ալ մասերի վրա
Ղաջար, կաշար (թուրքական ցեղ
և թագավորական հարստու-
թյուն Իրանում)
Ղաջարի, մահուդից, կարպետից կամ
շերտավոր շալից կարված թամ-
բի ծածկոց
Ղասաբ, մետաքսե հաստ գործվածք
Ղասաբ, մուսգործ, մսավաճառ, նաև՝
արշուճարբու, մարդասպան
Ղասաբխանա, սպանդանոց

Ղասավաթ, վիշտ, հոգս, մտատան-
ջություն
Ղաստ (ղաստ անել), մտադրու-
թյուն, դիտավորություն (մտա-
դրովել), ջանալ, աշխատել
Ղարալթու, սովեր, ուրվական, երե-
վույթ
Ղարաշի, գնչու, անգգամ, աղմկա-
րար
Ղարավաշ, սպասուհի, աղախն, ճորտ
Ղարավուկ, պահակ, պահապան
Ղարար, դադար, հանգիստ, անդորր
Ղարափափախ, բառացի՝ սև փա-
փախավոր, թուրքական ցեղ
Ղարդաշ, եղբայր
Ղարիբ, օտար, անծանոթ, օտարա-
կան, օտարագգի, պանդուխտ
Ղափան, վագր, ինճ (ընճառյուն)
Ղդար, չափ, տե՛ս դադար
Ղզլբաշ, բառացի՝ կարմիր գլուխ,
պարսիկ
Ղզլբաշի երկիր, Պարսկաստան,
Իրան
Ղզղուն, թեժ, եռուն, թունդ
Ղիամաթ (ղիամաթ անել), աստիճ-
յուն, բուք, բորան, սառնամա-
նիք (փոթորկել), նաև՝ տազնա-
պալից րոպե, դժվար կացություն
Ղիծիհա (ղիծիհա գցել), աղմուկ,
դժոժոք (գցել), ճվճվոց
Ղիմա, փոքրիկ կտոր
Ղիմա-ղիմա, կտոր-կտոր (մաճր)
Ղիմիշ անել (ղմշել), խնայել, մեղ-
քանալ
Ղվլոց, աղմուկ, գոռոցոց (սուռ-
մոքսի)
Ղհաթ, հազվագյուտ բան, կարիք,
պակասություն
Ղնամիշ անել, հաճույնանել. կշտեմ-
բել, անարգել, մեղադրել
Ղշղրու (ղշղրու տալ), աղմուկ, ա-
ղաղակ, տազնապի կանչ, հայ-
հույ
Ղոթոր, քոսոտ, մազը թափած
Ղոմբարա, ումբ (թնդաճոթի)
Ղոնաղ, հյուր
Ղոնշուն, գորբ
Ղոշ, խոշ, նաև՝ արու. պինդ, քաջ
Ղոշաղ, բաջ, կտրիճ, աքիսաիրու,
անվախ, հերոս
Ղո՛ջա բաբա, ալլա՛հ սախլասն,
մեծ հայր, աստված պահի
Ղոռոտոտո, հնձրչա արքայական,

զիհնդկական եղջերափող
 Դոճում, ազգական
 Դորդ, ուղղորդ, ուղիղ, ճիշտ, ճշ-
 մարիտ, արդար
 Դռ, քարքարոտ հող, անջրոյի տեղ,
 առապար, ման՝ ամմշակ, անա-
 րատ հող
 Դսրախ (դսրաղ), ամուլ, էգ գրաստ,
 մատակ
 Դվաթ, ուծ, զորություն, կարողու-
 թյուն
 Դրաղ, ասի, կողք, եզր, ծայր, մե-
 կուսի, մի կողմ
 Դրաղ-պումախ, մեկուսի մնացած
 անկյուն, ծածուկ տեղ
 Դրդի, բազե
 Դրմզի, կարմիր, որդան կարմիր
 Դութի, տուփ, արկղիկ
 Դուլ, գերի, ծառա, ճորտ, սպասա-
 վոր, ուխտավոր, երկրպագու
 Դուլուղ (դուլող անող), ծառայու-
 թյուն (ծառայող, սպասավորող)
 Դուղ, ուղեղ, գլուխ
 Դումաշ, մետաքսե նուրբ կտոր,
 կերպաս, ման՝ նուրբ, բարակ,
 սիրուն
 Դույթուք, փետուր, աղվամագ,
 բմբուլ
 Դուշ, թռչուն
 Դուշշի, բազեակիր (որսկան թռչ-
 նունը տիրոջ ետևից տանող
 ծառա)
 Դուռումսաղ, կավատ
 Դուրբաթ, օտարական
 Դուրբան, մատաղ (մատաղ լինեմ)
 Դուրդ, որդ
 Դուրդ ու դուշ, որդ ու թռչուն

Ծ

Ծաթ, կորեկի հաց
 Ծալ (ճալվեր), քունքերի վրա իջնող
 մազեր
 Ծաթբարակ, կարճ ու հաստ կաշվե
 փոկ, գութանի շղթա
 Ծանաշ, ծանոթ, ճանաչող
 Ծապղել, թեքվել, մի կողմի վրա
 հակվել, թուլանալ, սփռվել, տա-
 րածվել
 Ծար (ճար անել), հնարք, միջոց
 (գտնել), դեղ, դարման (անել),
 օգնություն, ուծ, կարողություն
 Ծեռ, աքաղաղ (փոքր), աքլոր
 Ծիծ, փոքր երեխա
 Ծիտ (ճտի), պարանոց, վիզ, շինք

Ծլերք, թոքախտ, հյուծված, մահա-
 մերձ
 Ծլմկոտալ, հորանջելով մարմնի ան-
 դամները ձգել, ճապկտալ
 Ծլպիհնդ, կանացի գլխի զարդ, թավ-
 շի կամ դիպակի շերտ՝ վրան
 կարած ճակատնոց ոսկիներ
 Ծղլանի, խզուն, անսխորժ ձայն
 Ծմբոել, ճմռել, տրորել
 Ծոթ, կտոր, գործվածք, շորացու,
 ման՝ մաս, կտոր
 Ծոթ անել, բաժանել, կիսել
 Ծոթոել, պատահոտել, պատել,
 դուրս կտրել, ճեղքել
 Ծողլակ, կախված, քաշ ընկած
 Ծպոել, պոկել, արմատահան անել

Մ

Մադա՞թ, վտանգի ենթարկվածի
 օգնության կանչ
 Մազա, քաղցրավենիք, աղանդեր,
 չոր սիրգ կամ մի կտոր խոր-
 տիկ
 Մաթ մնալ, հիանալ, ապշել, զմայլ-
 վել, զարմանալ
 Մաթալ մնալ, շվարել, հուսահատ-
 վել, տարակուսվել, անճարա-
 նալ, երկբայել, անելիքը չիմա-
 նալ
 Մաթարա, ափսեի տեսակ, պնակ
 Մաթարխ, գործած մտրակ
 Մալ, կայք, կարողություն, հարցս-
 տություն, ունեցվածք, ապրանք,
 տավար
 Մալիք, տեր, թագավոր, մելիք, իշ-
 խան, պետ, կառավարիչ, տա-
 նուտեր
 Մալում, հայտնի, նկատելի, ճշմա-
 րելի, հասկանալի
 Մախսուս, դիտմամբ, դիտավորյալ
 Մահրամա, թաշկինակ, երեսուրբիչ,
 գլխաշոր
 Մաղալաղ տալ, գլխիկայր, գլխի-
 կոնծի տալ
 Մալիլ ըլել, սքանչանալ, զմայլվել,
 հիանալ
 Մանգզիլ, ասպարեզ, տարածություն,
 իջևան
 Մաշալա՛, գովասանական բացա-
 կանչություն՝ կեցցե՛ս
 Մաշալ, միջոց, ժամանակ, հնար
 Մասաթ (մասաթ), կրոն, դավա-
 նություն

Մասալա, առած-առացվածք
Մասիլ, բերք (Ռացաբույսերի)
Մապրհաթ, գրույց, խոսակցու-
 թյուն, խորհուրդ
Մասխարա, ծաղրածու, խեղկատակ
Մավա գնալ, հավատալ, վստահել
Մազի, բաց կապույտ, կապտավուն
Մարադ մտնել, դարան մտնել, դա-
 րանակալել
Մարաքյա, հանդես, տեսարան,
 խրախմանք
Մարթարա, մեծ, խոր ափսե, լայն
 տակով գավաթ (գուցե մաթլա-
 բա՞)
Մարիֆաթ, շնորհք, արվեստ
Մգա, այծ, հիմա
Մեխրե, տե՛ս հոտաղ
Մեհտար, ձիապան, ախոռապետ
Մեյդան, ասպարեզ, հրապարակ,
 քաղաքի գլխավոր հրապարակ,
 բաց, արձակ տեղ
Մեյիդ (մեյիդ), դիակ
Մեշա, անտառ, անտառի չափ (մեծ,
 վիթխարի)
Մեշլիս, հավաքույթ, ժողով, հան-
 դես, խնջույք
Մեռլաքուր, հանգուցյալին լողացնե-
 լու ջուր
Մգրախ, միզակ
Միլլեթ, ցեղ, ազգ, տոհմ
Միմթանա, կանացի շրջագգեստ
Միուգա, կրթված, գրագետ մարդ,
 գրագիր
Մկամ, միթե
Մհանա, պատրվակ, պատճառ, ա-
 դիթ
Մհառլամ, մահմեդականների սուրբ
 ամիս, ծոմապահության 30-օր-
 յակը
Մհասիլ, սուրհանդակ, շտապեցնող,
 հասարակ ուստիկան
Մհլամ, սպեղանի
Մդդսի, մահտեսի, երուսաղեմ գնա-
 ցած-եկած մարդ, եկեղեցու ըս-
 պառավոր
Մոթալ, տիկ, տկի պանիր (շոռ ու
 պանիր խառը, համեմված կա-
 մաշիով), մորթի
Մոլդա, պարող երեխա, որին իրենց
 հետ ման են ածում թուրք թա-
 փառական երածիշտները
Մոնթ, վանական դպրոցի աշա-
 կերտ, պատանհի, վարդապետի
 սպասավոր

Մոնց (մոնց որ ըլի), ոնց, ինչպես
 (ինչպես որ լինի)
Մոլ (մոլի շապիկ), մետաքսյա
 նուրբ կտոր, մալի, բաց կապ-
 տագույն
Մովրով, զավառապետ, զավառա-
 մասի (զավառակի) կառավարիչ
Մակլու, թուրքական ցեղ
Մրրած, սևացած, մթագմած
Մուզիկանդ, երածիշտ
Մուլք, կալվածք, ունեցվածք, հա-
 ռքատություն
Մուհդաշ (մուհդաշ անել, մնալ),
 ակնկալու, կարոտ, հույս (հու-
 տով մնալ)
Մուդայիթ կենալ, հսկել, պահպանել,
 զգույշ մնալ
Մուդարա, մշտապես, միաշափ,
 միալար, շարունակ
Մունաթ, մունհաթ անել, խնդրանք,
 թախանձանք, աղաչանք, թա-
 խանձել, աղաչել
Մուշամբա, մեղրամոմի մեջ թաթախ-
 ված կտավ, վիրակապ, մոմկաթ
Մուշտի, բոունցք (բոունցքի հար-
 ված)
Մուրազ, իղձ, փափագ, երազանք,
 ցանկություն, բաղձանք, ուխտ
Մուրտառ, անմաքուր, պիղծ, կեղ-
 տոտ, վատ

Յ

Յա՛, կամ, կամ թե չե
Յաբանի, վայրենի, անմարդաբանակ
Յաբու, բեռնակիր ձի, անձ՝ անտաշ
 մարդ
Յադ, օտար, անծանոթ, ուրիշ
Յալ, բաշ
Յալդուզ ոսկի, դրվագավոր ոսկի
Յախա, օձիք
Յախութ, յաղութ, հակինթ (թան-
 կարծեք քար)
Յադի, անհաշտ թշնամի, ապստամբ
Յադու, թույն
Յամայր, երկար, երկար տարիներ
 («ցնծացե՛ք յամայր...» արտա-
 հայտության մեջ, էջ 315, տ.
 27):
Յայլի, պար, շուրջպար
Յասսար, կովարար, կամակոր
Յավաշ, կամաց, սպասի՛ր
Յավշան, օշինդր
Յարա, վերք

Յարադան, ստեղծող, արարիչ, ծնող
Յարալու-փարպու, վիրավոր, վեր-
քերով պատած, արյունաշաղախ,
վշտահար

Յարադ, զենք

Յարադ-ասպար, զենք ու զրաֆ,
սպառազինություն

Յափեթնիք, չարախոս, զրպարտիչ,
վատաբանող

Յափնջի, թաղիքից կարված վե-
րարկու, տառատուկ

Յու, ճանապարհ

Յուլա զնալ, բավականաճալ, համա-
կերպվել, մի կերպ կառավարվել

Յորդան, վերմակ

Յորդան-դոշակ, անկողին

Ն

Նագիր, պետական խորհրդական,
նախարար (Իրանում)

Նալլաթ, նալաթ, անեծք, նզովք

Նալչա, պալտ, կոշիկի կրունկի տա-
կին կպցրած երկաթե պալտ

Նաղլ, առակ, պատմություն, զրույց,
խոսք

Նադրախանա, թմբուկ, դափ

Նամ, խոնավ, թաց

Նամագ, մահմեդականի աղոթք, որը
կատարում են օրը Ռիճգ անգամ

Նամարո, ստոր, տմարդի, փոքրոգի,
դավաճան

Նայիթ, հարյուրապետ

Նայիթություն, հարյուրապետու-
թյուն, հրամանատարություն

Նան, մայր, մայրիկ

Նանա (նանամ), մայրիկ (իմ մայ-
րիկ)

Նաշ, դիակալ, մեռելիճ գերեզման
տանելու պատգարակ, դագաղ

Նաշաղ, Ռիվանդ

Նաշար, անճար, խեղճ, թշվառ, ան-
օգնական

Նասիր, բախտ, հասանելիք, նակա-
տագրով սահմանված

Նասրանի, նազովրեցի, բրիստոնյա,
հրեա

Նավակատիկ, տոն, հանդես, նախ-
նկեղեցական մեծ տոների նա-
խորդ օրը (կես-ուտիք օր)

Նաֆաս, շունչ, շնչառություն

Նեմեց, գերմանացի

Նի ըլել, բարձրանալ, վեր ելնել,
հեծնել

Նիգամ, զորասյուն կազմել, կանո-
նավորել

Նիախ, իզուր, անտեղի, անիրավա-
ցի, անարդար

Նիար անել, նախաճաշ, նախաճաշել

Նիղել, ճնջել, միրմել, քունը տանել,
թուլանալ

Նոխտա (իշի), իբրև սանձ ծառայող
փոկ կամ պարան, երասանակ

Նոքար, ծառա, սպասավոր, նախ-
տիրականի զինվոր

Նոքար-բեքար, ծառա-մառա

Նուբար, նոր դուրս եկած պտուղ
կամ բանջար

Նուդայի, նուդայական, բուխարական

Շ

Շաքաշ, հարսանքավորների դրամա-
կան մվերը մվագողներիճ

Շախա, հանաք, կատակ

Շախկա (շախկա տալ), կես, մեջ-
տեղից կիսել

Շահգադա, արքայազն, շահի զա-
վակ (որդի)

Շամանդաղ, մշուշ, մեզ, մառա-
խուղ

Շանց տալ, ցույց տալ

Շառ, չարիք, փորձանք, զրպարտու-
թյուն, վտանգ

Շարքյասա, զինու թափ տեսակ,
պնակ, փոքր խոր աման

Շաֆադաթ տալ, շնորհ, արտոնու-
թյուն, պաշտոնական խոստում
տալ

Շեճլիկ (շեճլիկ անել), բնակու-
թյուն, մարդաբնակ տեղ դարձ-
նել

Շիլա, կարմիր կտավ

Շիշակ, մատաղ, մանկահասակ, դե-
ռատի

Շիշականալ, մեծանալ, չինարի պես
հասուկ ունենալ

Շիվան, սուգ, լաց, լաց ու կոծ, ողբ

Շիրախանա, ներքնատուն, նկուղ,
գլխու մառան

Շիլնք, վիզ, պարանոց, ճիտ

Շկոլ, դպրոց, ուսումնարան

Շհանց տալ, ցույց տալ

Շնթոլի, բնել, անփութք մեկնվել,
պարկել

Շուլալել, իրարից հեռու, խոշոր-խո-
շոր կարել

Շուշա, Խաչակի (ապսկյա իր), շիշ,
սրվակ
Շվիթու, թույլ ձայն, շշուկ, ոտնա-
ձայն

Ո

Ոռքոռ, ետ-ետ
Ոռք, գեցքի (ճրացանի, թրի) կոթ,
բութ մաս
Որդիանց որդի, որտեղից որտեղ

Չ

Չադր, չադիր, վրան
Չաթու, պարան, թոկ
Չաթու-չվան կտրած, դժվարություն-
ները հաղթահարած, կապը կըտ-
րած, թոկից փախած, նաև՝ սրի-
կա
Չալ, երկգույն, խատուտիկ, գույնը գ-
ույն, փայլուն, բծավոր, պըտ-
պըտիկ
Չալթուկ, որիզ, կեղևից չմաքրած
բրինձ, նաև՝ բրնձի արտ
Չախմախի, կայծառան, հրահան
Չախմախին տալ, կայծեր հանել,
փայլատակել
Չախմուր, խած, խոշոր, գեղեցիկ
աչքեր
Չայիր, մարգագետին, արոտ
Չայիր-չիման, սիգավետ դաշտ,
մարգագետին
Չանա, ծնոտ, կզակ
Չանադ, փայտե աման, կոտ, չափ,
նաև՝ կավե աման (նույնանուն
ճաշը պատրաստելու համար)
Չանգ (չանկ), ճանկ, մագիլ
Չանգալ, պատառաքաղ
Չանկ, մառախուղ
Չարա, ճար, հմար, դեղ, փրկություն
Չարագ, չոր միդգ
Չարեք, քառորդ
Չարխ, անիվ, ճախարակ, բախտի
անիվ, ճակատագիր
Չարխալ, շնագալ
Չարմխած, կաշկանդված, պինդ
հանգուցներով կապկալված
Չափ գցել, արշավել (ծիով)
Չափմիշ անել, ասպատակ առնել,
գլորկել, թալանել
Չաք, ճեղք (ճեղք ունեցող արխա-
լուղ)

Չաքմա, ճոքավոր, երկարավիզ կո-
շիկ
Չեշմակ, ակնոց
Չիբուխ, ծխամորճ, ծխափող
Չիման, մարգագետին, սեզ, սիգա-
վետ վայր, բացատ
Չիփլախ, մերկ, տկուր, նաև՝ աղ-
քատ, ընչազուրկ
Չիփ-չիփլախ, լոխվ մերկ, մորե մերկ
Չլավ, բրնձով փլավի, քաշովու մի
տեսակ (անյուղ, ջրալի)
Չոբան, հովիվ, բայց ն՝ թուրքական
ցեղ (չոբանջյարա)
Չոլ, անբնակ վայր, անմշակ դաշտ,
վայրի տեղ, արձակ դաշտ
Չոջուղ, երեխա
Չոռ, կենդանիների ու բույսերի ճի-
վանդություն, ժանտախտ, նաև՝
անեծք
Չոփ, չորացած ճյուղ, շյուղ, խոփ,
ծեղ, ցողուն, նաև՝ շատ նիհար
Չվանի դնել, կարևորություն, աղ-
ծեք տալ, բանի տեղ դնել, հաշ-
վի առնել
Չրադ, ճրագ
Չրադդան, ճրագալույց, ճրավառու-
թյուն
Չոխա, մահուղ, շալե կամ մահուղե
վերնագագեստ
Չունքի, որովհետև, քանի որ, մա-
նավանդ որ
Չուռումիշ ըլել, ոտքի տակ տրոր-
վել, փռել

Պ

Պաճուճ, սոճապան, թելից գործած
ճիտք
Պաստրո, ուսյաց կերակուր (հակա-
ռակը՝ պաստոց կերակուր)
Պատնեղդուս, պատի տակ
Պելանալ, զարմանալ, ապշել, աչքե-
րը չոել, շաղկել, ցնորվել, գծվել
Պիպ, ծայր (քարի, վեգի)
Պոկկել, կողոպտել, թալանել, կա-
շին, կեղևը հանել
Պոթնոս, սկուտեղ, տե՛ս սինի
Պոպոզ, սրածայր
Պպից կանգնել, համառել, կամակո-
րել, չզիջել
Պոճոկել, պոկոտել, արմատախիլ ա-
նել, լիքցնել, փետրել (մազերը)
Պրտեպրունկ, պոկեպրունկ, լիքը,
լեփլեցուն, թափեթափ լցված,
միմչև պոռունկը

Զաբախանա, վառողի պահեստ
 Զադդաթ, մեծ, հսկա, ահագին
 Զալլաթ, դահիճ, բռնակալ
 Զախըրուրդ (ջախըփուրթ անել),
 ջարդուփշուր, ջարդուբուրդ անել
 Զամդաթ, լեշ, գեշ, դի, մարմին
 Զամդաթակեր, գիշակեր, լեշակեր
 Զամհաթ (ջամըհաթ, ա՛յ ջամըհաթ),
 ժողովուրդ, ամբոխ, խալխ (ա՛յ
 ժողովուրդ)
 Զան (ջանմ), հոգի (հոգիս), անձ,
 նաև՝ մարմին, ուժ, կյանք
 Զանավար, գազան
 Զանըհան ըլել, տանջվել, ուժը հա-
 տել (չարչարվել)
 Զանմ ջան, հոգուս հոգի
 Զանմ սան, հոգիս ես, փոխ. կեցցե՛ս
 Զաննաթ, դրախտ, երանություն
 Զանջալ, վայրի մացառ
 Զառմա, տուգանք, հատուցում
 Զավահիր, գոհար (բնդհանրապես՝
 թանկարժեք քար)
 Զեր, դեռ, եթե
 Զերգ, կարգ, շարք
 Զիգյար, լյարդ, սպիտակ թոքը և
 սիրտը միասին, նաև՝ հոգի,
 սիրելի, հարազատ
 Զիգր (ջգրու), բարկություն, գայ-
 րույթ, վրեժ
 Զիդա, հիզակ, տեգ
 Զիդարոյ, հիզակի բարձրություն
 (երկարություն)
 Զիլավ, սանձ, երասան
 Զինգյանություն, գնչուի աղմուկ
 Զինս, ցեղ, ազգ, տոհմ, տեսակ
 (կենդանու)
 Զիվան, պատանի, ջահել, երիտա-
 սարդ, մատաղ, նորատի
 Զիրիդ (ջիրիդ խաղալ), ձիարշավ,
 մականախաղ, բայց և՛ մական,
 փայտե ձող, ռազմի խաղեր ցու-
 ցադրել
 Զհանդամ, դժոխք
 Զոկ-ջոկ, առանձին-առանձին
 Զրասար, անօգնական, ողորմելի,
 խեղճ, թշվառ, դժբախտ
 Զուխտ, գույգ
 Զուհար, փայլ (մետաղի, թանկար-
 ժեք քարի), ցուլ
 Զուղաթ, պատասխան

Ռադ ըլել, մի կողմ քաշվել, հեռա-
 նալ
 Ռազի, գոհ, շնորհակալ, բավական
 Ռախտ, ձիու սարք, հանդերձանք
 Ռահաթ, հանգիստ, անդորր, խա-
 դադ, ապահով, նաև հպատակ,
 տե՛ս ռհաթ
 Ռահմ, գութ, խիղճ, ողորմություն
 Ռաշի գալ (ռահի գալ), անձնատուր
 լինել, հպատակվել
 Ռանգ, գույն, երանգ
 Ռանգ-ռանգ, գույնգույն
 Ռաշիդ, քաջ, կտրիճ, ասպետ
 Ռաշդություն, քաջություն, սրտո-
 տություն
 Ռաշպար, հողագործ, երկրագործ
 Ռաշպարություն, երկրագործություն
 Ռաստ գալ, պատահել, հանդիպել
 Ռեխ, բերան, երախ
 Ռզդ, ապրուստ, ուտելիք, օրական
 սնունդ
 Ռհաթ, գեղջուկ, շինական, հասա-
 րակ ժողովուրդ
 Ռումբի, գոմշի կամ եզան կաշուց
 պատրաստած մեծ տիկ (գինու)
 Ռուշվաթ, կաշառք
 Ռուսվա, խաչտառակ, ապականված

Ս

Սաբր, փոշտոց
 Սաբր անել, սպանել, համբերել
 Սադա, մաքուր, անխառն, պարզ,
 չներկված
 Սադադ, խաթր, ի սեր
 Սադայեյան, դիվական, դիվային
 Սազանդար, երաժիշտ, նվագաժու,
 նաև՝ տաղ նվագող
 Սալթ, շարունակ, անընդհատ, բո-
 լորովին, իսպառ
 Սաղ, ողջ, ամբողջ, բոլոր, կեն-
 դանի, լրիվ
 Սաղ-սալամաթ, ողջ-առողջ
 Սաղանալ, առողջանալ
 Սաղրի, բնդհանրապես՝ ձիու կամ
 այլ գրաստի գավակ, ձիու գա-
 վակի կաշվից պատրաստված
 կոշկացու, կապտագույն թանկ
 կաշի
 Սանգակ, հաստ լավաշ (թխում են
 տաքացրած գետաքարերի վրա)
 Սանգար (սանգար կապել, սանգա-

րի ժամանակ), պատճեշ,
պաշտպանական ամբողջուն,
պաշարում (բերդի)
Սանյաթիւն, զբաղմունք, պարապ-
մունք, գործ
Սաս, ձայն
Սասան, ահ, սարսափ
Սասանիշ ըլել, սթափվել, ցնցվել,
սասանել, շարժվել
Սարա, պալատ, դղյակ, տե՛ս քոշք
ու սարա
Սարասկար, զինվորական շրջանի
զլխավոր հրամանատար (Թուր-
քիայում)
Սարդար, պարսից տիրապետության
շրջանում՝ նահանգապետ, կու-
սակալ, նաև՝ զորապետ, մեծ իշ-
խան
Սարհեսաթ, զխառնաշիվ
Սարհըդուս, սարճ ի վեր
Սարվազ, պարսից հետևակ, զին-
վոր, զորք
Սաթի, կարծես, թեկուզ, դիցուք,
իր թե, թեկուզև
Սաքու, գոմի սենյակ, սրահ, ձմե-
ռային հավաքատեղի
Սեիդ, Մահմեդից սերողներ, կապում
էին կանաչ գոտի և կանաչ չալ-
մա
Սեիզ, քաղ, քոշ, հոտի առաջնորդ
այծ
Սեւազուխ, վանական, հոգևորական
Սզլթալ, կսկծել, մոմալ, ցավել
Սիլա (սիլա-միլա), ապտակ
Սիհ, սյուն, նեցուկ, ապավեն, հույս,
պահող
Սիքա (փողի սիքա), հիմ դրամ,
դրոշմաքանդակով դրամ (փողի
գործությունը)
Սլո՛ւ-շա՛ւ, լսի՛ր
Սլուշիթսա ըլում, պատահել, տեղի
ունենալ
Սխ, խիտ, սեղմ, սերտ
Սկի, սկիհ, բաժակ, գավաթ, որի
մեջ պատարագի զինի են լըց-
նում, որ խորհրդանիշն է Քրիս-
տոսի արյունը
Սհաթ, ժամ, ժամացույց, ժամանակ
Սդալել, կոկել, հարդարել, սանրել,
շոյել, փայփայել
Սմբուզ, սիգախոտ, փետրախոտ
Սնըդուս, սյան տակ
Սնըռ, սահման
Սողոմական կրակ, Սողոմի կրակ,
նաև՝ ահավոր, սարսափելի

Սոյ, ցեղ, տոհմ, ծագում, սերունդ
Սուպու, սուպություն, կուպիտ, ան-
տաշ, բիրտ
Սուշ, հանցանք, մեղք
Սուշլու, հանցավոր, մեղավոր
Սոփրանիեմեն գալ, ժողովից, հա-
վարությունից գալ
Ստաքան, բաժակ, գավաթ
Ստոլ, սեղան
Սրա (սրով), հերթ, կարգ, շարք
(հերթով, շարքով)
Սուբահ, մենակ, առանձին, ամուրի
Սուխտա, ուսանող (մահմեդական)
Սուսը-սասը, ձեն-ձունը
Սուրաթ, պատկեր, դեմք, երես,
կերպարանք
Սուրահի, բարակ, երկայն, նաև՝
նմանաձև ջրի սափոր
Սուրահի բոյ, բարձր, գեղեցիկ, գե-
ղուղեշ հասակ
Սուրու, հոտ (ոչխարի)
Սուրութիշ ըլիլ, սողալ, չոքեչոք ա-
նել, քարքաշան անել
Սֆաթ, դեմք, տեսք, երես
Սքուշնա, տաղտկալի, ձանձրալի
Սֆթա, առաջ, ամենից առաջ, ըս-
կըզբում, նախ

Վ

Վազիր, վեզիր, պետական բարձր
պաշտոնյա, նախարարապետ
(մահմեդական Արևելքում),
վարչապետ
Վաթան, հայրենիք, ծննդավայր
Վալլա՛խ (վալլա՛հ), ավառը (աստ-
ված) վկա
Վախտ, ժամանակ, ժամկետ, միջոց
Վախտ-բեվախտ, ժամանակ-անժա-
մանակ
Վարադ, ոսկեջուր, ոսկեփողի (ար-
ծաթափողի), թերթիկ
Վարավորդ անել, նշարել, դիտել,
զգնել, գլխի ընկնել, կռահել,
նկատել, ուշադիր նայել, եզրա-
կացնել
Վարավորդով, ըստ երևույթի
Վարթարաֆ անել, վերջացնել, հո-
գին հանել, մի կողմ ձգել
Վեյադություն, անծանոթ վայրերում
առաջնորդի, ճամփա ցույց տը-
վողի պարտականություն

Տազ անել, լոել, լուռ կենալ, ձայնը կտրել, պապանձվել
Տակոի, արմատ (խաղողի վազի)
Տաղթմիշ անել, տե՛ս դաղթմիշ անել

Տամար, երակ, տե՛ս դամար
Տամբուր մայոր, ավագ թմբկահար
Տարաղաջ, կախաղան
Տարթ, աթար (անասունի չորացած աղբ), մարմնի վրա եղած հաստ աղտ

Տափ կենալ, թաքնվել, պահվել, ծածկվել

Տաքար, հնձանի միջի թոնրանման հորը, ուր հավաքվում է քաղցուն

Տես, տեսնող, ականատես, ճանաչող
Տիլ, տիղմ, մանրագույն ավազից և հողից առաջացած ցեխ

Տլոտ, ցեխոտ, կեղտոտ
Տմբացնել, կամաց շարժել (զլուխը)
Տմբտմբալ, երերալ, բռնվել

Տոլ, հասակակից
Տոլու, գինու կամ ջրի հախճապակյա աման, գավաթ, թաս

Տոլուշի, մատովակ
Տոնլուդ, աշխատավարձ, ոռճիկ, թոշակ

Տոտ, ոտք, նաև՝ շավարի կամ վարտիկի վարի մասը

Տոհաշություն, վայրահաշություն
Տովաշ, ազոավից փոքր, սևափետուր թռչուն

Տուտ, սողունի պոչ, ծայր, վերջ

Թ

Թագփոյնիք, ւվագակ, ելուզակ, թալանջի

Թիգուն, իրիկուն, երեկո

Ճ

Յելթուկ, շողիք, խիթ
Յիսել, փակել, ծեփել

Ռ

Ռաքաշի, հարյուրապետ (սլատվափոր կոշում, որ պարսիկները տալիս էին հայ ավագանուն)

Ռավոր, ողորմություն խնդրող, աղքատ

Ռոթոփնո, հարմար, հեշտ, պյուրին
Ռվախ, գրաստ, բեռնակիր անասուն

Ռոլուրին, ի պատիվ, օգտին, հաջողության (ձեր ուղուրին՝ ձեր հաջողության համար)

Ռմբր (ըմբրիդ), կյանք (կյանքիդ)

Ռմուդ, հույս

Ռսուվ, կամաց, զգույշ, հուշիկ

Փ

Փալաս, հիմ լաթ, մաշված շորի կտոր

Փայ, բաժին, մաս, հասանելիք

Փանջա (**Ալու փանջեն**), ձեռ, թաթ, դաստակ, հիմզ մատ (**Ալու փանջեն** կամ ձեռքը մահմեդականների պաշտելի սրբություններից է)

Փանջարա, պատուհան, լուսամուտ

Փաշա, բաղաբացիական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյա (**Թուրքիայում**), նաև՝ ազնվական, իշխան

Փառչալամիշ անել, հոշոտել, կտորկտոր, մաս-մաս անել

Փարա, մաս, կտոր. նաև՝ փող, մանրադրամ, պղնձե դրամ

Փարա-փարա, մաս-մաս, կտորկտոր

Փարվան, գիշերաչին թիթեռ (թիթեռնիկ)

Փեզչեսթնի, անազնիվ, անբարեխիղճ, անպատիվ

Փեղամբար, մահմեդական մարգարե, աստուծո պատգամաբեր

Փեշղսմաթ, փեշղսմաթյար, փոքրավոր, մանկավիկ, սպասավոր

Փեշքաշ, ընծա, պարգև, նվեր

Փիադա, հետիոտն, հեռակա զինվոր

Փիանդազ, ճամփին, ոտքերի տակ փուլած գորգ, կերպաս, թանկագին կտոր, իբրև հյուրին կամ իշխանավորին մատուցվող նվեր

Փիս, վատ, անախտան

Փիր, սրբություն, սկզբնապատճառ, պաշտպան, հովանավոր (հովանավորություն), սուրբ

Փիլ, օլսան, սուրբ լինի

Փնովել, վատաբանել, պարտավել, կշտամբել

Փշտոբեր, հիմ ձևի ատրճանակ

Փշտով, ատրճանակ (մեծ)
 Փոթորեւ, սաստիկ աչրել, խանձել,
 խորովել
 Փոխ ասել, փոփոխակի սաղմոս ասել
 Փոստ, մորթի
 Փոքրավոր, ծառա, բարձրաստիճան
 Ռոգևորակահի սպասավոր (ծա-
 ռա և աշակերտ)
 Փսամարդի, վատամարդ, մեղավոր
 Փրոփգրաթսա աճել, պարտվել,
 տարվել (թղթախաղում)
 Փրոշենի տալ, խնդիր (խնդրագիր),
 դիմում տալ
 Փրոջուլիթսա աճել, զբոսնել,
 մսն զալ

Ք

Քաթիբա, կանացի վերնագգեստ
 Քալփաթին (քյալփաթին), աքցան,
 ունելի
 Քահրըբար, սաթ
 Քաղալագ, ուռենու ոստերից հյուս-
 ված կլոր կողով, քօց
 Քամակ, մեջք, կոնակ, գավակ,
 կռն (եռակ կողմ), թիկունք
 Քառ (քառանգ), խուլ, իլանակ
 Քավթառ, բորենի, մարդագալ,
 նաև՝ վիճուկ, պառավ (անարգա-
 կան), ձեր մարդ
 Քավթառքուսի, բորենի, մարդակեր
 գազան, նաև՝ պառաւ, վիճուկ
 Քարակոշկոն, քարով ծեծկված
 Քարգահ, գործիք, որով ձեռագործ
 են անում, նաև՝ ձեռագործու-
 թյուն, ասեղնագործություն
 Քարգահարուր, ասեղնագործ
 Քարփինջ, աղյուս
 Քափ, փրփուր
 Քաքուլ, կողքի սանրած մագա-
 փունջ
 Քեդխուդա, գլուղական ավագանի,
 հեղինակավոր անձ
 Քեջավ, ծածկոցով սալ, պատգարակ
 Քթնել, գտնել
 Քիմի (կես սհաթ քիմի), չափ (կես
 ժամվա չափ), մոտավորապես
 Քիսա, բսակ, դրամապանակ
 Քյաբ, մահմեդականների երկրպա-
 գության առարկա սև քարը, որ
 պահվում է Մեքքայում (քյաբի
 կողմ՝ հարավ-արևմուտք)
 Քյալավա, ավերակ շինություն

Քյալբալա, Քերբելա ուխտ գնացած
 մահմեդական
 Քյալլա, գլուխ, գանգ
 Քյալլեի գել, ամենաբարձր ճայնով
 երգել
 Քյանվաճ նի, արագընթաց, սեզ
 նծույզ
 Քյամալսզ, անշնորհք, կատարե-
 լությունից զուրկ
 Քյար (քյար աճել), գործ, օգուտ,
 ազդել, ներգործել, օգուտ տալ,
 նաև՝ դել, միջոց
 Քյալամաթ, վեհաձեռնություն, գթա-
 սրտություն, ազնվություն
 Քյանդալանա, ծուռ ու մուռ, ան-
 հարթ, անտաշ, անկանոն, ան-
 տեղի
 Քյուլ, սոխիր, ամբողջ
 Քյուլֆաթ, ընտանիք, գերդաստան,
 կին-երեխաներ (թերևս՝ քյուֆ-
 լաթ)
 Քոբաշի, բրդյա նուրբ գործվածք
 (ծաղկավոր կամ շերտավոր)
 Քոթակ, ծեծ
 Քոթոմմած, խեղանդամ դարձած
 Քոթուն, կոճո, հանցավորին պատ-
 ժելու գործիք
 Քոլ, վաչրի թուփ, մացառ
 Քոլգա, հովանի
 Քոմակ (քոմակ աճել), օգնություն,
 օժանդակություն, օգնել
 Քոշ, մաշիկ, կրունկով ոտնաման
 Քոշք ու սարա, դղյակ, ապարանք,
 պալատ, աշտարակ
 Քոշել, չվել, գաղթել, տարագրվել
 Քոոփա, մանուկ, մատաղահասակ
 երեխա, ծծկեր
 Քոսա, սակավամագ, գոշ, անմագ,
 անպետք
 Քով, սոտ, մոտք
 Քով-քով, կողք-կողքի
 Քոք, արմատ, բուն (ծառի), նաև՝
 կարգին-սարքին, եռուն
 Քոիշ տալ, հրել, բոթել
 Քսիալ, փսիսալ, կամացուն խոսել
 Քրեն, վարձ (ժամանակավոր)
 Քրիստիան, քրիստոնյա
 Քրոմիթսա ըլիլ, պտտվել, պարել
 Քուշա, փողոց
 Քուրսի, քառակուսի ցած սեղան
 (դնում են տաք թոնրի վրա,
 ծածկում վերմակով կամ գոր-
 զով, նստում շուրջը և ոտները
 պարզելով՝ տաքանում)
 Քուցից-քուցից աճել, ուսերը վեր

քաշել, քծնել, կեղծ խոնարհու-
թյուն անել
Քուփաթսա ընիլ, լողանալ
Քուլքուրթ, ծծումք

Օ

Օբա, խաշմարածների ամառային
կայան, վրանների խումբ, լեռ-
նային ամառանոց
Օթախ, սենյակ, առանձնասենյակ,
կացարան
Օլջա, երկիր, աշխարհ
Օղլուշաղ, գերդաստան, կիձ, ընտա-
նիք, կիճ-երեխա
Օլաղ, սթափ, զգոճ, արթուն, զգույշ
Օյաղություն, զգուշություն
Օյիճ (օյիճ գալ), խաղ, փորձանք,
մեկի գլխիձ փորձանք բերել,
փորձանքի գալ
Օշմաղ, քթակալ (լաշակի ծայր, ո-
րով կանալք անցյալներում քիթը
կամ բերանն էին ծածկում)
Օսալ, վատ, պակասավոր
Օսմանլու, օսմանցի, Թուրքիա, Տաճ-
կաստան, թուրք

Օրդու, բանակ, հրոսակախումբ
Օրենք, կրոն, հավատ, դավանու-
թյուն, եկեղեցական կարգ
Օրզանգու, օրզանկու, ասպանդակ
Օրթում ուտել, երդվել
Օրոճ անել, տիրություն անել, հսկել
Օփիժաթսա ընիլ, վիրավորվել, մե-
ղանալ
Օքմիճ, մարդ, ում, մեկը, որևէ մեկը

Ֆ

Ֆառաշ, զինակիր, ծառա, պարսից
զորքի տասնապետ, ոստիկան
Ֆարման, հրովարտակ, հրամանա-
գիր (սովթանական)
Ֆիքր անել, մտածել
Ֆլան, այսինչ, այնինչ, այս, այն
Ֆոճ, հոճ (պտուղ)
Ֆոսանդ, հարմար պահ, առիթ
Ֆորթ, հորթ
Ֆորս, որս
Ֆսեթթի, համեմալն դեպս, այնու-
ամենայնիվ, ինչ էլ լինի
Ֆրոնա, ալիք (ջրի, կրակի)

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Վերք Հայաստանի, Ողբ Հայրենասիրի» պատմական վեպը իր չափածո և արձակ (սևագիր ու մաքրագիր) տարբերակներով ստեղծվել է 1841 թ. փետրվարին ու Ռաջորդ ամիսներին, արտագրվել՝ 1842-ին, լրացվել ու վերամշակվել՝ Ռաջորդ տարիներին նույնպես: Բուն վեպը առաջին անգամ լույս է տեսել 1858 թ. օգոստոսին (Թիֆլիս, Ներսիսյան դպրոցի տպարան), բժ. Հովսեփ Փոնդոյանի ջանքերով, սակայն բազմաթիվ գրաքննական կրճատումներով. «Ջանգի» հավելվածը՝ «Կոռուկ հայոց աշխարհին» ամսագրում (1861, № 11), գուցե և առանձին (չի՞ հայտնաբերված): Երկրորդ հրատարակությունը տեղի է ունեցել Մոսկվայում, 1897-ին («Խաչատուր Աբովյանի երկերը» հատորի կազմում, էջ 1—287), Ստ. Տեր-Սարգսյանցի խմբագրությամբ, 3800 օրինակ տպաքանակով, դարձյալ ո՛չ լրիվ և առանց ընծայականի ու «Ջանգի» հավելվածի: Երրորդ հրատարակությունը, որ իրականացվել է Ավետիք Խառակյանի ջանքերով (հաքվի հայոց կույտության միության հրատ., Թիֆլիս, 1908), մատուցի արտատպությունն է: Տպագրության փորձեր են եղել 1891 և 1900 թթ. ևս, բայց գրաքննությունը մերժել է: Հաջողություն չեն ունեցել նաև Գյուլստ Աղանյանցի և Մ. Բարխուդարյանի ձեռնարկումները: Մեզ անհայտ պատճառներով լույս աշխարհ չի եկել Հ. Թումանյանի և Լեոյի ձեռնարկումը նույնպես, որի առթիվ ծանուցում կա ժամանակի մամուլում (տե՛ս «Բյուզանդիոն», 1912, 27 հոկտ., № 4877): Հաջորդ, չորրորդ հրատարակությունը տեղի է ունեցել Կ. Պոլսում, Պիմեն Ջարդարյան գրատան նախաձեռնությամբ, 1931-ին, որը թեպետև մինչ այդ եղածների համեմատությամբ ամենալրիվն է (բնագիրը կազմված է առաջին երկու տպագիրների բաղդատությամբ), սակայն Թուրքիայի իրադրություններից ելնելով՝ համապատասխան ցեղանունը շատ էջերում հապավված է կամ այլափոխված, իսկ տիտղոսաթերթի վրա դրոշմված է վեպի երկրորդ խորագիրը՝ «Ողբ Հայրենասիրի»:

«Վերքի» սովետական առաջին ու երկրորդ հրատարակությունները, որ ներկայացնում էին միայն բուն վեպը, եղել են միաժամանակ, Երևանում, 1939-ին, Ռ. Ջարյանի խմբագրությամբ, առանձին գրքով և Խ. Աբովյանի Հնտիր երկերի առաջին հատորի կազմում (էջ 5—218): Երրորդ հրատարակությունը՝ ցայժմ եղածների մեջ լավագույնը, լույս է տեսել 1948-ին, իբրև Գ հատոր Աբովյանի երկերի ակադեմիական հրատարակության, սևագիր տարբերակով հանդերձ, Հ. Մուրադյանի աշխատասիրությամբ: Դրանից են արտատպված Հայպետհրատի (Երևան) 1955, 1959 (նկարազարդ) և Բելյուսի 1954-ի (մատենաշար «Ազդակի», թիվ 70) հրատարակությունները: Գոյություն ունի նաև «Վերքի» մի համառոտած (կրճատված) տարբերակ՝ Ստ. Զորյանի և Հ. Քոչարի ձեռքով

(Երևան, 1948 և 1975): Սուրեն Քոչարյանն էլ կազմել է «Վերքի» գրական կոնսպեկտը, որ հրատարակվել է երեք անգամ, Երևանում, 1957, 1963 և 1978 թթ. (Երկրորդը՝ նրա «Կենդանի խոսքի ոլորտներում» գրքում, էջ 473—503): Բանաձայնը Ս. Քամալյանի խմբագրությամբ ու վերամշակումներով ևս լույս են տեսել «Վերքի» առանձին հատվածներից հյուսված երկու գրքույկ՝ «Սիրելի հերոս» (Թիֆլիս, 1905) և «Վերք Հայաստանի գրքի գոհարներից» (Թիֆլիս, 1912) խորագրերով:

Հստ չրանտ հայույանի «Զվարթնոց» գրատան 1953 թ. ցուցակի և բերանացի տվյալների՝ «Վերքը» «Ողբ հայրենասիրի» խորագրով լույս է տեսել նաև 1928-ին, Պոլսում, ապա կրկին 30-ական թթ., այս անգամ իբրև թե վերնագրված՝ «Խաչատուր Աբովյանի Հայաստանի վեպը», վերջապես՝ թարգմանվել է արևմտահայերեն և տպագրվել Պոլսում կամ Կահիրեում (թե՞ Բուլղարիայում): Բայց այդ երեք հրատարակություններից և ո՛չ մի օրինակ տակավին չի հայտնաբերված: Ծշմարտությունն այն է, որ Երևանի Ե. Ջալալյանի անվան գրականության և արվեստի թանգարանում, Մելքոն Կյուրճյանի թողոմներում, պահվում է «Վերքի» արևմտահայ թարգմանության մի ձեռագիր, որի էջերի վրա մնացել են տպագրական մրի հետքեր: Լույս է տեսել այդ գիրքը, թե ոչ՝ չկանոնացանք պարզել:

«Վերքը» թարգմանվել ու հրատարակվել է նաև Սովետական Միության ժողովուրդների լեզուներով՝ ռուսերեն (Մոսկվայում ու Երևանում, 1948-ին՝ ամբողջական ու կրճատված տարբերակներով, 1955, 1971, 1977-ին՝ երկու անգամ, մասնաշաղկապ ու պատկերազարդ, և 1978-ին՝ պատկերազարդ), էստոներեն (Տալլին, 1957), լատիշերեն (Ռիգա, 1960, պատկերազարդ), լիտվաներեն (Վիլնյուս, 1950, որոշ կրճատումներով), ուկրաիներեն (Կիև, 1948, հեղինակի «Ընտիր երկերի» կազմում) և վրացերեն (Թբիլիսի, 1960). վերջին երկուսը՝ Ստ. Ջորյանի և Հ. Քոչարի համառոտած (կրճատված) տարբերակից: 1856 թ. սկսած՝ «Վերքի» արձակ ու չափածո հատվածները տեղ են գտել բազմաթիվ դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում, ոսկեփորիկներում, ծաղկաքաղներում, երգարաններում: Սույնը «Վերքի» հայերեն տասնմեկերորդ վերանայված, լիակատար հրատարակությունն է, չհաշված երկու կրճատ, ինչպես նաև տակավին չհայտնաբերված (թերևս գոյություն չունեցող) արևմտահայ տպագրությունները:

«Վերք Հայաստանի» վեպի նախասովետական և սփյուռքահայ բոլոր հրատարակությունների ընդհանուր տպաքանակը չի անցնում 10.000 օրինակից, իսկ հետագա տպագրություններին ու թարգմանություններին էլ հետևյալ պատկերն է ներկայացնում.

Ա. Բնագիրը.

Ամբողջական՝ 1939 թ.—2.000 օրինակ, 1939 թ. («Ընտիր երկեր»)—4.000, 1948 թ. (ակադեմիակ. հրատ.)—5.000, 1955 թ.—10.000, 1959 թ.—30.000, ընդամենը՝ 51.000:—**Կրճատված տարբերակը՝** 1948 թ.—5.000 օրինակ, 1975 թ.—50.000, ընդամենը՝ 55.000:

Բոլորը միասին՝ 106.000:

Բ. Թարգմանությունները.

ա) Ռուսերեն. ամբողջական՝ 1948 թ.—5.000 օրինակ, 1955 թ.—5.000, 1971 թ.—50.000, 1977 թ.—50.000, 1977 թ.—3.000 (նվերային), 1978 թ.—30.000, ընդամենը՝ 143.000:—**Կրճատված տարբերակը՝** 1948 թ. («Издранное», էջ 13—144)—10.000 օրինակ:—Բոլորը միասին՝ 153.000:

բ) Սովետական ժողովուրդների լեզուներով. ամբողջական՝ էստոներեն, 1957 թ.—5.000 օրինակ, լատիշերեն, 1960 թ.—15.000:—**Կրճատումներով՝** լիտվաներեն, 1950 թ.—3.000:—**Կրճատված տարբերակը՝** ուկրաիներեն, 1948 թ.—10.000, վրացերեն, 1960 թ.—10.000:—Բոլորը միասին՝ 43.000:

Բոլոր թարգմանությունների տպաքանակը՝ 196.000:

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ԻՆՔՆԱԳՐՈՒՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ
ՔԱՌԱՁԵՎԵՐԻ ՈՒ ԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՍՈՒՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ Է ԲԵՐՎԱԾ

(Ուսխ՝ տրվում են բառաձևերն ու բառային տարբերակներն ըստ վեպի բնագրի,
հետո՝ մեր նախընտրած ձևը կամ սրբագրությունը, շղագրով)

Ա

Աքաաբաթ—Աքաաբադ
Աքարան, Ապարան—Ապարան
ազոավ, ակոավ—ազոավ
ալլաի, ալաի—ալլաի
ախա—աղբ
ախալեր, աղպեր, աղբեր—ախալեր
աղիք, աղիկ—աղիք
աղլուխ, աղլուղ—աղլուխ
աղչիկ, աղչիկ—աղչիկ
ամբար, ամպար—ամբար
աշխար, աշխարի—աշխարի
աշխարք, աշխարհք—աշխարք
աշ, աջ—աջ (ձեռք)
առճիճ—արճիճ
ասպաք, ասպապ—ասպաք
արխալուղ, արխալուխ—սրխալուղ
արծիվ, առծիվ—արծիվ
արջ, առջ—արջ
արտ, արդ—արտ
աքլոր, Իգլոր—աքլոր

Բ

բախտ, բաղդ—բախտ
բանդ, բանտ—բանտ
բանդարկել, բանտարկել—բան-
տարկել

բարութ, փարութ—բարութ
բեկ, բեպ—բեկ
բիրգ—պիրկ
բիրդ, բիրտ—բիրտ
բորիկ, բոպիկ—բոպիկ
բոլորե շուրջ—բոլորեշուրջ
բոնցկել—բոնցքել
բուկ, բուգ—բուկ
բութ (բրթի)—բութ (բրդի)
բութք, բութք—բութք

Գ

գաւի, գւար—գաք (սրունք)
գդակ, գտակ—գդակ
գեղե գեղ—գեղեգեղ
գեջղանգեջ, գեջղան գեջ—գեջղան-
գեջ
գթաւ—գդալ
գիտեճալ, գիղել—գիտեճալ, գիտել
գլոռխանա, գլոռխանա—գլոռխանա
գլովա, գլովա—գլովա
գոտիկ, գոդիկ—գոտիկ
գորդ—գորտ
գութան, բութան—գութան

Դ

դադ, դաթ, դատ—դատ

դատ-բեղատ, դադ-բեղատ—դատ-
բեղատ

դամար, տամար—դամար
դասթա—դաստա
դոստ, դոսթ—դոստ
դարդակ, դարտակ—դարտակ
դարտ, դարդ—դարդ
դովլաթ, դովլաթ—դովլաթ

Ե

եդ, ետ—ետ
եդո, ետո—ետո
եդև, ետև—ետև
Երզնկացի, Երզնգացի—Երզնկացի
երթիկ, երթիկ—երդիկ

Է

էլ եդ—էլ ետ (կրկին)
էլիգ, էլիգ—էլիգ
էլօր, էլօր, էլ օր—էլօր
էնտեղ, էնդեղ—էնտեղ
էստե-էնտե, էստե-էնդե, էստեղ-էն-
տեղ, էստեղ-էնդեղ—էստեղ-էն-
տեղ
էրթիկ, երթիկ—երդիկ (տե՛ս)
էքուց, էգուց—էգուց
էքուց-էլօր—էգուց-էլօր

Ը

ընկել, ընգել, ընկնիլ, ընգնիլ—ըն-
կել, ընկնիլ

Թ

թագել—թակել
թախթ, թախտ—թախտ
թաք—թագ
թաքցնել, թագցնել—թաքցնել
թաքուն, թագուն—թաքուն
թինկը տալ, թինգը տալ—թինկը
տալ

թոգ—թոկ
թոգած—թոկած
թոպրտալ, թոպրտալ—թոպրտալ
թութակ, թութագ—թութակ

Ի

իգի, իքի—իգի (այլի)
իմն, իմնը, իմը—իմն, իմը
իրիգնաժամ—իրիկնաժամ

իրիգնաժով—իրիկնաժով
իրիգուն—իրիկուն

Լ

լագել—լակել
լագոտ—լակոտ
լխպոր—լպոր
լաչագ—լաչակ

Խ

խազլով, դազիլ—դազլով, դազի
(տե՛ս)
խելքը մին ըլիլ—խելքըմին ըլիլ
խելը ճանել—խելըճանել
խղարաքիլիսա, Ղղարաքիլիսա—
խղարաքիլիսա
խոսքը մին անել—խոսքըմին անել
խոր Վիրապ, խոր Վիրաք—խոր
Վիրապ
խորդ—խորթ
խուք—խուփ

Մ

ծեգ, ծեք—ծեգ

Կ

կարաք—կարագ
կարդալ, կարթալ—կարդալ
կարդացող, կարթացող—կարդացող
կեղտ, կեխտ—կեղտ
կնիգ—կնիկ
կնիկարմաղ—կնիկարմատ
կոխպել—կողպել
կոխք—կողք
կոնծել—կոնծել
կոծել—կրծել
կտրիչ—կտրիճ
կրունգ—կրունկ

Հ

հանդարդ—հանդարտ
հանքին—հանգին
հանքչել—հանգչել
հանքցնել—հանգցնել
հարիած—հարբած
հերմըմեր, հերմը մեր—հերմըմեր
հոգալ, հոքալ—հոգալ
հողաղ—հոտաղ
հոքս—հոգս
հուփ տալ—հուպ տալ

ձեռնը ձոր անել—ձեռնը ձոր անել
ձեռնե ձեռ ընկնիլ—ձեռնե ձեռ ընկ-
նիլ

ձիու, ձլու—ձիու
ձվածեղ—ձվածեղ

Ղ

ղազիլ—խազլով—ղազիլ, ղազլով

Ր

ճամփա, ճամբա—ճամփա
ճամփորդ, ճամփորթ—ճամփորդ
ճանկ, ճանգ—ճանկ
ճանգել—ճանկել
ճեղկ—ճեղք
ճրագ, ճրաքու—ճրագ, ճրագու
ճուղկ (ճղկներ), ճուխկ—ճուղք
(ճղքներ)

Մ

մաշիք—մաշիկ
մաջ—մաճ
Մատաթով, Մատադով, Մադաթով—
Մատաթով
մարդ, մարթ—մարդ
մարդիք, մարդիկ—մարդիկ
մարմառ—մարմար
Մաքու—Մակու
մեկը մեկի—մեկը մեկի
մեղք, մեխք—մեղք
մեճծ, մեճճ—մեճծ
մեճծանալ, մեճճանալ—մեճծանալ
մեջկ—մեջք
մծեխ—մծեղ
մխկտալ—մղկտալ
մուք, մուգ—մուգ (գույն)

Ն

ճազուք—ճազուկ
ճալաթ, ճալլաթ—ճալլաթ
ճաչար, ճաչաղ—ճաչար
ճորընծյուղ—ճորընծյուղ

Օ

շաղաղած—շաղախած
շնորհք, շնորք—շնորհք
շշունչ—շշունջ
շոք—շոգ
շոխք—շոդք
շպոտել—շպոտել

Ո

ողլուշաղ (մեկ անգամ)—օղլուշաղ
(տե՛ս)
ոսկոռ—ոսկոր
ոտք, ոտկ—ոտք
որդի, որթի—որդի
որտեղ, որդեղ, որ տեղ—որտեղ

Չ

չանգ, չանկ—չանգ (ճանկ)
չանկոել—չանգոել

Պ

պասորթ—պասորդ
պատրուք—պատրույգ
պարկել—պառկել
պոռունկ, պոռունգ—պոռունկ
պրծնել, պոծնել—պրծնել
պոծել, պրծել—պրծել
պրտեպոռունգ—պրտեպոռունկ

Ջ

ջախը բուրթ, ջախը փուրթ, ջախը
փուրթ—ջախը բուրթ
ջարդել, ջարթել—ջարդել

Ս

սարե սար ընկնիլ—սարեսար ընկնիլ
Սարքիս, Սարգիս—Սարգիս
սիրդ, սիրտ—սիրտ
Սմբատով, Սմբաթով—Սմբատով
սպրթնած, սպրդնած—սփրթնած
Սվանդուլի խան, Սվանգուլի խան—
Սվանդուլի խան
սրախողդղ—սրախողխող
սրթել, սրփել—սրթել
սուգ, սուք—սուգ
սուրու, սուրով—սուրու
սքավոր—սգավոր
սքատուն—սգատուն

Վ

վախ վախելով—վախվախելով
Վարդան, Վարդան—Վարդան
Վիրաք, Վիրապ—Վիրապ
վտանկավոր—վտանգավոր

Տ

տանտիրոց—տանտիրոց

տանդորոջ, տանդորոշ—տանդորոջ
տասնըփինգ, տասնը փինգ—տասնը-
փինգ

տերոդորմյա, տեր ոդորմյա քաշել—
տերօդորմյա քաշել

տիրոշ—տիրոջ
տոբրակ—տոպրակ

տեղմուտնդը, տեղմ ու տեղը—տեղ-
մուտնդը

Ր

րոպե, րոպպե—րոպե

ՈՒ

ուրաք—ուրագ

ուր տեղ, ուրդեղ—ուրտեղ (որտեղ)

Փ

փարութ, բարութ—բարութ (տե՛ս)

փետ, փեւ—փետ
փեսանալ, փեղսնալ—փետանալ
փետ ու վիս աճել—փետուսիս աճել
փթել—փտել
փողատիրոնշ—փողատիրոնջ
փրկկացնել—փոթկացնել

Ք

քաշք—քաջք

Քոթուք—քոթունկ

Օ

օղլուշաղ, ողլուշաղ—օղլուշաղ

օճորք, օջորք—օճորք

օջախ, օջաղ—օջախ

օրզանգու, օրզանկու—օրզանգու

Ֆ

ֆրանցուզերեն, ֆռանցուզերեն—
ֆրանցուզերեն

ԳՐԱՔՆՆԱԿԱՆ ԿՐԾԱՏՈՒՄՆԵՐ

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. էջ 52, տող 23—24. «Է՛հ, ժամ չի՛ դառավ մեր գլխից, մեկ իշի հարսանիք դառավ, տո՛ւ» [15]*:
2. էջ 53, տող 7—12. «...Էլ տուտը չե՛ն կտրում, լավ-օւլա.... որ փորիդ ար-քայությունը ըի՛» [16]:
- 3 էջ 54, տող 12—էջ 55, տող 7. «...ավետարանը կարդալիս հազար անգամ.... թե չէ ոտը քարից կառնի» [17]:
4. էջ 57, տող 4—էջ 59, տող 27. «Ծառ անգամ բարկացած՝ գալիս էր.... Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի՛» [19]:
5. էջ 72, տող 29—էջ 73, տող 1. «Ախպե՛ր, բարա՛, ջա՛նմ, գո՛ղմ. աղոթք ունիս.... մածունը ես լպստեմ, քեզ գող կատու կանչեմ» [33]:
6. էջ 78, տող 10—32. «2է թե կնկանից, գինուց, փողից, ձիուց.... մերոնք հենց իրանց քեֆն են արամիշ անում» [34]:
7. էջ 79, տող 8—26. «Էս դավադրությունը ողորմելին հենց իմացավ.... հինա չե՛ր կարող իր օրումը քսիլ» [39]:
8. էջ 82, տող 29—30. «...թե որ նրան սի՛... ող՛... դո՛... րե՛ս... Վա՛լ քո հերն էլ անհիծած, քո մեռոն քողիցն էլ» [43]:
9. էջ 83, տող 3—12. «Անաստված տանուտերը էնպես մեկ սաստիկ դուրսմաԺամումը գլխըներս տանում են, հերիք չի՛» [48]:
10. էջ 81, տող 3. «[Աստվա՛ծ,] յարդանդ քոռանա» [52]:

* Էջերն ու տողաճամարները նշվում են նախ՝ ըստ սույն գրքի, և հետո, վերջում, ուղիղ փակագծերի մեջ, ըստ առաջին հրատարակության: Կրճատված հատվածներից բերվում են միայն առաջին և վերջին բառերը՝ բազմակետերով անջատված:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Արքեպիսկոպոս և Երա «Վերք Հայաստանի»	5
Վերք Հայաստանի, ողբ Ռայքեմասիրի	87
<Ընծայական>	89
Հառաջաբան	41
Գլուխ առաջին	49
Գլուխ երկրորդ	112
Գլուխ երրորդ	208
Զանգի (Ռավելված)	302
Ծանոթագրություններ	316
Անվանաթերթ	316
Ընծայական	317
Հառաջաբան	317
Գլուխ առաջին	324
Գլուխ երկրորդ	328
Գլուխ երրորդ	341
Զանգի (Ռավելված)	351
Բառարան «Վերք Հայաստանի» վեպի դժվարահասկանալի (բարբառային և օտար) բառերի	352
Բառեցանագիտական տեղեկություններ	373
Այբբենական ցանկ «Վերք Հայաստանի» վեպի ինքնագրերում օգտագործված բառաձևերի ու բառային տարբերակների, որոնց ուղղագրությունը սույն հրատարակության մեջ միասնության է բերված	375
Գրաքննական կրճատումներ «Վերք Հայաստանի» առաջին հրատարակության մեջ	379

**ՎԵՐՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Հրատարակչության
խմբագիր
Լ. Լ. Աղայան

Նկարիչ
Լ. Ա. Սադոյան

Գեղարվեստական
խմբագիր
Ն. Ա. Քոլմասյան

Տեխնիկական
խմբագիր
Ֆ. Գ. Տոնոյան

Վերստուգող
սրբագրիչ
Ս. Վ. Ղազարյան

ՎՅ 06734, Պատվեր 1167, Տպագրական 30.000.

Հանձնված է շարվածքի 11.09.1980 թ.:

Ստորագրված է տպագրության 9.04.1981 թ.:

Թուղթ № 2, չափեր՝ 60 × 84 ¹/₁₆,

Տառատեսակը՝ «Սովորական»:

Տպագրության ճղանակը՝ «Բարձր»:

Հրատարակչական 21,6 մամուլ:

Տպագրական 24 մամուլ =

տ 22,32 պայմանական մամուլի:

Գինը՝ լաթի կազմով 2 ռ.

թղթի կազմով 1 ռ. 80 կոպ.

Երևանի համալսարանի հրատարակչություն,

Երևան, Մոսկվյան փողոց № 1:

Издательство Ереванского университета,

Ереван, улица Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան,

Երևան, Արթուրյան փողոց № 52:

Типография Ереванского университета,

Ереван, улица Абовяна № 52.

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ

- ԱՃԱՌՅԱՆ Հ. Հ.,** Հայերեն արմատական բառարան, հ. հ. 1—7, 1927—1935, ապակետիպ
 Հ. 1, 1927
 Հ. 2, 1928
 Հ. 3, 1930
 Հ. 4, 1930
 Հ. 5, 1931
 Հ. 6, 1932
 Հ. 7, 1935
- ԱՃԱՌՅԱՆ Հ. Հ.,
ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ** Ռուս-հայերեն բառարան շինարարական կա-
 ուցվածքների, 1928
- ԱՃԱՌՅԱՆ Հ. Հ.,** Հայոց անձնանունների բառարան, հ. հ. 1—5
 Հ. 1, 1942
 Հ. 2, 1944
 Հ. 3, 1946
 Հ. 4, 1948
 Հ. 5, 1962
- ԱՃԱՌՅԱՆ Հ. Հ.,** Հայերեն արմատական բառարան, հ. հ. 1—4
 Հ. 1, 1971
 Հ. 2, 1973
 Հ. 3, 1977
 Հ. 4, 1979
- ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Գ. Մ.,** Գերմաներեն-հայերեն բառարան, 1976
- ԳԵՎՈՐԳՅԱՆ Ե. Հ.,** Ժամանակակից հայոց լեզվի համանունների
 բառարան, 1978

ԾԱՏՈՒՐՅԱՆ Թ. Գ., Բույսերի անունների լատիներեն-հայերեն-
ռուսերեն բառարան, 1962, 1970

ԱՔՐԱՀԱՄՅԱՆ Ռ. Թ., Պանլավերեն -պարսկերեն- հայերեն -ռուսե-
րեն-անգլերեն բառարան, 1965

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Ա. Մ., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան,
ԳԱԼՍՏՅԱՆ Ս. Ս., 1975

Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան, խմբ. Պ. Պողոս-
յանի և Ռ. Մելիֆուլյանի, 1975

ԱՎԵՏԻՔՅԱՆ Գ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, 1979
ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ Խ.,
ԱՎԳԵՐՅԱՆ Մ.,

ՂԱԶԱՐՅԱՆ Ռ. Ս., Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսե-
րեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բա-
ռարան, 1981

ՊԱՊՈՅԱՆ ԱՐՏ. Հ., Պարույր Սեակի պոեզիայի բառարան, հ. 1,
1981

«ՈՒՍԱՆՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

**Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»
Խաչատուր Աբովյան, «Վերք Հայաստանի»**

ԼՈՒՅՍ ԿՏԵՍԵՆ

«Սիյուդադա հայ բանաստեղծություն»

«Հին Արևելքի պոեզիա»

«20-րդ դարասկզբի ռուսական բանաստեղծություն»

«20-րդ դարասկզբի հայ բանաստեղծություն»

Դանտե Ալիգիերի, «Աստվածային կատակերգություն»